



Առողջական Դիհերյան ՎԵՐՏԵՇՈՒՄՆԵՐ

ԹԱԼԵՎԻԹԻ
ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

9(47.925)
P-40

Հայոց
թիւիրյան
ՎԵՐՏԵՇՈՒՄՆԵՐ
ԹԱԼԵՎԻ
ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

24.04

Գրի առաջ
ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1993

ՏՊԵՑԱԿ ԳԻՐՔՍ ԱՐԴԵԱՄԲ
ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԱՄԻ
ԱՌ Ի ԹԻՇԱՏԱԿ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՅԻՆԱԼ
ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

թ 407 ճ Թեհվիրյան Սողոմոն Վերհիշումներ (Թագեաթի աճաբեկումը/դրի առավ Վահան Մինախորյան.—Եր.: ՀԳԱԱ. հրտտ., 1993—288 էջ:

Դրամ ներկայացված էն Սաղոմոն Թեհվիրյանի հուշերը 1915 թ. իրադարձություններից մինչև նրա կողմից կտարված մահափորձը թալեաթի փաշացի դեմ ու զրան հաջորքող դատավարությունը 1921 թ. հունվարին, Թեղինում. դատավարությունն արդարացրեց Թեհվիրյանին՝ նվրագոյի հասարակայնությունը մի անգամ և Փաշենելով դարասկրի աննախադեպ ցեղասպանության մասին:

1305010000

թ ———— Զիայտ.
703(02)—93

ԴՄԴ 63. 3 (22) 52

© Հայաստանի ԳԱԱ հրտարակություն, 1993:

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՔՍՈՐՅԱԸՆԵՐԸ

Անժիվ ու տարատեսակ աքսորումներ ունի հայի հիշողությունը: Անցած տասնամյակներին Հայաստան երկրից դեպի Սիրիք, դեպի Ալթայ աքսորումներից բացի, եղան նաև մեր հիշողություններից, մեր պատմական հիշողությունից աքսորված մարդիկ, անուններ, եղելություններ, ժամանակաշրջաններ: Այդ աքսորյալների մեջ էր նաև Սողոմոն Թեհվիրյանը, մեկը այն արժանավորագույններից, որոնք պետք է անընդհատ ապրեին մեր մեջ, կազմեին մեր ներաշխարհի անբաժան մասնիկը, ներկա լինեին մեր առօրյայում:

Սողոմոն Թեհվիրյանը աքսորից վերադարձավ դժվարությամբ: 1965 թվականի ապրիլի 24-ին, Մեծ եղեռնի միանալիք օրը, երբ բազմամյա խցանումից հետո հանկարծ փողոց հորդած քաղմությունները «Հողերը, հողերը» բացականչություններով տանում էին նաև նրա դիմանեկարը: Շատերը, որ դեռ մանկուց սիտի նեզեին Սողոմոն Թեհվիրյանի անունը, հարցնում էին՝ ո՞ւմ նկարն է դա: Սիյուրում հրատարակվող հուշապատճեններն ու ոգեկողությունները չեն հասել նրանց, չեն լսել նրա առանձինական կյանքի պատմությունը: Դեռ չեն կարդացել այդ ամիսներին լույս տեսած «Քարավանները դեռ քայլում են» գիրքը, որտեղ խոսվում էր նաև Սողոմոն Թեհվիրյանի մասին: այդ տարիներին 15 թիվ, ապրիլ 24, ցեղասպանություն բառերին դեռ չվարժված ընթերցողին տանում էին դեպի հետո, դեպի ազն ողբերգական ժամանակները, երբ թուրքական յաթաղանը հնձեց միլիոնուկես խաղաղասեր, իրենց հողը ներկող, այգիները կանաչեցնող, արհեստավորի մուրճն ու ասեղը բանեցնող, իրավաբանի ու բժշկի իրենց պարտքը կատարող մարդկանց, հնձեց միայն նրա համար, որ նայ էին ծնվել աշխարհում:

Չոր էին անուղղելի լավատեսները ակնկալում, որ քրիստոնյա Եվրոպան օգնության ձեռք կմեկնի օրը ցերեկով, ամենքի աշքի առաջ մորթովոյ հին ու քաղաքակիրք ժողովրդին: Չոր էին Եվրոպայի մեծ

մարդասերները՝ Ռուսն Ռուսանը, Կարլ Լինեևստը, Ֆրիցխոֆ Նանսենը, Անրի Բարբյուսը, ամերիկացի Զան Շիփը և մուսները թերեկի էջերից, համազարանների ու պատրաժնամունքների ամբիոններից պահանջում շուտափոյթ միջամտություն։ Եվ զոր էր Անտոլ Ֆրանը Սորբոնի հնամենի սրանից աղաղակում «Արելըրում մեռնում է մեր քուրը։ Մեռնում է միան այն բանի համար, որ նա մեր քուրն է։ Նրա հաճանքն այն է, որ նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես, ինչպես մենք։ հակառացել է այն ամենին, ինչին հավատացել ենք մենք, և մեզ նման ընկալել է իմաստություն, բանաւեղծություն և արվեստ։ Նրա մեջ է նրա հանցանքը...»։

Եվ ահա աստծոց ու մարդկանցից մոռացված հայ ծողովորդին մեռն էր աղոթել հին, բայց միշտ կենդանի աստվածներից մեկի՛ վրիժական Նեմեսիսին... Նրա այդ աղոթքը իրականացրին նոյն բախտն ու կենսագրությունը ունեցող մի խոսք երիտասարդներ՝ երգընկացի, բաղեցի, խոտորջորդի և ավերակված մյուս գավառների ծնունդ, շարդերից երաշրով կենդանի մնացած հայորդներ, որոնք վճռել են իրենք իրենց ուժերով պատճել անպատճ մնացած հանցագործներին։

1921 թվականից սկսած, մեկը մյուսի հետևից՝ Բենինում, Պոլստում, Հռոմում, Թիֆլիսում, Թուրքեատանում գնդականար գետին են տապալվում հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչ, մարդակեր Թալենաթը, Թուրքիայի նախկին վարչապետ, ցեղասպանության վճիռը տվող ու նաև հետևողական կիրառողը, բժիշկ Բենիադին Շաքիրը, Տրապիզոնի կուսական, հայ մտավորականությանը, կանաց ու երիտասերին ոչնչացնող, հավերով ծովանոյն անող երեշը՝ Զեման Ազմին, երիտուրքական եռապետության պարագուխներից՝ տեղահան քարավաններին դեպի անապատների երախը ողարկող, ծովական Զեման փաշան և ողիշներ։

1921 թվականի մարտի 15-ին Բենինի Հարդենքերգ փողոցում Թալենաթին գնդականարող Սողոմոն Թեղիիրյանը ձերբակալվեց և հանձնվեց գերմանական դատարանին։ Հունիսի 2—3-ին Բենինում համագոյին դատարանում տեղի ունեցավ Սողոմոն Թեղիիրյանի դատավորությունը։ Երբ նախագահը հարցաքննում էր մեղադրյալին, վկաներին, փորձագետներին, ինքն էլ չզգաց, թե ինչպես այդ ընթացքում Բենինի դատարանի պատերը բացվեցին, լայնացան, և Շերկաների աշքի առջև պարզվեց անասելի մի ողբերգություն։ Միջա-

գետքի անապատներից, Եփրատի, Տիգրիսի և որիշ՝ փոքր ու մեծ գետերի հատակներից, ձորերի ու կիրճերի խորիություններից, ավերակված բաղաքների քար ու մոխրի տակից շաքան-շաքան եկան, կանգնեցին հազար-հազարավոր սպասվածների որվականներ, բռնցքն դատախազական ամբիոնը, իսկ մեղադրյալի արոտին հատեցին նրանք, որոնք այդեն երեք տարի, զո՞նքի առաջ խոզ ու անողող մնացով, շարունակում էին սպասել ու նրդեմել։

Նյուրեներօքան դատավարության յուրօրինակ նախատիզմ Երսա, ավանդ, կանքի կոչված ոչ թե աշխարհի ժողովուրդների պատմիչ ձեռքով, այլ սուկ քանչորուացյա մի հայ երիտասարդի ցանումնալից գնդակով։ Փոքրիկ, շատ մասնակի մի նախատիզմ, որուել, շնորհած գերմանական պաշտոնական շրջանների գուապ անքարյացակամությանը, դատախազ Գուլքիկի՝ «դաշնակից Թուրքիայի» պատիվն ու իրավունքները պաշտպանող վկայակոչումներին, կաշառված լրագրողների՝ դաշուալուրտյալին և նրա ծողովրդին վարդարեկող հերլուրաներին, այնուամենապես դուրս ժայթքեց անեղ, անմերքելի ճշմարտությունը, և դատարանի տասնվեց երդվյալ ատենակալները՝ որմնատիրի, տանիքագործ, երկաթագործ, Շերկարար, ծողովրդի արդար բնագործ ընրուեցին իրողությունը և մեկ ժամ մեկուսանալուց հետո դատարանը դամակի վերադարձան հնաւելալ վճռով։ «Հանցավո» ը անքատակալ Սողոմոն Թեղիիրյանը 1921 թվականի մարտի 15-ին Շաղուտենբուրգում, մտածված կերպով, մարդու Թալենաթ Փաշայի սպասության մեջ։ Ոչ։»

Ահա այսպես է համառոտագրությունը այն մեծ պատմության, որի ընդարձակ վերաբարդությունը կա սույն «Վերիշումներ» գրքում գրի առնված Թեղիիրյանի ժամանակակից, սփյուռքահայ գրող Վահան Մինախորյանի կողմից։ Գրքում չկա Սողոմոնի հետուազն կյանքը, այն, որ նա ամուսնացալ Անահիտի հետ, և այդեւ Բենգորադում, ունեցավ երկու զավակ՝ Զամեն և Զավեն, այնուհետև անելու փոխվեց Ամերիկա, Ֆրեզն և 1960 թվականին կնքեց իր մահկանացուն։

1974 թվականին ևս համփորդեցի Ամերիկայի Միացյալ Նահանգներ, եղան Ֆրեզնոյում, այցելեցի Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատունը և հազար ու մի զգացումներով լուսավան խոնարհեցի Թեղիիրյանի մահարձակ առջև, որ միան է շրջակա փոքրիկ ու միահանակ գետնամած շիրմասալերի մեջ։ սպիտակ մարմարից բարձրաթուիչ մի մուշապուն էր դա, որը կարծես զայրութի ձայնն էր շրջակա բոլոր

համը ու միօրինակ սպառաբերի, ամերևոյթ մի մարմնի վրիժառու քաղուկը:

Սողոմոն Թեհլիրյանի բազմատարած տոհմածառի մի ճյուղ՝ Սողոմոնի նորելեռոր որդի Սամվել Օսկանյանի ընտանիքը, 1964 թվականին Բելգրադից ներգաղջեց Հայաստան։ Այս տարիներին ինձ բախտ վիճակից մոտից ծանոթանալ այդ ընտանիքին, վայելել որպես՝ աստղագետ Վահե Օսկանյանի, երա տիկնոշ՝ Լիլիանայի, նրանց ավակների ու մանավանդ Սամվել հայրիկի՝ կյանքի բազում կեռանելերով անցած, գաղթ ու եղեռն տեսած, զարմանալի ողջախոն և նաստուն այդ ծերունու բարեկամությունը, հաղորդվել հնարմատ գերդատանի սերնդեսերունդ եկող այն առաքինություններին, որոնցով սնվել էր ու ամրացել հայ մեծ վրիժառուն։

Ահա թե ինչու ես կրկնակի գոհունակությամբ եմ գրում նախարանը «Վերիշումներ» գրքի, որը մեզ մոտ հրատարակվում է առաջին անգամ։ Վաստան եմ, որ մեր ընթերցողը գիրքը կկարդա հայիշտակությամբ, և Սողոմոն Թեհլիրյանը, որը Հայաստան էր սկսել վերադառնալ դեռ 30—40 տարի առաջ և, այնուամենայնիվ, մնացել էր վերադարձի մատուցներում, այսուհետև իր հաստատուն տեղը կգրավի մեր հոգում, մեր ազգային հիշողության մեջ։

ՍԻԼՎԱԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԴՄԻՑ

Սողոմոն Թեհլիրյանի «Վերիշումները» գրի է առել արևմտահայ գրող, հասարակական գործիչ Վահան Մինախորյանը։ Սովորաբան անգամ տպագրվել է 1953 թ., Կանիքեռում, «Հուսարեր» մատենաշարով։ Բնագիրը արդի գրական հայերենի են փոխադրել ՀԳԱ Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցներ Զ. Ս. Ղարիբյանը և Ս. Վ. Օսկանյանը (վերջինս Ս. Թեհլիրյանի նորելեռոր ծոռն է)։ Մեզանում ընդունված Թեհլիրյան ազգանվան փոխարեն Ս. Օսկանյանը առաջարկում է Թեհլիրյան, ինչպես դիմել և այսօր էլ դիմում են միմյանց հենց՝ բոլոր Թեհլիրյանները։ Այս հրատարակությունը նախորդի համեմատությամբ շնչին տարբերություններ ունի։ Տեքատից դուրս են մնացել մամուլի արձագանքը Թաղեարի ահաբեկման կապակցությամբ, դաշնակցական գործիչ Նավասարդյանի «Երկու խոսք», բնագրային լուսանկարները։

ԴԱՏԱՐԱՆԸ ԵՎ ԴԱՏԱՎՃԻՌԸ

«Դատավարություն Թաղեարի փաշայի» գրքից ստորև ներկայացնում ենք Սողոմոն Թեհլիրյանին դատած դատարանի կազմը և արձակած վճռի պատճենը։

ԴԱՏԱՐԱՆԸ ԿՑՉՄԸ

ա) Նախագահ

Դր. ԼԵՄԲԵՇՐ, Ասհանգային դատարանի վարիչ։

Դատավորներ՝

ԲԱԺԵ, Ասհանգային դատական խորհրդական,

Դր. ԼԱՔՍ, օգմական դատավոր։

Ատենադպիր

ՎԱՐՄԲՈՒՇՐ, դատավարության նետնողը։

բ) Դատախազ

ԳՈԼՆԵԿ, դատախազ։

գ) Երդվյալներ՝

ՎԻՀԵԼՄ ՋՐԱՌԻ, որմնադիր, Նառեն, Բեռլինի մոտ,

ՌՈԽԴՈԼՖ ԳՐՈՍԵՐ, վաճառական, Բերնաու (մայկ),

ԿՈՒՐՏ ԲԱՐԹԵԼ, ակնավաճառ, Բեռլին,

ԱԴՈԼՖ ԿՅՈՒՀՆԵ, ռանտեն, Բեռլին-Գանկով,

ՕՍՏՈ ԷՎԱԼԻՏ, տանտեր, Շաղոտենբուրգ,

ՕՍՏՈ ՎԱԳՆԵՐ, հարկածածկ, Շաղոտենբուրգ,

ՕՍՏՈ ԲԻՆՏԵ, երկաթագործ, Շեռներլինցեն,

ՕՍՏՈ ՌԱՅՆԻԿԵ, վերին գործավար, Տեգել,

Էֆեն դը ՊՐԻՍ, ներկարար, Բեռլին-Վիրմերտորֆ,

ԱԼԲԵՐՏ ԲԵԼԼԻՆԳ, դեղատան տեր, Շաղոտենբուրգ,

ՀԵՐՄԱՆ ԳՈԼԴԵ, երկաթագործ, Շաղոտենբուրգ,

ՌՈԲԵՐՏ ՀԱՅՉԵ, աղյուսի գործարանի տեր, Շաղոտենբուրգ,

Փոխարինողներ՝

ՅՈՒԼԻՈՒՄ ՖՈԽՌՀ, տաճտեր, Ծաղկունքուրդ,
ԱՎԳՈՒՍ ԲԼԻԶԵՆԵՐ, մսագործ, Տեգել:

Պ) Պաշտպաններ՝

Դր. ԱԴՈՒՅ ՖՈԽ ԳՈՐԴՈՆ, իրավական գաղտնի խորհրդական, Բեռլին,

Դր. ԻՈՀԱՆՆԵՍ ՎԵՐԹԱՌԻԵՐ, իրավական խորհրդական, Բեռլին,

Դր. ՆԻՄԱՑԵՐ, գաղտնի խորհրդական, Կիլի համալսարանի իրավագիտական բաժնի պրոֆեսոր:

Ա) Թարգմանիչներ՝

ՎԱՀԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ, առաջին թարգմանիչ,

ԳԵՎՈՐԳ ԳԱԼՈՒՍՅԱՆ, երկրորդ թարգմանիչ:

ՊԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

Դատավարության ավարտից հետո դատարանի նախագահը՝ Դր. Լեմբերգը, երդվալներին է ուղարկ օրենքով սահմանված հարցերը: Երդվալները մեկուսանալով մեկ ժամ տևողությամբ խորհրդակցություն անեցան, ապա երդվալների գլխավորը ներկայացավ դատարանին և «պատվով ու խղճով վկայեց» հետևյալը՝ որպես երդվալների որոշում:

Հանցավո՞ր է ամբաստանական Սողոմոն Թեմի իրյանը՝ 1921 թ. մարտի 15-ին Ծաղկունքուրդում դիտավորյալ կերպով մի մարդու՝ Թալայ փաշային, սպանելու համար.

Ո՞ւ

Օստո Ռայմիկն, երդվալների գլխավոր (մեծ շարժում սրանում և ծափանարություններ):

Նախագահ.—«Ես կստորագրեմ որոշումը և խնդրում եմ պ. քարտուղարին նույնը անել և ի լուր կարդալ որոշումը»:

Քարտուղարը կարդում է որոշումը, որը թարգմանվում է ամբաստանյալին:

Նախագահ.—«Ապա ուրեմն ազդարարվում է հետևյալ դատավճիռը».

«Ամբաստանյալը ազատ է արձակվում պետության հաշվին (նոր շարժում և ծափանարություններ):

«Համաձայն երդվալների որոշման, ամբաստանյալը հանցավոր չէ իր վրա որպես մեղադրանք ծանրացող պատժելի արարքի համար»:

Հետո հայտարարվում է հետևյալ որոշումը.

«Բանտարկության հրամանը ամբաստանյալի նկատմամբ չեղյալ է համարվում»:

(Ամբաստանյալին շնորհավորում են իր պաշտպանները, հայրենակիցները և ներկա գտնվող հասարակությունը*:

* «Խատավարություն Թալիաթ փաշայի» (սղագրական զեկուցում) Վիճակ, Միաբարդամ տպարան, 1921, էջ 1 և 210):

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՇԼԻՐՔԱՆ (Կենսագրական հշումներ)

Սողոմոն Թե՛շլիրքանը ծնվել է 1896 թ. ապրիլի 2-ին (հ. տ.), Դարձանադաս (Կամախ) գավառի Վարի Բագարիճ գյուղում:

Հայրը՝ Խաչառուրը, մայրը՝ Հենազանդը (Գաթրէշան Տեր Հարուբյունի աղջիկն էր): Ընեցել են հինգ մասն զավակ: Երկրորդ զավակը՝ 3—4 տարեկան հասակում մահացել է, մնացածներն են՝ Միսաքը, Անդրակը, Ավետիսը և Սողոմոնը:

Կամախի շրջանի գյուղացիներն իրենց աշխատանքի արդյունքով չին կարող աւքրուստով ապահովել իրենց ընտանիքները, բավականաշահ մշակելի հողեր չունեն: Այսուհետեւ գնում էին տարտասահման, մասնավորապես Թալկանյան երկրները, չի բանի տարի շարածար աշխատանքով դրամ էին վաստակում և վերադառնում տուն:

1898 թվականին Սողոմոնի հայրը, երկրորդ կամ երրորդ անգամ, մեկնում է գյուղից, գնում Սերբիա, որտեղ եղրոր հետ առևտրական գործ էր սկսել: Նախ եղրային է վերադառնում հայցնենիք, իսկ 1905 թ. Սողոմոնի հայրը:

Գյուղի համար մեծ իրադարձություն էր որևէ պանդուստի վերադարձը: Հարսանիքից շատ ավելի կարևորություն էր տրվում Սիլամին դիմավորության հանդեսին և տեսկերի պաշտոնական բացմանը: Պանդուստությունից գերադարձած նվերներ էր բերում բոլորին:

Զատիկին գյուղ պետք է հասներ Սողոմոնի հայրը: Ավագ Շարաթ օրը մի կատապան բերում է երկու արկդ, բայց սիլամին չկար: Ծուսով իմացվում է, որ թուրքերը նրան բանտարկել են Տրավիզում՝ նավից իշնելու ժամանակ: Ուրախությունը լաց ու կոծի է վերածվում: Վեցամյա բանտարկությունից հետո Խաչառուր աղային վերադարձում են Սերբիա:

Մեկնելուց առաջ նա առիթ է ունենում տեսնվելու իր հայրենակից Միսաք Պողոսինի հետ և խնդրելու նրան, որ գնա գյուղ և ընտանիքին տեղափոխ Երզնկա:

Հետո իմացվում է, որ Խաչառուր աղան ձերբակազմել էր՝ 1898 թ. Տրավիզունից մեկնելիս, ուստական հավ նատելու պատճառով, արամագրվելով որպես կասկածելի ամաց:

1905—1906 թթ. ձմեռնը Սողոմոնը հաճախել է Երզնկայի բողոքականների վարժարանը: Հաջորդ տարի փոխադրվել է Երզնկայի վարժարան և ստորել է աշնուել մինչև 1911 թ.: Վերջին տարին, ուսուցիչների պակասի հետևանքով, գյուղու ամբողջ դասարանով, տեղափոխվում են կենտրոնական վարժարան, որտեղ և վերջացնում է ուսման ընթացքը:

Բավկանյան պատերազմի ժամանակ որոշ թվով տարությունը զորակոչվում են: Եվ նոգարարձությունը Սողոմոնին նախակրթարանի առաջին դասարանը վարելու պաշտոն է տալիս:

1913 թվականին, վերջապես, 17 տարեկան հասակում Սողոմոնը տեսնում է հորը: 1908 թ. Սահմանադրությունը թույլ էր տալիս ազատորեն երկիր գնալ, բայց գործերի բերումով ուշանում է հինգ տարություն:

1913 թ. աշնանը Սողոմոնը հեռանում է Երզնկայից և անցնում Սերբիա, որ մտադիր էր պատրաստվել և հաջորդ տարին գնալ Գերմանիա ուսանելու: Բայց համաշխարհային առաջին պատերազմը ամենա բար տակն ու վրա է անում, բոլոր ծրագրերը թողնելով անավարտ...

Թե՛շլիրյան գերդաստանը Երզնկայում և Բագառինում, մինչև 1915 թ. սարսափի օրերը, թվով հասնում էր 85 հոգու, բայց արտասմանանում պանդուստության մեջ գոնվողներից:

Այդ 85 հոգուց միայն ու միայն Սողոմոնի մեծ եղբոր՝ Միսաք մի աղջիկն է ազատվում: Երզնկան ուսմեների կողմից գրավվելուց հետո նրան 12 տարեկան հասակում գտնում են մի քրդի մոտ:

Սողոմոնի մայրը, երկու մեծ եղբայրների կանաքը իրենց զավակներով, եղբայրը՝ Ավետիսը, Բեյրութի ամերիկյան բժշկական համալսարանի ուսանող, զոհվեցին 1915-ի կոտորածի օրերին:

1914 թ. գարնանը, գործի բերումով Սողոմոնի հայրը և Սեղրակ եղբայրը թողնում են Երզնկան և անցնում Սերբիա՝ այդպիսով փըրկվելով ստուգ մամից:

Սողոմոնի հայրը վախճանվեց վերջին համաշխարհային պատճառմի ժամանակ, 84 տարեկան հասակում: Եղբայրները՝ Միսաքը և Սեղրակը, իրենց ընտանիքներով ապրում են Հարավալավիլում: Ամուսնացած են, ունեն զավակներ ու թոռներ:

Սողուններ ամուսնացել է Թիֆլիսում հաստատված երգմկացի Նշան Թաթիկյանի անջկա՝ Անահիտի հետ: Թաթիկյանը երգմկացիքնու (Շիշմանյան) մտերիմն ու գործակիցն էր: Քազաքում իր դիրքի վտանգման պատճառով խոսափում է Երգմկայից, 1895-ին անցնուած Կովկաս և հաստատվում Թիֆլիսում: Հետագայում ամուսնանուն է Հակոբ Շավարչյան:

Հակոբ Շավարչյան ժամանակին եղել է «Միացյալի» հիմնադիրներից մեկը:

Սողուննը և Անահիտն ունեն երկու մանշ զավակներ:

Ա. Ռ. Զ. Ա. Բ. Ա. Ն

Սողունն Թեհնիրյանի վերհիշտմների առանցքը Թուրքիայի նախկին մեծ վեզիր Թաղեար փաշայի սպանությունն է: Դեպքը կապված է նայ ժողովրդի ռեժագույն ողբերգության հետ, որը տեղի ունեցավ 1915—1916 թթ.: Այդ տարիներին, երբ Թաղեար փաշան Թուրքական կայսրության ճշմարիտ տերն էր, բնաշնչվեց արևմտահայության ստվարագույն մասը՝ Ծվազագույն հաշվով շուրջ մեկ միլիոն երկու հարյուր հազար մարդ: Իսկ բնաշնչումից նողությանը տեղահան եղան՝ ապահովանելով մեծ մասսմբ Անդրկովկասում: Թեև Թուրքիայում շատ արյուն է նուել, բայց ազգերի պատմության մեջ նայկական սպաներ աննախընթաց է: Բաղկանյան ժողովուրդների ազատագրական շարժումներից սկսած՝ թուրքական կառավարությունը դիմել է շարդերի քաղաքականությանը բոլոր այն դեպքերում, երբ անձնարող է եղել գոհացներու հապատակ ժողովուրդների ազգային պահանջները և վտանգած է գգացել իր երկրի ամրությանը: Հայկական շարդերը Հասնիդի օրով բացառություն չեն և կազմում են թուրքական կառավարության ազգային քաղաքականության մի էջը:

Այս խնդիրն ընթանուը ձևով շատերին է գրադեցրել: Յավատանչ երկային պատճառը ունանք տեսել են տիրող և հապատակ ժողովուրդների կրօնական տարրերությունների մեջ, ունանք շարդերը համարել են աշխարհակալ պետությունների հակամարտության և դիվանագիտական սադրանքների արգասիք, ուրիշները իբրև պատճառ նկատել են ազգերի պատճառքնան, անշատողական շարժումները: Մեզ թվում է, որ այդ բոլորի հիմքում կա մի հնագույն ընկերային պատճառ, որը բավականաշափ պարզված չէ:

Թուրքերը, գալով դրսից և ծառանգելով Բյուզանդական կայսրությունը, դարերի ընթացքում անկարող եղան փաստորեն իրացնելու այդ ծառանգությունը: Նրանք չկարողացան ո՞չ ներարկել, ո՞չ ձուել տիրված ժողովուրդներին և ո՞չ էլ լուրացնել նրանց քաղաքակրթությունը: Իրենց ներթին տիրված ժողովուրդները, անցյալ փառքից մըդ-

ված, միշտ ծառացած մնացին տիրողների դեմ: Տիրողն ու տիրվածները ներքին կյանքում դարձան անհաջող, որուց մեջ բացված անջրդիր նետքին խորացավ թե՛ կրոնական, թե՛ մշակութապին, թե՛ ազգային, թե՛ տնտեսական նիմքերով: Առևտորք, արհետոր, արդյունաբերությունը, գրեթե մինչև առաջին համաշխարհային պատերազմը, առաջվա նաև, հիմնականում մնացին որպես տիրվածների սեփականություն: Իսկ տիրողների բաժինն էին զենքն ու զրամը և վարչական իշխանությունը, որը ավելի պաշտոն էր, քան փաստական տիրապետություն:

Նոր ժամանակներում ցարական իշխանավորները, իրենց շահերին նետամուտ, ամեն կերպ հրամիրեցին այլազան պատճառներից ծնունդ առած հակամարտություններ: Եվ այս անհարի դրությունը ծնունդ տվեց Թուրքիայի կյանքում մի շարք ազգային ողբերգությունների, որոնցից ամենամեծը և ամենալին եղավ հայկական ողբերգությունը:

Դատմական իրադարձությունների դատավորությամբ, հայերի ազատագրությունն այնքան ուշացավ, որ հայերն այլևս դյուրությամբ չեն կարող թոթափել իրենց լուծը: Օսմանյան նզոր կայսրության շորջ երկու դարերի անդամահատությունից հետո այդ շրջանում «հիփանդ մարդու» ժառանգության խնդիրը ծանրացավ: Ամեն մի նոր նվաճում, «ազդեցության շրջան», անգամ առանձնաշնորհում այժմ դառնում էր կովակները: Դիվանագիտական պայքարի այդ թունուրունի օրերին հայ ժողովուրդը շատ արյուն տվեց և եթե կարողացավ վերջնական բնաշնչումից ազատվել, դրանով պարտական էր իր շրջահայեցությանը: Բոլորովին սխալ է, թե նա ձգտում էր անշատման, «ծովից ծով» մի Հայաստան կազմելու տեսչով: Իր բովանդակ ազատագրական շարժման շնորհացքում հայ ժողովուրդը ո՞չ ունեցել և ո՞չ էլ նետապնդել է այդպիսի մի նպատակ: Անկախության գաղափարը, որպես գործնական խնդիր, ծնունդ է առել պատերազմից հետո և արծարծվել խաղաղության բանակցությունների շրջանում, երբ արդեն հայ ժողովուրդը երկրի մեջ (Ս. Բանտյան Հայաստանում) բնաշնչված էր: Քանի դեռ ժողովուրդը ապրում էր, նրա միակ ձգտումը բարենորդություններն էին, այսինքն՝ ապրելու և աշխատելու նմարավորությունը: Մտավոր բարոյական իր ոգորչությունները քննավ չեն նշանակում բաղադրական ծրագիր, որը առաջին օրից եղել է Բեռլինի վեհաժողովի 61-րդ նոդվածը և իր մահվան ամիսորյակին կազմել է 1913 թ. հաստատված բարենորդությունների ծրագիրը: Եվ սխալ է նաև, որ նայությունը վարում էր

գույտ ազգային բաղարականություն, միայն ի՞ր բախտին նետամուտ: Առարկայորեն միջազգային պայմանները խիստ աննպաստ եին, նայ ազատագրական շարժման շրջանում այդպիսի մի բաղարականության համար: Եվ ավելի շատ էին և նիմեսավոր տվյալները՝ երկրի ընդհանուր բարեգործական համար ազգի համար ապահովել տանելի կյանք: Ենթակապքնեն նա երբեք չի ձգտել զանել իր կյանքը նարեւ կյանքը: Ենթակապքնեն նա երբեք չի ուժերի ներածին չափով նպաստել է երկրի ընդհանուր առաջադիմությանը իրեն մատչելի բոլոր ապարներուն: Ինչ էլ որ սավի, ո՞չ ոք չի կարող ուրանալ Թուրքիայի առևտորի, արհետի, գեղարվեստի, գյուղատնտեսության բարձր զարգացման մեջ նայելի կատարած դերն ու արժեքը:

Երկրի ընդհանուր և իր կյանքի բարենորդության հույսերը ի կատար ածելու համար նայելու միշտ համագործակցել են Թուրքիայի ընդդիմադիր տարրերի մեջ: Թուրքիայի տիրող տարրերը, իրենց խավարամիտ արքանյակներով, դիտել էին հայերին ոչ այնքան իրեն պատճառ արագին միջամտությունների, որոնք, ի դեպ, շատ էլ չեն վտանգում նրանց շահերը, որքան իրենք թուրք նեղափոխության վարակիչ մասերէ: Համեմայն դեպս, հայ ժողովուրդը Թուրքիայում ավելի շատ այլուն է տվել ընդհանուր նիմքերով, քան իր ազգային-ազատագրական շարժման բերությունը: Պատահական չէ, որ այդ շարժումը գործն ընույթ է ստանում թուրքական նեղափոխության սկզբնական շրջանում: Սյոյ օճառին է, որ թափ է առնում թուրքական նեղափոխական շարժումը երիտասարդ թուրքերի նախանոր՝ Միտինատ փաշայի ջամակներուն: Եզիստոսում ծնունդ նեն առնում «Խթթինսոն» և «Հուրիեր» նեղափոխական թերթերը, որոնց էջերում երիտասարդ թուրքերը ընմադարսում են հին կարգերը և սահմանադրությունն պահանջում: Նրանց ազդեցությամբ երկրում աճող դժգոհություններն իրենից վանելու համար կառավարությունը թուրքերին մղում է քրիստոնյաներին և, առաջ շին երթին, հայերի դեմ: Արտաքին բաղադրական իրադարձությունների նետաներով, 1877 թ. մարտին բացվում է թուրքական առաջին խորհրդարանը, որը հույսեր է ներշնչում հպատակ ազգերին, այդ թվում նաև հայերին: Բայց նենց որ Համիդը ամրանում է գանի վրա, նոյն ռարդա վերջին ցրում է խորհրդարանը՝ իր երկարաւուն գահակալության շրջանում այլևս եքքեք չիրավիրելու համար: Միւժամանկ շնորհազորիկ է լինում մեծ վեզիր Միտինատ փաշան՝ թիւ հետո Արարտիայում խեղդաման լինելու համար: Հաջորդ տարվա մայիսին բռնկվում է Ալի Սուլամիի սպատամբությունը Պոլսում, որ այդ օրե-

թին, ոռու-թուրքական պատերազմի հետևանքով, կոտակվել էին Բայ-
կաններից գաղթած շուրջ 150 հազար գաղազած մոհանդիրներ: Ապօս-
տամբությունը ճնշելուց հետո Համիդն այդ գաղազած ամրությ ցրում
է գավառներով մեկ՝ գրգուելով հրանց հայերի դեմ: Հակառակ այս
կացորժյան, առաջին հայ քաղաքական-հեղափոխական կազմակեր-
պությունը, կամ, ավելի շուտ՝ հոսանքը (հանձնեն Արմենականների),
այդ օրերին հանդես էր գալիս ոչ թե անջատման, ազգային անկա-
խության պահանջներով, այլ ընդհանուր հայրենիքի բարեկարգության
ծրագրով: Շարժման ղեկավար Մ. Փորթուգալյանը իր հանրային աշ-
խատանքը բանաձևում էր որպես «իր ազգի և օմանյան տերության
գույք շահներին նվիրված դործ...»:

Ութսունական թվականներին համիդյան ռեժիմն այլևս կայուն է
ու հզոր ներքին ընդդիմադիր ուժերի դեմ: Իր արյունկզակ քաղաքա-
կանության մեջ Համիդը հենակում էր արտաքին դրամագլուխների ու
ներքին ավանդապետական-կղերական ուժերի վրա: Հայաստանում
ասպատակում են «Համիդին» և քորդ տերերեցները, հայերից խվում
են լավագույն հողերը, բարձրանում են տուրքերը, հաճախաղեա դառ-
նում ավարառությունները, սպանությունները, ստեղծելով դժոխային
մի վիճակ: Եվ, սակայն, այդ օրերին հանդես եկած Հեշակյան կուսակ-
ցորյունը, հակառակ իր ծրագրի, ո՞չ թե հետապնդում է Հայաստանի
անկախությունը, այլ երազում է այնպիսի կարգերի մասին Թուրքիա-
յում, որ հնարավոր կրաքանի ընկերավարության իրագործումն այդ
երկրում...

90-ականի սկզբներին թուրք հեղափոխական շարժումը դեռ քանած
է: Երկրում դրությունը մազաշափ անգամ չի փոխվում. Համիդյան վար-
չակարգի՝ արյունի և թալանի նոյն քաղաքականությունն է տիրում:
Երկրից դուրս՝ Կովկասում, հեղափոխական զատ-զատ խմբումներից
կազմվում է Հայ Հեղափոխական Դաշնակցությունը: Ըստ Էլորժյան,
ոոր կուսակցությունը հնչակյաններից տարբերվում է ավելի կազմա-
կերպական ձևով ու գործնական ձգտումներով և գոնվում է գերազան-
ցապես ոու նարողների մտավոր-բարոյական ազդեցության տակ.
այն դեմ չէ ընկերավարությանը, բայց նախապես անհրաժեշտ է հա-
մարում քաղաքական ազատությունը Թուրքիայի բոլոր ժողովորդների
և ազգերի համար. անջատման ու անկախ Հայաստանի ստեղծման
մասին խոսք չկա երա ծրագրում: Մոտավորապես նոյն ժամանակ,
1892-ին, վերականգնվում է թուրքական հեղափոխական շարժումը, և
Ահմեդ Փարիզում հիմնում է Երիտասարդ թուրքերի նոր մար-

մին՝ «Մեշվերեթը»: Քիչ հետո սնկի պես բուսնում են հեղափոխական
թերթերը: «Էլթթինատ վե Թերագգը» հիմնադիրներից Խսիակ Սյուք-
յուտին և Արդուլլահ Շևսետը ԺԱՆՈՒՄ հիմնում են «Օսմանլը»: Մու-
րադ պելը հրատարակում է ուազմաշունչ «Միզանը»: Եգիպտոսում
լոյս են տեսնում Հոչա Գատրիի «Կանոնը Էսասին» և Ահմետ Սան-
րայի «Սանչակը»: Թուրք պալատական առաջադիմականներից իշխան
Սալահետտինը Փարիզում լոյս է ընծայում «Թերագգը»: Եգիպտոսում
«Շուրա Օսմանի» ու «Ենի ֆիքը» թերթերն արծարծում են նրա գա-
ղափարները:

Զի ուշանում նաև Երիտասարդ թուրքերի գործունեությունը. Սյուք-
յուտին, Շևսետը և Իբրահիմ Տենոն 1894-ին Պոլսում հիմնում են «Էլթ-
թինատ վե Թերագգը» անդրանիկ կազմակերպությունը: Նրանք հիմ-
նականում հետապնդում են Միտհատ փաշայի ասհմանադրությունը՝
պատասխանառու նախարարություն, ազգերի հավասարություն օրեն-
քի առաջ, մամուլի և խղճի ազատություն, անձի և սեփականության
ապահովություն և այլն:

Թև առաջ հեղափոխական տրամադրությունների նման բարձրա-
ցումից՝ թափ է առնում և հայ ազատագրական շարժումը. հայ-թուրդ,
հայ-թուրք ընդդիմադիրների համագրծակցության փորձեր են ար-
գում: Ու Համիդը իր մաղճը թափում է հայ ժողովրդի վրա. սկսվում
են 1895—96 թթ. ջարդերը, որոնց զոհ գնացին 300 հազար հայեր: Երկրում
գործող թուրք հեղափոխականներից ձերբակալվեցին միայն
մոտավորապես հարյուր մարդ, որոնցից 13-ը դատապարտվեցին
մահվան, 68-ը՝ բանտարկելության (բանտարկություն)...

XX դարի սկզբին ազատագրական շարժման ղեկավարները,
թուրք հեղափոխության վրիպուններից հուսահատ, ձեռնարկում են
հայ-մակեդոնական շարժման համագրծակցություն: 1903-ին Մակե-
դոնիայում ապատամբություն է բռնկվում, որն անմիջապես ծնունդ է
տալիս արտաքին շահագրգությունների. Ավատրիան ձգտում է ձեռք
բերել Սալոնիկը և իր համար պատվանդան ստեղծել դեպի արևելք: Ռուսաստանը
վախենում է Ավստրիայի ուժեղացումից Բալկաններում
և պնդում է միջամտել հավաքարար: Անպետմբերին երկու երկրների
վեհապետների հանդիպում է համաձայնության, որով մա-
կեդոնացիներն ստանում են բարենորոգություններ՝ ավատրո-ռուսա-
կան «քաղաքացիական գործակալների» հսկողության տակ: Օրինակը
վարակիչ էր և հուսադրող: Հաջորդ տարում Սամանում ապատամբու-
թյուն է բռնկվում: Բայց այս անգամ պետությունները լոյս են: Եվ Հա-

միդը իրեն պարտադրված գիշման վրեմք Սակեղոնիայում լուծում է հայերից. սկսվում է Սասունի ջարդը: Երկրում հայերը լիզում են վերթերը: Երկրից դուրս նրա ազատության ղեկավարները փորձում են ընդհանուր հակառակ ստեղծել թուրք ընդդիմադիրների հետ: Նու եքլու տարի առաջ՝ 1902-ին, թուրք ընդդիմադիրների համագումարից հետո Փարիզում հման համագործակցության հնարավորությունը հույսեր է ներշնչում: Միայն թե այժմ թուրք ընդդիմադիրները բաժանվում են եղանու հոսանքի: «Ասկակենտրոնացման Լիգան» իշխան Սալահետինի գլխավորությամբ, անհրաժեշտ է գտնում Թուրքիայում սահմանադրական կարգեր հաստատելու գործում դիմել եվրոպական պետությունների աջակցությամբ: Ազգայնականները, որոնք համախմբված են «Իթթիհատ վե Թերագգրի» մեջ, Ահմետ Ռիզայի գլխավորությամբ, անհրաժեշտ են գտնում շարունակել հեղափոխական գործունեությունը սեփական շանքերով՝ երկրում ստեղծելով հեղափոխական մարմինների սահմեր, խստորեն կենտրոնացված հիմքերով: Եվրոպայի կողմից բազմից խարված հայ ազատագրական շարժման ղեկավարները այս վերջինների հետ են:

Դուս առաջին հեղափոխությունը մեծապես ազդեց հեղափոխական տրամադրությունների վրա Թուրքիայում: Սակայն նաև անկախարար այս հեղափոխությունից, նրա նախաշեմին կովկասյան Հայաստանի սահմանն իրար հետևից անցնում են Թումանի, Որսորդ Գևորգի, Խանի, Զալլատի և այլոց պարտիզանական խմբերը: Բուժ երկրում ծավալվում են Անդրանիկի, Մուրադի, Սեպոնի և այլոց հայուկային խմբերի շարժումները: Այս անգամ շարժմանը համակրում են ավելի լայն խավեր նաև թուրք ժողովրդի մեջ. զորքում, հավատիների շարքերում տեղի են ունենում անկարգություններ: Երկրի ընդդիմադիր տրամադրություններն ազդում են արտասահմանում հավաքված թուրք հեղափոխականների վրա: 1907 թ. դեկտեմբերի 27—29-ին Փարիզում տեղի է ունենում Թուրքիայի ընդդիմադիր տարրերի համագումար: «Իթթիհատ վե Թերագգրից» գալ համագումարին մասնակցում են «Ասպակենտրոնացման Լիգան», Հ. Յ. Դաշնակցությունը, մակեդոնական, արաբական, հայեական զանազան թերթերի, ինչպես նաև հրեական ու եգիպտական ընդդիմադիր հոսանքների ներկայացուցիչները: Այսուղի շատ մեծ է հայ հեղափոխականների ազդեցությունը ընդունված որոշումների վրա. բոլոր ընդդիմադիր ուժերը պետք է հավաքար գործեն. գլխավոր նախական է Համիդի գահընկեցությունը և սահմանադրական կարգերի հաստատումը: Այդ հպա-

տակին հասնելու համար ժողովը քվեարկում է այն բոլոր միջոցները, որոնք կիրարկում է ուսական հեղափոխությունը:

1908 թ. հունիսին ուս և անգլիական վեհապետների տեսակցությունը Ռևելում և համաձայնությունը՝ հավաքարար միջամտելու մակեդոնական խնդրին, հարկադրեց Երիտասարդ թուրքերին համեստ գալ ավելի շուտ, քան ենթադրում էին: Ծարժումը սկիզբ առաջ Սալոնիկում գնդապետ Նիազիի Ամբանելությամբ: Նրան ենթակա հեղափոխական ուժերին շուտով միացան ուրիշները, ի թիվու որոնց ն էնվերը: Համիդի կողմից ապատամբների դեմ ուղարկված գորքերը միացան նրան: Զգալով իր անհստափելի պարտությունը՝ Համիդը ստիպված եղավ նույնի 24-ին վերականգնված հայութարարել այն Սահմանադրությունը, որի հեղինակին երեսուն տարի առաջ ինեղաման էր արել: Դա գահի վրա մնալու միակ ելքն էր, միակ ելքն էր նաև ժամանակ շահելու: Իր հերթին, թուրք հեղափոխության վարիչ ուժը՝ «Իթթիհատ վե Թերագգրը», միշտ խուսափելով շարժմանը տալ լայն ժողովրդական բնույթ, ներկա դեպքում որոշում է հեղափոխությունը պահել «խաղաղ, սահմանադրական հունի մեջ»: Այդ օրերին Պոլսում կոսակցության գերագույն խոյնուրդը որոշում է գահի վրա պահել Համիդին, քանի դեռ նա հավատարիմ կմնա Սահմանադրությանը...

Ի՞նչ էր այդ օրերին հայ ժողովրդի զգացածը. դժվար թե նա կարող լիներ բաժանել Թուրքիայի բոլոր ժողովուրդներին համակած ցնծությունը. քանի Համիդը գահի վրա էր, նրան չէր կարող փրկել նոր պատուհաններից և ոչ մի Սահմանադրություն: Ու այդպես էլ եղավ, մի ամիս չանցած, Համիդը հայերի դեմ լարեց մոռալ, խավարամիտ, կղերավանդապետական տարրերի մի ամրուս, որն Սուհանայում սրի քաշեց շորջ քառասուն հազար հայերի: Դա նոր զանգվածային շարդերի նախերգանքն էր: Բայց նախքան այդ՝ Համիդին անհրաժեշտ էր մաքրել իր հաշվիները հեղափոխության հետ: 1909 թ. մարտին Պոլսում ծայր առաջ հականեղափոխությունը: Սակայն այս անգամ բախտը դավաճանեց Համիդին: Ապրիլի 26-ին հականեղափոխությունը ճզմվեց, և Համիդը գահընկեց եղավ: Այդ օրը նայ ժողովուրդը վերջապես ստունց իր հաղթությունը: Բայց, դժբախտարար, նրան վիճակած չէր վայելելու այդ հաղթանակի պատուները...

Անցավ երեք տարի, հույսերի, ակնկալությունների, սպասումների երեք տարիներ, որոնց ընթացքում հայ հեղափոխական կոսակցությունների և համայն արևմտահայության միակ կարգախոսը Օսմանյան ընդհանուր հայրենիքի վերածնունդն էր: Կան անհամար որոշում-

մեր, հայտարարություններ ժամանակի հայ հեղափոխական գրականության մեջ այդ նախն: Եվ սակայն ոչինչ չփոխվեց: Հեղափոխության նախօրյակին նրբինատի տված բոլոր խոստումները հայ ժողովրդի կյանքի և ապահովության մեջն չորս ընկան: Հայկական գավառներամ կողոպուտներն ու մասնակի սպանությունները շարունակվեցին, նոդային հափշտակություններն ստացան ծավալուն բնույթ: Այս բոլորին վկա են Պոլս պատրիարքարանի անհամար բողոքները, որոնք ուղղվել են կառավարության այդ մոռայլ դեպքերի առթիվ, 1912 թ. ընթացքում:

Այդ օրներին հայ հեղափոխականների մեջ բարյալքությունն ընդհանուր էր: Ոմանք քարոզում էին նորից «Լեռ բարձրանալու» անհրաժեշտությունը: Բայց ընդհանրապես նրանց հայացքներն ուղղվում էին դեպի դրսի ուժերը: Ռուսաստանում նրանց խոստանում էին իրազան բարենորդություններ, որոնց համամիտ էին Անգլիան ու Ֆրանսիան: Բազմաթիվ սին խոստումներից հետո թերև սրտով չեր, որ հայ հեղափոխականները մոտենում էին այդ ելքին, բոլոր միջոցներն սպառված էին, որիշ ելք չկար: 1913-ին բարենորդումների խնդիրը կարծես ստանում է իրական հանգամանք: Հաջորդ ամռանը Պոլսի և հասնում եկրոպացի երկու բարենորդիչներից մեկը՝ արդեն ընդունված բարենորդությունների գործը ձեռնարկելու համար: Բայց բռնկվում է պատերազմը, ու մի տարի հետո Հայաստանում այլևս հայ չկար...

Ինչպես կարելի եղավ իրազործել այդ ահավոր ոճիրը մեր դարում: Արևոտահայ ժողովրդի բնաջնջումը միայն նրբինատի և նրա դեկավար դեմքի՝ Թաղեաթի գործը չեր: Կար մի հին, արյունու անցյալ, որ դարերի հետևից դեռ ցցել էր իր մոռայլ դեմքը: Թաղեաթը ժառանգել էր իր նախորդների արյունու ու ատելավառ անցյալը: Սակայն նաև Թաղեաթի անձը, անկափ այդ անցյալից, իր մեծ դերն ունեցավ: Թաղեաթն իր հրեշային դամանությամբ գերազանցեց հայ ժողովրդի բոլոր մին ու նոր դահիններին:

Ո՞վ էր այդ Թաղը, որ այդպիսի ճակատագրական դեր կատարեց հայ կյանքում: Ըստ տեղեկությունների, Թաղեաթը պոմաք էր, բուղուարական ծագումով, որի նախահայրները դարեր առաջ ընդունել էին մահմեդականությունը: Որքան ճիշտ է այդ, չգիտենք. հիշում ենք միայն, որ պատերազմի շրջանում հակառակորդ իթիլաֆականները նրան որակում էին «սոռնե», ատելավառ մի արտահայտություն, որը նշանակում է դավանակու, ավելի շուտ՝ որացող: Նրա համար կրո-

հական հանգանամքները ոչ մի արժեք չունեին. Առ հավասարապես անտարբեր էր դեպի բոլոր կրոնները: Հայրը՝ Գրիա Ալի, Զեքուն գյուղից, դատական պաշտոնյա էր: Ըստ բուրքական աղյուրների, դեռ Երիտասարդ հասակում Թաղեաթը բանտարկվել էր Սովորական պոլում, որ և նաքել է հեղափոխական շարժմանը: 90-աման թվականներին, երբ Երիտասարդ բուրքերի գլուխ էր անցել Աթեն Շիքան, Թաղեաթը հեռագրական պաշտոնյա էր: Նրա հեղափոխական կերպանը եղել է նիկելի երևափոխան նրբանիմ թեզը, որը երիտասարդ Թաղեաթին ընդունելով էր կազմակերպության մեջ և հաճախարձել «Մեշվերելոց» տարածելու գործը: Քիչ հետո Թաղեաթը կարգվում է Սալոնիկի հեռագրական բարտողար, որ և մտնում է «Օամանը Հորիեթ Զեմինեթի» մեջ, իրեն գործում անդամ: Նրա ընկերներն էին՝ Մանյասի Զայէ Ռեֆիզը, Զավիդը, Միտիան Շյուքրին, Նազրին և Զամփուլադը, որոնք կազմութ էին Սալոնիկի կազմակերպության կողմը:

Երբ են սկսվել նրա հարաբերությունները հայ հեղափոխականների մեջ, ստուգապես չգիտենք: Հայութի է միայն, որ իր անսպառ եռանդով, հետառ կաճքով և, մանավանդ, շրջապատը գրավելու բացադրիկ ընդունակությամբ նա շատ շուտով ձեռք է բերում որոշ դիրք և ազդեցություն Երիտասարդ բուրքերի մեջ և բարեկաններ՝ հայ հեղափոխականների շարքերում: Իր այս հայ բարեկանների մոտ Թաղեաթը 1909 թ. մայու 31-ի հականեղափոխության օրերին ապաստան գտավ, պահպեց, մինչև որ նաշողվեց փախչել և անվտանգ հանել Սալոնիկի:

1911 թ. Թաղեաթը ներքին գործերի նախարար է և միաժամանակ նրբինատի նախագահն: Այդ օրերին է, որ հատկապես վատութարանում է հայ գավառի կացությունը, որ նոդային հափշտակությունները, ավարտությունները և մասնակի սպանությունները վերջ չունեին: Իր դիրքի, ազդեցության և պաշտոնի բերումով նա կարող էր հիմնադրել արմատագիլ անել այդ երևոյթները: Բայց, եթե արդեն իսկ սպասում էր հարմարագոյն պահին՝ իր դիվանին ծրագիրը գործադրելու, հականակի է դառնում նրա թույլատու ընթացքը:

Թաղեաթը մնաց դեկավար դիրքում գրեթե մի ամբողջ տասնամյակ, բայց Թուրքիայի կյանքի և ոչ մի խնդիր լուծում չստացավ նրա երկարատև իշխանության ընթացքում: Ներքին վերանորդությունների բոլոր խնդիրների լուծման մեջ նա ցույց տվեց մի քառային պատեհապաշտություն, որը համիդյան ուժիմին հատուկ էր միայն արտա-

թիւ խնդիրների լուծման մեջ: Գալով այս վերջիններին՝ ուշագրավ է, որ Թալեաթը և իր կուսակցությունը թե՛ Տրիպոլիսի, թե՛ Բալկանյան պատերազմի, թե՛ համաշխարհային պատերազմի նման բախտորոշ խնդիրների լուծման ժամանակ թիւս ու պարզունակ ելքերից զատ ուրիշ միջոց չգտան: Թալեաթի նետ գործ ունեցած եվրոպական դիվանագետները, ինչպես նաև թուրք թե՛ օտար հասարակական գործիչները, նրա մեջ չեն նշմարել իր դիրքին, պաշտօնին համապատասխանող մտավոր պատրաստությունը և պետական անձին անհրաժեշտ փորձառությունը: Բայց նիշատակում են մի շարք տվյալներ, որոնց ուժով նա խոնարհ խավերից հասավ ամենաբարձր դիրքերի, կամքի, եռանդի և անդուղ աշխատանքի կիրառմամբ նորանոր դիրքեր գրավելու, խոսելու, հմայելու, անխառն զվարթությամբ շրջապատն իր նետ կատակու արտակարգ ընդունակությամբ, միայն իրեն նատուկ նզոր բնազդի, դիմացինի թարուն մտադրությունները կանխելու, չափավոր և անգամ «դեմոկրատական» կենցաղով մասնավոր կրաքրում, «անկեղծություն», երբ դավադրում է, «քարեկամություն», երբ կատաղ թշնամի է: Սրանք էին նրա հատկությունները և քաղաքագիտական իմաստությունը: Իսկ այդ բոլորը թիւ էր վերածնվող Թուրքիային նոր ուղիներով առաջնորդելու համար:

1914 թ. ամռանը գումարվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության ներթական ընդհանուր ժողովը: Այդ ժողովը մասնավորապես Ռուսումի պեղումով գումարվեց Էրզրումում: Բայց Թալեաթը ուրախ էր, որ ՀՅԴ-ի ընդհանուր ժողովը գումարվում է Էրզրումում: Հայ հեղափոխականները դա ընկալում էին որպես բարեկամության վերականգնուման մի ցուց Թալեաթի կողմից: Ու նորից վերազարթենում էին նոյն սերը հայկական բարենորդությունների գործադրության շուրջը: Իրականում Թալեաթը այդ ճակատագրական օրերին ցանկացել էր իր ձեռքի տակ ունենալ հայ ականավոր հեղափոխական գործիչներին: Ժողովը դեռ չեր վերջացել, երբ սկսվեց համաշխարհային պատերազմը: Թիւ նետու Էրզրումում հայտնվեցին Թալեաթի երկու պատվիրակները՝ Իթթիհատի կենտրոնական կոմիտեի քարտուղար Բենակետուին Շաքիրը և հայտնի իթթիհատական գործիշ Նաջի թէյը: Նրանք եկել եին բանակցելու հայ հեղափոխականների նետ՝ Թուրքիայի պատերազմին մասնակցելու պարագային նրանց բունելիք դիրքի մասին: Վատահ, որ Ռուսաստանը պատերազմում պիտի ջախջախվի, Թալեաթի պատվիրակները չեին ծածկում պատերազմին մասնակցելու իրենց մտադրությունը: Նրանք, համակված ուզմաշունչ տրամադրությամբ,

առաջարկում էին նայ հեղափոխականներին գործոն աշակեցություն ցուց տալ իրենց, հանդես գալ հասուկ հայտարարությամբ արտաքին աշխարհի առաջ՝ հայ-թուրք միացյալ ճակատով զենքի տակ քաշել բոլոր նիւ հայդրոկեններին իրենց խմբերով, կազմել նայ կամավորական բանակներ, Կովկասում առաջ բերել պատրամբություն և քայլայել ուստաների թիկունքը, ամեն կերպ նպաստել Թուրքիայի առաջխաղացմանը դեպի Անդրկովկաս: Հայ հեղափոխականները մերժեցին այդ արկածավանդությունը՝ հորդորելով հետ կենալ պատերազմին մասնակցելու մտքից, որը կարող է կործանարար լինել Օսմանյան կայարարության համար, ու առաջարկելով, որ նայ ժողովուրդը կարող է կատարել միայն իր քաղաքացիական պարտականությունները պատկանալ երկրների նկատմամբ: Ընդհանուր ժողովը, իր օրակարգը չսպառած, փակվեց. պատգամավորներից ոմանք բանտարկվեցին, ոմանք արտղություն ունենալ կազմությունը, ոմանք լի հաջողեցրին փախչել, որ կարող էին: Աշնան սկզբներին, երբ դեռ Թուրքիան պատերազմի մեջ չեր, արդեն սկսվել էին մասնակի տեղահանությունները և շարդերը Էրզրումի, Մուշի ու Բիթլիսի շրջաններում: Այս վայրերում զանգվածային ձերքակառություններ էին կատարվում, հայերին զինսպահում էին: Այդ օրերին Թալեաթը Թուրքիայի միահեծան տերն էր... Դառնադես դեպքերի զարգացման և Թալեաթի դերին թիւ թե շատ ծանոթ մարդկանց համար այնուանայնիվ մութ է մնում այս մարդու նոգեկան աշխարհը, որի ընդունակ եղավ մի ամբողջ ժողովուրդ ոչնչացնելու և արմատախիլ անելու Թուրքիայում: Բայց ոչ ոք այնքան դիպուկ չի բնութագրել Թալեաթին, ինչպես թուրք նշանավոր գրագետ Զենար Շնիւսպետինը. «Թալեաթ կատաղի փառամոլ մըն էր... Անոր խուան էր «Երեւալ», երեւալ, միշտ երեւալ... Կը նախընտրէր, որ պետությունը իր ձեռքին մէջ մեռնէր, քան թէ բարգաւաճէր ուրիշներու ձեռքին մեջ... չար տաղանդ մը ունելու թակարդ լարելու, դարանակալ ըլլալու, յանկարծակիք բերելու ընդունակ, խարդախ, լարախաղ, խարերայ տաղանդ մը: Թիւ իր անհատական կեանքին, թե՛ հանրային կեանքին մեջ Թալեաթի լենարանը, լծակը, ուժը, տոկունութիւնը միեւնոյն բանն էր՝ Էնթրիկ: Շատ խոնարհ խաւ մը բարձրացաւ ամենէն բարձր դիրքին, շնորհի Էնթրիկի: Սակայն իր բախտածառը որքան բարձրացաւ, այնքան լայտնի եղաւ, որ արմատները աղբի մէջ էին...»:

Գրի առնելով Ս. Թեմիլիրյանի վերթիշումները՝ մենք մի նպատակ ունեինք՝ հայտնել այն ամենը, ինչը կապ ունի նայ ժողովրդի մեծա-

գովն ուլքերգության հետ, և հանձնել պատմաբանի ուշադրությանը այն ամենը, ինչ կարող էր ասել այդ մասին Թալեաթի ահարենիչը:

1943, մայիս

Բեղքադ

Վ. Մ.*

* Հաճան Մինախորյանը հեղինակն է «1915 թվականը» մեծարքեք գործի, որը լույս է տևել 1949 թ., հեղինակի մահից հինգ տարի հետո: Մինախորյանը հանրապետական հարաւատ անցյալով մի անրասիր անուն է: Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության անդամ էր: Մահացել է տարազրության մեջ՝ թելքրադում, 1944 թ.:

«Հումա»

ՄԱՅԻՍԻ ԿԻՍՈ...

Անհունի աղջամուղին մէջ յիշատակդ իսկ թառամելու, առ յաւէտ կորսումելու գաղափարէն զարհուրած՝ փնտոեցի քեզ, մայր իմ ...

Թափառեցայ երկրէ երկիր, անապատէ անապատ: Անցայ մեր տարախտ ու աժերակոյտի վերածուած հայրենիքի քաղաքներն ու գիւղերը, սարերն ու ձորերը ...

Զուր եղան իմ բոլոր որոնումները ... Ամէն կողմ ամայութեան զարհուրելի համայնապատկերը կը ներկայանար իմ աշքերուն: Զկար այլիս մյջն կեանքը, եռ ու զեռը, դաշտերու հմայիշ երեւոյթը, առուակներուն կարկաշինը, թոշուններուն ուրախ զուարթ ճոռողիւնը ...

Բոլորը, բոլորը շքացեր էին արինոտ բորենիին զաղանային բնագդին բաւարարութիւն տրուած ըլլալու հետեւանքով:

Բուերու թագաւորութիւնն էր տիրապետովը հայրենիքին մէջ ...

Ամայութիւն, ամայութիւն ...

Եփրատը անհանգիստ ու գժուած էր ձեր խոշտանգուած դիակներէն իր անսկիզբ ժամանակներու ընթացքը խանգարուած ըլլալուն ... Յոզոքի ու ըմբռանտութեան մոնշիւնները միայն կը լսուէին իր կոհակներէն: Ան ես կ'ողբար իր անցեալը:

Վճիտ ու յստակ ջուրերը ներկուած էին հայ մայրերու, երեխաներու, երիտասարդներու եւ ծերերու անմեղ արինով ... Իր հոգին եւս վրդովուած էր հայ յեղի ահոելի ողբերգութիւնան կինդանի վկան ու ականատեսը ըլլալուն համար ...

Հեռաւոր եւ անծանօթ անապատները անողոք ու լուս էին: Կարծիս յագեցած ցնէին իրենց հրկիզեալ աւազներուն վրայ ցրուած ոսկերոտիքէն ...

Դառնօրին ողբացի ի տես մարդկային պատմութեան մեջ տեղի ունեցած արհաւիրքներու այս ամենազարհուրելիէն: Տատանումներ ունեցայ մինչեւ յուսահատութեան անփառունակ ոլորտները տանող, բայց կսկիծը, ողբերգութեան ահաւոր տեսարանները ցնցեցին իմ հոգին,

ուժ ու կորով ներշնչեցին ինձի՝ ապրելու, կեանքը շարունակելու մտքումազը պարտադրելով։ Թերեւս անոր համար, որ առիթը ունենամ քեզի հանդէպ, մայր իմ, եւ քեզ հետ բիրաւոր հայ մայրելու, որոնք խաշուեցան հայ գողգոթային վրայ, իմ հայ զավակի՝ տարրական պարտականութիւնս կատարելու ... որեւէ ձեւով յաւերժացնելու յիշատակը թափուած արեան դետերու ...

Դուն, մայր իմ, որ կեանք տուիր ինձի, արտասուաթոր աշքերով համբուրեցիր զիս դառն զզացումով մը բեցուտծ, թէ այլեւս քիտի շտեսնէինք. իրաւունք ունէիր։ Ճիշտ էր նոյնպէս ու հառաջանքը եւ արդարացի՝ «Հազիւ մեծոցոցի, թեւ առիր ու կը թոշիս կը հեռանաս ինձմէ»։ Այո՛, հեռացայ. Այլեւս քեզ յափտեանս չտեսնելու պայմանով, բայց քու տոււած կաթը, քու ունեցած մայրական անժաման գուրգուրանքը տյնպիսի խոր առմատներ ձգած էին իմ հոգիի ալքերուն մէջ, որ մոռնալ այդ բոլորը, անտարքեր մնալ, մանաւանդ քու եզերական վախճանէն յետոյ, կարելի շէր ...

Այսօր, խորհրդապաշտ հաւատացեալի մը նման, ուզեցի «Անժանօթ մօր անյայս գերեզման» մը կառուցանել իմ հոգիիս մէջ ու երկիւղածօրեն երկրագել այդ կոթողին առշեւ, որպէս հնամենի բազինի մը... Թւղիցի, իմ հեթանոս աղօթքի խորհուրգները, միացուցած խունչկի ու կնդրսւկի բորբումնաւէտ ծուխին, ցրուել ու հասցնել անհունի առեղծուածային բարձունքները, որպէս իմ սրտագին պաշտամունքը քու անմոռանալի յիշատակին, մայր իմ, ինչպէս նաև հազար-հազար ողջակիզուածներուն, որոնք նահատակուեցան մեր ցեղի աղատագրութեան պայքարին համար ու անէացան առ յաւէտ՝ առանց հողակոյտի, առանց շիրիմի ...

ՍՈՂՈՄՈՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ՄԵՐԲԻԱՅԻՑ ՎԱՅՊՊԱԽԻՄԱԿՅԱՆ

Երդնկայից նոր էի հասել Սերբիայի գավառական քաղաք Վաչու, երբ ամեն բան տակն ու վրա եղավ։ Սարաւոյում մի ոերբ ուսանող ատրճանակի երկու հարվածով սպանել էր ավստրիական գահաժառնդ Ֆրանց Ֆրեդինանդին։ Ենթադրվում էր, որ պատերազմ կլինի։ Այնուհետեւ զեպքերը զարգացան գլխապտույտ արագությամբ։ Հուլիսի վերջերին Ծուսաստռունը զինված պատրաստականության բերեց իր ծովային և ցամաքային ուժերը։ Օգոստոսի մեկին Գերմանիան կանխեց նրան՝ պատերազմ հայտարարելով։ Ֆրանսիան հանդս եկավ իր գաշնակցի կողքին։ Բայց զենքի առաջին հարվածները իշան Բելգիայի գրւին, ինչը որ լավագույն առիթ հանդիսացավ Անդիայի համար Գերմանիային պատերազմ հայտարարելու Այսպես սկսվեց պատմության առաջին մեծ սպանդը։

Սերբ ժողովուրդը ոգևորությամբ փարվեց զենքին։ Հասել էր իր ազգային իշձերի պահման ժամը։ Լավ ուտող, խմող, արեկլան մեղկ անուրջներում թմրած Վալենյի բնակչությունը շարժման մեջ էր։ Տեղի էին ունենում բազմամարդ հավաքույթներ և ուզմաշունչ ցուցեր։ Ժողովրդի առաջնորդները իրենց ճառերում հիշում էին Ստեփան Նեմանյայի, Դուշան Սիլեֆի ծամանակները, նրանք ժողովրդին կոշում էին ներշնչվել Մարիցայի հովափի, Կոսովոյի նահատակ հերոսների ոգիներով։

Օգոստոսի կեսերին պատերազմի հրդեհը հասավ Սերբիայի սահմաններին։ Ավստրիացիները երկու բանակներով մտան Սերբիա՝ մի հարվածով վերջ տալու հոփորտացող թշնամուն։ Բայց չորս օրվա ժանր կոփներից հետո ստիպված եղան ետ քաշվել։ Հարվածն այնքան անսպասելի էր, որ ավստրիացիները կրկնեցին իրենց ներխուժումը միայն չորս ամիս անց, երբ արդեն պատերազմի մեջ էին նաև թուրքերը։

Ի՞նչ էր կատարվում Վալեոյից գուրս, Հայտնի չէր, Քաղաքի վեցյոթ հայերը պրեթե ամեն օր մեզ մոտ էին: Կարծես պատերազմի բովանդակ ծանրությունը վիճակվել էր նրանց: Թուղթն էլ երկրում ընտանիքներ ունեին: Բոլորն էլ խիստ մտահոգված էին նրանց քախտով, և ամենից շատ՝ հայրս, եղբայրներս: Ինձ համար անհասկանալի էր այդ. ի՞նչ կարող էր պատահել կանոնց, երեխանքին, երբ հոմիզյան ռեժիմն արդեն տապալված էր, ու երկրում տիրում էր Երիտասարդ թուրքերի արդարախոհ իշխանությունը: Ճիշտ է, նրանց օրող եղան Աղանայի ջարդերը, բայց ո՞վ շփոտեր, որ այդ վերջին տուրքն էր թուրք հականեղափականությանը, որ պետք է վեարեին հայերը, իբրև թուրք հեղափոխության գիտավոր ազդակը կամ նրա առաջին արտահայտիչը:

Ու ես աշխատում էի սիրտ տալ նրանց՝ երերից բերած գեռ շատ թարմ տպավորությունների հիմքերով: Խոսքերս սինոփիշ ազդեցություն էին թողնում նրանց վրա: Բացառություն էր հայրս, որ լսում էր զլուխը թիւ թեք, ծնողը ձեռնափայտին հենած, աղակինեցի պես անշարժ աշքերը դեմքին հառած: Նրա այդ հայացքը միշտ շփոթության էր մատնում ինձ:

Տարին վերջին նա մի նամակ ստոցավ Սոֆիայից: Գրում էր իր հին բարեկամ Դուկաս աղան, որը տարիներ ի վեր Բուլղարիայում կատարում էր Հասարակական, Հեղափոխական աշխատանք: Դուկաս աղան գրում էր, թե հասել է հայ ժողովրդի վերջնական աղատագրության ժամը թուրքական լծից, թե Բուլղարիո հայությունը կազմում է կամավորական խմբեր՝ կովկասահայերի ձեռնարկած աղատագրական շարժմանը միանալու համար և, թե տարիքը ներեր, ինքն էլ զինքը ձեռքին պիտի միանար այդ խմբերին՝ դարավոր թշնամու դեմ կովելու համար: Նամակին կցված էր մի կոշ, որ Հրահանգում էր զենքի ընդունակ բոլոր հայերին արձանագրվել կամ վոր:

Հազիվ 18 տարեկան էի, և նամակն ինձ ցնցեց իր ողեշունչ բովանդակությամբ: Բայց, Հակառակ սպասածիս, այդ ամենը խիստ ծանր տպավորություն թողեց մերոնց վրա:

— Վերջացավ,— ասաց հայրս՝ բոլորովին ընկճված,— պետք է մտածել, թե ինչպես կարելի է գուրս բերել այն դժոխքից տնեցիներին:

Ինձ զէր դրադեցնում այդ հարցը, ևս ողջ էությամբ համակված էի Բուլղարիա անցնելու գաղափարով, որ առանց Հոքս համաձայնության, տուրանց անցագրի այդ օրերին ոյտուրին չէր: Քաղաքում սերերի ոգևո-

րությունը հասել էր գագաթնակետին: Խատելի շրջանում նոր, չտխացախիշ ջարդ էին կրել ավարիացիներք և անկանոն կերպով նահանջելու Դաշնակիցները, բայց աեղեկությունների, ամեն տեղ հաղթական էին, թեև, բայց ուստակած ճակատից, կորիվները տեղի էին ունենում իրենց իսկ հողերում: Ռուսները մտել էին Սիլիզիա, Պողնան և իբր թե շուտով վար պիտի հոսեին Կարպատներից: Վիեննայի, Բուլղարիշտի, անդամ Բնոլինի օրերը հաշված էին:

Նոյեմբեր ամսվա վերջին սերբ-բուլղարական սահմանում ինձ ձերբակալեցին իբրև լրակու, բայց ինձ հաջողվեց պարզել այդ թյուրիւմացությունը և անցնել Բուլղարիա: Այդ օրերին, երկու սլավոն ժողովուրդների որամադրությունների մեջ տարբերություն չկար: Բուլղար ժողովրդի համակրանքը նույնպես դաշնակիցների կողմն էր. նա ոչ մի քենախնդրություն չուներ եղեկից թշնամի սերբերի հանդեսի: Բայց այլ էր պետական շրջանների որամադրությունը: Մակեդոնիայի բաժանումը, Դոբրուչիցի բուլղարական մասի կորուստը դեռ շատ թարմ էին: Բուլղարիան չեղող էր, բայց արդեն այդ օրերին պարզ էր, որ իր շեղոքությամբ նպատակ ունի ժամանակ շահելու՝ հարմար վայրիանին փոխադրելի դիմելու համար:

Սոֆիայի Հայերի մեջ տիրում էր արտակարգ եռուղեռ՝ ժողովներ, Հավաքություններ, փայրուն-ծրագրեր ամեն տեղ: Մարտիկյանի «Ծեստի Սեպտեմբեր» սրճարանը ծայրից ծայր լիքն էր շարքային և զեկավար գործիչներով: Նրանք վիճում էին դեպքերի հավանական զարգացման մասին: Թանձրամարմին, միջահասակ, հին կաղնու բնի պես հաստատում Դուկաս աղան այսուհետ էր: Նա կարականապես մերժեց ինձ մըտցնել կամավորական խմբերի ցանկի մեջ, երբ իմացակը որ եկել եմ առանց հորս դիտության: Բայց ամենի լավ դրության մեջ չէին նաև մյուսները: Մի շաբաթ առաջ արձանագրվածներին էլ չէին ճամփում: Դուկաս աղան ցրջապատել էին արևմտահայ երիտասարդներ, որոնք զաղաղած պահանջանական տալով:

— Ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ, ի՞նչն է պատճառը այս ձղձգումների:

Դուկաս աղան, որին անուշությամբ, որին թստածայն, կարգի էր Հրավիրում՝ խուսափոխական պատասխաններ տալով:

— Պետք է սպասեք, կարգադրված է միասմանակ դադարեցնել կամավորների առաքումը: Ի՞նչ կարող ենք անել, չէ՞ որ պետք է վերադաս մարմնի հրահանգին ենթարկվել:

Բայց ոչ ոք միտք չուներ այդ անհայտ մարմնին ենթարկմելու:

Աղջի տղատագրումն սկսվել էր, և ամեն մարդ ներքին բուռն պահանջ ուներ այդ սուրբ գործին օր առաջ մասնակցելու:

Մի խմբի հետ հաջողվեց անցնել Ռումինիա: Բուխարեստում իմացա, որ հայրս հեռագրել է, որ ինձ հետ ճամփին, Բայց արդն ուշ էր: Մի քանի ընկերներով, սուսական դեսպանատան աշակցությամբ նույն գիշերը մեկնեցի Ռումիա:

Կայարանում ամեն տեղ արտակարգ իրարանցում էր. զնացք գրնացքի հետեւց մեկնում էր՝ ժանրաբեռնված թնդանոթներով, ուղամամթերքով, զինվորներով, ձիերով: Տեղ-տեղ կատարվում էին ուղմանակատ մեկնողների շնորհալից հրաժեշտի ցույցեր: Ապա զնացքի հանից թափահարում էին թաշկինակներ, ու երբ ցուցով ոգերվածները ցըրվում էին, մայթերի վրա մնում էին կանգնած ծեր, երիտասարդ կանաչք, աղջիկներ, որոնք քիչ առաջ զվարթորեն պարզած թաշկինակները տանում էին աշքերին ու ծածուկ լաց լինում.

* * *

Յրդին Թիֆլիսում էի: Արձանադրվել էի կամավոր: Ինձ հետ հասած ընկերների և նախապես արձանադրվածների հետ միասին տեղավորվել էինք Վելլամինովսկայա փողոցի ծայրին, մի ընդարձակ աղգային կալվածքում, որ կազմում էր կամավորական հանրակացարաններից մեկը: Կալվածքը զուգորդում էր բուսաբանական այսու շրջանին, ուր և կատարում էինք զինավարժության փորձերը: Թեև անցել էր մի շաբաթ, բայց նոր էի ընտելանում բազմագեմ Թիֆլիսին, որ առաջին օրերից հմայել էր ինձ: Իրինապահներին սովորաբար իջնում էի Վելլամինովսկայա փողոցի երկարությամբ և կանդ առնում քաղաքապետարանի անկյան դեղատան մոտ:

Փետրվարին մեր սարերն ու ձորերը դեռ պատաժ էին լինում ձյունով: Այսինչ այստեղ արևի ջերմ ճառագայթների տակ փայլվում էր գեղատեսիլ Երևանյան հրապարակը: Մանր քամբերով սալահատակած այդ ընդարձակ հրապարակը կարծես ներկայացնում էր Թիֆլիսի մանրանկարը՝ շրջապատված Հյուրանոցներով, վաճառատներով, խանութներով, գետնափոր զինետներով, Թամամշեկի ընդարձակ քահանապարանի դիմաց բռնում էր հրապարակի տմբող ճակատը՝ հարյուրավոր կրպակներով:

Այդ օրերին Երևանյան հրապարակն էր հայ քաղաքական կյանքի կենտրոնը: Կային երեք անկյուններ, ուր սովորաբար խմբվում էին հայ

ազգային, հասարակական, հեղափոխական գործիչները: Դեղատան գեմ ու գեմ, փողոցի անկյունից քիչ ներք, դեռ լեռկ ու իրենց զարդարանքներին սպասող ժառերի տակ ընկած էր «Անտառլիա» ճաշարանը, որ պահում էր մի էրգորումցի հայ: Այստեղ կարելի էր տեսնել Թիֆլիսում նղած բոլոր խմբապետներին, զինվորներին, կամավորներին, որոնք սեղանների շուրջ խմբված՝ վիճում էին կամ աղմկարար ծիծաղում: Մյուս անկյունը, որ գտնվում էր Թամամշեկի քաղաքանսարայի տակ, ներկայացնում էր հոչակավոր «Թիֆլիպումուրին»՝ զետնափոր առաջնակարգ մի գինետուն, որ հայտնի էր իր ընտիր խորովածով, Կամփեթի լավագույն զինիներով, պատկանում էր թիֆլիսեցի մի հայի: Այստեղ խմբված էին զեպքերի հետեւանքով իրենց հայությամբ հանկարծ զորացած թիֆլիսցի վրացախոս, ուսւախոս հարուստ հայեր, Անդրկովկասի գանազան շրջաններից Թիֆլիս եկած հայ հասարակական գործիչներ, ինչպես նաև այդ օրերին ազգային գործունեության նվիրված Գայեր: Եթուրդ անկյունը «Սակայանի կանդիտերսկին» էր, եվրոպական իմաստով մի առաջնակարգ սրճարան, որ բռնում էր Ծրեանյան հրապարակից զգալի զարիկերավ բարձրացող Սոլոլան՝ թաղամասի անկյունը: Այստեղ հավաքվում էին դերասաններ, գրադետներ, կուսակցական հեղափոխական գործիչներ, ուսուցիչներ, ուսանողներ, առհաստրակ ամեն կարգի հայ մտավորականներ:

Բոլոր այդ ժամանակավայրերում կյանքը եռում էր: Հայը, Հայատանը, հայկական հարցը, պատերազմը, կովող ուժերի զործնական և տեսակարար կշիռները, զանազան ճակաաներում ստեղծված դրությունը թունդ էին հանում մարդկանց: Հույզերի և հոգուների մի աննախընթաց շրջան էր ապրում կովկասահայությունը՝ զգալիվ իրեն սերունդների ազգային երազների իրազործման նախօրյակին:

Պարապմունքներից ազատ ամբողջ ժամանակը գրեթե միշտ անժկացնում էի իմ միակ հայրենակցի՝ Յանգյանի մոտ, որ «Սեներնին նոմերա» հյուրանոցի տակ ուներ մի համեստ կաթնատուն: Ամսվա վեթչում պատահաբար իմացա, որ Թիֆլիսում են գտնվում նաև Թաթիկյանները: Երկու եղբայրներից ճանաշում էի միայն պր. Խաչատրյան, որը երզնկայից մեկնել էր ընդամենը երեք-չորս տաքի առաջ: Դեռայնքան մեծ էր ծննդավայրիս կարուր, որ անմիջապես հասցեն վերցրի և գնացի մոտը:

Պարոն Խաչատուրի համեստ մանրավաճառանոցը դտնվում էր Միքայելան փողոցում, որ գետի հղերքին զուգահեռ երկարում էր Վորոնցովի կամբջի թիկունքից մինչև Մուշտայետի պարտեզը:

Տեսնելով ինձ՝ անմիջապես ձանաշեց և նստած տեղից այնպես վեր թռավ, որ հարուցեց մոտը կանգնած մանկահասակ մի աղջկա ընդուստ ծիծաղը: Մի վայրկյանում այնքան հարցումներ ուղղեց ինձ, որ շփոտելով ո՞ր մեկին պատասխանեմ. շփոթության մատնեց ինձ նաև մանկահասակ աղջիկը, որ լրջացած՝ ուն, մեծ աշքերով անթարթ նայում էր, կարծես իս նրան տեսել էի կամ նման մեկի մասին երազել:

— Ե՛, հետո՞, ձերոնք որտե՞ղ են, — շարունակում էր պր. Խաչատուրը:

— Հայրս, երկու եղբայրներս՝ Սերբիայում, մնացածը՝ Երզնկա:

— Իսկ դու ի՞նչ ես անում այստեղ:

— Կամավոր եմ, շուտով պիտի մեկնեմ ճակատ, — ասացի խիստ ուրախ, աղջկա ներկայությամբ այդ մասին խոսելու առիթից:

— Հայրդ գիտե՞ :

— Նախանցյալ օրը գրեցի:

— Այստեղի՞ց:

— Այո՞ :

— Իսկ Սերբիայից մեկնելի՞ս:

— Գիտե՞ր, գիտե՞ր ...

— Հա՛, ժանոթացի՞ր, եղբորս աղջիկն է, մեր Անահիտը:

Աղջիկը համարձակ նայեց ինձ:

— Վերջին անգամ ինչպե՞ս տեսար մերոնց, — ասաց պր. Խաչատուրը:

— Լավ էին:

— Հիմա ի՞նչ պիտի լինի մեր Շահենի վիճակը. սպայաց վարժարանը այս տարի պիտի ավարտեր, ուրեմն եղբայրը եղբոր դեմ՝ մեկը կամավոր, մյուսը ակամա:

— Այս՝ ի՞նչ արած, նա էլ պետք է իր քաղաքացիական պարտքը կատարի, թեև չեմ կարծում, որ նորավարտներին ճակատ ուղարկեն:

— Աստված խոսքդ լսե, մինչև այս պատերազմը վերջանա, հոգիներս կելնե: Վերջին անգամ գրել էր, որ Ռուբեն Էֆենդին պիտի գա և ամեն բան կպատմե, բայց չեկավ: Նրանք ինչպե՞ս էին:

— Որո՞նք:

— Մոմբանները:

— Գործերը հաջող, լավ էին:

— Ինչ որ է, պետք է եղբորս հետ ժանոթանաս: Նո էլ, անշուշտ, կցանկանա տեղեկություններ իմանալ:

— Այս՝ հայրիկն ուրախ կլինի Ձեզ տեսնելով, պարո՞ն, — պարզությամբ ասաց աղջիկը:

Մեկնեցի առաջին իսկ առիթով հանդիպելու խոստումով: Գնում էի ինքս էլ զարմացած ինձնից, հոգիս ճոճանակի պես նետվում էր վեր ու վար՝ անծանոթ հույզերի տարափի տակ: Ո՞չ տեսնում, ո՞չ լրացնում, ո՞չ զգում էի շրջապատս: Հասնելով հանրակացարան՝ ընկա բակի խարքում գրած նստարանի վրա: Կարծես հարրած էի, ոչ մի սուլյդ միտք չկար գլխումս: Մթնշաղը թանձրանում էր: Թոշունները հարակից պարտեղի ծառերին կոկորդ էին պատում՝ վայրագ ու կրքոտ կանչերով: Ցրանք գես ու դեն էին թոշում՝ հաղիվ նշմարելի շյուղը կտուցներին: Գաղց հողի, բացվող կանաչների ու փթթող ծառերի դարնան բույրը երերում էր օգի մեջ: Մթնել էր, երբ սկսեցի հասկանալ, թէ ի՞նչ է կատարվում ինձ հետ: Կարելի՞ է արդյոք, որ անծանոթ մեկը առաջին հանդիպումից այնպես կաշկանդե մարդուն, ինչպես եղավ ինձ հետ: Ամեն պարագայում այդ չէր ներդաշնակում առաջդրած նպատակիս:

Քնից սթափվածի պես ելա ու մտա հանրակացարան: Ըստ սովորության, աղմուկ էր: Օրվա հուղող խնդիրը խոյի շրջանում տեղի ունեցած Տյուղ-դաղի կոփիլն էր, որի ընթացքում ինչ-որ անհասկացությունն էր առաջացել հայ կամավորականների և ուստ զորաբաժնի պետերի միջև: Գնդապետ նալգինը կամավորներին հրահանգել էր ճակատից գրավել Տյուղ-դաղը: Բայց հաշվի առնելով, որ դա անհնարին է, ըստ էության նպատակ է ունեցել ճակատից լրջորեն զրագեցնել թշնամուն, որպեսզի ինքն իր զորամասով անցնի լեռան թիկունքը և հակառակորդի ուժերը բնաջնջի: Հայերը զրավել էին Տյուղ-դաղը, ու թըշնամին ելել էր դաշտ, մինչև գնդապետի համակը: Այսպիսով, թշնամին փոխանակ բնաջնջվի, փախել էր՝ հայերից խլելով մի քանի տասնյակ զոհեր ...

* * *

Անցավ երկու շաբաթ: Լման գարուն էր: Ազգային բյուրոյի կարգադրի մարմնի որոշման համաձայն պիտի մեկնեինք ճակատ: Հակառակ խոստումիս, Թաթիկյանների մոտ շկնացի, ինձ թվում էր, որ լավ է այլևս չտեսնել այն գպրոցական աղջկան, որ այնքան մտածել տվեց ինձ: Սակայն, մեկնելու նախօրյակին քաղաքում տեղ չէի գրտ-

նում և առ էլ գնում էի, կարծես աշքիս առջև նրա դեմքն էր: Ծս որոշել էի այս խնդիրը թողնել բախտին: Այժմ անհրաժեշտ էր կատարել ազգային պարտականությունս: Եթե ողջ ձնայի, և եթե բախտը ցանկանար, նա կարող էր իմս լինել: Ու պետք չէր, որ ինքս ընթացք տայի այդ հարցին, թող ինքն իրեն լուծվեր: Մի տարօրինակ նախազգացումով անդամ թվում էր ինձ, թե միջամտությունս վտանգավոր է: Եվ սակայն մեկնումից առաջ նրան մի անդամ էլ տեսնելը հզոր պահանջ էր դարձնել ինձ համար:

Վորոնցովի կամրջի վրա դեպքում են ինձ նման անդրծներ: Մի գեղջուկ կանդնած է կամրջի անկյունում, թեի տակ սեղմած տասապելական ճանճի նման պարկապղուկը տղղում է: Տասնամյա մի տղա, նրա մոտ կանդնած, հողնած աշքերով դիտում է անցորդներին: Հայր և որդի միասին պետք է հայթայթեն թերեւ բազմանդամ ընտանիքի օրիվա ապրուստը այդ ձևով: Այդ էլ բախտի խնդիր է, նայած թե անցորդներից ով ուշապրություն կդարձնի նրանց: Տղան հանկարծ նայեց ինձ, իս մոտս եղած բոլոր մանրութը նրան տվի: Եշմեց, հոր նվազը ընդհատվեց:

Քուռ գետը հորդել էր, տիղմի պես պղտորվել: Թափով քշում, տառում էր հորձանքների մեջ ընկած վայտեր, մացառներ, եղերքներից տեղահան արած ծառերի կոճղեր, կամրջի տակ նա հարկադրված է կծությունը շափակորել, եղերքներից կոհակները խուժում են դեպի ներս ու կենարնում պտուտակած լճանում: Կամրջի մյուս ծայրին ջուրն այնքան է բարձրացել, որ մետրաշափ մի բարձրություն է մնում անկյան դինեատան բութ պատին բացված կլոր օդանցքին հասնելու համար: Այնտեղ մաղիկ, կամրջի երկաթյա ճաղերին կոթնած, նայում են պատին: Սաժենաշափ պատի օդանցքներից մեկով մի կատու առաջացել է դեպի գետը այնքան, որ զլուխը մնացել է դուրս, մարմինը՝ անցքի մեջ, նա չի հասկանում ետ-ետ գնալու հնարավորությունը ու, սարսափահար դիտելով առջել բացված հուզված ջրերը, մեծ զգուշությամբ փորձում է մարմնով դառնալ: Բայց օդանցքը նեղ է: Փողձերն ավելի են վտանգում դրությունը: Այն ժամանակ նա սկսում է աղերսագին մլավել դեպի կամուրջը՝ մարդու պես օդնություն խնդրելով: Մի ուսւ իին զլխապատառ իջնում է գինետուն: Վայրկյան շանցած կատուն դիվահարի պես նետլում է գետը ու ալիքների մեջ շքանում: Պատի անցքից մի կեռ փայտ է հայտնվում, որ կոչված էր նրան փըրկելու:

Իրիկնադեմ էր: Ալեքսանդրյան այգու վարի մասերում զինվորներ էին գեղերում, արևածաղիկ շրթող աղախինների հետ: Ավելի վեր՝ նորաբոզբոց ծառերի կատարներին, խմբով աղմկում են ճնճղուկները: Դուրս ելա Գոյուիխնյան պղղուտա: Մյուս մայթին, մի քիչ ներքե, գանըվում էր նշան Թաթիկյանի խանութը: Ծս կարող էր նրան այցելել խանութում՝ առանց խախտելու աղջկան շտեսնելու որոշումս: Բարձրահասակ, դեռ երիտասարդ, համակրելի դեմքով մեկն էր պր. Նշանը, որ նայեց ինձ հարցական, մինչև ինքնությունս հայտնեցի: Այն ժամանակ հայրենակցությունը համազոր էր աղղականության, և այդպիս էլ ինձ ընդունեց: Շուրջ մեկ ժամվա հարցուիրծից հետո ինձ առաջնորդեց բնակարան, որ գտնվում էր նույն շենքի երրորդ հարկում, թիկունքի մուտքով: Անահիտը, տեսնելով ինձ, հանկարծակի եկամ, բայց շնորհալի բարեկեց և անմիջապես շքացավ: Ապա ինչ-որ տեղ ներսում, երեխ խոհանոցում, թնդաց մի ծիծաղ: Այդ ինձ շփոթություն պատճառեց:

Բնեւ տարի ու կես էր հայրենիթից մեկնելս, և տեղեկություններս թարմ չեին, բայց նույն բժամնդիր հետաքրքրությունն էր արտահայտում նաև տիկինը, անգամ աղջիկները, որոնց համար նրգնկան անում էր: Երեսի գիտեին, որ իրենց հայրը հին կարգերի օրերին ունեցել է անցյալ, մի համեստ անցյալ, իբրև Ռուբեն Շիշմանյանի՝ Դերսիմի Քեռու գործակից: Այդ սերունդը բաղկացած էր լավ մարդկանցից ու լավ հայերից: Եվ պր. Նշանի համար կարելի է ասել, որ նա առաջ մարդ էր, հետո հայ: Այդպիս էր զոնե իր լայնախոհությամբ: Դեռ ԶԵ-ական թվականներին նա փարում է այն տեսակետին, որ արևմբտահայության բարեկեցությունն ու աղատությունը կախված է նրա անմիջական հարեւանների՝ հատկապես քրդերի համագործակցությունից: Նա ուժին չի խնայում Գալուստ Արխանյանի, Շիշմանյանի այդ ուղղությամբ թափած ջանքերին նպասելու, մինչև որ վերջինը ձերբակալվում է, իսկ իրեն հաջողվում է ճողովրել կովկաս: Բայց այնուհետև էլ հույսը չի կտրել այդ գաղափարի հետապա իրագործումից: Նա գիտի, օրինակ, որ Շիշմանյանի հաջորդներն աշխատել են համագործակցության կապեր հաստատել Դիարբեքիրի քուրդ իրրահիմ փաշայի, Սիլվանի քուրդ հզոր ցեղերի հետ, որոնք մեծ աղղեցություն ունեին հայկական բարձրավանդակի աշխրաթների վրա: Գիտի Ղասմ բեյի հետ հաստատված հայ-քուրդ համաձայնության տիսուր վախճանը, գըմլիկցիների հետ վարած բանակցությունների անհաջողությունը, տղիրաթապետ Զեյնալի ողբերգական մահը թինդյուլում և ապն:

Բայց այդ բոլորն արդեն զիտի որպես տեղեկություն: Այժմ պր-
նշանը սահմանափակվել է ընտանեկան հոգածքով, զավակները դաս-
տիարակել է հայ ոգով՝ պայքար մղելով ոռուացման վտանգի դեմ:
Իր հարուստ որագարանում ունի Աբովյանի «Վեդք Հայաստանին» և
բազմաթիվ այլ հայերին դրեր: Եթու օրենք է տանը հայերին խոսե-
լը: Պր. նշանը իրազեկ է նաև տեղի ունեցող իրադարձություններին:
Նա զիտի, որ հնչել է հայ ժողովրդի աղատության ժամը, և որ Հա-
յաստանը պիտի ծաղկի, քաղաքակրթի, և ինքն էլ, վերջապես, իր զա-
վակներով մի անկյուն պիտի ունենա ծննդավայրում:

Նա քիչ-քիչ զվարթացավ և ընթրիքին, բաժակ բաժակի նուեից,
ազդային կենացներ առաջարկելով ու խմելով, խանդավառելեց մոտ
ապագայի հույսերով և հանկարծ սկսեց երդել.

Բարի՛, զեղեցիկ, առաքինի ընկերը մարդու,
Որ փայլեցնում է արևի պես պատկերը մարդու ...
Ինչ մարդ ունենա յուր մոտք հավատարիմ ընկեր,
Յերեկի նման անցնում է մութ գիշերը մարդու:

Աղջիկը հանկարծ սկսեց ծիծաղել: Հայրը ժպտալով դարձավ նբան.
— Աղջիկս, քո այդ ծիծաղը ոռուերին է, հայ ազջիկներն այդ-
պես չեն ծիծաղում:

Ու դառնալով ինձ հարեց.

— Խոսք չունիմ, երեխաներս լավ են, բայց դարձյալ այն չեն, ինչ
կուտիի, որ լինեին: Ինչ որ է, այս էլ խմենք «սուրբ գործի» հաջողու-
թյան կենացը:

Կես գիշեր էր, երբ պր. նշանը արտոնեց ինձ մեկնել: Մինչև բակի
դուռը ինձ ճանապարհոց Անահիտը:

— Այժմ բարեկամներ ենք, հույս ունիմ, որ երբեմն կհանդիպեք:
— Ուրախությամբ կզայի, օրին՛ող, բայց վաղը մեկնում եմ:
— Ո՞ւր, — զոշեց նա այնպիսի անակնկալի մատնված, որից ակրն-
հայտ էր, թե ինդիրը նրա համար անարժեք չէ:

— Դիպի ճակատ, օրին՛ող:
— Ա՞յս, այդպիս, — կարծես ասաց ինքն իրեն և անտարքերու-
թյամբ հարեց.

— Երբ վերադառնաք, մեղ շմոռանաք:
— Իսկ եթե շվերադառնամ, հույս ունեմ, որ ինձ իրեկ բարեկամի
երբեմն կհիշեք:

— Իհարկե, — ասաց անմիջապես, անկարենոր բանի մասին խո-
սելու ձևով ...

* * *

Մարտի 28-ին շուրջ երկու հարյուր հոգուց բաղկացած մեր զո-
րակումբը մեկնեց կայարան և տեղավորվեց վագոններում: Հաղար-
ների հասնող բազմության ցնծության աղաղակներից թնդում էր կա-
յարանը, տարածվում երկաթգծի ուղղությամբ, կայարանից ահազին
հեռու Հայ Ժողովրդի ողևորությունը անսահման էր, տեսարանը հու-
զիչ, կարծես սերունդների ազգային իղձերի մարմնացումը մենք էինք ու մի անօրինակ տակնուվայություն էր տիրում մեջս, երբ հիշում
էի համիդյան օրերի երգնկան, հորեղբորս ձերբակալությունը, հեղա-
փոխական խլուրդային աշխատանքները, ջարդի մշտական վախները,
կովկասյան սահմանն անցնող հայդուկային բազմաթիվ խմբերի նա-
հատակությունները ու համեմատում մեր շանդալից մեկնումի հետ:

Գնացքը շարժվեց և շուտով բռնեց Ալեքսանդրապոլ—Երևան—Զով-
ֆա ուղղությունը: Հողը ետ էր փախչում ընթացքի թափից: Դժին հա-
րակից, մերթ ընդ մերթ սպատառող մենակյաց շինքերն աշք էին թար-
թում մեղ վրա: Չորս կողմու նստած էին անվանի հայողուկներ՝ երի-
տասարդ, տարիքավոր, զվարթագեմ, մտազրադ: Անցնելով վրացական
շրջաններից՝ գնացքն ընդունեց ավելի զիղղագածն ընթացքը:
Խուսարադին անցնում էինք լոռու կիրճով՝ քերելով համանուն գետի
եղերքը: Երբեմն թվում էր, թե զնացքը նետվում է համեմիպակաց ապա-
ռած չանչերին՝ մի թափով ջարդ ու փշուր լինելու: Բայց մեկ էլ տեսար
հրաժեշտ տվեց գետին, ծալծլվեց, մտավ գետնի տակ, դղրդաց, բար-
կացավ, փրփրեց, զռաց ու, հանկարծ զվարթորեն սովորով, նորից ըն-
կերացավ կիրճերի մեջ աղաղակող գետին: Գետն ու զնացքը, քույր ու
եղերը պես, կարծես խաղում էին. նրանք շնչառատ մի պահ դարձյալ
վաղվզեցին դեսութեն, մինչև որ զնացքը զատվելով, սկսեց հոգեվարքի
պես անքտնքալ ու մաղլցել բարձրաբերձ սարերը և բոլորովին ուժաս-
պառ՝ կանդ առավ անտառապատ մի սարի լանջին: Սանահինի կա-
մուրջն էր: Փարթամ՝ բնությունը նոր էր արթնանում հորանջելով:

— Ղո՛...—լսվից օդի մեջ. կարծես օդը բաղկացած էր անտե-
սանելի թշտիկներից, ու լսվում էր նրանց ճախտողոր:

— Ո՞ւ... Հո՞ւ...—սուլում էր զնացքը:

— Ղո՛... օ՛...—արձագանքում էր կիրճի մեջ խեղդված գետը:

Անդունդի վրա կախված՝ գնացքը շարժվում է ու, ոզնու պես կծկված, դողահար մաղցում կամուրջը: Ստորև նշմարվում են թղալափ գեղցուկներ: Ապա հանկարծ ոտքերի տակ հող զգալով՝ գնացքը նորից սկսում է վազվազել՝ սարերն իր հետ քաշելով տանելու խենթությամբ: Ճեղքելով թավշանման մարդագետիններ՝ անվերջ սահում են վար: Չորերի մեջ անտառն զգնուալորված է: Վերևում ծառերը դեռ սպասում են իրենց զարդարանքներին: Գնացքը դանդաղում է:

— Ղարաքիլիսա՛, — գոշում են ներսից:

— Թոռա՛, — թնդում է բազմությունը կայարանի մայթի վրա:

Փոքրիկները՝ ծաղկեփնչերով, գեղցուկները՝ զյուղական մթերքներով, զարաշուխալիների մի ամրութ, որ ցրվում է, շլմորած աշքերով դեռ ու դեն նայում, ապա հարայ-հրոցով խմբված մի այլ տեղ ու գոռում.

— Ուրուա՛ ... ա՛ ...

Այստեղից օճապտույտ ուղիներով անցնում ենք լերկ սարեր, որոնց լանջերին կայծկլտում է արեւ: Ապա մտնում ենք մի տարածուն ձոր, որտեղից կարծես ելք չկա: Ճամփուն ընկած սարի լանջին նշմարում եմ մի սկ կետ, որ խոշորանում է ու խողովակածկ բացվում: Հանկարծ անսակի դրբուցով մեկ պարուրում է խավարը: Ջաջուռի ներքնությն է: Վեց-յոթ րոպեն Գավիտենականության շափ երկար է թվում: Ապա խավարն սկսում է աղջամուղջի պես նոսրանալ, ու նորից դուրս ենք ընկնում լուս աշխարհ: Հեռվում նշմարվում է Ալեքսանդրապոլի սպիտականերկ կայարանը: Այստեղ դժուլ-դուրսի նվազի տակ մայթին պարում են կինառոյատիպ մարդիկ ...

Ապրիլին Սալմաստում էինք: Ավելի մեծ էր այդ օրերին խանդավառությունը պարսկահայերի մեջ: Զեռքից ձեռք էին խլում կամավորներին՝ իրենց մոտ հյուրընկալելու համար: Մի քանի օր հետո մեզ ուղարկեցին Վարդանլու զյուղը՝ լրացնելու Անդրանիկի գնդի Սիալուհի վաշտը: Յեխե պատերով, եղեղնածածկ կառըներով անհրապույր հյուղակներ, նեղ, ծուռումուռ, փոշոտ փողոցներ, աղբակույտեր, որոնց վրա ճախրող ճանճերը կարծես թավշութակով նվազահանդես էին տալիս:

Վաշտը բաղկացած էր 250 զինվորներից, որոնց մեջ կային մարդիկ մեր երկրի բոլոր վայրերից: Նոր էր վերջացել Դիլմանի ճակատամարտը, և Վարդանլու եղած զինվորների զրույցները դառնում էին նրա շուրջը: Նրանց մեջ ունեի երկու հայրենակիցներ՝ Գևորգ Հով-

հաննիկայանը, որ գեր քեմախում հայտնի էր իրրե բանիմաց հեղափոխական գործիչ, և ավելի երիտասարդ քերավոր երեցյանը: Զինավարժությաններից աղատ ժամանակա անցկացնում էի նրանց հետ: Քերովրեն քաջ ու հանդուն զինվորի համբավ ուներ, բայց կոփների յասին պատմելու ժամանակ ընկնում էր այնպիսի չափազանցությունների մեջ, որ Գևորգը հաճախ ստիպված էր լինում նրա «փեշը քաշել»:

Քարսկական ճակատում նախկին հեղափոխական լեգիոնի մնացորդներից, Անդրանիկից զատ, կային Սիալուհը, զյումուշհանցի Ավոն, Սմբատը: Անդրանիկը կենարոնական գեմք էր, իրու կամավորական և պնդի Հրամանատար: Վերջին երկուսը դեռ պահել էին հանդինության, համեստության և անձնազության հին բարոյական արժեքները: Դրանցից ճանաչում էի միայն Ավոյին: Կինը երգնկացի էր, որքին նշանք՝ դասրնկերս, իսկ իրեն տեսնել էի յոթը տարի առաջ, երբ հեղափոխության մեղրամիսին Մուրադի հետ եկել էր երգնկա:

Մայիսի երկուսին մեր վաշտը շարժվեց դեպի Արառու, ուր թաշվել էր մի շաբաթ առաջ Դիլմանի կովում պարտված Խալիլ փաշայի զորամասը: Մեղ ընկերանում էր կողակների մի ջոկատ՝ 400 հոգուց բաղկացած: Երբ հասանք Սովուկ բուկալի գագաթը, պարզվեց, որ թշնամին պատրաստվում է կոփնի ընդունել Արառուի վրա: Այս այն լիոն է, որ խանանորի արշավանքի ժամանակ դարձավ հայ ուազմիկների չվակետը դեպի Մաղրիկ քրդական ցեղի վրանները:

Կողակների մի հարյուրյակ և Ավոյի ձիավորները հրաման ստացան առաջանալու դեպի լեռը: Ապա զանազան կողմերից սկսեցինք ժագացել նաև մենք: Կոփնը զնալով տաքացավ: Վերից վար կարկուտի պես զնակներ էին տեղում, ու որոտում էին երկու կողմի թնդանոթները: Արդեն հասել էինք լեռան բարձունքներից վար նոտած մի բլրի գագաթը, երբ հանկարծ ոտքերիս տակ դետին ընկած հիծյալ կամավորներից ողմեցի Սիմոնը: Թու ու բոհի մեջ հաղիվ մի քայլ փոխեցի ու ընկա նաև ես: «Ճեյ վաշի, դեռ ոչ մի գործ շարած զարնվեցի», — անցավ գլխովս, ու թուրթյուն եկավ վրաս: Մեկը կոնակն առավ ողմեցի Սիմոնին ու վար տարավ:

— Տո՛, շենքս մի, — գոշեց մի հսկա: Ես վեր ցատկեցի, շոշափեցի ինձ. ոչինչ չէր պատահել: Ամոթի զգացումն ինձ այնպիս մըտրակեց, որ բուռն կատաղությամբ խոյացա առաջավոր դիրքը:

— Ուրուա՛, — հնչեց թիկունքից: Վաշտի մեջ ողմեցի Սիմոնի անկումը կատաղեցրել էր բոլորին: Բառիս բուն առումով հրաշքներ գործեցին կամավորները մի քանի անգամ թվակես կերպարանց թշնամու

գիմ: Երեկոյան Առաքերը լքեցին Արառվի բարձունքները և սկսեցին նահանջել դեպի Բելերի: Մթի հետ կոփվը գնալով թուլացավ ու մաքեց: Կարգադրված էր դիրքեր բռնել, աշալուրջ հսկել թշնամուն՝ սպասելով լուսաբացին: Հեռուները, դաշտի մեջ, աստղադարդ խավարը ճեղքում էին կանթեղների պես ցրիվ եկած կրակներ, կայուն վիճակը մատնում էին խարույկները, որ վառել էր թշնամին: Սաստիկ ցուրտ էր, կրակ էինք վառել նաև մենք: Կեսդիշեռն անց մեր խմբի պահապետյան հերթը հասավ ինձ: Կրակներից բավական հեռու կանգնած՝ անքթիթ նայում էի դիմաց: Լուսան վրա ցուրտն սպանիչ էր: Չէր կարելի ծխել: Ծնողովոր գործը, օրվա տպավարություններն այնպես էին ջլատել ուժերս, որ կանգնած տեղս կարծես քնած էի: Ճիդ էի գործադրում աշքերս բաց պահելու, շորս կողմս լավ նստելու, բայց իզո՞ւր: Կոպերս անջիղ մսակույտերի պես իջնում էին աշքերիս: Անց ու դարձ անելը հակասում էր տրված հրահանգներին, իսկ մինչնույն տեղը հոլի պես դառնալը՝ ձանձրալի: Մոլցտակիս մեջ կըկտած՝ նստեցի մի քարի տակ, որ պաշտպանում էր դիմացից փլող ցրտաշունչ քամուց: Երկինքն աստղագարդ խորությամբ հսկում էր լեռը: Աշք ու ականջ շորս արած, լարված ուշադրությամբ դիտում էի դաշտի կանթեղածն կրակները: Բայց և քնի պահանջը գնալով սաստկանում էր: Հինդ վայրկյան միայն եթե քնեի, կարող կլինեի հինգ ժամ հսկել:

«Դո՞ւ, որին հանձնված է խմբի պահակությունը», — մտածում եմ իս և ընդուռ վեր կենում: «Պետք է վարժվել, թուլությունը համազոր է դավաճանության, պետք է բարեխղճորեն կատարել ստանձնած պարտականությունս, միայն այդ ձևով կարող եմ դառնալ տասնապես, հետո հինապետ, վերջապես խմբապետ...»:

Հեռուներից անցավ մի մոլորած գնդակ՝ շարագուժորեն սովելով: Սարսուր ցնցեց հոգիս. նստեցի. «Հայր մեր, որ հերկինս ես», — մըրմընջացի: Ու կրկին լուսակաց: «Եվ ինչո՞ւ միայն խմբապետ», — մտածում էի իս: «Ո՞վ պիտե՞ ինչ փայլուն ապագա է սպասում ինձ. ինչո՞ւ չեմ կարող բարձրանալ ամենամեծ աստիճանների. ինչ էին նախապես լորիս-Մելիքովը, Մադաթովը...»:

Ու ինձ թվում է, որ զորավարի փայլուն հագուստներով գտնվում եմ թիֆլիսում: Ալեքսանդրյան այգու դիմաց մի բարձր շենք վերից վար հատկացված է ինձ: Տան դիմաց պահակ է կանգնած: Երկրորդ հարկում արտակարգ եռուղեռ է տիրում, այդտեղ եմ ընդունում զանազտն գործերով եկած աղերսարկուներին: Այստեղ մուտքի մոտ կանգնած է սուկեթել հագուստներով դռնապանը: Միջանցքում մարդիկ են

խոնված. Նոտածներն ընդուռ վեր են կենում ու բարեկում ինձ: Հաշորդ սննյակում նստած են պաշտոնյաներ, նրանք ևս վեր են կենում ու ցցված մնում: Ապա իմ առջև բացվում է ընդունելության ընդարձակ գաջլիճը, ուր կան գործավարներ, օգնականներ: Դահլիճին հաջորդում է թավշապատ մի սննյակ, որտեղ նստած է անձնական քարտուղար՝ Անահիտը: Վերջապես բացվում է առանձնասենյակը: Ես թաղվում եմ բաղկաթողի մեջ ու քիչ սպասելով՝ գրասեղանից վերցնում եմ արձաթի փոքրիկ դանգակը ու զանգահարում: Ներս է մտնում Անահիտն ու կանգ առնում շեմքին:

— Սկսեցնք ընդունել, — ասում եմ ես ու վառում սիզար:

— Այստեղ մի աղջիկ կա, որն իբր թե ճանաշում է Զեզ: Բուզդրիայից է, ուղում է Զեզ տեսնել:

— Ա՞յս, այն փարթամ մազերով աղջիկը, — ասում եմ՝ հանկարծ հիշելով զազար աղայի աղջկան:

— Ո՞ւ, մազերը կեղծ են, ես տեսա, — բացականշում է Անահիտը:

— Մինչույն է, թող գա:

— Ուրեմն, դուք ուղղո՞ւմ եք այդ աղջկան տեսնել, — ասում է Անահիտը տհաճությամբ:

Ես զարմացած թթվում եմ ուսերս ու նայում: Այն ժամանակ նադուրս է զալիս առանձնասենյակիցս ու վայրկյան շանցած՝ ներս մըտնում մի պառավ կնոջ հետ, որ հազիվ է շարժվում մինչեւ գրասեղանս՝ դողդոշուն ձեռքին մի թուղթ բռնած. նա ինձ է դարձնում թոշնած սերկելի պես դեղնած դեմքը և շրթունքները շարժում կաղամբ ուտող նապաստակի պես: Նայում եմ Անահիտին:

— Սա աղջկա մայրն է, — ասում է նա շբմեղանքով:

— Ի՞նչ է ուղում, — հարցնում եմ իս:

— Ուղում է, որ աղային զինվորությունից աղատեք, այսինքն՝ բաց թողնեք, — ասում է Անահիտը ու պառավի ձեռքից թուղթն առնելով՝ դնում առջև:

«Բաց թողնեք», — զրում եմ թղթի վրա ու զիգզագաձև ստորագրում... վըզզ՝ զ... նորից սուլում է մի դնդակ ու նվազելով մարում: «Հիսո՞ւ Քրիստոս», — մըրմնջում եմ ես ու զնպանակից նետվածի պես վեր թողում: «Ո՞ւ, բան չկա: Իսկ եթե հանկարծ դնդակ ստանամ ու ոզմեցի Սիմոնի պես դիտին փովեմ...», — մտածում եմ ես ու նորից նստում...»

Հշշելով ցերեկվա ընկնելս ու «մեռնելս» սիրտս լցվում է գոհունակությամբ, որ մեռան ուրիշները, իսկ ես ող մնացի: Դեպքն, իհաբ-

կե, շատ էլ հաճելի չէր, բայց թոհուբո՞ի մեջ ամեն մարդ էլ կարող է սայթաքել ու ընկնել: Միայն կարծես թե քիչ երկար տևեց երևակայական մահա, ու մեկը գաշեց. «Տո՞, ի՞նչ ես երկարել, շելնե՞ս մի...»:

Ավել, մի օր երկի պատերազմը կվերջանա, կվերպառնամ հայրենիք ու մորս, եղբարս, հարսներին, հարեաններին կպատմեմ բալորը, սկզբից մինչև վերջ: Հանկարծ հիշեցի Ալաշկերտից նոր փախուժ Աշոտի սարսափելի պատմությունները, ու սարսուռը ցնցեց ինչ... «Եյր, կին, ձեր, երեխա կոտորվում են անխնառ,— ասում էր նա: Հատկա եթե չարգերը հասել են մինչև նրանկա: Մեկը շարժվում էր իմ կողմք: Դողը բռնկեց ինձ:

— Բո՞չ է,— զոշեցի, բայց ձայնա պահանջված խստությամբ դուրս չեկավ...

Պոլսեցի լեռնն էր. նկել էր ինձ փոխարինելու: Աստղերը գալկանում էին: Քարանձավի մեջ կը ակը ընդունել էր պղնձե զույն, Գերգո պը պատմում էր եանասորի արշավանքի մասին: Լսածներս ցնդում էին, ու պլիս մեջ մնում էին միայն անունները՝ Սաքո, Խելո, Կարո, Թիծա, Պուման, Սարգս, Վարդան, դարալառյազը տեր-Գրիգոր...

— Աղքակի բռնոր կոտորածների վրան էր ու միաժամանակ հեղափոխական դատ ու դատաստան,— պատմում էր Գերգու

Նեկաշոք նստած, կրակի շուրջը երկարած՝ լսում են նրան:

— Առաջին զորասյունը բաղկացած էր երկու հարյուր հիսուն իըովովներց, մութ էր, երբ նրանք այստեղից շարժվեցին գեպի վար, գեպի Շարաֆ բեկի երկու հարյուր հիսուն վրանները, ահա այնտեղ, գեպի մեջ, մեկ փարսախ հեռու,— հարյուրները երկարելով պատմում գաշտի մեջ, մեկ փարսախ հեռու,— հարյուրները երկարելով պատմում գրահար Գեորգը,— բոլորովին մատեցել էին, երբ կիսախավարի մեջ ջուրդ պահակը ձայն տվեց.

«Ի՞ն, լո՞ հուն չի՞ մարիկին...»:

— Աւ հրացանները որոտացին: Մնացած երեք հարյուր հիսուն կովողներն օղակեցին դաշտը հետևյալ ուղղություններով...

Ու ասածներից մնում են գլխիս մեջ դարձյալ միայն անուններ՝ Սիփան, Արտաս, Վարագ, Առնոս, Կորդվաց լեռներ, ու Բարդուղիմեսո...

Փայտացած մատների արանքներից պղնձագուն կրակի բոցերն ըսկնում են խմբի տղաներից սրա կամ նրա դեմքին ու փափախների տակ ծամածռված ստվերներ գծում: Ու մտածում են, թե ո՞վ պիտի ողջ մնա և ո՞վ պիտի մեռնի ...

* * *

Հույսը չըացված պարզվեց, որ թշնամին նահանջել է: Մենք անարգի իշանք Խանասորի դաշտը և բանակ դրինք ու Բարդուղիմեսո վանաքի մոտ: Այստեղ մեր առջև պարզվեց զարդերի առաջին պատկերը, որի մասին խոսվում էր, երբ Թիֆլիսում էր: Նահանջող թշնամին սրի էր գաշել Հարիսան դյուլի բնակիչներին: Կին, երեխա, ծեր, պառավ կողք կուղի, զատ-զատ, խորտակված դռների մոտ, հյուղակներում, պատերի տակ, գոմերում, կտորներին, ծառերի ներքեւ, ամեն տեղ ընկած էին ծուռումուն դիրքերում, ցավը վրան պաղած դեմքերով: Ճամփից դուրս, փլատակների մոտ, ընկած էին շուրջ քսան աղջիկների դիակներ՝ բգկտված հագուստներով, սարսափից ապակիացած, կապույտին հառած աշքերով ...

Մայիսի 4-ին մեր վաշտը մեկնեց դեպի Զումակետուկ: Խմբակնետուկ Ավոն իր ծիավորներով մեկնել էր առաջ: Միշտ մի հմայք կար այս համը և քաշարի մարդու մեջ, կոփների ժամանակ նա ամեն տեղ էր, առաջին շարքերում, կոփներից հետո մարդ չէր տեսնում նրան. քնած էր կամ մի տեղ մենակ նստած:

Երբ հասանք Զումակետուկ, Ավոյի ծիավորներն արդեն ուժեղ դիրքեր էին զրավել: Շատ ծանր էր կոփը. Հարիսան գյուղի նախճիրը թունդ էր հանել բոլորին: Բայց թշնամին էլ կատաղել էր: Նահանջից գագազած թուրք բանակը այստեղ, ըստ երեւյթին, որոշել էր վճռական ճակատամարտ տալ: Ըստ տեղեկությունների, թշնամին Վանից օգնական ուժեր էր ստացել և հաջողությամբ դիմադրում էր՝ մեզնից զոհեր խելով: Թիշ հետո, երբ հասան մեր թնդանոթները, կացությունը փոխվեց: Շրջապատը դղրդում էր երկու կողմի թնդանոթների որոտից: Քսանից երեսուն հազար հրացան էր պարավում շորո կողմը, ծուխը, փոշին երբեմն պարուրում էին ամեն բռն: Կենորից հետո թըշնամու ձախ թեր թուլացավ, բայց կենտրոնում համառորին դիմադրում էին: Հետևյակ, ծիավոր խառնվել էին իրար, աջ, ձախ, վեր, վար վրավեզում էին մահարեր գնդակները:

Կամավորներն ընկնում, գլորվում, վեր էին կենում ու վրեժ գոռուլով խոյանում: Մարդկանց համակել էր ցասումը, գիտակցությունը մթագնել էր: Իրիկվան դեմ թշնամու ձախ թեր տվեց: Ավոյի ծիավորները հայտնվեցին թշնամու թիկունքում, բայց հետևյակների շարժումն ուղացավ, և հալիլ փաշայի բանակի մնացորդները դար-

ձյալ հաջողեցրին ծողոպրել՝ ճանապարհին շարդելով հայ անզն ժողովորդ:

Ավելորդ է ասել, որ մեզ հետ կովող ուռւ զորքերը ետ չեն մնում կամավորներից քաջությամբ և շատ մեծ շափով գերազանցում են իրենց կարգապահությամբ և կովելու հմտությամբ: Բայց որքան կարողացա դիտել Սրբությունը և այստեղ, վճռական պահին կալի բախտը որոշում էին կամավորները:

Մայիսի 5-ին սկսեցինք հետապնդել նահանջող թշնամուն: Մինչև իրիկուն հալածեցինք: Բայց Խալիլ Փաշան բանց Վանի ուղղությունը՝ ճանապարհին մահ սփոհելով ամեն տեղ: Նույն օրը գրավեցինք Պաշ գալին: Թուրք բնակչությունը փախել էր, հայերը մինչև վերջին մարդը քնազնչված էին: Հաջորդ երկու օրվա մեջ հետապնդումը շարունակվեց անընդհատ: Մտանք երեք-չորս ամայի գյուղեր: Ավոյի ծիավորներն ապատեցին քրդերի կողմից առևանդված մի քանի հայ աղջիկների, որոնք ուղարկվեցին Սալմաստ: Այդ տեսական առաջխաղացման ժամանակ շարժումն առաջնորդում էին հայ ծիավորները, նրանց ետևից դրանում էին մեր վաշտերը, ապա գալիս էին հեծյալ կողակները, որոնց հաջորդում էին ուսւ հետևակները, այնուհետև հրետանին և զարձյալ՝ ուսւ հետևակ զորքերը, վերջապես՝ պաշարակիր դումարտակը:

Մայիսի 15-ին դուրս ելանք Ռազմանից և իրիկունը ուշ հասանք է սումերադեմի լեռներին: Թերև կոփվ ունեցանք թշնամու հետնապահների հետ, բայց մութք վրա հասավ, և կոփվը դադարեց: Այդ գիշեր շկարողացա աշք փակել, անհաշիվ տարակուսանքներ համակել էին ինձ մեր ձեռնարկած գործի նպատակահարմարության մասին: Թշնամին նահանջելով կոտորում էր հայերին, մենք զրավում էինք լքված, ամայի պուտեր...

Աղջամուղին իմ առջև պարզվեց արտասովոր մի տեսարան, բացվում էր լույսը, արևելքը շառադունում էր, ու կիսախավարի անորոշության միջից իրար ետևից հայտնվում էին էումերադեմի ոսկրադույն ապառաժները, որոնք հեռվից նման էին կմախքների կույտերի: Օդի մեջ ինչ-որ խուզ ճարճատյուն կար: Ապառաժների թիկունքից հորիզոնը բողավառվում էր, կրակի լճի պես տարածվում: Խոռոշների միջից մագլում էին ոտքերներ ու երերակով շքանում:

Առավոտյան հրաման ստացանք հետապնդումը շարունակել՝ աշխատելով ճակատելու մղել թշնամուն: Բայց թուրքերը շարունակեցին նահանջել ու մտան էումերադեմի տարածուն կիրճերը: Մենք արյուն-

քրտինք մտած հետապնդում էինք, բայց թշնամին այլևս կարևորություն չէր տալիս մեզ: Նա անվրդուվ էր դեպի Սղերդ, Բիթլիս՝ ճանապարհին մահ սփոհելով իր շուրջը: Մայիսի 18-ին, առավոտյան, կարծես բոլորովին մոտեցել էինք թշնամուն ու պատրաստվում էինք կովելու: Բայց արևը ծագելուն պես պարզվեց, որ թշնամին նահանջել է, և հետքն անգամ չի երևում:

Այժմ շղթայաձև առաջանում էինք նորդուզի լերկ ու մոխրագույն կածաններով: Հոգնած ու շարդված էինք, բայց ավելի ծանր էր հեծյանների վիճակը: Սար ու ձոր լցված էր ոչխարի հոտերով, անսպառ հարստություններ թափված էին ճանապարհին, ամեն տեղ՝ թանկարժեք գորգեր, ղանապան իրեր, մթերքներ և այլն:

Լեռներից իջանք Սիկունիս հայ գյուղը, քարայրների միջից հայտնրվեցին մեկ-երկու խենթացած պառավ կանայք: Գյուղը բնաջնչված էր: Թուրք զորքերն անցել էին Տիգրիսը և ուղղվել դեպի Ճարճալան լեռները:

Ամսվա վերջերին մտանք վասպուրական և հասանք վան, որ աղատապրվել էր՝ շնորհիվ իր կորովի զիմագրության, զրսից հասած կամավորական խմբերի օգնության, մանավանդ իր անվեհեր առաջնորդ Արամի շանքերի: Սա միակ միխթարությունն էր համատարած թշվառության մեջ: Մեր վաշտը ժամանակավորապես ցրվեց այստեղ: Ռուս հրամանատարությունը հետաձգել էր գրեթե պարպված թիթիսի դրամելու որոշումը: Ինձ և կյուրինցի Սահակին հյուրընկալել էր տեղական բնկերներից Գրիգորը: Երկու օր շարունակ դիտում էինք փառավոր զիմագրության ավերակները: Անդամ այդ կիսավեր դրությամբ վանը հոյակապ էր: Զիմղիմ մաղարայից մեր դեմ պարզված Առնուակ, Արտոսի, Գրգուի անհուն լեռնաշղթաները փակում էին հորիզոնը, վեհափառ Սիփանի ձյուները կորչում էին ամպերի մեջ: Այդ բարձունքներից հովը մեղմորեն իշնում էր մինչև մեծ դաշտը, ուր նիրճում էր վճիռ վանա ծովակը: Զինջ երկնակամարի տակ փայլվում էր Վարդապահ սարի փեշերին բացվող ընդարձակ հովիտը, ուր խաղում էին ստվերներն ու լույսերը բազմերանդ գույների մեջ, և սարերի տակ փողողում կանաչները, ոսկու և մարզանի փայլվու: Շամիրամի հնագարյան ամրության ժայռը պարուրում էր հովիտը, որ ապա եղերում էր կանաչների մեջ թաղված Արտամետ գյուղը և Ավանց նավահանգիստը: Կոփվերի ընթացքում բուն քաղաքի վրա թուրքերը թափել էին 16 000 բնդանոթային ոումբ:

Զիմզիմ մաղարայից իշնում ենք դեպի վար՝ հայկական ամրությունների, խրամների գծերով, ուր անմա՞ն հերոսները պաշտպանել են քաղաքը: Վանում այդ օրերին երկի կար ոչ նվազ, քան 80 հազար բնակիչ, որովհետև տեղացիների վրա մի տյաքան էլ ավելացել էր շրջանի գյուղերից քաղաք ապաստանածներից: Զնայած այդ խճողման, ընդհարումների գործած ավերին, վանն ապրում էր խանդավառության, վերաշնության աննախընթաց օրեր: Գիշերը մինչև լույս լսում էինք Գրիգորի պատմությունները վանի հերոսամարտի մասին, որ մեծ զորավիր էր մեր լքված հոգիների համար: Բայց երկար շտեսեց այդ: Հունիսի առաջին օրերին սկսեց ոռու զորքերի ընդհանուր նահանջը: Ստեղծվեց մի կացություն, որից ոչ բան չէր հասկանում. նահանջում էր բոլոր ճակատներում ջարդված թշնամին, նահանջում էր նաև ոռու հաղթական զորքը, նահանջում էինք նաև մենք: Բայց մեր նահանջի գծից այն կողմ թողնում էինք գաղաղած թշնամուն մի անտեր ժողովուրդ, որից այլևս մարդ չէր կարող փրկվել:

Գ Լ Ո Ւ Խ Բ

ՄԵԾ ԵՂԵՇԻՆԸ

Հունիսյան նահանջի հետևանքով Թուրքահայաստանից տեղահան եղած տարագիրները կլոր թվով կազմում էին 250 000 մարդ: Դրանցից պետք է գուրս հանել շուրջ 20 000 մարդ, որոնք շարժվելով թերկրի շրջանից՝ անկարող եղան միանալ նահանջի ընդհանուր հոսանքին և ոչնչացնելու: Մնացածները շարժվում էին երեք ուղղությամբ՝ Կարսի, Իդղիրի և Ջուֆալի: Այդ տարագիրներից ոռուական հող հասան 207 000 հոգի: Մնացածները ճանապարհին փշացան: Կովկաս հասնողների ստվարագույն մասը կազմում էին կանայք և երեխաներ. հարյուրից հազիվ 10-ն էր տղամարդ և այն էլ մեծ մասամբ ծերունիներ:

Գաղթականների ընդհանուր հոսանքը շարժվում էր Իգդիրի ուղղությամբ, շուրջ 170 000 հոգի: Այս հոսանքի հետ էի և ես: Մեր հույսը էին ուշացածներ, ավելի հեռու վայրերից փախածներ, ու փողալիս էին ուշացածներ, ավելի հեռու վայրերից հայտնի չէր: Թուրքական աահմանազլուխներում կանգնած էին ձիավորներ՝ փնտրելու ցրված մանուկներին ու հիվանդներին: Այդ վայրերից մինչև իգդիր, արտերում, դաշտերում, այգիներում, ընդարձակ տարածությունների վրա ցրված էին գաղթականներ: Բուն իգդիրի մեջ խճողման էին 20 000 հոգի: Էջմիածնում կուտակվել էին 45 000 հոգի: Ալաստան փնտրողների մի խոշոր հոսանք շարժվում էր դեպի Երևան՝ ճանապարհին մոռները պես հնձելով օդուակար բուշերը և որթատունկերի արմատները կրծելով: Սահմանավուխներում հսկող ձիավորներն առաջին երկու օրվա մեջ հավաքեցին մոտ 500 լքված կամ կորսված երեխաներ: Նույն օրերին էջմիածնում թաղեցինք 103 գաղթականներ, իսկ հաջորդ օրը՝ 30:

Հանկարծական նահանջն անհնար էր դարձրել կանխապատրաստություն տեսնել նման մի բազմություն ընդունելու համար: Տեղ շկար-

բավարար քանակությամբ հաց, տաք սնունդ, բժշկական օգնություն շկար. այնինչ գաղթականների մեծ մասը հիվանդ էր:

Երևանի և էջմիածնի մեջ եղած հիվանդանոցները հապիվ կարողացան ներս առնել 1500 մարդ: Էջմիածնում հիվանդների մեծ մասը տարածված էր Ներսիսյան լճակի շորս կողմը, ծառերի և վանքի պատերի տակ: Շատ մեծ էր մանավանդ հիվանդ մանուկների թիվը: Էջմիածնի ճեմարանում խոնջած էին 3500 մանուկներ, որոնց ծնողները չկային: Երրորդ օրվա իրիկունը մեծ սրահում ես հաշվեցի 110 մանուկներ, արոնք պառկած էին տախտակամածին, գրեթե մերկ ոմանք քնել էին, բայց մեծ մասը լալիս էր:

Օգնության գործը խիստ դժվարանում էր կազմակերպության բացակայության պատճառով: Պատահական մենքը դառնում էր «կարդագրիչ»: Ամեն մարդ հնազանդությամբ ենթարկվում էր նրան, մինչև որ հայտնվում էր մեկ ուրիշը: Ես ինքս ինձ նշանակել էի որրերի ու մանուկների խնամակալ և զբաղվում էի այդ գործով: Բայց երկար այդպիս շտեց, բազմություններն սկսեցին նոսրանալ. եկան Թիֆլիսի, Մոսկվային ազգային կոմիտեները, քաղաքների միության օգնության մարմիններ՝ իրենց բազմաթիվ մասնաճյուղերով:

Վերջինի մասնաճյուղը երևանում ինձ տվեց «որրերի հավաքողի» պաշտոն, որ արդեն փաստորեն կատարած էր: Այդ գործը կարծվածին շափ պարզ չէր. անհրաժեշտ էր նախապես ստուգել, թե տվյալ երեխան արդյոք չունի՞ ազգական, որի մոտ կարող է ժամանակավորապես մնալ, մինչև նոր սրբանոցներ հաստատելը և եղածներն էլ քիչ շատ կարգի բերել: Կար և ուրիշ դժվարություն. հավաքված որրերից խելահասները, մեկ-երկու օր անցած, փախչում էին այսպես կոչված որբանոցներից՝ նախամեծար համարելով մուրացկանությունը: Այդպիսիներին կարելի էր բռնի միայն լուսաբացին, խանութների դրուների տակ, ծառերի բների ներքեւ, խուլ փողոցների անկյուններում կամ քանդված շենքերի փլատակներում՝ քնած վիճակում, որովհետեւ արթնանալուն պես ձեռք շնին ընկնում: Սակայն, որքան բարելավվեցին որբանոցների պայմանները, այնքան փախստականների թիվը պակասեց: Բայց դրա փոխարեն հանդես եկավ նոր դժվարություն: Օրեցօր հայտնվում էին «կեղծ» որբեր, Անծայր թշվառության ենթակա տարագիր ծնողները՝ անկարող զավակների զոյությունն ապահովելու, քաղաք էին բերում երեխաներին ամենահեռավոր գյուղերից և, թողնելով փողոցում, հարազատ զավակներից փախչում էին դեպի գյուղ: Այս «կեղծ» որբերը մեծ մասամբ տեղավորվում էին հայկական ընտա-

նիքներում, որոնց և հայտնվում էին ծնողների անունները, եթե կարելի էր լինում հասկանալ:

Որբերի մեջ ամենաանգիտ տարրը գաղթից առաջ որբառածներն էին: Սրանք, քիչ բացառությամբ, բաղկացած էին մանշերից՝ 8—12, հազվադեպորեն մինչև 14 տարեկան: Զարդերի ընթացքում նըրանք փախել էին քրդերի մոտից, վերադարձել հայրենի լքված գյուղերը՝ իրենց գոյությունը քաշըշելով այնտեղ, մինչև ընդհանուր նահանջը, ապա, միանալով առաջ անցած այս կամ այն կամավորական խմբին, դաղթել էին: 14 տարեկան մի որք հաջողել էր քրդերի մոտից փախցնել ոչ միայն իր հինգ տարեկան քրոջը, այն շալակած հասցնել մինչև Կովկաս: Հանդուզն, բանիմաց, տոկուն էին սրանք: Չեին միրում խոսել. ծնողների մասին եղած հարցումներին պատասխանում էին մեկ և միննույն բառով՝ «սպանված են»:

Չեր երեսում, որ նրանք ցավ են զգում այդ առթիվ: Միայն մեկն ասաց, որ թոնրի մեջ պահպած էին և այնտեղ էլ այրեցին, ու լաց եղավ: Գրեթե բոլորն էլ ունեին իրենց «Ողիսականը»: Մնացած որբերի մեջ ավելի դյուրահաղորդ էին աղջիկները, քան մանշերը: Սակայն, առաջիններն ավելի դյուրությամբ էին ընտելանում տղամարդկանց, քան որբախնամ կանանց: Ըստ երեսութին, հանձին օտարի զիջում էին հոր, հորեղբոր, եղբոր, բայց ոչ երբեք մոր տեղը:

Որո՞նք էին հունիսի 2-ի նահանջի ուազմազիտական հիմքերը, և ի՞նչ հարաբերության մեջ էին այդ նահանջի հետ թուրքիայում ծայր առած ահավոր ջարդերը, ևս շգիտեմ: Բայց զեպքերը զարդացան այսպես. նահանջից անմիջապես հետո տեղահանվեցին Բիթլիսի, Մուշի, Սասունի շուրջ 150 000 հայեր: Հունիսի 7-ին տեղահան եղան երզընկայի 20 000 հայերը, Հունիսի 16-ին՝ էրզումի 18 000 հայերը, Հունիսի 28-ին՝ Տրապիզոնի 14 000 հայերը, 29-ին՝ Բարերդի, Սլաղի, Խարբերդի հայերը և ամսվա վերջին Սվաղ-Խարբերդ գծով արդեն դեպի գերեզման էր գնում շուրջ կես միլիոն ժողովուրդ ...

Երևանի հայությունը սպի մեջ էր: Նահանջը տակնուվրա էր արել հայ կյանքը ու ամեն տեղ ջղային մթնոլորտ էր ստեղծել: Վիճի պես մի անջրպիտ էր բացվել հայ ժողովրդի և երեկվան «բարեկամ» ուսւ կառավարության միջև: Մարդ շկար, որ նահանջի մեջ շար դիտավորություն շտեսներ: Դատողությունների հիմքն էր՝ «Հայաստանը՝ առանց հայերի» հանվանդ թեզը: Ամեն տեղ խոսվում էր զարդերի մասին: Թիֆլիսի հայ թերթերը, որ մինչև այդ զբաղված էին Վանի դեպքերով,

նահանջով, Յոլսո հայ մտավորականության աքսորով, ժամանակի կոտորածների լուրերով, այժմ հնչեցնում էին ահազանդղ համայն արևմբառահայ ժողովրդի ունշացման թաւրքիայի ամենահեռավոր անկյուններից դեռ համնում էին հատուկենու փախստականներ, որոնց ահավոր պատմություններում վայրապետթյան, ջարդերի և մահվան տեսարանները հաջորդում էին իրար ...

Կանդ թաղամասի որբանոցից թիւ վար ապրում էր Համտղասպ Բարաղամյանը, տիվորիկցի մի համեստ երիտասարդ, որ նախապես վարում էր կաղմակերպչական աշխատանքներ կամավարների շարքերում, իսկ նահանջից հետո մեկնեց Թիֆլիս: Այժմ նա վերադարձել էր Երևան «Հորիզոնի» թղթակցի հանգամանքով և օրն ի բուն գանում էր նորեկ տարագիրների մեջ, դեպքերի մասին տեղեկություններ հավաքում:

Տարագիրների մեջ հանրածանոթ դեմք էր, իբրև «Թղթակց Համո», և ամեն մի նոր փախստական առաջին ապիթով լինում էր նրա մոտ: Նրա մոտ էի անցկացնում նաև ևս աղատ ժամանակ՝ Երզնկացից տեղահանվածների մասին մի բան իմանալու ակնկալությամբ: Բայց ամեն կողմից տեղեկություններ կային, բայց Երզնկացից: Թեև հարազատներին բախտը տարակույս չէր վերցնում, բայց անհայտությունը հյուծախտի պես մաշում էր ինձ և հիվանդագին դրության մատնում: Օգոստոսի սկզբներին Համոյի մոտ տեսա Տրապիզոնից նոր փախած մի մանկահասակ կին, որ միալար պատմում էր, թե ինչպես ծովամույն արին քաղաքում ձերբակալված 500 հայ մտավորականների, որոնց, իբր թե, աքսորում էին Սամսոն: Այնքան սրտաճմլիկ էին կնոջ նկարագրությունները, որ խիստ դժվար էր լսել: Համոն քննիլ անտարբերությամբ նոթագրում էր առջեր դրված երկարավուն թղթերի վրա՝ նոր հարցումներ ուղղելով կնոջը: Երբ կինն սկսեց նկարագրել ջեփսիկի ջարդը, ինքս ինձ բռնադատում էի լսելու.

«Նախապես այրերը բաժանեցին կանանցից և զավակներից, — պատմում էր նա, — ապա սրի հարվածով, դանակի հարվածով, հրացանի սպիններով, անզթության հազար նրբություններով կսպանեին զանոնք: Սոսկումի աղաղակները դաշտը կլցնեին: Հողը, խոտը արյունով թաթախված էր: Տղաները, զարհուրանքից խոշորացած աշքերով, երկար կտկաններ կարձակեին: Կանայք բազուկները կերկարեին, կաղերսին, կնվազեին. ամեն կողմ տարածված էր արյան ապք հոտը...»:

Հանկարծ ինձ թվաց, որ տեսնում եմ այդ ամենը, լսում աղիողորմ ճիշեր, սարսափի ու ցավի աղաղակներ, բուռն աղերսներ, խելագարու-
50

թյան ու հոգեվարքի գոշուններ, տեսնում դիակները ճիշտ այնպես, ինչպես նրանք ստարածված էին Հարիսան գյուղում. զգում էի արյան տաք հոտը: Մղձավանջով համակված՝ ոտքի ելա, որ զնամ և ալիս ոչինչ լսեմ, բայց գլուխս դարձավ, և ընկա...

Երբ ուշքի եկա, կինը չկար: Համոն թեանցուկ առաջնորդեց ինձ սենյակս: Գիշերը շկարողացա աչք փակել. բավական է՛ղ, որ մի թիւ շատ թմրության մեջ ընկնեի, և ինձ պատկերանում էին զանազան սարսափելի տեսարաններ, իբր թե մայրս Սիկունիս գյուղի քարանձավի մեջ է, իբր թե մեր բոլոր երեխանները, թոնրի շուրջը բոլորված, միաբերան ճշում են, իբր թե եղբայրու ջախջախմած զվարով ընկած է պարտեզում ... Ու ամեն անգամ, երբ ի վիճակի էի լինում դատելու, աշքիս առջև պատկերանում էր Թալեաթի փքուն, ինքնագո՞ր դեմքը, որի պատկերն առաջին անգամ տեսա վանում: Բանել, զգից թոկ կապել, շան պես քաշքան մինչև իր կաղմակերպած սպանդանոցների վերջին կայանը և մահամերձ զոհերի առջև արյունաքա՞մ անել ... Բարոյական, ֆիզիկական շարշարանքների ամենաքարքարոս ծրագրերն էին հղանում հիվանդ մտքում:

Ես մի քանի օր միայն գամված մնացի անկողնում, բայց այդ օրվանից ժառանգեցի զլխապտույտի և ուշագնացության մի հիվանդություն, որ մեջընդունեց հարվածում էր ինձ:

Սեպտեմբերի կեսերին Թիֆլիսի հայկական թերթերից մեկում կարդացի Խարբերդի ամերիկյան ներկայացուցչի հովհիսի 11-ի թվակիր պաշտոնական տեղեկագրի թարգմանությունը, որի մեջ ասված էր.

«Հովհիսի առաջին օրերին ցնցոտիների մեջ, սովալլուկ, հիվանդ, կարինից, Երզնկացից Խարբերդ հասան առաջին քարավանները: Նըրանք երկու ամիս ճանապարհ էին անցել՝ գրեթե առանց ջրի և սննդի: Մայրերը հոժարակամ տալիս էին իրենց զավակները նրանց, որոնք ուզում էին առնել: Հարուստ թուրքերը բժշկական քննության են ենթարկում երիտասարդ աղջիկներին և ամենից գեղեցիկներին առնելով՝ տանում են իրենց հարեմների համար: Այդ դժբախտների պատմածների համաձայն, մեծ մասը բռնի կորդված: Կամ սպանված են քրդերի կողմից, որոնք տեսական հարձակումներ են գործում քարավանների վրա:

Շատերն էլ մեռել էին ճանապարհներին անոթությունից և ուժապառությունից: Երկու օր հետո նոր քարավաններ հասան: Տարագիրների մեջ երեք քույրեր կային, որոնք անգերեն գիտեին: Իրենց ըն-

տանիքի 25 անգամներից տասնմեկն արդեն սպանված էին ճանապարհին, ողջ մնացած արական սեփի տարեցը ութ տարեկան էր: Իրենց տեղերից մեկնելու ժամանակ տարագիրերն ունեին ձիեր, զրամ, կապոցներ, բայց ճանապարհին ամեն բան կողովագիշել էր, նույնիսկ իրենց հագուստները, և աղջիկներից մեկը բոլորովին մերկ էր: Խարբերդում տարագրության կարգադրություններն սկսվեցին հարյուրավոր այլ մարդկանց ձերբակալություններով: Գիշերը նրանց տարան մոտակա լեռները, և այլն ոչ սպերադարձավ: Նրանց թվում էին հայոց առաջնորդը, ամերիկյան կոլեջի ուսուցիչները և քաղաքի հայտնի դեմքները, ինչպես նաև բոլոր հայ զինվորները և նրանք, որոնք զինվորական տարիքում բնաել էին վճարել: Հունիսի 5-ին ձերբակալվեցին ևս 800 այլեր: Հետևյալ օրը նրանց տարան լեռների անապատամին մասը, այսուհետեւ 14 հոգուց կազմված կմբերով իրար կապեցին, որովհետև իրենց ունեցած պարաններով տասնչորս մարդուց ավել չեր կարելի կապել, և հրացանի բռնեցին: Մերձակա զյուղում հայերի ուրիշ խմբեր արգելափակվեցին: Երեք օր առանց ուտելիքի և ջրի պահելուց հետո նրանց մոտակա ժայռերի առաջ կանգնեցին և հրացանազարկ արին, որոնց վրա դեռ շունչ կար, սկիններով ու դանակներով սպանեցին: Հունիսի 10-ին հազարավոր հայերի նոր ջարդեր եղան քաղաքից երկու ժամ հեռու: Նույն սպանություններն էին շրջակա բոլոր դյուդիում...»:

Նոյեմբերի վերջերին Թիֆլիս հասավ սվազցի Մուրագը, որը, տաս ամիս շարունակ կոփներ մղելով լեռներում, 13 ընկերներով Սվազից հասել էր Սամսոն և, բոնազրավելով մի առագաստանավ, հաջողել էր ցամաք իշել Բաթումում: «Հորիզոնում» տպագրված էր այդ առասպեկտական փախուստի պատմությունը «Մուրագի Ողբականը» խորագրով, որից կարելի էր գաղափար կազմել Սամսոն-Սվազ ուղղությամբ կատարված զանգվածային տեղահանությունների և շարդերի մասին:

Հաջորդաբար սկսեցին լույս տեսնել զանազան միաժամկետների, իտալական դիվանագիտական ներկայացուցիչների սահմանկեցուցիչ տեղեկագրերը, որոնք պարզում էին, որ իրենց ծավալով և կազմակերպված բնույթով հայկական շարդերը վերազանցում էին պատմության բոլոր այդօրինակ դիպերը:

Տարվա վեջին լուրեր հասան բնաջնշվող ժողովրդի մի քանի ընդվզումների մասին. ապատամբել էին Շապին—Գարահիսարը, Ուրֆան, Այնթափը, Զեյթունը, Ճեպել-Մուսայի ապառաժոտ բարձունքների հայությունը ...

Այս պարզ էր, որ հայկական սպանողը կարող էր վերջ գտնել, եթե ընդհանուր պատերազմը վերջանար: Բայց զինվորական նախարար կորդ կիշները հայտարարում էր, թե Անգլիան կարող է գործոն մասնակցություն ունենալ պատերազմին միայն երկու տարի հետո, իսկ ցամաքի երկու ճակատներում դրությունն ավելի քան անմիտիթար էր: Զնայած որ գերմանացիներն իրենց ուժերի մի խոշոր մաս արգեն նետել էին արևելյան ճակատ, բայց տարվա ընթացքում Սոմի շրջանում գերմանական ճակատը ճեղքելու՝ անգլիացիների ու ֆրանսիացիների բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Բովանդակ արևմտյան ճակատում կոհիվը «գիրքային» բնույթ էր ընդունել, որը Գերմանիացին հնարավորություն էր ընձեռում այնտեղ պաշտպանություն մղնլ նվազագույն ուժերով՝ արևելյան ճակատում ուսւների հետ նախապես իր հաշվիները մաքրելու համար:

Նեղուցներում, մարտի 18-ի անհաջողությունից հետո, եթե գաշնակիցները կորցրին չորս խոշոր սպամանավեր, անգլո-ֆրանսիական նավատրոմը այլևս փորձ չարեց Գարդանելն անցնելու: Իսկ Գալիպոլիի եզրամասերում ցամաք իշած Համիլտոնի բանակն ամբողջ տարվա ընթացքում ոչ մի հաջողություն չունեցավ:

Բալկաններում մինչ այդ հերոսաբար դիմագրող փոքրիկ Սերբիան հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ջարդություր եղավ ավատրությունական, բուլղարական գերազանց ուժերի ճնշման տակ, որոնք ներս խուժեցին միաժամանակ հյուսիսից և արևելքից՝ Մակենզենի ընդհանուր հրամանատարության տակ:

Ավելի անմիտիթար էր կացությունը ուսւական ճակատում: Կրակովի շրջանում կենտրոնացած գերմանական ուժերը զեռ մայիսին մի քանի ուժգին հարվածներով հարկադրեցին ուսւաներին ետ քաշվել և վիլայի ձախ ափով նահանջել: Քիչ հետո ուսւները թողեցին Պերեմից և կողմը, իսկ ամուսն վերցին բովանդակ Գալիցիան պարպեց նըրանց կողմից: Աշնանը գերմանացիները հաջորդաբար գրավեցին Կովնոն, Գրոդնոն, Բրեստ-Լիտովսկը: Այնուհետև ուսւները սկսեցին նահանջել ամբողջ ճակատով՝ երթեմն միայն թեթև կոփներ մղելով թիկունքում պատրաստված ամբողւթյունների վրա...

* * *

1916-ի սկզբներին մեր բարոյալքումը հասավ իր գագաթին, եթե իմացանք, որ Համիլտոնի բանակը պարպել է Գալիպոլին: Մեր ժողովրդի մնացորդների կյանքը փրկելու ամեն հույս օդ ցնեց:

Երևանում ամեն տեղ նրբամիտ մտավորականները խնդիրը բացատրում էին անգլո-ռուսական հակամարտությամբ: Իբր թե Անգլիան, եթե ցանկանար, կարող էր գրավել նեղուցները: Բայց որովհետև այդ պարագային սահմանակած պետք է լիներ Պոլիսը զիշել ուստաներին, մի տարի ձգձիլով՝ ետ քաշվեց ...

Միջադիմութից փախած բժիշկ Թորոսյանն այդ օրերին հասել էր թիֆլիս և դեռ ողջ մնացած տարագիրների վիճակի մասին հայտնում էր.

«Միջագիտք տարագրված իմ գժբախտ հայրենակիցները բաղկացած են մեծ մասամբ կանանցից, աղջիկներից: Դժբախտաբար հազիվ են ծածկում իրենց մերկությունը ցնցոտիներով, եղանակի խստությունների դիմ պաշտպանվելու ոչինչ չունեն. ոմանք, հողերին ծալապատիկ նստած, փորձում են լաթերի կտորներից միացած հովանոցների շուրջի տակ պաշտպանվել, բայց մեծ մասը զուրկ է նաև այս խեղճուկրակ ապաստարանից: Ավաղուտների մեջ, ամեն տեղ, բարձրանում են հողաթմբեր, որոնց շուրջը դառնում են դաղաղած շներ: Դիակներից շատերը մնում են անթաղ: Հազարներ են այդ կմախքացած դժբախտները՝ փոսացած այտերով, մարած կամ շատ փայլուն աշքերով, խոսելու վարժությունից զրկված, տառապանքից ապուշացած գեմքերով ...»:

Եթե մինչ այդ իմ մեջ մնում էր դեռ մի հույս, որ հարազատներս կարող էին սղջ մնացած լինել անապատներում, այժմ այդ հույսն էլ մարում էր: Մնում էր մի բան. ինչպես կարելի է Պոլիս հասնել և թալիքաթին գտնել: Միայն նրա մահը կարող էր քիչ թե շատ ամոքել ապրած կոկիծ: Տեսական մղամավանջի պիս երբեք հանդիստ չէր տալիս ինձ այս գաղափարը. երբեմն այն համակում էր ինձ այնպիս, որ մոռանում էի ամեն բան: Քաղաքների միությունում դեռ շարունակվում էր պաշտոնս, բայց ոչինչ չէի անում:

Քիչ հետո ոռաները գրավեցին երդրումը: Երևանում ոռմբի պիս պայմանական այդ լուրը, ոչ ոք հույս շոներ Կովկասի ոռւս բանակի մարտունակության վրա. արդեն հայտնի էր, որ այդ բանակի լավագույն ուժերը փոխադրվել էին ոռուս-ռումինական ճակատը, իսկ մնացածները պահանջված քանակությամբ ուղղմամթերք շունեին հարձակման համար:

Այժմ բացվում էր հույսերի մի նոր շոշան: Մարդիկ նորից կյանք առան: Գեր կորած չէր ամեն բան: Ո՞ր ժաղովուրդն է ազատակրուիլ թուրքական լծից առանց զանդվածային շարդերի, ինչո՞ւ ոպասել, որ մենք բացառություն կկազմենք, որքա՞ն մարդ կար երկրում, երբ ազատապրվեց Բուլղարիան, այսպիս էին այժմ տրամադրությունները: Աւ սկսվեց նոր շարժում դիակի ճակատ: Համոն նույն օրը, թղթերի պարկը շալտկած, նկազ ինձ հրաժեշտ տալու Գնում էր իրեն թղթակից թարմ շալտկած բերելու: Հաջորդաբար մեկնեցին կամավորական խմբերից երեւանում եղած բոլոր ընկերները: Սակայն, այժմ կամավորական խմբերը ցրված էին, իրեն այդպիսին նրանք իրենց զերն արդեն կատարել, վերջացրել էին. նօրակազմ խմբերը, ինչպիս նաև նախկին խըմբերի մնացորդները, վերածվում էին հայկական հրացանաձիգ փողերի և վկատիչն սպաների հնթակա՝ մուծվում ոռւսական բանակը:

Մարտի վերջերին ես հաղիվ կարողացած ապաքինվել հիվանդությունից ու մեկնել: Գնում էի քաղաքների միության գործերով: Սարդիղամիշից հաճույքով ինձ իրենց մոտ ընդունեցին ոռւս բանակի թընդուռթաձիգ երկու սպաներ՝ Տեր-Ակոպովը և Տեր-Պետրոսովը, որոնք ապրանքատար ինքնաշշարժով երդրում էին տանում դաշտային կապի և հեռախոսային հաղորդակցության պիտույքներ:

Այս գծով ես առաջին անգամ էի մտնում Երկիր: Սար և ձոր վկայում էին պատմական հին ու նոր արնաներկ անցյալը: Երեկոյան հասանք Գարապորկան: Հաճելի, քաղաքավար ընկերներս, տեսնելով, որ նոր և ապաքինվել հիվանդությունից, իմ հանդեպ խնամք և ուշացրություն էին ցույց տալիս: Հաջորդ օրը Զիվինի ճանապարհով ուղեցվորվեցինք գերի Քեռվիրիքյոյ: Աղջամուղջի շղարշից նոր պարզվող շիվինը հիշեցնում էր Կայծակ Վաղարշակի խմբի նահատակությունը, որի մասին կարդացել կամ լսել էի շատ տարիներ առաջ: Մեր վաղեմի Վաղարշավանում կանգ շառանք: Երեկոյան հասանք Հասանգալե, ուր հազար շորս հարյուր տարի առաջ ամրացել էր իր քաջերով Մամիկոնյան Վահանը՝ իրեն հալածող պարսիկ բանակների գեմ: Լուսաբացին մեկնեցինք: Ճանապարհը դժվար էր, բայց օդը՝ լավ: Մայրամուտ էր, երբ բարձունքներով շրջապատված Կարինը հայտնվեց կրկեսի պիս խորը ընկած տարածություններում: Արեկի վնրջին ճառագայթները խաղում էին մինարեների նրբին ու սուր ծալրերին:

Քաղաքում ամեն քայլափոխի պատահում էին զինվորականներ, զորքեր, բեռնավորված ստվեր, ուղարկած տեսա զորքեր, բեռնավորված ստվեր, ուղարկած տեսա

կարինցի Սահակին, որի հետ միասին նահանջից հետո էջմիածնում զրադվում էինք որբերի գործով: Ձևապինդ Սահակն առավ ինձ բազուկների մեջ: Ապրում էր Սանասարյան վարժարանի մոտակայքում: Առաջնորդեց իր մոտ: Ամերիկայից իր հետ մեկնած կամավորներից էրզումում ոչ ոք չկար, և ինքն էլ մտադիր էր զնալ վերագրավված վանի, թիթլիսի ուղղությամբ:

Էրզումի 18 000 հայերից մնացիլ էին 120 մարդ, որոնցից վեցը՝ այլրեր, մնացածը կանայք, երեխաներ: Նահանգի գյուղերի բոլոր հայերը ոչնչացված էին:

Առավոտյան ներկայացած Տիգրան Աղամալյանին, որ Քաղաքների Թիւթյան լիազորն էր: Բարձրահասակ, դժույն դեմքով, մեծ, մելամաղեսությամբ աշքերով մեկը, որ կլանված էր գործերով: Մոտակա շրջաններում գոնված մի քանի տասնյակ որբերն արգեն ճամփված էին Ալեքսանդրապոլ: Բայց այդ ուղղությամբ, մինչև ենուս, կատարվելիք շատ գործ կար:

Մի քիչ հետո Համոյի մոտ էի: Դեռ Երևանում կարդացել էի նրա սահմուկեցուցիչ թղթակցությունները Օսմանյան պառլամենտի անդամներ Սեյֆուլա և ինկիր Ահմեդ բեյերի, Հրամանատար Քուզի բեյի, Բեհանդին Շաքիրի և Հաճի բեյի կազմակերպած ջարդերի մասին: Համոն այժմ էլ զրադված էր նույն գործով: Նրա կյանքը թեքումներ շուներ: Տրամադրությունը բարձր էր: Մի քանի բառով ինձ պարզեց կացությունը: Կղածը եղել էր, հիմա անհրաժեշտ էր գալիքի մասին մըտածել:

Աճապարում էր ինչ-որ հիշատակարան դիտելու հերթական թթվակցության համար: Նա սեղանից գրպանեց մի տրցակ երկարավուն թղթեր ու ոտքի ելավ:

— Ի միջի ալլոց, դու կարող ես ինձ այստեղ օգտակար լինել,— ասաց նա, — զնա՞նք, ճանապարհին կիսունք:

«Հիշատակարան» մի կիսավեր շինություն էր, որ գանվում էր Հայկական գերեզմանատնից քիչ վար, մի բլրազրդ դաշտի վրա: Կոշկած էր լինելու իթթիհատականների ամենամեծ ակումբը՝ խաղաղահներով, մարզման բաժիններով, լճով, ճեմելիքներով և այլն: Մնացել էր կիսատ՝ քաղաքը ուուների կողմից գրավվելու կապակցությամբ: Շենքի երկու մետրաշափ պատերը կառուցված էին հայկական գերեզմանատնից բերված տապանաքարերով, ըստ երևույթին, վայրն ընտըր-

ված էր շինություններին մոտ լինելու նպատակով, քանի որ ավելի վար պարզվում էին ծաղկազարդ գեղեցիկ դաշտեր: Այժմ Բարաղամյանն ինձ նստեցրեց մի շինության կենտրոնից քիչ հետո քարերին, որ թելագրածները գրի առնեմ:

— Դրի՞ք, — գոշում էր նա՝ զլուկը դուրս հանելով այնտեղից, — Արևելյան պատ, ձախից աջ, առաջին շարք, ասա հանգչի ...

— Ի՞նչ:

— «Աստ հանգչի հնուացի Հակոբենց Նախրանի որդի տիրացու Գևորգը, որ դառնակսկիծ մահվամբ, աստի կենացս 1845 թվականին...»:

Դրիր հաջորդը.

«Այս է տապանն հանգստյան գուստորի նուրի հաթունին, որ առաջին ծննդաբերությանն որ էր զուխտ՝ հանգավ առ Թրիստոս, ինքն և մանկունքն իր, որ էր կողակից նիկեկծու Հովհաննես Զելեպուն, որ մականվամբ Զուխուր կոշեն...»: Դրիր նրորդը.

«Աստ հանգչի Մուղագուի Մաթեոս, որ կաթվածին փոխեց աշխարհս, որք հանդիպեք ասեք Զհայր մեր և զողորմին...»: Երկրորդ շարք, գրի՞ք.

«Ընդ հովանյալ այսմիկ շիրիմի հանգչի Հայկաղն էրզումցի, որ Ավագյան Մականունք, աղգեն մերմե Հայկազունի, սա փափազյալ դամբարանի Առաքելուն Սուրբ Պետրոսի...»: Ափո՞ս, գրիր մյուսը.

«Այս է տապանն էրզումցի Մահտեսի Հակոբի գուստար Մրուշու, որ մահ տարածամբ եղավ թվն. 1889»: Դրա տակը գրիր.

«Որք հանդիպեք այսմեկ տապանի մի անցեք բաց օրհնությանց, զի աշխարհը անցողական առիթ է մեզ միշտ գլուրուման...»:

Սիրտս նեղվում էր, վրաս տիրություն իջնում: Համոն մտել էր շենքի ներսը և այնտեղից հազիվ գլուխը դուրս հանելով՝ գոշում էր՝ «Աստ հանգչի», «Աստ հանգչի»:

— Դրի՞ք, «Դամբարանն քեհրիբարի վաճառական Մինաս աղացի, կողակից Հանըմայի...»:

— Բավական է, — գոշեցի ես:

— Զրի՞ք, գրի՞ք, այս շարքի մեջ վերջինը. «Աստ հանգչի թաղեկու աղան, որ էր որդի արքունի վառողապետ Մահտեսի Առաքել Ամիրայի Զթշյան»: Դրա տակը գրիր. «Մվ անցվորք ճանապարհի կենցաղի, եկաք ի տես ի տեսարան իմ հոգու...»:

մտածիր, ևս ինքպինքս կսպանեմ, խնդրում եմ գրիր գեղագործին, որ
ինձ մի քիչ թույն տա...»:

Հասանք Մամախաթուն: Մեծ փոփոխություններ էին կատարվել
այստեղ, կառուցվել էին տախտակի հոկայական մթերանոցներ, հան-
րակացարաններ, պահեստներ: Հրապարակը բռնված էր եղան, ձիու
սալլերով, զինվորներով, սազմամթերային բեռներով: Հաղիլ մեկ ժամ
մնացինք այստեղ: Քոթուր Քեռփրիի մոտ Եփրատը վեհափառորեն
ճեղքում-անցնում էր ճանապարհը: Որքան մոտենում էինք հարազատ
վայրերին, այնքան հուզումը համակում էր ինձ:

Հաջորդ օրը մեր դիմաց պարզվեցին դեպի Տրապիզոն և Կարին
տանօղ ճանապարհների միացման կետում ընկած գորանոցները, որոնց
վրա այժմ ծածանվում էր ուստական դրոշակը: Քիչ վարը բարձունքից
արդին նշմարում եմ Ծնի-Ճամմիի սրածայր գաղաթը: Ավելի վար արմը
փոզփոզում էր ու Նշան, ու Փրկիլ Եկեղեցիներին:

Երիկնամուտ էր, երբ մտանք Երզնկա: Թուրքական թաղի առաջա-
մասում թուրք տղեկներ, մի ճեղքով վարտիքի գոտուց բռնած, թանձր
փաշու մեջ վաղելով, աշխատում են հասնել սրբնթաց սալլին: Պատե-
րի ատկ՝ ստվերներում, հայտնվում են կլզած, մտազրադ թուրքեր:
Մայթերով անցնող թրքուհիները խնամքով պարուրվում են ծածկոց-
ների մեջ:

Մանում ենք թաղի կենտրոնական Հրապարակը, ուր աշ ու ձախ,
գեմդիմաց ցցված սպայակույտի, կառավարատան, քաղաքապետարա-
նի և Մյուշիր Սարայի շինքերին ծածանում են ուստական դրոշակներ:
Կարծիս ոչինչ չի պատահել. փոխվել է միայն իշխանությունը:

Բայց շատ կարճ տևեց այս խարկանքը: Երբ Գարեգինը թեքվեց
դեպի աշ, իմ առջև պարզվեց Եկեղյաց թափուր Հրապարակը, այն
ընդարձակ Հրապարակը, որ միշտ խնդրված էր լինում բազմությամբ:
Աշ կողմից միայնակ ցցվել է որբացած ու Սարգիս Եկեղեցին, ման-
կության օրերի զատկական Հավկիթախաղի կենտրոնը: Դիմ-դիմաց,
ուղղակի Հրապարակի ճակատին, մեր տունն է: Վար ցատկելով սալլից՝
հզոր բաի ունեցած վազելու այստեղ, բայց մի սուր, տհաճ զգացում
թափս կոտրեց. անհայտությունը նախամեծար էր այն ամենից, ինչ
կարող էի տեսնել: Ուղղվեցի դեպի ձախ, դեպի կենտրոնական դպրոցը.
Երրորդության Եկեղեցին, Առաջնորդարանը:

Կենտրոնական վարժարանը վերածվել էր որչանոց-Հիվանդանո-
ցի: Վարիչն էր բժիշկ Շրշակ Պողոսյանը՝ թիկնեղ, մի քիչ կորամեջք,

* * *

Ապրիլին ուստաները դրավեցին Տրապիզոնը, իսկ հուլիսի կեսերին՝
Երզնկան: Էրզրումի գաշտում ամեն տեղ հայտնվում էին ոսկքաշած,
վայրենական վիճակի մատնված մանուկներ, որոնց մեծ մասն իր
գոյաթյունն էր պահպանել ավերված հայ դյուդերի փլատակներում:
Զեռք ընկնողները դողում էին աշնան տերեկի պիս. մեծ ջանք էր պետք
հասկացնելու, որ իրենց այլևս վտանգ չի սպառնում: Մոռացել էին
լեզու, հայություն, մարդկություն: Խնուառում դրանցից խմբված էին
մոտ երկու հարյուր հոգի: Ամեն տեղ առաջնակարգ արժեք էր ստա-
ցել որքերի գործը: Ամեն մի որքուի մի նոր աղյուս էր աղզը վերա-
կառուցելու համար: Ես ճպնում էի որ առաջ ավարտի իմ բաժին աշ-
խատանքները՝ Երզնկա մեկնելու համար: Օգոստոսի վերջին մեղ մոտ
հայտնվեց Մուրադի հետ փախած տղաներից Հովհաննը, որ եկել էր Բա-
թում—Թիֆլիս—Կարս գծով և գնում էր Մուրադի մոտ: Կարնեցի Սա-
հակի և նրա հետ մեկնեցինք:

Ճանապարհը բռնված էր անհաշիվ եղան սալլերով, որոնց ուազ-
մամթերք և պարեն էին տանում ուստա զինվորների ուղեկցությամբ:
Գնում էինք Քաղաքների միության երկձի սալլով, որ պիտի ետ դառ-
նար Երզնկայում խմբված որքերով: Սալլապանը՝ թիկնեղ, կլոր, սի-
րուն ոչխարային աշքերով մշեցի Գարեգինը, կիսով շափ թիք նստած,
ավելի շատ լսում էր Հովհաննի պատմությունը Մուրադի և Ծնիերների
փախուստի մասին, քան վարում սալլը: Եվ Հաճախ մնում էինք բեռ-
նակիր արաբների պոշերին զամված: Ամեն անգամ, երբ Հովհաննը
սպատմում էր փախուստի այս կամ այն դժվարաթյան կամ խմբի ան-
հավասար կոփիների մասին Սվազից Սամսոն երկար ճանապարհին,
Գարեգինը շլմորված բացականչում էր. «Ճե՛յ, Մշու Սուլթան Մուրը Կա-
րապիտ» կամ քիթ տակ սրտամորմոք մրմնջում՝ «Ճա՛, յա՛»: Տեղ-
տեղ, իրոք որ, խիստ հուզիլ էր Հովհաննի անպաճույն պատմությունը:
Օրինակ՝ երբ Մուրադը և Ծնիերները, մի քարանձավի մեջ զարանա-
կալ, դիտում էին հարազատների տեղահանությունը՝ բազմության մեջ
ճանաշելով մայր, քույր, եղբացր, զալակ, անկարող դնդակ արձակե-
լու շարդարանների վրա. — Ի՞նչ անեինք, մենք պիտի սպանեինք հինգ,
տասը մարդ, նրանք՝ բոլորին,— ասում էր նա:

Կամ երբ նրանք հասնում են ու Տաճար, և Մուրադն այստեղ նա-
մակ է սպանում կնոշից, որտեղ նա գրում է. «Իմ մասին երբեք մի

Հանդարսու ու խելոք աշքերով, մոտ քառասուն տարեկան մի համակրելի մարդ: Զուր էին ակնկալությունները, որքերի մեջ ոչ մելին չունեիր: Արդեն Երզնկայից ոչ ոք չկար, բոլորը հավաքված էին շրջաններից: Երզնկացիներից մնացել էին միայն Երկու-երեք ընտանիք, որոնց մեջ նաև մեր Հարեւան Թառիկյանները: Դուրս ելա՛ ինչ անելո շիմանալով: Մեր տան դիմաց կանգնած էր մի սպա:

- Ի՞նչ եք ուզում,— զոշեց նա:
- Մեր տունն է, կուզեի տեսնել ...
- Այս ձեր տո՞ւնն է:
- Այո՛ ...
- Որտեղից եք գալիս:
- Էրզրումից:
- Կամավո՞ր եք:
- Ո՛չ, Քաղաքների միության պաշտոնյա:
- Ձեր Հարազատներն այստե՞ղ էին:
- Այո՛:
- Իսկ Հիմա՞:
- Չգիտեմ ...

Համակրելի մարդը դումբը կախեց, ապա ծխախոտը հանելով առաց:

- Հրամեցեք ...

Հանրակացարան էր դարձել մեր տունը, բայց ներսում մարդ չկար: Թիկունքում շենքի մի մասը քանդված էր: Վարի Հարկում փայտարանը՝ մառանը, խոտի, ալյուրի, մրգի բաժինները, ինչպես նաև թուրատունն ու խոհանոցը լցված էին անծանոթ իրերով: Վերևում՝ խոշոր «Մաղեինը», ուր նստում, ճաշում, ընթրում էինք ամռանը, և շորս սենյակները բռնված էին զինվորի աղքատիկ անկողիներով: Պատմական հիշատակարանի բնույթ էր ստացել աշքիս մեր տունը: Իմ փոքրիկ ննջասանյակից հայտնվեց մի զինվոր: Համակացա՞ ինչ ասաց: Կոկորդս սեղմվում էր, հաղիվ էի պահում արտասուրներս: Վար իջա: Դուրս ելա: Բնակարանը եղերող բոլոր ծառերը, զին ու հավատարիմ բարեկամների պես, շարքով կանգնած, նայում էին ինձ: Սո զիտեի նրանց վրա եղած բույները և համակառում էի թշունների ծլվոցը: Ես պատուհանից նրանց նետում էի հացի միջուկից զնդիկներ: Գիտեի, թե ո՞ր ծառն է խեժ արձակում ամռանը: Զմռանը ես նրանց ճյուղերը մաքրում էի թանձը ձյունից, որպեսզի վերև ձգվեն: Մառերի շարքը

երկարում էր մինչև մեր ընդարձակ ուրատեղի առաջամասը: Այստեղ պտղառու ծառերի մեծ մասը կտրված էն կամ արմատներով դուրս հանված: Ամեն տեղ գոյացել են թմրեր ու փոսեր: Ներսում մի քանի ծառեր՝ թևերը կախ, թախծոտ նայում էին ինձ: Մառեր թփեր, վայրի բույսեր տարածված, պառկած կամ ցցված էին դես ու գեն: Այստեղ այլևս կյանք չկար: Երաղի պես շքացել էին մանկության բոլոր հիշատակներս: Միայն պարտեղի խորքում մնացել էր անվթար մի անկյուն, ուր մանուկ օրերին Ալետիսը փիլոնի պես նետում էր ուսերին մորս ու շալը և քահանայի նման կոկորդալիր երգում «Մո՛ւր Աստված», «Մո՛ւր Աստված» և զանազան շարականներ: Բայց այստեղ գոյացել է մացառապատ մի մեծ թումբ: Ի՞նչ առիթով և ինչպե՞ս, քանի որ ծառերն իրենց տեղում էին ... Սարսուն ինձ ցնցեց, զդացի գաղց արյան մի պաղ օդ, ու գլուխս դարձավ: Զարհուրանքով ետ նետեցի ինձ, բայց ընկա ...

Երբ ուշի եկա, թանձը մթնշաղ էր: Դողահար դուրս ելա պարտեղից: Հրապարակի ծառերին աղմուկով թառում էին ագռավներ: Գլխիս մեջ քառս էր, և ուր գնալու շփիտեի: շերմի պես մի դող մերթընդմիրթ ցնցում էր ինձ: Թառիկյանների բակում նկատեցի մեկին. Ի՞նչ էր այս, ցնո՞րք, թե՞ իրականություն. նա շատ նման էր մեծ եղբոր՝ Միսաքին: Այնպիսի մի անակնկալ էր այս, որ հաղիվ վստահություն ունեցած ձայն տալու: Նա՛ էր: Ծմորած նայեց, ապա հանկարծ դուրս վազեց և առավ ինձ բաղուկների մեջ: Հասել էր Մերրիացից մի շաբաթ առաջ Բաթում—Տրապիզոն—Թեփի—Տերե—Երզնկա գծով: Եկել էր մերոնց փնտրելու ... Ինձ հարցումներ շարեց, կարծես զիտեր, որ եկել էի կամ պիտի դայի ու շեի կարող շգալ: Միայն լավ նայելուց հետո հագատարությամբ ու լուրջ հարցրեց.

— Հիվա՞նդ ես:

- Ո՛չ, բայց երեկ գիշեր ճանապարհին մի ֆիշ մրսեցի:
- Ներս գնանք, Թառիկյանների մոտ եմ:

Իսքը, կինը և երեխանները: Երենց հիշում եմ: Կարծում են, թե եղբայրս է դտել ինձ: Թառիկյանը ողջագուրում է ինձ, կինը ուրախությունից արտասվամ ... Թեյ, պանիր, հաց, խաշած հավկիթներ, զին հյուրընկալների զվարթ շարժուձեր, բայց՝ կիսակործան ու պարապ տուն:

Փախել են և հրաշքով մահից աղատվել: Երկար դեղերել են Դերսիմի ձորերում, ընկել են մի քրդի ձեռք, որ խնայել ու պահել է նը-

րանց պայմանով, որ մահմեղականություն ընդունեն: Դեռ թարմ են նրանց քաշածները, ու պարոն Թառիկանը ներքեն պահանջ ունի, ոչ ամեն մարդ իմանա իր ապրած ներքին սարսափիները, գոյությունը տար-պանելու հնարամտությունները: Եղբայրս լսում է նրան լարված ուշա-դրությամբ՝ անելով լրացուցիչ հարցումներ քաղաքի ոստիկանապետ Մեմտուն բերի դժոխային դերի, Քեմախ Բողազի գանգվածային շար-դերի և այլ այդ կարդի դեպքերի մասին: Գնալ, գնալ էի ուղում այդ-անդից, բայց ո՞ւր ...

Կինը երեխ զգաց միճակս, վեր գնաց և քիչ հետո հայանվեց, ասաց, թե կարող եմ գնալ վեր հանգատանալու, եթե ուղում եմ: Վեր-նահարկում եղբորս հատկացված սենյակի միակ պատուհանը նայում էր վերի հորեղբորս բնակարանի պարտեզին, որի հետ կապված էին մանկական անհաշիկ հիշողություններ: Թուխ ամպերն անցնում էին երկնքով՝ մերթընդերթ ծածկելով լուսինը: Փակեցի պատուհանի փեղ-կերը ու մտա անկողին, բայց հնամաշ վերմություն չուներ: Գլուխս հնոցի պես այրվում էր, մարմինս՝ դողում: Ելա ու վերարկուա զցեցի վրաս: Օգուտ շունեցավ: Մարմինս զբնգում էր: Մտածում եմ, որ արգահատելի եմ, անպետք, անօդնական, զգվանք եմ զգում իմ հան-դեպ, զոյտթյան նպատակ, կամք ունեցող մարդիկ ինձ նման չեն, օրինակ՝ Համոն, լավ, վատ, անսայթաք վարում է իր գործը, տեղյակ պահում հայ ընթերցող հասարակությանը իրադարձություններին: Տես-նես՝ ինչ եղան տապանաքարերի արձանագրությունները, ծիծաղելի չե՞մ ենուած մարդկանց շիրմներն արձանադրել, երբ քար քարի վրա շի մնացել, և սար ու ձոր բռնել են անթաղ շիրմների ոսկորներ ... Անկա-րող եմ հասկանալ, թե ինչպես եղավ, որ այս շեն քաղաքում քսան հազար հայերից մնացին միայն մի քանի ընտանիք, որոնց մեջ նաև մեր բարեկամ Թառիկանները իրենց երեխաներով, նախախնամության ընտրյալները, իբրև վկաներ աննախընթաց նախճիրի: «Ո՛չ, չեր կա-րող այսպես լինել, եթե մի հզոր ձեռք հարատերեն ու խղճի մտոք չկարեր սպանդը», — ասաց մի անդամ Համոն, երբ խոսում էինք շար-դերի մասին ... Ու իմ առջե դարձյալ պատկերանում է Թալեաթի փը-քուն, ինքնագոյն դեմքը, որ մթության մեջ կարծես բարձրացնում է բրդու թաթը ...

Ախ, կտրել այդ ձեռքը ու թողնել, որ արյունաքամ լինի հրեշը, որ կարողանա զգալ ու հասկանալ իր կատարած ոճիրի տհագոր շա-

փերը ... Հավատա՞լ արդյոք, որ մի օր, երբեկցից, կլինի մի արդար դատաստան: ... Հոգիս լցովում է շերմնուանդության մի զգացւում, որ հատուկ էր ինձ յոթ տարի առաջ այստեղ, պատից այն կողմ, իմ փոք-րիկ ննջասենյակում, ուր ամեն գիշեր մորս թելադրությամբ ես քնե-լուց առաջ մրմնջում էի՝ «Հայր մեր, որ հերկինս ես» ...

Եվ, իրոք թե, ես եկել եմ մեր տուն շատ հեռու տեղից, փաշու մեջ կորած երկարավիղ կոշիկներ հագած: Տե՛ր Աստված, որքա՞ն ճանա-պարհ եմ անցել՝ սարեր ու ձորեր կտրելով: Վերջապես հասել եմ Պույ-րաշին՝ և այնտեղից ուղիղ գծով անշեղ քալլելով՝ ահավասիկ դժել եմ մեր տունը: Դեռ ներս շմտած՝ բարդիների տակ տեսնում եմ մի գլուխ, որ ցատկատելով, ուղրվելով գալիս է դեպի ինձ: Մայրս է, մորս դլու-խը, բայց զարմանալի է, որ բաց է՝ փշտ զիսակապը ականջների տա-կով հանգուցած ծոծրակին:

— Արի հո՞ն, որ շտեսնեն քեզ, զսվա՞կս,— ասում է նա ոտքերիս-մոտ, շնչահատ:

— Ո՞ւր, մայր:

— Հո՞ն, Հո՞ն, պարտեզը, մացառների տակ, ամենքս հոն պառ-կած ենք:

— Իսկ մարմինդ ո՞ւր է, մայր:

— Հո՞ն է, Հո՞ն զավակս, շո՞ւտ ...

Ու զնում եմ մորս զիսի ետևից, որ անհետանում է թփերում ... երավ, որ բալորն էլ այստեղ են, մացառների տակ անշշուկ երկա-րած: Ահա եղբայրս.

— Ամենին, բարեւ,— շշնջում եմ իս իս ...

— ռեվետինս ... Սը՞սս ... մեղմ հովի տակ սուլում են բարդինե-րը: Եղբայրս բաց աշքերով նայում է երկնքին, ու մորս զլուխը քնել է, մարմնի մուտ նստած:

«Դուք այստեղ, այսպե՞ս,— մթնջում եմ շշմած,— վեր կացեք, Հոփիսիմե, Մարդար, Պայծառ, վե՛ր կացեք»:

Հանկարծ եղբայրս նայում է ինձ ու ասում.

— Դու ո՞վ ես և ի՞նչ ես ուղում մեղանից:

— Չե՞ս հիշում, — ասում եմ՝ շանալով ժամանակ:

— Ո՛չ, ու եղբայրս մեղմորեն բացասարար շարժում է գլուխը:

Ամպերի միջից հանկարծ դուրս է ընկնում լուսինը ու դալով դեմ-քով նայում դեպի վար: Նոր եմ տեսնում, որ եղբայրս զլուխը շարդ-ված է:

— Սողոմոնն եմ, Ավետիշ, — ասում եմ զարհուրանքից սարսափած ու ներքև թեքվելով՝ ուղղում գլուխը դրվագ։ Թայց հանկարծ նորդեմքը մթադնում է, ու շրթերին հայտնվում մե ասու ժակիա

— Ախ, դու... այո՛, նման ես, բայց ո՞ւր էիր, եթք մենք փախանք այստեղ, ինչո՞ւ դու էլ պառկած շես մեզ հետ և ինչո՞ւ եկել ես ինձ փաղաքշելու զողի պես զիշերով, գնա՛, գնա՛, ես շեմ ճանաշում քեզ ...

Ու ես երիխայի նման լաց եմ լինում աղիողորմ՝ թփի տակ ծնկաշոք ...

— Սողոմոն՛ն

Ընդուած արթնացաւ:

— Ա՛յ տղա, ի՞նչ ես ցուլի պես բառաշում, — բոշեց Միսաքը: Լուսանում էր ...

Գ Լ Ո Ւ Խ Կ Գ

ՄՈՒՐՍԴԻ ՀԵՏ

Առավոտյան ներկայացած Մուրադին: Նրան միայն մի անգամ էի տեսել, յոթ տարի առաջ, այստեղ՝ ծրզնկայում, եկեղյաց հրապարակում, ապա երրորդության եկեղեցում, որտեղ նա խոսում էր խուռն բազմության առաջ թուրք հեղափոխության և «Օսմանյան ընդհանուր հայրենիքի» մասին: Այն ժամանակ նա բրոնզե, ձուկածո կազմվածքով մեկն էր: Խորը, կրակոտ, անհանգիստ աշքերը կայծկլտում էին թափ ու թանձր, սև հոնքերի տակ: Առնական պարանոցի վրա ետ սանրված, խործի պես առատ մազերով գլուխը դասագրքում նկարած առյուծի քաշ էր հիշեցնում: Այժմ նախկին Մուրադից մնացել էին միայն աշքերը, մազերը: Դեմքին կնճիռներ էին գոյացել: Կորցրել էր աշխուժությունը, դարձել անժպիտ: Կայծկլտում աշքերում մի ցավ կար, մի շատ խորունկ ցավ, որ լեզու չունի. Հպարտ, տիրական դեմքը խեղճացեց էր:

Այնքա՞ն շատ գործ կար և այնքան քիչ մարդ, որ Մուրադն անմիջապես ինձ մտցրեց իր տղաների խմբի մեջ, որոնք տեղավորված էին Քրիստինյանց աղջկանց վարժարանում: Տղաների մեջ ամենից առաջ ուշադրությունս գրավեց Վահրամ Տեր-Մանուկյանը, որին անվանում էին «Զմշկածագցի»: Նա Մուրադի կազմակերպած «որոնող խմբերի» ողին էր: Բարձրահասակ, բարեձև, հազիվ 25 տարեկան մի հմայիչ երիտասարդ էր: Առուցդ կազմվածքը հատուկ գրավվություն էր տալիս նրան. լայն, քիչ դուրս ընկած ճակատի տակ փայլվող մեծ, վառվուն աշքերը բացարձակ վստահություն էին ներշնչում: Իր հաղթ կազմվածքի զարդը դուրս ընկած կուրծքն էր, որ հանգստի պահին գրեթե միշտ ծածկում էր զլապինդ թևերը վրան խաչաձևելով: Քալերը առնական, հաստատուն էին: Պատասխանները՝ կարճ ու կտրուկ:

վածքը՝ հարգալից և սպասողական, որ դիմացինը խոսի: Գործի ժամանակ դեմքին վարանումի հետք չկար, լարված ու կենտրոնացած ուշադրությամբ լսում էր իրեն ուղղված հրահանդները, խոհուն աշքերը Մուրադի դեմքին հառած և, առանց որևէ ցուցական ինքնավստահության, գլխով թեթև հաստատական նշաններ անելով: Նրա մի ոտքը Դերսիմում էր, մյուսը՝ Երզնկայում: Հաջողել էր քրդերի հետ կապեր հաստատել, որոնց մոտ Մուրադի՝ «Մի հայ՝ մի ոսկի» ազգարարությունը լայն ժողովրդականություն էր ստացել: Զմշկածագցին ճշգրտորեն կատարում էր այդ հրահանգը՝ վճարելով քրդերի կողմից ներկայացված ամեն մի հայի համար մի օսմանյան ոսկեղրամ, և այդ միջոցով ամեն օր քաղաքում հայտնվում էին նոր ու նոր ազատադրվածներ:

Ոչ պակաս ուշագրավ էր Ճեպեճի Սարգիսը, որ զրկում էր ազատագրվածներին և արջի պես բազուկների մեջ ճամկելով՝ բացականչում. «Վայ», ո՞րու ես՝ առանց իմանալու, թե ով է: Ջվարթ, կենսուրախ, հանդուպն, անվեճեր Ճեպեճին Մուրադի ներկայությամբ նորահարսի պես էր: Իրենց քաջությամբ և անձնազո՞ւթյամբ նորահից ետ չէին մնում քեմախցի (Ավագ-վանքից) Միհիմարը, բազառիճցի Գալուստը, կովտունցի Մարտիրոսը, Հարություն Չաշանյանը, Ավետիս Մուշտուլյանը և այլն: Սվագ-Սամսոն-Բաթում դժով Մուրադի հետ փախած ընկերներից, Հովհաննից զատ, աշքի էին ընկնում նշանը, Արմենակը, Վարդանը: Վերջինը ցի ուժ ուներ, բռնած ընկերոջը մի ակնթարթում դնում էր տակը և վեր կենալով անձայն ծիծաղում՝ ոշխարի դմակի պես ջարժելով զանգվածային մարմինը: Ընդհանրապես բոլորն էլ անձնվեր, փորձված, ամեն զոհողության պատրաստ երիտասարդներ էին:

Մուրադի մոտիկ գործակիցներն էին բժիշկ Արշակ Պողոսյանը և զենքի հին ընկեր Կայծակ Առաքելը: Բժիշկ Պողոսյանը Քաղաքների միության ներկայացուցիչն էր Երզնկայում: Ենամում էր իրեն հանձնված որբերին, հիվանդներին: Արտաքինից դատելով հազիվ աշքի ընկնող բան կար վրան. խորհրդակցություններին հանդարտ նստած՝ թվում էր, թե առանց լսելու մտքերով թափառում է հեռուներում: Մտազրադ, դալուկ դեմք ուներ, խոսում էր քիչ, կարճ նախադասություններով ու գրեթե միշտ գործնական առաջարկություն անելու առիթով: Ընկերները մեծ ուշադրությամբ էին լսում նրան: Կայծակ Առաքելը քառասուննանց, շլերից և ոսկորներից կազմված, արկից խանձված մաշկով մի մարդ էր, որի մղած կոփիները Համիդի վարչակարդի դեմ հայտնի էին

բոլորին: Այժմ նա ջանասիրությամբ նվիրվել էր «Հայ հավաքելու» գործին: Հին հատկություններից մնացել էր գայլի պիս առաջ ցցված ծնուռ:

Այս անձնվեր մարդկանց անգույք աշխատանքները մեկ-երկու ամսվա մեջ մեծ արդյունք էին տվել: «Մի հայ՝ մի ոսկի» ազդարարությունը մեծ դործ տեսավլ: Երջակա քրդական գլուղերից հարյուրավոր մարդիկ ազատվեցին գերությունից: Բախտը ժաման նաև մեզ՝ եղբորս՝ Միսարին: Նրա զավակներից գտնվեց տասը տարեկան Արմենութին:

Կարճ ժամանակում Երզնկայի թափուր հայկական թաղը սկսեց նորից կյանք առնել: Վերաշինության տեսդապին աշխատանքներ էին կատարվում: Ավերակ տները նորոգվում էին. ծովաց վերստին բարձրանում էր երդիկներից. դաշտերը հերկվում էին. պատրաստվում էր աշնանային ցանքը. անօրինակ կենսականություն էին արտահայտում օրը օրին իրենց հարկի տակ դարձող մեր ժողովրդի մնացորդները:

Երզնկա հասած տեղեկություններից երևում էր, որ նման շարժումով համակված են բոլոր վերագրավված վայրերը: Բայ այդ տեղեկությունների, ամեն տեղ վերաշինվում էին գյուղերը, մշակված արտերը ծածկվում էին կանաչով: Ամեն տեղ եռում էր աշխատանքը: Հայ գյուղացին ամեն տեղ քրտինքով ողողում էր հայրենի հողը և ողմորությամբ վերաշինում այն, ինչ կործանել էին թշնամին ու պատերազմը: Դոյլություն ուներ վերաբնակեցման ծրագիր, այդ գործը վարող վարչություն: Հատկացված էին մեծապումար վարկեր և ձեռք առնված միջոցներ, որ գաղթականությունը վերադառնա իր տեղերը: Բայի կառավարական հաստատություններից, զրավված վայրերում աշխատում էին բարեգործական ընկերությունը, եղբայրական օգնության կոմիտեն, Մոսկվայի կոմիտեն, Քաղաքների միությունը, Գաղթականության կենտրոնական կոմիտեն, զանազան հայրենակցական միություններ և այլն: Դիտելով այդ խաղաղ աշխատանքի և վերաշինության մի նմուշը Երազնկայում՝ թվում էր, թե հայ ժողովրդի գոյության դեմ նյութված դաշներն ապարդյուն են անցել:

Բայց այդ խնդրի մի երեսն էր: Դեռ նախորդ տարվա հունիսի նահանջից և հայ կամավորական բանակի ցրումից հետո ոռւս միապետության վերաբերմունքը դեպի հայերը փոխվել էր: 1916-ի ձմռանը այն չէր խոսվում «Հայկական ինքնավարության» մասին: Բայ տեղեկությունների, այժմ Ռուսաստանում գտնում էին բավարար՝ ողպրոցա-

կան, եկեղեցական ինքնավարություն» շնորհել, և այն էլ «որքան այդ թույլ կտան տեղական պայմանները»: Այդ որով էր գրավված շրջաններում գործերը վարում կովկասի կառավարիչ մեծ իշխան նիկոլայ Նիկոլաևիը: Այդ շրջաններում նրա կողմից նշանակված բնդհանուր նահանգապետ, զորավար Պեշկովը հայաբնակ վայրերը լցնում էր հայացյաց պաշտոնյաներով:

Միապետության այդ կարգի գործակալներից էին Երզնկայի զինվորական ուժերի հրամանատար Կալեղինը և սպայակույտի պետ Լաստուշկինը: Քաղաքի ոստիկանապետն էր թուրքահպատակ մի վրացի: Թուրք բանակի նախկին գնդապետ Խայրի բեյը Կալեղինի կողմից նշանակված էր քաղաքագլուխ: Թուրք լրտեսները, որոնք մնացել էին Երզնկայում քաղաքացիական պաշտոնյայի հանգամանքով, թուրքերի նահանջից հետո, վխտում էին ամեն տեղ: Կարիքի դեպքում թուրքերը մարդիկ էին ուղարկում նաև բանակից: այսպես, օրինակ, Քեմախի ճակատի 8-րդ գնդի հրամանատար Մուստաֆա Վեֆա բեյը, Խայրի բեյի նամակ-հրավերի հիման վրա, իբր թե «փախավ» թուրքական բանակից, իբրև իթթիհատական կառավարության «Հակառակորդ» և Դերսիմում հաստատված՝ զբաղվում էր հետախուզությամբ իր երկրի օգտին: Ահա այս թեր ու դեմ տվյալներով էր, որ մենք դիմավորեցինք նոր տարին Երզնկայում:

* * *

Փետրվարի սկզբներին, կարճատե հիվանդությունից հետո, Երզնկայում մահացավ Կայծակ Առաքելը՝ վաստակավոր հեղափոխականը, բազում մահառիթ կոիվների առաջնորդող ոգին, որ գյումուշհանցի Ավոյի պես իր մահկանացուն կնքեց անկողնում: Նա պառկած էր անշուք դագաղում՝ ծանրորեն ընկած բարձին, գլուխը կքած, մեղրամոմի պես գեղին ճակատը բաց ու վարի ծնոտը քիչ առաջ նետած. դեմքի արտահայտությունն ավելի ուշագրավ, քան ողջ եղած ժամանակ: Այդ արտահայտությունը կարծես ասում էր, թե ինչ որ պետք է, ինքն արդեն կատարել է ու մեռել, որովհետեւ այլիս գործ չկա:

Մեզ համար այդ մահը հանդիսացավ նշանակալից դեպքերի մկրնավորություն: Ծուսաստանում սկսվեց Փետրվարյան հեղափոխությունը: Ելրոպական ճակատներում ոռւս զենքի տեսական անհաջողությունները մի կողմից, պարենավորման դժվարությունները մյուս

կողմից, մայրաքաղաքում ծնունդ տվին տարերային շարժումների, որոնք, հանկարծ ծավալվելով, կազմեցին ոռւս առաջին հեղափոխության շարունակությունը: Փետրվարի 28-ին գահընկց եղավ ցարը: Բայց խորը ընկերային հիմքեր ունեցող շարժումը միայն քաղաքական փոփոխություններով չէր կարող դուռանալ: Հեղափոխությունը խորացավ և լայնացավ՝ համակելով նաև զենքի տակ եղած զինվորությանը և քայլքայելով բանակը: Այս տիսակետից վճռական դեր ունեցավ Պետերուրդի բանվորական խորհրդի գործադիր կոմիտեի մարտի 11-ի «Համար առաջին հրամանը», որով գործող բանակների մեջ ներմուծվում էին ընտրովի մարմիններ՝ հրամանատարական կազմը հսկելու և առհասարակ զինվորական գործը այդ մարմիններին ենթարկելու նպատակով: Կարճ ժամանակում կարգապահությունը չբացավ, և բանակն սկսեց արագորեն քայլքայվել: Մարտ-ապրիլ ամիսներն անցան զանազան կուսակցությունների, հոսանքների, կառավարական շրջանների ներքին պայքարով: Այս պայմաններում բանվորազինվորական զանգվածները շրջվեցին պատերազմից, և հունիսին սկսված ոռւսական հարձակումը ելրոպական ճակատում, նախնական մեկ, երկու հաջողություններից հետո, զիշեց՝ զարկ տալով զորքերի դասալքության ու ստեղծելով ավելի մեծ և նոր շարժումներ թիկունքում: Օգոստոսին, զորավար Կոռնիլովի ելույթից հետո, ոռւս բանակն այլև կազմակերպված էր և անընդունակ՝ շարունակելու պատերազմը:

Ծուսաստանի այս դեպքերը չէին կարող անհետեանք մնալ ասիական ճակատների համար ևս, և նրանց ազգեցությունն զգացվում էր Երզնկայում, դեռ գարնանը: Հայրենիքից հեռու, երեք տարվա կոփեներից հոգնած, դաղազած զինվորներն սկսեցին լքել ճակատներն ու շարժվել դեպի տուն: Շարժումը հատկապես ուժեղ էր Երզնկայի շրջանում:

Մեզ համար ստեղծված էր իիստ ծանր կացություն: Օրեցօր մերկացվող ճակատները պահելու համար անհրաժեշտ էին ուժեր, որոնք շկային: Քանի դեռ ոռւս զորքի դասալքությունը մասնակի բնույթ ուներ, կացության ահավորությունը չէր զգացվում: Բայց երբ Ծուսաստանի զանազան կողմերում և Անդրկովկասում սկսեցին զարգանալ կենարոնախույս ուժերը, և ծայր առան քաղաքացիական ընդհարումները, կացությունը գնալով ժանրացավ:

Այս պայմաններում էր, որ ծավալվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը: Կալվածատիրական հողերի բռնագրավման հեղափոխա-

կան իրավունքն ու անմիջական պատվավոր հաշտության նշանախոսութերը զանդվածալին շարժման մեջ դրին ճակատում գտնվող զինվորներին։ Ռուսաստանի համար պատերազմը վերջացած էր։ Խորհրդային իշխանությունն առաջարկում էր առանց հողային նվաճումների և պատերազմական տուփանքի պատվավոր դիմոկրատական հաշտություն։ Երգնկան կազմում էր ոռւս զենքով նվաճված հողերի մի մասը, որ հաշտության պարագայում պետք է ետ տրվեր թուրքերին։ Անգամ ճակատում մնացած սակավաթիվ ոռւս զինվորների համար այլևս արժեզուրկ էր նրա պաշտպանությունը։ Ու նրանք անապարում էին տուն իրենց բաժին հողը ստանալու և իրենց ընտանիքների մոտ լինելու համար։

Դուրկ միջոցներից, իրական աշակցությունից, իսպառ մեկուսացած, դիմացում ունենալով թուրքական բանակները, թիկունքում՝ թըշնամի քրդերին, մենք փորձեցինք մեր շնչին ուժերով պահել լրված ճակատը, տեր կանգնել ոռւս զորքերի թողած անհաջիվ ուազմամթերքին, փոխարինել տեղական իշխանություններին։ Սակայն դիմքերի ընթացքն ուներ իր ուղին։ Նոյեմբերի 17-ին զինադադար հաստատվեց Ավստրիայի, Գերմանիայի և Ռուսաստանի միջև։ Նույն օրը Կովկասյան բանակի ընդհանուր հրամանատարին նույն առաջարկով դիմեց թուրքական ուժերի հրամանատար Վեհիբ փաշան։ Դեկտեմբերի կեսերին ոռւս զինվորական մի հանձնաժողովի հետ երգնկա հասավ Ա. Զամալյան՝ զինադադար կնքելու համար։ Աշքաբաց հայ հասարակական հեղափոխական գործիչը շէր թաքցնում կացության լրջությունը։ Մակայն առանց այդ էլ շատ պարզ էր, որ եթե ոռւս զորքի բարոյալքումն ու տունդարձը շարունակվի նույն թափով, մեր ցանցառ ուժերով անկարող կլինենք պաշտպանել ավելի քան 500 կմ մի ճակատ, որ երկարում էր Աև ծովից—Քելքիտ—Երգնկա—Խնուս—Վան ուղղությամբ։ Բայտ Զամալյանի, զինադադարն անհրաժեշտ էր թուրքերին։ Նախ սուսական ճակատի քայլայմանը նպաստելու համար, ապա, ուժերի վերաբաշխում կատարելով, անցնելու հարձակման։ Ոչ մի հույս շկար Անդրկովկասում կազմված Կոմիսարների խորհրդից՝ ճակատը պաշտպանելու գործում։ Վրացիները ձգտում էին անկախության, իսկ թաթարները թուրքերի կողմն էին։ Խիստ մտահոգիչ էին հատկապես տեղեկությունները Կովկասում ծայր տված թաթարական շարժումների մասին։ Կովկասի մահմեդականությունը պատրաստվում էր գրկաբաց ընդունել թուրքական բանակներին։ Հին (ոհմիմի) օրերին զսպված թըր-

քասիրությունն այժմ ստացել էր հրապարակային բնույթ։ Ամեն տեղ սկսվել էին մահմեդական շարժումներ, որոնք ծավալում ու խորացնում էին երկրում եղած քառորդ։ Շարժումները վարում էին թուրքական գործակությունները։ Երանք առաջ էին բերում խոռվություններ և ավագակային հարձակումներ էին կատարում գնացքների, պարենակիր խմբերի, տուն դարձող ոռւս զինվորների և հայ ազգաբնակչության վրա։ Այդ շարժումները հաճախադիապ էին հատկապես Կարսի, Երևանի, Գանձակի և էրզրումի շրջաններում։

Դեկտեմբերի 18-ին զինադադար հաստատվեց գնդապետ Էօմեր Լութֆի բեկի և զորավար Վիշինսկու կողմից։ Միաժամանակ ետ կանչվեց Երգնկայի ոռւսական ուժերի հրամանատար զորավար Լյախովը, որ փոխարինել էր զորավար Կալեղինին։ Փետրվարյան հեղափոխությունից ի վեր։ Լյախովի մեկնումը փաստորին դարձավ Երգնկայի ճակատի մերկացում։ Ռուս մարդու համար այլևս աննպատակ էր մնալ զիրքերում, երբ մի կողմից հազարավոր վերստեր հեռու իր երկիրը տակն ու վրա էր եղել, իսկ մյուս կողմից հայտնի էր, որ գրավված հողերը պիտի վերադարձեն թուրքերին։

Լյախովի մեկնումից հետո Երգնկայում գտնվող ոռւսական զորացուներից հազիվ մնացել էին 500—600 մարդ և մի քանի հայ և ոռւս սպաներ, որոնք այլևս ազդեցություն չունեին ոռւս զորքի այլ մնացորդների վրա։ Քիչ թե շատ կարգ ու կանոն մտավ նրանց մեջ հունվարի կեսերին, երբ մեզ մոտ հայտնվեց գնդապետ Մորելը, որ եկել էր Թիֆլիսից՝ ստանձնելու նրանց հրամանատարությունը։

Դեպքերի այս ընթացքը պարտադրում էր մեզ քաղաքական մի այլ ուղի, բայց մենք մնում էինք կառչած մինչև վերջին շունչը մեր երկիրը պաշտպանելու որոշմանը։ Անմիջապես Երգնկայի հայ բնակչության ընդհանուր զորակոչ հայտարարվեց, մինչև 70 տարեկանը։ Շինարար աշխատանքի լծված և հազիվ իրենց կործանված տները վերականգնած շրջանի գյուղերի վերապրող հայ բնակչությունն այժմ թափվել էր Առաջնորդարանի հրապարակը՝ նորից զինքի դիմելու համար։ Այդ օրը Տրապիդոնի ճակատում գտնվող ոռւսահայ զինվորներից 200 հոգի հասան Երգնկա, Կարծես մի ամբողջ բանակ էր եկել, խանդավառությունը շատ մեծ էր։ Ենթադրվում էր, որ նոր, ավելի մեծ խմբեր պիտի հասնեն։ Զորակոչի ենթակաները ողերությամբ անցան գործի, օրնիբուն կատարում էին զինվորական մարզանքներ։ Այդ գործով զրադվում էին Երգնկայում մնացած նախկին ոռւս բանակի հայ

սպաները, որոնց մեջ էին դարաբաղյի այն երկու երիտասարդ սպաները՝ Տեր-Ակոպովն ու Տեր-Պետրոսովը, որոնց հետ Կարսից էրզրում Համմփորդեցի մի տարի առաջ: Կային և ուրիշներ՝ ենթասպա Դանիելյանը, ովինվորական բժիշկ Արալանյանը, Գաֆյանը և այլն: Մեզ հետ մնացել էին նաև մի քանի ուսու սպաներ, որոնց մեջ իր եռանդով և անձնագործությամբ աշքի էր ընկնում Մուրագովը:

Երզնկայում հաստատվել էր հայկական կառավարության պես մի քան, որի պետն էր Մուրագը: Նա քաղաքապետ էր նշանակել թուրք Յուսուֆ Էֆենդիին, կարգադրել էր, որ բացվեն մզկիթները, և թուրքերը ազատորեն կատարեն իրենց կրոնական պաշտամունքը. Թոշակ էր սահմանել խոշաներին, մյուսզիններին, յուղեմաններին: Նա ջանք շխնայեց սիրաշահելու տեղական թուրքերին, բարեկամություն հաստատելու Դերսիմի քրդերի հետ, բայց այդ ջանքերը չէին կարող արդյունք տալ, որովհետև ճակատը պաշտպանելու համար ուժ չկար: 1918 թ. սկզբներին 300 գումարտակներից բաղկացած կովկասյան ուսու բանակից ճակատներում մնացել էին երերուն խմբակներ: Սրա դիմաց թուրքական ուժերը, անհրաժեշտ հրետանիով և պատերազմական սարք ու կարգով, կազմում էին 142 գումարտակ հետևակ և 41 գումարտակ հեծելազոր, մոտ 150 000 կովող: Այս հսկա զանգվածի գեմ հայկական ուժերը կազմում էին ընդամենը վեց գումարտակ: Դրանցից երզնկայի ճակատամ կար ընդամենը 1200 սվին, որից 200-ը հատկացված էր կապի և հաղորդակցության պաշտպանությանը: Սրա հետ միասին, երզնկայի գորախումբը խսպառ մեկուսացված էր, զատկած էրզրումի բերդից 150 կմ տարածությամբ:

Մարդ չկար, որ չհասկանար մեր կացության այս դժվարությունը, բայց բոլորս էլ գոտեանդված էինք այն հույսերով, որ շուտով օգնական խմբեր պիտի հասնեն: Օր չէր անցնում, որ այս առթիվ Մուրագը դիմումներ շաներ հեռախոսով էրզրում, զնդապետ թորգումին, որ այդ գործի վարիչն էր այնտեղ: Բայց դիմումներն ապարդյուն էին անցնում:

Մի օր կարինցի Սահակը վաղեվազ հասավ մեզ. Մուրագին էր փնտրում, որ բժիշկ Ա. Պողոսյանի մոտ էր: Լուր տվինք, բայց մենք էլ թունդ ելանք: Նրա հետ ուզում էր խոսել զնդապետ թորգումը, տարակույս չկար, որ օգնական խմբեր էին գալիս: Խմբվել էինք գրասենյակի գուան մոտ, անհամբեր էինք հասկանալու, թե որքան են օգնական ուժերը, որտեղից են գալիս, երբ տեղ կհասնեն: Վրա հասավ Մուրագը բժիշկ

Պողոսյանի հետ: Վաղուց մթագնած դեմքը ճառագայթում էր, այնքան հուզված էր, որ մեր բարեկելն էլ չնկատեց: Զեռքը պրնելով հեռախոսի փողը՝ գուշեց.

— Այո՛, այո՛, ես եմ, Մուրագը, բարե՛, բարե՛, զնդապետ, ճամփա ելա՞ծ են ... ի՞նչ ... Զհասկացա ... ի՞նչ անկախություն:

Քիչ հետո իմացանք, որ գնդապետ թորգումը հայտնել է, թե վաղը, առավոտյան ժամը 10-ին էրզրումում շուրջով պիտի հայտարարի Հայաստանի անկախությունը և խնդրում է Մուրագին նույն պահին միենույնը կատարել երզնկայում ...

* * *

Մեր այս կացությանը լավ ծանոթ թուրքերն սկսեցին առիթներ ստեղծել զինադադարը խախտելու: Հունվարի կեսերին նրանք շարժաման մեջ դրին իրենց գործակից քրդերին, որոնք սկսեցին հարձակումներ գործել երզնկայի մեր ուժերի թիկունքում: Բայց ամեն տեղ ուժին հակածարված ստացան ու զոհեր տալով քաշվեցին:

Զգալով, որ եթե քրդական շարժումը մեր թիկունքում ծավալվի, անել կացության պիտի մատնվինք, Մուրագը ջանք շխնայեց հասկացողության գալու քուրդ աշխրեթապետերի հետ: Ամիրխանյանը և շրմշկածագցին ճամփվեցին նրանց մոտ բանագնացի հանգամանքով ու մի օր նրանց առաջնորդությամբ, Մուրագի ճամփած կառքի մեջ բազմած, քսանի շափ զինված քրդերով շրջապատված, երզնկայում հայտնը վեցին Դերսիմի Հասան և Սուլեյման աղաները:

Նրանց ընծայվեցին իշխանավայել պատիվներ, որքան այդ կարելի էր մեր պայմաններում: Հյուրասիրություններից հետո տեղի ունեցան բարենպաստ բանակցություններ: Հաջորդ օրը քուրդ պիտերը, մեկական ձի և մեկական ժամացուցյ նվեր ստանալով, գոհ սրտով մեկնեցին: Նմանատիպ հարաբերություններ մշակելու փորձեր եղան և Դերջանի քրդերից փրդանցի Մեմիշ աղայի մարդկանց հետ: Քաղաքում որևէ անպատեհության տեղի չտալու համար միջոցներ ձեռք առնվեժին, թուրքական թաղերում զիշեր-ցերեկ շրջուն պահակներ հաստավեցին, և թուրք կանանց, աղջիկների անցուդարձը փողոցում արգելվեց:

Բայց այս ջանքերն ու զգուշական միջոցառումներն արդյունք չունեցան. մեր ուժը պահանջված ազդեցությունը չէր գործում քրդերի վրա, և նրանց հարձակումները կանգ շառան: Զինադադարը խախտե-

լու հետամուռ՝ թուրքական հրամանատարությունն սկսեց օգտագործել իրեն իսկ սաղբանքներով սկսած հայ-քրդական ընդհարումները, որոնց ընթացքում զոհեր ունեցանք թե՛ մենք, թե՛ քրդերը: Օր չէր անցնում, որ էրդրումում մնացած ուսւառ ուժերի հրամանատար զորավար Օգիշիլիձեն մեզ շուղջեր թուրքերի կողմից ստացած որևէ մեղադրանք. իբր թե մենք հունվարի 12-ին հրդեհել ենք Երզնկայից 18 կմ դեպի հարավ-արևելք ընկած թուրքական Զեկկիզ գյուղը. իբր թե, բռնաբարել ենք Արտասից դեպի հարավ-արևելք Քեսկ թրքական գյուղի կանաց և կոտորել տղամարդկանց. իբր թե Երզնկայի ուսւառ զորամասի հեռանալուց հետո շրջանում կատարվել են մասնակի սպանություններ:

Սպա այս անհեթեթ մեղադրանքներն սկսեցին ստանալ մտածված հերուրանքների բնույթ. իբր թե Երզնկայի թուրքերից «շատերի» թեփերը հապած քշել են զինվորական հանրակացարանները և այնտեղ քոլորին սրի քաշել. իբր թե հունվարի 28-ին «բազմաթիվ թուրքերի ող-ող այրել են Եկեղյաց հրապարակում». իբր թե Երզնկայի շրջակայքում ամեն տեղ այրել են թուրքական մզկիթները. իբր թե Գյումուշհաններ դեպի հարավ ճամփու վրա կոտորել են անհաշիվ թուրքերի:

Վերջապես, նրանց երեակայությունն այնքան բորբոքվեց, որ սկսեցին բողոքագրերին տալ ծավալուն «Հայկական խժդությունների» բընույթ, որոնց մեջ այժմ նկարագրում էին դեպքեր հայկական զարդերին հարապատ ընդորինակությամբ. իբր թե հայերը Երզնկայում հավաքել են 650 թուրքեր և անհայտ ուղղությամբ տեղահանել. իբր թե վեհիր բեյի տան մեջ լցրել են 500 թուրքեր և տունը չորս կողմից հըրդեհեն. իբր թե նույն ձևով լցրել են երեք խոշոր տներ թուրք կանացավ, երեխաններով ու բոլորին այրել. իբր թե քաղաքում հազարից ավելի տներ են հրդեհել և այլն: Իրողությունն այն էր, որ քրդական հարձակումները զսպելու ժամանակ թուրքերն էլ զոհեր ունեցան, որոնց թիվը 200 չէր անցնում:

Փետրվարի 10-ին ընդհատվեցին թրեստում սկսված ուսւառ-դերմանական բանակցությունները, որոնց արդյունքին սպասում էինք առ ուղղով: Երկու օր հետո վեհիր փաշան խախտեց զինադադարը և «Հայկական շարագործներին» պատժելու պատրվակով անցավ հարձակման: Իրիկվա դեմ Զարդախուի մեր պահակախմբերը ենթարկվեցին հրացանաձգության թուրքական հետախույզների կողմից, և անմիջա-

պես հայտնվեցին 100 հետեակ, 16 ձիավոր թուրք զինվորներ, որոնք ուզում էին անցնել մեր պահակախմբերի թիկունքը՝ Հյուսիս-արևելքից: Ապա զանազան կողմերից հայտնվեցին ուրիշ ուժեր: Թշնամու գերազանց ուժերի հետ սկսվեց մի անհավասար զոտեմարտ: Առաջին իսկ բոպեից պարզ էր, որ մեր դիմադրությունն անհույս էր: Անհրաժեշտ էր միայն ժամանակ շահել՝ փրկելու ժողովուրդը և նահանջի ճանապարհն ապահովելու համար: Յոլորը կովում էին անմահների պես, մանավանդ քննմախցի Միթթարը, Գալուստը, Ճեպեճի Սարգիսը և Հովհաննը:

Բայց ի՞նչ կարելի էր անել հազար մարդու թուրք կանոնավոր բանակի և քրդական հորդաների դեմ: Բարերախտաբար Մուրադը, շնայած մեր անհույս կացությանը, շէր կորցնում իր պաղարյունությունը և, որքան ծանրանում էր մեր վիճակը, այնքան ավելի շրջացայց էր դառնում: Անվերջ վերաբաշխելով մեր սակավաթիվ ուժերը, օգնական զինվորներ զատելով մեղանից՝ կամրջի, Վաղավերի և Քեմախի ճանապարհապահ Խմբերին, որոնց վիճակը ավելի քան ծանր էր, նա հաջողեց կասեցնել առաջինադրությունը, որը հաւաշեց սպասելով լուսանալուն:

Առավոտյան Քեմախի խճուղու մեր պահակախումբը ենթարկվեց 200 հետեակ և 25 ձիավոր թուրք զինվորների հարձակման: Կասեցնելով թուրքերի շարժումը՝ պահակախումբը քաշվեց դեպի Երզնկայի հարավարևմտյան ծայրամասը: Ժամը 7-ին 700 հոգուց բաղկացած թուրքական մի զորամաս Քեմախի խճուղիով շարժվեց դեպի Երզնկա: Քաղաքից 10—12 կիլոմետրի վրա այդ զորամասն ուղղվեց դեպի Խաշիսաշի և Վասկերտ գյուղերը, որոնք գտնվում են Երզնկայի արևմտյան ծայրամասից նույնքան հեռու: Այնուհետև թուրք զորքերի շարժման հետախուզությունը դժվարացավ սաստիկ ծյան պատճառով: Կեսօրից հետո, ժամը 2-ին, շորո-հինգ կիլոմետր հեռավորության վրա նկատվեց քաղաքի արևմտյան և հարավային ծայրամասերից վրա հարձակվող թուրքական շղթան: Միաժամանակ լուր հասավ, որ Փլյումերի դժով դեպի Մամախաթուն է շարժվում թուրքական 6000-անոց մի զորամաս: Լուրը կայծակի արագությամբ տարածվեց՝ ստեղծելով աննկարագրելի խուճապ, ժողովուրդն ահարեկվեց. նվազում էր նահանջի ճանապարհությունը, Մուրադը Ճեպեճուն կարգադրեց քսան ձիավորներով առաջ շարժվել և ճանապարհի պահակներից ստուգել այդ լուրը: Բայց

նույն պահին լուր հասավ, որ Զարդախուի 70 պահակները պաշարված են և խնդրում են օգնություն ...

Օգնության ոչ մի հնարավորություն չկար. կացությունն ավելի քան հուսահատական էր: Սարսափի մատնված ժողովուրդը խելակորույս վազվառմ էր դեռ ու դեն: Այդ իրարանցման մեջ քաղաք մտան Զարդախուի պահակները, որոնց հաջողվել էր բնաշնչումից ճողովրել: Նրանք անմիջապես ճամփվեցին գերեզմանոցը, որտեղ տաք կոփէ էր մղվում:

Հանկարծ շրջապատը դուրդաց. մերոնք օդ հանեցին Եփրատի վրա ձղված կամուրջը՝ քրդերի հոսանքը կասեցնելու մտքով: Խումապը սաստկացավ. ժողովուրդը հեիհե վազում էր դեպի զորանոցները: Թանձր փաթիլներով ձևուում էր: Շատ ցուրտ էր: Աղմուկն ու վայնասունը խլացնում էին ականջները: Կին, երեխա, ծեր, պառավ, տիեզերական մի պատուհասից մղված, Աստված, Աստված աղաղակելով, շնչահատ վազում էին զորանոցների ուղղությամբ: Ու հանկարծ կարծես գետինը պատովեց, և ահավոր դղրդյունը վայրկենապես խլացրեց ամեն բան: Մեր օրհասական պայքարը զարմանալի հմտությամբ էր ղեկավարում Մուրադը: Քաղաքի գլխավոր ուազմամթերանոցը օդ ելավ: Թշնամին մի պահ շշմեց՝ ժամանակ տալով մեզ համախմբելու իր դեմ մեր ցրված ուժերը: Բայց հանկարծ նա թափով վերսկսեց հարձակումը. գնդակները կարկուտի պես թափում էին քաղաքում: Մարդիկ, հնամաշ վերարկուներով, վերմակներով, սփոցներով պարուրված, ընկնում, կանգնում ու խելագարի պես վազում էին. կանայք, երեխաները շալակած, լաց ու կոծով հետևում էին նրանց:

Մեկ ժամ շանցած նահանջի քարավանը շարժվեց: Վեց հազար մարդ՝ հաշվելով նաև զինվորներին: Թուրքերը կրնկակոխ մտնում էին քաղաք, ուր մնացել էին ծանր վիրավորներ և մի քանի պառավ կանայք, որոնք նախամեծար համարեցին մեռնել իրենց ծննդավայրում ...

* * *

Նահանջն առաջնորդում էր գնդապետ Մորելը: Մուրադն իր ձիավորներով պաշտպանում էր թիկունքը: Թնդանոթներն ու զնդաշիրները բաշխված էին առաջապահների և հետևապահների միջև: Առջևում էին անիվալոր մթերասայլերը: Մնացած հայ, ուսւ զինվորները շարժվում էին գաղթականների հետ: Տեսարանը զարհուրելի էր: Ցնցոտիների մեջ պարուրված կանայք, երեխաներ, լալագին, սարսափահար, ձյուների

մեջ ընկնելով-ելնելով, գնում էին: Փոքրիկները, մեծերի նման, հասկանում էին ամեն բան. նրանք պահանջ ու արտօնությունների, ցրտից կարկամած, լուրջ ու ինքնամփոփ գնում էին կամ հորթուկների պես հարազատների համեմ վազում, ոմանք ցրտից ձեռքերը պահել էին կրծքին, մեջքին խաշած կապած լաթերի տակ ու շարժուն խաղաղիների տեսք առել: Դրանցից միշտ մեկն ու մեկին կարելի էր տեսնել Ճեպեճու ձիու վրա: Նա շփում էր սառածների քիթն ու բերանը, ձեռքն ու ոտքը և խրախուսելով վար գնում:

Հաղիվ երկու ժամվա ճանապարհ էինք անցել, երբ Բթառին գյուղի լեռներից քրդերը կրակ բացին մեր վրա: Մեր կողմից արագ և ուժեղ գիմադրության հանդիպելով՝ նրանք ցրվեցին: Բայց երբ մոտեցանք խան գյուղի շրջանին, երկու կողմից բուն հրաձգություն սկսվեց, միաժամանակ՝ կրակ սկսեց նաև թիկունքից: Աննկարագրելի խուճապ առաջացավ. ընկնողին, վազողին, ճշացողին հաշիվ շկար: Կոփը երկար տևեց, մինչև մութը վրա հասավ: Զյունը դադարել էր. պարզ ու վճիռ, զիշեր էր, քարը ճափեցնելու աստիճան ցուրտ, օդը պաղպաղակի նման մարդու բերանում հալվում էր, լեռներից փշում էր հյուսիսային ցրտաշունչ քամի: Որքան էլ մարդիկ զարդված էին, բայց մի բոպե անգամ կանգ չէին առնում՝ զերծ մնալու համար սառչելու անխուսափելի վտանգից:

Կես զիշերն անց կովի բռնվեցինք նորկախ և իրադուխ գյուղերի հարակից բարձունքներից հարձակվող քրդերի հետ: Գաղթող ժողովրդի երթը մատնում էր մեզ, այնինչ քրդերը նախապես անմատչելի գիրքեր էին բռնել: Այդ պայմաններում տեսական կովի բռնվել՝ հնարավոր շեր. ժողովուրդը ցրտից կմահանար: Առաջ շարժվելը վտանգավոր էր՝ առանց իմանալու, թե մեզ զիմացում ինչ է սպասում: Մնում էր մի ելք՝ կովելով անցնել, անտեսելով զոհերը, և հետախույզներ ճամփել առաջ: Գիշերային այդ թոհ ու բոհում Մուրադը գուշեց.

— Տղե՛րք, ձեր մեջ ո՞վ կա, որ ուզում է այս ժողովրդի կյանքը փրկել:

— Ես,— ձայն տվեց շմշկածաղցին, որը լավ ծանոթ էր այդ շըրշանին: Նրան ընկերացան կարինցի Մահակը և քաջարի հիսնապետ Մուրադը՝ հազվագյուտ ոսւ զինվորականներից մեկը, որ իր բախտն անդարձ կապել էր մեզ հետ: Նրանք, ձորի փեշերը քերելով, անհետացան կիսախավարի մեջ: Հրացանածգությունը դեռ շարունակվում էր, բայց չէինք կարող երկարել: Փորձեցինք առաջ շարժվել, սակայն քըր-

դերը սաստկացրին կրակը: Պարզ էր, որ նրանք ուզում էին մեզ այդտեղ պահել, մինչև լուսը բացվեր: Մուրազը դիմեց գնդացիրների օգնությանը. դրանց անընդհատ ճարճատյունների տակ ժողովուրդն առաջ մղվեց: Սանր կոփվ էր, բայց թեթև անցանք. ընդամենը հինգ սպանված ունեցանք և մի քանի վիրավոր: Ծտկի, դիմացի բարձունքներից դեռ մեղ էր հասնում հրացանների որոտը, բայց վտանգն արդեն անցել էր: Կիրճերի մեջ սեղմված ծփրաւը շշկովել էր ու սառուցների տակ թաքնվել. տեղ-տեղ սառուցն անզոր էր գետը հաղթահարելու, և երբեմն մեղ հասնում էր շրերի միօրինակ գլուխը: Առջևից երբեմն հասնում էին ճիշ ու աղաղակներ, բայց դրանք սովորական էին այլն. մեկն ու մեկը սառել կամ մեռել էր: Հանկարծ մեր առջև ցցվեց Սահակը. շմշկածազցին և հինապետ Մոռուզովը սպանվել էին:

— Այ քեզ խաբար, ծո ինչպես սպանվեցին,— շշմած գոշեց ձեպեմին:

— Սպանվելը քանի՞ տեսակ կլինի:

— Վա՛յ, տունդ շքանդիլի ...

Ճհպեմին լաց եղավ:

Ընկերացա Սահակի հետ դեպի ետ, Մուրադի մոտ: Նա լսեց Սահակի կարծ պատմությունը՝ աշքերը խուփ, կարծես քնած էր, միայն զեմքի թեթև կծկումներից կարելի էր հասկանալ, որ լսում է:

Ազգամուղին մեր դիմաց հայտնվեց սպանված Վահրամի արաբական նժույգը, որ շփոթ վազքով մոռենում էր մեզ: Յուրաքանչյուր սաստեկացել էր, լուսաստղը հայտնվեց և սկսեց բարձրանալ: Արևելքը քիշքիշ շառագունում էր. հեռուն հորիզոնից կախված երկար ամպերը շարք-շարք բոցավավուրմ էին: Լուսացավ: Վարը, ճանապարհին ընկած էր մի դիակ: Մոռւզովը և ձին շկացին: Զմշկածազցին երկարել էր ձյան մեջ, մեջքի վրա, ձեռքերից մեկը հորիզոնածեւ զվիտց վերև նետած: Կարծես քնած է: Ո՞վ էր, որ շէր պաշտում նրան ...

Հասանք Զելիկ: Յոտից սառած մանուկների, անգամ մեծերի լայն ու կոճը իրարանցում էր ստեղծել: Նրանց մեջ էր փոքրիկների խնամակալ Ճեպեմին, որին փաղաքշելով, որին բարկանալ ձեւցնելով մեղմում էր ժխորը:

— Ծո՛, շե՞ս ամշնար, կուլաս կոր, հեր հալտա մերդ քեղի մեծուցեր է գաթայով:

— Ծո՛, ի՞նչ կըլլաս կոր, ինծի նայե՛ ... Սա՞նկ, հա՛, տեսար, որ լալեն խեր շկա. հայտե նայիմ, աֆերի՛մ:

— Ծո՛, ձայնդ, է՛ ...

Ասում էր նա մեկին կամ մյուսին, և մանուկները լսում էին նրան: Հոգնած ու ջարդված ժողովրդի միակ ցանկությունը մի օր Զելիկում մնալն էր, շունչ առնելը: Բայց իրենց իսկ փրկության համար ժամն անգամ արժեք ուներ, այժմ անհրաժեշտ էր արագ շարժվել, կիրճերի շրջանից շուտ անցնել:

Երկու ժամ հետո մեկնեցինք դեպի Զորս: Ճանապարհի կեսին Դերջանի լեռների կատարներից որոտացին հրացանները: Ժողովրդի մեջ նոր խումապ ծայր առավ, որը սաստկացավ, երբ Սանսարի վտանգավոր կիրճում Դերսիմի բարձունքներից սկսվեցին քրդերի համազարկերը: Ժայռերի տակ պահված՝ անընդհատ կրակում էին: Նրանք մեղ լավ էին տեսնում և անվրեպ նշանառությամբ գետին փոռում մեզանից մեկին կամ մյուսին: Մեր գլխավոր դժվարությունը ժողովուրդն էր. աղեխարշ ձայներ, ձիշեր, ամեն կողմից օգնության կանչեր: Կովկա ամենատաք պահին, երբ ձյունապատ լեռան լանջն ի վեր մազցելով աշխատում էինք տեղահանել քրդերին, ճրշտ նրանց դեմ ու դեմ, Դերջանի լեռնաշղթան բռնեցին հիսունից ավել քրդեր, ու երկու կողմից սկսեցին կարկուտի պես տեղալ գնդակները: Իսպառ բնաջնջվելու մի պահ էր. սահեցինք վար: Այժմ հուսահատությունը պատեց բոլորին: Լացն ու աղաղակները բռնել էին կիրճը: Իրարանցման մեջ Մուրադը ելք գտավ: Քրդերին սանձահարելու միակ զենքը թնդանոթն էր. երկու հատ արագությամբ շարժվեցին և ուղղվեցին քրդերի դիրքերին: Այժմ բոլորի փրկությունը կախված էր երկու ոսւսահայ երիտասարդների՝ Տեր-Ակոպովի և Տեր-Փետրոսովի շանքերից: Կարծես ոչ թե թնդանոթները, այլ կիրճն էր գոռզուռում: Առաջին իսկ հարվածները խումապի մատնեցին քրդերին, ապա շարդիկեցին, չախշախվեցին նրանց անմատնելի դիրքերը և կես ժամ շանցած դատապարտվեցին լուսիան:

Շարժվեցինք՝ կիրճում թողնելով 25 սպանված կովողներ և 38 սպանված կամ վիրավոր ձիեր: Մեզ հետ առանք 60 հոգի ծանր ու թեթև վիրավորներ:

Գիշերը հասանք Զորս, որտեղ կային ոսւսների կառուցած փայտաշեն զորանոցներ: Պահակատեղին պահպանում էին հարյուր հայդինքորներ: Ժողովուրդը թափվեց զորանոցները: Վայնասունը կրկնապատկեց: Ավելի կամ պակաս շափերով այդ դիշեր ճանապարհին սառել էին 50 զինվոր և 200 գաղթական:

Աղջամուղջին շարժվեցինք դեպի Վժան: Վիրավորների, սառածների և ձիերի մի մասի կորստի պատճառով հարկադրված էինք Զորսում թողնելու, անգործածելի վիճակում, երեք դաշտային ու մի լեռնային թնդանոթ և մթերաբեռների կեսը:

Լուսանում էր. երկինքը գորշ էր, քամի կար: Բրնձի պես կարծր ձյունը ծեծում էր մեզ: Կարծես բնությունն ու մարդիկ դաշն էին կոել մեզ ոչնչացնելու համար: Հետևից քշում էինք հոգնատանց ժողովը գիրքին Շահ-Աբասի ձիավորների պես անխնա. փրկության ուրիշ միջոց շկար այլևս. ամեն մարդ ինքն էր իր հակատագրի տերը. ով ուզում է փրկվել, թող քայլի ...

Լուս էր արգեն, երբ պարզվեց, որ Զորս-Վժան խճուղու շուրջ 40 մերկարություն ունեցող կամուրջն այրված է: Տարակույս շկար, որ հետապնդող թշնամին որոշել էր մեզ այստեղ վերջնականապես ջախչախել: Եվ իրոք, դեռ ձորի խորքերին շհասած՝ որոտացին հրացանները: Ժողովուրդը վաղում էր սարի տակ ներս ընկած խոռոշների ուղղությամբ: Մուրադը խելագարի պես դառնում էր վեր, վար՝ հրահանգներ. տալով: Քրդերը կրակում էին դիմացի լեռան նպաստավոր դիրքերից. վարից դեպի լեռ ճարճատում էին մեր գնդացիրները:

Ու սկսվեց մի կատաղի, օրհասական կոփի: Ինձ համակել էր ջերմից բռնվածի պես մի դող, ատամների կափկափոց, որ առնչություն շուներ վախի հետ: Երբ պարզվեց մեր տասնյակի անհիքը, դողս լքացավ, զարմանալի անդորրություն եկավ վրաս, գիտակցությունս սկսեց գործել հստակ և արագ:

Լեռների փեշերին խումբ-խումբ ձիավոր և հետիւտն քրդեր, ետու առաջ շարժվելով, դրավում էին հարմար դիրքեր. ուրիշները, անընդհատ կրակելով, աշխատում էին մոտենալ կիրճին նայող բլրակին, որ կոնաձև բարձրանում էր մեր դիմաց:

— Ամեն գնով այդ բլրակը գրավե՞մ— գոշեց Մուրադը ձեպեճուն:

Սողում, ընկնում, վագում, ցատկում, մարդցում էինք և ետ սառչում, բայց և այնպես առաջանում էինք՝ տասը համազարկին մի պատասխան տալով:

Մեր զլիսի վրայով ճարճատում էին գնդացիրները: Բլուրն ի վեր մեր հոտեից շարժվում էին ուրիշները:

— Հա՛, տղերք ջա՞ն, հա՛ զուրպաշն, — վարից հասնում էին Մուրադի սրտակոտոր աղաղակները:

Վերևում վար ընկնողների, քրդերի գնդակներից մահացողներին հաշիվ շկար: Այստեղ էր, որ մարդիկ ենթակա էին ճակատագրի քմահանությունն. այդ պահին մարդ կարող էր և ապրել, և մեռնել՝ նաշած, թե ինչպես կտնօրինի բախտը:

— Հյո՞ւշ, — սուլեց մեկը և երեսի վրա գետին փուլեց ճիշտ կողքիս:

— Հա՛յ, հո՞ւյ, տղե՞րք ... Վարդանն էր, որ մի ժանր գնդացիր մեջքին կապած՝ շորեթաթ մարդցում էր դեպի մեզ: Որոտացին հրացանները: Վարդանը պառկեց մեջքով դեպի գնդակները, ու հանկարծ վարից դղրդաց թնդանոթը.

— Հա՛յ, հա՛յ ... բախտը խնայել էր Վարդանին. ձյուների մեջ թափալգլոր մարդցելով՝ գալիս էր:

Ըլես անընդհատ որոտում էին թնդանոթները: Ճեպեճին, Հովնանը և Սահակը իրենց նետեցին բլրի գագաթը եղերող գործը, մենք՝ նըրանց ետևից: Գնդակների տարափ իջավ այդտեղ. շարժվելու հնար շկար. մնում էր դիրք բռնել ու կովել, բայց հարմար դիրք չէր ճարշում:

— Դեպի ձա՞խ, դեպի ձա՞խ,— վարից հասնում էին Մուրադի գոշերը:

Բութը կատաղորեն մռնցում էր, թնդանոթները որոտում էին, հրացանների, գնդացիրների ճարճատյունից շրջապատը դղրդում էր: Թուրքքրդական հրոսակներն ամեն տեղ ամրացած՝ շարունակում էին կրակ թափել մեր զլիսին: Շարժվելու պես մեկը չորքը, կծիկ եղավ և անազմուկ զլորվեց վար: Ճեպեճին, Հովնանը սողում էին, մենք՝ նրանց ետևից:

— Դեպի ձա՞խ, դեպի վե՞ր,— վարից անընդհատ գոտում էր Մուրադը:

Հանկարծ ճեպեճին վեր ցատկեց ու ձախ կողմից մի ոստյունով անցավ բլրի թիկունքը: Ապա Հովնանը Սահակի հետ հաջողեց բռնել բլրի վեր ցցված՝ ապառաժու գագաթը: Քրդերը կատաղի հրաձգության տակ առան գագաթը, բայց տղաներին այդ դիրքից դորս մղել շկարողացան: Այդ մեծ հաջողություն էր. ներքենում գտնվողներին առաջացումը բավականին դլուրացավ: Բոպես առ բառե բլրի թիկունքում հայտնվում էին նոր ուժեր: Կանոնավոր համազարկերն հաջորդում էին միջանց: Քրդերն անընդհատ կրակում էին՝ դիրքից դիրք անցնելով և ընդարձակ մահակի պես բացվելով: Թոհ ու բոհում անկարելի էր հասկանալ, թե ինչ է կատարվում: Բայց ակներև էր, որ տեղանքին լավ

շանկարծ մահակի մահականին աղաղակները:

ժանոթ քրդերը սեղմում են օդակը՝ աշխատելով անցնել մեր թիկունքը։ Հանկարծ նրանք հանդուգն կիսաշրջանաձև շարժումով բացվեցին դեպի մեզ, միաժամանակ նրանց թիկունքում հայտնվեց բազմություն, կովող նոր ուժեր։ Ի՞նչ էր կատարվում ներքեւ և այլ դիրքերում՝ շփտեինք։ Այս շեխնք լսում Մուրագի ձայնը, դրդունն ու աղմուկը խլացրել էին ամեն բան։ Ստեղծվեց հուսահատական վիճակ։

— Կրա՛կ բացվող շղթայի ծայրին, — գոռաց ձեպեմին։

Առաջին իսկ համազարկերի տակ քրդերը տապ կացան ու ծլկվեցին. կարծես մտան դետնի տակ։ Ամեն ակնթարթ սպասում էինք նոր հարձակման, երբ հանկարծ լսեցինք։

— Հե՞յ, Հե՞յ, — Վարդանն էր, գոմեշի պես ընկել էր ձյուներին, քիչ ներքեւ, և չէր կարողանում շարժվել։ Վրա հասանք. փուփսի պես փշում էր ուժասպառ։ Վեր հանեցինք ու գնդացիրը վայրկենապես սարքեցինք։ Հանկարծ քրդերը դուրս թռան դիրքերից ու հարայ-հրոցով գոռնեցին դեպի մեզ։

— Տը՛ր-ատա՛-տա՛-տա՛-տա՛ ... դղրդաց գնդացիրը՝ հնձելով առաջին շարքերը։ Քրդերը խուճապահար նահանջեցին՝ մտնելով ապառաժների տակ։ Հարձակման վայրում մնացին տասից ավելի դիակներ և բազմաթիվ վիրավորներ, որոնք ձյուների մեջ փորսող տալով՝ աշխատում էին իրենց նետել ապառաժների ետևը։ Շատ քշերին հաջողվեց այդ։ Միաժամանակ պարզվեց մի ահավոր տեսարան. հազարից ավելի ծիավոր, հետևակ քրդեր ընդարձակ տարածության վրա տեղահան եղան մահիկածե առաջացած շղթայի թիկունքում, որտեղ պատսպարվել էին նահանջող ժողովրդի բնաջնջման և թալանի հույսով։ Վերև հանված մի գնդացիրն այժմ խուճապի մատնեց նրանց։

Անխնա ծեծում էինք լեռան առաջամասը, կենտրոնը, ամենահեռավոր թիկունքը։ Խուճապահարները զոհեր էին տալիս. պակասը լրրացնում էին լավ նշանառուները. ձի, մարդ չոքում, զլորվում, վերցատկում, դիվահարի պես փախչում էին։ Այսուհեղ այս կացության տերը մենք էինք, բայց ներքեսում դեռ շարունակվում էր օրհասական կոփը. ավելի հաճախ էին որոտում թնդանոթները, ավելի բուռն էր հրացանաձողությունը։

Նոր էր պարզվում ինձ, թե ի՞նչ մեծ նշանակություն ուներ մեր գրաված բլուրը։ Միայն այդ բլրի ստորատներից կարելի էր անցնել կիրճի ծանծաղ ու սառած ջուրը՝ շրջանցելով հրդեհված կամուրջը։

Արդեն սկսվել էր ժողովրդի փոխադրությունը դեպի մյուս ափը, բայց ծանր խնդիր էր նրանց բլրի թիկունքը հասցնելը. հեռավոր, անտեսանելի դիրքերում ամրացած քրդերն անվերջ շարունակում էին տեղալ գնդակներ։ Թնդանոթն ու գնդացիրն անվար էին նրանց դեմ, և անցնող ժողովրդի տասից մեկի մահը անխուսափելի էր։ Ժողովրդի անցումը պաշտպանում էին լավ հրացանաձիգներ՝ Մուրագի անմիջական դեկավարկավարությամբ։ Ներքեսում ամեն տեղ գլակներ էին ընկած։ Շատ գժվար էր կանանց, երեխաների, սառածների, վիրավորների փոխադրությունը, որոնց անցկացնում էինք ծանծաղ ջրով՝ շալակած, ձեռքերի վրա կամ ողջ մնացած սակավաթիվ ծիերով։ Մանր վիրավորները սողում էին ձյուների մեջ, առասպելական օձերի պահում էր նրանց դեպի անցքի շրջանը, բայց ո՞ր մեկին հասներ։

Առաջնույան ժամը 9-ին փոխադրությունը վերջացավ, ավելի ճիշտ հարկադրված եղանք ընդհատել, որովհետև նահանջը պաշտպանող կամավորների ստվարագույն մասը ոչնչացավ։ Բայց այդ ժամանակ վիրավորներն ու սառածները, բացի 30 գաղթականներից, արդեն փոխադրված էին։ Վերջիններից զատ մյուս ափում մնացին ութ վիրավոր կամավորներ։ Մեր զոհերի ընդհանուր թիվն էր (կովզ ժողովուրդն էլ միասին), մոտ 500 հոգի, ուստի զինվորներից սառել էին 200 հոգի, գաղթականներից՝ 300 մարդ։ Մյուս ափում մնացին մեր բոլոր մթերասալերը, թնդանոթներն ու գնդացիրները ...

Կիրճն անցել էինք, հրացգությունը դադարել էր։ Մեզ հետապնդողները երեխ զբաղված էին վիրավորների և դիակների կողոպուտով և առատ ավարը բաշխելով։ Բուքը փոխել էր իր ընթացքը, այժմ այն ցատկուելով փշում էր թիկունքից՝ քշելով մեզ գեպի վար։ Ճանապարհը ձյունածածկ, քարքարոտ էր, բուքը թույլ չէր տալիս ճանապարհը տարբերել. ընկնողների, ձեռք ու ոտք շարդարների հաշիվը շկար։ Խիստ դժվար էր վիրավորների, սառածների խնդիրը. շատերը տեսնելով, որ սպատճառ են դարձել քարավանի դանդաղարժության, խնդրում էին վերջ տալ իրենց կյանքին։ Մորելի կողմից Վժան ճամփած ծիավորները հասան մեզ միայն կես ճանապարհին, ընդամենը հինգ սալլով։ Բայց դա մեծ թեթևություն էր ավելի արագ շարժվելու համար։ Քարավանը կարծես քարացել էր. զնում էր անձայն, անազմուկ։ Ո՞վ կորուստ ուներ, ո՞վ էր սառում՝ հայտնի շեր։ Գերագույն մի թափ էին արտահայտում հրաշքով մահից փրկվածները, մի օրհասական ճիգ, որ մար-

ողում մեքենա է դարձնում: Բայց Եթե մենք ճողովրել էինք մարդ-գաղանների հալածանքներից, բնությունը գեռ հաշիվ ուներ մեզ հետ: Հաղիվ իշանք հարթությունները, բուքը կատաղորեն մոնշաց: Դերսիմի փոթորիկն էր, որ հետապնդում էր մեզ: Քիչ հետո այն սկսեց սահել երեսնիվար, շոշափել ձյան կույտերը, մտնել ձյունածածկ փոսերի մեջ, մազլցել բլուրներն ու ծովորեն դիմի վրա դառնալով՝ ձյան ավագներ նետել մեզ: Հանկարծ ամեն բան իրար անցավ. կարծես տիեզերական երկրաշարժ պիտի լիներ, ու հողը պիտի ճեղքվեր՝ մեզ ներս առնելու համար: Հորիզոնից դեպի մեզ էին արշավում ճերմակ ամպերը՝ սեղմելով տարածությունները, ստեղծելով արհեստական մթնշաղ: Զյունավաղները, բզկալած լաթերի պես, դառնում էին մեր շուրջը: Տեսիլքների պես դեգերում՝ նրանք փովում էին երեսի վրա մոխրացող տարածություններում, վեր ցատկում, իրար վրա հեծնում, այծեցի պես ճակատ-ճակատի զարնում. ապա հանկարծ խմբվում էին, անիվի պես դառնում, երկարում դեպի վեր և ամպերը ճեղքելով՝ շքանում ...

Այսուամենայնիվ, երեկոյան ժամը 9-ին տեղ հասանք: Ժողովուրդը թափեց փայտաշեն նորակառուց հանրակացարանները: Ինչ կարելի էր՝ ջարդվեց ու վառվեց գեռ իրենց տեղերը մնացած թիթեղյա վառարաններում: Տեղական պահակներից իմացանք, որ ֆամի և Վարդակչու մեր պահակախմբերը շրջապատվել էին թուրքերի կողմից և բնաջնջվել: Այդ հանրակացարանում մերոնցից ոմանք մաքրում էին հրացանները, ոմանք էլ տեղ բռնելով թախտին՝ երկարում: Քուն չկար, թեև մահվան չափ ջարդված էի. կարծես տրորվել էի-սալի տակ: Մոտս երկարած անխոռվ խոմփում էր Ճեպեճին: Ուշի-ուշով լսում էի գիշերային իրարանցումը. բուքը գեռ մոնշում էր. կարծես սառնամանիքի բոլոր թղուկները խմբվել էին վժանում ու մատները բերաններում սուլում: Էին, հա՛ սուլում: Փոթորիկն անփոփոխ սաստկությամբ շառաչում էր: Նա ճանկուտում էր տախտակե պատերը, ծեծում դռները, պատռահանները: Ու կարծես մեկը հեծեծում էր, լաց լինում, իսկ մյուսը՝ հոհում: Շենքի պատերին կարծես բահերով խճաքարեր էին շպրտում: Երբեմն բութ թնդյուն էր լսվում, կարծես տանիքը պետք է պոկվեր, դերանները վար թափվեին: Հանկարծ դղրդագին վար թափվեց տախտակով դամված պատռհանը: Ճեպեճին վեր թռավ. հայացքը պտտեց շորս կողմը՝ վտանգ կանխազգող կենդանու պես անհանդիս:

— Հիսո՞ւս Քրիստոս ...

Երեսը խաշակնքեց և երկարեց մյուս կողքին: Բուքը կոկորդ պատռելով՝ աղաղակում էր դռան տակ, ապա հետ քաշվելով՝ հառաշում ու հազարավոր անօթի գալլերի պես հեռուներում ոռնում ...

Առավոտյան բռնեցինք թախչե-երգում ուղղությունը: Հետապնդում չկար: Պարզ օր էր, արևը կայծկլտում էր ձյունապատ տարածություններում, որոնք քմծիծաղում էին երեկվա բուքի ու անցաւդարձի վրա: Մարդիկ, գլխի ընկած, նոր էին ողբում կորուստները: Կեսօրն անց հասանք Քարճիլ: Երգումից ստացած հրահանգի համաձայն, բոլոր պահակախմբերը պետք է կենտրոնանային Մամախաթունում, ուր հասանք նաև մենք փետրվարի 17-ի երեկոյան: Այստեղ ամեն կարգի մթերանոցներ կային, վերմակների, հագուստեղենի ամբարներ և անհաշիվ ուղմանյութի հսկայական պահեստներ: Ժողովուրդն այստեղ կազդուրվեց:

Գնդապետ Մորելը աշխատում էր կապիտան Կաֆյանի ու հոգով գեռ ուժիղ հայ սպանների օգնությամբ կազմել ու մեծ, բայց վստահելի մի զորաբաժին՝ Մամախաթունը պաշտպանելու համար: Բայց ստեղծված պայմաններում նրա ջանքերը չէին կարող հաջողությամբ պսակվել: Մուսական ճակատի վկուզումից հետո թուրքերը մեր վրա նետել էին իրենց լավագույն ուժերը և, ըստ տեղեկությունների, Վեհիբ փաշայի երկու բանակներից զատ, երգնկա-երգում ուղղությամբ շարժվում էին և այլ ուժեր: Միաժամանակ շարժման մեջ էին դրված ամենաընդարձակ շափերով քրդական հորդաներն ու շեթաները, որոնք այժմ շահագրգոված էին դուրսությամբ ձեռք բերվող պատերազմական ավարով, ուստի անհաշիվ մթերաբեռներով, պահեստներով և ամեն տեղ թափված բազմաթիվ հարստություններով ...

Փետրվարի 19-ի առավոտյան մեկնեցինք: Մամախաթունը այրվում էր: Լեռ, սար ու ձոր գոռում, դղրդում ու տարածուն արձագանքով ոռնում էին. օդն էին հանվում ուղմամթերքի պահեստները:

Կարապելլիդում մեզ միացավ Սեպուհը իր ձիավորներով, կամավորներով և հայ ու հույն տարագիրների մի մասով, որոնք գաղթել էին Բարերդի-Ազունք-Մատեն-Քոպիսան-Բոնակապան գծով: Այս գծով Բարերդից գաղթած տարագրության մեծ մասն արդեն շարժվել էր Իլիճայի ուղղությամբ:

Իրիկուն այստեղ էինք և մենք, իսկ հաջորդ օրը՝ երգում ...

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿՈՐՑՐԻՆՔ

Երզրումը դարձել էր Սրբակավան. Էլ ո՞վ ասես, որ չկար. տրապիզոնցի, վանեցի, բաբերցի, խնուսցի, պոլսեցի, ալաշկերտցի, թիֆլուսցի, մշեցի, թավրիզեցի, զարարաղցի, երևանցի և այլն. Կարծես աշխարհի բոլոր ծայրերում ողջ մնացած հայերը փախել, ապաստանել էին երզրումում. Կային հայկական, ուստական ամեն տեսակի «իշխանություններ», բայց քաղաքը մատնված էր անիշխանության և տիրում էր քառոսային մի վիճակ. ո՞վ էր պետը, ո՞վ ենթական, ի՞նչ էր մտածվում քաղաքի պաշտպանության համար, ի՞նչ էր մեր քաղաքական ուղղեգիծը կամ մեր անկերը՝ հայտնի չէր; Ընդհանուր քայլքայումների և կազմալուծման մեջ կար միայն մի սրտապնդիլ համոզում. Երզրումը «աշխարհահոչակ» բերդ էր. իր ամրությունները, թնդանոթները բավական էին դիմագրավելու ամենահզոր բանակներին ...

Սահակի և Հովհաննի հետ տեղավորվել էինք Սանասարյան վարժարանում, որտեղ խճողված էր տարագիր բազմությունը:

Հազիվ մեկ-երկու ժամ էր անցել, երբ մեզ մոտ հայտնվեց Համո Բարաղամյանը: Նույնն էր, միայն կորցրել էր աշխուժությունը: Բնականաբար, զրկախառնվեցինք իրար երես տհանելու առթիվ: Բայց Համոն շատ զլուխ չունեն հոգեկան զեղումների ու մեկ-երկու հարցումներից հետո զրպանից դուրս քաշեց երկարավուն թղթեր, որպեսզի գրի առնի մեր ասածները հերթական թղթակցության համար: Մեզանից ոչ ոք տրամադիր չէր այդ գործով զբաղվելու. մեզ հետաքրքրում էր երզրումի կացությունը, քաղաքը պաշտպանելու հնարավորությունը, և Համոն ստիպված եղավ հետ զնել թղթերը ու գոհացում տալ հարցումներին:

Երզրումի ամրությունները բավական ուժեղ հրետանի ունեին, 400 բերդային և դաշտային թնդանոթներ: Բայց դրանց մեծ մասը անդոր-

ժածելի վիճակում, լքված ու թաղված էին ձյունի մեջ: Հազիվ մի երկու տասնյակ թնդանոթներ էին պահել ուղղունակությունը: Հրետանին վարում էին 40 սպաներ և 400 զինվորներ, որոնց մարտական կորուստը ընկած էր: Մուսական սպայակույտը երզրումից արդեն տեղափոխվել էր Սարիղամիշ, և բերդի պաշտպանությունն ու «զորքի» հրամանատարությունն անցել էր հայերի ձեռքը: Երզրումի ամբացված շրջանի պետ էր նշանակված Անդրանիկը, որ զեռ գտնվում էր Ալեքսանդրապոլում: Երզրումի, Բաբերդի նահանջից հետո երզրում հասած ուժերի հետ միասին տեղական ուժերը կազմում էին 3100 սպին, 400 ձիավոր և ութինդանսթի: Անդեկ, իրենց բախտին թողնված այդ ուժերը բարոյալըքվում էին, և կարգապահությունն օրեցօր ընկնում էր: Տարագիր զանգվածները խմբվում էին զանազան հաստատությունների գոների մոտ և պահանջներ անում: Գաղթի, նահանջի հետևանքով ստեղծված դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ կազմակերպություն շկար ...

Հաջորդ օրը գնացինք դեպի կոմիսարիատ, ուր հույս ունեինք տեսնել Մուրագին և հասկանալ մեր անելիքը: Մարդ չկար: Դահլիճին հարակից սենյակում մենակ նստած էր մի շքեղ զինվորական: Բուխարայի ընտիր փափախի ճակատին փայլվում էր երկարծիվը, թանձը հոնքերը աղեղնաձև ստվերում էին սև, կայծկլտուն աշքերը, լայն ոռնգերի տակ խրոխտորեն հանգչում էին թավ բեղերը՝ ծայրերով ցրիվ դեպի վեր, կարճ ծնոտը երկարելու նպատակով թողած համաշափ մորուքը մեղմում էր գեմքի ներքեմի մասի բթությունը, ուսագիրներին փայլում էին «Հ. Ա. Զ.» հայերեն ոսկեզօծ գրերը: Մեզ տեսնելով՝ նա մի անհանգիստ շարժումով ետ մղեց աղղոթերի վրա հանգող թուրք ու մաքուր հայերենով գոշեց.

— Ի՞նչ կուզեք:

Զարմանալի արագությամբ ասաց այդ:

— Ովքե՞ր եք, — գոշեց ավելի անհանդիսատ:

— Մուրագի տղաներն ենք, — ասաց Հովհաննը:

Զերք մեկնեց:

— Գնդապետ Թորգոմ:

Հիշեցի հեռախոսային զրույցը Մուրագի հետ, Հայաստանի անկախությունը հողակելու առաջարկը: Այժմ գնդապետին հուզում էր այն հարցը, թե ինչո՞ւ ընդհարումներից առաջ ծրզնկայի ժողովուրդը շտեղափոխվեց և օր առաջ շուղարկվեց երզրում, քանի որ այդ դեպ-

քում պիտի դյուրանար ինքնապաշտպանության գործը, և ժողովուրդն էլ այդպիսի սոսկալի զոհեր չեր տա նահանջի ժամանակ: Սահակը բացատրեց, որ Երզնկան պաշտպանողներից շատերը հարազատներ ունեն ժողովրդի մեջ, և եթե ժողովուրդը օր առաջ տեղահանվեր, այդ դեպք քում քաղաքի պաշտպաններն էլ նրանց հետ պիտի գնային, առավել ևս, որ ժողովուրդն էլ չեր ուղում բռնել էրզրումի ճանապարհը՝ առանց լուրջ պաշտպանության, վախենալով քրդերի հարձակումներից:

Գնդապետ Թորգոմը գլուխը կախեց, ածուխի պես սև, կայծկատուն աշքերը մի պահ դեղերեցին սեղանի վրա բան փնտրելու նման ու ասաց.

— Այո՛, անհրաժեշտ էր գալիքը այն դիմում մտածել, առաջին մեկ օրեն կըսեի, որ Վեհիր փաշայի բանակներին չենք կարող դիմանալու պետք է մեր օրիանթասահոնը (կողմնորոշումը) փոխենք, բայց լսող շեղավ: Հիմա եկել ինձ կմեղադրեն: Լսել եմ, որ Սեպուհի տղաները արժանապատվությունս կիսծեն, սպառնալիքներ կընեն, օգնական ուժեր չեմ ճամբեր եղեր ո՞չ անոնց, ո՞չ ձեզ, — ասաց հուզված՝ «չեմ» բառը երկարելով: Իբր թե նահանջն ալ տեղի է ունեցել այդ իսկ պատճառով: — Հարցեց՝ ավելի ու ավելի հուզվելով: — Ի՞նչ կրնար ընել 50—60 զինվորներու շափ նոր ուժը, երբ թշնամին բանակներ դեմ կշարժե, շհաշված քրդական հարդաները: Տղայություն չէ՝ այդ դատողությունը: Եվ, վերջապես, ի՞նչ կրնար ընել այս վլուզումին մեջ գնդապետ մը, որ թեև նշանակված է ուժերուն բաշխման պետ Ազգային Խորհրդի պես հեղինակավոր իշխանության կողմե, բայց որուն չեն ուզեր ենթարկվիլ, և որուն իշխանության հիմքերը կը փորե ուրիշ մը..

Գնդապետը նայեց մեզ այդ «ուրիշ»-ին վրա ծանրանալու շեշտով, բայց մեզ չեր հետաքրքրում այդ:

— Ինքինքը ինձմեն գերազանց կսեպե, թեև ես նշանակված եմ Թիֆլիսեն, Ազգային Խորհրդի կողմե, իսկ անիկա գնդապետության աստիճանը սատցած է ինձմե, միայն քանի մը օր առաջ և մարդ չի դիտեր, թե ո՞վ է զինվորական պետ կարգեր զինք: Հիսուն հոգուց խումբ մը կազմեցի ձեղի օգնելու համար Երզնկա ճամփելու, վարդրավ ըսելով, թե հոս պետք են ...

— Ո՞վ, — Հարցրեց Հովհաննը:

— Զե՞ք դիտեր, գնդապետ Գարաբեշից անը. ուրիշ խումբ մըն ալ կազմեցի Բայլուրու ճամփելու համար: Զեզի կհարցնեմ, ասանկ պայմաններու մեջ ինչպե՞ս պիտի օգնական ուժեր ճամփեի ...

Այդ զրուցը պարզում էր ավելին, քան կարող էր մեզ ասել Մուռադը:

— Անցյալը անցել է, պարո՞ն գնդապետ, կարևոր է հասկանալ, թե ի՞նչ որոշեցիք քաղաքը պաշտպանելու համար, և ի՞նչ պիտի անենք մենք, — ասացի հս:

— Ամեն բան «որոշված» է, բայց արժեք չունի, ուժ չունինք:

— Այդ գեպքում արդյոք լավ պիտի շինէ՞ր օր առաջ քաղաքից գուրս հանել ժողովուրդը դեպի Կարս, որ նահանջի ժամանակ շվնասվի: Նրա գժգույն դեմքին դառն ժպիտ գոյացավ:

— Երավունք ունիք, բայց Կարսին ո՞ւր պիտի տանինք այդ դժգախտ ժողովուրդը:

— Ռուբեմն, ենթադրում եք, որ թուրքերը պիտի գան մինչև Կա՞րս:

— Ի՞նչ «ենթադրել», չե՞ք դիտեր, որ Բրեստի համաձայնությամբ Կարսը, Բաթումը, Արդահանը տրված են թուրքերուն ...

— Ե՞րբ, — զոշեց Հովհաննը, երկի կարծելով, թե թուրքերն արդեն այստեղ են:

— Երեկ, սիրելի՛ս, երեկ հեռագիր ստացանք այդ մասին:

— Ի՞նչ կըսեք, հեյ-վա՞խ ...

Լուրն անակնկալ էր նաև ինձ և Սահակի համար նույնպես:

— Ի՞նչ եք մտածում այդ առթիվ, — Հարցրեց Սահակը:

Գնդապետ Թորգոմի դեմքը հանկարծ ճառագայթեց, սև աշքերը կայծկլտացին. ինքնազործ կափարիլի պես շրթունքները շարժվեցին, ու արտասանած խոսքերին համաշափ բաց ու խուփ անելով բերանը՝ հատ-հատ շեշտելով ասաց.

— Ես ձեզ սոսկական շարքային զինվոր չեմ նկատեր, ձեզ կհամարեմ սրտացավ, բանիմաց հայ երիտասարդներ և անկեղծորեն կիսում, եթե վստահ ըլլայի, որ անձնական զոհաբերություններով կացությունը կիրկվի, բոպե մը իսկ չէի տատաներ անձս զոհաբերելու ազգիս համար: Դժբախտաբար, ո՞չ իմ և ո՞չ ալ ձեզ նման հազարավորներու անձնազոհությունը. ներկա պարագաներու մեջ չեն կրնար գործը գլուխ հանել: Կացությունն ավելի քան բարդ է, մեր դեմ կկովին ոչ միայն զենքով, այլև քաղաքականությամբ: Այսպիսով, եթե չենք կըրնար զենքի դեմ զենք գործադրել, գոնե քաղաքականության դեմ քաղաքականություն բանեցնելու ենք. մենք պետք է մեր օրիանթասահոնը փոխենք, ձեռք քաշենք ուղաներեն և անկախություն հոշակենք:

— Դուք կարծում եք, որ թուրքերը հաշվի կառնե՞ն մեր անկախությունը, — ասաց Սահակը հետաքրքրությամբ:

Գնդապիտ Թորգոմը զգացված դոշեց.

— Ա՛յս, սիրելիս, եթե այդ ակտը կատարած լինեինք երկու ամիս առաջ, երբ Յրիստի մեջ գեռ չէր ճշգված մեր խնդիրը, բոլորովին այլ պիտի ըլլար հիմա մեր կացությունը. ըսի՛, հեռախոսեցի՛ Ազգային Խորհրդին, Մուրադին, Սեպուհին. խե՞նթ կաբծեցին զիս: Սակայն գեռ ուշ չէ. անհրաժեշտ է ժամ առաջ կատարված իրողության առջև դնել թշնամին: Անդամ մը այդ ընելին ետքը, այն չի համարձակիր Հայաստանի անկախ պիտության սահմանները ոտք կոխել:

— Ինչո՞ւ, — մտամոլոր հարցրեց Հովհաննը:

— Որովհետև մոտ ապագային հաշիվ պիտի տա մեր դաշնակիցներուն՝ Անդիո և Ֆրանսիո, որոնք անպայման հաղթական պիտի ըլլան ...

Վերջին խոսքերն ինձ ամեն բան պարզեցին: Ես ելա:

— Չե՞ք կրնար այդ մասին խոսիլ Մուրադի հետ, — դարձավ զբնդակետը Սահակին:

— Մենք փոքր մարդիկ ենք, պարո՞ն գնդապիտ, մենք ի՞նչ կարող ենք ընել:

— Կը կարծեք օգուտ շունի՞ ...

Սահակի դեմքն այնպիսի մի արտահայտություն ընդունեց, որ կարող էր լինել և «այս» և «ուշ» նայած թե ինչ կլինի գնդապիտի խոսքի շարունակությունը:

— Ափսո՞ս, — հառաշեց վերջինը՝ մեկնելով մեղ իր ձեռքը:

* * *

Ընդհանուր փլուզումի այդ օրերին հանկարծ ստեղծվեց աննախընթաց խանդավառություն: Անդրանիկը Ալեքսանդրապոլից իր բանակով հասել էր Հասան-Գալե: Երբ լուրք հաստատվեց, ժողովրդի ոգնորությունը հասավ խենթության: Մարդիկ, ամեն բան մոռացած, փողոցներում երգում էին «Զայնը հնչեց երգումի հայոց լեռներն», «Ինչպես արծիվ սավառում ես լեռ ու ձեռ» հանրաժանոթ երգերը:

Երգումի քսանհազարանոց թուրք բնակչությունը, որ մինչ այդ չէր ծածկում իր ուրախությունը մոտալուտ ազատության հույսով հանկարծ սմբեց ու փակվեց տներում. նրա բոլոր հույսերը ջուրն ընկան. Անդրանիկը գալիս էր:

Անդրանիկը եկավ. ընդունվեց արտակարգ շուրջով և հանդիսավորությամբ: Խուսներամ բազմությունը բռնել էր ճանապարհը մինչև Կարս-Գափու:

— Կեցցե՛ Անդրանիկը, — զոռում էր խելահեղ ամբոխը:

— Կեցցե՛... — ղղողում էին փողոցները:

Բայց հաջորդ օրը վերականգնվեց նույն կացությունը: Մանուկ ժողովուրդը սպասում էր հրաշքին, որ չկար: Այժմ նա անում էր դատողություններ և ոչ շատ նպաստավոր՝ ղեկավարների, անզա՛մ Անդրանիկի համար:

— Ինչո՞ւ այսքան ուշացավ ...

— Վերջին պահուն ի՞նչ կարելի է անել

Ապա հետևում էին զանազան զրուցներ և ենթադրություններ:

Մեկ շէին զբաղեցնում այդ զրուցները, և երբ Մուրադը կանչեց, բոլոր ողջ մնացած ընկերները դարձյալ խմբվեցին նրա շուրջը:

Նախքան այդ՝ արդեն մի շաբաթ էր, ինչ թուրքերը էրզրումը դարձել էին իրենց զինվորական գործողությունների թիրախ, և հայկական առաջապահ մասերը նրանց ճնշման տակ քայլ առ քայլ նահանջում էին դեպի իլիճա:

Մարտի 11-ին թշնամին, համախմբելով իր ուժերը, իլիճայի դիմութեղ հարձակման դիմեց. մենք նահանջեցինք՝ անհամար զոհեր տալով: Անդրանիկի հրավերով զինվորական արտակարգ խորհրդակցություն գումարվեց: Հաջորդ օրը առավոտից սկսվեց էրզրումի պարպումը և նահանջը ամենածանր պայմաններում: Ժամը 9-ին թուրքերն արդեն քաղաքում էին: Նրանց ձեռքն անհաշիվ ուղղմամթերք, պարեն, հանդերձանք և այլ հարստություններ անցան: Քաղաքում մնացած հարյուրից ավել հայերը կոտորվեցին: Ճանապարհին բազմամարդ տարագիրներին միացան ինուսի կովողների մի մասն ու գաղթականները: Այնուհետև ընդարձակ տարածությունների վրա պարզվեցին գաղթականական մեծ հոսանքների նույն տևութանականները, որոնք ինձ արդեն ծանոթ էին երգնկայից սկսած ...

Մոտենում էինք Ռուսական Հայաստանի սահմաններին: Լուսատղը բարձրանում էր վեհափառ շքեղությամբ՝ խոստանալով վճիռ օր: Շատ ցուրտ էր: Մասիսի գմբեթաձև ձյունափայլ գագաթը, դուրս գալով թանձր խավարի միջից, գծագրվում էր եթերում մեծափառ վսեմությամբ: Հեռուներում աղջամուղջի նիզակաձև խուրձերից քիշ-քիշ պարզվում էին ոսկեգույն ապառաժների ուրվագծերը: Հորիզոնն այն-

տեղ բոցավառվում էր: Քիչ հետո հրավառ գունդը ոստյուններով սկսեց բարձրանալ: Ոսկեգույն ապառաժների սրածայր գազաթները՝ ծիրանի հագած, մշուշի մեջ ցրվեցին:

Դիտում էի շրջապատը հայրենազուրկ թախիծով: Ես՝ նախնիներիս վերջին սերնդի մնացորդներից մեկը, պարզ ու որոշ գիտակցում էի, որ այդ պահին մեր հայրենիքը կորցրինք: Ու իմ բաժին պատասխանատվությունը նախորդ սերունդների հանդեպ թվում էր. խիստ ծանր, դառն ու ահավոր: Անձնական վշտից ծնունդ առած վրեժի զգացումը իմ մեջ դառնում էր սառը գիտակցության պահանջ, իրրև մեր սերնդի ինքնարդարացման մի ուղի:

Հետապնդող թշնամին շփման մեջ մտավ մեզ հետ մարտի կեսերին, Կարս—Ռուկանի շրջանում: Ուժգին հակահարված ստանալով՝ հետապնդումը դանդաղեց, բայց կանգ շառավ: Այն մեր թիկունքում ոտքի հանեց քրդերին: Մարտի 13-ին թուրքերի ճնշող զրոհների տակ, քաշվեցինք դեպի Խան-դերե: Ապրիլի 2-ին թուրքերը մեծ ուժերով շարժվեցին դեպի Կարաքուրտ, Բարդոս և այս կետերը գրավելով՝ հարձակվեցին Խան-դերեի վրա: Արյունահեղ կոփվներ սկսվեցին և տևեցին մի քանի օր: Ապրիլի 6-ի վիշերը պարպվեց Սարիղամիշը, ուր նախապես պայմեցրին պահեստներն ու փչացրին ուղղմական նշանակություն ունեցող ամեն բան: Զգալի էին մեր կորուստները, հատկապես Կարաքուրտի կիրճում, ուր ընկան բազմաթիվ կամավորներ: Այդտեղ ես վերք ստացա աջ թից ու դուրս հանվեցի կովողների շարքից:

* * *

Սարիղամիշը դեռ կանգուն էր, երբ մեկնում էի թիֆլիս մի խումբ վիրավորների հետ: Խելակորույս իրարանցումը կայարանում անհկարագրելի է: Բազմությունը պաշարել էր գնացքը: Մարդիկ խումբի վազվում էին գես ու դեն, հսկայական պարկերը շալակած, որոնց մեջ կարծես տեղափոխում էին անդամահատված դիակներ: Վագոնները բերդի նման գրավվում էին խուժումով: Ոտնաման, գլխարկ, կապոց, վերմակ, հագուստի թև դուրս էին մնում, երբ մարդիկ մաղերը ցրիվ, օձիքները պատոված, կատաղորեն իրենց նետում էին վագոնի մեջ: Փրկվելու կենդանական մղումը մթագնել էր մարդկանց դատողությունը: Ցուն դարձող ուսւա զինվորների մի խումբ գենք ու զրահով բռնել էր գնացքի ուղին և սպառնում էր շարդուիշուր անել ամեն բան, եթե իրենց տեղ շտրվի գնացքում: Կայարանի հայ պաշ-

տոնյան գլուխոր կորցրած վազվում էր մայթով ու վագոնների դռների մոտ զողովում, պաղատում, որ տեղ տան նրանց: Տեսնելով, որ ոչ շի ուզում դիշել, նա մեր վագոնի մոտ հանկարծ ցուի պիս ոլորում է հաստ վիզը ու բունցքի շարժումներով ամբոխը ճեղքում: Հարայ-հրոցը, անասելի աղմուկը խլացնում է ամեն բան: Վերջապես, ուղևները տեղափորվում են, ու զնացքը շարժվում է: Ամբոխն այժմ՝ արդեն քննադատում է հաղորդակցության անհանդուրժելի կարգերը. տեր Ջեկար, իշխանություն շկար, մանավանդ կարգ ու կանոն շկար: Ամենախիստ քննադատողները կորուստ ունեցողներն էին: Նրանք փնտրում էին պատռհաններից վագոն նետած իրենց իրերը: Թուխ դեմքով, բարձրահասակ ու թիկնեղ կովկասահայ մի երիտասարդ, սեփ-սև երկար մազերը ջղածգարար շտկելով, հուզված բացականչում էր.

— Վայ, մերդ շմեռնի, Հայաստան, էս ի՞նչ արին քեզ ...

Հարևան բաժնում հացթուխի լեցուն դեմքով մի արևմտահայ շափազանցություններով նկարագրում էր դեպքերը՝ ծանրորեն բացուխուփ անելով աշքերը: Տանձի կոթի պիս բարակ զգով մի ուրիշը հաստատում էր նրա ասածները՝ իր գունդ զլխի շարժումով ...

Խուճապի աղեցությունն զգացվում էր և Կարսում: Կայարանում կարգապահությունը դեռ չէր խանգարվել. Հինավուրց բերդը հավատ էր ներշնչում: Այստեղ պատճառ շկար շատ վախենալու: Կեօրն անց հասանք Ակեբանդրապոլ: Զյունը կայարանի մայթին հալվել էր՝ կազմելով ծփուն տիզմ: Երեք տարի առաջ դճով զուռնայով մեզ այստեղ դիմավորեց կինտոյատիպ մի ամբոխ: Նույն մարդիկ էին և այժմ՝ ճկուն, շարժուն ու ցրտից կարմրած քթերով: Հուզված, նորություններով անհանգիստ, կարծես բոլորն էլ փնտրում էին բոլորին և իրար էին գրանում: Ահա մեկը, որ, արխալուղը հովին, մազերը ցրիվ, բռնում է մյուսի շլինքից, նրա հետ շրջում ու երեսն ի վեր գողում.

— Տո՛, իշու ձագ, ի՞նչ ես կայներ, արի երթանք աբոզ գրվինք:

Աբո՛զ, աբո՛զ, աբո՛զ՝ գաղթող ժողովուրդը փոխադրելու, մնացորդների կյանքը փրկելու. այժմ այդ էր օրվա կարգախոսը ...

Ավելի վեր, դեպի հյուսիս՝ Ղարաքիլիսե, Սանահին, ժողովուրդը հանդարտ էր ու փիլիսոփայորեն խաղաղ. նախ՝ հեռու են դեպքերը, ապա՝ ինչ լինելու է, կլինի: Կայարաններում հանդիպում էին միայն տարիքավորներ, որոնք կորաքամակ անցնում էին մայթերով, ապա, բթամատերով գոտիներին կառչած, կանգ էին առնում ու անորոշ ուղղությամբ նայում: Ոչ մի հետաքրքրություն. այլևս ոչինչ չի կարող նրանց զարմանք պատճառել:

Հոռու փարթամ բնությունը դեռ չէր ձերքաղատված ձյունից, լեռկ ծառեր, բները ցից, մերկ թևերը պարզած, դեռ սպասում էին իրանց կանաչ զարդերին:

Առավոտ էր, երբ հասանք նավթլուղ, որ ասել է Թիֆլիս: Իրար հաջորդող մշուշապատ սարերը մնում էին թիկունքում: Ապա հայտնը վում է Մամա-Դավթի լեռը, որ ճեղքի է սարերի շղթան, շնչառատ առաջ վազել ու հանկարծ ապշահար կանգ առել՝ քաղաքի տեսքից հմայված: Նա հյուրընկալել է իր փեշերին քաղաքի ծայրամասերը: Այստեղ գարուն է. Կոչորի ուղղությամբ տարածվում են մուգ կապույտ կանաչներ: Վարը լայնանիստ տարածվել է շրեղ Թիֆլիսը, որի հեռավոր փեշերը կորչում են բլրազարդ այգիների մեջ: Ահա և Թուռ գետը, որը քաղաքը երկու հավասար մասի բաժանած՝ օձապտույտ երկարել է արծաթապույն ժամանակինի պես: Գարնանամուտի արել կայծեկրտում է տների ապակիներին, որոնք կարծես լցված ու սրբված են: Աստված իմ, որքա՞ն կայտն են իրերը, և ինչքա՞ն երերուն է մարդկանց հակատագիրը ...

Երբ գնացքը կանգ առաջ, ինձ պատկերացավ երեք տարի առաջ մեր շոնդակից մեկնումը: Փոփոխություններն անշափելի էին: Կայարանը լցված էր տուն դարձող անզուխ զինվորների բազմությամբ: Երևանյան հրապարակը խաղաղ կերպարանք էր ստացել. զրուց էին անում:

Վելյամինովսկայա և Բեհբության փողոցներում մի քանի մարդիկ՝ քաղաքապետարանի առջև կանգնած. Հավաքված էր տարապիր բազմություն: Չորրորդ հիվանդանոցը, որտեղ առաքված էինք, գտնվում էր այդ շրջանում: Մեղանից միայն հինգ հոգի կարելի եղավ այդտեղ տեղավորել, այն էլ շնորհիվ բժիշկ Գ. Սաղյանի ջանքերի. թափուր տեղ չկար: Մնացածները տոմս ստացան Արամյանի շենքին կից դրամատանը բուժվելու և այնտեղ էլ մնալու: Երևանյան բանուկ հրապարակը գրեթե ամայի էր: Սակայանի սրճարանում այլևս չկային երկարամաղ, ակնոցավոր մտավորականներ, որոնք այն ժամանակ վիճում էին քաղաքական դեպքերի շուրջ ու հետևություններ անում, որոնցից և ոչ մեկը չիրականացավ: «Անատոլիա» ճաշարանում ուղամշունչ կամավորների փոխարեն խմբված էին Արևմտյան Հայաստանի դանապան շրջաններից փախստականներ: Քիչ ավելի կյանք կար Գուլովինյան պողոտայում: Պալատին կից, ուսական տաճարի երկաթածող շրջափակի մեջ, խմբված էին ուսա բարձրաստիճան զինվորականներ. երեկի նշանավոր անձի հոգեհանգիստ էին կատարում: Քիչ ավելի

վար՝ մյուս մայթին, Ալեքսանդրյան այգու մուտքին շհասած, բարձրանում է Արամյանցի հինգհարկանի տունը, որտեղ հակառակ մեծահարուստ տիրոջ կամքի, այժմ տեղավորված է Հայոց Ազգային Խորհուրդը՝ իր հարակից կազմակերպություններով: Դեպքերն այնպես տակն ու վրա են արել ամեն բան, որ ներկան ու անցյալը խառնվել են գլխիս մեջ...

Մի քանի օր անց Արամյանցի տան առաջին հարկում հաստատված ընդարձակ ճաշարանում ուսիս իջավ մի ձեռք. պարոն Թաթիկյանն էր:

— Վերադարձել ես ու շես հիշում մեկ: Թեգ ի՞նչ է եղել:
— Ոչինչ բան է, նստեցեք,— ասացին անակնկալի մատնված:
— Ռշ, եթե գործ չունիս այստեղ, տուն գնանք, ճաշի ժամանակ է: Թես անցել էր երեք տարի, բայց նախապես հին մանկական հիշողության պես էին պատկերանում ինձ Թաթիկյանների տունը և այն առաջին զգացումները և զգայությունները, որ արթնացան իմ մեջ Անահիտի նկատմամբ: Այժմ որքան մոտենում էինք բնակարանին, այնքան հուզումը համակում էր ինձ:

— Գուցե Կարսի տակ կարո՞ղ կլինեն կասեցնել թուրքերի առաջիկացումը, — Հարցրեց Թաթիկյանը, երբ մի քանի խոսքով պարզեցի ճակատի անհույս վիճակը:

— Թերեւ ...

Միայն աղջիկները կարող են այդպես փթթիւ, ինչպես տեսա Անահիտին. մեծացել էր, զեղեցկացել. կեցվածքը՝ լուրջ, իմաստալից: Նա արագ մոտեցավ ինձ միջանցքում, բայց երբ խոսեց, դժվարությամբ կապեց ասելիքը իրար հետ.

— Դիտեի, որ եկել եք, բայց Զեղ շտեսա. ա՞ս, ո՞չ, մի անգամ տեսա Զեղ Արամյանցի տան դիմաց. պարոն Յանը գյանը ասաց, որ դուք եք:

Հայտնվեցին մայրը և մեծ քույրը: Քիչ-քիչ այդ ընտանիքի շերմ մթնոլորտը կազմուեց ինձ: Փոքրիկ քույրը՝ Սեղիկը, որ այն ժամանակ հազիվ մեկուկես տարեկան էր, այժմ աղատ խոսում էր, «Կա՞ն Հնչելով: Անահիտը մանկությունից պահպանել էր գլուխը թեք բոնած լսելու սովորությունը, երբ խոսում էր հայրը: Իսկ պարոն նշանը շարունակում էր հարցուփորձել տիսուր բաների մասին.»

— Ուրեմն Մարտիրոսի բազմանդամ ընտանիքից ոչ ոք չի փրկվել:
— Թշ ոք:

— Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ մեր Շահենը ողջ է ...

— Թուրքական բանակի մեջ դեռ կան հայ սպաներ, որոնք շարունակում են ծառայել:

Գիտեի, որ սիրած եղբորորդին՝ Շահենը, ունչպցվել էր շուրջ 2000 հայ զինվորների, սպաների հետ միասին, Խարբերդի շրջանում, որտեղ նրանք աշխատում էին ճանապարհների շինարարության վրա, որպես «ամելի»-ներ, բայց այնքան շատ էին անհաճող տեղեկություններս, որ ստիպված էի այդ մասին լուել:

— Որքան աշխատեցի այստեղ բերել տալ, քանի անգամ գրեցի...

— Իսկ Մոմձյաններն ի՞նչ եղան, — Հարցրեց տիկին Զվարթը:

— Քշված ու ջարդված են, տիկին:

— Իսկ մեր հարևան Դանիելյաննե՞րը:

— Բավական է, — միշտ պարունակած նշանը:

* * *

Արդեն իրազեկ էի կացության: Քաղաքի ծայրամասերում, Հավաքարում, Շեյթան բազարի, Սալդատսկի բազարի թիկունքում, Խոշավանքի գերեզմանատանը և այլ տեղեր հաստատված էին գաղթականական կայաններ: Տարագիրների մի հոծ բազմություն կուտակված էր քաղաքից հեռու, թակուրիանիի շրջանում:

Թեև «հայկական չարագործները», որոնց պատժելու նպատակով թուրքերը խախտեցին զինադադարը դեռ Երզնկայից սկսած, վաղուց արդեն ապաստանել էին Անդրկովկաս, բայց թշնամին, բնաջնջելով արևմտահայությանը, գալիս էր վերջ տալու նաև կովկասահայերին: Վրացիների համար թուրքական վտանգը գոյության խնդիր չէր, այլ քաղաքական հարց: Թաթարները բացեիրաց անցել էին թշնամու կողմը և այլևս առանց քաշվելու՝ աշխատում էին թուրքերին առաջնորդել Անդրկովկաս: Նրանք ամեն տեղ խոռվություններ, շարժումներ էին կազմակերպում, կատարում էին լրտեսություն ամենայն շափերով ու բոլոր միջոցներով քայլայում թիկունքը:

Մարտի կեսերին Կարսի շրջանում սկսված քրդերի ու թաթարների շարժումը ստացել էր կազմակերպված զինվորական գործողությունների բնույթ: Զինված իսլամական խմբերը շրջապատել էին Մերտիներն ու Արդահանը, ուր կատաղի կոփներ էին գնում: Հազարներից բաղկացած ավազակային խմբեր սահմանամերձ մասերում բնաշնջում էին հայերին:

Անդրկովկասում անհամաձայնությունները երեք ազգերի միջև, հատկապես հայերի և թաթարների, գնալով ծավալվում և խորանում էին թե՛ Սեյմի, թե՛ Անդրկովկասյան կոմիսարիատի ներսում:

Այս պայմաններում Տրապիզոնում սկսված հաշտության բանակցությունները թուրքերի ձեռքին դարձել էին խաղալիք: Վեհիք փաշան շարունակում էր առաջանալ թաթումի, Արդահանի ուղղությամբ՝ ամենօր գրավելով նոր վայրեր: Մեռվ բեյը խոսում էր «հաշտության նախնական պայմանների» մասին, որոնց միակ իմաստն ու ձգտումն էր քայլայիլ հայ-վրացական՝ առանց այն էլ թույլ գործակցությունը: Եթեմեցուցիչ հեռազրի էին տեղում թիֆլիս՝ Կարսի շրջանային կոմիսար Զամոյանի, Արդահանի շրջանային կոմիտեների նախագահ Սարալիձեկի, գանձապետ Իվանովի ստորագրություններով այդ շրջաններում տիրող տակնուվրայությունների, ավազակային խմբերի հարձակումների, կոտորածների, կողոպուտների, զանգվածային գաղթերի մասին: Եվ այն ժամանակ, երբ Սեյմի ամբիոնից հնչում էին հուզումնալից ճառեր՝ ուղղված «ներքին թշնամու» դեմ, բերնեբերան պատմում էին ինչ-որ գաղտնի թուրք-վրացական բանակցությունների մասին, որոնց համաձայն Զինենկելին Տրապիզոնում աշխատում էր թաթումը պահել Անդրկովկասի սահմաններում՝ Կարսն ու Արդահանը թուրքերին հանձնելու պայմանով:

Ապրիլի 13-ին թուրքերը մտան Բաթում: Քիչ անց Թիֆլիս հասակ Տրապիզոնի պատվիրակությունը, և շրջան անող վրաց-թուրքական գաղտնի համաձայնության գրուցները ստուգվեցին: Զինենկելին հանձնել էր թաթումը թուրքերին՝ Բրեստի համաձայնությունը Անդրկովկասին վերաբերող մասի իրականություն դառնալուց հետո այդ քաղաքը Վրաստանին կցելու պայմանով: Հայերի դեմքին գույն շկար: Ապրիլի 22-ին վրացի և թաթար քաղաքական դործիչները Անդրկովկասը հայտարարեցին «անկախ պետություն»՝ կատարելով թուրքերի կողմից պահանջված հաշտության «նախապայմաններից» առաջինը: Նույն օրը Գեղեցկորիի կառավարությունը հրաժարական տվեց, ու հաստատվեց մի նորը, որի մեջ Զինենկելին ամեն բան էր՝ և արտաքին գործոց նախարար, և վարչապետ, և «հաշտության բանակցությունների» պատվիրակության նախագահ: Հաշվի առնելով նախորդ կառավարության տատանվող ուստափական կողմնորոշումը՝ կարելի էր ասել,

որ այս փոփոխությամբ մարմնանում էր շեշտված թուրքասիրական քաղաքականությունը:

Ապրիլի 24-ին Ակակի Զիսենկելին հրահանգեց հայկական ուժերի հրամանատար զորավար Նազարեկյանին՝ Կարսը հանձնել թուրքերին: Թաթարները ցնծության մեջ էին: Կարսի հանձնումը նշանակում էր թուրքերի անարդել առաջիաղացումը գեղի հարավային Անդրկովկաս: Վրաց քաղաքական գործիչներն այժմ բանակցում էին թուրքերի հետ՝ թաթումը հետ ստանալու և անկախ վրաստան կազմելու ցանկությամբ: Աննախընթաց ողբերգության օրեր էր ապրում Թիֆլիսի հայությունը:

Այդ օրերին Թիֆլիսում հայտնվեցին Մուրադն ու Սեպուհը: Վերքս բուժվելու վրա էր, և առիթից օգտվեցի նրանց տեսնելու, անելիքս ճշտելու համար: Բայց երանի՝ տեսած Ավենեկի հայկական ազատամարտի այդ երկու հին մարտիկներին այն վիճակի մեջ, անձանաշելի էին, դառնացած, հուսահատ ու բարոյալքված: Մուրադն, այնուամենայնիվ, ինձ ասաց, որ մտադիր է կազմել ծիավոր մի խումբ՝ լիոնային ճանապարհներով: Ալեքսանդրապոլ մեկնելու համար, հենց որ Ազգային Խորհրդը հավանություն տա այդ գործին, և խոստացավ ինձ այդ խմբի մեջ առնել: Մի քանի օր հետո իմացա, որ Հյուսիսային Կովկասով մեկնել է դեպի Ռուսաստան՝ իր ուժերը լինինին արամադրելու որոշումով:

Մայիսի կեսերին թուրքերը զրավեցին Ալեքսանդրապոլը: Ապա կոիվները ծավալվեցին Ղարաբիլիսեի շրջանում, ու մի քանի հաջող ընդհարումներից հետո հայերն ստիպված եղան տեղի տալ ու նոր դիրքեր բռնել Բողիոյուղի և Նիկիտինոյի շրջանում՝ փակելով Երևանի ճանապարհը:

Ղարաբիլիսեն պրավելուց հետո թուրքերն իրենց ուժերի մի մասով շարժվեցին դեպի Հյուսիս՝ Թիֆլիսի ուղղությամբ: Միաժամանակ ոտքի ելավ և Սագախը Սանտարի շրջանի մահմենդականությունը, որ կտրեց երկարուղային Հաղորդակցությունը հարավային Անդրկովկասի հետ: Այդ օրերին զրավված վայրերից տեղահան արված տարապիրների ծայրն արդեն հասել էր Թիֆլիս: Մերկ ու սոված բազմահազար գաղթականների նոր շարքեր ամեն օր հայտնվում էին Թիֆլիսում, ու դեռ վերջը հայտնի չէր:

Նման մի բազմության մեջ մի օր հանկարծ նշմարեցի բարձրահասակ Հովհաննին: Քայլում էր կքոտ, ծանր հիվանդի պես:

— Հովհան...
— Հովհան...

Կանգ առավ, տարամոլոր նայեց դեպի մայթը մեկի նման, որ ինչ անելիքը շպիտե, մինչև մոտեցա և դուրս քաշեցի բազմության միջից:

— Տո էդ ինչպե՞ս, ուրեմն դո՞ւ ես,— գոշեց նա ուրախացած, փափախը վար առավ, ճակատի քրտինքը նրանով սրբեց: Մի ձեռքին պինվորի պայուսակ ուներ, մյուսի անութի տակ սեղմել էր մի բարձիկ և վերմակ: Կարծես ուզում էր ինչ-որ բան վերջիշել, ցից այտնակը թարմակի վերը խոր ընկած մանր աշքերը թարթելով՝ ասաց: —

— Այս անդամ հազիվ խալսեցանք մահեն, աղքա՞րս, կրակի բռցերին ելանք: Բայց դարձյալ կմնայի, եթե ասանկ չըլլար, անզլուխ մնացինք: Մուրադի մեկնելեն ի վեր ամեն բան թարս գնաց, հիմա կուգեմ պինքը տեսնել, հասկանալ, թե ի՞նչ պիտի ըլլա մեր վերջը կուզեմ Մուրադին հրաման առնել, բոլշևիկ պրվել և ցարական ուռաներու գեմ կովիլ, անոնք քանդեցին մեր տունը, — ասում էր Հովհան՝ լեզվի ծայրով թրչելով շորացած շրթունքները:

— Մուրադը այստեղ չէ:

— Ի՞նչ կըսես, գոշեց հուսահատ:

— Այո՛, մեկնել է Հյուսիսային Կովկաս:

— Հե՛յ-վա՛խ...

Կարծես հողը ոտքերի տակից փախավ, այնպես հուսահատ վիճակի մատնվեց:

— Զե՞ս կընար Ազգային Խորհրդին միջոցներ խնդրել, որ երթամ ...

— Ո՞ւր:

Անոր ետեն, ի՞նչ գիտնամ...

* * *

Ճակատադրական օրեր էր ապրում Անդրկովկասի հայությունը: Օրհասական պայքար էր մղում թուրք զինվորական ուժերի դեմ Մուրատյան դաշտի հայությունը Սարդարապատի տակ, ուր կոփը մղվում էր Վարդանանց պատերազմի կրկնության նշանախոսքով: Քասային կացություն էր Թիֆլիսում. ամեն տեղ խճողված էին բազմահազար գաղթականներ: Սեյմը և Անդրկովկասի կառավարությունն ապրում էին իրենց քայլայման նախօրյակը: Վրացիները ձգում էին դուրս գալ ապագա դժվարություններից՝ հայտարարելով Վրաստանը անջատ ու անկախ: Օրին խորանում էր Հայ-թաթարական հակամարտությունը, վերջինները թուրքերին առաջնորդում էին Բաքու. Հայերը Փետ-

ցել էին մենակ՝ արյան ու կրակի մեջ։ Այս պայմաններում իմաստ չկար թիֆլիսում անզործ ժամանակ վատնել, և հաջորդ օրը Հովնանի հետ մեկնեցինք դեպի Փոթի։ Արդեն ծավալված քաղաքացիական կոփների պատճառով այն ժամանակ դյուրին չէր արագ Ռուսաստան անցնել, և մենք հույս ունեինք Հյուսիսային Կովկասով հասնել Մուրագին և նրան միանալ։ Գնացքը լիքն էր Հյուսիսային Կովկաս գաղթողների բազմությամբ, որի ստվար մասը կազմում էին թիֆլիսցի հայեր։ Ավելի մեծ էր տարադիրների կուտակումը Փոթիում։ Բոլոր հյուրանոցները, քարվանսարանները, ճաշարանները, կաթնատները ծայրաստիճան լցված էին։ Տեղում էր հորդ անձրև՝ խորդուբորդ մայթերին գոյացնելով լճակներ։ Ուղղակի դիմեցինք դեպի նավամատուցյ, որտեղից ալու պահին պիտի մեկներ մի նավ դեպի Տուապս։ Բայց տուներն սպառված էին, և անկարելի էր այդ առիթից օգտվել։ Ուզում էինք ետ դառնալ քաղաք, երբ հանկարծ Հովնանը գուշց։

— Տո՛, նայի...

Սպասման սրահի մի անկյունում գնդապետ Թորգոմը զրուցում էր մի սիրասուն, մանկահասակ կնոջ հետ։ Մոտը իրար վրա դարսված էին ճամփորդական պայուսակներ։ Տիկնոց մոտ կանգնած էր տարիքուածի ուրիշ կին, հավանաբար մայրը։

— Կանչե նայինք, ի՞նչ կընե հոս։

Անհարմար էր, մոտեցանք՝ բարեկելով անցնելու։ Տեսնելով մեզ՝ Թորգոմը խոսքն ընդհատեց ու ձեռքի թեթև շարժումով մեր բարել առնելով՝ իշխանութեն ասաց։

— Ի՞նչ կընեք հոս։

Պարզեցինք, որ եկել ենք Տուապս մեկնելու, բայց տումս շունինք և ստիպված ենք քաղաք վերադառնալ։

— Տոմսը խնդիր չէ, հոս քիչ մը սպասեցիք, կկարգադրեմ։

Հետ քաշվեցինք՝ զարմացած Թորգոմի ինքնավստահ ձեկց, բայց երկի այստեղ որևէ պաշտոնական հանգամանք ուներ կամ ծանոթներ։

Գնդապետ Թորգոմը շարժուձևերով պատկերացնում էր ինչ-որ հետաքրքրական պատմություն կամ պատերազմ։ մանկահասակ տիկինը լարված ուշադրությամբ լսում էր։ Մայրը մերթընդմերթ նայում էր գնդապետին ու ափով բերանը ժածկելով՝ հորանջում։ Ահա կարծես վերջացավ պատմությունը, գնդապետը թեթեռին շարժվեց դեպի մեզ՝ փայտուն, երկարավիզ կոշիկների խթանները զարնելով գետնին։

— Թարե, տղա՛յք, — ասաց զվարթորեն, կարծես նոր էր տեսնում մեղ, — ո՞ւր կուզեք երթաւ, — դարձավ նա ինձ՝ վերջին բառի հետ ընդհուպ փակելով բերանը ու առաջ նետելով ծնոտը։

— Տուապսի, հետո Արմավիր։

— Աղեկ, սպասեցե՛ք հոս, միասին կերթանք։

Քառորդ ժամ շանցած՝ մեզ երկու տոմս բերեց՝ խնդրելով օգնել իրեն ներս առնելու ճամփորդական պայուսակները մեկնելու ժամանակ։

Կեսօր էր, երբ նավը, հովհարածն ալիքներ պարզելով ծովափում, շարժվեց դեպի բացերը։ Անձրես վաղուց դադարել էր, ծովը հմայիչ էր, արկի ճառագայթները ամպերի ճեղքերից փշուր-փշուր թավալում էին ջրերում՝ պարզելով մի հսկայական ոսկեփառուր ընդարձակ տարածությունների վրա։ Հայելու պես հարթ, լեղակի պես կապուտ ծովի անհետացող հորիզոնների թիկունքում նշմարվում էին Պոնտական լեռների մշուշապատ ուրվագծերը, որոնց թիկունքում ընկած էր հայրենիք։ Մղձավանշային երազ էր թվում ամեն բան ...

Գնդապետ Թորգոմը զրուցում էր տիկնոց հետ, մայրը նիրհում էր արկի տակ։ Իրիկվան դեմ, երբ տիկինն ու մայրը իշան վար, գնդապետը մոտեցավ ինձ ու թես առնելով բաշեց մայթի մյուս ծայրը։

— Կուղեի քեզի հետ խոսիլ կարեռ խնդրի մը մասին, բայց նախ պարզեմ քեզ կացությունը։ պատերազմը կմոտենա վախճանին, — ասաց նա՝ մարդարեի պես ներշնչված, վերջին բառի հետ ամրապես փակելով բերանը։ Ապա շարունակեց։

— Ֆլանդրիո մեջ, նարի ու Լա-Բասեի ուղղությամբ դերմանացիների հարձակումը հաջողություն շունեցավ, անոնք հազիվ 20 կմ խորությամբ ճեղքվածք մը առաջ բերին ու կանդ առին, այնինչ անոնց նապատակն էր չախչախիչ հարված տալ անդիմական ուժերուն։ Անհաջող անցավ և անոնց վերջին հարձակումը Փարիզի ուղղությամբ։ Ապրիլ 5-են սկսյալ Ամերիկան դարձեր է գործուն ուժ, և ան է, որ այժմ պատերազմը կմղե վախճանին։ Անդիմական բանակը, կատարված եռամյա աշխատանքներու շնորհիվ, այժմ մեծ արժեք է ստացած։ Այս պարագաներուն մեջ հայտնի է, որ ոռւսական ճակատին հաշվեհարդարը կենտրոնական պետություններուն վիճակը չի փրկեր։ Ավտորուն գարիան, Բուղարիան արդեն հաշտություն կաղերսեն։ Ավելի նեղ է թուրքերուն վիճակը։ Միջագետքի ճակատին վրա թուրքերը ենթակա են շախչախիչ պարտության։ մարտ 26-են ի վեր անդիմացիները

գրաված են թաղղագը: Միրիո մեջ թուրքերը անդարձ կնա՞ճանջին Յա-
ֆա-Երուսաղիմ բովանդակ գծի վրա...»

Մեծ հետաքրքրությամբ էի լսում գնդապետի սիոփիլ տեղեկու-
թյունները, որոնք նորություն էին ինձ համար:

— Տեսնենք՝ այժմ ի՞նչ կանցնի կդառնա մեր շուրջը, — հարեց նա:
Թաթարներու ընթացքը պարզ է, անոնք կուղեն թուրքերու գերիշա-
նության ենթարկել Անդրկովկասը՝ բաժանելով այն իրենց և վրացի-
ներու միջև, իրեկ կիսաանկախ երկրներ: Ավելի բարդ է և շատ կող-
մերով ուսանելի վրացիներու ընթացքը: Երեք օր առաջ Թիֆլիսի մեջ
ստույգ աղբյուրի իմացա, որ անոնք ունեցեր են գաղտնի խորհրդա-
դակցություն Վրաստանի անկախությունը հայտարարելու մասին,
անոնք կձգտին, որ իրենց անկախությունն ու հողային ամբողջությունը
երաշխավորվի Գերմանիո կողմէ: Վերջինին ներկայացուցիչը պիտի
ըլլա վրաց կառավարության մոտ կոմս Շուկենբուրգը: Արդեն ստորա-
դրված են կարգ մը գաղտնի համաձայնություններ դերմանացիներուն
հետ երկրի հաղորդակցության միջոցներն ու հարստությունները օգ-
տագործելու մասին: Գիշեր-ցերեկ այս կարգի գաղտնի բանակցություն-
ներ կվարեն Զիսենկելին, Նիկոլաձեն, Ժորդանիան, Սուրբուլաձեն, զո-
րավարներ Քվինիտաձեն, Օտիշիլիձեն և վրաց այլ պետական գործիչ-
ներ: Անոնց վարած աշխատանքներուն իրազեկ են Խան Խոյսկի, Խաս-
մամեդով, Սաֆիքյուրասկի, Ռասուֆբեկով, Զաֆարով և թաթար այլ պե-
տական գործիչներ: Վրացիները համաձայն են, որ Արենլյան Անդր-
կովկասն ունենա զործելու ազատություն, տնօրինե իր բախտը թուր-
քերու օգնությամբ: Ասանկ ահա, ամենաստորին դավաճանությամբ
մենք՝ հայերս, ձգված ենք երեսի վրա, արյան ու կրակի մեջ: Երեկ
Փոթիկն մեկնեցավ Բելլին գերման պատվիրակությունը՝ Ֆոն Լուսո-
վի զիսավորությամբ, թուրքերը ուղածնին կրնեն և զայն բանի տեղ
չեն դներ, իսկ ուրիշ ոչ մեկ պաշտպան ունինք մենք: Հիմա քեզի
կհարցնեմ՝ ի՞նչ ընելու է այս պայմաններուն մեջ:

Նրա ու աշքերը լրեժիսորուեն կայծկլտում էին, առաջ ցցված
ծնոտով վրաս կենարուացած դեմքը քարացել էր: Նորություն չէին մեր
շուրջը դարձող դավադրությունները, բայց առաջին անդամ էի լրիվ
հաշիվ տալիս ինձ:

— Է, գժվար չէ պատասխան գտնելը, — ասաց խիստ հուզված: —
բայց ես պատասխան ունիմ ու նոր չէ, որ կըսեմ ասիկա, անհրաժեշտ

է դավաճանները կանխել և անմիջապես հոշակել Հայուստանի առ-
կախությունը, — հարեց գնդապետը՝ հատ-հատ շեշտելով բառերը ու
նրանց արժեքի համաձայն բացուխոսի անելով բերանը:

— Երեք օր առաջ Թիֆլիս վերջին փորձ մը ըրի: Դարձյալ խենթ
կարծեցին զիս և ո՛չ Ազգային Խորհրդի անդամներուն, ո՛չ ալ մեր գոր-
ծիչներուն շերցի հասկցնել, թե որքա՞ն անհրաժեշտ է ժամ առաջ ան-
կախություն հոշակել: Այժմ կերթամ Մոսկվա, հոնկե պիտի անցնիմ
Արխանգելսկ ու նավ առնելով շիփ-շիտակ պիտի մեկնիմ լոնդոն՝ Հայ-
կական անկախության ի նպաստ գործը ձեռնարկելու համար: Նախ-
ական բոլոր աշխատանքները կատարած եմ և տարակույս շունիմ
հաշողության վրա. ստուդապես զիտեմ, որ անզիացիները համամիտ
են ատոր: Հիմա քեզի կառաջարկեմ այդ գործին մեջ միանալ ինձի.
Ճամփու ծախսդ կը հոգամ, տեղ հասնելի ետքն ալ դյուրին է, ի՞նչ
կըսեմ...

Խոսքերի վերջավորությունն այնքան անակնկալ է, որ զարմացած
նայեցի:

— Զզի այդ «կամավորական» ծրագիրներդ, ոչ թե մեկ, այլ տասը
«Մուրադ» խոկ չեն կրնար մեր կացությունը փրկել, մենք չէ, որ պի-
տի որոշենք պատերազմի բախտը: Ա՛լ կրավի, քիչ մըն ալ խնայինք
մեր արյունը ու քաղաքականության նայինք, որւն կրնաս ինձի օգ-
տակար ըլլալ հայկական շրջաններու մեջ ձեռնարկելիք աշխատանք-
ներուս ուղղությամբ. ազգօգուտ առաջարկը, որ կըսեմ, մեծ ապագա
կիսոստանա անձնապես և քեզի:

— Գնդապե՞տ, ներեցեք, բայց ես ոչ մի կոշում շունիմ զիվանագի-
տական աշխատանքների համար: այդ իմ գործը չէ, — ասացի ես...

— Ափառ՝ ս, — ասաց նա և զինվորականի համաշափ քայլերով մեկ-
նեց:

Ամսի տակից մի անգամ էլ դուրս նայեց արևը՝ հրավառ աշքերով,
ու շքացավ: Վարը, նայի ամբարի դուրս ցցված բարձրության վրա,
շարվել էին ուսու հականորդրգային համփորդներն ու երգում և խմում
էին: Բաժակաճառերում հաճախ լսում էի Կալեղինի ծանոթ անունը,
որ քիչ առաջ ինքնառպանությամբ վերջ էր տվել իր բախտախնդիր
կյանքին, ու մղձավանջի պես նորից ինձ պատկերացավ երգնկան:

Առավոտը ուշ հասանք Տուապսի: Շնորհակալությամբ բաժանվե-
ցինք գնդապետից՝ իր ընձեռած աշակեցության համար Փոթիում, ու

դրաված են Բաղդադը: Սիրիո մեջ թուրքերը անդարձ կնահանջին Յաֆա-Երուսաղեմ բովանդակ գծի վրա...

Մեծ հետաքրքրությամբ էի լսում դնդապետի սփոփիշ տեղեկությունները, որոնք նորություն էին ինձ համար:

— Տեսնենք՝ այժմ ի՞նչ կանցնի կդառնա մեր շուրջը, — Հարեց նա: Թաթարներու ընթացքը պարզ է, անոնք կուզեն թուրքերու գերիշխանության ենթարկել Անդրկովկասը՝ բաժանելով այն իրենց և վրացիներու միջև, իբրև կիսաանկախ երկրներ: Ավելի բարդ է և շատ կողմերով ուսանելի վրացիներու ընթացքը: Երեք օր առաջ Թիֆլիսի մեջ ստույգ աղբյուրի իմացա, որ անոնք ունեցեր են գաղտնի խորհրդագալություն Վրաստանի անկախությունը հայտարարելու մասին. անոնք կձգտին, որ իրենց անկախությունն ու հողային ամբողջությունը երաշխավորվի Գերմանիո կողմէ: Վերջինին ներկայացուցիչը պիտի ըլլա վրաց կառավարության մոտ կոմս Շուկներուրդը: Արդեն ստորագրված են կարդ մը գաղտնի համաձայնություններ դերմանացիներուն հետ երկրի հաղորդակցության միջոցներն ու հարստությունները օգտագործելու մասին: Գիշեր-ցերեկ այս կարգի գաղտնի բանակցություններ կվարեն Զիսկնելիին, Նիկոլածեն, Ժորդանիան, Սուրբուլածեն, զորավարներ Քվինիտածեն, Օտիշիլիծեն և վրաց այլ պետական գործիշներ: Անոնց վարած աշխատանքներուն իրազեկ են Խան Խոյսի, Խասմամեդով, Սաֆիբյուրտակի, Ռևուտքեկով, Զաֆարով և թաթար այլ պետական գործիշներ: Վրացիները համաձայն են, որ Արևելյան Անդրկովկասն ունենա զործելու ազատություն, տնօրինե իր բախտը թուրքերու օգնությամբ: Ասանկ ահա, ամենաստորին դավաճանությամբ մենք՝ Հայերս, ձգված ենք երեսի վրա, արյան ու կրակի մեջ: Երեկ Փոթիկն մեկնեցավ Բեռլին գերման պատվիրակությունը՝ Ֆոն Լուսովի գիտավորությամբ. թուրքերը ուզածնին կընեն և զայն բանի տեղ չեն դներ, իսկ ուրիշ ոչ մեկ պաշտպան ունինք մենք: Հիմա քեզի կհարցնեմ՝ ի՞նչ ընելու է այս պայմաններուն մեջ:

Նրա ու աշքերը վրեժխնդրեն կայծկլտում էին, առաջ ցցված ծնոտով վրաս կենտրոնացած դեմքը քարացել էր: Նորություն չէին մեր շուրջը դարձող դավադրությունները, բայց առաջին անգամ էի լրիվ հաշիվ տալիս ինձ:

— Է, դժվար չէ պատասխան դտնելը, — ասաց խիստ հուզված. — բայց ես պատասխան ունիմ ու նոր չէ, որ կըսեմ ասիկա, անհրաժեշտ

է դավաճանները կանխել և անմիջապես հոշակել Հայաստանի առկախությունը, — Հարեց գնդապետը՝ Հատ-Հատ շեշտելով բառերը ու նրանց արժեքի համաձայն բացուխուփ անելով բերանը:

— Երեք օր առաջ Թիֆլիս վերջին փորձ մը ըրի. գարձյալ խենթ կարծեցին զիս և ո՛չ Ազգային Խորհրդի անդամներուն, ո՛չ ալ մեր գործիշներուն շկրցի հասկցնել, թե որքա՞ն անհրաժեշտ է ժամ առաջ անկախություն հոշակել: Այժմ կերթամ Մոսկվա, Հոնկե պիտի անցնիմ Արխանգելսկ ու նավ առնելով շիփ-շիտակ պիտի մեկնիմ լուղոն՝ Հայկական անկախության ի նպաստ գործը ձեռնարկելու համար: Նախական բոլոր աշխատանքները կատարած եմ և տարակույս շունիմ հաշողության վրա. ստուգապես զիտեմ, որ անզիացիները համամիտ են ատոր: Հիմա քեզի կառաջարկեմ այդ գործին մեջ միանալ ինձի. ճամփու ծախսդ կը հոգամ, տեղ հասնելի ետքն ալ դյուրին է, ի՞նչ կ'ըսեմ...

Խոսքերի վերջավորությունն այնքան անակնկալ է, որ զարմացած նայեցի:

— Զգե այդ «կամավորական» ծրագիրներդ, ոչ թե մեկ, այլ տասը «Մուրադ» խել շեն կրնար մեր կացությունը փրկել, մենք չեմ, որ պիտի որոշենք պատերազմի բախտը: Ա՛լ կրավի, քիչ մըն ալ խնայենք մեր արյունը ու քաղաքականության նայինք, դուն կրնաս ինձի օգտակար ըլլալ հայկական շրջաններու մեջ ձեռնարկելիք աշխատանքներուս ուղղությամբ. ազգօգուտ առաջարկը, որ կըսեմ, մեծ ապակա կիսուտանա անձնապես և քեզի:

— Գնդապե՞տ, ներկցեք, բայց ես ոչ մի կոշում շունիմ գիվանապիտական աշխատանքների համար. այդ իմ գործը չէ, — ասացի ես...

— Ափսէ՞ս, — ասաց նա և զինվորականի համաշափ քայլերով մեկնեց:

Ամափի տակից մի անգամ էլ դուրս նայեց արեւը՝ հրավառ աշքերով, ու շքացավ: Վարը, նամի ամբարի դուրս ցցված բարձրության վրա, շարվել էին ուսւ Հակախորհրդային ճամփորդներն ու երգում և խմում էին: Բաժակաճառերում հաճախ լսում էի կալեդինի ժանոթ անունը, որ քիչ առաջ ինքնասպանությամբ վերջ էր տվիլ իր բախտախնդիր կլանքին, ու մղձավանցի պես նորից ինձ պատկերացավ Երզնկան:

Առավոտը ուշ հասանք Տուապսի: Ծնորհակալությամբ բաժանվեինք գնդապետից՝ իր ընձեռած աշակցության համար Փոթիում, ու

Վար իշանք: Հյումից գեղեցիկ, ամֆիթատրոնաձև իրար թիկունք հեծած շենքերով Տուապսեն ներսից անհրապույր էր: Հայ տարագիր բազմություններ բռնել էին ծովեղերքի բացերը, գնում էին կամ պիտի գնային դեպի հյուսիս: Քաղաքում վրացիները տոնական տրամադրության մեջ էին: Վրաստանը հոչակված էր անկախ պետություն: Հակընդդեմ տրամադրությունների այս Բարեկոնում ոռուներն էլ իրենց հովազերն ունեին. քաղաքացիական կոփները թավալզլոր տարածվում էին երկրի մեջ: Ռուսաստանի հարավում շարժման նախաձեռնությունը պատկանում էր Դոնի կազակներին, որոնք դեռ ապրիլից ասպատակում էին երկիրը՝ ատաման Կրասնովի գլխավորությամբ: Նրանք տիրում էին ծովեղերքի մեծ մասին, Դոնի շրջանին, ու, տարածվելով դեպի արևմուտք և հյուսիս, սպառնում էին գրավել բովանդակ Հյուսիսային Կովկասը:

Արմավիրը նույնպես խճողված էր հայ տարագիրներով. մի շաբաթ առաջ Թիֆլիսից մեկնած հոծ բազմությունների ծայրը արդեն հասել էր այստեղ: Հասնողները ճյուղավորվում էին երկու ուղղությամբ. ոմանք դեպի հյուսիս-արևմուտք, դեպի Ռուսով, ոմանք էլ դեպի հարավ-արևելք, Վլադիկովկասի ուղղությամբ. այս վերջին ուղղությամբ դադիրում էին Թիֆլիսի հայերը և առհասարակ կովկասահայերը: Իմացա, որ խմբով մեկնել են և Թաթիկյանները դեպի էսենտուկի: Տարագիրների ստվարագույն մասը արևմտահայեր էին, որոնք ահա երրորդ տարին է, որ վայրից վայր էին դադիրում: Սառում էին, որ Թիֆլիսից ուղղավիրական ճանապարհով հազարավոր սայլեր են շարժվում, կառքեր, ինքնաշարժներ, դրաստներ, ֆուրգոններ՝ բեռնավորված տնային իրերով, ամեն տեղից գաղթող տարագիրներով դեպի Վլադիկովկաս, իր թե մեկ մարդու տեղը ֆուրգոնում արժեր մինչև 10 000 ռուբլի: Հայոց աշխարհը տեղահան եղած շարժվում էր. երկի այդպես էին դադիր առաջ մեր բազմությունները դեպի Լեհաստան, Բալկաններ և այլուր ...

Մուրադը շկար. Սեպուհի հետ մեկնել էր Յարիցին՝ այնտեղից Մուկվա կամ Բաքու գնալու դիտավորությամբ: Հովնանը պնդում էր գնալ Յարիցին: Առանց Մուրադի նրա կյանքը արժեկուրկ էր. ևս այլևս միտք չէի գտնում դեղերումների մեջ, առավել ևս, որ հայտնի չէր, թե պիտի գտնենք արդյոք Մուրադին Յարիցինում և երբ գտնենք, ի՞նչ ոլիտի անենք. ծավալուն թշվառությանը դիմագրավելու համար անհրաժեշտ էին այլ միջոցներ, և իրավացի էր գնդապետ Թորգոմը,

որ ցաք ու ցրիվ եղած առանձին գործիչներն այլևս չեին կարող շռաշփելի գործ տեսնել: Ես բաժին հանեցի Հովնանին դեռ երգնկայում եղբօրից ստացած դրամներից, և նա նույն օրը մեկնեց Յարիցին՝ ինձ լուր տալու խոստումով:

Օրվա մեծ մասն անցկացնում էի տարագիրների հետ, կայարանում: Նախկինների վրա կուտակվում էին նորերը ու կարծես վերջ չկար: Գաղթը տեղի էր ունենում անկազմակերպ: Եկվորները թողնված էին իրենց բախտին: Օրեցօր բազմանում էին հիվանդները: Տեղական ոռու բնակիչների վերաբերմունքն էլ զնալով դառնում էր անբարյացակամ, կյանքի անհրաժեշտությունից մղված՝ արևմտահայ տարագիրները հանդես էին գալիս շուկայում ամեն տեսակ գործերով, առևտուր անում, սպառնում հետ մղել հրապարակից ոռու մսավաճառներին. ուանշպար հայը ոռուների աշքում դառնում էր «շնուր»...

Աջակցում էի տեղական հայերից կազմված գաղթական մարմնի աշխատանքներին և ջանք չէի խնայում օգնել այդ թշվառներին, ինչով և ինչպես կարող էի: Ամեն մի մայր, երեխա հիշեցնում էր ինձ հարազատներիս, որոնց երեակայում էի դեռ ողջ Արաբիայի անապատներում, իհարկե, գոյության ավելի ծանր պայմաններում: Բայց երկար շտեղցին այդ աշխատանքներս. գլխացավ, կոտրտուք, տաքությունն անպակաս էին ինձնից: Երբեմն գլուխս պտտվում էր ուշագնացության աստիճան, ինչպես մի ժամանակ երեանում: Պարզվեց, որ վարակված եմ տիֆով: Տակնուվրայությունների այդ օրերին միակ բարեկամներս Թաթիկյաններն էին: Թեև շատ անհաճո էր, բայց ժամառաջ անհրաժեշտ էր մեկնել էսենտուկի, քանի դեռ ի վիճակի էի շարժվելու:

Մի խումբ կովկասահայ տարագիրներ գնացքում վիճում էին Բաթումի դաշնագրի մասին, որի համաձայն, իր թե, Հայաստանը հըռաշկված է անկախ պետություն: Ոչինչ շեմ հասկանում. աղոտ կերպով հիշում եմ Փոթին, նավը, գնդապետ Թորգոմին: Կարծես հնոցի մեջ եմ. գնացքի դիմումից կողմանը ծակծկում է ուղեղս: Երբեմն հաջողվում է ինձ լարել ճիգերս ու զրուցից մի բան հասկանալ:

— Թակա՛րդ է, եղբա՛յր, և ոչ թե անկախություն, — գոլում է մեկը, — տասներկու հազար քառակուսի կիլոմետր տարածություն ու ամեն կողմից թուրքերով շրջապատված մեկ միլիոն հայեր ... ինչպես կարող է ապրել այդպիսի մի պետություն:

— Դու հասկանո՞ւմ ես, թե ինչ է կատարվում. ի՞նչ անեին, ուրիշնչով կարելի է մի քիչ շունչ առնել այս տեսական մղձավանդից,— ճշում էր մեկ ուրիշը:

— Ուրեմն, եթե մեր զոհերը նվազագույն շափով հաշվենք մեկ միլիոն երկու հարյուր հազար մարդ, պիտի գանք այն եզրակացության, որ նորաստեղ Հայաստանի ամեն մի քառակուաթ մետք հողի համար զոհաբերել ենք մի մարդ,— դասնորեն ասում է երրորդը:

Բոլորն էլ շատ մարդասեր են. թեև հայտնել եմ, որ վարակված եմ տիֆով, բայց չեն վախենում և ամեն կերպ խնամում են ինձ: Ե՞րբ էր, շփում, որ նրանցից մեկի օգնությամբ հասա Թաթիկյանների մոտ շատ ծանր վիճակում: Երկհարկանի մի շենք էր՝ պարտեզով:

— Ոչի՞նչ, ոչի՞նչ, կանցնի,— ասում էր պարոն Նշանի՝ օգնելով ինձ հանվել:

Ապա տարբերում եմ տիկին Զվարթը, Անահիտը, Զեփյուռը և մի ուսւ մարդ, որ բժիշկ էր: Գլուխս արձնի պես ծանր, ոսկորներս կարծես ջարդված էին:

Անցավ երեք շաբաթ. գոյությունս պարտական էի Թաթիկյաններին և հատկապես Անահիտին, որ երկար, անքուն գիշերներ անցկացրեց անարիս մոտ՝ քրոջ հոգածությամբ խնամելով ինձ: Նա բծախնդրությամբ հետևում էր բժշկի պատվերներին և խստությամբ գործադրում: Հիվանդությանս ընթացքում նա յուրացրել էր ինչ-որ իշխանություն, որ հաճախ ինձ ջղայնացնում էր: Եվ սակայն մի բան հարկադրում էր ինձ երեխայի պես հնազանդվել նրան և հպատակությունս ընդունել: Անահիտն էր, որ վազվզում էր ամեն տեղ կաթ, մածուն դտնելու, որ այդ օրերին դյուրին գործ չէր: Օրը օրին համոզվում էի, որ այդ աղջիկը տարբեր է իմ տեսած բոլոր կանանցից: Երբեմն ինձ թվում էր, որ կյանքս շատ թանկ է նրա համար. այնքան ջերմ հոգածություն էր արտահայտում իմ հանդեպ: Բայց լավ դիտելով՝ միշտ դալիս էի այն եզրակացության, որ կարծես ավելի շատ նրան զբաղեցնում էր հիվանդության դեմ պայքարելու գործը, քան անծա: Երբեմն հոր հետ վեճ էր ունենում իմ շուրջը. ըստ պարոն Նշանի՝ չէր կարելի արգելել ուտելը, երբ հիվանդը ախորժակ ունի. և իրավունք ուներ, որովհետեւ կյանքումս այնպես քաղց չէի զգացել, ինչպես այդ ծանր օրերին: Բայց զուր բան էր: Անահիտը բժշկի պատվերից մազաշափ անգամ չէր շեղվում, եթե անգամ անոթությունից մեռնեի: Հաջորդ շաբաթ, երբ բժիշկը հայտնեց, թե «ճգնաժամը» անցել է, և այսուհետև սկըռ-

փում է «կազզուրման շրջանը», մայր ու աղջիկ դաշն կոած կարծենք որոշել էին ինձ պայթեցնելը: Մինչ տիկին Զվարթը մայրական հոգատարությամբ ու գորպով գոհանում էր միայն ինձ հանդիմանելով թերացումիս համար, Անահիտը ուղղակի հրահանգում էր կառշել բժշկի պատվերներին և ուտել այն, որ արտոնված է:

Երզնկայի նահանջից ի վեր աղոտացել էր սրտիս մեջ ուրվագծված սիրո շենքը, որ կառուցվել էր ինքն իրեն երեք տարի առաջ: Բայց ահա նորից նրա խնամքը, հոգածությունը, անվերապահ մտերմությունն անասիլի հրձվանքով լցնում էին պարապ հոգիս, և ինձ օրին համակում էր արևի պես պայծառ հողեկան մի զինովություն: Անհամբերությամբ սպասում էի, երբ նա բացակայում էր տնից:

Հենց որ ապաքինվեցի, Անահիտը բարեխաննեց իր խանդավառությունը, մի տեսակ պաղեց ու կարծես տիրեց, որ առողջացա և իրեն ալլաս անհելիք շմնաց: Այժմ իր ընթացքը նույնն էր, ինչ վերջին անգամ Թիֆլիսում՝ քաղաքավար, բարեկամական ու երեմն միայն մտերմական: Ժամանակի մեծ մասն անցկացնում էի պարտեղում, փարթամ, տերեւախիտ ծառերի ստվերների տակ՝ ընթերցանությամբ:

Հուլիսի վերջերին այնքան կազզուրմած էի, որ կարող էի վերադառնալ Արմավիր: Բայց ինչ անելու, ինքս ինձ երեսակայում էր «գործի» մեջ, որ փաստորեն առաջ էլ գոյություն շուներ. կատարել զաղթականական հանձնաժողովի, որ երևի արդեն լուծված էր, այս կամ այն հանձնարարությունը: Նոր էի հասկանում, թե որքան անպատճառ էի կյանքի համար. հայրենիքից մեկնեցի ուսանելու վարդագույն հեռանկարներով, բայց մտա արյան ու ավերածությունների մեջ և դարձա կիսակատար մի հայդուկ: Ճի՞շտ էր արդյոք կյանքիս այս ընթացքը, անհրաժեշտ չէ՞ր արդյոք հիմնական փոփոխություն: Ու երբեմն թվում էր, որ կյանքի բուն իմաստը անձնական անդրոր գոյության մեջ է. համեստ մի գործ, ընտանիք, երեխաներ, ինչպես ապրում է մարդկանց մեծ մասը: Բայց ամեն անգամ հիշում էի անցած ճանապարհու, հարազատներին, ընկերներիս անթաղ շիրիմները և զգում էի, որ չեմ կարող երջանիկ լինել այդ կյանքով: Ի՞նչ էր մտածում արդյոք Անահիտը, իրոք շահեկա՞ն էին այն բոլոր զրքերը, որ կարդում էր նա, թե՞ ուզում էր մի բանով զբաղված լինել: Տանը, ճաշի և ընթրիքի ժամանակ նա արտահայտում էր մտացիր վիճակ և հաճախ արժանանում էր մոր կամ հոր դիտողությանը: Երբեմն էլ համակվում էր անզուսպ զվարթությամբ, որ արտահայտվում էր ընդուստ ծիծա-

Նվար իշանք: Հեռվից գեղեցիկ, ամֆիթատրոնաձև իրար թիկունք հեծած շենքերով Տուապսեն ներսից անհրապույր էր: Հայ տարագիր բազմություններ բռնել էին ծովեղերքի բացերը. գնում էին կամ պիտի գնային դեպի հյուսիս: Քաղաքում վրացիները տոնական տրամադրության մեջ էին: Վրաստանը հոշակված էր անկախ պետություն: Հակընդդեմ տրամադրությունների այս Բաբելոնում ոռւսներն էլ իրենց հուզդերն ունեին. քաղաքացիական կոփները թավալգլոր տարածվում էին երկրի մեջ: Ռուսաստանի հարավում շարժման նախաձեռնությունը պատկանում էր Դոնի կազակներին, որոնք դեռ ապրիլից ասպատակում էին երկիրը՝ ատաման Կրասնովի գլխավորությամբ: Նրանք տիրում էին ծովեղերքի մեծ մասին, Դոնի շրջանին, ու, տարածվելով դեպի արևմուտք և հյուսիս, սպառնում էին գրավել բովանդակ Հյուսիսային Կովկասը:

Արմավիրը նույնպես խճողված էր հայ տարագիրներով. մի շաբաթ առաջ Թիֆլիսից մեկնած հոծ բազմությունների ծայրը արդեն հասել էր այստեղ: Հասնողները ճյիղավորվում էին երկու ուղղությամբ. ոմանք դեպի հյուսիս-արևմուտք, դեպի Ռուսով, ոմանք էլ դեպի հարավ-արևելք, Վլադիկովկասի ուղղությամբ. այս վերջին ուղղությամբ դադիւմ էին Թիֆլիսի հայերը և առհասարակ կովկասահայերը: Իմացա, որ խմբով մեկնել են և Թաթիկյանները դեպի Էսենտուկի: Տարագիրների ստվարագույն մասը արևմտահայեր էին, որոնք ահա երրորդ տարին է, որ վայրից վայր էին դադիւմ: Ասում էին, որ Թիֆլիսից ուղղավիրական ճանապարհով հազարավոր սայլեր են շարժվում, կառքեր, ինքնաշարժներ, գրաստներ, ֆուրգոններ՝ բեռնավորված տնային իրերով, ամեն տեղից գաղթող տարագիրներով դեպի Վլադիկովկաս, իբր թե մեկ մարդու տեղը ֆուրգոնում արժեր մինչև 10 000 ռուբլի: Հայոց աշխարհը տեղահան եղած շարժվում էր. երկի այդպես էին դադիւն դարեր առաջ մեր բազմությունները դեպի Լեհաստան, Բալկաններ և այլուր ...

Մուրադը շկար. Սեպուհի հետ մեկնել էր Յարիցին՝ այնտեղից Մուսկա կամ Բաքու գնալու դիտավորությամբ: Հովնանը պնդում էր գնալ Յարիցին: Առանց Մուրադի նրա կյանքը արժեզուրկ էր. ևս այլևս միտք չէի գտնում դեգերումների մեջ, առավել ևս, որ հայտնի չէր, թե պիտի գտնենք արդյոք Մուրադին Յարիցինում և երբ գտնենք, ի՞նչ պիտի անենք. ծավալուն թշվառությանը դիմադրավելու համար անհրաժեշտ էին այլ միջոցներ, և իրավացի էր գնդապետ Թորգոմը,

որ ցաք ու ցրիվ եղած առանձին գործիչներն այլևս չեին կարող շոշափելի գործ տեսնել: Ես բաժին հանեցի Հովնանին դեռ երզնկայում եղբօրիցս ստացած դրամներից, և նա նույն օրը մեկնեց Յարիցին՝ ինձ լուր տալու խոստումով:

Օրվա մեծ մասն անցկացնում էի տարագիրների հետ, կայարանում, Նախկինների վրա կուտակվում էին նորերը ու կարծես վերջ շկար: Գաղթը տեղի էր ունենում անկազմակերպ: Եկվորները թողնված էին իրենց բախտին: Օրեցօր բազմանում էին հիվանդները: Տեղական ռուս բնակիչների վերաբերմունքն էլ գնալով դառնում էր անբարյացակամ. կյանքի անհրաժեշտությունից մզված՝ արևմտահայ տարագիրները հանդես էին գալիս շուկայում ամեն տեսակ գործերով, առևտուր անում, սպառնում հետ մղել հրապարակից ռուս մսավաճառներին. ունշպարհայր ռուսների աշխում դառնում էր «ջնուդ»...

Աջակցում էի տեղական հայերից կազմված գաղթական մարմնի աշխատանքներին և զանք չեի խնայում օգնել այդ թշվառներին, ինչով և ինչպես կարող էի: Ամեն մի մայր, երեխա հիշեցնում էր ինձ հաբագատներիս, որոնց երևակայում էի դեռ ողջ Արարիայի անապատներում, իհարկե, գոյության ավելի ծանր պայմաններում: Բայց երկար շտկեցին այդ աշխատանքներս. գլխացավ, կոտրտուք, տաքությունն անպակաս էին ինձնից: Երբեմն գլուխում պտտվում էր ուշագնացության աստիճան, ինչպես մի ժամանակ երևանում: Պարզվեց, որ վարակված եմ տիֆով: Տակնուվրայությունների այդ օրերին միակ բարեկամներս Թաթիկյաններն էին: Թեև շատ անհաճո էր, բայց ժամառաջ անհրաժեշտ էր մեկնել էսենտուկի, քանի դեռ ի վիճակի էի շարժվելու:

Մի խումբ կովկասահայ տարագիրներ գնացքում վիճում էին Բաթումի ղաշնագրի մասին, որի համաձայն, իբր թե, Հայաստանը հըշակված է անկախ պետություն: Ոչինչ չեմ հասկանում. աղոտ կերպով հիշում եմ Փոթին, նավը, գնդապետ Թորգոմին: Կարծես հնոցի մեջ. գնացքի դիսկուլոցը ծակծկում է ուղեղս: Երբեմն հաջողվում է ինձ լարել ճիգերս ու զրուցից մի բան հասկանալ:

— Թակա՛րդ է, եղբա՛յր, և ոչ թե անկախություն, — գոշում է մեկը, — տասներկու հազար քառակուսի կիլոմետր տարածություն ու ամեն կողմից թուրքերով շրջապատված մեկ միլիոն հայեր ... ինչպես կարող է ապրել այդպիսի մի պետություն:

— Դու հասկանո՞ւմ ես, թե ինչ է կատարվում. ի՞նչ անեին, ուրիշ ի՞նչ ձևով կարելի է մի քիչ շունչ առնել այս տեսական մղձավանդից, — ճշում էր մեկ ուրիշը:

— Ուրեմն, եթե մեր զոհերը նվազագույն շափով հաշվենք մեկ միւսն երկու հարյուր հազար մարդ, պիտի գանք այն եղբակացության, որ նորաստեղծ Հայաստանի ամեն մի քառակուսի մետր հողի համար զոհաբերել ենք մի մարդ, — դառնորեն ասում է երրորդը:

Բոլորն էլ շատ մարդասեր են. թեև հայտնել եմ, որ վարակված եմ տիֆով, բայց շեն վախենում և ամեն կերպ ինամում են ինձ: Ե՞րբ էր, շդիտեմ, որ նրանցից մեկի օգնությամբ հասա Թաթիկյանների մոտ շատ ժանր վիճակում: Երկհարկանի մի շենք էր՝ պարտեզով:

— Ոչի՞նչ, ոչի՞նչ, կանցնի, — ասում էր պարոն Նշանը՝ օգնելով ինձ հանվել:

Ապա տարբերում եմ տիկին Զվարթը, Անահիտը, Զեփյուռը և մի ուսում մարդ, որ բժիշկ էր: Գլուխս արձճի պիս ժանր, ոսկորներս կարծես շարդված էին:

Անցավ երեք շաբաթ. գոյությունս պարտական էի Թաթիկյաններին և հատկապես Անահիտին, որ երկար, անքուն գիշերներ անցկացրեց սնարիս մոտ՝ քրոջ հոգածությամբ խնամելով ինձ: Նա բծախնդրությամբ հետևում էր բժշկի պատվերներին և խստությամբ գործադրում: Հիվանդությանս ընթացքում նա յուրացրել էր ինչ-որ իշխանություն, որ հաճախ ինձ զղայնացնում էր: Եվ սակայն մի բան հարկադրում էր ինձ երեխայի պիս հնազանդվել նրան և հպատակությունս ընդունել: Անահիտն էր, որ վազվզում էր ամեն տեղ կաթ, մածուն գտնելու, որ այդ օրերին դյուրին գործ չէր: Օրը օրին համոզվում էի, որ այդ աղջկը տարբեր է իմ տեսած բոլոր կանացից: Երբեմն ինձ թվում էր, որ կյանքը շատ թանկ է նրա համար. այնքան շերմ հոգածություն էր արտահայտում իմ հանդեպ: Բայց լավ դիտելով՝ միշտ գալիս էի այն եղբակացության, որ կարծես ավելի շատ նրան զբաղեցնում էր հիվանդության դեմ պայքարելու գործը, քան անծա: Երբեմն հոր հետ վեճ էր ունենում իմ շուրջը. ըստ պարոն Նշանի՝ չէր կարելի արգելել ուտելը, երբ հիվանդը ախորժակ ունի. և իրավունք ուներ, որովհետեւ կյանքումս այնպես քաղց չէի զգացել, ինչպես այդ ժանր օրերին: Բայց զուր բան էր: Անահիտը բժշկի պատվերից մազաշափ անզամ չէր շեղվում, եթե անզամ անոթությունից մեռնեի: Հաջորդ շաբաթ, չը բժիշկը հայտնեց, թե «ճգնաժամը» անցել է, և այսուհետև սկըռ-

վում է «կազդուրման շրջանը», մայր ու աղջիկ դաշն կոած կարծեա որոշել էին ինձ պայմանել: Մինչ տիկին Զվարթը մայրական հոգատարությամբ ու գորովով գոհանում էր միայն ինձ հանդիմանելով թերացումիս համար, Անահիտը ուղղակի հրահանգում էր կառշել բժշկի պատվերներին և ուտել այն, որ արտոնված է:

Երգնկայի նահանջից ի վեր աղոտացել էր սրտիս մեջ ուրվագծված սիրո շենքը, որ կառուցվել էր ինքն իրեն երեք տարի առաջ: Բայց ահա նորից նրա ինամքը, հոգածությունը, անվերապահ մտերմությունն անասելի հրճվանքով լցնում էին պարապ հոգիս, և ինձ օրը օրին համակում էր արևի պիս պայծառ հոգեկան մի դինովություն: Անհամերացությամբ սպասում էի, երբ նա բայցակայում էր տնից:

Հենց որ ապաքինվեցի, Անահիտը բարեխառնեց իր խանդավառությունը, մի տեսակ պազեց ու կարծես տիրեց, որ առողջաց և իրեն այլս անելիք չմնաց: Այժմ իր ընթացքը նույնն էր, ինչ վերջին անգամ Թիֆլիսում՝ քաղաքավար, բարեկամական ու երբեմն միայն մտերմական: Ժամանակի մեծ մասն անցկացնում էի պարտեզում, փարթամ, տերեւախիտ ժառերի ստվերների տակ՝ ընթերցանությամբ:

Հուլիսի վերջերին այնքան կազդուրված էի, որ կարող էի վերադառնալ Արմավիր: Բայց ինչ անելու. ինքս ինձ երեակայում էր «գործի» մեջ, որ փաստորեն առաջ էլ գոյություն շուներ. կատարել գաղթականական հանձնաժողովի, որ երեխ արդեն լուծված էր, այս կամ այն հանձնարարությունը: Նոր էի հասկանում, թե որքան անպատճաստ էի կյանքի համար. հայրենիքից մեկնեցի ուսանելու վարդագույն հեռանկարներով, բայց մտա արյան ու ավերածությունների մեջ և դարձա կիսակատար մի հայտուկ: Ճիշտ էր արդյոք կյանքիս այս ընթացքը, անհրաժեշտ չէր արդյոք հիմնական փոփոխություն: Ու երբեմն թվում էր, որ կյանքի բուն իմաստը անձնական անդորր գոյության մեջ է. համեստ մի դործ, ընտանիք, երեխաներ, ինչպես ապրում է մարդկանց մեծ մասը: Բայց ամեն անզամ հիշում էի անցած ճանապարհու, հարազատներին, ընկերներին անթաղ շիրիմները և զգում էի, որ չեմ կարող երջանիկ լինել այդ կյանքով: Ի՞նչ էր մտածում արդյոք Անահիտը, իրոք շահեկա՞ն էին այն բոլոր զրբերը, որ կարդում էր նա, թե՝ ուզում էր մի բանով զրադված լինել: Տանը, ճաշի և ընթրիքի ժամանակ նա արտահայտում էր մտացիր վիճակ և հաճախ արժանանում էր մոր կամ հոր դիտողությանը: Երբեմն էլ համակվում էր անդուսպ զվարթությամբ, որ արտահայտվում էր ընդուստ ծիծա-

զով։ Ամեն պարագայում, մեր հարաբերությունները գնալով այնպիս բարդանում էին, որ նա խուսափում էր մենակ լինել ինձ հետ։

Անստուգություններով հոգեալիս գեղերում՝ օրերիս մեծ մասն անցկացնում էի ամառանոցի հարավային բլրաղարդ շրջանում։ Հոյակապ էր թիկունքում արևի ճառագայթների տակ պլաղացող Կովկասյան լեռնաշղթան՝ իր ձյունազարդ էլերուսով։

Իրիկնամուտ էր, դառնալով դեպի տուն՝ բռնեցի այլ ուղի, որ երկարում էր ամառանոցի ծառախիտ շրջանով։ Անհամար թոշուններ խմբված էին տերեախիտ ծառերին, ծլվլուն, հնչեղ, անհասկանալի լեզուներով ազմկում էին։ Այդ իրադանցման մեջ ծառերն ու բլուրները նիրհում էին հավիտենական խաղաղությամբ։ Իջնելով բլուրներից՝ տեսա Անահիտին, որ մի գիրք թեր տակ՝ համբաքայլ գնում էր։ Հանցանքում բռնված երեխայի պես հանկարծակիի եկավ ու գողեց։

— Զարմանալի՞ բան, բնավ չգիտեի, որ այստեղ եք ...

— Ու, իհարկե, զլիսիս մեջ միտք ծագեց մի անգամ էլ այս կողմով անցնել, — ասացի ես՝ հազիվ զսպելով հուզում։

Նա վայրկենապես իրեն գտավ, զվարթորեն սկսեց խոսել օրվա անցուդարձերի, հարևանների մասին, որոնք իմ հիվանդության ժամանակ խզել էին իրենց հարաբերությունները և այժմ նորից աշխատում էին մոտենալ։ Համատարած աղետներից անտեղյակ՝ նրա հոգին վըրդովվում էր այդ առթիվ։ Ապա հանկարծ զայրութին հաջորդում էր մի տեսակ հրճվանք, որ հարևանները «բարոյապես» պարտված են։ Այն ժամանակ նա ժպտում էր և մերթընդմերթ նայում ինձ երկար արտեղանունքների միջից կիսաբաց աշքերով։ Իր բոլոր խոսքերը ավելի քան պարզ բաներ էին, բայց նա ճառագայթում էր՝ մղված ներքին խորը հրճվանքից։ Այո՛, նա երջանիկ էր, իր տասնվեց տարիները չէին վիճակել նրան ոչինչ, բացի անզիտակից հաճույքից։ «Այժմ կամ երբեք» անընդհատ անցնում էր զլիսով։ Բայց ինչպես սկսել։ Ես զրեթե չէի լսում նրա շաղակրատանքները, բայց զգում էի, որ իրավունք շունչմ նրա այդ անհոգ զվարթությունը խանգարելու։ Հասանք տուն։ Ինձ համակեց տհաճությունը, որ լավագույն առիթը փախցրի ...

Հաջորդ օրը նստած էի պարտեզում փոքրիկ Սեղիկի հետ, որ հավաքել էր ոստերի մի խուրծ և խնդրում էր ինձ դանակով կտրել համաշափ մեծությամբ, երբ հայտնվեց Անահիտը՝ մի նամակ ձեռքին։ Հասցեազրված էր Արմավիր, գաղթականական հանձնաժողովի նախագահ Սեֆերյանին՝ ինձ համար։ Գրում էր Հովնանը, որ Յարիցին է

հասել և միացել Մուրադին, որ տեղական խորհրդային ուժերի հրամանատար Պետրովը ընդունել է Մուրադին և Սեպուհին մեծ պատիվներով և նրանց տվել բոլոր հնարավորությունները մեկնելու թաքութուրքերի դեմ կովելու համար։ «Անմիջապես մեկնի՛ր հոս, Վոլգա գետի վրայով երեք օրեն պիտի ըլլանք Բաքու», — հարում էր Հովնանը։ Բայց նամակը գրված էր մոտ ամիս ու կես առաջ ու նամակադրոշմ չկարուի»

— Ո՞վ բերեց։

— Մի հայ մարդ։

— Զհարցրի՞ր, թե ո՞վ է։

— Մողղոկցի մի հայ վաճառական, անունը մոռացա. կարևո՞ր է, — Հարեց Անահիտը մտազրադ։

— Ոչինչ, երեկ դեռ այստեղ է, կգտնեմ։

— Կարող եմ Ձեզ օգնել, դեմքը հիշում եմ. լուսնյակի պես կլոր, շատ կարմիր թշերով, այսպես գոգավոր փորով, — ասաց նա՝ օդում գծելով մի կիսաբոլորակ և հանկարծ ընդունած ծիծաղեց...

Հարևան «Աստորիա» հյուրանոցում դյուրությամբ գտանք նրան։ բակում, ծառերի ստվերների տակ, ճաշակով շարված սեղաններից մեկի մոտ նստած՝ անժամանակ ճաշում էր։ Տեսնելով Անահիտին՝ իրարանցավ. նետելու պես հետ քաշեց տակի աթոռը, մյուս ձեռքով հանեց օձիքից կրծքին փոված անձեռոցիկը, նետեց աթոռին, մոտեցավ, հետ գնաց։

— Հրամմեցե՞ք, հրամմեցե՞ք, խնդրեմ նստեք, պատիվ ունիմ ... օրիորդ մեկ սո՞ւրճ, գարեջո՞ւր, ոչի՞նչ, ինկ դո՞ւք, ինչպե՞ս կարելի է ...

Վերջապես, կարգի ընկանք։

— Արմավիրում խաղաղ է, — հարցումներիս պատասխաններով ասում էր նա, — բայց Մողղոկում իրարանցում կա։

— Ո՞վ է իշխում այնտեղ։

— Շատ դժվար է ասել, նախանցյալ առավոտ խանութից ճերմակ դրոշակ էինք կախել, բայց երբ իմացանք, որ բոլցեիկները հաղթել են, իհարկե, անմիջապես վար առինք այն, բայց մինչև տնից խանութ հասավ կարմիր դրոշակը, ճերմակները հաղթեցին, բնականաբար, նորից ճերմակը կախեցինք։ Հաջորդ առավոտյան դեռ լույսը շրացված տղին դուրս ուղարկեցի՝ հասկնալու, թե ո՞վ է իշխում. դուրս եկավ՝ կարմիրները. ճերմակը վար առի, կարմիրը կախեցի ու եկա այս կողմերը։ Հիմա ո՞վ կարող է ասել, թե ով է իշխում։

— Ներեցեք, ինչպե՞ս ընկավ նամակ Ձեր ձեռքքը։

— Հա, այդ պիտի ասեի, Բաքու էի, այնտեղից հասա Արմավիր:

— Բաքո՞ւ էիք:

— Այո՛:

— Ե՞րբ:

— Քիշ առաջ:

— Ինչպե՞ս են:

— Ո՞վ:

— Քաղաքը, հայե՞րը...

— Քաղաքը լավ չէ, կոփվ կա, հայերը վնաս չունին, առյուծի պես կովում են,— ասաց նա՝ բռունցքները դնելով սեղանին:

— Ուրեմն, կոփվը դեռ շարունակվո՞ւմ է:

— Իշարկե:

— Ե՞րբ եք թողել Բաքուն:

— Մոտ շորս-հինգ օր առաջ,— ասաց՝ հովհարածև դարձնելով մատները:

— Ասիթից օգտվեցի և թիշերախովի ղորամասի հետ մեկնեցի Դերբենդ, այնտեղից՝ Արմավիր...

— Բիշերախո՞վ ասացիք:

— Այո՛, շատ քաջ զորավար է, բայց հուլիսի 25-ի գիշերը ստիպած եղավ նահանջել:

— Այսօր օգոստոսի 8-ն է, ուրեմն, Բաքվից մեկնել եք երկու շաբաթ առաջ:

— Այդպես, իրավ եք, այնքան դեսուդեն ընկանք, որ օրերի հաշիվն էլ մոռացանք:

— Այդ հաշվով, ուրեմն, Դերբենդ—Բալաջարի գիծը դեռ աղա՞տ է:

— Ինչպե՞ս չէ, Բալաջարին գտնվում է հայոց հրամանատար Համազասպի ձեռքում:

— Իսկ Մուրադը այնտե՞ղ է:

— Մուրա՞ծ...

Նա գրանից դուրս քաշեց մի մեծ գունավոր թաշկինակ ու սրբեց ճակատի քրտինքը: Մուրադի մասին, դժբախտաբար, ուինչ շպիտե, բայց լսել է. այնտեղ է. «Հայոց հրամանատար» է:

— Այստեղ ինչպե՞ս է կյանքը,— հարեց մողղուցին՝ դառնալով Անահիտին, հասկացնել ուղելով, որ ինձ հետ զրույցը վերջացավ: Ճաշարանի գներից դատելով՝ բավական թանկ է երնում:

Բայց Անահիտը, իր մտքերով տարված, չհասկացավ հարցումը ու

շքմեղանքով ժպտաց: Շատ բան կարելի շեղավ հասկանալ այդ հայածված հայորդուց: Բայց այդքանն էլ հերիք էր ինձ ալեկոֆելու համար....

Երբեք այդպիսի հոգեկան երկվություն չէի ապրել, ինչպես այդ գիշեր: Աշխատ առջևից չէր հեռանում Հովնանը՝ իր ջզուտ ու բարձր հասակով, դժգույն ու ուկրացած դեմքով: Մանր, կասկածոտ աշքերը կարծես նայում էին ինձ մթության միջից՝ դառնապին մեղադրանքով: Այո՛, լավ թե վատ, նա շարունակում էր իր ուղին: Ու մի՞թե այդպես չէին ամենքը. Հենց նույն ինքը՝ Մուրադը, որ քաշություն ունեցավ սիրած կնոջը արտոնել, որ անձնասպան լինի, որ լեռան գլխից հեռաղիսակով տեսավ, թե ինչպե՞ս են տանում դեպի մահ հարազատներին, որ ցավից կրծոտեց հրացանի կոթը՝ անկարող արձակելու մահառիթ գնդակը դահիճներին, որպեսզի տարագիրները շվնասվին...

Տարակույս շկար, որ ես էլ պարտավոր էի մեկնել Բաքու, բայց շատ հզոր էր կաշկանդում: Անձնականն ու հանրայինը դատօղությամբ հաշտեցնել անզոր էի. մնում էր մի ելք՝ կտրել ու նետել այդ հանգույցը... Ինձ պատկերանում էր Բաքուն, որի գաղց օդը, փոշին, միակ պարտեղի թոքախտավոր ծառերը, խենթի պես վազվող անցորդները, փոքրիկ սրարշավ կառքերը, ծանրորեն նստած բարձրաբերձ շենքերը հիշում էի գեռ այսպես, ինչպես տեսել էր երեք տարի առաջ, Ռոստովից Թիֆլիս անցնելիս: Ինձ թվում էր, որ ամեն մի քայլափոխիս պատահում եմ մեկն ու մեկին՝ ծեպեճուն, Հովնանին, Սահակին, Վարդանին, Նշանին, ու գտնում էի, որ կյանքի միակ իմաստը ընկերոջ հետ հանդիպելն է որմէ տեղ: Ապա հիշում էի մեր անցած զժոխային ճանապարհը՝ Վժանը, Զորսը, Զիլիկը, հիշում էի շմշկածագյուն, կարծես տեսնում էի շմոր վազքով մեզ մոտեցող ձին, ճառագլթող լուսաստղի տակ ձյուներին ընկած դիակը, բաց ու պաղած աշքերը...

Լուսաբացին ընդուռ արթնացա մի ծանր երազից. իբրև թե պետել եմ ու մտել գերեզման, ուր գտնվում են հարազատներս: Գերեզմանը բավական ընդարձակ է, քարաշեն, բայց խոնավ: Միայն մի կանթեղ լուսավորում է անթափանցելի խավարը: Մերոնք շատ ուրախ են, որ, վերջապես, մեռել եմ, մանավանդ հարսներն ու երեխաները: Վերջինները ցատկում են ուսերիս՝ հրճվանքից խենթացած: Բայց մայրս խիստ դժուն է. նա լաց լինելով մեղադրում է ինձ, որ շուտ եմ մեռել և առանց իրենց վրենց վրեժը լուծելու՝ իշել գերեզման....

Դրսում անձրեսում էր, հովը բեկրեկում էր ծառերի տերևների անձրեսար խշխշոցը: Լուսանում էր. շիփ-շիտակ վեր ցցված բարդու մի սատը ծայրով շփում էր պատուհանս՝ շանչածե թաթի պես:

Առավոտյան դուրս նայեցի պատուհանից: Քմահաճուքով լաց եղած և արտասուքը աշքերին լճացած ծիծաղկոտ երեխայի պես էր երկինքը: Արեւ շողջողում էր ծառերի կատարներին: Ներքեսում, հավանաբար, խոնավ էր: Բայց ըստ սովորության այնտեղ էր բացվում թեյի սեղանը: Անահիտը, ինքնաեռի մոտ կանգնած, լցնում էր թեյամանը: Ներքեւ իջա՝ նրա հետ խոսելու վճռական որոշումով. «այո կամ ոչ», պիտի ասեի նրան: Բայց երբ մոտեցա, ամբողջ վճռականությունս լքացավ:

— Բարի լուս....

— Բարի լուս...

— Կուզեի քեզ հետ խոսել, որովհետեւ վաղը մեկնում եմ,— ասացի վերջապես:

Հանկարծ գոշեց.

— Ո՞ւր:

— Բաքու:

— Բայց ինչո՞ւ...

— Երեկ լսեցիր մողղոկցուն, նամակն էլ գիտես:

— Բայց չէ՞ որ դուք դեռ կազդուրված չեք,— գոշեց նա, ապա, հանկարծ զղալով, ծանրորեն շնչեց ժպտալով:

Զգացի, որ խնդիրը նրան սաստիկ հուզեց: Սիրտս դողում էր, ու էլ խոսք չէի գտնում ասելու:

— Իհարկե, դուք գիտեք, բայց շեմ կարծում, որ ձեր այդ որոշումը շատ հաճելի կլինի հայրիկին,— ասաց՝ ինքն իրեն գտնելով:

— Պարոն նշանը դյուրությամբ կհասկանա ինձ, բայց խնդիրն այն է...

Ու մնացի:

— Ի՞նչ խնդիր:

— Կարծում եմ քեզ հայտնի է...

Վճիտ աշքերով անթարթ նայում էր երեսիս, կարծես շունչը պահել էր: «Եթե մերկացումս ժխտե, ուրիմն վերջացած է. մեկ խոսք այլն չեմ ասի»,— որոշեցի ես: Հանկարծ նա սաստիկ կարմրեց, վար առավ աշքերը, դեմքը ընդունեց անորոշ արտահայտություն: Սիրտ առաւ:

— Ճիշտն ասած, ես ինքս էլ շեմ հասկանում ինձ. նախապես կարծում էի՛ քո հանդեպ մեջս արթնացած զգացմունքներս հաղթահարել եմ, բայց քանի գնաց, խորացավ: Երբեմն ինձ թվում է, որ կարող եմ հույս ունենալ փոխադարձության: Բայց, իհարկե, դու ու մի հիմք շեմ տվել ինձ...

Այստեղ մտքիս կապը կորցրի:

— Մի խոսքով, թեև դեռ շուտ է, բայց կարո՞ղ եմ արդյոք հույս ունենալ, որ երեք-չորս տարի հետո ...

— Հայրիկը գալի՛ս է,— ասաց նա այլայլված:

— Աղջի՛կս, խոնավ չէ՛, ավելի լավ չէ՛ր թեյը ներսը խմեխնք, — ասաց պարոն նշանը՝ մոտենալով:

— Ո՞ւ, հայրի՛կ, արեւ արդեն մեզ հասավ: Ու անտարբերությամբ հարեց:

— Գիտե՞ս ինչ, հայրի՛կ, Սողոմոնը մեկնում է:

— Ո՞ւր:

— Բաքու:

— Բաքո՞ւ:

Ինձ այնպես թվաց, թե Անահիտը լուրջ չի համարում այդ, և խիստ վատ զգացի ինձ:

— Այո՛, վաղը երեկոյան պիտի մեկնեմ,— ասացի հորը, որ զարմացած նայում էր:

Կարդաց ստացածս նամակը, պատմեցի մողղոկցու ասածները, մտածեց:

— Ի՞նչ ասեմ. քանի որ այս ժանր օրերին առիթը քեզ մեր դուռը բերեց, բնական է, որ հորդ առաջ ես պատասխանատու եմ նկատում ինձ քեզ համար: Գոնե ես այդպես պիտի զգամ նրա հանգեպ, եթե, Աստված շանե, քեզ մի բան պատահի: Բայց կարծում եմ, որ հայրդ էլ ոչինչ չէր կարող ասել այս դեպքում. մենք վաղաժամ ծերացանք, անպետքացանք. հիմա եթե քեզ էլ ետ պահենք, էլ ի՞նչ խղճով կարող ենք ապրել: Գնա՛, բայց զգուշ եղիր...

Անահիտը, որ շարում էր թեյի բաժակները, բոի մեջ հավաքած բոլոր զգալները զրնգոցով նետեց մի բաժակի մեջ և նստեց:

— Լեցո՞ւր, աղջի՛կս,— դարձավ նրան պարոն նշանը ու խոսք արավ Մուրադի մասին, որով հմայված էր ...

Հաջորդ առավոտյան էսենտուկիի անդորրը խռովվեց. տեղ հասավ փախստականների մի ստվար խումբ, որ զալիս էր թարվեց:

Առույգ, ճարպոտ, գողավոր փորերով, լավ հագնված, ձեռքի ճամփորդական փայլուն պայուսակներով այդ մարդիկ բնավ նման չէին մեր սովորական տարագիրներին՝ նավթարդյունաբերողներ, կառավարիչներ, վաճառականներ, զարդեղներով պճնված կանայք, աղջիկներ, ապա նորից տղամարդկանց շարքեր, որոնք, սագերի պես աղմկելով, անցան: Նրանք կանգ առան «Աստորիա» հյուրանոցի մոտ: Գիշերը տեղ հասած տղամարդկանց մի խումբ դուրս գալով մոտեցավ. նրանք շառացյունով համբուրեցին կանանց, որոնց պրապտուն աշքերը դառնում էին դեսուգեն լայնեղը ամառային գլխարկների տակ: Շատ նիհար ու բարակ մեկը բացականշություններով պարզում էր նրանց էսենտուկիր կյանքի, գժնդակ պայմանները: Ու հանկարծ ամբոխի մեջ տարբերեցի պոլսեցի Ասոնին՝ Սրառուի զինակից ընկերոջս: Թունդ եղած՝ մոտեցա: Բայց երկար շտեղ ուրախությունս. Մուրադը սպանված էր, Բաքվի ժամերը հաշվված էին. Թուրքերը հասել էին արվարձաններին...

Գ Լ Ռ Ի Խ Ե

ՊՈԼԱՐԻՄ

Էսենտուկին դարձել էր մի փոս, որից դուրս գալու մասին մտածելն արդեն ավելորդ էր: Անահիտը, մի երկու օրվա խուսափումներից հետո, վերականգնել էր իր պարզ ընկերական ընթացքը: Ոչինչ չեր փոխվել իր վերաբերմունքի մեջ, միայն այժմ ինձ հետ «գուշ-ով» էր խոսում: Ես էլ պահանջ չունեի անդրադառնալու ինձ հուզող հարցին: Արդեն օրվա մեծ մասն անցկացնում էի կմոնի մոտ, որ բաքվեցիների մի խմբի հետ տեղավորվել էր հարևան «Աստորիա» հյուրանոցում: Երեկոները, երբ տուն էի դառնում, Անահիտն ինձ էր ուղղում իրեն համար մութ մնացած ընդհանուր խնդիրների մասին հարցումներ, որոնք քիշ-քիշ մասնավորվելով՝ դառնում էին բաքվեցիների շուրջ՝ որը որի կինն է, ի՞նչ են աղջիկների անունները, ի՞նչ կրթություն ունեն, շեմ կարծում, որ խարոյաշ մազերով աղջիկը բավական գեղեցիկ է, մի քիչ քիթն է երկար, և այլ հարցումներ, որոնց մեջ իմաստ չկար:

Սիափեհմբերի երկրորդ կեսին թուրքերը մտան Բաքու: Տարագիրների մեծ հոսանքի ծայրը մեզ էլ հասավ: Փախստականների մեծ մասը ճողովրել էր Պարսկաստանի, Պետրովսկի, Կրասնովոդսկի ուղղությամբ: Քաղաքում ջարդվածները հաշվվում էին քսանից երեսուն հազար մարդ...

Այդ օրերին տակավին խճճվում էր համայն Ռուսաստանի վիճակը: Հակախորհոդային զինված շարժումները ծավալվում էին օրեցօր: Ամեն տեղ ծնունդ էին առնում խորհուրդներին հակամարտ կազմակերպություններ: Նախապես տեղական ընույթ կրող ընդհարումները ստանում էին ծավալուն քաղաքացիական պատերազմի հանգամանք: Զեխոսլվակները գրավում են Կազանը, Սիմբիրսկը, Ռևֆան և միջին Վոլգայի շրջանը՝ հայտարարելով այդ հողերը «Սահմանադիր ժողովի երկիր»: Համառ կոհվներ են տեղի ունենում եվրոպական Ռուսաստանի հարավ-



ծում էի ամենաբարձր բաներ: Ես գտել էի խնդրի լուծումը, նախ պիտի լուծեի մորս և հարազատներիս վրեժը, ապա՝ պիտի ուղեի անքաժան լինել նրանից մինչև մահ, եթե բախտը ինձ ժպտար: Պիտի ուղեի այդ ամենը պարզել նրան հանդարտորեն, բայց, ավա՞ղ, այդ շնորհքը արված չէր ինձ:

Ներս մտավ ուղեկցողը ու տեսնելով, որ ճրագի պատրուզը հատնելու վրա է, հանգրեց, բայց նորը չդրեց: Կիսախավարի մեջ այլու լավ չէի տեսնում Անահիտին: Գյուղացին խոմփում էր՝ անօրինակ ձայներ արձակելով քթից: Վագոնի ապակիները ցնցումից շխկը կում էին միօքինակ: Ամբողջ օրը լցվեց ու պարզվեց մեր վագոնը զանազան ուղղությամբ ճամփորդողներով:

Իրիկվան դեմ հասանք նովոռոսիյսկ: Մի նավ մեկնում էր դեպի Փոթի: պարոն Նշանը այդ առիթից օգտվեց: Որքան մոտենում էր բաժանման ժամը, այնքան Անահիտի հետ խոսելու պահանջը սրվում էր մեջս: Բայց այժմ էլ ինձ մի բոպի ազատ չէր թողնում պարոն Նշանը՝ ջանալով համոզել, որ գնամ իրենց հետ: Բարոյաբերվում էի, մտածում էի, որ ավելի լավ է նամակով հայտնեմ ասելիքս:

Արդեն մեկնում էին. Անահիտը մոտեցավ ինձ ու թախծոտ ժպիտով ասաց.

— Ուրեմն՝ այսպես ...

— Այո՛, բայց ես քեզնից պատասխան չստացա...»

— Ի՞նչ պատասխան:

— Հարցումիս պատասխանը, որ արի քեզ երկու ամիս առաջ պարտեզում:

— Ի՞նչ արժեք ունի հիմա...

— Ինձ համար շատ մեծ ...

— Արի մեզ հետ թիֆլիս, — ահա իմ պատասխանը:

— Պատվո խոսք, որ պիտի գամ, միայն խոսք տուր, որ պիտի սպասես:

— Ա՛խ, Աստված իմ, էլ ի՞նչ խոսք:

— Որ պիտի սպասես, — համառեցի ես ...

— Լա՛վ, տեսնենք ո՞վ ավելի խոստմասպահ պիտի լինի մեղնից ...

Նավը մեկնեց, գնալով փոքրացավ: Հեռվից, շատ հեռվից դեռ տարբերում էի մի ձեռք, սպիտակ մի թաշկինակ...

* * *

Մթնշաղ էր, տեղում էր մեղմ անձրեւ: Գնում էի դեպի կայարան՝ պատահելով սակավաթիվ անցորդների: Ի՞նչ էի մտածում, շգիտեմ: Զգում էի, որ այլևս նետվել եմ մի հանապարհի վրա, որից դարձկա առանց հաջողության: Կայարանում արտակարգ եռուցեռ էր տիրում: Ամեն մարդ գնում էր թուցկաձև մի հաղորդագրություն՝ սեփական աշքերով կարդալու համար. պատերազմը վերջացել էր. Գերմանիան ընդունել էր զինադադարի պայմանները: Երկու ժամ անց մեկնեցի Օդեսա:

Մուլլոսի զինադադարից անմիջապես հետո համաձայնական պետությունները դարձել էին Սկ ծովի տերն ու տիրականը, ուստական հղերքներում հայտնվում էին անգլո-ֆրանսիական ռազմանավեր. Աւկանայում, Գոնի շրջանում, Ֆինլանդիայում, Էստոնիայում, Լատվիայում՝ անգլիական զորքեր. Ղրիմում ցամաք էին իջնում ֆրանսիացիները:

Օդեսայում տիրում էր ֆրանսո-հռունական իշխանություն: Մոտ մի ամիս տեսեց, մինչև կարողացա կարգավորել անցագրային դժվարություններս ու տեղ ապահովել ինձ «Եփրատ» նավի մեջ, որ շուտով Պոլիս պիտի մեկներ: Ճամփորդների մի բազմություն նույն կացության մեջ էր. խեղճերի համար ամեն օր ստեղծվում էր մի նոր դժվարության. ամեն մարդ անհամբեր էր օր առաջ հասնելու Պոլիս՝ երկրում մնացած իր հարազատների մասին լուր առնելու հույսով:

Վերջապես դեկտեմբերի կեսերին մեկնեցինք: Հաջորդ առավոտյան նավը կանգ առավ Կոստանցայում: Կարանտինի պատճառով արգելված էր ցամաք իշնել, և տաղտկալի մի օր ու գիշեր անցկացրինք այնտեղ: Դեկտեմբերի 18-ի առավոտյան մոտեցանք Բուֆորին: Օդը պարզ էր ու կարծր. երկնակամարի մի մասով համրաքայլ շարժվում էին սպիտակ ամպեր: Արևի մեղմ ճառագայթները ուկեզօծ հովհարի պես քիշ-քիշ բացվում էին, տարածվում՝ վարդագույն շերտեր գոյացնելով հորիզոնում: Կուպուի պես սև զրերին մերթընդմերթ հայտնվում էին շողի փշուրներ: Ամեն բոպե փոփոխվում էին ծովի և երկնքի վառվուն գույները. կարծես երկու արևելյան թագուհիներ էին, որ իրար հետ մրցելով՝ ձգտում էին պիտողին շլաշնել իրենց երփներանդ զգեստներով: Շոգենավը իր սուր կտուցով ճեղքում էր նեղուցի վաղորդյան ցերեք աշ ու ձախ նետելով կոհակներ: Տախտակամածի մի ծայրին

գամված՝ դիտում էի դիմացի ձորերն ու բլուրները. մտքով թափառում էի այդ արյունաներկ երկրի խորքերում՝ Վան, Խնուս, Էրզրում, Երզնկա, Չելեկ, Չորս, Վժան: Դալուկ արևն այժմ իր հետ բերում էր բամբակի պես ճերմակ ամպեր, որոնք խուռներամ սահում էին երկնակամարում: Բզկտված ամպերի մի հանդիսավոր թափոր էր, որ, բազում մեռած հոգիների պես, համրաքայլ ուղեկցում էր մեզ օճապտույտ նեղուցի ուղղությամբ: Կամրջակի վրա քիշ-քիշ բազմանում էին ճամփորդները: Նրանք զանազան ուղղություններ ցուցնելով՝ հաճույք էին զգում՝ տարիներ հետո նորից ծանոթ վայրերը տեսնելով: Մեր ետևում մնացին ծովի ջրերը, և Բոսֆորի նեղ անցքից ներս մտանք:

Բոսֆոր հունարեն նշանակում է «Ցուլի անցք». ըստ հունական դիցարանության՝ նրա միջով լողալով անցել է Արգոսի առաջին թագավոր Ինակուսայի աղջիկ Լոն, նույն ինքը՝ այն Լոն, որին հետո Արամազդը դարձրեց կով: Ավանդությունն ասում է, որ նախապատմական շրջանում ծովերն այստեղ բնավ հաղորդակցության մեջ չէին միմյանց հետ: Այդ են հաստատում նեղուցի եղերքների երկրաբանական ուսումնասիրությունները. երկու եղերքների խորունկ ծոցերը, սուր հանգըրվաններն այնքան համապատասխանում են իրար, որ, ասում են, բավական է մոտեցնել իրար, որպեսզի միանան ու նորից ամբողջություն կազմեն. անգամ երկու կողմերի հողի առանձին շերտերը դասավորված են համապատասխան ձևով: Հողի հատկությունը, բազալտային առատ շերտերը, գոյացած քարանձավները վկայում են նրանց հրաբրիսային ծագումը: Հավանաբար Բոսֆորը կազմվել է մի հզորագույն հրաբրիսային ժայթքումի հետևանքով, որ ճեղքել է երկրի այդ մասը ու բաժանել երկուսի: Ու մտածում եմ, թե ինչ կլիներ հայ ժողովրդի բախտը, եթե այդ ժայթքումը տեղի չունենար.... Ամենանեղ մասը թվում է ոչ ավելի, քան վեց-յոթ հարյուր քայլ. լայն մասերը, երեխ, կազմում են հինգ-վեց հազար քայլ: Կամրջակում կուտակված ճամփորդների մեջ այդ շրջաններից կան բավական հայ, հույն տարագիրներ, փախստականներ: Նաևի անիվների ամեն մի շրջանը բոլորելու հետ: Նրանց միջից լսվում են զվարթագին բացականչություններ: Եվրոպական ափին ընկած է Ծումելի գավակը Ղարադաղի ապառաժոտ փեշերին. դժվար չէ տարբերել հնագույն ամրության մնացորդները: Զախ կողմից, մյուս ափին, Գինուգյան բերդի փլատակների տակ, հանցարտ ապառաժունել է Անատոլու գավակը: Դարեր են անցել, բայց կյանքից ու մարդկանցից մոռացված այդ հնագույն բերդերի մնա-

ցորդները դեռ մոալլորեն նայում են իրար մի ժամանակ մահ սփոռղ պատերի ծակերից: Այստեղ էր, որ առաջին անգամ կամուրջ նետվեց Եվրոպայի և Ասիայի միջև, ու մի ափից մյուսն անցան Դարեհի գորգերը:

Քիչ վարը, աչ ափին, տարածվում էր ենի մահալե զուտ հունական գյուղը:

— Պանայոտա՛... հուզումով բացականչում էր մի ծերունի հույն. իրենց գյուղն է: Գրեթե դիմացը, մյուս ափին, ընկած է Հյունկյար իսկելնսին. այստեղ էր, որ բանակ զրին ուսւ զորքերը 1833-ին՝ պարտադրելով սուլթան Մահմուդին աննպաստ մի դաշնագիր, որի առթիվ նա հեծեծագին գոշեց մոտիկներին.

— Ի՞նչ անեի, ծովն ընկնողը օձին կփաթաթվի ...

Ապա եվրոպական ափին հայտնվում է Մեզարրուրնուն՝ ցից շիրմների իր տարածուն գերեզմաններով. ունայնություն է տիրում այնտեղ՝ աշխարհի ստեղծագործությունից ի վեր տեղի ունեցած պատմական բոլոր անցքերի առթիվ: Մյուս ափին, ծոցի մեջ, տարածվել է թուրքական Բեյկոսը. այստեղ կատարվեց ալեսոր պատմության վերջին խաղներից մեկը, այստեղ 1854 թ. խարիսխ նետեց անգլո-ֆրանսիական նավատորմիոց՝ նախքան ուսւների դեմ Ղրիմում գործողությունների ձեռնարկումը:

Աշ եզրով մոտենում ենք Թեոյուկ գերեի հիասքանչ դղյակների, պալատների շրջանին. մարդու աշքը չի կշտանում դիտելուց: Ըստ ավանդության, բուն Թեոյուկ դերեն առաջին խալակիրների կայանն էր: Ասիական եղերքին, նրա դիմաց, տարածված են Փաշա-բախչեի սուլթանին հոչակավոր այգիները, որոնք այժմ տերևաթափ են: Վարը, աչ կողմից, մոտենում ենք հնագույն թարապիային՝ բյուզանդական մեծամեծների ամառանոցին. եթե մարդ իմանա՞ր գալիքը, եթե այդ հիասքանչ վայրը մարդկանց շտրամադրե՛ր մեղկության ...

Ավելի վար, ասիական եղերքին, հայտնվում է բլրաթառ Զիբուխչուն՝ եղիպտական խալիֆի շքեղ ամառային պալատով: Թիկունքում ընկած է Կանլըշանը՝ իր գեղեցիկ վիլլաներով և Ֆոււատ փաշայի հոյակապ պալատով: Ապա հայտնվում է Անատոլու Հիսարը՝ հնագույն մի ամրոց, որ կառուցել է սուլթան Բայազիտը հունական տաճարի փլատակների վրա 1390 թվին, երբ առաջին անգամ պաշարվեց Պոլիսը:

Ճամփորդակից ենիքյոյցի Հակոբը, որ հինգ մատի պես դիտեր բռվանդակ շրջանը, այժմ լուր է և հուզված. ահա նա՝ իր ծննդավայրը՝

Ենի Քեոյը, որ շուրջ տասը հազար հայ և հույն բնակիչներով փռվել է ծավալուն սարի փեղերին, նեղուցի աշ ափին: Մայր, քույր, եղբայրներ.. ո՞վ է արդյոք ողջ մնացել, և ինչե՞ր են անցել-դարձել այնտեղ. հասկանում եմ ...

Նույն եղերքով իրար հաջորդում են մի շարք ավաններ, բայց մարդու աշքը կենտրոնանում է ափին շատ մոտ թերեկի վրա, ուր մի ժամանակ եղել է Արտեմիսի տաճարը: Եվրոպական եղերքով անցանք Կուրու-շեշմեն, Օրթաքյոյը, Պեշիկթաշը, Չրադանի պալատը, դրեթե քերեցինք Հոչակավոր Տումա-բախչեն, որի թիկունքում, դեպի ներս, բլրի վրա ցցված է Երլդրդ-քեռշքը. ա՞զ, որքա՞ն ցավ է կապված այդ ձյունափայլ պալատների հետ ...

Ասիական եղերքում կիսադեմով դեպի մեջ է դանում Սկյուտարը: Նավի մեջ սկյուտարցիներ կան, ըստ նրանց՝ Սկյուտար պարսկերեն նշանակում է հանգստակայցան. Քսենոփոնը այստեղ է կանգ առել, նախքան եվրոպա անցնելը: Հող չկա, ուրեմն, այս երկրում, որ իր հին ու նոր արյան շաղախը շտմնենա: Իր հին անունն է Բրիզիպոլիս՝ Ազամենոնի որդու Հիշատակին: Բյուզանդացիներն այնտեղ կառուցել են երեք մեծ Հուչարձաններ ի նշան երախտագիտության աթինացիներին՝ Փիլիպոս Մակեդոնացու զեմ նրանց տարած հաղթանակին աջակցելու համար: Այժմ այնտեղ արևի տակ ճառագայթում են բաղմաթիվ մինարենների սրածայր գաղաթները ...

Եվրոպական ափում անցանք Դարադաղը; որտեղ մեր առջև պարզվեցին Մարմարայի արծաթափառ ջրերը, որոնք հոսանուտ օղակում են Սարայ-բուրնուն:

Ենր դիմաց, ջրերում, միայնակ ցցված է Գրգ-գուլեսին: Աշտարակը շինված է Մանուել Կոմնենի օրով՝ Բոսֆորի անցքը արգելելու նորատակով, իսկ ըստ Յուրբական ավանդության՝ կառուցել է սուլթան Մեհմեդը. մի գնչուճի գուշակում է, որ նրա աղջիկը պետք է մահանա օծի խայթոցից, և սովորանոր կառուցում է այդ աշտարակը՝ իր սիրած աղջկան ալնտեղ ապահովության մեջ պահելու համար: Անցնում են տարիներ, ու Մեհմար Շեհիդի գեղեցկության համբավը տարածվում է աշխարհներ: Պարսից շահի որդին դալիս է նրան կնության առնելու թայց ահա ճակատագիր. իր բերած շքեղ ծաղկեփնջի մեջ պահված իմբ խայթում է գեղանի Մեհմար Շեհիդին՝ մահվան դուրը հասցնելով նրան: Սակայն, ինչպես պետք էր սպասել, իշխանազունք ծծում է թույնը, նրա կյանքը փրկում և կնության առնում ...

Ոսկեղջրի մեջ ենք. իրոք որ երազային է Պոլիսը: Հստ բյուզանդական ավանդության, նույն ինքը՝ Ապոլոնն է մատնանշել վայրը, ուր հետագայում կառուցվել է այն: Նրա ասիական մասը շլացնում է դիտողին անհաշիվ մինարենների գաղաթներով, իսկ եվրոպականը՝ հոյակապ պալատանման շենքերով, որոնք կարծես լողում են չըի մեջ:

Շոգինավը դանդաղորեն մոտեցավ Ղալաթիս քարափին: Կանգ առավ: Նավամատառուցը լցվեց նավին սպասող խայտաբղետ ամբոխով: Բեռնակիրները ձեռքից ձեռք են խլում ճամփորդների իրերը, որոնք կարծես տեր շունեն: Խլացուցիչ գոռում-գոլլումներ, բաղմակու հայ-հոյանքներ, կարմիր ֆեսեր շորս կողմու: Նույն բանն է ու կարծես ոչինչ շի փոխվել: Ոստիկաններն ստուգում են ու հավաքում անցագրերը: Ինձ ծայրաստիճան հիասթափություն համակեց, երբ քարափից գումա ելանք. որքան հմացիլ էր քաղաքը հեռվից, այնքան անհրապուր էր ներսից՝ նեղ ու մույլ փողոցներով, աղտոտությամբ, խեղճ ու կրակ փայտե շենքերի լարիրինթոսով, որոնց վրա տեղ-տեղ մնում էին հրդեհի հետքեր: Շովից տեսնված և ոչ մի քաղաք չի հմայում և ապա իր ներսում մարգու չի հիասթափեցնում այնքան ուժգին, ինչպես Պոլիսը: Առաջին պատահած լրագրավաճառից գնեցի «Ճակատամարտի» օրվա համարը: Վերջին երկու էջերը լցված էին մեծ ու փոքր հայտարարություններով, որոնց միջոցով մարդկան փնտում էին տեղահանված հարազատներին: Ղալաթա Սերայից մինչև Թաքսիմ բազմերանգ հասարակությունն աճապարում է ղանազան ուղղություններով: Հայ, հույն, թուրք, ամեն աղդի և կրոնի եվրոպացիներ խառնվել են իրար այնպես, որ կարծես մարդկության օրրանը Պոլիսն է: Ամեն քայլափոխիս նկատում եմ անդիացի, ֆրանսիացի դինուրներ, և այդ է միայն դրսի իշխանության հայտարարը:

Անհամեմատ ավելի մաքուր ու հրապուրի Յերայի պողոտայով հասա վերջապես «Ճակատամարտի» խմբագրություն: Մեծ սփոփանք էր այդպես շեն տեսնել այն շենքը, որ ապրել էր արհավիրքներ. Երիտասարդներ, հրավառ գեմքեր, կանայք, աղջիկներ խոնված են խմբագրատան կիսամութ աղաջամասում: Հաջորդ, ավելի հանդարտ և լուսառատ սենյակում, երկար գրասեղանի մոտ նստած է ըմբիշի արտաքինով մեկը, որ հավանարար երիտասարդ գրող է կամ բանաստեղծ: Մունցա նրան:

— Ներեցեք, կուզեի մի հայտարարություն տալ, որ փնտում եմ հարազատներիս, բայց շպիտեմ՝ ինչպես անել այդ:

— Հոս. Ո՞վ կը փնտրեք..

Ենցածից հասկացա, որ այդ գործը դարձել է սովորական աշխատանք:

— Մայրս, եղբայրս, երկու մեծ եղբայրներիս կանայք, զավակները...

— Ամեն մեկը հնարավոր չէ, մեկը եթե գտնեք, առ ալ մեծ բան է:

— Գրեցե՞ք մայրս, եղբայրս...

— Չեր հասցե՞ն:

— Հասցե շունիմ, նոր եկա:

— Որտեղե՞ն:

— Ռուսաստանից:

— Գրիշը հետ դրեց ու նայեց:

— Ինչպե՞ս հոս հասաք:

— Նավով, օդիսայից:

Ելավ:

— Ուրիշ տարագիրներ ա՞լ եկան:

— Ի՞նչպիս:

— Հոս եկեք:

Հարևան դա՞լիճում բազմություն էր խոնված:

— Պարոն Գրիգո՞ր, ահավասիկ պարոնը նոր է հասած Ռուսաստանից, — գոշեց նա:

— Ե՞րբ, ինչպե՞ս, — վրա պրծավ նա ...

Ու սկսվեց նրա ու շրջապատի մանրամասն հարցուփորձը Հյուսիսային Կովկասի տարագիրների թվի, տրամադրությունների, Անդրկովկասի, Ռուսաստանի իրադարձությունների, «Եփրատ» նավով տեղ հասածների մասին և այլն:

Գունատ մի աղջիկ, որ ամբողջ ժամանակ կանգնած ուշադիր լսում էր, տրամաթախիծ հարցրեց.

— Պարոն, չե՞ք լսած արդյոք Լևոն Մատաթյանի մասին:

— Պոլսեցի Լևոնը:

— Այո՛, Պոլսեն է:

— Ինչպե՞ս չէ ...

— Ո՞ղջ է:

— Այո՛, օրիորդ, մոտ ընկերս է:

— Ի՞նչ կըսեք ...

— Հավատացեք, էսենտուկի միասին էինք, բայց նա ինձնից շուշմական մեկնեց. պետք է, որ արդեն այստեղ լիներ:

Հստ երեսութին օրիորդի համար շատ մոտ մեկն էր Լևոնը. նա բոլորովին իրեն կորցրեց:

— Փարո՞ն, եթե գիտենայիք ծնողներու վիճակը, օր ու դիշեր կուլան. ո՞ւր կապրիք, ձեր հասցեն կրնա՞մ հասկնալ, սլարոն:

— Դեռ տեղ շունիմ, օրիո՞րդ:

— Թերեւս կը հաճի՞ք ինձ հետ լեռնի ծնողներուն երթալ:

— Ուրախությամբ, բայց նախ կուզեի մի հայտարարություն տալու մի սենյակ վարձել:

Նա կարծես վախենում էր ինձ կորցնել բազմության մեջ:

— Պարո՞ն, ես սենյակ գիտեմ, հայտարարության պետք չկա:

— Ո՛չ, ուրիշ հայտարարություն, օրիորդ, որ փնտրում եմ հարազատներիս:

— Ա՛խ, ներեցեք, թույլ տվեք ծանոթանալ, երանուհի Դանիելլան. կուզե՞ք ձեղ օգնեմ, խնդրեմ հոս ...

Ու նախորդ սենյակում բմբշատիպ երիտասարդի հետ կարգավորելով այդ գործը՝ դուրս ելանք:

* * *

Վանականի շունչ կար օրիորդ երանուհու վրա. բնավ չէր ներդաշնակում այդ Պոլսո հայուժիների մասին հեռվից կազմած գաղափարիս հետ: Աշխարհիկ ուշնչ շկար նրա մեջ: Վարժուհի էր՝ քաղաքական-հասարակական իրադարձություններին բավականին իրազեկ: Խրված էր ազգային գործերի մեջ: Լեռնի մոտ աղքականութին էր, ապրում էր Բանկալթիում, մոր հետ: Առաջին տեղեկությունը, որ իմացա, շարդարների փախուստն էր:

— Այո՛, Թալեաթը, էնվերը, Զեմալը, Հալիմ Փաշան, Պետրին և առհասարակ բոլոր նշանավոր շարդարաները դեռ զինադադարի նախօրեին փախան:

Թեև դժվար էր ենթադրել, որ այդ ոճրագործները հրապարակում լինեին, բայց այդ լուրը ինձ խորունկ հիասթափություն պատճառեց:

— Զգիտեի՞ք:

— Ո՛չ...

— Ամենեն առաջ փախավ Թալեաթ փաշան:

— Մի՞թե չէր կարելի այդ հրեշին ձեռք դցել մինչև պինադադարը:

— Օ՛, եթե գիտենայիք, պարոն, թե որքան աշխատեցավ մեր ընկեր Մուրադը, բայց ինքը գտավ իր մահը հրեշեն:

— Մուրադը, ասում եք:

— Այո՛, Համբարձում Պոյաճյանը, մեր կուսակցության սյուներեն մին, որ հայտնի էր «Մուրադ» կեղծանունվ։ Զե՞ք լսած հնչակյան Մուրադի մասին։

— Դուք հնչակյա՞ն եք։

— Այո՛, երկի դաշնակցական կարծեցի՞ք, խոստվանեցեք, որ հիասթափեցուցի ձեզ, պարոն։

— Ի՞նչ եք ասում, օրիո՞րդ, ի՞նչ տարբերություն ունի։

— Այո՛, ինձ համար տարբերություն չկա, անոնց մեջ էլ շատ բարեկամներ ունիմ։

Սենյակը, որ նկատի ուներ օրիորդը իրենց հարևան պառավ հույն կնոջ մոտ, բարեախտարար, ազատ էր։ Ավարտելով այդ գործը՝ նա ինձ առաջնորդեց իր մոր մոտ, որին թունդ հանեցին կունի մասին տված տեղեկություններու։ Եվ այն ժամանակ, երբ մայրը հարցուփորձում էր ինձ այդ մասին, աղջիկը հարեան սենյակում իրար էր խտանում բաժակ, պնակ, գդալներ։ Վայրինապես սեղանի վրա շարվեցին վաղուց շահսնված բաներ՝ կաթ, կարագ, սուրճ, պանիր և այլն։ Կեսօր էր, երբ օրիորդն ինձ ձերբակալվածի պես հանրակառք գրեց և առաջնորդեց Պեշիիթաշ՝ Լուսի ծնողների մոտ։ Այստեղ պետք է խնդիրը պարզվեր անհրաժեշտ զգուշությամբ, որ հիվանդ հայրը ուրախությունից հանկարծ շմեռներ։ Եքեղ, ընդարձակ բնակարանում, կունի ծնողներից զատ, մարդ չկար։ Ներկայացա նախապես, իբրև օրիորդի բարեկամը, ապա իբրև տարագիր և վերջապես իբրև կունի զինակիցը Խոյի շրջանում և այլն։ Սերունի հայրը հուզումից դողում էր, մայրը միենուան հարցումն անում էր տասն անգամ։ Ի՞նչ մեծ երջանկություն էր կորուստը վերականգնելը։ Երբ հանդարտվեցին, մայրը դժողոհեց, որ սենյակ եմ վարձել. պարտավոր էի ուղղակի դալ իրենց մոտ։ Իհարկե ստիպեցին մնալ ճաշին և երեկոյան դեմ հազիվ կարելի եղավ պատվել՝ նորից տեսնվելու խոստումով։

Վերադարձին օրիորդ Երանուճին կանգ առավ միենույն փողոցում՝ վերելիք բավական վար մի տեղ ու ցույց տալով գետնատարած մի շենք՝ ասաց.

— Հոն կապրի Թալեաթի հայ գործակալը։

— Հայ գործակա՞լը...

— Այո՛։

— Ո՞վ է։

— Մատնիշ Հարություն Մկրտիչյանը։ Մեր ժողովրդի լավագույն պավակների արյան գնով հարստություն զիգեց, տուն գնեց, հիմա կվայելի։ Անոր կաշմած ցանկին համաձայն ձերբակալվեցան ու ջարդվեցան Պոլսո հայ մտավորականները։

Եշմել էի։

— Ինչո՞ւ վրեժ շին լուծում։

— Ո՞վ պիտի լուծե, — ասաց դառնագին։

— Դուք ճանաշո՞ւմ եք այդ մարդուն։

— Պոլսո մեջ ո՞ր հայն է, որ չի ճանչնար այդ մատնիշ Արթինը։

— Կարո՞ղ եք ինձ ցույց տալ …

Կանգ առավ ու նայեց այնպես, որ կարծես նոր էր տեսնում ինձ։ Ապա քայլելով՝ նայեց թևի ժամացուցին։

— Օ՛, որքա՞ն ուշացանք, մայրիկը հիմա անհանգիստ է։ Այն ալ հայեական ակումբն է, կը տեսնե՞ր, քի վարը կրնաք հանրակառք առնել…

Երկար ճանապարհին միակ միտքս այդ նոր հրեշն էր՝ մատնիշ Հարությունը. անհրաժեշտ չե՞ր վրեժինդրության առաքելությունս, որ վազուց դարձել էր գոյության նպատակ, նրանից սկսել Բայց որքա՞ն ճիշտ էին օրիորդի ասածները …

— Դեռ շուտ է, այժմ հարևան ենք, չե՞ր ք վափագեր սուրճ մը առնել մեղ մոտ, — ասաց, երբ հասանք Բանկալթի։

— Զեղ բավական հոգնություն պատճառեցի։

— Ե՞ս ձեզի, թե՞ր ինձի, — ժպտալով ասաց նա։

Մայրը, բոլոր հայ մայրերի պես, օտարականի հանդեպ գուրգուրու, հանդիմանեց, որ ճաշին իրենց մոտ շինք եղել։

— Վնաս շունի, մայրիկ, պարոնին ընկերակցությունը հիմա հաճախ պիտի վայելենք, չե՞՞ր, — դարձավ ինձ ժպտալով։

Առաջին անգամը չեր, որ բախտը ժպտում էր ինձ՝ լավ մարդկանց մոտ ընկնելու օտարության մեջ։ Օրիորդն իր կոկիկ գրասեղանի վրայից վերցրեց մի շքեղ ալբոմ և մեկնեց ինձ։ Այստեղ դաշնակցական, հնչակյան և այլ մտավորականներ գրի էին օրիորդին իրենց թելադրությունները, բաղձանքները։ Հասկացա, որ մի բան էլ ես պիտի գրիմ, և իրոք.

— Զե՞ք ուզեր երկուող մը զբել։

«Եղեգնյա գրշով վրեժ երգեցի. ընդ եղեգան փող բո՞ց ելաներ», — գրեցի այնտեղ:

— Այս, Վարուժաննեն, շնորհակալ եմ. շատ կսիրեմ անոր դպուցազնավիաբերը. ինչ ուժեր կորսնցուցինք, — հարեց դառնությամբ:

— Սպանված է:

— Այո՛, ան ալ մատնիշ Արթինի կաղմած ցանկին մեջ էր:

— Իսկ Սիամանթո՞ն:

— Ա՞ն ալ:

— Զարդարյա՞նը:

— Ա՞ն ալ, ա՞ն ալ, ամենքը ...

Գրածս ուշադրությամբ ցամքեցրեց ծծունով ու նորից աշքի անցկացնելով՝ ասաց.

Կը պատմեն, որ վերջին պահուն Վարուժանը ընկերներուն ըսեր է. «Մնաք բարով, եթե ողջ մնաք, մեր որբերուն տեր եղեք. նոր զավակ մը ունեցած եմ, թող անունը Վարուժան դնեն»...

Ո՞ւր է սպանվել:

— Զանգրիեն էնկյուրի տանող ճամփուն վրա, Թյունոյի զառիվայրին տակ, ուր կը սկսի Գալայճքի սարավանդը: Կըսեն, որ այդ խմբի մտավորականներեն միայն Վարուժանը անձնապաշտպանության կդիմե, և իրը պատիժ ոճրագործները դանակով փորոտիքը դուրս թափելե ետքը, կփորեն նաև հայրենասեր բանաստեղծի աշքերը ...

* * *

Պոլսում այդ օրերին ոչ ոքի չեր զբաղեցնում ո՛չ մատնիշ Հարությունի, ո՛չ Թալեաթի և ո՛չ էլ մյուս փախած ոճրագործների խնդիրը: Տրամադրություններն այլ էին: Օրվա նշանախոսքն էր հայն ու Հայաստանը. դավանական, երկրային բաժանումներն ու նախասիրությունները արժեզուրկ էին եղել. ձգտում կար առանձին հատվածների մնացորդներից առաջ բերելու ազգային մի ամբողջություն: Կուսակցական նեղսիրտ շրջանակներից դուրս, զանգվածների մեջ հատուկ գուրգուրանքի առարկա էր այժմ «Արարատյան Հայաստանը». այնտեղ էր ծագել արշալույսը, և այնտեղից էլ կարող էր լույս սփովել հայկական խավար հորիզոնների վրա ու վերածնել ազգը:

Այս տրամադրությունները հատկապես ուռճացան 1919-ի հունվարին, երբ Հայաստանից Պոլիս հասավ հայկական պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ: Պատվիրակությունն իշել էր Թո-

քատլանի հյուրանոցը, թերա, ուր գիշեր ու ցերեկ ներս ու դուրս էին անում ամեն կարդի ազգայիններ և Հայաստանի լուրերով խանդավառվում: Ես էլ առիթ ունեցած լսելու Ա. Ահարոնյանին, երբ նա հանդես եկավ թերայի հայկական ակումբում և իր պերճ ու սահուն լեզվով պարզեց հոծ բազմության ծափերի տակ, թե ինչ գերազույն ճիգով է երկրից գուրս մղել հայ զինվորը թշնամուն, և ինչպիսի ծանր երկունքով է ծնունդ առել «Մանուկ Հայաստանը»: Այդ ժամանակների համար, իրոք որ, հրաշք էր այս: Եվ տաղանդավոր հոեսորի պատկերավոր խոսքը և՛ հուզում, և՛ խանդավառում էր ներկաներին: Քիչ վերջը, երբ նա մեկնում էր Փարիզ, Ղալաթիո քարափում խմբվել էր անհամար բազմություն՝ ողջերթ մաղթելու. զլմորած թուրքերի աշքերի առաջ շրջապատը թնդում էր «կեցցե՛»-ներից:

Ավելի մեծ խանդավառություն ստեղծվեց փետրվարի վերջին, երբ անզիփական «Սեպար» զրահանավը Ղալաթիո քարափում ափ հանեց Զավին Պատրիարքին, որ վերադառնում էր աքսորից: Դեռ նոր էինք շշշափում պետականության ուղին. հնավանդ հոգենոր իշխանությունը դեռ ամեն բան էր: Պատրիարքը ողջ-առողջ վերադարձել է. նշանակում է ազգը գեռ կանգուն է և պիտի ապրի: Եվ ոտքի վրա էր Պոլսու բազմահազար հայությունը: Սովագից մինչև Բանկ Օթոմանի շրջակացը բըռնըրված էր բազմությամբ: Սերունի պատրիարքի դարձը խորհրդանշում էր բոլոր աքսորվածների վերադարձը ...

Հայ-թուրք հարաբերությունները վատ չեին. զանգվածորեն Պոլսու հայերը դժողհելու շատ պատճառներ շունեին թուրքերից: Իսկ քաղաքական պայմանները վերջիններին հարկադրում էին համակերպության: Դեռ անցյալ տարի հուլիսին վախճանված սուլթան Ռեշադի տեղ գա՞ էր բարձրացել իշխան Վահիդէդինը՝ Մուհամեդ Զ. անվամբ, որ համարվում էր անզիփական քաղաքականության երկրպագուն և հայասեր: Պատկառելի հայեր վկայում էին, որ նույն ինքը լուսամիտ և գեղարվեստագետ զահաժառանգ իշխան Ապտ-Էլ-Մեշիդը մի ազգեցիկ հայե ասել է, թե «մեր այժմյան սուլթանը գերազանցապես բարի է և հայերի վրեժը պիտի լուծե»: Բայց ումի՞ց և ինչպե՞ս, չէր ասել: Թուրք թերթերից «Իգդամը» գրում էր, որ «բոլոր տարագրված հայերը պիտի վերադարձվեն»: Նույն պատկառելի մարդիկ դիմում արին հայասեր սուլթանի հայասեր զահաժառանգին այդ առթիվ. «Այո՛, անպայման, բոլոր աքսորված հայերը, ուր որ էլ լինեն, պիտի վերադարձեն», — ասել էր նա:

Իսկ եթե Ախնե՞ն ... «Մանուկ Հայաստանի» պես մանակ էր այն ժամանակ հայ ժողովուրդը:

Սերտ հղբայրակցության բնույթ էին ստացել արհավիրքներում բախտակից երկու ժողովուրդների՝ հայերի և հույների հարաբերությունները: Այդ օրերին հույն պատրիարքարանի վարչությունը Բերա Թաքսիմի Այա-Թրիադա մեծ եկեղեցու մեջ կատարեց հայ նահատակների հիշատակին շքեղ պատարագ ու հոգեհանգիստ, և արտասանվեցին հուզումնալից դամբանականներ, քարոզներ:

Իրենց հերթին, հայերն էլ Սուլր Երրորդության եկեղեցու մեջ կատարեցին ավելի շքեղ հոգեհանգիստ և պատարագ հույն նահատակների հիշատակին՝ մետրոպոլիտների և ֆեների հույն պատրիարքարանի մասնակցությամբ ու երգեցին «Ի վերին Երուսաղէմ», «Քանզի զքեղ օրհնեմք», «Հոգւոցն հանգուցելոց» և այլ շարականներ ու աղոթքներ:

Թնականաբար, կատարվում էին և ազգօգուտ գործեր, պատրիարքարանը հաջողել էր կազմել, կաթոլիկ, բողոքական կրոնապետերի մասնակցությամբ, համադաշին մի մարմին, որը պետք է վարեր որրախնամը, հոգար տարագիրների կարիքները և հովանավորեր Հայ Կարմիր խաչը: Շարժման մեջ էին և հասարակական ուժերը. ժրաշան աշխատանք էր թափում, հատկապես, Հայ Կարմիր խաչը, որ հիվանդանոցներ ուներ Շիշլի, Բանկալթի, Պեշիլթաշ: Որրախնամն ուներ սննդառու կայաններ դանաղան թաղամասերում և որրանոցներ, որոնք զըրված էին ավելի լավ հիմքերի վրա, քան Կովկասում: Հայ բժիշկների միությունը բացել էր հիվանդապահների արագ դասընթացներ, որին ցուցակագրվում էին հարյուրավորներ: Օր օրի վերականգնվում էին նախկին գրական ակումբները, կազմվում էին նոր միություններ, ընկերություններ, ինչպես օրինակ՝ Հայաստանի Օգնության միությունը, Նպաստից հանձնաժողովը, Աշխատանքի տունը, Տիկնանց միությունը և այլն: Նորից թատերական ներկայացումներ էին տրվում, կազմակերպվում էին հանդեսներ, երեկույթներ՝ ի նպաստ Հայաստանի նույն նպատակին էին ծառայում բազմաթիվ թեյասեղաններ, հացերութենք համաձայնական պետությունների համաձայնական պետությունների դորավարներին կամ օտար թերթերի թղթակիցներին ի պատիվ, որոնք կամ արդեն հայասեր էին, կամ, ըստ ենթադրության, համակլում էին այդ ողով՝ շոալլված պատիվների ընթացքում:

Պոլսեցիներին նպաստավոր էր թվում նաև քաղաքական դրությունը. մարտի 20-ին Ռիլսոնի առաջարկությամբ Վերսալի վեհաժողովը

որոշել էր Մերձավոր արևելք ուղարկել Ամերիկայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Խոալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնախումբ՝ քննելու Օսմանյան կայսրությունից անջատվելիք երկրամասերի վիճակը և ժողովուրդների կարիքները: Հայ ազգային քաղաքական շրջանակները ջանաւմ էին հայկական հարցով հետաքրքրել Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որոնց ներկայացուցիչները վեհաժողովում և հատկապես ինքը՝ նախադա՞ Ռիլսոնը, ինչպես ասում էին, հայերին շատ մոտ էր ընդունում իր սրտին և տրամադրություն էր ցույց տալիս ստանձնելու Հայաստանի հոգատարությունը:

Հույսներով, ակնկալություններով, արյան ու կրակի միջից անցնելով՝ հայ ժողովրդի մնացորդներն ամեն տեղ արտահայտում էին հզորագույն կենսունակություն և իբրև ազգություն ապրելու մի շենքած համառություն: Մեծ աղքերի շարժառիթների մեջ իր նկատմամբ այդ ժողովուրդը տհավ միայն բարին, իսկ երբ հասկացավ իր սխալը, արդեն ուշ էր: Այժմ նրա մնացորդները ձեռք էին զարկում ամեն բանի, ինչ կարող էր օգտակար լինել ապրելու համար: Նկատելի էր միայն մի բաց՝ հեղափոխական տրամադրությունների շնորհացումը: Շատ ուժիքներ էր ստացած հակահեղափոխական և հակամարդկային հարվածը, և զանգվածորեն հնձված նախկին հեղափոխական գործիչների դիրքերը մնացել էին թափուր ...

Արդեն ունեի բարեկամներ, ընկերներ, որոնք միաբերան վկայում էին մատնիչ Հարություն Մկրտիչանի կատարած տխուր դերի մասին: Նա՛ էր Պատրիարքարանի մեջ տեղի ունեցած իրավաբառությունների գեկուցողը Թալեաթին՝ տեղահանության նախօրյակին, նա՛ էր և Արմաշական կարգալույթ ծանոթ վարդապետ Համազասապը, որոնք հսկողության տակ էին առել Հայաստանի պատմիրակության անդամներին, մի տարի առաջ, Թալեաթի կառավարության օրոք. նա՛ էր, որ կազմել էր աքսորված և կոտորված հայ հեղափոխականների, մտավորականների ցանկը. նա՛ էր, որ մինչև վերջին հնարավորությունը հետապնդել էր Պոլսո հասարակական հայ ուժերին անխափ: Արդեն ստուգված էր, որ մատնիչի կազմած ու ոստիկանապետ Պետրիի միջոցով Թալեաթին հանձնված սկս ցանկը բաղկացած է եղել երկու հարյուր հիսուն մտավորականներից, որոնցից փրկվել է հաղիկ տառը մարդ: Այդ փրկվածներն էլ մեծ մասամբ նրանք էին, որոնց թշվառականը մուծել էր սկս ցանկի մեջ անհոգ թյուրիմացությամբ: Այսպիս, օրինակ՝ Մինաս Զերապի փոխարեն մատնիչ էր փաստաբան եղբորը՝ Գասպար Զերապին, որ հաջո-

դել էր հաստատել գործված սխալը և մահից ազատվել. շիմանալով, թե որն է գաշնակցական Մկրտիչ Հովհաննիսյանը, միաժամանակ մատնել է նույն անվամբ երկուախին, որոնցից մեկը փրկվել էր. հայտնի հեղափոխական Հայկ Թիրյաքյանից կատ, մատնել էր մի այլ «Հայկ», որ հաջողել էր մահից ազատվել՝ շնորհիվ միայն Թիրյաքյանի պնդումին, որ իսկական Հայկը ինքն է. Առն Շամտանճյանին շփոթել էր Միքայել Շամտանճյանի հետ, որ հաջողել էր աքսորից վերադառնալ, և այլն:

Արդեն երկու շաբաթ էր, ինչ լրջորեն հետապնդում էի այդ հրեշին: Ամեն օր մի քանի ժամ, տարբեր ժամանակներ, լինում էի Պեղիկթաշ: Բայց մատնիչը հասկանում էր, որ ժամանակները փոխվել են, և ներս ու դուրս չեր անում, նրան կարելի էր հասնել միայն բնակարանում, սակայն մուտքի դուրը միշտ փակ էր:

Մի ժամանակ նշանավոր այս թաղի անցյալից մնացել էին Զրադանի պալատի այրված պատերը: Մատնիչը հաստատվել էր թաղի այս մասում: Գետնատարած բնակարանի դիմաց կար մի գինետուն, որ հայի էր պատկանում: Այստեղից դեպի կ վար ընկած էին նպարավաճառների խանութներ: Այստեղ բնակարան փնտրել ավելորդ էր, որը շատ անհրաժեշտ էր՝ մատնիչին մոտիկից հետամուտ լինելու համար: Թաղամասի թիկունքում հատուկ շուկաներ կային, խմորեղենի, արեկլյան գունագեղ կոշիկների, գորգերի խանութներ, որոնց տերերը, կիսախուսի աշքերով դանդաղորեն դարձնելով համրիչները, սպասում էին հաճախորդների: Վերի մասերում ցաք ու ցրիվ ընկած էին հայերի տները: Այստեղ էին ապրում պոլսեցի կեռնի ծնողները: Վարի մասը բռնում էր սրճարանների մի շարք, ուր կանաչ, ճերմակ լաշակներով, ձյան պես սպիտակ մորուքներով, փառահեղ դեմքերով ծերտնիներ պատերի տակ, շեմքերին, սրճարանների շուքերում կկղած ծուլորեն ծծում էին նարդիկնեն ու մերթ ընդ մերթ դանդաղորեն մոտեցնում շրթունքներին սուրճի մատնաշափ գավաթները:

Մարտի վերջերին մի օր փորձ արի գինետան տիրոջ հետ բարեկամանալու, բայց իմանալով, որ տարապիր եմ, անհրապույր տեսք բնութեց: Այդ օրն էր, որ մատնիչի տան շեմքում հայտնվեց մի պատանի, որ շիփ-շիտակ մեկնեց դեպի դիմքերուն ու մեկ շիշ «Մարդել» դնելով տուն դարձավ: Իրիկունը այդ մասին հայտնեցի օրիորդ Երանուհուն, որ միակ աջակիցս էր այս գործում: Սանոթների միջոցով կապ

էր հաստատել մատնիչի ազգականների հետ ու ձեռք բերել նրա նկարը: Պատանին մատնիչի միակ զավակն էր:

Հաջորդ օրը կիրակի էր: Բերայի Սուրբ Երրորդության եկեղեցում տեղի ուներ սպահանդես հայ մտավորականների նահատակության առթիվ: Ներկա էր երկսեռ խուռն բազմություն, կոմիտասյան երդախմբով կատարվում էր քառաձայն պատարագ: Տեսարանը հովիչ էր ու սրտառուց: Ներկաներից շատերը կորուստներ ունեին: Պատարագից հետո խոսեց Զավեն պատրիարքը՝ «Եթէ ո՞չ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» բնաբանով: Բոլոր նահատակները ցորենի հատիկների պիստի ծլեին ու բազում արդյունք տային ...

Իրիկունը Բանկալթիի Երիտասարդների միությունը Կարմիր համի ընդարձակ սրահում քաղաքացիական սպահանդես էր կազմակերպել: Երբ հասա, բոլոր տեղերը բռնված էին երկսեռ բազմությամբ: Մնացի պատի տակ՝ անկյունում խմբվածների մեջ:

Սպահանդեսը բացեց «Գավռոշի» խմբագիր Ե. Թոլայանը, որ մեկն էր վերապրող տարագրյալներից: Նա մի քանի խոսքով վեր հանեց նահատակված մտավորականների արժեքն ու նշանակությունը՝ Զրամիւրելով երիտասարդության ուշադրությունը գրական, հասարակական, հեղափոխական ասպարեզներում առաջացած պարապության վրա ու հորդորելով նրան օր առաջ բռնելու նահատակ մտավորականության թափուր մնացած տեղերը:

Վերապրող մտավորականներից դոկտոր Մելքոն Գյուլիստանյանը վերհիշեց այն շարաշուր շաբաթ գիշերվա իր և ընկերների ձերբակալությունը, երբ Պոլսո հայության հանրային աշքառու բոլոր գործիշներին՝ ժողովական, երևփոխական, հեղափոխական, խմբագիր, ուսուցիչ, բժիշկ, սեղանավոր, դեղագործ, վաճառական և այլն, հապճեալով հագնված, քնաթաթախ, հողաթափերով, առանց զիսարկի, իրար ետեցից առաջնորդում էին բանտ:

— Նորեկները կուգային ուրախ և արհամարհու ժպիտով, — ասում էր նա, — բայց երբ կը տեսնեին հարյուրավոր հանրածանոթ ազգային հին ու նոր գործիշներ իրենց շուրջը թախծու ու մտախոհ, իրենք ալ կիսորասուզվեին ծանր մտահոգություններու մեջ ...

Լուսանում է. ամեն մարդ հոգեական զինվում է զրսից հասանելիք օգնության հույսերով: Սպասումներ, որ «թյուրիմացությունը» շուտով կպարզվի: Մոտակա մինարեթից լսվում է մյուեզինի «Ալլահ էք-

պերը»: Բայց «Մեհտերհանե» կենարոնական բանտում քիշ-քիշ թանձ-բանում է մթնշաղը, ու նորից թագավորում խավարը: Դրսից միայն լսվում է անզիսական մարտանավերի որոտների արձադանքը ...

Ապա սկսվում է ողբերգության երրորդ արարը՝ ոև ցանկերի ստուգում, խուզարկություն, բաժանում խմբերի՝ ոչ ավելի քան քսան մարդ ամեն մի խմբում, ու դեպի դուրս: Ոստիկանության ընդհանուր տնօրեն Պետրին իր մասնավոր ինքնաշարժով այստեղ է: Խումբ-խումբ երթ՝ Այս-Սոֆիայի պողոտայով դեպի ծովելերը, Սիրքենիի ուղղությամբ: Հեծկլտանք: Ու Սարայ-բուրնով, Գյուղանեք դարաստանը: Հուղված ծովի լեռնակուտակ ալիքներով: Զատ-զատ խմբերը հասնում էին այստեղ. նորից իրար տեսնելու աստվածային մի շնորհ: Ու Շիքրեթի 67 համարի շոգենավը: Երկու հարյուր քսան հոգի՝ աղը հայ աղի, ու նույնքան էլ ոստիկաններ, զինվորներ: Ահա Մարմարան: Հողեխոռվ վերհիշումներ: Մահվան տագնապ: Հայդար-փաշա: Լույսերը մարած մի զնացք: Ապա Սենճանքոյի կայարանը: Աղջամուղը: Կենարոնական բանտի պետը կարդում է նահատակների առաջին խմբի ցանկը: Մրմունջ: Հիշատակվածները գրկախառնվում են, համբուրվում, վարիչնում: Յոթանասունհինգ հոգի դեպի Այաղ՝ Ակնունի, Խաժակ, Զարդարյան, Ճանկյուղան, Շահրիկյան, Սիամանթո, Փաշայան, Բարսեղյան, Տաղավարյան, Վարուժան, Աշբաղաջյան, Զաքարյան, Լուս Լաբենց, Զավուշյան, Թոմաճանյան ...

Եվ բանախոսը միապաղաղ կարդում է յոթանասունհինգ հոգու անուն: Մի կին բարձրածայն հեկեկում է: Դահլիճում շշուկներ են լրավում. «Ո՞վ է», «Քույրն է», «Որո՞ւ»: Բանախոսը անվրդով շարունակում է.

Արշալույս: Գալայճքեն դեպի Զանկը ... Ինչ-որ խոշոր զորանոց, որի պատուհանները տախտակներով գամված էին: Հիսունվեց անձինք՝ մի նոր ցանկ. ինձ անծանոթ անուններ: «Բայց ո՞ւր մնաց թափուր խոշոր զորանոցը, որի պատուհանները գամված էին տախտակներով», — մտածում եմ ես՝ այլևս անկարող լինելով հետևելու բանախոսին. «Պիլա թերետայութ վե մեհրամեթ, պիր այլբաժան տողսան յաշընագատար իթլաֆը», — թուրքերն կարդում է թալեաթի հրամանը ...

Հասկանում եմ. «Անխնա և առանց ողորմելու՝ մեկ ամսականից մինչև իննսուն տարեկանը ոշնչացնելու ...

Մեծ բազմություն կար, ողը ծանր էր, գլուխս պտտվում էր, ու շընշահեղձ էի լինում: Դժվարությամբ էի հասկանում բանախոսին. խոսշերը գլխիս մեջ ցատկուտում էին. «Ճելալ-Ճալեպ» ... «Զերքեղ Մեհ-

մեղ», «Վարդգես, Զոհրապ» ... լարում եմ բովանդակ ուշագրությունս: — Վարդգեղ, քեզ Բուզզարիա գնալու հրաման շեմ տա, գիտեմ, օձիքդ ազատել կուզես, բայց ճար չկա. մենք ինչ որ ըլլանք, դուն ալ մեղի հետ պիտի ըլլաս»

— Ո՞վ է ասել այդ, — դարձա հարևանիս:

— Թալեաթը՝ Վարդգեսին ...

— Զոհրապը զգալով, թե դեպի մահ կառաջնորդվին, կդիմե տանտիբողը՝ Մահմուտ Նետիմին.

— Մեղի սպանելու կտանին, կաղաշեմ միջամտեցեք, — միալարշարունակում է պատմել բանախոսը ...

Ու նորից մի հեծկլտոց խանդարում է գահլիճի գերեզմանային լուսավորությունը:

— ...Հուսկ ուրիմն հեծյալ ոստիկան զինվորներու հսկողությամբ Զոհրապ ու Վարդգես մեկ կառքի մեջ, — միալարշարունակում է բանախոսը...

Ու նորից բան շեմ կարողանում հասկանալ ... դարձյալ նույն մարդը՝ «Զերքեղ Մեհմեղ... ինչ-որ խալիլ ... Տիգրանակերտ ... Գարաքեռփրյու ...

Գլխիս կարծես սաղավարտ կա, որ արճճի պես սեղմում է, մղձավանց է և ոչ թե սպահանդես ... Հանկարծ զլուխս պտտվեց, պաղ արյան հոտ առա, սարսափը համակեց ինձ, պիտի վայր ընկնելի: Ութերիս ուժ տալով՝ հազիվ կարողացա հասնել դռանը ու երերալով զուրս ելա...

Դրսում լավ էր, երկինքը՝ վճիտ: Մտածում էի գնալ Պեհկեթաշ՝ կեռնի ծնողների մոտ, խնդրել թույլ տալ միառժամանակ այնտեղ ապրելու, որպեսզի մոտ լինեի մատնիշի քնակարանին. այլ կերպ, ահագին տարածության վրա, ոչնչ չեր ստացվի: Թիրևս կեռնն արգեն վերադրձել էր. այդ դեպում խնդիրը կուլուրանար, նրան կարող էի հայտնել դիտավորությունս:

Անցնելով զինվորական վարժարանը՝ մտա նշանթաղի պողոտան, որի բարձունքներից ճրագների տակ փողփողում էին թուժորի զրերը: Դեռ Օխլամուրի քշոշկին շհասած՝ հեռվից տեսնում եմ ճերմակ մարմարից Համբեղին մզկիթը, որի մոտ ցցված սրածայր մինարեն խաղում է աստղերի ցոլքերի տակ: Այստեղ պետք է իր մահկանացուն կնքեր 14 տարի առաջ Թալեաթի հոգեսոր հայր Համբեղը, բայց օդն ելավ հուրժալթքող կառքը «Մեծ Մարդասպանի» քթի տակ: Ո՞վ կարող էր երկա-

կայել, որ նրանից անջամհմատ ավելի մեծ մարդասպաններ պիտի ծներ այս հողը: Քիչ վարը, դեպի ներս, բարձունքին թառած «Երևա- լուղի քեռշկը» նիրհում էր ծառերի զիշերային սև ստվերների մեջ...

Հասնելով մատնիլ Հարությունի շենքին՝ տեղումս գամված մնացի: Ճրագ կար: Փողոցին նայող լուսամուտների վարագույրները քաշած շին: Դահլիճի մեջ, ձյան պես ճերմակ սփոսով ծածկված լայն սեղանի շուրջը, մի կին էր պտտվում: Նա սեղանի վրա ափսեներ էր շարում, դդալներ, դանակներ, պատառաքաղներ: Կինը հանկարծ դեպի դուրս նայեց: Անմիջապես շքացա դեպի վեր, անցա վերի մայթը ու հասնալով՝ մտա տան դիմացի զինետունը: Տերը, որ նստած էր կլոր սեղանի շուրջը, երկու տարեկիցների հետ, հարցականորեն դեպի ինձ երկարեց վիզը:

— Մեկ շիշ զարեջուր...

— Պողոս նուրար Փաշան լըլլար նե, ո՞վ գիտե ինչպես կըլլար խնդիրը, — ասաց երկու տարիքուտ հայերից պատի տակ նստածը՝ ծածկելով առջեղ դրված ծոցատերը, ապա քթի ծայրից ակնոցները տեղափոխելով ճակատին՝ նայեց ինձ:

— Մաշալլա՛հ, յոթը վիլայեթ, աշխարհի շափ հող է, պե՛, — ասաց մյուսը՝ օղու բաժակը լցնելով:

— Կիլիկիա՞ն ալ ատոր մեջ է, — հարցրեց զինետան տերը:

— Պե՛ աղբա՛ր, ի՞նչ տեսակ մարդ ես դու, քեզի կըսեն յոթը վիլայեթ, Մարաշի, Կողանի, Ջերել-Թերեքեթի, Աղանայի սանջակներու և Ալեքսանդրեթ նավահանգստին մեկտեղ մեզի կուտան, դուն նորեն կըսեն «Կիլիկիա»:

— Ապա ուրտե՞ղ են ադ սանջակները, — ցասումով պոռթկաց ակնոցավորը՝ անձնական ծանր վիրավորանք զգացողի պես:

— Բշտե ես ալ ատ կըսեմ, Համետոս աղա, — շքմեղանքով ասաց զինետան տերը ու հազար՝ կոկորդը մաքրելու ձեռվ:

— Աղեկ, լաքին երկիրը առանց բնակչության միւնույն է, թե անջրդի պարտեղ, ո՞վ պիտի երթա հոն ապրի, — ասաց երկորդը ծխելով:

— Աղբա՛ր, մեյ մը հողը ձեռք անցընեինք, անկե ետքը դյուրին է. մարդ ամենեն առաջ տո՞ւնը կմտածե, թե՞ քիրաճին:

Մեկեն, զինետան տիրոջ նշանի վրա, լոեցին. ներս մտավ գլխարց մի պատանի, որին կարծես տեսել էի:

— Հինգ շիշ «Մարդել»...

Վճարեց, շշերն առավ ու դուրս կնաց:

— Ո՞վ էր, — հարցրեց ակնոցավորը:

— Շունին մանշն է:

Հանկարծ հիշեցի, որ պատանին մատնիցի տղան էր:

— Ի՞նչ խաբար է. հի՞նգ շիշ «Մարդել», — շշնչաց երկրորդը:

— Հյուրեր ունի ...

Շփոթություն համակեց ինձ. չէ՞ որ կարող էի պատանու հետ ներս խցկվել:

— Հեյ-վա՛խ, մհկը շգտնվեցավ, որ շանսատակ ընե ու ազգի ճակտեն ատ մուրը սրբե, — հառաշեց ակնոցավորը ...

— Ատենը չէ, Համետո՞ս աղա, մեյ մը թող ազգը ինքզինքը գտնե, — ասած մյուսը:

— «Ատենը չէ», ապա եթե ան ալ Արմաշականին պես կծիկը դնե...

— Ուր ալ երթա, Հուդային վերջը պելլի է:

Հանկարծ կարծես ինձ զսպանակից վեր նետեցին, բայց մինչեւ վճարեցի, վրա հասա, ուշ էր: Մուտքի դուռը փակ էր: Հուսահատ վազեցի դեպի պատուհանը և ի՞նչ տեսնեմ. բոլորվել են սեղանի շուրջը տասից ավելի կանայք, տղամարդիկ, սեղանի գլխին, ճիշտ պատուհանի գեմ-դիմաց, բազմել է մատնիցը ու բաժակը ձեռքին՝ ճառում է: Ինձ մի վճատ կատաղություն համակեց, դուրս քաշեմ, շանթահարեմ ուղղակի պատուհանից ... Հանդուզն, սնափառ, ինքնագոհ կցցվածքը, մի քիչ կոր նստվածքը, մանր աշքերի կայծկլտուն գոհունակությունը, բարակ շրթունքներով բաց ու խուփ անող լայն բերանը, ամե՞ն բան ինձ դող էր պատճառում.

— Դուրս քաշե՞մ ...

— Դո՞ւրս քաշեիր ...

— Ուղղակի պատուհանի՞ց ...

— Ուղղա՛կի, ուղղա՛կի...

էկոթյունս փոթորկվում էր:

— Գլխի՞ն ...

— Արտի՞ն...

Հանկարծ ճարճատյունով ու դղրդյունով վար թափվեցին ապակիները. մատնիչը մահասարսուռ ետ ընկավ ու ծալվեց նստած տեղը ...

Առավոտը շուտ թերթերից իմացա, որ մատնիչը միայն վիրավոր-

ված է: Ամեն բան փշացավ: Գլխի՞ն պետք է գամեի գնդակը: Անձա-
րակության գիտակցությունս մահվան չափ ծանր էր ...

Քիչ հետո ինձ մոտ հայտնվեց օրիորդ Երանուճին՝ սովորականից
ավելի գունատ, շփոթ, բայց ժպտուն. նա ձեռքս թոթվեց.

— Կշնորհավորեմ, եղբա՛յրս, ի՞նչ զուգադիպություն, ի՞նչ հոյա-
կապ ... ու շշմած նայեց:

— Հիվա՞նդ եք:

— Սաղրո՞ւմ եք ...

— Ի՞նչ կրսեք, ինչո՞ւ պիտի ծաղրեմ:

— Չգիտե՞ք, որ մատնիշը ողջ է մնացել:

— Օ՛, անհոգ եղեք, ես արդեն այցելեցի՝ հիվանդանոցը, ուր պառ-
կած է. բարեկամ հույն բժիշկ մը ըսավ, որ ժամերը համրված են ...

Հաջորդ օրը մատնիշը վախճանվել էր:

Գ 1. Ո Ւ Խ Խ Զ

ԴՅՈՒ ԱՐԵԲԻԿԱ

Մատնիշի մահը Պոլսի հայության մեջ ընդհանուր ցնծություն առաջ
բերեց: Կուսակցության շրջանակներում հարց բարձրացավ հետամուտ
լինելու մեծ մարդասպաններին, հարաբերության մեջ մտնելու այդ առ-
թիվ Ծուսաստանի, Անդրկովկասի, Թեոլինի, Ժնևի կուսակցական մար-
մինների և ընկերների հետ: Բայց այդ խանդը շատ կարճ տևեց, ու նորից
քաղաքական հարցերը գիրակշիռ արժեք ստացան:

Երևանից նոր էր եկել Հայաստանի պատվիրակության անդամ Պա-
պաջանյանը՝ Փարիզ մեկնելու համար: Երևանում Արևմտյան Հայաս-
տանն արդեն «կցված» էր համարվում Արևելյան Հայաստանին: Այն-
տեղ պատրաստվում էին մեծ շուքով տոնելու «Միացյալ, Անկախ Հա-
յաստանի» առաջին տարեդարձը: Նույն տոնական տրամադրություննե-
րով էին տարված ընկերները Պոլսում: Մայիսի 28-ին հունական Սիլ-
լողոսի մեծ դահլիճում խուներամ բազմության առաջ այդ մասին
խոսեց պարոն Պապաջանյանը՝ մեծ ոգևորություն առաջացնելով ներ-
կաների մեջ:

Թվում էր մոտալուս նաև դիվանագիտական շանքերի պսակումը՝
Հաշտության վեհաժողովը դեռ հունվարին որոշել էր պատագրել Հա-
յաստանը և մի հոգատար նշանակել Ազգերի Պաշնակցության Ուխտի
22-րդ կետի համաձայն, որ վերաբերվում էր միջազգային մանդատ-
ներին: Սկսված փետրվարից, Հայաստանի պատվիրակությունը Փա-
րիզում էր ու գործակցում էր Ազգային պատվիրակությունը հետ: Եվ
այժմ Պոլսում օրվա հրատապ խնդիրը երկու պատվիրակությունների
կողմից վեհաժողովին ներկայացված բազմանքների «Հուշագիրն» էր:

Ցոթը վիլայեթների և Կիլիկիայի պահանջից զատ, մենք զնում էինք
Հատուցումների պահանջ Թուրքիայից՝ կատարված տեղահանություն-
ների, կոտորածների, բռնագրավումների և հայ ազգի կրած ամեն տե-

սակի զրկանքների համար, Հայկական ազգային և մասնավոր լքյալ գույքերը թուրքիայում պետք է հանձնվեին Պոլսո հոգևոր իշխանություններին և գործադրվեին հանրային կարիքների համար: Հոգատարությունը ստանձնող պետությունը պարտավորվում էր հարկադրել հայկական հողամասերը գրավող թուրքական, թաթարական և այլ իշխանություններին, մաքրել այդ հողերը, ընդհանուր զինաթափության ենթարկել բնակիչներին, արտաքսել և պատճել բոլոր նրանց, ովքեր մասնակցել էին ջարդերին, բռնություններին ու թալանին, և հեռացնել հանրային անդորրը խախտող բոլոր տարրերին, Աբով Համիդի և իթթիհատականների իշխանության օրով Հայաստանում բնակեցրած մահմեդականներին և, վերջապես, թե՛ Հայաստանի ներսում և թե՛ զըրսում միջոցներ ձեռնարկել հայ եկեղեցու զիրկը վերադարձնելու բռնի խոլամացած կանանց, աղջիկներին ու երեխաններին և հարեմներից ազատել հայ կանանց: Այս բոլորից բացի, Թուրքիան հայերին պետք է վճարեր պատերազմի ժամանակ բռնությամբ գրավված գույքերի, ինչպես նաև թուրքական հողերի վրա մնացած հայկական ստացվածքների փոխարժեքը, այլև վերադարձներ հայերից հափշտակված եկեղեցիները, դպրոցները, վանքերը՝ իրենց բոլոր հիմնարկություններով և հողերով...

Այս հուշագիրը մի վկայական է հայերիս քաղաքական հասունությունը շափելու համար: Այդ տեսակետից թուրքերը շափավոր ու գործնական էին: Պոլսում այլևս գաղտնիք չեր, որ Անատոլիայի ազգային շարժումը ուղղված էր հաղթական պետությունների և միաժամանակ հայերի ու հույների դեմ: Բոլորը դիտեին, որ նեղուցների հերոս Մուսաֆա Քեմալը, որ իբր թե Պոլսո կառավարության կողմից ուղարկվել էր Անատոլիա՝ շարժումը զսպելու, անցել էր ապստամբների գլուխը: Թուրքերը ձգտում էին ազատագրել փոքրասիական թերակղզու արևմտյան մասը հունական նվաճումներից, իդմիրի, Բրուսայի, Պոլտա հետ միասին, ազատել Պոլիսն ու նեղուցները դաշնակից զորքերից, մի նեղ հողաշերտ ձեռք բերել ելքրապական թուրքիայում՝ Պոլիսն ապահովելու համար: Ապա, մեկընդիշտ տիրանալով լիակատար անկախության, զանց առնել ազգային փոքրամասնությունների շահերն ու պահանջները և ստեղծել մի նոր թուրքիա թուրքերի համար: Միջազգետքը, Սիրիան, Փաղեստինը, ինչպես նաև ելքրապական թուրքիայի որոշ մասերը, գոնե ժամանակավորապես, համարվում էին կորած:

Միաժամանակ թուրք պետական գործիչներն ամեն տեղ աշխատում էին պատերազմի, տեղահանության, կոտորածների, ավերածու-

թյունների բովանդակ պատասխանատվությունը փաթաթել իթթիհատական երեք-չորս պարագլուխների վզին ու երկրին սպասող պատուհասները մեղմել: Մայիսի վերջերին մամուլում ծանուցվեց, որ փախատականի վիճակի մեջ գտնվող վարչապետ Թալեաթին, պատերազմական նախարար էնվերին, կրթության նախարար դոկտոր Նազրմին և ծովային նախարար Զեմալ փաշային տասն օր պայմանաժամ է տրըվում՝ Պոլսո ուղղմական ատյանին ներկայանալու համար: Հակառակ պարագայում պետք է զրկվեին քաղաքացիական բոլոր իրավունքներից, և զրավման պետք է ենթարկվեին նրանց բոլոր կալվածքները:

Նույն օրերին Պոլսո թուրք մամուլը գնահատման էր ենթարկում մոտիկ անցյալի իրադարձությունները՝ լուսաբանելով երկրին վիճակված աղետի պատճառները: Ամեն օր նոր մերկացումներ էին հանդիսավորության մասնակցելու խնդիրը որոշել էր իթթիհատի ղեկավար մարմինը, առանց դաշիճի հավանության: Կուսակցական ղեկավարներից Ռիզա Բեյը իր հարցաքննության մեջ հաստատում էր, որ պատերազմի հայտարարությունից շատ առաջ զինված խմբեր էին ուղարկվել Անդրկովկաս՝ խոռվություններ ստեղծելու նպատակով: Ելևոտական նախարար ճավիդ Բեյը, շինարարության նախարար Մահմուդ փաշան, փոստ-հեռագրական նախարար Ոսկան Բեյ Մարտիկյանը և առևտորի նախարար Սուլեյման Բեյը հրաժարվել էին իրենց պաշտոններից այդ իսկ առիթներով: Մոայլ գույներով էր նկարագրվում պետական գանձարանի կողոպուտը: Փախուստի ժամանակ, իբր թե միայն Թալեաթի տրամադրության տակ եղել է տասը հազար օսմանյան հնչուն ուկի: Կատարված խոշոր զեղծումների բույնը կազմում էր հսմայիլ Հագկը փաշային ենթակա ուղղմական նախարարության մատակարարման տեսչությունը: Զեղծումների մեջ միայն, այսպես կոչված, «վագոնների առևտուրը» միլիոններ էր կազմում:

Հունիսի տասին Պոլսո թուրքական ուղղմական ատյանը ի բացակայության մահվան դատապարտեց Թալեաթ, էնվեր և Զեմալ փաշաններին, իբրև գլխավոր ջարդարարների: Մի ամբողջ ազգի հետևողական ոչնչացման համար, որ տարիներ տևեց, մահվան երեք անվանական դատավճիռները գալիս էին սրբելու երկրի ճակատից պատմական արատը ...

Պոլսո բնկերներից մեկն ինձ առաջնորդեց պատրիարք Զավենի մոտ, որ ցանկացել էր ինձ տեսնել: Հ. Մկրտիչյանի մատնություններից

զգալիորեն տուժել էր Պատրիարքարանը: Աղջակին ժողովի խոշոր մասը քշվել ու չարդվել էր:

Պատրիարքը աշխարհի ամենաթշվառ մարդն էր, մեր պատմության ամենատարաբախտ հովանականը, որ առանց հոտի էր մնացել: Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը դեռ 1913-ի վերջերից բազմաթիվ թագրիրներով հրավիրում էր Բարձր Դուռը ուշադրությունը էր պրումի, Վանի, Բիթլիսի շրջաններում տեղի ունեցած մասնակի շարդերի, հողային հափշտակությունների, ավարառությունների վրա:

Հաջորդ տարվա վերջերին, երբ դեպքերն սկսեցին ստանալ զանդվածային բնույթ, և տեղի ունեցան Բողազ-Քյասանի, Բելուի, Պաշտառեի, Հարազանի, Սաթմանիսի, Արշամի, Հասան-Թամրանի, Տաշ-Օղլուի, Գարա-Ջորիկի և այլ հայկական գյուղերի կոտորածներն ու ավարառությունները, նորընտիր պատրիարքը ջանք շխնայեց գալիքի մեծ պատուհանները կանխելու օրինական միջոցներով: Այնուհետև, նա զրկվեց ամեն արժեքներից իշխանության աշբում: Թուրքիայում պատերազմը ծավալվելուց հետո, մինչև 1915-ի մարտ-ապրիլ ամիսները, նրա այդ դերը կատարում էին Օսմանյան խորհրդարանի անդամներ Վարդեսն ու Զոհրապը Պոլսում, Վուայանը՝ գավառում: Բայց նրանց միջամտությունները վերջացան իրենց մահվամբ, իսկ պատրիարքը Մոսուլում հազիվ ազատվեց նույն ճակատագրից: Այժմ իր տխուր, քիչ թեք աշքերը ակնոցների միջից վրաս հառած՝ նա օրհնեց ինձ ու ասաց.

— Այո՛, դավա՛կս, մատնիշ Հարություն Մկրտիչյանը երիցս գերազանցեց Վասակին ...

Ինձ համար այդ տեսակցության միակ արժեքն այն էր, որ պատրիարքի աջակցությունը խնդրեմ Թալեաթին հետապնդելու նպատակով: Բոլոր միջոցները սպառել էին ու վերջին հույսս այդ էր: Բայց այդ պահին հայտնվեցին Աղջակին ժողովի անդամներից ոմանք, և մենք ստիպված եղանք հեռանալ:

Մուր էլ լիներ Թալեաթը, պարզ էր, որ նրա հետքը կարելի էր գրտնել Պոլսում, իր կուսակցական հակառակորդների օգնությամբ: Իսկ որպա համար դրամ էր անհրաժեշտ, որ շկար: Ապարդյուն անցան օրիորդ Երանուհու բոլոր ջանքերը՝ այդ ուղղությամբ իր կուսակցության շըրջանակում որևէ գործ տեսնելու համար: Եվ այժմ հուսահատ մտադիր էր Ամերիկա մեկնել, ուր նրան հրավիրում էին ուսուցչուհու պաշտոնով: Ես ինչ անելս շգիտեի ...

Ամոան վերջերին Անատոլիայի աղջային շարժման ազդեցությունը զգալի էր Պոլսու թուրքերի վրա: Օրը օրին նրանք դառնում էին

հոխորդ ու ամբարտավան: Հայ-թուրք հարաբերությունների նախորդ փափկանկատությունները թուլանում էին:

Թուրք մտավորականությունը բաժանված էր երկու մասի, ավելի շուտ՝ քաղաքական հոսանքների «արևմտյանների» և «արևելյանների»: Առաջինները գտնում էին, որ Թուրքիայի փրկությունը հնարավոր է միայն արևմտյան պետությունների հետ համաձայնության գալով: Առանց այդպիսի համաձայնության, անկարելի է վերականգնել ու միայն բզկտված երկիրը, այլև հույս ունենալ տնտեսական, ելևմտական ծանր կացությունը կարգավորելու: Միայն համաձայնության միջոցով էր կարելի փրկել Պոլիսն ու նեղուցները:

Արեելականները, ընդհակառակը, գտնում էին, որ արևմուտքը Թուրքիայի համար միշտ շարիք է եղել, և այդ կողմից փրկություն սպասելը հիմք շունի: Անհրաժեշտ է հենվել Պարսկաստանի, Աֆղանստանի, արաբների, Հնդկների, հատկապես Ռուսաստանի իսլամների վրա և կովել արևմտյան ուժերի դեմ՝ աղջային շահերի պաշտպանության սահմաններում:

Վերջինների շարքերը արագությամբ աճում էին: Թուրք երիտասարդներ, նախկին զինվորականներ, իթթիհատական գործիչներ փախշում էին Պոլսից և խոացնում քեմալական շարժման շարքերը, որն արդեն գործունեության ճշտված ծրագիր ուներ: Արևմտականներն այժմ փաստորն կազմում էին Ֆավզի փաշայի «վաճառված» կառավարության և «գերի» սուլթանի սակավաթիվ կողմնակիցները:

Չուպահնեռաբար, Պոլսու հայերի մեջ հետզհետե նկատելի էր քաղաքական տրամադրությունների տեղատվություն, «Մեծ դաշնակիցներից» հիասթափություն: «Դաշնակից» զանազան «հայասեր» զորագարներ, Պոլսում քիչ շատ շփման մեջ մտնելով թուրքերի հետ, առանց հատուկ ջանքերի, դառնում էին նաև «թրքասեր», ինչը որ երկվություն էր մտցնում հայ-հվարապական նախկին անաղարտ հարաբերությունների մեջ: Ինում էին և այնպիսի նախկին «հայասերներ», որոնք այժմ չեին քաշվում առել, թե հայերն էլ բարի պտուղ չեն: Միջին քաղաքացին խիստ ազդվում էր նման անախորժ անակնակալներից: Բանիմաց տարրերի համար որոշելը, իհարկե, քաղաքական կացությունն էր, որ չէր կարող նպաստավոր նկատվել:

Ամենից առաջ աննպաստ եղրակացության էր հանգել զորավար Հարբիտի առաքելությունը Հայաստանի հոգատարության մասին. Հայաստանում հայ շկար...

— Դաշնակիցները պարտավոր էին հաշվի առնել մեր գերեզմանները, — ասում էին արտասվախառն աշքերով մարդիկ: Այո՛, բայց գերեզմաններով չեր կարելի պետություն կազմել:

Միիթարական չեին նաև Երևանից հասնող լուրերը, սովու ու հիվանդությունները գեռ շարունակում էին կոտորել: Անգլիան Կովկասում այս չեր ուղում հենվել որնէ հայ ուժի վրա: Պարզվել էր, որ հայր ավելի սուս է, քան ուսւը ինքը, և չեր կարելի հայի վրա հենվել, եթք հիմա իր՝ կոփվը Ռուսաստանի դեմ էր: Սուր վրդովմունք էր առաջ բերում անգլիացիների գործելակերպը Զանգեզուրի, Ղարաբաղի հարցերում, Նրանք այդ հողերը ցանկանում էին կցել Աղբքեցանին՝ հակառակ տեղական բնակչության բուռն բողոքներին: Կարսը, Շարուր-Նախիջևանը ժամանակավորապես դառնում էին անգլիական նահանգապետություններ, որոնց տակ փաստորեն հաստատվում էր թուրքական իշխանություն:

Անգլիացիների այդ ընթացքից թե առաջ՝ թուրքերն աշխատում էին ներսից պայթեցնել նորաստեղծ Հայաստանը. Կարս, Սուրմալու, Շարուր-Նախիջևան և այլն կազմում էին տեղական «անկախ հանրապետություններ» իրենց կառավարություններով, «շուրաներով» ու պայտքար մղում Հայաստանի տիրապետության դեմ: Հայաստանի հողի վրա կային «Արևելյան Կովկասի հանրապետությունը» Կարսի «շուրայով» և «Արևելյան Կովկասի» կամ «Արաքսյան հանրապետություն», որի մեջ մտնում էին Սուրմալուն, Զանգի և Վեդի բասարները, Միլին, Շարուրն ու Նախիջևանը՝ Նախիջևան կենտրոնով: Այս «Հանրապետություններից» յուրաքանչյուրը, իր հերթին, բաժանվում էր ավելի փոքր, գավառական միությունների՝ իրենց տեղական «շուրաներով»: Այդ հանրապետությունները պահում էին սեփական բանակներ՝ գինված թուրքական թնդանոթներով, գնդացիրներով ու հրացաններով, թուրք սպաների ու շավուշների հրամանատարության տակ: Ղարաբաղ, Զանգեզուր, Բեյուք-Վեդի, Դավալու, Կողբ, Շարուր, Սուրմալու, Կարսի շրջանում մինչև Սարիղամիշ արյունահեղ կոփներ էին գնում:

Գաղութներում ծնունդ էին առել հատվածական տարակարծություններ, որոնց ազդեցությունն զգացվում էր նաև Պոլսում: Որոշ շրջաններ չեին ուղում հաշտվել այն մտքի հետ, որ ստեղծված երկիրը, տվյալ պայմաններում, նույն ինքը Հայաստանն է: Ոմանք նույնիսկ ջղայնանում էին, որ կովկասահայերը յուրացել են «Հայաստան» անունը՝ «Արաբատյան հանրապետությունը» առանձին ուսւական հարց էր. մինչ-

դեռ «Հայկական ինդիրը» վերաբերվում էր Թուրքահայաստանին: Լավագույն դեպքում այդ հանրապետությունը հայության մի հատվածի երկիրն էր և ոչ թե Հայաստանը ...

Օգոստոսի վերջերին օրիորդ Երանուհին մեկնեց Փարիզ՝ այնտեղից Ամերիկա անցնելու համար: Մեծ հույս ուներ Փարիզում Թալեաթի գործով շահագրգռել, հուազպում էր ինձ և պնդում, որ սպասեմ:

Բայց անցավ մեկ ամիս, ոչ մի լուր շտացա նրանից: Սպասումների այդ օրերն անցկացնում էի քաղաքի պատմական, գեղարվեստական հիշատակարանները գիտելով: Երբեք չեմ կարող մոռանալ այն երազական տպավորությունը, որ ստացա Ղալաթիո աշտարակից քաղաքը դիտելիս՝ սեպահմքը ամսի իրիկնամուտի: Ամֆիթատրոնաձև տարածվել էր քաղաքն իր աշտարակներով, մզկիթների մեծ ու փոքր գմբեթներով ու նրբակերտ մինարեթներով: Դեպի հյուսիս, Բոսֆորի երկու եղերքներով տարածվում էին ծառերի մեջ նիրճող երազական ապարանքներ, պալատներ: Դեպի արևելք՝ ասիական եղերքում, նոճիների մեջ փովել էր Սկյուտարը՝ իր վարդագույն շենքերով, տարածուն զերեզմանցներով: Հեռվում տարբերում եմ Գատրքեոյը, հնագույն Քաղկեդոնը: Ամեն մի առանձին շրջան կարծես թե լողում էր իր բաժին շրերի մեջ, ուր բոլոր ուղղություններով համրորեն շարժվում են առագաստանավեր, մակույկներ, մեծ ու փոքր շողենավեր: Երկինքը կարծես այրվում էր վերջալույսի կրակով: Քյազիմ-փաշայի, Դիրսահանեի, Ղալաթիո շրջանները կարծես լողում էին հրդեհի մեջ: Բերան, մինչև Եիշի, պարուրվել էր վառ պղնձագույն ճառագայթներով: Մյուս կողմից, ճառագայթում էին քաղաքի ասիական մասերի մինարեթների, մզկիթների գագաթները, անհամար շենքերի պատուհանների ապակեները՝ ստեղծելով լավիկող բոցերի մի խարկանք, որին կարծես ենթակա էր իրիկվա գրկում նիրճող Պոլիսը:

Եղա և աշխարհահոշակ Այա-Սոֆիայի մեջ: Տպավորությունս շըշմեցուցիչ էր. զուր չէ, որ Հուստինիանու Մեծը, առաջին անգամ ոտք կոխելով նորակառուց տաճարը, գոշել է. «Օ՛, Սողոմոն՝, ես հաղթեցի քեզ»: Հսկա շենքը բաժանված էր անթիվ բազմերանդ ու կամարաձև մասերի, որոնց կենտրոնում ցցված առասպելական մեծության գըմբեթը թվում էր երկնքից առկախված ոսկյա շղթաներով: Խելքիս չեր հասնում, թե ծանրության և հարակցման ի՞նչ օրենքներով այդ վիթխարի զանգվածը կարող էր այնտեղ մնալ, շուրջ վաթուն մետր բարձրության վրա. կարծեմ այդ հաշիվը կազմում էր միայն Հայաստանի

Հնարիմաց Տրդատ ճարտարապետը, որը վերակառուցեց աշխարհաջըռչակ ճարտարապետներ Անդեմիոս Տրալացու և Խոհոր Մելիտացու կառուցածը, որ հետագայում քանդվեց: Եթե ստույգ է, որ բյուզանդական գեղարվեստը ներկայացնում է ինքնատիպ շաղախը քրիստոնեության, Հելլենականության և Արևելքի, ապա ուրեմն այդ տարրերի գերագույն մարմնացումն է Սուլբ Սոֆիան: Բարի և խոնարհ Քրիստոսը այստեղ զգացվում է խրոխտ, հաղթական, աշխարհակալ: Ու թեև շենքի նրբակերտ քանդակների, պատերի զարդարանքների մեջ խնամքով ծեփված են նրա կրոնի արտաքին նշանները, իսկ առաքյանների գեմքերը ծածկված ոսկեզույն աստղանկարներով, բայց հին վեհության շուրջ մնացել է առհավետ: Հնագույն բոլոր մեհյանների լավագույն քարերը, աշխարհի մարմարների բոլոր ընտիր նմուշներն այստեղ են: Թվում է, թե լույսը նրանք են ճառագայթում և ոչ թե դրսից է գալիս: Բազմերանգ մարմարե սալիկներից կազմված հատակը ոտքերիս տակ հիասքանչ գորգի էր նման, իսկ դեմս փովածք՝ քարացած ծագկազարդ պարտեզի: Ըստ երեսութին, աշխարհի այս հոյակապ տաճարը մզկիթի վերածելու համար մեծ փոփոխություններ կատարելու կարիք չի զգացվել. ծեփով քողարկել են քրիստոնեության հետքերը, գմբեթին խաչի տեղը գրավել է մահիկը, իսկ շենքին կցվել են շորս մինարեթներ, որոնցից առաջինը կառուցել է հաղթական Մուհամեդը, երկրորդը՝ սուլթան Բայազիտը, իսկ վերջին երկուսը՝ սուլթան Սելիմը:

Նույն ձեփ հարեանցի փոփոխության արդյունք է Պոլսո թուրքական հիշատակարանների մեծ մասը, որոնք իրենց կառուցվածքի մեջ կրում են Այա-Սոֆիայի ընդհանուր գծերը: Այդպիսինն է, օրինակ, Էտիրեն Գարուի շրջանում հողակավոր Գահրիի շամին՝ Միքայել Հրեշտակապետի հնամույն տաճարը. այդպիսիններն են Ակ-Սարայի շրջանում Խոչա-Մուստաֆա-փաշայի շամին, Աթ-մելիդանի Մեհմեդ փաշա շամին, Վեհհա մելիդանի Քիլիսի շամին, Ֆեների Ֆենեթի շամին և այլն:

Հոկտեմբերի վերջերին մի բացիկ ստացա օրիորդ Երանուհուց: «Երգեցիք միշտ» գրված էր այնտեղ:

«Կանցնին օրեր, կգա կրկին մի նոր գարուն վարդաբեր:

Ու մոռացված քո վիշտը հին՝ նորից կերպես վարդի սեր:

Ստորագրել էր. «Հավաստիք քրոջական անկեղծ սիրո՝ Ե. Դ.»: Գեռև Փարիզում էր. հասցե Հար: Ի՞նչ կնշանակեր աշուղ Զիվանու այդ քառյակը. Հասկացա...

Պարագաները հարկադրում էին անդրադառնալ իրականությանը և հաշվի առնել առօրյան: Դեռ Երզնկայում եղբորիցս ստացած ոսկեղբամ-

ներից մնացել էին երեք հատ: Սերբիայից ակնկալած նյութական աջակցությունը շատացա, պատերազմը քայլացել էր հորս, եղբորս գործը, ու նրանք գրեթե թշվառության մեջ էին: Թալեաթին դանելու մտասեեռումով այժմ պարզապես հիվանդ՝ քարշ էի տալիս անհմաստ մի գոյություն: Սանր երդումներով փակել էի կյանքիս բալոր ուղիները, քանի այդ հրեշը ողջ էր: Գլշերներն իրար էին հաջորդում մզգավանչալին երազները, որոնց մեջ գլխավոր գերակատարը մայրս էր: Նրան երազումս տեսնում էի գրեթե միշտ զանազան տեղեր ու տարբեր վիճակներում. իր բոլոր ասածները միշտ պտավում էին միւնույն խնդրի շուրջ՝ Թալեաթի մահը: Փոթորկու մի գիշեր նա պատուհանս ծեծեց. նայեցի, ցուց տվեց իր արյունաներկ պարանոցը: Արթնացա, սարսափահար վեր կացա, մոտեցա պատուհանին, դրսում տեղատարափ էր ... Գլշերումներս, սառը դատողությունն անզոր էին ինձ ազատելու նախապաշարումներից, որոնցով համակվել էի իս:

Պոլսում վերջին օրերին կարծում էի, որ այդ խնդրին կարող է ընթացք տալ Զավեն Պատրիարքը, որ այժմ գտնվում է Փարիզում: Արհավիրքների մրուրը քամած այդ հոգեռականը չէր կարող շնասկանալ հոգիս մաշող ցավը, որ կարող էի ամբողջությամբ հայտնել նրան առանց վարանելու, իրու խոստովանանք: Նոյեմբերին մեկնեցի:

Իրիկնաղեմ էր: Սրածայր մինարեթներին հայտնվում էին մրջնաշափ մյուեզիները՝ բարձրությունից փառաբանելու Ալլահին անցնող օրվա համար: Արեգակն իջնում էր դեպի անհունության օվկիանոսը և իր թաքստոցից մողական վրձինով փոփոխում երկնքի տեսքը՝ նոր գույներ, երանդներ պարզելով ցիրուցան ամպերին: Հեռվից երեսում էին Մարմարայի եզերքներին խարսխված հինգ-վեց դաշնակից ուազմանավեր, որոնք առասպելական կարապների պես թեերը ծալած՝ նստել էին ջրերին. իրենց պողպատե կտուցները՝ արծաթագույն կայմերը, փայլիլում էին վերջալույսի ճառագայթների տակ: Շրջելով Սարայրուրնությունից հրվանդանը, շոգենավը երկաց (բացվեց) Մարմարայի ջրերում. աշ կողմից թիկունքում մնաց Մաքրիթյոյը, Սան-Ստեֆանոն, ուր դիվանագիտությունն արձակեց իր առաջին վճիռը մեր կյանքի ու մահվան մասին: Զախից անցնելով իշխանաց կղզիները՝ մտնում էինք Դարդանել, պատմական Հելլեսպոնտոսը:

Եվրոպական մասում անցնում էինք թերակղզու վրա տարածված Գելիպոլու ավանը՝ հնագույն Գալիպոլիսը: Առաջին քաղաքն էր, որ

ընկել էր թուրքերի ձեռքը դեռ 1357-ին, Պոլսո անկումից շուրջ հարյուր տարի առաջ: Անցյալի ամեն մի գեղք, ամեն մի վայր կարծես գալիս էր անողոք սրությամբ հաստատելու պատմական ճակատագրի այն ուղին, որ վիճակված էր մեզ այս երկրում: Զէ՞ր կարող արդյոք պատմությունը մի այլ ընթացք ունենալ, և այդ դեպքում ի՞նչ պիտի լիներ մեր ճակատագրը ...

Ասիական եզերքին պարզվում էին Զարդաքն ու կամպսակը, որոնցից վերջինը Քսերքսեսը զիշեց Թեմիստոկլին՝ դինու իր տարեկան պետքը հոգալու պայմանով: Դարերի ընթացքում ի՞նչ է փոխվել արյան ու դիակների վրա հաստատված իշխանությունների այդ քմայքներից ...

Ելրոպական եզերքին հայտնվում է Գարա-Օվասուին՝ Հնագույն էպոս-Պոտամոսը, ուր մեր թվականությունից շորս դար առաջ վերջ գտավ Պելոպոնեսյան պատերազմը: Պե՞տք էր արդյոք, որ ժամանակի մեծ ուժերը տասը տարի շարունակ արյուն թափեին գերիշխանության համար, երբ իրենց անունները միայն պիտի մնային պատմության մեջ...

Ավելի ներքեսում նեղուցը գնալով սեղմվում է, ձախից Նաղարա Հրվանդանի և աջից Ակ-Բաշի Լիմանի միջև, որոնք կազմում են Հնագույն Սրիտոսն ու Սեստոսը, նեղուցի լայնքը հաղիվ ութ-ինը հարյուր քայլ է: այստեղ է, որ ամեն զիշեր Լեանդրը ճեղքում էր Հելլեսպոնտոսի ջրերը Սրիտոսից դեպի Սեստոս, որի եզերքին սպասում էր գեղանի Հերոն՝ ձեռքին լուսավառ ջաճը, որը ճշտում էր նրա ընթացքը: Միակ բանը, որ հավիտենական է ...

Նեղուցը նորից բացվում է, լայնանում: Հեռուներում երբեմն դեմ ու դեմ, իրար ետևից հայտնվում են Զանակ-Կալեն, Քիլիտ-Էլ-Բահրը, Սետ-Էլ-Բահրը, Գում-Կալեն, վայրեր, ուր նոր է ցամաքել արյունը: Մթնում էր, մոտենում էինք բաց ծովին: Բայց դեռ Ենիքյոյից շատ ներքեւ, ստվերների մեջ նիրհում էին Տրովադայի (Տրոյայի) պատերազմի հիշատակները ...

* * *

Փարիզում բազմաթիվ տպավորություններից շշմել էի. Հոյակապ շենքեր, հրապարակներ, լայն ու անծայր պողոտաներ, թափորանման անցուղարձ, եռուղեն, կենդանություն ամեն կողմ, անթիվ ինքնաշարժեր, որոնք ագռավների երամների պես խմբվում են մի տեղ ու հանկարծ կուպրի պես հոսում: Ես, որ ինձ արդեն համարում էի «աշխարհ տեսած մարդ», զգացի, որ Փարիզը ավելի մեծ է, քան կարող էի երե-

վակայել: Զղայնացուցիլ էր հատկապես կյանքի արագությունը, մնացել էի զարմացած, թե ո՞ւր են շտապում այդպես մարդիկ. կարծես ամեն տեղ հրդեհ կար: Գար դը կեստից զնում էի մատնանշված ուղղությամբ, որի ծայրը չէր երևում: Բազմազան տպավորություններից գլուխը ցավում էր: Այս դեպքում թերևս դեր էր խաղում և այն, որ այդ օրը նյութական պատճառներով ինձ զրկել էի ճաշից:

Արդեն մթնել էր, երբ հարցուփորձով վերջապես գտա հայկական եկեղեցին և առաջնորդարանը: Այցելությունս անժամանակ էր: Բացարեցի, որ Պոլսից հատկապես եկել եմ կարևոր գործով՝ պատրիարքին տեսնելու: Քիպարյան վարդապետը պնդումիս տեղի տվավ: Պատրիարքը ինձ հիշեց: Բայց իր խորաթափանց հայացքը այնպիսի շփոթության մատնեց ինձ, որ նախապես պատրաստած սրտառուշ ճառս փուկ: Հարցմանը հազիկ կարողացաւ պատասխանել, որ Փարիզ գալու նպատակն է միջոցներ գտնել հետապնդելու Թալիեաթին և խընդեմնեցի նրա աջակցությունն այդ գործում: Մի ակնթարթ նայեց ինձ ակնացների միջից ցավակցությամբ, ինչպես դիտում են հոգեկան հիշանդներին, ապա գլուխը կախեց ու մեղմորեն ասաց.

— Ես այդ կարգի գործերու մեջ շեմ կարող մաս ունենալ, զավակս: Ես վեր կացաւ:

— Ո՞ւ, նստեցեք. զիտե՞ք, ես կհասկնամ, կզկամ ձեր ներքին փոթորիկը, բայց ո՞չ զիրքս, ո՞չ ալ պաշտոնս կներեն նման գործերու խառնըմիլ: Սակայն անձամբ ձեզ կրնամ օգնել, մինչև տեղավորվիք և գործ գտնեք:

Զգացի, որ կարմրում եմ:

— Անձնապես աշակցության պետք շունիմ, Սրբազն, — ասացի ու դուրս ելա:

Մի պահ մնացի փողոցում կանգնած: Ի՞նչ անել և ո՞ւր դնալ: Վերցին օրերին այնքան համոզված էի այդ դիմումիս հաջողությանը, որ հանկարծ պարապության մեջ զգացի ինձ: Մեղմ անձրեսում էր: Մասսիլապատ մթնոլորտում ճրագները նման էին վար իշած մշուշապատ աստղերի: Հայտնվեցի էտուալէ հրապարակում: Այս կողմերում պիտի միներ Բոււասի փողոցը, որտեղ այն ժամանակ գտնվում էր Հայաստանի պատվիրակությունը: Դեռևս հունվարին, երբ պարոն Ահարոնյանը Պոլսում էր, ես մի քանի անհաջող փորձեր արեցի նրան անձամբ տեսնելու և խնդրելու նրա աջակցությունը ինձ մտալիող հարցում: Այժմ նույն մտադրությամբ անցնում էի էտուալ հրապարակը, երբ հանկարծ

բազմաթիվ ինքնաշարժեր ուղղվեցին դեպի ինձ: Շատ մեծ էր հրապարակը և ո՞չ ետ, ո՞չ էլ առաջ փախչելու հնարավորություն կար: Կարծես մի կանգնած լիշ էի, որի շորս կողմը ճանճեր էին վստում: Թղաշափի հեռավորության վրա սուրում էին ինքնաշարժեր, ամենաթեթև շարժումներ մեկն ու մեկը կարող էր ինձ տակովն անել: Մի քաղաքապահ ոստիկան դուրս քաշեց ինձ այդ բավիղից և բացատրեց թուասի փողոցի ուղղությունը: Ահա այն, Hôtel Vouillemontrը, որտեղ գտնվում է պատվիրակությունը: Լուս ու համբ է հայ քաղաքական կենտրոնը. այնինչ ես կարծում էի, թե դա մտքի մի դարբնոց է, որտեղ կովում ու կոփում է մեր բախտը: Ահարոնյանը շկար: Հիսունի մոտ մի մարդ մտացիր հայացքով մոտեցավ ինձ:

— Ի՞նչ առիթով եք ուղում տեսնել պարոն Ահարոնյանին:

— Գործ ունեի ...

Երկի լսեց կամ չհասկացավ:

— Շատ զբաղված է, դժվար թե կարող է ձեզ օգտակար լինել, դործ գտնելն էլ դժվար է, ավելի լավ է դիմեք Կարմիր խաչին կամ Գաղթականական մարմնի հանձնաժողովին:

Ավելորդ համարեցի երկարացնել ու շրջվեցի, որ գնամ:

— Սպասեցիք, որտեղացի՞ եք:

— Երգնկացի:

Եռանկյունածն դեմքին գոյացավ տհաճություն:

— Կարծեցի, թե ատարազարցի եք կամ այդ կողմերից:

— Ո՞ւ, երգնկացի եմ, Բագառիճ գյուղից:

— Երջեստ գիտե՞ք:

— Ո՞ւ ...

— Ուզո՞ւմ եք կոշկակարություն սովորել: Ես ատարազարցի մի բարեկամ ունեմ, կարող եք նրա մոտ գործ գտնել ... Դրամ ունե՞ք:

— Այո՞ ...

— Ճիշտն ասացեք, կարող եմ ձեզ օգնել:

— Ո՞ւ շնորհակալ եմ ...

Մեքենաբար վերցրի այցետոմսը, որի վրա գրված էր երկու տող ու հասցե: Խոլով փողոցներից մեկում գտա երկորդական մի հյուրանոց: Զորրորդ հարկում մի խցիկ, 12 ֆրանկով: Թանկ չէր: Մեկ-երկու օր ապրելու համար մոտս դեռ դրամ կար: Շատ հոգնած էի, հանվեցի ու մտա անկողին: Թեև վաղուց բաժանված էի հարազատներից, բայց նոր միայն զգացի, թե ի՞նչ է նշանակում օտարություն: Քննության

առնելով վիճակը՝ եկա այն եզրակացության, որ կոշկակարությունից զատ ուրիշ անելիք չի մնում: Այնքան մոռալ էր ամեն բան, որ այդ գործը թվաց ինձ միակ փրկություն: Բայց ո՞վ էր այն մարդը, և ի՞նչ եղավ այցետոմսը: Ինձ համակեց անհանգստություն: Վեր կացա ու գրպաններումս փնտրեցի. այնտեղ էր. այցետոմսի վրա գրված էր՝ «Հակոբ Քոշարյան»:

Ատարազարցու արհեստանոցը գտնվում էր Բելվիլի շրջանում: Առավոտյան, երբ իբեն ներկայացա, բարկացած էր և հանդիմանում էր բանվորներին:

— Ես շըլլայի նե, երեքդ ալ անոթություննե պիտի մեռնեիք, — գոշեց նա:

Ցից, սկյուռի պոչի պես ցցված թավ բեղերը, լայն բերանը, խըռպատ ձայնը լավ բան չէին խոստանում: Բայց երբ նայեց, տեսա, որ աշըերը բարի էին, կլոր, պարզունակ, ոչխարի աշքերի պես գեղեցիկ:

— Ուրկի՞ կուպաս, — ասաց՝ այցետոմսը կարդալով:

— Պոլսին:

— Անկե առա՞ջ:

— Ծուսիային:

— Առա՞ջ, առա՞ջ:

— Կովկասին:

— Տո՛, մարդ Աստծո, ուրտեղացի՞ ես:

— Երգնկացի:

— Հա՛, հիմա հասկցանք, նստե հոն ու նայե, թե ի՞նչ կընեն ասոնք. Ես շըլլայի նե, շորսդ ալ անոթութեննե պիտի սատկեիք ...

* * *

Դիտելով ամեն կողմից Փարիզ թափված տարագիր աշխատավորների վիճակը՝ գալիս էի այն եզրակացության, որ իմը կարող էր ավելի վատ լինել: Փրկված էի. կարող էի ապրուստ սեփական աշխատանքով հայթայթել: Ատարազարցին թեև առիթը բաց չէր թողնում հիշեցնելու, որ մեր գոյությունը պարտական ենք իրեն, բայց բարի մարդ էր, գործի մեջ հաճախ արտահայտած բարկությունը տեսում էր հազիվ մեկ վայրկյան, երբեմն մի քիչ երկար, երբ խնդիրը պտտվում էր վարպետի իր արժանապատվության շուրջը: Ընդհանրապես սիրում էր ավելի իշխանություն ցույց տալ, քան պետք էր: Այդ ինձ մյուսների պես չէր նեղում: Ես կոշկակար բանվոր էի և այդպես էլ պահում էի ինձ

վարպետիս նկատմամբ: Առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 6-ը գործի վրա էի, մի ժամվա դադարով կեսօրին: Սկզբում բավական դժվար էր, գործը՝ անծանոթ: Բայց քիչ-քիչ վարժվեցի, և կացությունս հետզհետեւ տանելի դարձավ: Այժմ ամեն կերպ աշխատում էի մոռանալ ինքս ինձ ներշնչած առաքելությունը: Պարզ էր, որ թալեաթին գտնելու գործը դյուրին չէր. անհրաժեշտ էր կազմակերպություն, միջոցներ, ընկերներ. վարդապետների և ազգային մեծերի միջոցով կատարելիք գործ չէր այդ: Բանվորությունն էլ զբաղեցնող էր, մանավանդ, երբ գործի մեջ տեսնում էի առաջադիմությունս: Արդեն աշխատում էի կտորով, կարող էի կոշիկ կարել: Առավոտներն արթնանում էի առույգ, կայտառ, գործը ճեռարկելու անհամբերությամբ: Բայց անցնում էր մեկ-երկու ժամ, և զգում էի, որ ուրախությամբ կարող էի հրաժարվել այդ գործից: Մտածում էի, որ անհրաժեշտ է շուտ վերջացնել աշխատանքը, որպեսզի ազատ ժամանակ ունենամ ամեն բան մանրամասն մտածելու: Մակայն նորից ինձ պատկերանում էր մոալլ անցյալը, ու բավական էր այդքանը, որ գոյությունս աննպատակ համարեմ: Երբեմն ինձ հաջողվում էր մի քանի օր այդ մասին բնավ շմտածել; Բայց բավական էր լինել ճաշարանում, որտեղ գործից հետո խմբվում էին տարափիր աշխատավորները, լսել նրանցից մեկն ու մեկի պատմությունը դեռ թարմ դեպքերի մասին, ու նորից ինձ պատկերանում էր թալեաթի փրուն ու ինքնագո՞ճ դեմքը, որ կարծես ծազրում էր ինձ: Այն ժամանակ ես սկսում էի երեակայել սպանության զանազան ձևեր՝ շամփրել, հարվածել, հոշտել, դաշունահարել, արյունը քամել, բգկտել, ցից հանել, անդամահատել, այրել: Բայց մտածմունքների հետևանքով ինքս էլ ինձնից զզվում էի: Այդ դեպքում գտնում էի, որ մի ելք կա այդ մղձավանջային մտածումներից ազատվելու համար. լավ աշխատել, շատ դրամ վաստակել, վերադառնալ կովկաս և անձնական մասնավոր կյանքով ապրել: Բայց այդ էլ բացահայտ ինքնախարենթյուն էր. վաստակած դրամը հազիվ էր բավում անհրաժեշտ պետքերիս, թեև շատ լավ գիտեի, որ առանց այդ էլ չեմ կարող վերադառնալ: Աշխատում էի քիչ լինել ճաշարանում, ոչինչ լսել շարդերի մասին, խուսափել հանդիպումներից, բայց մենակ մնալով ինքս էի վերհիշում ամեն բան, ու ոչինչ չէր փոխվում ...

Հայ Հեղափոխական Դաշնակցության Փարիզի Կոմիտեն զբաղված էր հանդեսներով ու քաղաքական հարցերով: Տարվա վերջերին երեանից հասնող լուրերը ստեղծել էին այնպիսի մի խանդավառություն,

ինչպիս ամուսն ամիսներին՝ Պոլսում: Հայաստանի թրքաշատ վայրերում ծնունդ առած շարժումները ճնշված էին, և ամեն տեղ հաստավված էր հայկական իշխանություն: 1920-ի հունվարին Գերազուն Խորհուրդը ճանաչել էր հայկական պետությունը (դե ֆակտո, որպիս փաստ): Ճանաչումը թեև չէր կանխորշում պետության սահմանները, բայց այդ էլ օրերի խնդիր էր: Քիչ հետո իմացանք, որ Վենիգելուսի գործակալ, պոնտոսյան պատվիրակության նախագահ Մետրոպոլիտ Խրիստոնքը Երևանում Հայաստանի կառավարության հետ կնքել էր մի դաշնագիր, որի համաձայն Պոնտոսիան լեռների և Սև ծովի միջև ընկած ամբողջ տարածությունը, Միջերկ մինչև Սիսոպ, մոտ մեկ միլիոն իրկու հարյուր քառան հաղար հույն և մահմեդական բնակիչներով, կցվում էր Հայաստանին, իբրև նրա դաշնակցային մի մաս: Դիվանագիտական այս հաղթությամբ մեր դեռ բացվում էր մի փայլուն հեռանկար. բովանդակ Փոքր Ասիայում ոչնչությունից հանկարծ գառնում էինք տիրող ազգ...

Ապրիլին դաշնակից պետություններն ավարտեցին իրենց աշխատանքները Սան Ռեմոյում. արդեն հայտնի էր, որ Թուրքիան պետք է հրաժարվի Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթներից ի նպաստ Հայաստանի, բացառությամբ որոշ շրջանների: Հայաստանին էր հանձնվում էգեականի արևմտյան եզերքների մեծ մասը՝ Իզմիր քաղաքով, ինչպիս նաև Թրակիան իր կենտրոնով՝ Աղրիանապոլիսով: Եվրոպական ցամաքներում Թուրքիային անվանապես մնում էր միայն Պոլիսը, աննշան հողաշերտով՝ Բոսֆորի և Մարմարայի եզերքներում, բայց այստեղ էլ սահմանափակումներ կային: Արաբներով բնակված երկրներից կազմվում էր Մեծ Արաբիան: Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը անդարձ կերպով պոկվում էին Թուրքիայից: Վերջապես պոկվում էր նաև Թուրքիստանը, որնէ պետության հոգատարությանը հնթարկելու համար: Հողային նվիրաբաշխության այս պատմական օրերին անհաջող էին միայն ասորական պատվիրակության նախագահ Աղա-Պետրոսի գործերը. նրանց բան չկար ...

Թուրքիան փաստորին բղկտում էին. ներքին տնտեսական բնագավառներում նա ընկնում էր միջազգային հանձնաժողովների հակակողի տակ: Նեղուցները, մաքսերը, բոլոր եկամուտները, առանձնաշնորհները պետք է եվրոպական հանձնաժողովները վարեին: Հույներն արդեն դրավել էին իզմիրը և մեծ թափով առաջանում էին օր առաջ տեր դառնալու իրենց տրված հողերին:

Իսկ մենք, զարմանալի՞ էր ... Ասում էին՝ Պողոս Նուբար Փաշան կատաղորեն բողոքում էր Երևանի կառավարության կողմից էրգուսը գրավելու հավանականության դեմ, համարելով այդ «բռնագրավում»։ Նա շեր ճանաչում այդ կառավարության իրավունքները իբրև «բռն» Հայաստանի իշխանություն։ Երկու պատվիրակությունների անվերջ բանակցությունները և սրտացավ հայերի բարեխոսություններն ապարդյուն էին անցնում։ Փաշան կամակոր էր ...

Հակառակ այս բոլորին, Փարիզի հայության ոգևորությունը օգոստոսին հասավ իր գագաթնակետին։ Հայերի բազում դիվանագիտական աշխատանքները հաջողությամբ էին պսակվել։ Հայաստանի պատվիրակությունը ստորագրել էր Սերի գաշնագիրը։ Մեր երկիրն ազատ էր, հողը՝ սահմանված, ապագան՝ փալլուն ...

* * *

Սեպտեմբեր ամիսն էր։ Նորից մթափնում էին Հայաստանի հորիզոնները։ Դարարաղ-Զանգեղուրի խնդիրը սովոր էր. հազիվ խաղաղված կարսի շրջանը անհանդիստ էր։ Քեմալական թուրքերը զորացել էին, հնիթադրվում էր նրանց հիտ ընդհարում։ Ես պատրաստվում էի Կովկաս վերադառնալ, երբ մի երեկո ճաշարանապետ թովմաս աղան ասաց։

— Առուն քեզ աղվորիկ աղջիկ մը կփնտրեր՝ օրիորդ Գանիելան։ Զարմանալի էր, որովհետեւ Փարիզում ծանոթ էին շունեի։ Հանկարծ հիշեցի Երանուհուն, բայց նա վաղուց Ամերիկայում պետք է լիներ ...

Հաջորդ երեկոյան, աշխատանքն ավարտելուն պես, վազեցի ճաշարան։ Անկյան սեղանի մոտ նստած սպասում էր ինձ մի մանկահասակ աղջիկ, որ նման էր Երանուհուն։ Այո, քույրն էր։

— Վերջապես գտնվեցաք, — ասաց նա՝ հին բարեկամի պես ժպտալով, — քույրս պատմել է ձեր մասին։ Ան զրեր է ձեզի Պոլիս, բայց մայրս հայտներ է, որ դուք մենած եք Փարիզ և ահա ինձի կողմե, — ասաց՝ ձեռքի պայուսակից գուրս քաշելով մի նամակ։

Օրիորդ Երանուհին պնդում էր, որ անմիջապես մենած Ամերիկա ինձ հայտնի գործով։ Աշքերիս շեի հավատում։ Հազիվ կարողացա հուզում զսպել։ Բայց ինչո՞ւ Ամերիկա։ միթե այնտեղ էր հրեշը, նամակում ուրիշ ոչինչ շեր ասված։

— Ի՞նչ դործ է այդ, եթե գաղտնիք չէ, — ասաց աղջիկը՝ կծկելով սիրուն աչքերի կոպերը։

— Ճիշտն ասած, ես էլ շեմ կարողանում հասկանաւ, Պոլուսը օրիորդ Երանուհուն հետ շատ եմ խոսել ուսանելու փափազիս մասին, հիմա երեսի հաջողել է ընկերներիս միջոցով այդ գործին ընթացք տալ։ Մատի շարանձի շարժումով բացանեց ասածս։

— Ինչ որ է. ե՞րբ պիտի մեկնիք։

— Դժվար թե կարող լինեմ մեկնել, օրիորդ, չէ՞ որ ահագին գումար է պետք։

— Այս, ներեցեք, մոռցա ըսելու, որ պատվիրակության մեջ նամակ ունիք, պարոն Հանըմյանի մոտ, ան ալ կփնտրե ձեզ, կուզեր մանձ տալ, բայց վերջը ետ առավ, խնդրելով, որ հայտնեմ ձեզ, նամակը Բուտոննեն էր, գուցե հոն ...

Դեռ երկար պիտի շարունակեր օրիորդը, բայց ներողություն խնդրելով՝ պատվիրակություն անապարեցի, քանի դեռ ուշ շեր։

Գրում էր Համո Յարաղամյանը։ Որտեղից ուր, ուրախությունից խնդրացել էի։ Գրում էր, որ անմիջապես մենած Բոստոն։ Ճանապարհի ծախքը պետք է ստանամ Հանըմյանից, որին այդ մասին միաժամանակ գրում է Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո) ...

Ժամանակից շուտ ճաղատացած, կանացի դեմքով և զմայելի ժպիտով Հանըմյանը ինձ ոչինչ լհարցրեց, միայն ցանկացավ իմանալ, թե ե՞րբ կարող եմ մեկնել։

— Թեկուզ վազը։

Երեք օրվա մեջ նա կարգավորեց անցագրային դժվարություններս, և հոկտեմբերի առերին մենած էի։ Սյամ ինձ համար ամեն բան հուզում էր. զործը կենտրոնացված էր նրանց ձեռքում, Ամերիկայում։ Պարզ էր. զործը իմացել էր իմ մասին անտարակույս օրիորդ Երանուհաղամյանը իմացել էր իմ մասին հայտնի գործով։ Հայտնի նրա գործ քայլակը, որ այնպես հիասթափեցրեց աղջիկը։ Հիշեցի նրա գործ քայլակը, որ այնպես էր հայտնի ինձ. «Կանցնին օրեր, կու կրկին մի նոր գարուն վարդաբեր...» վստահ էր, ուրեմն, զործի հաջողությանը ...

Թեև ձմեռ էր, բայց համակված էի «վարդաբեր գարնան» տրամադրությամբ։ Առաջին անգամ էի տեսնում օվկիանոսը։ Մինչև այդ կատարած ծովային ճամփորդություններս միշտ հորիզոնի մեջ պարզում էին մի ստվերադիմ, որից այն կողմը սկսվում էր հողը։ Այժմ, երբ էրկիրը բոլորովին աներևութացավ, բարձր տրամադրությունս սկսեց

տեղի տալ, և ինձ մի անբացատրելի թախիծ պաշարեց. կարծես բոլորվին բաժանվեցի աշխարհից և ընկա անհայտության մեջ: Օվկիանոսը հանդարտ էր, բայց երկու օրվա անդորրությունից հետո հանկարծ նա ծածկվեց մշուշով՝ նախ նոսր, ապա հետզհետե՛ թանձր: Շոգինավն սկսեց երերալ: Ալիքները երկու կողմից սկսեցին զարկվել նրա կողերին, նախ կարծես խաղալով, ապա՝ ավելի ու ավելի ուժգին թափով: Շոգինավը տնքաց, ճարճատեց: Ալիքները գնալով ավելի վեր ու վեր էին ցատկում: Վեր ցցված բաշերով՝ լեզուները պարզում էին տախտակամածից շատ վեր: Վիթխարի նավը դարձել էր ջրերի խաղալիքը, ինչպես մի տաշեղ: Նա բարձրանում էր ալիքների վրա, իսկ ցոռվելի առջև բացվում էին ջրային վիճեր: Թվում էր, որ նավը ջարդ ու փշուր պիտի լինի այդ մութ անդունդներում, բայց ամեն անգամ դուրս էր հանում կտուցը ու ճեղքելով կատաղի ալիքները՝ դարձյալ վեր սահում: Նավն ու ծովը խորհրդանշում էին պայքարի ու հաղթության հետանկարը:

Կեսօրին փոթորիկը մեղմացավ. ալիքներն այժմ նավի կողից բարձրանում էին, հոսում տախտակամածի վրայով ու սրբում, լվանում նավի այդ մասը: Ապա քիշ-քիշ մառախուղն սկսեց նոսրանալ և հետզհետե շքանալ: Անհուն տարածությունների վրա, ջրերի մեջ խաղում էին արեգակի ճառագայթները: Դահլիճներում, սրահներում, խցիկներում թաքնված ճամփորդները նորից հայտնվում էին կամրջակի վրա: Կանայք ջղայնորին ծիծաղում ու քոքչում էին ...

Երազ թվաց ինձ, երբ յաթերորդ օրը հորիզոնի վրա նշմարեցի Ամերիկայի ափերը: Այնպիսի հրճվանքով էի համակված, կարծես ես էի հայտնագործում նոր Աշխարհը: Աչա նա, վիրջապես: Հոգնատանց շոգինավը մոտեցավ նավահանգստին: Արդին վաղուց երկում էին նյու Յորքի հոշակավոր ճերկնաքերները: Նավի մեծ սրածը լցվեց բազմաթիվ պաշտոնյաներով, որոնք սկսեցին քննել մեր թղթերը: Դիտում էի անվերտով ու ծանրաբարո ամերիկացիների խոհուն դեմքերը, նրանց ինքնավտահ ձևերն ու շարժումները՝ սպասելով հերթիս: Թերի ֆրանսերինս ինձ օգնեց անցնել այդ քննության բովից:

Թեև դեռ չեր մթնել, բայց դրսում, շինությունների վրա, լուսավառվում էին էլեկտրական ճրագներ, ու քաղաքը ուսկեղեն էր թվում: Յոթը միլիոն բնակչությամբ այդ վիթխարի քաղաքը ինձ ապշեցրել էր իր անթիվ-անհամար լույսերով, էլեկտրական լուսավառ ծանուցումներով: Առաջին իսկ պատահած ինքնաշարժի վարորդին մեկնեցի Հ. Հ.

Դաշնակցության ակումբի հասցեն: Գլխումս ոչ մի միտք չկար: Համակված էի մի երախտագետ զգացումով գեպի շրջապատս, որ բախտը վիճակում էր ինձ լինել այստեղ: Ճգնում էի ճշտել «երկնաքերների» բաժինները, որոնք երկի բաղկացած էին 25—50 հարկերից: Մի տարի առաջ ինձ զարմանք պատճառուց Փարիզի եռուզեռը, բայց նա մի խաղալիք էր նյու Յորքի համեմատությամբ: Զարմանալին այն էր, որ այդ իրարանցման մեջ ինքնաշարժի վարորդը չէր կորցնում զլուխը: Անցանք շքեղ վաճառատների և շինքերի լուսառատ շրջանակից: Շարժապատկերների շինությունների առջև խոնված էր ահագին բազմություն: Կյանքը հնոցի պես եռում էր ամեն տեղ: Մի քիչ ներքեւ, լայն պողոտայի կենտրոնում, որտեղ կանգ էին առել բազմաթիվ ինքնաշարժեր, դանդաղեց ու կանգ առավ նաև մեր ինքնաշարժը: Դիմացի աշտարակածն մի շենքից արձակված լույսի նշաններով ցույց էին տրվում ուղղությունները: Ցերեկվա պես լույս մայթերով անցնում էին ձիգ, ամուր, կանգուն մեշքերով ամերիկացիներ՝ դուրսիները բարձր, դիտելով հեռուն: Աշտարակից հալտնվում են նոր լույսեր, ու մեր ինքնաշարժը դարձյալ սուրում է շարեշար ընթացող ինքնաշարժների երամների մեջ: Հաջորդաբար հասանք համեստ շինքերի շրջաններին ու մի տեղ կանգ առանք:

Ակումբի մեջ եմ. ինչ հաճելի անակնկալ էր աշխարհի մյուս ծայրում լսել քաղցրահնչյուն մայրենի լեզուն: Երեք սենյակներ՝ լուսավառ, մաքուր, զրբեր, լրազրեր, վառվուն դեմքեր: Ի՞նչ է ազգային զգացումը. Երկի նմանների միանման ապրումներ, որոնք անմիջապես արտահայտվեցին ինձ շրջապատող երիտասարդների կողմից ուղղված բազմաթիվ հարցումներով: Նախապես աշխատեցի գոհացնել բոլորի հետաքրքրությունը, բայց քիշ-քիշ սկսեցի նեղվել. Հարցումներին վերջ շկար: Կարծես պահանջատերեր էին, և ես պարտավոր էի յուրաքանչյուրին վճարել հասանելիքը անմիջապես: Վերջապես վեր կացա հայտնելով, որ պիտի մեկնեմ:

— Ո՞ւր, եղբա՛յր, տակավին ոշինչ լրսիք հրատապ խնդիրներու մասին ...

— Ես եկա այստեղ, որ ինձ օգնեք Բոստոն մեկնելու և ոչ թե ձեզ բանախոսություն կարդալու, — ասացի՝ հազիվ զսպելով ջղայնությունս:

— Լա՛վ, եղբայր, Բոստոնը խո շիմախա՞վ ...

— Հայ Հեղափոխական Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեի հրահանգով պարտավոր եմ ժամ առաջ այնտեղ լինել:

Այս խոսքն ազդեց: Դիրքս հանկարծ բարձրացավ, և նրանք ընկան սպասարկու դրության մեջ. դուրս ելանք: Ճանապարհին ամեն կողմից հարցումներ էին ուղղում ինձ՝ ժամանակը օգտագործելով մինչև վերջին հարավորություն: Բոլոր խնդիրների մասին այդ պապակ հոգիների հետ զրուցելու համար անհրաժեշտ էին օրեր. ժամանակն անզոր էր մոռացնել նրանց այն ամենը, ինչ արդեն անցյալ էր: Խսկ ինձ հմայել էր առասպելական քաղաքը գիշերով: Աչքերս սկսել էին վարժվել դիտելու: Բարձր շենքերն այլևս չեին ճնշում, ինչպես քիչ առաջ, այժմ նրանք թվում էին այնքան թեթև, որ կարծես թղթերից էին շինված. անթիվ—անհամար լուսամուտներից վար թափվող լույսերի կոհակները լցնում էին լույսի և խավարի անջրպետը: «Երկնաքերների» զմբեթներին պարզված ճարգները նման էին շրջուն լուսայակների: Խեղճ մեր թագառին ժողովուրդ, որին թույլ շտմին իր կլանքն ապրել անդամ իր գետնափոր խրճիթների մեջ: Մեծ դժվարությամբ էի կարողանում հավաքել մտքերս՝ ընկերներիս մեջի կամ մյուսի հարցումին պատասխանելու համար. իմ տեղեկությունները, թեկուղ չին ու անկատար, հետաքրքիր էին նրանց. ըստ երեսութին, նրանց համար այդ բոլորի մասին այլ բան էր կարդալը և այլ բան՝ կենդանի խոսք լսելը: Վերջապես հասանք կայարան, որտեղ քիչ հետո սրտառուշ բաժանվեցի այդ շերմ ու հայրենասեր երիտասարդներից ...

Գ Լ Ո Ւ Խ է

ՈՐՍԻ ՀԵՏՔԵՐԾՈՎ.

Բոստոնում «Հայրենիք» օրաթերթի խմբագրությունում սկսվեց նույն բանը, ինչ նյու Յորքում: Այստեղ հարցումիորձի նախաձեռնությունը պատկանում էր Համոյին, որ իր վերջինումներն սկսել էր էրգումից, որտեղ վերջին անգամ տեսել էի նրան հինգ տարի առաջ: Կոմղի պես հաստատուն, գոգածն ոտքերով, խավարած լուսնի պես կլոր ու սկ դիմքով տիվրիկցի այդ ընկերն այստեղ նման էր քաղաքակիրթ քրդի: Իր հակումների, բնավորության մեջ ոչինչ չէր փոխվել. դեպքերն անկարող էին եղել մազաշակ անգամ շեղելու իր նախասիրած գործից: Անգամ մեր չերմ ընկերության տեսակցության այդ պահին թղթի թերթիկների մի տրցակ կար ձեռքին, որտեղ կարող էր նշել մի բան «Հերթական թղթակցության» համար: Բայց Համոն այստեղ պարզ թղթակցից չէր, այլ խմբագրության անդամ և միաժամանակ Հ. Յ. Պաշնակցության Կ. Կոմիտեի քարտուղար: Բոստոն կանչվելուս մզում տվյալը օր, Երանուհին էր, որ այժմ գտնվում էր Կալիֆորնիայում. նրանից էր Համոն իմացել իմ մասին: Շանոթացա և խմբագրության մեջ եղած ընկերներին՝ Սեղրակ Բաղդիկյանին, կենտրոնական Կոմիտեի գործակար, մեր երազկոտ «Սևթոն», Խոսրով Եսայանին, «Հայրենիք» գործակարը, և ուրիշներին: Այս վերջին երկու ընկերների հետ առաջին խսկ օրից մտերմացա և նրանց սենյակակիցը դարձա:

Այստեղ էլ՝ Ամերիկայում, մեր ժողովուրդը լարված հետաքրքրությամբ հետևում էր Հայաստանի դեպքերին: Մանավանդ մեծ հուզում ու վրդովմունք էր առաջ բերել թուրք ջարդարարների անպատճի մնալը: Պատերազմի սկզբին դաշնակիցները հանդիսավոր հայտարարություն էին արել, որ Թուրքիայի կառավարության անդամները անձնապես պատասխանատու պիտի նկատվին հայկական ջարդերի համար: Բայց պատերազմը վերջացավ դաշնակիցների հաղթանակով, և հայ-

կական Մեծ Եղեռնի հեղինակները մնացին անպատճ և նույնիսկ պաշտպանության տակ առնվեցին:

Ամերիկայի հայության մեջ հասունացել էր այն միտքը, թե հայերը սեփական միջոցներով պետք է պատժեն թուրք զարդարաբներին: Այս մտայնության ոգին Արմեն Գարոն էր, որի նախաձեռնությամբ հատուկ ֆոնդ էր ստեղծվել, և հատուկ աշխատանք էր կատարվում:

Պետք է ասել, որ միայն Ամերիկայում չէր այս տրամադրությունը. բովանդակ հայությունը ամեն տեղ վրդովմած էր դաշնակիցների վերաբերմունքից. մի ամբողջ ժողովուրդ էր բնաշնչված բարբարոս միջոցներով, և հաղթական դաշնակիցները, հակառակ հանդիսավոր խոստումների, մատը մատին չզարկին՝ ոճրագործներին արդարադատության ենթարկելու համար: Ամեն կողմից ժողովուրդը արդար հատուցում էր պահանջում, և բոլորի աշքերը հառած էին Դաշնակիցությանը:

Դաշնակցությունը, բնականաբար, չէր կարող անտարեր մնալ և նույնական մտածում էր փոխհատուցման մասին: Հ. Յ. Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովն էլ 1919-ի աշնանը վրադվել էր այդ հարցով: Եվ ահա Ամերիկայում պարզվեց, որ այն, ինչի մասին ես երազում էի գիշեր ու ցերեկ, այստեղ արդեն կենդանի գործ էր դարձել: Արմեն Գարոյի ղեկավարությամբ կատարվել էր նախնական ահազին աշխատանք:

Ամերիկայում ես իմացա, որ Պոլսից փախած իթթիհատական-ները Եվրոպայում գործուն աշխատանք էին վարում: Նրանք կապեր էին հաստատել Եվրոպայի քաղաքական շրջանակների հետ և աշխատում էին նրանց միջոցով հակադեմ դաշնակիցների վրա՝ ի շիք դարձնելու Հայկական ինդիրը և ավելի զիջող ընթացք ապահովելու թուրքիայի նկատմամբ մնացած բոլոր ինդիրներում: Այդ նպատակով նրանք ունենում էին տեսակցություններ դաշնակից պետությունների ներկայացուցիչների հետ և զումարում էին խորհրդակցություններ: Էնվերը գտնվում էր Ռուսաստանում, այստեղ նա հիմնել էր «Իսլամի Ազատագրության Միություն», որը մասնաճյուղեր ուներ Բեղլինում և Անտոլիայում: Երկու ամիս առաջ Բեղլինում գումարվել էր համաժողով՝ Անգլիայի վրա մնշում գործադրելու նպատակով: Աշխատանքների գրիստավոր վայրը Ռուսաստանն էր, հատկապես Անդրկովկասը՝ քեմալական շարժման հետ սերտ գործակցություն պահպանելու նպատակով: Բայտ ամենավերջին տեղեկության, Բաքվում էին գտնվում էնվերը, իր-

բաժիմ Թալինը, Քյուչյուկ Թալեաթը, Բեհաեդին Շաքիրը, Մուստաք Սուլեյմանին, Նուրի և Խալիլ Փաշաները: Այստեղ նրանք մասնակցել էին Արևելյան ժողովուրդների Համագումարին: Հայաստանում արդեն ծայր առաջ հայ-թուրքական պատերազմը համարվում էր այդ համագումարի որոշման հետևանքը: Թալեաթը ենթադրվում էր ժնկում կամ թերինում:

Մի օր էլ ես ծանոթացա հասակագեղ, հաղթանդամ, տպավորիչ արտաքինով և բարեհամբույր Արմեն Գարոյի հետ: Միայն մի անգամ էի տեսել նրան, բայց նրա մասին շատ էի լսել: Շիտակ, ազնիվ, բարի, բոլորանվեր առաջնորդը իմանալով, որ ես եմ Փարիզից եկողը, միանգամայն մտերիմ, սրտաբաց, անկեղծ, հայրական գորովով ու եղբայրական շիրմությամբ ձեռքս թոթվեց: Ինչպես առաջին հանդիպման ժամանակ, ինձ համակեց շփոթությունը: Արմեն Գարոն ինձ պատկերանում էր իբրև մարդկային կատարելություն: Եվ չէր սխալվում: Նա ծնված էր այգակե՝ առաքինի, վճիռ ու բյուրեղային: Բայց վերջին հինգ տարիները շատ էին ազդել վրան՝ նրա հանդարտ հոգու մեջ ստեղծելով մի աննվաճելի անհանգստություն: Իր կոր ու քիչ ուռած կոպերի տակ սիրու աշքերը զրկվել էին նախկին փայլից ու պայծառությունից, առնական գեմքին կննիռներ էին հայտնվել:

Խմբով գնացինք ճաշարան, որ պահում էր տարեց ընկերներից մեկը: Կոկլոր, խոշոր գործմի պես գուրս ընկած փորով, թավ հոնքերի տակ կորսված անհանգիստ աշքերով ճաշարանապետը, տեսնելով Արմեն Գարոյին, վեր ցատկեց նստած տեղից, ափերի մեջ թաղեց նրա ձեռքը և ուրախացած բացականշեց.

— Վա՛յ, պարո՞ն Գարո ...

— Է՛, Գոգո, ըստ տեսնինք ինչ կա չկա, — դարձավ նրան Գարոն հին բարեկամի պես:

— Զանսաղություն, ի՞նչ պիտի լինի: Աստված օգնության հասնի, ազգի վիճակը հայտնի է ...

Գոգոն մեզ մի սենյակ հատկացրեց և իր հսկողության տակ առավ սպասավորումը:

Արմեն Գարոյից իմացա, որ ութ օր առաջ հեռագրել էին Փարիզ՝ Հանրայինին, որ այստեղ սպասեմ Ամերիկայից եկող մեկին, բայց ես արդեն մեկնել էի: Այժմ այդ մեկը գտնում էր անհրաժեշտ անմիջապես գործի անցնել և մեկնել Զվիցերիա: Արմեն Գարոն գտնում էր, որ հետախուզական նախնական աշխատանքները այդ անձը կարող է մենակ

կատարել՝ կարիքի դեպքում դիմելով տեղական ուժերի աջակցությանը, իսկ ես պետք է մեկնեմ այն դեպքում, երբ պարզվի՝ որտեղ է Թալեաթը՝ ժնկո՞ւմ, թե՞ Բելինում։ Իմ ցանկությունն էլ այդ էր։ Գործի համար անհրաժեշտ զգուշությունների նկատումներով այդպես էլ որոշվեց։

Հայտնի եղավ նաև, որ գրված է Պոլիս և Բեռլին՝ Թալեաթի հետքերին հետամուտ լինելու համար։ Ստացված տեղեկությունները պետք է կենտրոնանային հետախուզական մասի վարիչի մոտ։ Մինչ այդ արդեն երեքական պատճեններով արտանկարված ու պատրաստ էին բոլոր գլխավոր ջարդարարների լուսանկարները։ Ապահովված էին նաև նյութական միջոցները։

Թեև խնդիրը շատ ջուր էր վերցնելու, բայց ինձ համակել էր մի ներքին հրճվանք, որ գործը գտնվում է կարող մարդկանց ձեռքում և արդեն շիտակ ճամփու վրա է գրված։ Բոլոր հարցերը պարզվեցին և ճշտվեցին առանց վիճարանության և տարակարծությունների։ Կարծես մի բնտանիքի անդամներ էին, որոնց մեջ ամենից շատ կշիռ ունի մեծի խոսքը։

Այժմ Գարոն պատմում էր իր տպավորությունները Թալեաթից։ Նրան լսում էինք հետաքրքրությամբ։ գոնե ինձ համար նրա պատմած ամեն մի դեպք բնութագրում էր դավադիր ոճրագործին ու նաև ներկայացնում արժեքը։

— Վերջին անգամ ե՞րբ հանդիպեցիք նրան, — հարցրի ես։

— Վերջին անգամ 1914-ին, հունիսի 4-ին, երբ Վոամյանը և ես լուրջ խոսակցություն ունեցանք Խալիլ բեյի տանը այդ հրեշի հետ՝ ծրագրված հայկական բարենորոգումների շուրջը, — ասաց Գարոն կարծես ինքն իրեն՝ թաղվելով դեռ թարմ հուշերի մեջ։ Թալեաթը խոսակցությունը սկսեց երկար առաջարանով, որով աշխատում էր մեզ համոզել, թե ինչպես իրենց կամքին հակառակ, չկարողացան մինչեւ այսօր դոհացում տալ մեր արդարացի պահանջներին, այսինքն՝ հոգային հարցի, դպրոցական խնդրի, հայ պաշտոնյաններու հավելման և այլ խնդիրներու վերաբերմամբ։ Եվ հետո, անդրադառնալով բարենորոգմանց խնդրին, Թալեաթը մեզ մեղադրեց, որ մենք արտաքին միջամտության դիմած էինք, փոխանակ ուղղակի իրենց հետ հասկացողության մը գալու։ Վոամյանը շուտ-շուտ կընդհատեր անոր խոսքը և փաստերով կապացուցեր անոր ըսածներու անլրջությունը։ Իսկ Խամիլ բեյը կաշխատեր Վոամյանին համոզել ի մասնավորի պաշտոնյա-

ներու կես առ կեսի անկարելիության մասին։ Այս առթիվ Թալեաթը հայտարարեց Հոֆֆին հետ իր ունեցած բանակցությանց և ըսավ, թե ինքը մերժեց իմ թեկնածությունը այն պարզ պատճառով, որ համոզված է, որ եթե ես երթայի Հոֆֆին հետ իրեւ անոր օգնականներին մեկը, իսկական բնդհանուր քննիլը ես պիտի ըլլայի և ոչ թե Հոփֆը։ Անոր այս ակնարկությունը ջրելու համար Վոամյանը հայտնեց, որ իմ թեկնածության մասին խոսիլն ավելորդ էր, քանի որ ես ինքս արդեն խնդրել էի Հոփֆին՝ իմ անունս դուրս հանել ցանկին։ Բայց կես առ կես սկըզբունքը չգործադրելը ամենալավ ապացուցն էր մեզ համար, որ իրենք դարձյալ հին աշքակապությանց ճամփան էին բռնած և առաջին քայլին իսկ կուզեին վիժեցնել իրենց ստորագրած բարենորոգումները։ Ժամը 8-են սկսած մինչև 11-ը երկուսով կվիճեին, Յս ոչ մեկ խոսք արտասանեցի, ուշագրությամբ կդիտեի Թալեաթին դեմքը, որ այդ երեկո անասելի կերպով անհամակրելի կերեսար աշքիս։ Ամեն անզամ, երբ Վոամյանը կտաքանար և իրեն անախորժ բաներ կըսեր, Թալեաթի դեմքին վրա սատանայական ժամփան մը կերեար՝ ինքնագոյն մարդու մը հատուկ, որ դիմացինին վրա կիսնդա։ Ի վերջո երկուքն ալ նկատեցին, որ ես բնավ խոսքի շխառնվեցա։ Թալեաթը, դառնալով ինձի, ըսավ։

— Գարո, դուն ինչո՞ւ այս երեկո բնավ շխոսեցար։

— Ի՞նչ խոսիմ, երբ որոշակի կտեսնեմ, որ դուք այնքան գոռոզացեր եք ձեր վերջին հաջողություններով, որ մեզ հետ խաղալ կուզեք, — պատասխանեցի ես։

— Ես կրողոքեմ քու այդ դարձվածքին համար և կիսնդրեմ, որ ապացուցանես ըսած։

— Եթե Վոամյանը չկրցավ ձեզ համոզել, ես բնավ պիտի շկրնամը ընել այդ։ Միայն այսքան պիտի ըսեմ, որ դուք սիալ ճամփու վրա եք. ձեր բռնած այս ընթացքը Օսմանյան կայսրությունը պիտի տանի գեպի խորիսորատ։ Դուք ձեր վերջին հաջողություններեն հարրած՝ տարվեր եք մեծամոլությունն մը, երևակայելով, թե նապոլեոններ և բիսմարկներ եք։

— Բիսմարկը ե՞ս եմ, — ընդհատեց Թալեաթը ժպտալով։

— Այո՛, դուն ես, բայց շատ կսխալիս այդպես կարծելով։ Դուք բոլորդ դժբախտաբար տգետ եք և անընդունակ հասկանալու, թե ո՞ւր կառաջնորդեք այս պետությունը։ Ապացո՞ւց կուզես ըսածիս։ Քիչ մը առաջ դուն չե՞ր որ Վոամյանին կըսեիր, որ դուք քուրդերը պիտի թրքացնեք։ Ինչո՞վ, ձեր ո՞ր կուտուրական շնորհով։ Եթե պատմու-

թյունեն լուր ունենայիր, այդպիսի անհեթեթություննե՞ր պիտի շըսկիր՝ Կմոռնաս, թե հինգ—վեց հարյուր տարի է, որ դուք՝ թուրքերդ, եկաք մեր երկիրը, իսկ ձեզմե առաջ շատ ուրիշ աղքեր են եկած և գնացած մեր և քուրդերին գլխովը՝ պարսիկները, հոռմեացիք, արաբները և բյուզանդացիք: Եթե անոնցմե և ոչ մեկը շկրցավ քուրդերը ձուկել, դուք ինչո՞վ եք ձուկելու: Անցյալ ամառ ճամփորդեցի մեր երեք վիլայեթները և միայն երեք հատ կամուրջ տեսա այդ ահապին տարածության վրա. անոնցմե երկուսը հին հայկական շինություններ են, իսկ երրորդը լենկիթեմուրի շինել տվածն է: Իսկ ձեր քաղաքակրթության հետքն անգամ շտեսա: Չի կարելի այդպիս թեթև կերպով վերաբերվել պետական լուրջ հարցերուն: Գալով մեր հարցին,—ըստ անոր,—դուք անկեղծ շեք: Դուք կկարծեք, թե հաջողելու եք խոստումներով մեզ քնացնել այստեղ և երկրին մեջ ալ այնպիսի տնտեսական, քաղաքական պայմաններ ստեղծել, որ Հայաստանը դատարկվի հայերին և դուք միանգամայն ընդմիշտ ազատիք հայկական հարցեն: Այս է ձեր տղիտության երկրորդ ապացույցը: Կը սխալիք ձեր այդ հաշիվներուն մեջ: Մենք ձեղ այդքան ժամանակ շենք տալու, որ ձեր ծրագիրները գործադրեք: Մեր ազգային գիտակցությունը այնքան զարգացած է, որ մենք պիտի նախընտրենք քարուքանդ ընել այս մեծ շենքը, որուն անունն է «Օսմանյան կայսրություն» և ձեզ թույլ շտալ, որ տեսնեք Հայաստանը առանց հայու...»

Անցյալի հուշերով տարված Արմեն Գարոն հանկարծ կանգ առավ. նրա դեմքը անորակելի թախիծ էր արտահայտում:

— Ավագ, մենք սխալեցանք մեր հաշիվներուն մեջ ...
— Ինչո՞վ վերջացավ, — հարցրեց Համոն:

— Երբ ես վերջացուցի, Թալեաթը բացականշեց. «Այդ ինչե՞ր կխոսիս, Գարո, դուն բոլորովին փոխված կերևիս»: «Մեջներիս եթե փոխված մը կա, դուք եք, որ ձեզ մեծ մարդիկ կկարծեք, — պատասխանեցի ես, — մենք առաջվա հայ հեղափոխականներն ենք և ձեզի կըսնեք այն, ինչ միշտ ըսեր ենք»: Թալեաթը կաս կարմիր դարձավ և սկսավ թեկին վրայի ժամացույցին նայիլ շուտ-շուտ: Հանկարծ ոտքի ելավ և ըսավ, թե ժամը 11-ին ժամաղբություն ունի, կը ցավի, որ այս խոսակցությունը կիսատ կմնա և մեկնեցավ, խնդրելով, որ ուրիշ օր մը նորեն հանդիպենք՝ դիրար համոզելու համար: Քիչ հետո պատերազմը սկսավ, և այլևս Թալեաթը շտեսա ...

Կարծես խոստովանանքի պես մի բան էր այդ զրուցը Արմեն Գարոյի համար, կարծես ինքն իրեն դատաստան էր անում, այնքան ընկճված էր: Ես մտածում էի, թե պե՞տք էր արդյոք, որ դահճապետի հետ խոսեր հեղափոխականին վայել, բայց այդպիսի պարզությամբ և անկեղծությամբ

— Ինչ որ է, — ասաց՝ մտքերից սթափիլելով, — անցյալը թողնենք, նայինք դալիքին: Ես հիմա պիտի մեկնիմ: Բարի ճանապարհ և հաջողություն ձեզ: Շատ պիտի ուզեի աշքս ետևս շմեռնել, — հարց նա ելնելով, — մեր այս ծանր օրերուն այդ ճիվաղի մահը մեծագույն միիթարությունը պիտի ըլլար հայության համար ...

Ճաշասրահից լսվեց.

— Երկրեն ի՞նչ նոր խարար կա, պարո՞ն Գարո:

— Նոր խարար չկա, Գոգո՞, ամեն ինչ դիտցածիդ պես է ...

* * *

Մեր ներկայացուցիչը երեկոյան մեկնեց նյու Յորք՝ այնտեղից եվրոպա անցնելու համար:

Գիշերը Սեթոյի և Խոսրովի հետ նստած ոճրագործների լուսանը-կարներն էինք ուսումնասիրում:

Թալեաթը, էնվերը, Զեմալը, Սայիդ Հալիմ փաշան, Զեմալ Ազմին, Բեհանդին Շաքիրը, Պոլսո ոստիկանապետ Պետրին, դոկտոր Նազմը և այլն, զանազան դիրքերում: Կան նաև Թալեաթի և էնվերի կանանց նըկարները, որոնք, ըստ երեսովին, գուրս են հանված խմբանկարներից: Երկուսն էլ գեղանի, հրեշտականման դեմքերով կանայք: Մարդ մնում է զարմացած, թե ինչպես կարող են նրանք ապրել այս հրեշների հետ: Իր կազմվածքով ամենից ուշագրավն է Թալեաթը. Հզոր թերը, քառակուսի թիկունքը, ժայռի պես ցցված դնդերները մատնում էին ուժ և կորով: Նկարին նայողը պիտի զարմանար, թե ինչպես ոգեշունչ կերպարանք ունեցող այդ մարդը երեք տարի շարունակ դիմացավ գթություն աղերսող մի ամբողջ ժողովրդի աղաղակներին՝ բնաջնջման իր ծրագիրը անշեղորեն զլուխ հանելու համար: Մի ուրիշ նկարի մեջ քունքերին հազիվ նշմարվում էին ճերմակները: Արևելքու կարկառուն շըրթին ազ ու ծախ երկարել էին կուպրի պես և ու թավ բեղերը:

Ծվայտ պարանոցը նեղ օձիքի միջից դուրս էր ընկել: Ճերմակ բաճկոնի կիտվածքը ծածկել էր փորի աղեղնաձև մասը, դեմքից բուրում էր սրտագին անկեղծություն ...

Ահա և էնվերը, ժամանակին թուրք կանանց կուռքը, որ կյանքի ընթացքում տղամարդու վայել գործ շտեսավ և համբավ շահեց էգրինի վերագրավման ժամանակ, երբ արդեն գործը վերջացած էր: Պատանեկան կայձկլուուն կերպարանք և կանացի արտևանունքներով թարմ դեմքը պարելու ցանկություն էին արտահայտում: Պոլսում ասում էին, որ իր ընդունարանի պատից, իր դիմանկարի երկու կողմերից կախել էր նապուն Առաջինի և Ֆրիդրիխ Մեծի նկարները, երկու հանճարեղ փառամոլներ, որոնց նման էր միայն իր կարճ հասակով: Ասում էին, որ էնվերը կրում էր բարձր կրունկներով երկարավոր կոշիկներ՝ նրանցից ավելի երկար երեալու համար: Պարսկական գդակի հարդարված զագաթը, որ երբեք չէր հանում, նույն նպատակին էր ծառայում: Եվ իրոք, մարածախտի ուկենամուկ համազգեստով նկարի մեջ ունի կողավիզ արտահայտություն: Բայց երկու շարք ժապավենակալ շքանշաները գործը փշացնում էին՝ նրան տալով պճնասեր, թեթևամիտ, պատանեկան հանգամանք: Ու դարձալ նույն բանը՝ շլմորած, վախի արտահայտությամբ աշքերը շրջանակող կոպերը աղջկա աշքերի հատուկ բացվածք ունեին: Մի ուրիշ նկարի մեջ մանր բեղերի տակ հազիվ նշմարվող շնական ժպիտն արտահայտում է «արժանապատիվ գերազանցություն»: Եթե նրա այդ արժանապատվությունը դառնապես վիրավորված շիներ Քարդոսի տակ, որտեղ պետք է վաստակեր «թուրքական նապունին» առաջին պատկը, թերեւ այլ լիներ մեր ժողովրդի քախտը ...

Երրորդ շարդարարի՝ ծովային նախարար՝ Զեմալ փաշայի դեմքն արտահայտում է վայրագություն, մեծամտության ու կորովամտության խառնորդ: Մեծ, սուր ու թափանցող նայվածքով սևուուն աշքերը մատնում էին խորամանկություն, անխղճություն և անճնապաշտություն: Սա էր, որ չորրորդ զորաբանակի հրամանատարի հանգամանքով պակասը լրացրեց՝ սովոր ու հալածանքների ննթարկելով մեր ժողովրդի մնացորդները անապատներում ...

Վերցնելով Պետրի բեյի նկարը՝ մնում եմ շվարած, թե ինչպես այդ ոչնչությունը հաջողացրեց անճիտել մոտավորապես հինգ հարյուր փայլուն մտավորականներ: Կանացի թեք ուսերով, երազուն, վավաշուտ աշքերով այդ անհայտ մարդու միակ արժանիքն այն էր, որ թաշեաթի մտերիմն էր: Բայց այդ սնամեջ մարդը դարձյալ մի բան է խրտվիլակ Սայիդ Հալիմ փաշայի համեմատությամբ, որի ներքինիի ախտաժետ դեմքը գարշանք է հարուցում: մեկը, որ վարչապետի աթո-

ոի հասավ գրամի ուժով, պատերազմից հետո Եգիպտոսի խտիվ գառնալու հույսով: Անայնամիտ, փառատենչ, իրական իշխանությունից գուրկ եգիպտական այդ իշխանն իր մեջ բավարար կորով ունեցավ մերժելու զարդերը վերջ տալու համար իրեն ուղղված բոլոր դիմումները ...

Իր դեմքի բանիմաց ու գործնական արտահայտությամբ, ապահովագրական ընկերության գործակատարի տպագորություն է թողնում Բեհանդին Շաքիրը, որ մեծ զարդերի նախերդանքն սկսեց դեռ 1914-ի ամռանը, երդումի շրջանում կազմակերպած մասնակի տեղահանություններով ու կոտորածներով: Այսուհետեւ իթթիհատական հայտնի հոետոր նազի բեյի հետ միասին ջանք շխնացեց ոտքի հանելու թուրք խալարամիտ ամբոխը անզեն հայ ժողովրդի դեմ, երդումից մինչև Մասուլ:

Աշքառու շարդարար նահանգապետների շարքում սարսափ է ազգում Զեմալ Ազմիի նկարը, գրեթե քառակուսի դեմք, արյունկզակ ծնոտ. մի կատարյալ հրեշ, որ դարերը ճեղքելով բերել է ու մինչև մեղ հասցրել ասիական բոլոր բարբարոսությունների նմուշները: Սա էր, որ երկու օրվա մեջ ունշացրեց Տրապիզոնի տասնչորս հազար հայերին և որ նախապես զարդել տվեց զինվորագրված երիտասարդներին, հավաքեց քաղաքի վեց հարյուր ականավորների ու բարձելով նավերը՝ ծովամույն արագ, ապա դուրս հանեց քաղաքից կանանց, երեխաներին և ճեմիլլիկ գյուղի մոտ ունշացրեց բոլորին այնպիսի անդիտությամբ, որ գերազանցում է մարդկային ամեն երեակայություն ...

Երդեն ուշ էր: Գիշերվա ժամը 12-ն անցել էր, երբ Խոսրովն իր անկողնուց գոշեց քնաթաթախ: «Ճերի՞ք է, ելեք պառկեք»:

Անհողին մտանք, բայց աշքերս չէի կարողանում փակել. քունու բոլորովին փախել էր: Աշխատում էի Անահիտին աշքիս առջև բերել, իր մասին մտածել, բայց դահիճների նկարների ազդեցությունն ավելի ուժիղ էր, և երկար ժամանակ խավարի մեջ նրանց հրեշատիպ դեմքերը ցատկուում էին աշքերիս առջև ...

* * *

Հեռավոր գաղութում հաստատված, բայց երկրի հետ սերտորեն կապված «Ճայրենիքը» մեծ դեր էր կատարում: Անվիճելի իրողությունն է, որ եթե հայությունը գաղութիներում պահպանում է իր կիրապարանը, դա մեծ շափով արդյունքն է այն կազմակերպված աշխատանքի, որ վարում են հայ հանրային, քաղաքական հոսանքները, նրանց թեր-

թերն ու հրատարակությունները: «Հայրենիքը» մեծ տեղ ուներ այդ հրատարակությունների մեջ: Սկսելով նյու Յորքում՝ նոր էր լրացրել իր քսանամյակը Բոստոնում: Ընկերներից ոմանք՝ դոկտոր Թաշճյանը, պրոֆ. Զաղմագնյանը, Մ. Համբարձումյանը, Ն. Տեստեկյուլը, այդ գործի վրա սպառել էին 10—15 տարվա աշխատանք, մեծ մասամբ դժուգարին, անտանելի պայմաններում: «Հայրենիքի» խմբագրությունը մի «Ազգային բյուրո» էր, առանց որի ոչ մի աշխատանք չէր կատարվում: Յոլոր ազգային հանգանակությունները նրա միջոցով էին տեղի ունենում, բոլոր ժողովներն այստեղից էին դեկավարվում, գաղթականների համար այն մի թղթատուն էր, տեղեկատու մարմին. այստեղ էին գալիս նամակները տարագիրների անունով. շնայած որ անցել էր հինգ տարի, դեռ մնում էր հայտարարությունների հատուկ բաժինը, որտեղ շարդից ազատվածները փնտրում էին իրենց կորած, աքսորված հարազատներին: Օրն ի բուն բաց էին խմբագրության դռները, և ամեն մարդ մուտք ուներ այստեղ, նրանց ընդունում էին մտերլորեն, լսում ուշադիր, կարեկցում ցավին, օգնում բարոյապես՝ միշտ պահելով նրանց մեջ հավատը դեպի ավելի լավ ապագան:

Ինչպես մի ժամանակ Երևանում, այստեղ էլ նրանց մեջ ժողովը դականություն ուներ Համոն: Օրերով նստած դիտում էի այցելուներին, և միշտ, խորը թախիծի հետ, ինձ համակում էր մի հաճելի զգացում, որ մի անկյուն կա, որտեղ հողմավար հայության բեկորները կարող էին իրենց վշտերը ամոքել: Նրանք պատմում էին իրենց ցավերը միացր, զավակների կորստի մասին խոսում էին շնչյունով, ու նրանց շուրջերն ակամայից դողում էին զերմից բռնվածի պես: Բայց լինում էին և այնպիսիները, որոնք կարծես ծնված էին հավիտենական պայքարի համար, և լսելով հայ-թուրքական պատերազմի մասին՝ զալիս էին ռազմության դինվոր» գրվելու, Հայաստանին «իմտատ» անելու պատրաստակամությամբ:

Օրը օրին դարձյալ մթազնում էր հայկական հորիզոնը: Նոյեմբերի առաջին օրերին մեզ հասավ Կարսի անկման լուրը, թուրքերը շարժվում էին դեպի Ալեքսանդրապոլ. կրկնվում էր նույն բանը, ինչ երկու-երեք տարի առաջ:

Մի քանի օր հետո Եվրոպայից ստացված հեռագրի համաձայն, մեկնեցի Ժնև: Դյուրությամբ գտա «Գրոշակի» խմբագրությունը, որտեղ հույս ունեի տեսնելու մեր ներկայացուցչին, որ իր հասցեն չէր

հայտնել: Ժնևը, հատկապես «Գրոշակի» խմբագրությունը, այն ժամանակ պատկերանում էր իբրև հայ հեղափոխական շարժման ուկտատեղի: Եվ անտարբերությամբ չէր, որ մոտեցա երկաթյա շրջափակով պարտեղի մեջ ընկած երկարկանի համեստ շենքին, որ կարծես ավերակ էր և կենդանության շունչ շունչ: Պարտեղի խորքում, ծառերի մեջ, կիսով շափ փլած ծողափայտերը մատնում էին հանգստյան տաղավարի մնացորդները ... Վար թափված ոստերը, թիկը, մացառները լրված անկյունի տպավորություն էին թողնում: Շենքի դուռը բաց էր, ներսը պատերից կախված էին նահատակ հեղափոխականների նկարներ, երկու սենյակների միջանցքածե մասում, ապակեպատ դարակներում գրքեր էին շարված: Մաքուր, համեստ կահավորված պաղ սենյակներն ավելի շատ հիշատակարանի, քան բնակարանի տպավորություն էին թողնում: Մարդ չէր երեւմ. շենքի ներսը գերեզմանի պես լուր էր: Տարակուսանքով դուրս էի զալիս, երբ ներքնահարկից լսեցի կանացի մի ձայն:

— Ո՞վ է:

— Ներեցեք, տիկին, որտեղ՝ ու տան տերը կամ մեկը ...

— Ի՞նչ տան տեր ...

Ու հանկարծ դիմացս բուսավ մագաղաթի պես դեղին գեմքով, նիհարակազմ մի մարդ, որ ձեռքը կողին՝ վիրավորված արժանապատվությամբ հարեց.

— Այս շենքի մեջ կիներ չկան, պարո՞ն, սխալ հասցեով եկած եք ... ինձ համակած ակամա զվարթությունը բարկացրեց նրան:

— Ո՞վ եք և ի՞նչ կուզեք:

— Ներեցեք, երեխ դուք տիար Անտոնն եք:

— Այո՞ :

— Ընկերները պատմել են ինձ Զեր մասին:

— Ի՞նչ ընկերներ,— ասաց այժմ հետաքրքրությամբ:

— Ամերիկայի:

— Ընկեր Թեհակարյա՞ն:

— Այո՞ :

— Զբսե՞ս մի, օրհնվածի զավակ, արի ներս ...

Այստեղ պարզվեց, որ մեր ներկայացուցիչը հինգ օր առաջ մեկնել էր՝ առանց հայտնելու, թե ուր տիար Անտոնի մոտ թողնելով ինձ համար մի նամակ: Նա գրում էր, թե Պոլսից ստացած մի նամակի շնորհիվ գտել է իր մոտ ազգականներից մեկի հետեր Բելինում, որտեղ և

մեկնում է: Պետք է ևս էլ աճապարեի, եթե ուզում էի համալսարան ժողովը...

Տիար Անտոնն ուներ հեղափոխական անցյալ Բալկաններում: Բայց գրեթե «Դրոշակը» ժնկում հաստատվելուց ի վեր շենքի ու գույքի բժախնդիր վերահսկիչն էր: Նա հասկացավ, որ եկել եմ կարեռ դործով, բայց ոչ մի հետաքրքրություն չարտահայտեց: Հյուրասիրեց ինձ թեյով: Զյուրյուց պարզվեց, որ «Դրոշակի» խմբագրությունն ուզում են Փարիզ փոխադրել, և մտագրություն կա ժնկի շենքը ծախելու՝ այնտեղ մի ուրիշը գնելու համար: Դառնությամբ էր խոսում այդ մասին. նրա կարծիքով «Դրոշակը» ժնկից փոխադրվելուն պես կխամրի: Դա մի անպատասխանատու դործ էր, անգամ ոճիր շենքի փառապանծ անցյալի նկատմամբ: Նա չէր կարող հասկանալ, թե ինչպես կարելի է «Հայ հեղափոխության եջմիածինը» վաճառել: Տիար Անտոնը միտք չուներ ժնկի շենքից հեռանալու. կատվի պես նա տիրոջից ավելի էր կապված շենքի ծակուծուկերի հետ. նա գրեթե վստահ էր, որ մինչև վաճառվելը այդ շենքի մեջ էլ կմեռնի. արդեն շատ ապրելիք չուներ, տարիքը, հիվանդությունը և այլն. Հակառակ պարագայում՝ պիտի խնդրեր շենքի նոր տիրոջից թույլ տալ ապրելու այնտեղ դռնապանի պաշտոնով:

Լսում էի, բայց միտքս ուրիշ տեղ էր: Հյուզված ու ցրված էի. «Հետքը գտնվել էր»: Պետք ունեի մենակ լինելու՝ այդ լուրի արժեքը շափելու համար: Տիար Անտոնն ինձ օգնեց տեղավորվելու հարեան մի պանդոկում: Հակառակ աճապարանքիս, հինդ-վեց օր տեսց, մինչև կարողացա թույլտվություն ստանալ թեղինի համար, ուր գնում էի մեռողացա թույլտվություն ուսանելու նպատակով: Դեկտեմբերի 3-ին մեկնեցի:

* * *

Գերմանիան գեռ գտնվում էր պատերազմի հետևանքով ստեղծված ծանր կացության մեջ: Հաշտության պայմանները երկրի համար ստեղծել էին կիսագաղութային վիճակ, տնտեսական առումով: Պատերազմական ծանր տուգանքները քայլացել էին երկրի տնտեսությունը: Հաշտությունից ի վեր իրար հաջորդող կառավարություններն անկարող էին գտնել: Երկիրն անհանդիս էր, գործադուները մարում ու նորից բռնկվում էին ամեն տեղ:

Թեղին հասա երեկոյան. թեև հազիվ ժամը 10-ն էր, բայց շորս միլիոն բնակչություն ունեցող այդ քաղաքի կյանքը մեռած էր: Զյունախառն անձրև էր տեղում: Ինքնաշարժը կանգ առավ «Թիրկարտեն»

Հյուրանոցի դիմաց, որտեղ ապրում էր ներկայացուցիչը: Անհամբեր էի իմանալու, թե ինչ գրության մեջ է գործը: «Շատ լավ է», եղավ պատասխանը: Թալեաթը թեղինում էր: Եվ ցույց տալով գերմաններին մի թերթ ընդգծված մասերով ասաց.

— Այս հոդվածն ուղղված է «Իթիհատի», հատկապես Խմայիլ Հագկը դեմ: Դրում է Մեհմեդ-Զեքին:

— Ովքե՞ր են դրանք:

Առաջինը իթիհատական երիտասարդներից է, որ երեք տարի առաջ կուսակցության կազմից ուղարկված է Թեղին՝ ուսում ստանալու համար: Մեհմեդ-Զեքին մութ անձնավորություն է, որ ժամանակին Պոլսում «Աղգային պաշտպանություն» անունով շարաթաթերթ էր հրատարակում, հայտնի շառատան, նշանավոր դրամաշրթ, նախկին իթիհատական պնակալեղ. հիմա այստեղ, բայց երեսութին, գործը լավ չէ նախկին պետերի հետ և ձեռնարկել է մերկացումներ: Այս հոդվածի մեջ Մեհմեդ-Զեքին, խոսելով Խմայիլ Հագկը կողմից հայկական խնդրի շուրջը գրած մի հոդվածի մասին, հարում է.

«Զարմանալի է, որ իրենց պետք Գերման Հանրապետության հյուրը... «Եվ Թեղինում բնակվող ոճրագործների կոմիտեի մասին Խմայիլ Հագկըն ուշինչ չի գրում»: Ապա շարունակելով.

«Մենք զիտենք, որ Խմայիլ Հագկը բեյը միայն Թալեաթ փաշայի հետ չէ, որ հարաբերվում է սերտորեն, այլև զոկտոր նազըմի և Հալեափի նախկին կուսակալ Պետրիի հետ: Հայտնի է, որ հայկական ողբերգությունը կազմակերպող ու դորձադրողները, ինչպես նաև իրենց անցանկալի նկատված թուրքերին մեջտեղից վերացնողները, այս երեխն են: Պոլսո կառավարությունը պիտի չուշանա նրանց արժանի պատիժը տնօրինելու: Թեղինում գտնվող իթիհատականները վերջերս սկսել են իրենց ընկերվարական հայտարարել: Պետք չէ հավատալ, ընկերության կանոնների պետք իշխան Սապահեղինն է, որ հազիվ կարողացավ իթիհատականների հալածանքից ազատվել: Ես մոտ օրերս մի դասախոսություն պիտի կարդամ, այդ բոլոր խնդիրներն անկողմնակալորեն քննության առնեմ և մերկացնեմ իթիհատ-թերագորի գործունեությունը»:

Մեղ Համբար կարենը այն է, որ այլև կասկած չէր մնում, թե ոճրագործներն այստեղ են: Թեղինում էին Թալեաթը, Պոլսո նախկին ուստիկանապետ Պետրին, Խմայիլ Հագկըն, Տրապիզոնի վալի Զեմալ

Ազմի բելը, որ ծխախոտի գործ էր սկսել և իր անունով խանութ էր բացել, որտեղ զբաղվում էր նաև գորգավաճառությամբ:

Այս վերջին լուրն ինձ ուղղակի շնչեցրեց. տասնորս հազար մարդ կոտորել, նրանց հարստություններով գործ ստեղծել ու անվրով ապրել մի քաղաքակիրթ երկրի մայրաքաղաքում Ես անհամբեր էի այս սրիկայի հաշիվը տեսնելու, բայց այդ քայլը կարող էր փախցնել մյուսներին, ավելի մեծերին, մանավանդ Թալեաթին, որի ճիվաղային ուրվականը հալածում էր ինձ դիշեր ու ցերեկ: Պետք էր շարժվել զգույշ և որսը ձեռքից շփախցնել, թեև աներևակայելի էր ինձ համար, որ Տրապիզոնի վալին հայտնագործվելուց հետո կարող էր դեռ ապրել ...

Պարզվեց, որ մի քանիսի հտեւից արգեն նշանակված էր հետախուզություն և, առհասարակ, զործն իր ընթացքի մեջ էր: Ես էլ, ուղեմն, պետք է լծվեի աշխատանքի՝ առաջին հերթին ձեռնարկելով հետախուզություն:

Հաջորդ առավոտ, դեռ հյուրանոցից դուրս չեի եկել, հայտնվեց Հաղորը՝ 27—28 տարեկան մի թխադեմ երիտասարդ, որ ուսանում էր Թեոփինի համալսարանում: Նրա դուրեկան դեմքին մի լայն ժայռապարզվեց, երբ ծանոթացավ հետո: Նա ասաց, որ եկել է մի քանի հետաքրքիր տեղեկություններ հայտնելու, որ իմացել էր Հրափից: Իբր թե այս օրերս էնվերը Մոսկվայից այս կողմերը պիտի զա՝ իթթիհատը վերականգնելու նպատակով: Բայց այդ խնդրի շուրջը իր ու Թալեաթի մեջ մրցակցություն կա: Վերջինի կողմնակիցներն ուղղում են, որ վերակազմված կուսակցության կենտրոնատեղին Բեռլինը լինի, և կուսակցությունը արտասահմանյան հանգամանք ունենա: Այնինչ էնվերը պընդում էր, որ կուսակցության կենտրոնը լինի Մոսկվայում: Ինքը՝ Հրափի, կարծում է, որ այս տարակարծության պատճառը հետեւալն է. Էնվերը շատ հաճախ գտնվում է Մոսկվայում, Անդրկովկասում և ուղում է իր ազդեցության տակ պահել կուսակցությունը: Բացի այդ, ցանկանում է կարելի եղածի շափ մոտ լինել Անտառիային և բաժին ունենալ երկրի ներքին գործերի մեջ: Մինչդեռ Թալեաթի կողմնակիցները այն տեսակետին են, որ իրենց միջամտությունը կարող է ազմուկ քարձրացնել Եվրոպայում և վնասել երկրում սկսված ազգայնական շարժման զարգացմանը: Այդ առթիվ իբր թե մի քանի օր առաջ խորհրդակցություն է եղել Թալեաթականների, եղիպտացի Շեյխ Արդաւլ-Ազիդի, սիրիացի էմիր Շեքիր Ասլանի և այսուղ դտնված հնդկաս-

տանցի մի քանի իսլամների մասնակցությամբ: Թալեաթը՝ ինքը, ներկա շի գտնվել այդ խորհրդակցությանը:

Հրափը այս տեղեկություններն ստացել էր թուրք ուսանողներից, որոնց հետ մտերիմ էր: Ինքը՝ Հրափը, ինչպես պատմեցին, դեմքով, անունով, անաղարտ տաճկերենով իսկական թուրքից չէր տարբերվում: Բայց ընտիր հայ էր: Ուներ մտերիմներ թուրք ուսանողների և թուրքերի մեջ, զգալի ծառայություններ էր մատուցում մեր դիվանագիտական ներկայացուցիչներին կարենու տեղեկություններով:

Այս տեղեկությունները հաղորդելուց հետո Հազորը մեկնեց: Քիչ հետո դուրս ելանք և մենք: Զյունում էր խոշոր փաթիլներով, որոնք թիթեռների պես ճախրում էին ամեն ուղղությամբ և համրորեն վայր իջնում: Տաք, հանդարտ և հաճելի ձմռան օր էր: Գնում էինք համրաքայլ՝ ամեն մեկն իր մտքերի հետ: Քիչ անց մտանք մի լայն պողոտա, որ երկարում է կայսերական պալատից ուղիղ գծով Բրանդենբուրգ Կիշն Թոռ, Բեռլինի ամենամեծ փողոցը: Անհրաժեշտ էր, որ շուտով ծանոթանայի քաղաքի դասավորությանը, զիսավոր թաղամասերին, փողոցներին: Անհրաժեշտ էր, որ գեթ մի քանի գերմաններն բառեր առվորնի:

Թերվեցինք դեպի ձախ, ապա, անցնելով մի քանի երկրորդական փողոցներ, հասանք մի անկանոն հրապարակ: Դեպի աջ, հրապարակ մտնող փողոցի անկյան բութ ծայրում, գտնվում էր Զեմալ Ազմիի ծխախոտավաճառառանցը:

Անցանք խանութի առջեկից: Հազիվ զսպեցի ցանկությունս ներս մտնելու՝ հրեշի կենդանի կերպարանքը տեսնելու համար: Դեպի աջ ձգվող փողոցով դուրս ելանք հրապարակից և շրջելով թաղամասը՝ զուգահեռ փողոցով ետ վերադարձնք դեպի հրապարակի ձախ մասը, որտեղ, փողոցի ծայրին շհասած, կար մի ճաշարան-սըրճարան: Ճաշի համար դեռ շուտ էր. տեղ գրափեցինք պատուհանի մոտ, որ նայում էր հրապարակի մյուս մասում Զեմալ Ազմիի խանութին, և մեկական սուրճ պատվիրեցինք: Երրորդ օրն էր, որ այստեղ հսկողություն էր նշանակված, բայց մինչև հիմա՝ ապարդյուն. առևտուր շուներ, ժամերով չէր բացվում խանութի դուռը: Հազարներով վարձ վճարել և խանութի դուռը զոց պահել, նշանակում է հատուկ նպատակով էր հաստատվել խանութը: Տարակույս շկար, որ ժամադրավայր էր, բայց ուր էին անիծյալ տերերը:

Իմ ուշքն ու միտքը դեռ Հազորի ասածների վրա էր. եթե հազթող հանդիսանա էնվերի տեսակետը, Թալեաթն էլ կարող է նուսաստան

մեկնել կամ Անդրկովկաս: Թեև, մյուս կողմից, թուրք ազգի շահերի համար Թալեաթի ներկայությունն ավելի կարևոր էր այստեղ՝ Եվրոպայում: Հայտնի էր, որ նա Եվրոպայում եռանդուն գործություն է վարում, հատկապես դիվանագիտական աշխատանք, անկասկած Քեմալի գիտությամբ և ցանկությամբ: Թեև քանից Մուստաֆա Քեմալին վերագրվեցին հայտարարություններ, որոնք նպատակ ունեին այն համոզումը տարածելու, թե իր ղեկավարության տակ եղած ազգայնական շարժումը ոչ մի կապ չունի Թալեաթի իթթիհատական խմբի հետ, քայլ տարակույս շկար, որ Անատոլիայի մեջ ծայր առած արդ շարժման ջիղը իթթիհատականներն էին: Բանակը, «Ազգային Մեծ Ժողովը», Երեսփոխանները մեծ մասամբ իթթիհատականներ էին: Ի՞նչ հաշիվ կա այդ բազմության վրա Թալեաթին էլ ավելացնելու: Թե՛ Ռուսաստանում կատարված բանակցությունների ժամանակ, թե՛ Իտալիայի խողովակով ստացված զենքի ու ուղմանյութի օժանդակության գործում առավելապես Եվրոպայում գտնվող իթթիհատականներն էին աշխատանք թափել: Փաստորեն Թուրքիայի ճակատագիրը վարողները դարձյալ իթթիհատականներն էին՝ աշխատանքի բաժանումով ուրիշ աղքայնականների հետ:

Ինձ այս մտքերն էին պաշարել, երբ հանկարծ նկատեցի, որ մի կին մտավ Զեմալ Ազմիի խանութը: Ես անմիջապես դուրս թռա. մի բոպե շանցած մայթի վրա երևաց և ընկերս: Բայց ներս մտնելն ու կնոջ դուրս գալը մեկ եղավ: Ինչ-որ ներքին տհաճությամբ Հարկադրվեցի հետևել այդ կնոջը՝ անցնելով հրապարակի մյուս մասը: Քիչ ներքեւ հասավ ընկերս՝ պնդելով, որ լսել էր խոսակցությունը Ազմիի հետ:

Հրեշն ասել է. «Հուզս ունիմ, որ ինձ իմաց կտաք»: Կինը պատասխանել էր. «Անպայման, եթե արտոնի»: Բայց երեսութիւն Հրափի տեղեկությունները ճիշտ էին:

Իմ հասկացողությամբ ամենաստորին բանը կին հետապնդելն էր, քայլ ի՞նչ արած: Զյունը դադարել էր: Սև մուշտակով, մորթյա կլոր գլխարկով բարեձև կինը կնում էր համրաքայլ՝ կարծես շատ գոհ քայլելու առիթից: Նա մերթընդերթ իշեցնում էր գլուխը՝ սեփական քայլերը զննելու ձեռվ ու հանկարծ կարծես ծանծրանալով այդ գործից բարձրացնում էր գլուխը ու քայլերն արագացնում: Միայն երազանքներով համակածը կարող էր այդպես քայլել:

Կինը շարունակեց ճանապարհը պողոտայով դեպի վար: Ինքն իրե-

նով հիացածի պես՝ նա անցավ՝ մերթ ոտքերին, մերթ դիմացը նայելով, շուրջ մեկ ժամվա ճանապարհ, ապա, թեքելով դեպի աջ, մտավ առանձնատների շրջանը: Այստեղ կանգ առավ մի հոյակապ բնակարանի առջև, որ կրում էր 165 համարը: Զյունապատ պարտեզի դուռը մեղմիվ ետ մղեց, արագորեն բարձրացավ տարածուն, կարճ, քարե աստիճաններով ու ձեռքի բանալիով մուտքի դուռը բանալով՝ ներս մտավ....

Հաջորդ առավոտից սկսած, հսկում էի այդ շենքը. կեսօր էր, երբ հանկարծ բակում մի երիտասարդ տեսա, որ զանգահարեց և դռան բացվելուն պես ներս մտավ. այնքան արագ կատարվեց այդ, որ շհանկացա, թե երբ և որ կողմից եկավ: Հասակով թիկունքից նման էր էնվերին: Անիծում էի անուշադրությունս: Մի քիչ ներքենում՝ անկյունում, մեկը կանգնած նայում էր. այս ի՞նչ էր, արդյոք նա էլ ի՞նձ էր լրտեսում... Գլուխը անկյունից դուրս հանելուն պես զարմանքով տեսա, որ Հազորն է:

— Ի՞նչ եք անում այստեղ:

— Գնանք, կարող է դուրս գալ ու տեսնել ինձ:

— Ո՞վ:

— Իսմայիլ Հագկըն:

— Նա է՞ր, որ քիչ առաջ ներս մտավ:

— Իշարկե:

— Է՛ս, ես էլ կարծեցի, թե էնվերն է:

— Գնանք, հանկարծ շնկատի մեզ:

— Դուք գնացեք, այդ մարդը ինձ չի ճանաչում:

Գրեթե մեկ ժամ սպասեցի, երբ դուրս եկավ Հագկըն և արագ քայլերով ուղղվեց դեպի վար: Սաստիկ հուզմունք էր. ինձ թվում էր, թե գնում է էնվերին առաջնորդելու ափսոսում էի, որ զենքս հետս չէր: Հասավ մեծ պողոտայի ծայրամասին, Ուհլանտ փողոցը և մտավ 47 Համարի տունը: Կես ժամից ավելի սպասեցի այստեղ, քայլ աղքանական արագությունում էր, ցուրտ էր: Անոթի էի: Ուղղվեցի դեպի ճաշարան, բայց ուղղությունները շփոթեցի և հարցուփորձով դժվարությամբ գտայլերը զննելու ձեռվ ու հանկարծ կարծես ծանծրանալով այդ գործից բարձրացնում էր գլուխը ու քայլերն արագացնում: Միայն երազանքներով համակածը կարող էր այդպես քայլել:

— Ո՞ւր ես դու, ա՞յ տղա:

Պատմեցի, աշքերը շոեց:

— Ուհլանտ, ասում ես:

— Այո՛:

— Համար 47:

— Այո՛:

Զեռքերը իրար խփեց, նստեց ու ծնոտը վեր ցցած ճառագայթող դեմքով նայեց:

— Ես աղամարդ չեմ, եթի Թալեաթը չի բնակվում Ուջանտ համար 47 տանը:

— Ինչպե՞ս:

— Առավոտյան ժամը 10-ի մոտերը Աղմիի խանութը մտավ այն քարձրահասակ մարդը, որին տեսել էի երեք օր առաջ: Դուրս գտնուն պես ճանաշեցի, գիտե՞ս ում... Բեհանդին Շաքիրին:

Օրվա հաջողությունն այնպես թունդ էր հանել մեզ, որ ենթադրում էինք միհաժամանակ ձեռք անցկացնել երկու գլխավոր ոճրագործներին, Էնվերին՝ առանձնատների շրջանում, Թալեաթին՝ Ուջանտ. գուցե երկուսին միհասին, տեսակցության պահին, որ թվում էր ստույգ, այլ կերպ ինչո՞վ բացատրել դեպքերի կապակցությունը: Ներս մտավ Հազորը երկու նոր ընկերների հետ: Դրանցից մեկը՝ Վազան, միջինից քիչ քարձր, նիհարակազմ մի երիտասարդ էր, սեփ-սև մազերը խնամքով ետ սանրած, խոսում էր ծանր, հանդարտ, առանց ավելորդությունների, ժուժկալ նախադասություններով: Դեմքը խոհուն արտահայտություն ուներ, մանավանդ խելոք աշքերը: Մյուսը՝ Հայկոն, ուսանող էր. ձվածե, համակրելի դեմքի փայլն էր սիրուն ժամանակ, զուսպ արտաքինի տակ ծածկված էր պայծառ, մաքուր ու զարմանալիորեն ընկերասեր հոգի: Երկուսն էր իրազեկ էին խնդրին:

Հազորը հայտնեց Հրափից լսած տեղեկությունները, որ, առ ի զգուշություն, ուրիշ մեկի հետ չէր տեսնվում: Թուրքական ակումբում արտակարդ եռուղեռ կար: Հայաստանում Քեմալի ձեռք բերած հաջողությունները ոգեշնչել էին բոլորին. անհնարին չէր համարվում նորից մինչև Բաքու արշավելու հավանականությունը: Էնվերը չէր եկել, բայց ամեն ժամ կարող էր գալ: Համեմատելով, կշռադատելով օրվա տեղեկությունները և դիտողությունները՝ ժողովը որոշեց աշալուրշ հսկողության տակ առնել Ուջանտն ու Էնվերի կող բնակարանը:

Գիշեր էր, բայց ես դեռ տքնում էի թերի ֆրանսերենիս օգնությամբ, ճամփորդական մի զրուցատրական բառարանի միջոցով, սովորել գերմաներին անհրաժեշտ բառեր և արտահայտություններ: Լուսաբացին ինձ թվաց, թե արդեն յուրացրել եմ բավական բան: Բայց երբ անկողին մտա, մտքիս մեջ հազիվ շորս—հինգ բառ էր մնացել...

* * *

Շուրջ երկու շաբաթ հսկողության տակ պահեցինք էնվերի կնոջ բնակարանը, բայց տիկինն այլևս շերեաց: Օրական մեկ—երկու անգամ այդ շենքից հայտնվում էր մեկ կամ մյուս սպասուհին ու գնումներով վերադառնում: Էնվերի հետքը մատնող որևէ նախանշան չհայտնվեց. եղանակ էր թեոլինում, պիտի գա՞ր, անկարելի եղավ ստուգել: Մի օր միայն այստեղ կանգ առավ մի ինքնաշարժ, որից դուրս եկան նսմայի Հազը և մուշտակի մեջ փաթաթված մի ուրիշը: Դեպքը նորից իրար անցրեց մեզ, բայց երբ հաջորդ օրը նա հայտնվեց միայնակ, Հազորը հետապնդելով պարզեց, որ բժիշկ է, ինչ-որ վագներ:

Ծննդյան տոների նախօրդակցություն ունեցանք կիպարիտ նազարյանցի մոտ, որ խորհրդականի հանգամանքով աշակեցում էր Հայկական հյուպատոսարանի գործերը վարող հայ-գերմանացի Գրինֆիլդին: Ծեկ, գանգրահեր, կապուտաշալ նազարյանց ավելի շատ նման էր ծայրագույն հյուսիսի անաղարտ սլավոնի, քան հայի: Մեր կարող ու փորձառու ընկերներից էր: Նրա կարծիքով ապարդյուն էր էնվերին թեոլինում սպասելը:

Հազար ու մի շշուկներ են շրջում էնվերի մասին,— ասում էր նա, — անցյալներում թուրքական մի թերթ գրում էր, որ էնվեր փաշան սավառնակով թեոլին պիտի գար, բայց ճանապարհին սավառնակը իբր թե ջարդվել է, և նա հազիվ է ազատվել մահից: Բախտախնդիրն ինքն է հնարում և տարածում այդ լուրերը՝ իր հետքը թաքցնելու համար: Կարծում եմ, որ այդպիսի լուրեր են նաև այստեղ՝ թուրքական շրջաններում եղած զրուցները:

Նա թեև չէր գտնում նաև անհավանական, որ էնվերը թեոլինում եղած լինի, բայց ոչ ավելի քան մեկ—երկու օրով, իսկ այդ շատ քիչ ժամանակ էր նրան ձեռք բերելու համար:

Խորհրդակցությունը վեճի բնույթ ստացավ ու երկար տեսց: Բայց ինձ արդեն չէր հետաքրքրում այդ:

Նոր էի հասկանում, որ ոճրագործների հետ միենույն քաղաքում լինելը բավական չէ. գործը տեսական ջանքերի և անխոնչ հետապնդումների կարիք ունի....

* * *

Դեկտեմբերի վերջերին հիվանդությունն ինձ դամեց անկողնին: Նորից մթագնում էին աշքերս, և զլխապտույտ էի ունենում: Վերջին

177

անգամ այդ հիվանդությունը կրկնվել էր Երևանում, երեք-չորս տարի առաջ, իսկ ես կարծում էի, որ այն վազուց անցել է:

Ոտքի ելնելուս պես «Թիրկարտեն» հյուրանոցից փոխադրվեցի Առևտուրգեր փողոցի համար 51 տունը, որտեղ ապրում էր Հայկական հյուպատոսարանի քարտուղար Երվանդ Աբելյանը, 23—25 տարեկան մի աշքաբաց երիտասարդ: Այն ժամանակ շատ դժվար էր Բեռլինում ազատ սենյակ գտնելը: Աբելյանին հաջողվել էր համոզել տանտիրություն՝ ինձ տրամադրելու հարեան սենյակը:

Վաթսունամյա տանտիրութին՝ տիկին էլիզաբեթ Շթելբաումը, ամեն գերմանուհու նման, թօնինդիր տանտիկին էր և ուզում էր սենյակիս կարգ ու կանոնը և մաքրությունը, մինչև անգամ կոշիկներս մաքրելը, իր ձեռքով կատարել: Բայց ես ոչ մի աշխատանք չէի թողնում նրան, ինչ որ նախապես տարօրինակ էր թվում նրան, ապա հետզհետե՝ հաճելի: Պարզում էի նրան, որ ես երիտասարդ եմ, իսկ ինքը՝ ծեր, իսկ մեզ մոտ ընդունված չէ, որ ծեր կանայք ծառայեն երիտասարդներին: Նա գտնում էր, որ թեև շատ հարգելի և բանավոր է այդ սովորությունը, բայց պարտավոր է իրենը գործադրելու, քանի որ վարձակալության պայմանը այդպիսին է, ու ես էլ դրամ եմ վճարում այդ բոլորի համար: Եվ այդ՝ մեծ մասամբ դեմքի ու ձեռքի շարժումներով զրուցներն օգնում էին ինձ քիշ-քիշ գերմաներն հասկանալ:

Աբելյանին հաճախ այցելում էր իր մոտ ընկեր Լևոն էֆթյանը, 21 տարեկան մի կենսուրախ ուսանող, որ ապրում էր քրոջ ու փեսայի հետ: Մի քանի օրվա ընթացքում նրանք մտերմացան ինձ հետ, բայց երկուսն էլ անտեղյակ էին խնդրին և կարծում էին, թե եկել եմ ուսանելու: Սրտաբաց և նվիրված ընկերներ էին: Նրանք դժգոհ էին, որ շատ քիչ ժամանակ եմ տրամադրում գերմաներին սովորելուն. նրանց համար այդ մի անհանդուրժելի բան էր, հայ ուսանողի համար անպատճեր և օր չէր անցնում, որ շարժարծեին այդ հարցը:

— Այդ ձեռվ դու շես կարող համալսարանի երես տեսնել, բարեկա՞մ, — ասում էր Աբելյանը:

— Միայն սիրո միջոցով կարելի է լեզու սովորել, անհրաժեշտ է մի սիրուն ուսուցչի գտնել սրա համար, — կատակում էր էֆթյանը:

Ու մի երեկո հանկարծ նրա հետ ինձ այցի եկավ մի շատ սիրուն աղջիկ, որ պարապում էր լեզվի դասերով:

— Ամոթով շճես զիս, — ասաց նա հայերեն՝ ներկայացնելով ինձ օրիորդին, — ասել եմ, որ դու ես խնդրել գալու, որովհետե հիվանդ ես, և այլն:

Անակնկալի մատնված՝ ստիպված եղա հաստատել այդ, թեև ոչ մի բաղձանք շունեի ավելի ընդարձակելու շրջապատս: Թարմ, գեղեցիկ, մանավանդ պարզ ու բնական օրիորդ Լոլա Բայլնզոնը իր մանկությունն անց էր կացրել Մերձբալթյան շրջանում և զիտեր ուսւերեն: Բայց ես գերմաներին չէի հասկանում, իսկ էֆթյանը՝ ուսւերեն, որի պատճառով անհնար եղավ ընդհանուր զրուցը: Այս պայմաններում նախաձեռնությունն անցավ էֆթյանին. նա երկար խոսում էր իմ մասին, օրիորդը լսում էր ու մտերմորեն ժպտում: Վերջապես այնպիսի մի կացություն ստեղծվեց, որ մեծ անքաղաքավարություն կլինիք մերժելը. Էֆթյանն ինձ դրեց կատարված իրողության առաջ, և ես պայմանավորվեցի շբաթական երկու ժամ լեզվի դասերին հատկացնել օրիորդի մոտ: Առաջին դասերս այնքան հաջող էին, որ հույս ունեի կարճ ժամանակում այդ դժվարությունը հաղթահարել:

Կաղանդի գիշերը հրավիրված էի էֆթյանի քրոջ մոտ, որ ամռանու՝ պարոն թերզիրաշյանի հետ Օրանին փողոցում ծխավաճառի մէր համեստ գործ ունեին: Նրանց մոտ ծանոթացա տարագիր հայրենակիցներից Գևորգ Գալստյանի հետ, որը նույն տեղում լավ հաշակով նպարավաճառի մի խանութ ուներ: Մնում էի զարմացած, թե ինչպես այդ հայրենակիցները, կորցնելսվ ամեն բան ու ճողովրելով մահից, հինգ տարվա թիշ նորից կարողացել էին դիրք ու բարեկեցիկ վիճակ ստեղծել: Ավելի զարմանալին այն էր, որ կյանքի օժվարությունները չեին ճզմել նրանց մեջ մտավոր, բարոյական պահանջը. ամերիկյան կոլեզի նախկին ուսանող Գալստյանը համալսարանականի շափ բան դիտեր, բոլորն էլ տիրապետում էին գերմաներենին՝ մայրենի լեզվի պիտի:

Դեռ երիտասարդ տեր և տիկին թերզիրաշյանները ոչինչ չեին ինայի կաղանդը կատարյալ գարճներու: Սակայն բավական էր օրվա կապակցությամբ վերջիշել անցյալը, որպեսզի ուրախության սեղանը զգացվեր ծածկված սև քողով: Ո՞ւ մեր սերոնդը նման առիթներով այլևս չեր կարող սրտանց ուրախանալ...

Հաջորդ իրիկունը նոր էի տուն դարձել Ռւճանտի հսկումից, երբ ներս մտան էֆթյանն ու Աբելյանը: Գեմքերից անմիջապես հասկացա, որ նոր դամակադրություն էին նյութել իմ դեմ: Էֆթյանի դեմքին գծագրված էր նուրբ և շարաճճի մի ժպիտ, իսկ Աբելյանը զննում էր ինձ հետախուզող հայացքով:

— Կաղվանդից դու պետք է մեզ հետ պարի դասերի հաճախիս, — ասաց էֆթյանը՝ ձեռքերը գոհունակորեն իրար շփելով:

— Ի՞նչ պարի դաս:
— Եվրոպական, և Արելյանին գրկելով մի պտույտ գործեց նրա հետ, այս այսպես ...
— Խե՞նթ եք, ի՞նչ եք. ի՞նչ պարելու ժամանակ է:
— Ճիշտ ժամանակը հիմա է. գարնանամուտ, պարեր և սիրահարություն:

Ու դիմացս նստեց անգործ մարդու անտարբերությամբ:
— Է՛, ինչպես պիտի լինի այդ, — ասացի՝ ընդառաջելով տրամադրություններին:
— Ամենից առաջ պետք է վրադ, զլուխդ մի քիչ կարգի բերես ...
— Թող, եղբա՛յր, տղան նախ անհրաժեշտությունը հասկանա, — միջամտեց Արելյանը՝ կարեռ գործի բնույթ տալով իր խոսքին. — խընդիրն այն է, որ միայն դաս առնելով դու չես կարող գերմաներեն սովորել, մինչև հիմա սովորածդ «վաս իս դաս»-ից այն կողմ չի անցել ...
— Կուզեք, որ երկու դասով գերմաներեն ճա՞ռ ասեմ:
— Ամսից ավելի է՝ այստեղ ես, — զոշեց էֆթյանը՝ անցնելով հարձակման:
— Անհրաժեշտ է գերմանական միջավայրի հետ շփման մեջ մըտնել, կենդանի խոսք լսել, որ ականջդ վարժվի, — վրա բերեց Արելյանը:
— Ականջը խոչ է, միայն սրտի միջոցով կարելի է սովորել:
— Այդ իր գործն է, թող բոլոր զգայարանները գործի դնե, միայն թե սովորի:
— Ես պարող չեմ ...
— Ինչպես թե պարող չես, երբ արդեն արձանագրել ենք և այս ժամանակամաններում էլ դրամը վճարել ...

Հաջորդ օրը, երեկոյան դեմ, «Գրյունվալդ» վրոսավայրին հարակից փողոցներից մեկում, ինչ-որ պարի պրոֆեսոր Ֆրիդրիխի սրահում խմբված էին 60—70 երիտասարդներ: Տղաները նման էին պահակազորի ծիերի՝ առույդ, կայտառ, կարմրաթուշ, ինքնավստահ դեմքերով: Աղջիկները զմայլելի էին՝ ալեծածան սարքված կամ հյուսքով վար կախված փարթամ վարսերով: Խմբված բոլորն էլ գեղեցիկ էին, բայց ամեն մեկը առանձին, իհարկե, պակասություններ ուներ:

Ուշացել էինք: Ընկերներս ժամանակ շունեցան ինձ ներկայացնելու պարոն Ֆրիդրիխին, դո՞ւ էի. արդեն տաղտուկը պարուրել էր հոգիս:

Յաց կուրծքը օսլայած շապիկով, ֆրակով պարոն Ֆրիդրիխը, ճաղատ գլուխը շափից դուրս հետ նետած, օդի մեջ ինչ-որ բաներ գոլնց և օձիքից դուրս քաշելով մետաքսի թաշկինակը՝ սրբեց քրտնած ճակատը: Ընկերներս նետվեցին դեպի աղջիկները և մի-մի հատ գրկելով՝ անցան շարքերի մեջ: Հանկարծ պարոն Ֆրիդրիխը սագի նման մի զիլ ձայն հանեց, դաշնամուրը դղրդաց, պարողներն արձանացած սկսեցին պտուվել ...

Ու մտածում էի, թե ի՞նչ լավ կլիներ, եթե հանկարծ հրաման լիներ մի «Գեռնտ» պարելու, օրինակ, թեկուզ «Սխտոր ծեծեմը» և կամ մեր սքանչելի «Դատարանիս դաշտումը», որ այն երազ օրերին վարում էր իրինցանց Զորոն՝ կարմիր թաշկինակը ճոճելով, շուրջպարի զուխն անցած: Հիշում եմ, թե ինչպես, հակառակ անցած տարիքին, ցատկուտում էր նա կապկի ճկունությամբ՝ դաշտից կալ քաշելով, կալից սար հանելով շուրջպարի մեջ եղած հարսներին և աղջիկներին, որոնց վեզկալները պարի մեջ խուզ մրմնջում էին ծնծղաների պես: Ինձ պատկերանում էին թոհ ու բոհի մեջ շարքից վար ընկնող ու լալով նորից շարքին անցնող փոքրերը, հարսների զուսպ ծիծաղը, աղջիկների հրավառ աշբերը: Այս կարծես լսում էի Զորոյի այցենման մկնոցը. «Դատարանիս դաշտում դատում դատը վերջացավ, մեր հայ մանկանց սրտերը հույսով լցվեցան», որին անմիջապես հաջորդում էր բազմածայն ներդաշնակ կանչը. Այս, այդ աղաղակը, որ մինչև հիմա ականջիս մեջ է. «Կըռվեցիք, հայ տղերը, վառված սրտերով, ճամփորդել սկսել ենք քաջ ընկերներով»: Տե՛ր Աստված, որքա՞ն հմայիլ էր այդ ամենը իր միամիտ պարզությամբ ...

Պարոն Ֆրիդրիխը շոր կոկորդով սագի նման հեծկլտաց, դաշնամուրը եղանակը փոխեց. գիտեմ «Պոլկա» է. զուզերը համեստորեն ոստոստում են՝ աջ ու ձախ դառնալով: Դաշլիճի մեջտեղում կանգնած հոգնատանց պարոն Ֆրիդրիխը դեկավարում է նրանց՝ կրկեսի ձիեր վարժեցնողի նման ետ ու առաջ ընկնելով. նա մերթընդերթ զազագած վազում է դեպի թերացողները. դաժան է: Պարողների դեմքերին դրոշմված է ակնածանք և հանդիսավոր լրջություն, նրանք շեն խոսում. ամեն մարդ լավ ցուցադրությամբ շահագոռնված է ու կլանված իր պարով: Միայն շեմ հասկանում, թե ինչո՞ւ բոլորը չեն, որ պարում են: Մանկերի ու աղջիկների մի խումբ գոհանում է կանգնած տեղում զինի շարժումներով և մտովի պարելով. ըստ երևութին սրանք պատ-

կանում էին «վարի դասարանին»: Եվ իրոք, Հենց որ պարը վերջացավ, հայտնվեցին ընկերներս և ինձ ծանոթացրին մի աղջկա հետ, որ գոհացավ գլխի նազելի շարժումով և ապա մազերի թանձր հյուսքը ձախ ուսից նետեց աշխին: Պարոն Ֆրիդրիխի գործնական բացատրություններով մենք սկսեցինք մանկապարտեղային վարժումներ կատարել: Բայց հազիվ էի մի քանի այդպիսի պառվաներ գործել, երբ հանկարծ աշքերս մթնեցին, զլուխս դարձավ. վայր չընկնելու համար ամրապես փարվեցի ընկերություն իրանին, բայց չեղավ, լսեցի, որ ճշաց ...

Այս հին հիվանդության կրկնությունն ինձ մտահոգեց: Բարեբախտաբար հետևանքներն այնպես ծանր չէին, ինչպես Երևանում և հաջորդ օրը ի վիճակի էի գնալ լեզվի դասին: Սակայն դասն սկսելուն պես զղացի, որ եկել եմ. ոչինչ չէի հասկանում: Ուշադիր օր. Բայց ողոնք անմիջապես նկատեց:

— Ի՞նչ է պատահել ձեզ:

— Մի քիչ տկար եմ:

— Ու, ես վաղուց եմ նկատել, որ դուք մի բանով միշտ զրադւած եք:

— Այո, օրիո՞րդ, ասացի ես՝ ճշմարտության պահանջի մղումով:

— Չե՞ք կարող ասել ինձ, թե ինչ է այդ:

— Ո՞չ ...

Նա թեթևակի ցնցեց գլուխը, անտեղի մտքերը վանելու ձևով:

— Այդ գեպքում, պատմեցիք ինձ ձեր հայրենիքի մասին:

— Ես հայրենիք չունիմ, օրիո՞րդ,— ասացի՝ խնդրելով ինձ արձակել ...

Երկու օր հետո ի վիճակի էի հերթապահությունս սկսելու Ռւհլանտում: Կնօր էր, երբ հանկարծ այդտեղ նկատեցի ընկերոջս, որ դիմացի մայթով իշնում էր դեպի վար, երկու մարդկանց հտեւց: Դրանցից մեկին անմիջապես ճանաշեցի, Բեհաեդդին Շաքիրն էր. մյուսը ո՞վ էր ...

— Գոկոր նազըն է,— շշնչաց ընկերս, երբ հասա նրան:

— Որտեղի՞ց ես բերում:

— Ազմիի խանութից:

Նրանք մտան համար 47 տունը: Հասանք վարի անկյունը: Քառորդ ժամ շանցած՝ մայթի վրա հայտնվեց Բեհաեդդին Շաքիրը և ուղղվեց դեպի վեր:

— Հետամուտ եղիր, ես կսպասեմ նազընին,— ասաց ընկերս:

Շաքիրը շատ արագ էր դնում, իսկ ես դեռ թույլ էի և այդ պահին՝

հոգնած: Թաղամասի կենտրոնական շրջանում, որտեղ Տառնցին շտրասե, Կանտ շտրասե և Կյուրֆուրստենդամ լայն պողոտաները կազմում են Շառլուտենբուրգի անցուղարձի մեծագույն երակները, քիչ մընաց ես նրան կորցնեի, բայց վրա հասա: Ուժասպառ էի, երբ Վիլհելմացարասեի վրա նա կանգ առավ մի հոյակապ շենքի առաջ, որի ճաշկատին պարզված դրոշակը մատում էր անգլիական դեսպանատունը: Կատարին պարզված դրոշակը մատում էր անգլիական դեսպանատունը: Բայց հոգնածությունից վլուխս ցավում էր: Մտածում էի, թե ի՞նչ դավեր է նյութում արդյոք այնտեղ Շաքիրը և այստեղից ո՞ւր կարող է գնալ ... Հանկարծ նա գուրս եկավ, գողի պես շորս կողմը նայեց ու գնաց: Անիծապարտը շատ արագ էր քայլում զարտուղի փողոցներով, կրակի պես. կարծես գիտեր, որ հետապնդվում է. բայց այդ դեպքում ինչո՞ւ ինքնաշարժ չի նստում: Մտավ երուսակեմեր երկայնաձիգ փողոցը ու դիվահարի պես քայլեց: Հասել էի գրեթե փողոցի ծայրին, երբ հանկարծ աշքերս խաժամուժ իջավ, հենվեցի պատին, շենքերը կարծես ցատկուեցին, մթնեցին, ես ընկայի պատին ...

Որքան ժամանակ էր անցել, շգիտեմ, ինձ շրջապատել էր ամբոխը, մի մարդ հասցես էր հարցնում ...

Այս անգամ ինձ համակեց հուսահատություն: Վազան առաջնորդեց ինձ ջղացին հիվանդությունների մասնագետ պրոֆ. Կասիրերի մոտ ..

Անցավ մի շաբաթ: Քիչ թե շատ կազդուրվելով՝ խնդիր արի մաքրելու արդեն հայտնագործված ոճրագործների՝ Ազմիի, Շաքիրի, Նազմի հաշիվը: Տարիներ շարունակ երազելով զիսավոր ոճրագործի մասին՝ այժմ զգում էի, որ այլևս ուժ չունեմ երկարելու: Եվ, վերջապես, ի՞նչ տարբերություն կար նրանց միջև: Ընկերս, սակայն, հակառակ էր: Այդ առիթիվ խորհրդակցություն ունեցանք, որը որոշեց հարցի լուծումը թողնել համապատասխան մարմնին, իսկ մինչ այդ շարունակել հետախուզությունը ...

* * *

Փետրվարի երկրորդ կեսին մի օր Հրափը հայտնեց, որ սպասվում է իթթիհատական առաջնորդների համագումար: Այժմ բոլորս էլ լարված աշխատում էինք այդ լուրն ստուգել, որովհետև այդ դեպքում տաշակույս շկար, որ թալեաթը կհայտնվի թեովինում կամ Հռոմում: Երակույս շկար, որ թալեաթը կհայտնվի թեովինում ստուգվեց. «Լավարո ֆաշիստան» կու օր անց Հրափի տեղեկությունն ստուգվեց.

Քրոնիկոնի մեջ տալիս էր նույն լուրը: Ընկերս նույն օրը ձեռք բերեց խտալական թուլլտվություն՝ հարկավոր դեպքում Հոռմ մեկնելու համար:

Մնացածներս վաղ առավոտից աշալուրց հսկողության տակ առանք Շառլուաներուրգից մեկնող բոլոր զնացքները: Ենթադրվում էր, որ այդ թաղամասի կայարանից կմեկնեն թեոլինի պատգամավորները, որովհետև իթթիհատականների հավաքատեղիները գտնվում էին Շառլուաներուրգում: Ընկերս պատրաստ էր ամեն վայրկյան մեկնելու, հնթադրում էր Թալեաթին գտնել Հոռմում ու հեռագրել ինձ: Ես արդեն հեռախոսել էի օր. Բայցնունին, որ հիվանդության պատճառով մի ժամանակ պետք է ընդհատեմ դասերս: Լարել էինք մեր բոլոր ուժերը, զնացքը շէինք թողնում, անգամ մարդատար-ապրանքատարները:

Ամսվա վերջերին մի երեկո, ճիւղընթացի մեկնելուց քիչ առաջ, կայարանի մայթին հայտնվեց մռայլ դեմքով թուրքը, որ կարծում էինք, թե ապրում է Ուշանտում, իրեւ ժամադրավայրի հսկիչ կամ վերակացու և անվանում էինք «մռայլադեմ»: Հինգ րոպե հետո կայարանում հայտնվեցին երեք թուրք ուսանողներ: Հազորի և Հայկոյի այդտեղ մնալը դժվարացավ: Գրեթե միաժամանակ համփորդական շքեղ պայուսակներով հայտնվեցին թեհանդին Շաքիրը և ցանցառ մորուքով, սերկախիլի պես դեղնած ու ծալծլված դեմքով մի ուրիշը, որին առաջին անգամ էի տեսնում. Նրանք հրաժեշտի ձեռվ շարժեցին ձեռքերը դեպի ուսանողները ու մտան վագոն: Ճիւղընթացի մեկնումին հազիվ հինգ րոպե մնացած կայարանի մայթին հայտնվեց հաղթանդամ, կլոր, փոռն դեմքով, լավ հագնված, ձեռնափալով մի նոր մարդ: Ողնաշարս ցնցվեց. շատ նման էր Թալեաթին. պակասում էին միայն թավ բեղերը և ֆեսը: Գլխին կիսացիլինդր էր: Նա արագ մոտեցավ մայթի վրա կանգնածներին: Վերջիններն իրար անցան և պատվի կանգնած դինվորների պես շտկվեցին: Կարծես մեկն ինձ մղեց դեպի նրանց: Առջեր կանգնած ուսանողներից մեկն աշն առավ, համբուրեց ու ասաց:

— Արդեն ներսն են, փաշա՛ս ...

«Նոր մարդն» անմիջապես շրջվեց դեպի վագոնը ու ձեռնափայտով ծեծեց կիսաբաց պատուհանը: Ո՞վ հայտնվեց այնտեղ, շգիտեմ, բայց ետևից լսեցի մի թնդյուն ու հյութեղ ձայն.

— Էրմենինճեսինի ունութմիեն ...

Հուզումը բռնեց ինձ: Մի քիչ ներքեւ անցա, սպասման սրահի դռան մոտ կանգնած մարդկանց թիկունքը: Հանկարծ ետևից հայտնվեց ընկերս:

184

— Տեսա՞ր, կարծեմ նա է, հիմա կմեկնի, հեռագիրս ստանալուդ պես հասիր ...

Ու նետվեց ճեպընթացը: Մի ակնթարթում զնացքը մեկնեց ... Ու «նոր մարդը», «մռայլադեմը» և ուսանողները մնացին: Այնքան արագ կատարվեց այդ բոլորը, որ դժվարությամբ էի հաշիվ տալիս ինձ: «Նոր մարդը» ինչ-որ բան ասաց պատկառանքով իր գեմ կանգնածներին, ու բոլորը շարժվեցին դեպի դուռը՝ առաջ թողնելով նրան ...

Ընկերոցս հանկարծական մեկնումը ինձ շատ մեծ շփոթություն պատճառեց:

Գլուխս շէր դործում, բայց բնազդս ասում էր, թե «նոր մարդ» նա էր՝ Թալեաթը ...

Կրնկակոխ հետեւում էի նրան: Աստիճանների տակ անկյունից հայտնվեցին Հազորը և Հայկոն:

— Ո՞վ է

— Կարծում եմ՝ նա է:

— Գլխավո՞րը:

— Այո՛:

— Նման շէր

— Փաշաս անվանեցին նրան:

— Տարագրության մեջ ամեն շուն հիմա փաշա է ...

Հազիվ քան քայլ էր բաժանում ինձ խմբից: Նրանք գնում էին՝ մի քայլ ետ մնալով «նոր մարդուց», մեկն ու մեկը հավասարվում էր նրան, երբ նա խոսում էր. այդ պատիվը հաճախ վիճակվում էր «մռայլադեմին»: Ձրկիրի պես հաստ ուսերն ու քառակուսի թիկունքը կասկած շէին թողնում, որ նա է, բայց դեմքը ... այնքան էլ լավ շէի շում նկարը

Հանկարծ ինձ գտա ծանոթ շրջանում. գնում էինք դեպի «Թիրկարտեն» հյուրանոցը: Կենդանաբանական այգու մոտ նրանք կանգ առան: Երեք ուսանողները, մինչև ոտքերը թեմաննա՞ անելով, թրքական ակնածուտ բարեկով հրաժեշտ տվին նրանց: «Նոր մարդն» ու «մռայլադեմը», զանազան փողոցներից համրաքայլ անցնելով, իշան Հարտենքիրդ փողոցը և ներս մտան համար 4 տունը

Թիկունքից, մյուս մայթից հայտնվեցին Հազորը և Հայկոն: Մոտ մեկ ժամ հսկողության տակ պահեցինք այդ շենքը՝ սպասելով «մռայլադեմին», բայց նա երևան շելավ ...

Երգնկայի նահանջից ի վեր հոգեկան այնպիսի խոռվք շէի ապրել, ինչպես այդ գիշեր: Ես գրեթե համոզված էի, որ «նոր մարդը» Թալեաթը պես այդ գիշեր:

լեաթն է, բայց ընկերներս չլատում էին իմ այդ ներքին թելաղրությունը՝ ստեղծելով կասկածներ։ Նրանք մասամբ էլ իրավունք ունեին։ Հարյուրին հարյուր չէի կարող պնդել։

... Թեոլինը քնած էր. դրսի լուսիլունը երբեմն խանգարվում էր սուրացող պատահական ինքնաշարժի աղմուկից։ Խոնավ ցուրտը թափանցում էր մինչև ներսս ու ցնցում ողնաշարս։ Անկողին մտա։ «Եթե նա է, ու հանկարծ փախցնենք», — մտածում եմ՝ ինձ համակած թըմրությունը վանելով։ Բայց ո՞ւր կարող էր փախչել։ «Թեկուզ որևէ այլ քաղաք»։ Ինչո՞ւ և ի՞նչ առիթով, եթե նա շմեկնեց Հռոմ, նշանակում է իր ներկայությունն ավելի կարեռ է այստեղ, և եթե հրահանգեց, թե «Հայկականը շմոռանաք», ուրեմն գործ է վարում ու պետք է մի որոշ տեղ լինի իբրև ղեկավար առաջնորդ։ Գործակիցները չեն կարող նրա ետեից տեղ քաշը վել։ «Այո՛, բայց չէ՞ որ կարող է բնակարանը փոխել»։ «Կարող է, եթե կասկածի»։ առիթ տվի՞նք արդյոք. կարծեմ՝ ոշգարմանալի է միայն, որ «մռայլադեմն» էլ մնաց այնտեղ ... Մտածո՞ւմ եմ արդյոք, թե՞ զառանցում։ Ու իբր թե նստած եմ Արաուլ լեռան խոռոչում, բոցավառ խարուցի շուրջը, ընկերներով միասին։ Կրակի ցոլքերը խաղում են նրանց դեմքերին՝ փոփոխելով գույները։ Ու Գնորդը պատմում է Խանասորի արշավանքի մասին։

— Սրանից հազա՞ր հինգ հարյո՞ւր տարի առաջ այս լեռան փեշերով անցան Վարդան զորավարի ծիավորները ու դաշտի մեջ, դետի ափին, բանակ դրին, որտեղ և սկսվեց Խանասորի արշավանքը, — ասում է նա՝ ձեռքերը երկարած կրակին։

— Ահա՛, տեսնում ե՞ք, տեր Գրիգորը անցուղարծ է անում զորքերի մեջ, լսո՞ւմ եք, պատարագ է, — ասում է՝ հայացքը սևեռելով դեպի դաշտը ...

... Այնտեղ՝ դաշտում, փսփսուք կա. ձայներ են լսվում. երբեմն մի ճիշ երկարում է՝ մարելով։ Մազերս փշերի պես վեր-վեր են անկվում, ատամներս կափիկափում, լեզուս շորանում ու ծանրանում է։

— Վե՛ր կացեք, տեր Գրիգորը գալիս է, — ասում է Գնորդը՝ կանգնելով ու ձգվելով։ Բայց հանկարծ իմ առջև ցցվում է Մուրադը։

— Վա՞յ, պարո՞ն Մուրադ, դու ե՞ս, այդ որտեղի՞ց, չէ՞ որ գումեռած էիր, — ասում եմ իս ։

— Ի՞նչ մեռած, տաշշե՞ն, քնած էի։

Նրա կողքին, թիկունքին, հայտնվում են ուրիշները։
Եվ Ավետի՞սը, չէ՞ որ նա էլ ...

— Ավետիսն էլ։

— Եվ Առաքե՞լը ...

— Նա՛ էլ, նա՛ էլ, չե՞ս տեսնում, արար աշխարհ այստեղ է ...

Աշխարհը պարուրել է մութ ու խորունկ մի անգորրանք, որ իշնում է դանդաղ ձորերի մեջ, դաշտերում, մտածումի պես հղի, խորախորհուրդ շարժելով։ Ու իս այլևս ոչի՞նչ, ոչի՞նչ շեմ տեսնում։

— Նայի՛ր այս կողմ, — լսում եմ Մուրադի ձայնը։

Ու նայում եմ լեռնիվար, մինչև հովիտների հեռավոր տափաստանները, ուր խավարի մեջ հազիվ նշմարում եմ հազա՞ր-հազա՞ր մոխրաթավալ զորայուներ, ամպի նման ալիք-ալիք շարժվող անթիվ նիզակակիր ձիավորներ ...

... Այն ժամանակ Մուրադը գոշում է.

— Ելե՞ք, ձիերը թամրեցեք, չե՞ք տեսնում, որ լուսացավ։

— Ո՛չ, մենք չենք տեսնում, որ լուսացավ։

— Լուսացա՞վ, լուսացա՞վ, — ասում է Մուրադը ու դառնալով Ավետիսին՝ գոշում է.

— Զիերը թամրեցե՞ք, շեփորները հնչեցրե՞ք, որ հազա՞ր հինգ հարյուր մղոնի վրա բոլոր գյուղերի, քաղաքների, հանդերի, դաշտերի բնակչությունը՝ այր, կին, երեխա, մինչև հազա՞ր հինգ հարյուր տարիք ունեցողները վեր կինան, առնեն բահ, բրիւ, գերանդի, ով ինչ կարող է, ու միանան բանակին ...»

Հանկարծ դղրդում են լեռ ու ձոր. ամեն տեղ կարծես վիշապներ կան, որոնք գոռում են ու լուսմ։ Աղջամուղջի մեջ շարժվում են մարմարի լեռնակուտակ զանգվածները։ Կմախքացած ժողովուրդն է, որ թավալվոր գետերի պես հոսում է. Նրանց ոսկորները շոփնդ-շոփնդ հնչում են։ Սակրով, մուրճով, գերանդիով, բահերով զինված՝ մրրիկի պես վազում են։ Հեռուներում բազմություններ, մինչև մեջքերը հողերի մեջ, շիրիմները շալակած, բութ ակնարկով նայում են, ապա հանկարծ հուր ժայթքելով փոս բիբերից՝ դուրս են ցատկում գերեզմաններից ու վազվզում։ Պատանքները հովին տված՝ շղթա-շղթա ծավալվում են, ճարճատելով ոլանում։ Բազմահազար կմախքների խաժամուժը արդեն քերում է Արաուլ փշերը։ Զյունափայլ ոսկորները ալիքալիք երերում են ու խուռներամ մագլցում։ Ատելության ու անեծքի գոռ ու գոշը բռնել է երկինքը. «Առա՞ջ», — գոշում է Մուրադը ու նետվում սպիտակ ձիու մեջքին։ Եվ այրուժին արշավում է։ Ամբակների կայծակնահար դոփյուններից լեռը թնդում է, փայլակի պես շանթահարող մերկ թրերը՝ շառաշում։ Երկրասասան դղրդյունով այժմ խլոտում է

լեռը: Բայց թոհ ու բո՞ք մնում է վար. թրերը վեր, գեղի երկինք, լեռ-ներից փախած եռակտուց անզղներից էլ վեր ...

Հանկարծ ես մնում եմ առանց ձիու, միայն սանձով ու թամբով ու թեև սահում եմ ամպերի մեջ, բայց ավելի ու ավելի դեպի վար: Ստորև արդեն նշմարում եմ մոխրագույն լեռների ծավալուն շարքերը: Գիտեմ ես այդ լեռները, էոմերզագեի կիրճերն են: Զգուշությամբ վար եմ իշնում ու նստում: Այստեղ երես ապրել են բաւերի հազար սերունդներ, ու մի հատ միայն կմախք կա, որի հոգին անդունդն ի վեց մազրւող կարիճի պես՝ կամաց-կամաց երերում է:

— Դու ո՞վ ես:

— Չես հիշո՞ւմ, — ասում է նա՝ դետինը շանչերով զարմանալի արագությամբ փորելով ...

Ո՛չ, ես նրան չեմ հիշում:

— Ոզմեցի Սիմոնն եմ, — ասում է նա ու ինքն իրեն ծածկում փոսի եղբերին կուտակված հողերով: Ակնթարթում դուքս է մնում միայն նրա գանգը, որ բիբերի մթագնած խոռոշներից անթարթ նայում է ինձ ու սեղմած ատամների ծայրով անձայն ծիծաղում: Զարհուրանքը համակում է ինձ:

— Պարոն Սիմո՞ն, — ճշում եմ ես ու սեփական ձայնից արթնանում ...

* * *

Լուսացել էր: Պայմանավորվել էինք, որ Հայկոն հսկողության տակ պահմի Զեմալ Ազմիի խանութը, Հազորը՝ Ուհլանտի ժամադրավայրը, իսկ ես՝ Հարտենբերգի համար 4 տունը: Բայց դեռ շուտ էր: Վազան տանն էր, աճապարում էր ճիշտ ժամին հասնել պաշտոնատեղի: Նրան մի քանի բառով պարզեցի երեկվա մեր հանդիպումը՝ խնդրելով երեկոյան գալ Հազորի մոտ՝ խորհրդակցության:

Այդտեղից հասա «Թիրկարտեն» հյուրանոցը: Մտածում էի, որ եթե ընկերս թողած շինի սենյակի բանալին, պիտի դուռը ջարդեմ ու վերցնեմ նկարների ծրարը. ինձ անհրաժեշտ էր թալեաթի նկարը, ես վստա՞ճ էի, որ եթե մաքրեմ բեղերը՝ քթի տակ թողնելով մի-մի փոքրիկ շերտ ու ֆեսի փոխարեն թանաքով նկարեմ եվրոպական պլխարկ, պետք է ունենամ երեկվա «նոր մարդու» պատկերը:

Դուռը փակ էր: Միշանցքով անցնում էր ծանոթ գարսոններից մեկը, ինձ տեսնելով՝ ձեռքի անձեռոցիկը օճապտույտ շարժումով նետեց թերին:

— Պարոնը մեկնել է:

— Ո՞ւր:

— Լայպցիկ:

— Այսո՞ս, ճերմակեղենս կուզեի վերցնել:

— Բանալին իր մոտ է ...

Հարտենբերգ փողոցի սկզբում, լայն պողոտայի խաչաձևման շրջանում, այդ պահին բավական անցուդարձ կար: Այդտեղ, մի հարյուրավորի վրա, դիմացս էր համար 4 տունը, որ շարքի տներից տարրերվում էր վիլայաձև կառուցվածքով, փողոցին նայող պատշգամբով ու մայթը եղերող երկաթե ձողերով ցանկապատած երկարավուն ծաղկանցով: Քիչ անց այնտեղից դուրս ելավ «մոալլադեմը» մի զամբյուղ ձեռքին, ու գնաց խանութների ուղղությամբ: Ահա թե ի՞նչ, ուրիմն այս խավարած լուսինն ապրում է այստեղ և ոչ թե Ուհլանտում: Ժամը 10-ին մայթի վրա հայտնվեց «նոր մարդը»: Ինձ հետ պատահեց նույն բանը: Անկարող էի կանգնած մնալ. նա մագնիսի պես ինձ դեպի իրեն էր քաշում: Մի պահ ուշադիր վեր-վար նայեց՝ կարծես ճշտելու, թե որ ուղղությամբ պիտի գնա ու ձեռնափայտը անփութորեն ճոճելով՝ հաստատուն քայլերով գնաց դեպի վար: Անցնելով հարեւան երկու փողոցները՝ հասավ Ուհլանտի համար 47 տունը, հարեւանցի նայեց դեպի դիմացի մայթը, որով անցնում էի, և ներս մտավ: Զարմանալի էր, որ մինչ այդ նրան այդտեղ շեխնք նկատել ...

Հազորը նոր էր գալիս:

— Գիշերը շկարողա աշք փակել, ուշացա, ի՞նչ ես անում այստեղ:

— Եկավ:

— Ո՞վ:

— Նա ...

— Ե՞րբ:

— Հիմա: Հետեւիր միայն նրան: Երեկոյան ժամը 9-ին քեզ մոտ պիտի գա վազան, խորհրդակցություն ունինք, այդ մասին հայտնիր Հայկոյին:

Վաղեցի «Թիրկարտեն» հասկանալու, թե արդյոք ընկերս շերգարադել ժամը 9-ի գնացքով: Զկար ... Դարձա Հարտենբերգ: Ժամը 11-ին «նոր մարդը» տուն վերադարձավ: Հազորը շերեաց. Ուհլանտից դուրս գալը երեկի շերտեղ ...

— Այսօր Ուհլանտում ներս ու դուրս անողներին հաշիվ շկար, ու շդիտեմ՝ ինչպես վրիպեցի նրան, — երեկոյան ասաց Հազորը խիստ ճնշված:

— Ովքե՞ր էին:

- Դոկտոր Նազմից զատ բոլորն էլ նոր, անծանոթ մարդիկ էին:
- Նազմը ե՞րբ մեկնեց:
- Քառորդ ժամ հազիվ մնաց ներսը:
- Երանի թե հետամուտ լինեի նրան:
- Ի՞նչ իմանայի, թե այսպես պիտի լիներ ...

Ներս մտան վաղան ու Հայկոն: Պարզելով այն հիմքերը, որոնք հաստատում էին, թե «նոր մարդը» Թալեաթն է, առաջարկեցի վերջ տալ խնդրին: Լուսթյունն ընդհատեց Հազորը:

— Այդ հիմքերը գործը ձեռնարկելու համար թերի են. Ճիշտ է, որ ձգձգելով կարող ենք փախցնել, բայց ավելի վատ կլինի, եթե սիալվենք:

— Ինչո՞ւ:

— Նախ, եթե նա չէ, անհետ կկորչի, ապա, եթե մեկի փոխարեն մյուսը սպանվի, կարծում եմ լավ գործ կատարած շենք լինի:

— Ենթադրում ես, թե այդ մյուսը հորեղբորդ տղա՞ն է:

— Մի զղայնանա, — միջամտեց Վաղան, — թող վերջացնի:

— Ասելիքս կարճ է. գործը լավ ընթացքի մեջ է, պետք է շարունակել ու լիակատար համոզում ձեռք բերելուն պես՝ վերջացնել: Այդպիսի համոզում կարծեմ դեռ ոչ ոք չունի. գոնե ես դեռ հնարավորություն չունեցա մի լավ դեմքին նայել ու նկարի հետ համեմատել: Այս պայմաններում ես չեմ կարող պատասխանատվություն ստանձնել:

— Քո կարծի՞քը, — դարձավ Վաղան Հայկոյին:

— Նույնը պիտի ասեի: Մենք գեռ ժամանակ չունեցանք պարզելու, թե ովքեր են ապրում Հարտենբերդի տանը:

— Ինչպես պետք է պարզենք:

— Թիկուզ կվարտում, չէ՞ որ Բեռլինի բոլոր բնակիչները պարտավոր են արձանագրված լինել համապատասխան կվարտում:

— Միամտություն չէ ենթադրել, որ Թալեաթը պետք է արձանագրված լինի սեփական անունով, — ասացի ես:

— Կարող է պատահել, բայց գոնե կպարզվի, թե ո՞վ է մոայլ դեմքով այն թուրքը, որ ապրում է նրա հետ միևնույն բնակարանում, ինչպես նաև այն, թե ուրիշ ովքե՞ր կան այդ տան մեջ. չէ՞ որ այդ բուրք կարող են ամրապնդել կամ թուղացնել մեր ենթադրությունը:

— Հայկոն թեև խառնվածքով բանաստեղծ է, բայց խոսում է գիտնականի պես, — ասաց Վաղան, — լուրջ խնդիր է, մենք մարդասպան-

ներ շենք. այդ տեսակետից սիսալմունքը կարող է ճակատագրական արժեք ստանալ: Ես այդ շրջանի կվարտում կապեր չունեմ, իսկ ոստիկանությանը դիմելը վտանգավոր է. ես այն կտործիքին եմ, որ Թալեաթը այստեղ վայելում է ոստիկանության հովանավորությունը: Սակայն խնդիրը կարելի է պարզել տան տիրոջը դիմելով: Թույլ տվեք ես վաղը այդ ուղղությամբ մի փորձ կատարեմ: Դու գոհ շե՞ս, — դարձավ նու ինձ:

— Մինույնն է:

— Այդ շեղավ: Այս կամ ո՞չ:

— Դեմ ոչինչ չունեմ, փորձիր:

— Ո՞մ է պատկանում այդ տունը:

Ես ի՞նչ իմանամ ...

Լվկված ու ջարդված էի. ծանր մի գիշեր անցկացրի: Առավոտյան թիթե ոտնածայնից արթնաց: Առիթից օգտվելով տիկին Շթելբաումը կողիներս տանում էր մաքրելու: Բարի կինը կարծում էր, թե հիվանդ եմ, համոզում էր ինձ տանը մնալ, որովհետև շատ վատ եղանակ էր եվ իրավ, ձյունում էր, թեթև քամի կար: Հասա «Թիրկարտեն»: Ընկերս չեր եկել ...

Հարտենբերդ փողոցի վերին մասում այնքան քիչ անցուդարձ կար և այնպես ցուրտ էր, որ ստիպված էի շարժման մեջ լինել: Ժամից ավելի դեպքեցի այդտեղ: Մտածում էր, թե այս եղանակին դժվար թե դուրս գա «նոր մարդը», երբ հանկարծ նա հայտնվեց, ուշադիր զննեց վար ու վեր և շարժվեց դեպի վար: Գնում էր արագ՝ վիզը թեք բռնած, դիմացից փշող ձյունախառն քամուց պաշտպանվելով: Հասավ Ուհլանտ և ներս մտավ: Հազորը այստեղ էր, ճամփեցի Հարտենբերդ: «Նոր մարդու» այդ օրվա այցելությունը կես ժամ տևեց. նորից զնաց դեպի տուն, որտեղ Հազորը տեսել էր նրան՝ դիմացից անցնելով նույն մայթը: Ինձ համար պարզվեց, որ այցերը կատարվում էին ժամը 10—11-ին:

Երեկոյան Վաղանի մոտ էի: Քիչ առաջ ջեմալ Ազմիի խանութի դեմի սրճարան-ճաշարանում Հայկոյից իմացա, որ Վաղան հաջողացրել է տեսնել Հարտենբերդի տանտիրոջը, և արդյունքը բացասական է. այնտեղ ապրում է մի թուրք առևտրական, որ արևելյան սրճարան է պահում: Այժմ Վաղան պատմում էր.

— Տանտերը մի պառավ օրիորդ է, Գերտրուդա Գոլդ անունով՝ շատախոս, ցրված, բայց հաճելի զրուցակից, ապրում է իր երկրորդ

տան մեջ, նույն շրջանում՝ ֆազանի փողոցում։ Ներկայացա իբրև զվիշերական ապահովագրական ընկերության գործակալ, խնդրեցի ինձ վարձու տալ Հարտենբերգի համար 4 տունը, որ իբր թե, լսածիս համաձայն, շուտով պիտի դատարկվի։ Ասաց, որ ինքն այդ մասին չգիտե, գործը փաստորեն վարում է դռնապանը։ Բայց հաճելի լինելու ցանկությամբ դարակից հանեց թղթերի մի տրցակ ու փնտեց պայմանագիրը։ Թյուրիմացություն է, ասաց, ըստ պայմանագրի դեռ երեք ամիս ժամանակ ունի։ Ներողություն խնդրելով՝ ոտքի ելա։

— Նստեցեք, խնդրեմ, — ասաց օրիորդը, — քանի՛ սենյակ է ձեզ պետք։

— Երկու, երեք սենյակ առայժմ կրավե, մինչև այս շրջանում բնակարան գտնեմ։

— Այդ դեպքում դուք դուք համաձայնության դաք վարձկալների հետ։ տունը բավական ընդարձակ է։ Մուտքից ներս մի փոքրիկ սրահ կա, որի աջ կողմում բացվում են երկու մեծ և մի փոքրիկ սենյակներ։ Զախ կողմը մի ուրիշ փոքրիկ սենյակ կա, մնացած սենյակներից մեկը հյուրանոց է, մյուսը՝ ճաշասենյակ։ Ես առարկություն շունեմ, եթե առաջամասի սրահը երկու սենյակներով ձեզ տրամադրեն։ Կարծում եմ հաճուքով պիտի զիջեն։ Իրենց տրամադրության տակ ինը սենյակ ունին՝ մի ամբողջ հարկաբաժին, և որքան հայտնի է ինձ, շատ քիչ կարասի։ Այնտեղ ընդամենը երեք մարդ են ապրում։ այդպիսի շքեղություն այժմ մեր նախարարներն անգամ չեն կարող իրենց թույլ տալ։

— Առիթից օգտվեցի, որ օրիորդը երկար ջունչ առավ, — պատմում էր Վաղան, — այո՛, օրիորդ, շնորհակալ եմ, բայց շատ գեվար է ամեն տեղ վարձկան լինել. ո՞վ գիտե՛ ինչ մարդիկ են։

— Ո՛չ, հանդարտ մարդիկ են, պարկեշտ թուրքեր։ Մեկը սնանկացած նախկին վաճառական է, որ այժմ կարծեմ արևելյան սրճարան է պահում, անունը … ո՛չ, մոռացել եմ։ Հաղթանդամ, գեր, այսպիս, — օրիորդը օգով լցորց այտեց, — կարծես բեռնակիր լինի, մյուսը դոկտոր է, Ռըսուհի անունով, բայց ինչ դոկտոր, շգիտեմ …

— Իսկ երրո՞րդը։

— Ալի Սալիհ բեյի կինը։ Ա՛խ, հիշեցի. Ալի Սալիհ բեյ, դա է նախկին վաճառականը, այնպես գեղեցիկ է, այնքա՞ն հրապուրիչ, հմայիչ է կինը, — հարեց ժպտալով, — որ երբ հարցը, թե ո՞վ է, դռնապանն ասաց, թե Ալի Սալիհ բեյի կինն է. այդպես էլ մնաց մըտքիս մեջ։ Ա՛խ, որքա՞ն գեղեցիկ է, ուղղակի արևելքի դիցուհի։ Բայց

խոսք տվեք, որ շպիտի սիրահարվեք, — ասաց՝ ցուցամատով մտերմուն սպառնալով, — սակայն, սպասեցե՛ք, կարծեմ նրա հետ այդ մասին խոսելու պետք պիտի շունենաք, այո՛, այո՛, — հարեց՝ պայմանագիրը նայելով, — բնակարանը վարձել է թուրքական դիսպանատան քարտուղար Զիյա բեյը, ահավասիկ նա էլ ստորագրել է պայմանագիրը։ Ուրեմն նրան պետք է դիմել։

— Անօգուտ է, օրիորդ, — ասացի։

— Ինչո՞ւ։

— Շատ պարզ է, օրիորդ, երբ թուրքը կին ունի, ոչ մի գեպքում իր հարկի տակ վարձկան չի ընդունի. այդ դեմ է նրանց օրենքին։

— Ի՞նչ եք ասում։ Պատճառոր։

— Պատճառը … առիթ լուալ գայթակղության։

— Հիանալի՛. չե՞ք գտնում, որ լավ օրենք է։

— Ինչպե՞ս առեմ. և լավ է, և վատ …

— Ինչո՞ւ այդպիս։

— Լավ, քանի դեռ թուրք կանանց հեռու է պահում գայթակղությունից, վատ, երբ նրանց աշքերը նայում են զրսերը …

Ահա այսպիս ավարտեց իր պատմությունը վաղան։ Հազիվ կարողացա օձիքս ազատել այդ շատախոս կնոջից և այն էլ ուրիշ անդամ այցելելու խոստումով։ Ի՞նչ է կարծիքդ։

— Կարծիքս այն է, որ Թալիհաթը այնտեղ է ապրում, Ալի Սալիհ բեյ կեղծ անվան տակ։

— Ինչպե՞ս թե …

— Այդպիս։

— Պարզիր միտքդ տեսնեմ։

— Պարզելու բան չկա. Զիյա բեյերը սնանկ վաճառականների համար բնակարան չեն վարձում ու ավելի գեղեցիկ կնոջ մասին ես շգիտեմ, քան Թալիհաթի կինը։

— Որտեղի՞ց գիտեմ։

— Նկարը տեսել եմ։

— Վաղան խոր տարակուսանքի մեջ ընկավ …

* * *

Առավոտ կանուխ վաղեցի «Թիրկարտեն»։ Ընկերս եկել էր։

— Վերջապե՞ս։

— Այստեղ է, — գոշեց։

— Այո՛:

— Տեղը զիտե՞ս:

— Ի՞նչարկե՞:

— Փառք Աստծո ...

Մանրամասն պատմեցի ամենը՝ սկսելով կայարանից մինչև վերշին պահը: Լուսում էր ազա՞ռովիշամբ:

— Ժամը քանի՞սն է:

— Ինը անց քառորդ:

— Ելի՞ր գնանք, չուշանանք:

— Դեռ ժամանակ կա. Թալեաթի նկարներից մեկ հատ տուր ինձ Դարակից դուրս հանեց նկարների ծրարը: Քրքրելով ու դուրս քաշելով Պոլսու ոստիկանապետ Պետրիի նկարը՝ հարցրեց.

— Սրա նման չէ՞ այդ «մուալագիմ» կոչվածը:

— Ո՞ւ նրա նկարը չունինք. տո՞ւր Թալեաթի նկարը, — ասացի բանալով գրահատու:

— Հետաքրքիր է, ասում եմ «Ռըսուհի»: — ասաց նա՝ հանձնելով ինձ Թալեաթի նկարը. ո՞չ լսել, ո՞չ կարդացել եմ այդպիսի մի անում...

— Ի՞նչ ես անում, այ տղա ...

— Բեղերը պիտի քերեմ ...

Հանկարծ դուռը ծեծեցին: Նկարը դրի ծոցու Սպասավորն էր, որ մի նամակ մեկնեց՝ հայտնելով, որ երկու օր առաջ է ստացել: Մածկպիր էր Փարիզից: Արտմաշուկ դանդաղությամբ էին պարզվում խառնափնթոր թվանշանները. զրությունը վիրաբերվում էր խնդրին: Սուաշին բառերն էին՝ «Եվրոպացի բարեկամից իմացանք, որ Թալեաթը» ...

Վերջապես պարզվեց բովանդակությունը. Թալեաթը գտնվում էր Ժնևում. փետրվարի սկզբներին այնտեղ տեսակցություն է ունեցել անգլիական մի դիվանագետի հետ ...

Ինձ շշմեցրեց այդ ծածկապիրը:

— Ե՞րբ է գրված:

— Տասն օր առաջ:

— Շատ ժամանակ է ...

— Այո՛, խնդիրն էլ այդ է:

— Ե՞րբ է այստեղ ստացված:

— Սպասավորը ճիշտ ասաց, երկու օր առաջ ...

Տարակուսանքի մեջ մխրճված, ամեն մեկս իր մտքերի հետ՝ դուքս

նլանք: Բայց արդեն ուշ էր: Ո՛չ Ուհլանտում, ո՛չ Հարտենբերգում Հազորը չկար: Ընկերուց ցույց տվի Ալի Սալիհ բեյ կոչեցյալի բնակարանը: Բաժանվեցինք՝ երեկոյան հանդիպելու պայմանով:

Հասնելով տուն, դուռը փակեցի և սկսեցի քերել Թալեաթի բեղերը. դանձ փորողի պես անհամբեր էի, բայց շեղավ. հանկարծ դուռը ծեծեցին՝ էֆթյանն էր:

— Եղբա՞ր, էս ո՞ւր ես, — զոշեց՝ ձեռքերը տարածելով, — շուտ հագնվիր գնա՞նք:

— Ո՞ւր:

— Քույրս քեզ ճաշի է հրավիրել:

— Այսօր լավ չեմ, կեռն:

— Անկարելի է, առանց քեզ չեմ կարող տուն գնալ:

— Մի ուրիշ անգամ ...

— Տո, վե՛ր կաց, ասում եմ քեզ, այսօր ծննդյանս օրն է:

— Էլ ուրիշ օր չկա՞ր ծնվելու, — ասացի՝ դառնությունս սքողելով կատակով:

— Շո՛ւտ, շո՛ւտ, Աբելյանն ու Գալստյանը երեխ արդեն գնացել են, Գարեգինն էլ պիտի գա:

— Գարեգինն ո՞վ է:

— Մշեցի Գարեգինը, չգիտե՞ս, նա քեզ ճանաշում է ...

Երազի պես հիշեցի երգումից երգնկա տանող ճանապարհը և մեր կառապան մշեցի Գարեգինին:

— Ի՞նչ է անում այստեղ:

— Ի՞նչ պիտի անի: Գիշեր-ցերեկ մտածմունքն ու զրուցը շարդերն են, զրեթե խինթացել է ...

Ճաշասենյակում նստած էին Թերզիբաշյանները և Գարեգինը: Տիկինը բողոքեց, որ իրենց մոռացել եմ:

— Յա՛, — բացականչեց Գարեգինը՝ արջի պես առնելով ինձ հզոր բազուկների մեջ:

Այդ պահին դժբախտ օրերը թվացին ցանկալի անցյալ: Աշխարհը շափշիել էր: Այժմ Թեոլինի արվարձաններում սև աշխատանք էր կատարում ինչ-որ ատաղձի դործարանում: Բայտ երեսութին, պատմում էր դեպքերից. գոհացավ մեկ-երկու հարցումներով Հովնանի, Սահեկի մասին ու դարձավ նրանց.

— Աղբորս ըսեմ, լուսը շբացված կծիկը դրի ...

— Իսկ մա՞րդու, քույրե՞րդ, — հետաքրքրությամբ հարցրեց տիկին Քրիստինեն:

— Մայրս, քույրերս իրենց պղտիկներով Մուշի հովիտեն տարագրվածներու մեջ կդտնվեին, ետքեն իմացա անոնց քաշածները ...

Եվ Գարեգինը պատմում է Հարազատների Գողգոթան աղեկեղ մանրամասնությամբ՝ ամեն տեսակ նղովքներ թափելով Թալեաթի պլիին։ Գաղաղած, ջղային անհամբերությամբ սպասում էի, թե ե՞րբ պիտի վերջանա այդ պատմությունը, որ հիշեցնում էր Հարազատներիս վիճակված բախտը։

— Բոլոր երեք քույրերս կառեանգվին դեռ Եփրատին չհասած, պղտիկները կմնան մորս մոտ իրիկվան դեմ Սուրիկը կմհանի։ Մայրս տեսնելով, որ անկարող է տանիլ պղտիկները, կպահվի ցարենի արտերուն մեջ։ Հոս ուրիշ պահվածներուն հետ գիշերը կանցնեն։ Առոտուն զանոնք կնկատեն, արտերը կվառեն։ Դուրս ելածները կրշեն դեպի Շեխլանի դոմերը, ուր խմբված կըլլան ուրիշներ։ Ասոնց կըսեն, թե Թալեաթը ձեզի կյանք շնորհած է; բայց իսլամ պիտի ըլլաք ...

— Զե՞՞, Աստվածդ սիրես, այդ հին պատմությունները, — դարձա Գարեգինին։

Նա կարծես մտրակի հարված ստացավ, աշքերը դարձան ու շաբությամբ գուշեց։

— Ինչո՞ւ, զղերո՞ւդ դպան։

— Այնքան լսեցինք, որ էլ սիրո շմնաց, Թալեաթ, Թալեաթ կրկնելով մեր ցավը չի բուժվի։

— Ապա ի՞նչ կուզեիր, արձա՞ն կանգնեցնենք շունին։

— Հանցավորը մենք ենք և ոչ թե Թալեաթը, որ Աղանայի շարդից հետո հավատ ընծայեցինք նրան։

— Տո, ի՞նչ ըսիր, վա՞յ ես քու Թալեաթի հոր Հոգին, — Հանկարծ գոռաց նա՝ բռունցքը իշեցնելով սեղանին։

— Լոե՞, անպատկառ, — գուշեց Էֆթյանը։

— Տո՛, ես էտոր հայ ըսողին, Թալեաթը կպաշտպանե ...

Վայրկյանի մեջ այնպիսի իրարանցում ստեղծվեց, որ անիծում էի գալու։ Ներս մտան Գալստյանն ու Սրելյանը և մնացին շեմքին շվարած։ Գարեգինն իրեն բոլորովին կորցրած՝ վեր ցատկեց ու գրլխարկը հափշտակելով էֆթյանի ձեռքից՝ դուրս թռավ՝ գոշելով։

— Ես ասանկ հայու հետ սեղան չեմ նստիր, տիկին Քրիստինե, ներեցեք ...

Դողում էի՝ լալու աստիճան աղղված այդ անմիտ, անակնկալ միջադեպից։

— Խենթ է, կարեորություն միք տա, — ասում էր Գալստյանը ... էֆթյանի, Սրելյանի, Թերզիրաշյանների ջանքերը տրամադրություն ստեղծելու շեխն հաջողվում։ Ճաշը վերջանալուն պիս տիկնոցից ներողություն խնդրեցի և մեկնեցի։

Տուն հասնելով՝ սկսեցի քերել Թալեաթի բեղերը։ Ստույգ նմանությունը Ալի Սալիհ բեյի հետ ինձ ցնցեց, իսկ երբ մատիտով ֆեսի վրա ուրվագծեցի եվրոպական պլխարկ, ոչ մի տարբերություն չմնաց ...

Նկարն առած վաղեցի «Թիրկարտեն»։ Ընկերս նոր էր վերադարձել ճաշարանից ու քննում էր թերթերի ընթացիկ լուրերը։ Խելաճեղորեն բացականշեցի։

— Նա է, հավատացի՛ր, ահավասիկ, եթե հիշում ես կայարանից... նկարը դիտեց հարկանցի։

— Այժմ հս էլ կասկած չունիմ. թեև մի քիչ շփոթություն պատճառեց ծածկագիրը, բայց հասկացա ...

— Ինչպե՞ս ...

— Հազորից իմացա, որ այսօր էլ այդ Ալի Սալիհ բեյը ճիշտ ժամը 10-ին այցելել է Ուհլանտի ժամագրավայրը, իսկ զու ասում էիր, որ մինչև կայարանում հայտնվելը նա այնտեղ չի եղել։

— Այ՛՛ :

— Նշանակում է, այդ ժամանակ եղել է ժննեում, ուր և տեսակցել է անգլիական դիվանագետի հետ. ծածկագրի թվականն էլ հաստատում է այս հետեւթյունը։

— Ուրեմն ...

— Պետք է վերջացնենք. միայն թե նախքան այդ պետք է մի անգամ էլ տեսնենք նրան։

— Վաղը ...

— Այ՛՛, բայց պետք է շատ զգուշ լինենք։ Բելինը նորից անհանդիս է, աննշան պատահականությունը կարող է ամեն բան փշացնել, փողոցներում հետապնդելը ճիշտ չէ, մինչև հիմա պետք էր, որ այդ շրջանում մի սենյակ գտնվեր։

— Շատ լավ պիտի լիներ այդ, բայց հիմա, երբ խնդիրը որոշ է ...

— Դժվարը հիմա է. այլևս քո այնտեղ երևալը գործի համար օգտակար չէ. Հազորին էլ Ուհլանտում պետք է փոխարինել Հայկոյովէ Միշտ միևնույն մարդու երևումը կարող է նկատվել, ինչ որ է, հիմա ընկերները կգան, կիսունենք։

— Նորի՞ց խորհրդակցություն։

— Այո՛, անհրաժեշտ է վերջնական որոշում տալ:

Իրար ետևից յայտնվեցին Հազորը, Հայկոն, Վազան: Սկսվեց խորհրդակցությունը հետապոտություններին վերջ տալու և գրական գործի անցնելու մասին: Կարծես այդ անակնկալ եղավ ընկերների համար, որքան ոյուրությամբ էին դիրքը ճշտում նախնական աշխատանքների ժամանակ, այնքան այժմ դժվարանում էին որոշ կարծիք հայտնել: Ըստ Վազայի, տվյալներն ակնբախ էին, բայց գործը ձեռնարկելու համար՝ անբավարար: Եվ սակայն չեր կարելի որոշակի ասել, թե ինչ լրացումներ էին անհրաժեշտ: Հայկոն կարծում էր, որ անհրաժեշտ է սպասել, Ալի Սալի՞ թեյի կողջը տեսնելու առիթ ունենալ ու կողչ նկարի հիմքով ամուսնու ինքնությունը հաստատել: Հազորը գործե համողված էր, որ հետապնդվողը Թալեաթն է, բայց այդ խղճի խնդիր համարելով՝ չեր ուզում պատասխանատվություն ստանձնել:

Ի վերջո, որոշվեց մի սենյակ գտնել Հարտենքերդ համար 4 բնակարանի շրջանում՝ թե՛ հետախուզությունը շարունակելու և թե՛ գործը հաջողությամբ զլուխ հանելու համար: Թեև այն չեր, ինչ սպասում էի, բայց լոեցի:

Մարտի 2-ն էր, կիրակի, իրիկնամուտ: Հազորը անմիջապես գործի անցալի եռանդուն, աշքաբաց, բարեխիղճ և ամեն կազմակերպչական աշխատանքի համար անփոխարինելի մեկն էր նա: Խորհրդակցությունից հազիվ երկու—երեք ժամ էր անցել, և ուզում էինք դուրս գալ ընթրելու, երբ նա շնչակտուր ներս ընկավ: Հայտնեց, որ Հարտենքերդ համար 4 տան դիմացի համար 37 տանը մի սենյակ է վարձել, որի պատուհանը նայում է փողաշնորհ: Սենյակն ազատվում էր երեք օրից: Փոխադրվել կարելի էր մարտի 5-ին:

Սուազույան ազատ էի: Հարտենքերդում պիտի հսկեր ընկերու, Աղմիի խանութը՝ Հազորը: Ուշանտում նրա փոխարեն՝ Հայկոն, որ ընկերոջս հետ պիտի տեսնվեր կեսօրին: Բայց ինչպես սպասնել ժամանակը մինչև այդ: Մաքրեցի, կարգավորեցի սենյակս և, հակառակ տիկին Շթելքառումի տրտունջներին, լվացի միջանցքը: Գործատեղից անժամանակ տուն դարձավ Արելյանը՝ հայտնելով տխուր նորությունները. Հայտատանում ծայր էր առել քաղաքացիական պատերազմ. Թուրքերը գեռ մնում էին Ալեքսանդրապոլում: Նրանց ենթակա Կարսի շրջանում տեղի էին ունեցել գնդակահարություններ և ջաջուռի շրջանում՝ նոր շարդեր ...

Պակասը լրացրեց օրվա մյուս կեսի անհաջողությունը: Ալի Սալի՞ բեյ կոչեցյալը այդ օրը չեր երևացել, ընկերու նրան չեր տեսել: Ուշանտ այցելողներից Հայկոն տարբերել էր միայն Բեհանդղին Շաքիրին: Ի՞նչ էր նշանակում նրա վերադարձը Հռոմից և առաջինի բացակայությունը այդ օրը: Բոլոր հավանականություններն ու ենթադրությունները ջրվում էին, և մնում էր միայն կասկածը, որ հետապնդվողները հոտ են առել, բայց այս գեպքում դառնում էր տարակուսելի, որ Հայկոյի տեսածը Շաքիրն է եղել: Ամեն պարագայի տակ բանավոր և շրջահայաց վարմունք պիտի լիներ՝ մեկ—երկու օր շերեալ Հարտենքերդի շրջանում. արդեն դրա կարիքն ընկնում էր նոր բնակարան տեղափոխվելուն պիտի:

Հաջորդ օրը երեկոյան մտա Արելյանի մոտ՝ խնդրելով հայտնել տիկին Շթելքառումին, որ պետք է նոր բնակարան տեղափոխվին:

— Լավ շեմ. հիվանդությունս գնալով բարդանում է, ընդհանուր թուլություն, զիմա էլ կուրության նախանշաններ, երեկ նորից եղան պրոֆ. Կասիրերի մոտ. «Ամեն բան շղերի ծանր քայլքայման հետեւանք է», — ասում է, գազի ճրագը խիստ վնաս է ինձ, և, իրոք, զիշերները մեկ տող շեմ կարողանում կարդալ. Հիմա ստիպված վարձեցի էլեկտրական լույսով սենյակ: Այս ամսվա վարձը վճարել եմ տիկին Շթելքառումին, ամեն տեսակետով գոհ եմ նրանից և պիտի մնայի, եթե այս պարագան շիներ: Խնդրում եմ պարզել այս ամենը տիկինոցը, ինձ համար դժվար է ...

Մյուս օրը երեկոյան զեմ Հազորի ընկերակցությամբ փոխադրվեցի՝ խոստանալով այցելել այդ առթիվ թունդ ելած բարի տիկին Շթելքառումին:

Նոր տանտիրուհիս՝ զեռ երիտասարդ, որքևայրի տիկին Դիտմանը, ըստ երեսութին, հետ չեր մնում նրանից իր առտնին բարեմասնություններով: Ամեն ինչ մաքուր, ճաշակով. սպասուհի ուներ, բնակարանը խաղաղ էր և վանքի տպավորություն էր թողնում: Մուտքը բակից էր, համեստ շենքերին հատուկ երկաթածող մի դռնից, որ բացվում, գոցվում էր պտուտակաձև լեզվակով: Սենյակս օդասուն էր. լայն ու մեծ պատուհանը ծածկված էր շքեղ, ժանյակապարդ վարագույրով: Մահճակալի մոտ սեղանամման դարակ կար, զրասեղան, բազկաթոռ, պահարան, աթոռներ և այլն: Լայն փողոցի մյուս մայթին, դեմուղեմ, ցցված էր Ալի Սալի՞ թեյի տունը: Պատուհանների թանձր վարագույրները հազիվ զատվում էին կենտրոնի բացվածքից՝ դոյացնելով սեպաձև ճեղք-

Այս պահին փողոցով բավական անցուղարձ կար. բանվորներ, գործավորներ վերադառնում էին աշխատանքից: Գրեթե բոլորն էլ աշխատում էին պարագ շանցկացնել ժամանակը. ոմանք քայլելիս կարդում էին օրաթերթեր, ոմանք ուտում էին ...

Գիշերը քուն չկար. հակընդդիմ զգացումների տարափի տակ էի. մի կողմից հուզում էր այն իրողությունը, որ արդեն հասել ևմ նպատակիս շեմին, և հրեշից ինձ բաժանում է ընդամենը 25 մ տարածություն, մյուս կողմից ինձ փոթորկում էր այն մտատանջությունը, թե արդյոք պիտի հաջողե՞մ: Դիմացի շենքի ճրագը մինչև ուշ գիշեր վառ մնաց:

Առավոտյան կանուխ կարգի բերի սենյակս ու տեղ գրավելով գրասեղանի մոտ՝ ձեմի համար առջևս դրի գերմաններնի դասադիրքը: Գարնանամուտի մի պարզ օր էր: Արևի ճառագայթները խաղում էին դիմացի շենքի պատուհանին: Գուոր ծեծեցին. ներս մտավ աղախինը թեյով և հաց ու պանրով: Հաղիվ անցավ կես ժամ, ու հանկարծ մայթի վրա հայտնվեց Ալի Սալիհ բեյ կոշեցյալը: Այդպես շուտ. անակնկալ էր: Ժամը ինը չկար. նա, ըստ սովորության, վեր-վար նայեց, թեկ տակ թղթապանակ ուներ: Անմիջապես զենքս վերցրի ու դուրս ելա, երբ հասա մուտքի դռանը, նա համարյա դեմս էր. գնում էր դիմացի մայթի հակառակ ուղղությամբ, դեպի վեր, Հարտենքերգի սկզբնավորության շրջանը. այս էլ անսովոր էր: Վայրկենապես դուրը քաշեցի, բայց լրացվեց, փորձեցի ուժգին՝ նույն բանը: Հասկացա, որ նախապես պետք է դարձնեմ պտուտակը, շդարձավ: Գլուխս կորցրած՝ զախչախեցու աստիճան քաշեցի դուրը: Անօգուտ: Ինձ համակեց անորակելի հուսահատություն: Վազեցի աղախնի մոտ. դուրը կողպված չէր: Հասավ և աղախինը, թայց դուրը չէր բացվում ...

Տասը բոպեից ավելի ժամանակ անցավ, մինչև հաջողվեց անասելի ջանքերով դարձնել պտուտակն ու դուրս գալ: Բայց էլ ո՞ւր. որսի հետքն անդամ չկար...

Մի պահ շվարած դիտելով շորս կողմո՞ւ բռնեցի կենդանաբանական այդու ուղղությունը: Անիմաստ էր, կանգ առա: Հանկարծ մտածեցի, որ զուգահեռ փողոցներով կարող էր Ուհլանտ գնալ: Հասա այնտեղ, կես ժամից ավել սպասեցի, ներս ու դուրս անող չկար, այնինչ ժամանակն էր: Անցավ ևս կես ժամ. ուղեղս դադարեց գործելու մի՞թե փախցրի ...

Զէ՞ր կարող արդյոք ոճրագործը Ազմիի խանութը մտած լինելը Հրապարակն անցա, մտա խանութ. մի քայլի վրա առաջին անգամ տեսա այս մյուս հրեշին, գլուխն անգամ շշարժեց. լրագիր էր կարդում: Բուռն մղում ունեցա գնդակը ճակատին գամել: Ճետեկ՝ գորգերով ծածկված անցքից հայտնվեց տղան. մի տուփ ծխախոտ գնելով՝ դուրս եկա:

Կեսօր էր: Չգիտեի՛ ինչ անեի: Բազմաթիվ ոստիկաններ կային ամեն տեղ: Շրջան անելով՝ եկա ճաշարան: Ընկերս նստած էր սովորական տեղը, պրապտում էր թերթերը: Հայտնեցի նրան իմ կասկածները. հանկարծ որսը փախած լինի:

Այս հինգ—վեց օրվա մեջ ժամը 10-ից առաջ տնից երրեք դուրս չելավ. գնում էր Ուհլանտ և 11-ին տուն գառնում: Այսօր 9-ից առաջ դուրս ելավ, թղթապանակով: Նա կարող էր անշուշտ որևէ տեսակցության գնալ, օրինակ՝ անգլիական դեսպանատունը: Ամեն բան կարող էր պատահել:

Վերադարձա տուն. մի արհեստավոր քանդել էր դուրը և նորոգել պտուտակը ...

ՄԱՅԹԻ ՎՐԱ ԸՆԿԱՎ ՀՐԵՇ

Առավոտյան լուսը բացվելուն նստած էի գրասեղանի առջև, սենյակու կարգավորել էի, որ առիթ շունենան ներս գալու։ Դասագիրքը բացած՝ դիտում էի դիմացի շենքը, շուրջ 25 մ լայնությամբ փողոցը։ Դեռ կանուխ էր բանվոր, արհեստավոր, գործակատար աճապարում չին աշխատանքի։ Երբեմն աղմուկով անցնում էին ապրանքատար ինքնաշարժեր։ Պատուհանիս վարագույրի միացման նեղ ճեղքից աշխատում էի մի քան տեսնել դիմացի շենքի ներսում, բայց ապարդյուն։ Դուռը ծեծեցին. ներս մտավ աղախինը թեյով, թիկունքում հայտնվեց տիկին դիտմանը։ Այնպիս շվիթվեցի, որ կարծես բռնվեցի հանցանքի մեջ։ Տիկինը ձգում էր ավելի երիտասարդ և հաճելի լինել, քան վաստորեն կարող էր։ Ժամանական զրույցից ոչինչ չեմ հասկանում։ Զեռքի շարժումներից կուահում եմ, որ խնդիրը դառնում է դուռն ավերված պտուտակի շուրջը, որն այժմ նորոգված ու շտկված է. տալիս է ինձ բանալի, որի համար ոչինչ պետք չէ վճարել։

— Դանկեղոն, — ասացի կարճ կապելու համար ...

Եղավ ժամը 10, 11. դիմացի շենքից ոլ ոք շհայտնվեց։ Կեսօրին ընկերոջից իմացա մի ուշացած նորություն։ Փարիզից ծածկագիր գրություն էր ստացվել. Պոլսից Փարիզ էին հայտնել, որ Թալեաթը ապրում է Բելլինում, Հարտենբերգ համար 4 տանը, Ալի Սալիհ քեյ կեղծ անվան տակ։ Շատ կարենոր նորություն էր այս ...

Սենյակիս մեջ ժամերով անշարժ նստած՝ դիտում էի դիմացի շենքը։ Ճրագը շվառվեց այնտեղ ...

Առավոտյան անկողնից ելա այնպիս ջարդված, որ կարծես ամբողջ գիշերը քայլել էի. հարրուխ, կոտրտուք, տաքություն. տհաճ էր։ Անհամբերությամբ սպասում էի ժամը 10—11-ին։ Ոլ ոք և ոշինչ։ Անգամ կասկածելի էր, թե բնակություն կա՞ դիմացի շենքում։

Կեսօրին ընկերու, Ազմիի խանութին նայող պատուհանի մոտ նըստած, կարդում էր թերթի լուրերի բաժինը։

— Եթե դյուրին գործ լիներ, երեք տարվա մեջ արգեն կատարված վերջացված կլիներ, — ասաց նա՝ լսելով տրտունջներս։

— Ես առաջարկում եմ Վազային ճամփիկ տանտիրոջ մոտ։

— Ինչո՞ւ։

— Որպեսզի իմանանք, թե այդ տան մեջ բնակություն կա՞, թե՞ ոչ։

— Ստուգելու միակ ապահով ճանապարհը հսկողությունն է ...

Գիշերը դիմացի շենքի առաջանասում կանթեղի պիս մի լույս պլայաց ու մարեց....

Հաջորդ օրը ըստ սպազության մինչև ժամը 11-ը հսկեցի, այժմ տարակույս չեր մնում, որ Թալեաթը վախիկ է։ Չեր երևում նաև «մըռուալագեմը»՝ Ռըսունի կոչվածը։ Կեսօրին առաջարկեցի վերականգնել Ռւճանտի հսկողությունը։

Գիշերն անցկացրի հյուծված ու պարտասած, մղձավանջալին երազներով. ինչ-որ ամբոխ, իրարանցում, զոռում-գույնուներ, հետապնդում ու մի գամփու, որ վախիկ է ճանապարհու ...

Առավոտյան ժամը 10-ից հետո ինձ կարծես խեղդում էին սենյակիս պատերը. ինչ ճակատագրական արժեք ունեցավ մուտքի դռան այն թշվառ պտուտակը ...

Կեսօրին ընկերոջս տրամադրությունը բարձր է։ Ռւճանտում Հազորը մի քանի այցելուների մեջ որոշակիորեն տարբերել է Թեհանդին Շաքիրին։

— Քանի նա այստեղ է, նշանակում է Թալեաթն էլ շուտով կհայտնըին։

— Իսկ ինչո՞ւ շես ենթադրում, որ Շաքիրն էլ կարող է գնալ։

— Այդ գեղգում պետք է արդեն մեկնած լիներ, որովհետև, եթե Թալեաթը վախիկ է, Շաքիրն էլ պետք է իր կյանքի ապահովության մասին մտածեր։

Ասածի մեջ տրամաբանություն կար. նորից գոտեպնդվելով տուն դարձա։

Գիշերը երազումս տեսա մորս. իբր թե երդնկայից մեկնում եմ դեպի Բալկաններ։ Հարսներն իրար են անցել ծխի ու մրի մեջ կորած թոնուածնը. նրանք պատրաստում են ճամփորդական պաշար։ Մայրածնկալով, անշարժ նստած է մինդարի վրա, թոնրի մոտ. փոքրիկները՝ բարյմ հացի կտորները ձեռքերեն, բուռպիկ են շուրջը։ Անթիվ ճան-

Ենք պիտում են Մարգարի բերանի և զիսի շորս կողմը, որովհետև նրա հացի վրա մեղք է քսված: Դրսում աղջամուղ է, արտույտները պարզում են, թափ տալիս թերը: Երբ խուրջինս լցնում են, առնում եմ ուսիս ու ասում:

«Մնաք բարով»:

Այդ ժամանակ մայրս վեր է կենում ու ինձ հետ դուրս գալիս: Լուս դնում ենք: Նրա ընկերակցությունն անախորժ է ինձ. կուղի արդեն քաժանված լինել, որ այլևս նրա մասին չմտածեմ:

— Մա՛յր, դու ո՞ւր, — ասում եմ:

— Մինչև ս. նշան, զավա՛կս, ուստ ունիմ քեզ մինչև այնտեղ ճամփու դնելու:

Հասնում ենք սուրբ նշան: Մայրս կույրի պես շոշափում է դեմքս, ուսիրս, ձեռքերս ու մրմնջում.

— Այսպիս մեկ-մեկ մեծացնում եմ, թե եք առնում, թոշում, ու մե մնում եմ շոր գլուխ:

— Տուն դնա, — ասում եմ նրան ու շարունակում ճանապարհս:

Սուրբ նշանից ուղիղ գծով բավական վար հորիզոնում հայտնվում է արևի վառ սկավառակը: Հանկարծ ետևից լսում եմ մորս կերկերուն կանչը: Հետ նայելով՝ տեսնում եմ, որ նա այնտեղ դեռ կանգնած է: Գտոնում եմ դեպի նա.

— Ի՞նչ կա, մա՛յր:

— Գնո՞ւմ ես, — ասում է նա հապիլ լսելի ձայնով:

— Իհարկե, շասացի՞՝, որ դու ետ դառնաս:

Այն ժամանակ մայրս համբորեն քայլում է դեպի տուն: Մի քանի քայլ հետո նա օրորում է դլուխը ու քայլերն արագացնում:

— Մա՛յր, — գոշում եմ: Բայց նա այլևս ետ չի նայում, դնում, գրնում, վազում է ու հանկարծ շքանում ...

Առավոտ էր. թունդ ելած ջղերս անկարող եղա հանդարտեցնել ու մանկան պես լաց եղա ...

Հաջորդ օրը, 11-ի մոտերը, մի ինքնաշարժ կանգ առավ դիմացի շենքի մայթի մոտ: Սիրտս ուժգնորեն բարախում էր. ինքնաշարժից դուրս եկան մուայլ դեմքով նըսուհին և սև վերարկուով դեռատի մի կին: Մինչ առաջինը վճարում էր, մյուս կինը թեթերեն վեր սահեց տարածուն հինգ—վեց աստիճաններով ու բանալին դարձնելով ներս ժամանակ: Շունչ առա. կասկած շկար, որ թալեաթի կինն է ... Մոտ երկու ժամ քարացած մնացի պատուհանիս մոտ: Բայց այլևս անցուդարձ

շկար: Անհրաժեշտ էր լուր տալ ընկերոջս հուսատու անակնկալի մասին:

Լսեց այս կարևոր լուրը և իր հերթին հայտնեց, որ Ամերիկայից օդային փոստով մի ծածկագիր նամակ է ստացել: Ընկերները, կրկնելով Պոլսո տեղեկությունը, խնդրում են բոլոր հնարավոր միջոցներով վերջ տալ Թալեաթի գործին: Մնացած ոճրագործներին պատժելու համար ձեռք են առնված միջոցներ, և այդ խնդիրը մեզ շպետք է զբաղեցնի: Մածկագիրը փետրվարի սկզբներին արված մեր դիմումի պատասխանն էր:

Մարտի 13-ի առավոտյան մայթի վրա հայտնվեց Թալեաթի կինը և դանդաղորեն շարժվեց դեպի վեր: Դեռևս Պոլսից զիտեի, որ ընդունակություններով օժտված և քաղաքականությամբ հետաքրքրվող մեկն էր: Նա մասնակից էր ամուսնու գործերին, երբ նա հեռագրական պարզ պաշտոնյա էր, ներքին գործոց նախարար, մեծ վեզիր: Ասում էին, որ նույնիսկ մեծ ազդեցություն ուներ ամուսնու վրա: Հայտնի էր իրք հրապարակագիր: Իթթիհատականների նեղ շրջանում անծանոթ չէր: Կարող էր երեսն երեսը բաց, առանց քողի հայտնվել Պոլսո փողոցներում: Այնուամենայնիվ հաճույքով չէր, որ դուրս եկա հասկանալու, թե ո՞ւր է գնում. կին հետապնդելը անհաճո էր:

Հասավ կենդանաբանական այգի ու ներս ժամանակ: Գարուն էր. ձյունից նոր ելած կանաչները կարծես լվացված, սրբված էին: Բայց դեղատոմսային ճշտությամբ բաժանված մարգերն ու համահավասար թղթիկներն ավելի հետաքրքրություն, քան հաճույք էին պատճառում ինձ: Նա համրաքայլ գնում էր դեպի ցայտաղբյուրները, ուր շիթերով բարձրանում և անձրենի պես իշնում էին ջրեր՝ ցողեր գոյացնելով մամուռապատ շրջապատի վրա: Հանկարծ սիրտս լցվեց անսահման կարոտով զեպի մեր հայրենիքը, դեպի պղտոր եփրատը, որ ամպեր համբուրող սրագագաթ լեռների միջով մտնում է կիրճերը, զոռում հազարավոր վագրերի միաբերան ոռնոցով, ապա զայրույթից փրփրած դուրս է նետվում ու հեղեղատի պես տարածվում ...

Տիկինը հասավ, կանգ առավ այստեղ շատերի պես: Գիրտրուտ Գոլդը իրավունք ուներ. գեղեցիկ է՝ դժգույն դեմք, մեծ, սիրուն աշքեր, սև, հարուստ մազեր, փոքրիկ բերան, բարեձև, նազելի՝ նման հայուհու: Հայտնի է, որ շրջապատի գեղեցկությունից զատ նրան ոչինչ չի զբաղեցնում: Ու թեև իր գիտությամբ և ամուսնով հրամանով ան-

պատներում դատապարտվել են սովամահության, և թուրքական հարեմներում խամրել իր նման տասնյակ հազարներ, այնուամենայնիվ իրավունք ունի խաղաղությամբ վայելելու բնության բարիքները:

Վերադարձա տուն....

Հաջորդ կեսօրին Հազորից իմացա, որ Ուհանտը այդ օրը նման է եղել ուխտատեղիի. այնքան շատ մարդ է մտել ու դուրս եկել: Այնտեղ եղել են Թեհաեղին Շաքիրը, դոկտոր Նազրմը, հսմայիլ Հագկը, դոկտոր Մըսուհին, անգամ Զեմալ Ազմին, վեց-յոթ ուրիշներ ևս, որոնց մի ճանաչել: Անշուշտ, շուտով պիտի երկար և թալեաթը ...

Կրկին վերադարձա տուն: Միշանցքում դեմ առ դեմ եկա տիկին Դիտմանին. ավելի քան սիրալիր էր, բայց ես չկարողացա նրա հետ հաստատել այն պարզ դրացիական հարաբերությունները, ինչ տիկին Շթելբառումի հետ: Նա ինձ միշտ շփոթություն էր պատճառում, և որքան ուզում էի պարզել, այնքան ավելի դժվարությամբ էի հասկանում ասածները: Այո՛, առողջությունս լավ է, պարապմունքներս՝ նույնապես. շփիտեմ ինչու՝ ենթադրում է, որ ինձ հետ դժբախտություն է պատահել կամ ես շնասկացա, ու նա ժպտում է, ես մտնում եմ սենյակ ...

Իրիկվան դեմ փողոցում հայտնվեց Մըսուհին՝ զամբյուղով. շուտով նա ետ դարձավ, և դիմացի շենքի դուռն այլևս չբացվեց: Սուբին քնննելուն պես ճրագ վառվեց առաջամասի դահլիճում, բայց հանկարծ մարեց ու վառվեց պատշպամբի ձախ մասի սենյակում: Այստեղ ևս երկար շտեղ ու շենքը դարձյալ պարուրվեց խավարով:

Առավոտյան սովորականից շուտ եկա: Արենի շողերն արդեն հասել էին դիմացի շենքի պատուհանին: Հաղիվ էի ավարտել թեյս և ուզում էի բազկաթոռը մոտեցնել պատուհանին, երբ հանկարծ դիմացի շենքի պատշպամբում տեսա թալեաթին: Փարացա. նա՞ էր արդյոք: Այո՛ ...

Նա մեկ-երկու քայլ առաջ անցավ, ուշադիր զննեց մայթը՝ նախ վեր, ապա՝ վար ու կարծես ինչ մտքերի ծանրության տակ գլուխը կախեց: Ըստ երկութին թեթև չէր կյանքը, գործած անպատում ոճիրից հետո: Համենայնդեպս, թիև անցել էր հինգ-վեց տարի, բայց վախը անբաժան էր մնացել նրանից: Իր լայն ուսերին կրում էր երկու հրապարակային մահավճիռներ՝ Պոլսո ուղղմական ատյանի և Հայ Յեղափոխական Դաշնակցության: Առաջինը նրա համար, հավանաբար, ուներ բարոյական նշանակություն. փոխանակ վեր հանելու իր «ազգանվեր» մեծ գործը, հարազատ երկրում հարազատները դատապարտում

էին նրան մահվան, իբրև սովորական ոճրագործի: Բայց ժամանակը կարող էր այդ «թյուրիմացությունը» պարզել, ապագա սերունդները կհասկանային կատարած գործի արժեքը, եթե ... եթե վիներ Հ. Յ. Դաշնակցության դատավճիռը: Այնուամենայնիվ, չկարողացավ այդ կուսակցության բոլոր ղեկավարներին բնաջնջել: Բայց ո՞վ մնաց իր ճանաշածներից: Փաստորեն մի հոգի՝ Գարեգին Փաստրմաճյանը: Զէ՞ր հիշում արդյոք վերջին զրուցը նրա հետ ...

Լծակի պես հաստ դաստակը վեր տարավ, ձեռքով ճակատը շփեց, ներս մտավ: Նայեցի ժամացուցին. 10-ն էր: Ուհանտ դնալու իր սովորական ժամը: Զենքը վերցրի՝ պատրաստ դուրս գալու: Հանկարծ նահայտնվեց դռան մոտ և փողի ծանրությամբ սկսեց վար իջնել: Երբ դուրս ելա փողոց, դիմացի մայթով ուղղվել էր գեպի Ուհանտ: Սառը զատողությունն ինձ ասում էր, որ այս անգամ անկարող պիտի լինի ազատվել ձեռքից, բայց և հուզումը բազմալեզու աղաղակներով փոթորկում էր ինձ:

— Հասի՛ր, վազի՛ր, անցի՛ր մյուս մայթը ու շեղակի կոնակից, մեշքի՛ն, զլիսի՛ն, շո՛ւտ, անցի՛ր փողոցը ...

Մայթից իջա փողոց՝ ետեր անցնելու համար, բայց հանկարծ մի բան հետ մղեց ինձ. Հազար անգամ պարզված բացորոշ բանն այդ պահին մեկից մեկ կասկածելի թվաց. նա՞ է արդյոք ...

— Անցիր դիմացը, դիմացը, դիմացի ճակատի՛ն, շո՛ւտ, շո՛ւտ, վազի՛ր ...

Դիմացի մայթով հավասարվեցի նրան, արագ քայլերով բավական առաջացա, անցա նույն մայթը, ուսկից զնում էր նա: Ետ դարձա: Մոտենում էինք իրար: Նա գալիս էր ճեմելու ձեռվ՝ ճեռնափայտը անփույթ ճոճելով: Մի կարճ տարածություն մնացած՝ զարմանալի անդորրություն համակեց էություն: Հավասարվելու պահին թալեաթը շեշտակի նայեց ինձ. աշքերի մեջ առկայծեց մահվան սարսուռը: Վերջին քայլը բեկվեց. մի քիչ թեքվեց, որ խուսափի, բայց զենքը դուրս քաշելս ու զլիսին պարպելս մեկ եղավ ...

Թալեաթը հարվածից կարծես ցցվեց, ու մի ակնթարթ հղոր մարմինը պրկվեց ծիգ, բայց երերուն, ապա սղոցված կաղնու բնի պես երեսի վրա տապալվեց թնդյունով... Փիշ դենը մի կին ճշաց ու գետին փողից, մի մարդ վազեց դեպի նա ... Բնավ չէի կարող երկային, որ այդպիսի դյուրությամբ գետին պիտի փաղանը: Մի վայրկյան մղում ունեցա բոլոր զնդակները պարպելու մեշքին, բայց փոխանակ

կրակելու՝ ատրճանակս նետեցի: Առ, թանձր արյունը վայրկենապես լճացավ Թալէաթի գլխի շուրջը. կարծես զարդված անոթից մաղութ էք. թափվում...»

— Մարդ սպանեց, — լսեցի:

Նայեցի վեր, վար, դիմացը, ամեն կողմ մարդիկ կանոնած նայում էին ինձ...

— Մարդ սպանեց, բռնեցե՞ք, — ճշաց մեկը՝ ձեռքերը ցանցածե դեպի ինձ պարզելով...

Բայց լճացող արյունը կարծես դյութել էր ինձ:

— Բռնեցե՞ք, բռնեցե՞ք, — ճշացին ուրիշները ...

Ես անցա նրանց մոտով, ոչ ոք չփորձեց ինձ բռնել: Բայց երբ թիկունքից աղաղակները բազմացան, քարացած ջղերս հանկարծ թունդ ելան, ու ես ինձ նետեցի հարևան փողոցը՝ ի՞նչ անելու, շղիտեմ: Ահավոր աղմուկով մարդիկ հետապնդում էին ինձ: Ես փախա: Դիմացից եկող մեկը բռնեց ինձ ...

Կարո՞ղ էի արդյոք խուսափել, հավանաբար, եթե այդ մասին նախապես մտածած և որոշած լինեի: Անմիջապես ամբոխը շրջապատեց ինձ: Չէի հասկանում, թե ինչ են ուզում ինձնից. զոռում են, բռնցքները ճոճելով հարձակվում, այնինչ են ոչ ոքի հետ գործ չունեմ: Մեկն ինձ քաշեց, ուրիշները սկսեցին անխնա հարվածել: Մի զինված բռունցք իջավ գլխիս, աշքերս մթնեցին, վայր ընկնելուց խուսափելով՝ շոքեցի. արյունը ակոսում էր դիմքս. բազմաթիվ ձեռքեր ու ոտքեր էին իջնում մրաս. անզոր կատաղությամբ պոռացի.

— Ի՞նչ եք ուզում. ես՝ հայ, նա՝ թուրք. ձե՞ղ ինչ ...

Հանկարծ ամբոխը ճեղքվեց, մի ոստիկան ոտքի հանեց ինձ:

— Հա՞յ են, թո՞ւրք են, — խլրտում էր տեղի տվող ամբոխը:

Գլխիցս արյուն էր հոսում: Հասան ուրիշ ոստիկաններ: Ամբոխը ետ քաշվեց: Ինձ դարձրին Հարտենքերդ: Մայթի վրա նույն դիրքում ընկած էր հրեշը: Ոստիկաններ, բազմությունը որոշ հեռավորության մրա հավաքվել էր շորս կողմը:

Անցանք ...

Գազազած ոստիկաններն ինձ նետեցին Շառլուենբուրգի ոստիկանատան մի խցիկ: Ապա հայտնվեց մի պաշտոնյա, զլուխս վիրակապերով փաթաթեց ու ինձ զուրս հանեց: Ինքնաշարժով տեղափոխեցին գազտնի ոստիկանական բաժին: Պաշտոնյանների ու ոստիկանների մի բազմություն կար այստեղ. մեկը ինձ ներս տարավ մի ավելի մեծ խուց ...

Հողեկան ներքին այնպիսի մի գոհունակությամբ էի համակված, որի նմանը չէի ապրել երբեք: Արճճի պես վրաս ծանրացած տևական մղձավանջը հանկարծ չքացել էր: Կարծես ամեն բան փոխվել էր. անկաշկանդ հոգիս թոշում էր ազատ ու արձակ. կարծես էությամբ ձերբազաված՝ մտքերս շրջում էին աշխարհի ծանոթ բոլոր անկյուններում: Տե՛ր աստված, որքա՞ն շատ բան կար մտածելու: Եվ, սակայն ամեն բանից ու տեղից մտքերի մի-մի փշուր կա գլխիս մեջ, որոնք փալլատակում են ու մարում

Հանդարտել էի, երբ ինձ առաջնորդեցին բաժնի պետի մոտ: Ինքնությանս վերաբերող հարցումներին պատասխանեցի: Բայց երբ սկսեց ինձ հարցաքննել ըստ էության, ֆրանսերենիս օգնությամբ խնդրեցի մի հայ թարդմանիչ: Գտնվեց ֆրանսերեն իմացող, առարկեցի, որ ֆրանսերենս էլ տկար էր հարցումներին ճշգրիտ պատասխանելու համար: Ետ տարան խուցը ...

Երկելոյան դեմ էր, երբ ինձ զուրս բերին: Երկու ոստիկաններից մեկը գրապահից հանեց դիմացկուն թելի մի կծիկ, որի ծայրերին կապված էին բռնելու հարմար փայտե գլանածե կտորներ. նա թելը փաթթեց զաստակիս ու փայտերը ափում միացրեց, զուրս ելանք: Մանկության օրերին այդ ձևով ես «ձի» էի խաղում տարեկիցներիս հետ: Մյուս ոստիկանը միացավ մեղ թղթերի մի ծրաբով: Անցնելով մի շարք փողոցներ՝ կանգ առանք մի շենքի առաջ, որի ցուցատախտակին գրված էր՝ «կենտրոնական ոստիկանատուն»: Երկրորդ հարկաբաժնում մի քանի միջանցքներ անցնելով՝ թղթատար ոստիկանի հետ մըտանք մի ընդարձակ սենյակ: Հակառակ պաշտոնյաների բազմության, լուսիթյուն էր տիրում. մարդիկ կարծես համբ էին: Այստեղ մի կարծու կլոր մարդ ընդունեց ծրաբը, որի մեջ երևաց ատրճանակս, և, մատյանի մեջ անունս անցկացնելով, զլխով արավ կողքին կանոնած պաշտոնյացին: Դուրս ելա նրա հետ: Միջանցքներում պատահում էին ավելու ու մաքրող բանտարկյալներ: Ոստիկանությանը կից բանտում էի: Միջին մեծության մի խուց, վերևում բացված մի փոքրիկ պատուհան, պատին գամված փայտյա մահճակալ, որ բաց էր, դիմ առ դեմ պատին ամրացված այլ ձևի սարքավորում, որի մի ծայրից երբ քաշեցի, հանկարծ սեղան բացվեց. մյուս փայտերը շարժելով՝ նստարան բացվեց, որտեղ և տեղավորվեցի: Աշ կողմի պատին մի գամված դարակ նկատեցի. թեև խիստ հոգնած էի, բայց վեր կացա ու բաց արի. մի պնակ,

փայտե գդալ, աղաման, երկու հողե ամաններ, որոնցից մեկը ջրով լի, լվացվելու համար հողե կոնք. օճառ չկար ...

Խցում արագորեն մթնշաղ էր թանձրանում: Առաստաղից կախված էլեկտրական լույսը շատ բարձր էր և կարող էր միայն դրսից միացվել: Երկաթապատ դուռը հինգ-վեց սանտիմետր տրամագծով մի կլոր ծակ ուներ, որ դրսից փակված էր շարժական տախտակի լեզվակով: Մահճակալի վրա պառկած՝ ուզում էի ինձ հաշիվ տաք, բայց՝ իզուր: Այժմ մեջս հակընդեմ զգացնամների մի քառս էր. գոհունակություն, որ վերջացած է գործը. դառնություն, որը երեխ անխուսափելի է բանում: Ու նոր էի զգում առավոտյան ծեծի ցավերը. կողերս ճմլված էին, զլխիս վերքը կոտտում էր, ծնկներիս կաշին պլոկված էր, մարմինս ջերմի մեջ այրվում էր ...

Երեկոյան ինձ առաջնորդեցին երկրորդ հարկում մի սենյակ: Ակնոցավոր, այծեմորուս մի պաշտոնյա նստած էր մուտքի դիմաց, գրասեղանի մոտ, որի վրա տեսա ատրճանակս: Նրա մոտ կանգնած էր ասիական տիպի մի երիտասարդ, որը ատելավառ զայրությով նայեց վրաս: Աջ կողմից մի այլ դրասեղանի մոտ մի այլ պաշտոնյա ճրադի տակ թղթեր էր թիրթում. սեղանի անկյունում, ճերմակ աստառը դեպի վեր, դրված էր արյունաներկ եվրոպական մի զլխարկ և մի ձեռնափայտ: Այծեմորուսը սկսեց ինձ հարցաքննել. զժվարությամբ էի հասկանում նրան ու մեկ-երկու հարցումներին պատասխանելով՝ խընդրեցի հայ թարգմանիլ: Քննիչը ըստ երկութիւն համառ էր, նույն բաները զանազան ձևերով կրկնելով՝ շարունակում էր հարցումների տարափը: Նրան հետաքրքրում էր, թե ինչո՞ւ և ինչպե՞ս սպանեցի «Թալեաթ փաշաբին»: Բայց ինչպե՞ս կարող էի այդ հարցումներին գերմաներեն պատասխանել, եթե արդեն որոշել էի հրեշի նյութած սարսափները հկարագրել ու աշխարհի դատաստանին հանձնել մեծ ոճիրի հեղինակներին: Քննիչը ձեռքն առավ ատրճանակն ու սկսեց պտտել քունքերի, ծոծրակի ուղղություններով՝ պարզելու համար, թե ինչպես կրակեցի Պատասխան շատանալով՝ զենքը վայր դրեց ու նայեց ասիատիպ երիտասարդին:

— Անզգա՛մ, ձեռքդ ինչպե՞ս զնաց ասլանի նման այն մարդուն սպանելու, — թուրքերեն դոշեց վերջինը:

Թուրք լինելուց ավելի զարմանք պատճառեց նրա հարցումը:

— Այնպես, ինչպես նա սպանեց մեկ միլիոն անմեղներ, — պատասխանեցի հս:

— Աւեմն թուրքերեն գիտե՞՝, — գոշեց քննիչը:

— Ինձնից էլ լավ, — պատասխանեց երիտասարդը:

— Աւեմն կարող ենք ձեր օգնությամբ հարցաքննել.

— Հարցրեք, խնդրեմ, թե ի՞նչ պատճառով է սպանել Թալեաթ փաշային:

Հարցումը թուրքերեն կրկնելու ժամանակ երիտասարդի ձայնը դողաց, Կտրականապես մերժեցի թուրքերեն որևէ հարցումի պատասխանել:

Երիտասարդը մոտեցավ մյուս պաշտոնյային: Վերջինս մի լրագրի մեջ փաթաթեց թալեաթի գլխարկը և ձեռնափայտի հետ հանձնեց նրան: Գուրս զնաց. հավանաբար աղքականն էր կամ մոտ բարեկամը:

Քննիչը նոր միայն առաջարկեց ինձ նստել, ու վերաբերմունքն էլ փոխվեց: Աղոտ կերպով հասկանում էի, որ այժմ խոսում է հայկական ջարդերի մասին: Նա մեկ-երկու անգամ հիշեց կեփսիուսի անունը: Կրկնեցի հայ թարգմանիլ հրավիրելու խնդրանքը:

Բանտասինյակում ճրագ կար. քառորդ ժամ շանցած մարեցին, ու ամեն ինչ պարուրվեց խավարով: Բանտն այնքան լուռ էր, որ միայն ուշադիր լսելով՝ կարելի էր հասկանալ, թե երբեմն շատ զգուշ, միջանցքով անցնում է հսկիչը: Ժամերով ես տարված էի այն խնդրով, թե ի՞նչ և ինչպե՞ս պիտի ասեմ, եթե վաղը ինձ կանչեն հարցաքննության հայ թարգմանչի միջոցով: Երբեմն անթիվ մտքեր զլխիս մեջ ստեղծում էին իրարանցում՝ զրկելով ինձ նրանց կարգավորելու հնարավորությունից, երբեմն էլ կարծես բոլորը մեկ զուրս էին թշում, ու զլուխս պարագ տակառի պես դրմբում էր ...

Ինձ թվում էր, որ անհրաժեշտ է սկսել Պոլսո հայության հանրային աշքառու գործիչների, ժողովականների, երեսփոխանների, հեղափոխականների, խմբագիրների, ուսուցիչների, բժիշկների, դեղագործների, փրազետների ջարդից: Ինքը՝ թալեաթը, նրանց մոտ իր զլուխն էր պահում Արգու Համիդի հալածանքներից ...

Այստեղ ինձ թվում էր, որ նախապես անհրաժեշտ է պարզել համիդյան ջարդերի ու տեղահանության տարրերությունը: «Արդ որո՞նք էին այդ տարրերությունները», — ասում էի ինքս ինձ: Համիդյան ջարդերը տեսում էին շորս, հինգ, վեց օր, ամենաշատը մի շաբաթ. կանայք ու երեխաները մասամբ կարողանում էին ազատվել, գաղաղած ամբոխը, հաղեցնելով արյան ծարավը, ընկնում էր թալանի, կողոպուտի ետքեց: Այդ բարեպատեհ առիթից օգտվում էին շատերը ու մահից

աղատվում: Այլ բան էր տեղահանությունը, այն տեսական հրկրաշարժի նման էր, որից ոչ չէր կարող ազատվել: Քնած թե արթուն, ոտքի վրա թե նստած՝ այն կար ու կար, գիշեր-ցերեկ, մինչև որ վերջին մարդը մեռներ: Ամեն մի առանձին հայ մարդու համար այն տեսում էր այնքան, որքան անհրաժեշտ էր, որ նա կա՛մ սրից մեռներ, կա՛մ կացնահար լիներ, կա՛մ գնդակահարվեր, կա՛մ ծարավից մահանար, կա՛մ սովամահ լիներ, կա՛մ գանակոծությամբ սպանվեր, կա՛մ այրվեր և այլն: Նախապես բնավ չէր կարելի հասկանալ, թե ինչ բան էր տեղահանությունը, որա ահեղ ահագնությունը սկսեց պարզվել հետագայում, երբ ոստիկանները հրամայում էին անդադար քայլել, երբ հեռանում էին ծննդավայրից և ետ նայելով՝ տեսնում էին, որ շենքերը փոքրացել են, երբ այլևս չէիր տեսնում գյուղիդ եկեղեցու գմբեթը, երբ լայնատարած դաշտի մեջ էիր, և շգիտեիր, թե ուր ես ...

Գլուխս ցավում էր: Ա՛խ, ինչպես է ցավում գլուխս. ամենահեռավոր պատկերն անգամ շեմ կարող պարզել. կարծես հնոցի մեջ եմ. մրմնջացող մի թմրություն համակում է ինձ: Նախամեծար չէ՞ արդյոք ուղղակի թալեաթի անմիջական կարգադրությունից սկսել. հիշել, օրինակ՝ Սիրքեճիի, Սելիմիի, Սարա-Պուրնուի, Սենճանքոյի, Այաշի, Գալաճըթի, Զանկըրիի և այլ գեպքերն ու տեղահանությունները: Բայց ինչպե՞ս որակել այդ գեպքերը և ո՞վ կհավատա, որ ասածներս իրողություններ են: Լավագույն գեպքում այժեմորուսը կարող է հարց տալ.

— Շատ բարի. այդ ինչպե՞ս է, որ թուրքիայում մի իսկական մարդ շտանվեց, որ գոշեր՝ բավական է, ու վերջ տար սպանդին:

— Ի՞արկե, ստորագասների մեջ եղել են ոմանք, որ 22մել են թալեաթի հրամանը կարդալիս. օրինակ՝ զիշերանոցի մեջ փաթթված կուսակալ Մազհարը գոշել է. «Օ», ներկցե՞ք, ես ինչպե՞ս կարող եմ անմեղ մարդկանց կոտորելու հրաման արձակել. Եշրաֆը չի ընդունի, ներկցեք, բայց ահավասիկ սելանիկցի Արիֆը, դեմքը կաս կարմիր, դուրս է քաշում գրանից մի թուղթ ու ցույց տալով՝ գոշում.

— Այդ գեպքում կուսակալը ես եմ, ո՞ւր է Գալայ գյուղի խոշագրա-Մեհմեդը:

— Եֆենտի՛մ, — լսվում է խավարում խմբված ամբոխի միջից, ըուսնի մի շողք ընկնում է փաթթոցին ու կաղամբի նմանվող ստվեր նետում գետնին:

— Էնկյուրիի 1200 և Սթանոց գյուղի 350 հայերը՝ միասին, — գոշում է Արիֆը: Ու գետնին տնկված կաղամբի ստվերը սկսում է շարժ-

վել. զո՞ների աղաղակները հասնում են մինչև Գապլը Պել, որտեղ կրետացի Ջեֆին հավաճապով կապկապում է նրանց թերթը ...

Օ՛, հավատացե՞ք, արեի պես ճշմարտություն եմ պատմում ձեզ. տասնապետ Ֆիշիլ օվու Ծեփիկը զարզանդի տեսարանից փախավ, իսկ Հասան և Խուրշիտ շաուշները խելագարված սկսեցին գիշատել զիակեները: Այդպես ամեն տեղ, Սարը-Գըշլայի և Գոնիայի ճամփով դեպի Աղանա-Ճալեակ, մինչև Տիգրանակերտ ու Ամանոսի լեռները, Այրանի փակուղիները, մինչև Օսմանիկ, Հասան-Բեյլի, Խալահիկ, մինչև Ուրֆա: Չէ՛, չէ՛, լսեցեք, նախ թույլ տվեք ձեղ նկարագրել Ուրֆայի հերոսամարտը. ձեռք ընկածները՝ 18-ից 25 տարեկան մտավորական, արհեստավոր, հայրենասեր երիտասարդներ, մեկը մյուսից ազնիվ, անձնվեր, ապագայի հույսերով խանդավառ, ծաղկափթիթ երիտասարդներ. նրանցից մեկը միայն վերջին պահին թուզացավ:

— Աստծու սիրուն, գնդակով սպանեցեք, որ շուտով վերջանանք, — ասաց նա:

— Հագուստները հանեցեք՝ անվնաս պահելու համար, մարմինները ծածկեցեք, — հրամայեց հաղարապետ Հալոն ...

Եվ իրը թե քննիչը ասում է.

— Բնդհանուր ձևով պատմեցեք:

— Բնդհանուր:

— Այո՛, այո՛, ընդհանուր, օրինակի համար, ինչպե՞ս էին սկսում շարդերը ընդհանրապես քաղաքներում:

— Բնդհանրապես քաղաքներում:

— Այո՛:

— Բնդհանրապես քաղաքներում երեք օր պայմանաժամ էր տըրվում կոտորածի վայրերը զնալու համար. յուրաքանչյուր ոք ապատ էր իր կինն ու երեխաները հետը վերցնել կամ շվերցնել:

— Ինչպե՞ս թե, հետը վերցնել կամ շվերցնել:

— Այդպես:

— Իսկ եթե կոտորածի վայրերը շնույի՞ն:

— Անսաստողներին մահվան պատիժ էր սպանում:

— Որո՞նք էին շարդերի վայրերը:

— Նախ՝ արյունոտ ճանապարհները՝ Աղաբազար-Պրուսա-Աֆրոն Գարահիսար-Գոնիա-Մերսին. Գասթեմունի-Զանկը-Էնկյուրի-Սովթանխան-Աղանա. Սամսոն-Մարզվան-Ամասիա-Սվաղ-Կեսարիա-Մարաշ-Այնթափ-Խակենտերուն. Շապին Գարահիսար-Երզնկա-

Ուրփա—Հալեպ. Տրապիզոն—Բարերդ—Էրզրում—Մուշ—Բիթլիս—Ռասէլ-Այն ...

— Ճանապարհները թողեք:

— Հապա մեծ սպանդանոցները՝ քառասուն հազարից մինչև հարյուր վաթսունհինդ հազար զոհերով՝ Պողապատան, Յուշ-Տեյփրմենլեր, Կանլը-Կեշիտ, Տեր-Զոր...»:

— Բավական է:

— Այնուհետև առանձին խմբերով կացնահարվածները, ուրագով տաշվածները, սղոցվածները, բահով, բրիչով, մահակով, սակրով զարկվածները, ջրամույն, ծովամույն եղածները. Հորերի մեջ ողջ-ողջ թափվածները ...

— Հերի՞ք է:

Սստված իմ, Աստված իմ, ի՞նչ է լինում ինձ հետ ...

* * *

Առավոտյան դուռը բացվելուն պես ներս մտավ մի բանտարկյալ ծառա, որ բարեկամաբար զլուխը թոթվեց, ժպտաց, առավ ջրի ամանը ու քիչ հետո վերադարձակ թարմ ջրով ու մի բաժակ սուրճով. Լեղի, տաք ջուր, մի քիչ դարի, առանց շաքարի, բայց կազդուրիչ էր:

Մեկ-երկու ժամ հետո ինձ առաջնորդեցին գրասենյակների բաժնում մի այլ սենյակ, ուր հանկարծ դիմ առ դեմ ելա Գալուստյանի հետ Հուղված ողջափորեց ինձ:

— Բնավ հոգ մի արա, ամբողջ գաղութը ոտքի վրա է քեզ պաշտպանելու համար:

Կյանքը արժեք է ստանում նման հանդիպումների ժամանակ. մեկն սիրտ առա: Նա մոտի աթոռից վերցրեց ինձ համար բերած քաղցրեղենի և խմորեղենի կապոցն ու շփոթությամբ ետ դրեց:

Գրասեղանի մոտ նստած էր բարեհամբուլը և ակնոցավոր մի մարդ: Շաղուտենրուրդի դատարանի գաղտնի խորհրդական պարոն Շուլցեն, — ասաց Գալուստյանը, — քեզ հիմա պետք է հարցաքննի. Ես հրավիրված եմ իրեւ թարգմանիչ:

Խառնիխուռն վերհիշեցի այն ամենը, ինչ որ գիշերը մտածել էի, բայց քննիչն սկսեց վերստուգել նախապես կազմած արձանագրությունը:

— Ո՞չ, պարսկահպատակ շեմ, — ասացի, երբ հասավ այդ կետին:

— Երեկ այդպես եք հայտարարել, — զարմացած նայեց ինձ քըննիլը:

— Այո՛, թեուին եմ եկել պարսկական անցագործ, բայց թուրքակատակ եմ, Երզնկայի բագառին գլուղից:
— Ինչո՞ւ այդ կեղծիքին դիմեցիք:
— Կեղծիք չէ, այլ անհրաժեշտություն. ջարդերից հետո ոչ մի հայի կարող թուրքական անցագիր ստանալ:
Թնիլը մեղմորեն շարժեց գլուխը:
— Ո՞ւր եք ուսանել:
— Երզնկայի ազգային վարժարանում:
— Այդ դպրոցի վկայականը բավակա՞ն էր այստեղ համալսարան ընդունվելու համար:
— Ո՞չ, ուզում էի ազատ ունկնդիր լինել:
— Գերմանիերեն գիտե՞ք:
— Այո՛, որքան որ կարելի էր սովորել երեք ամսվա ընթացքում:
— Գիտե՞ք, թե ով էր Ալի Սալիհ բեյը, որին սպանեցիք երեկ Հարտենբերգ փողոցի համար 17 տան մայթի վրա:
— Այո՛, Թալեհաթ փաշան:
— Ի՞նչը ձեզ հարկադրեց այդ ոճիրը գործել:
— Ոճրագործը ես շեմ, այլ Թալեհաթը. նա բնաջնջեց մեր ժողովը դին. ես կարող եմ ձեզ պարզել նրա գործած սարսափները Պոլսից մինչև Տեր-Զոր:
Այստեղ ես պետք է ասեի այն ամենը, ինչ մտածել էի գիշերը, բայց քննիլը ավելորդ համարեց այդ:
— Ովքե՞ր ձեզ օգնեցին Թալեհաթ փաշային սպանելու:
— Ոչ ոք:
Զարմացակ ու ետ նայեց:
— Եթե անգամ այդպիսիները լինեին, պիտի շկարողանայի ասել:
Հայացքից բացրոշ էր, որ հասկանում էր այդ:
— Ո՞ր կազմակերպության հրահանգով կատարեցիք այդ գործը:
— Անձնապես:
— Անձնապես ի՞նչ հաշիվ դւնեիք Թալեհաթ փաշայի հետ:
— Շատ մեծ. նրա հրամանով էր, որ բոլոր հայերի հետ միասին սպանվեցին մայրս, եղբայրս և բոլոր ազգականներս: Այդ օրից ի վեր ես ապրել եմ միայն Թալեհաթից վրեժ լուծելու հույսով:
— Որքա՞ն ժամանակից ի վեր է, որ հետապնդում եք այդ գաղափարը:
— 1915 թվականից սկսած, բայց երեք տարի է՝ ձեռնարկել եմ Թալեհաթի հետքերը գտնելու աշխատանքը:

— Ինչպես իմացաք, որ Թալեաթ փաշան Բեղինում է:
— Պատահաբար, մի թերթի մեջ կարդացի:
— Իսկ ինչպես գտաք Թալեաթ փաշային Բեղինում:
— Փետրվարի վերջերին կենդանաբանական այգու մոտ մի օր հանկարծ թուրքերն խոսակցություն լսեցի. երեք երիտասարդ թուրքերից մեկը «փաշաս» անվանեց մի հաղթանդամ մարդու, որ զրուցում էր նրանց հետ. բաժանվելու պահին երեքը համբուրեցին նրա ձեռքը. Հաղթանդամը շատ նման էր Թալեաթին, որին ճանաչում էի թերթերի մեջ տպված նկարներից. Հետապնդեցի նրան մինչև Հարտենքերդ համար 4 բնակարանը. Մի քանի օր հետո սենյակ վարձեցի նրա տան դիմաց: Վերջին տասը օրվա մեջ առիթներ ունեցա ստուգելու, որ «փաշաս» կոչվածը Թալեաթն է: Մարտի 15-ին, երբ տնից դուրս ելավ, խփեցի:

— Ուրիմն, ընդունում եք, որ սպանությունը կատարել եք կանխամտածված:

Այդ հարցման իմաստը լավ չհասկացա. ավելի ճիշտ ինձ զարմանք պատճառեց Գալուստյանի դեմքի տհաճ արտահայտությունը, երբ թարգմանում էր ասածներս:

— Ի՞նչարկե...

— Ես հասկանում եմ, որ վրեժի գաղափարը կարող է ձեզ մղած լինել այդ գործին, բայց մի՛թե ձեր խիղճը շի տանջում ձեզ՝ սպանությունը կատարելուց հետո:

— Հնդհակառակը, սիրտս լցվում է գոհունակությամբ, որ վերջապես մեկ միլիոն անմեղ զոհերի վրեժը լուծված է:

— Ուրիմն, դուք Բեղին եք եկել ոչ թե ուսանելու, այլ Թալեաթին սպանելու:

— Բեղինում մեքենագիտություն սովորելու մասին ես երազում էի դեռ պատերազմի նախօրյակին: Բայց ամեն բան տակնուվրա եղավ...

Քննիչը ետ նստեց՝ ձեռքի մատիտի հետ խաղալով.

— Գիտե՞ք, որ օրենքով ձեզ մահապատիճ է սպանում:

— Այս, բայց գործս հաջողությամբ կատարելուց հետո ինչ ուզում է թող լինի:

— Ե՞րբ որոշեցիք սպանությունը ձեռնարկել:

— Մորս անհայտ դերեղմանով երդել էի Թալեաթին սպանել, երբ ձեռքս ընկներ, անպայման պիտք է սպանեի:

— Պատմեցիք, թե ինչպես սպանեցիք Թալեաթ փաշային:

— Մարտի 15-ի առավոտյան պատուհանից հանկարծ տեսա, որ Թալեաթը փողոց գուրս եկավ ու դեպի վար գնաց: Ատրճանակս առաջ վրա հասա, զուգահեռ մայթով արագ գնացի, առաջ անցա, երբ նա բավական ետ մնաց, անցա մյուս մայթը, ետ դարձա՝ նրան դիմացից խփելու համար: Բայց մի երկու քայլ մնացած՝ հանկարծ նա զգաց, սարսափահար նայեց, ուզեց թեքվել, խուսափել, երբ զնդակը գամեցի պլսին:

— Հիշո՞ւմ եք, որ փողոցն անցել եք երաժշտական վարժարանի մոտ:

— Ո՞չ...

Քննիչն այնուհետև շատ երկար կանգ առավ, թե վերջին պահին ինչ դիրքի մեջ կատարվեց սպանությունը, ետևից, թե՛ առջեկից, կողքից, թե՛ թիկունքից, ի՞նչ տարածության վրա և այլն: Հոգնել էի, զլուխս ցավում էր, պաղ քրտինքը վիրակապի տակից ծորում էր: Գալուստյանն ինչ-որ բան շնչաց նրան: Վերջինն ինձ արձակեց ...

Երբ դարձա խուցս, հայտնվեց ծառա բանտարկյալը. նա զլխս վերքը լվաց ու նոր վիրակապ փաթաթեց: Այդ աշխատանքի ժամանակ նա անընդհատ խոսում էր. զիտեր անունս, մականունս, ինչ գործով մեղադրվելս, զիտեր ջարդերի ու Թալեաթի մասին, գրեթե քննիչի շափ բան զիտեր: Զրոտ, բաց գույնի աշքերը կարծես անթարթ էին, դեմքը նիհար, գունատ ու արտահայտիչ: Իհարկե շատ բան իր ասածներից շեմ հասկանում, բայց միտքը պարզ էր. նա գտնում էր, որ շատ լավ եմ արել Թալեաթին սպանելով և ինքն էլ, եթե հայ լիներ, այդպիս պիտի վարվեր: Բայց շարժե այդպիսի հրեշ սպանելու համար զլխատվել: Եվ հիմա բարեկամական պարտք ուներ ինձ իմացնելու, որ ամեն բան կախված է նախնական հարցաքննությունից: Եթե ես ասեմ, որ Թալեաթ փաշային սպանել եմ անձնական վրեժինդրությամբ, կարող եմ ստանալ տասնհինգ տարվա տաժանակիր աշխատանք, իսկ եթե ասեմ, որ սպանել եմ ընդհանուր քաղաքական պատճառներվ, այսինքն՝ կանխամտածված, ինձ կարող են զլխատել: Այս հետաքրքրական մարդու մականունը կենին էր: Ասածներից հասկացվում էր, որ բանտարկված է զեղծարարության հանցանքով: Արդյոք որևէ ակնկալություն ուներ ինձնից, զիտեմ, համենայնդեպս, ես Գալուստյանի բերած քաղցրավենիքի մի մասը նրան տվի, որն արագությամբ տեղավորեց գրպաններում:

Քիչ հետո հայտնվեց մի ուրիշի հետ: Դուան մոտ նրանք մի խոշոր կաթսա վար դրին. կեսօր էր, կերակուր էին բաշխում. նա պնակս լցրեց ու գրեց սեղանին: Այդ ապուրի մեջ ամեն բան կար, բացի մսից ու յուղից, բոլորովին բուսեղեն մի ուտելիք: Լինը շնչաց, որ եթե ուզեմ, կարող է ինձ համար լրազիր բերել:

Անցավ երկու-երեք ժամ:

— Սոլոմ'ն, — լսեցի:

Մոտեցա դուան անցքին ու մինչ ևս մտածում էի, թե ինչպես պետք է վերցնեմ ձեռքի թերթը, նա արագությամբ ներս սահեցրեց դուան տակից «Մորգեն Պոստի» մի համար: Թերթի հակատին խոշոր գրերով տրաված էր՝ «Նախկին մեծ եպարքոս Թալեհաթ փաշան Բեղլինում սպանված է», տակը՝ «Քաղաքական վրեժինդրություն մի հայ ուզանողի կողմից»: Մտածում եմ, որ Լինի ասածները «զիխատման» ու «տաժանակիր աշխատանքի» մասին այնքան էլ անիմաստ չէին: Նոր եմ հասկանում, թե ինչո՞ւ Գալուստյանն էլ տհաճությամբ էր լսում ընդհանուր բնույթ կրող պատասխաններս հարցաքննության ժամանակ ...

Երեկոյան Շուլցին շարունակեց հարցաքննությունը: Այս անդամ աշխատեցի որքան կարելի է խնդրին անձնական բնույթ տալ, որ առանց այն էլ մեծ բաժին ուներ ինձ մղում տվող պատճառների մեջ: Երբ վերջացավ, Հաջողեցի մի քանի խոսք փոխանակել Գալուստյանի հետ: Թուրքերը մեծ գործունեություն էին ծավալել՝ դատը շահելու համար: Հայ գաղութն էլ ամեն կերպ աշխատում է, որ անպարտ արձակվեմ՝ յուրացնելով խնդրելով իրեկ համազգային հարց: Յերեկվա ցուցմունքներս Գալուստյանը, իրեկ թարգման, չէր ստորագրել՝ նկատելով դատի համար նրանց աննպաստ հանգամանքը: Նոր էի հասկանում, որ խնդրելով միայն ինձ չի վերաբերվում, և պարտավոր եմ ներդաշնակելու իմ ընթացքը զրոխ բարեկամներին հրահանգների հետ ...

Նոր էի դարձել բանտասենյակ, երբ լսեցի.

— Սոլոմ'ն:

Լինն էր: Մի բան սահեցրեց դուան տակով, հայելու մի փշուր: Այլանդակված էի. քթիս մի կողմը ուռած, աշքիս տակը վերը, ձախ այտս ծվատված, հակտիս աշ կողմը վերք ...

— Սոլոմ'ն:

Դարձյալ նա:

— Ի՞նչ կա:

— Հայոց գեսպա՞նն էր:

— Ո՞վ:

— Այն մարդը, որ ներկա էր հարցաքննությանը:

— Այո՛ ...

Առավոտյան ինձ նորից կանչեցին հարցաքննության, այս անդամ նղեռնադատ ատյանի հարցաքննիլ Մանտուֆեյլի մոտ. ճաղատ, ձայնի շերմությունը կորցրած, դեմքի սուր արտահայտությամբ, տարիքն անցած մեկը: Ամեն կերպ աշխատեցի խնդրին անձնական բնույթ տալ: Բայց անկարող էի ժխտել, որ սպանությունը կատարել եմ կանխամտածված: Վերջին պահին Գալուստյանից իմացա, որ գաղութը որոշել է պաշտպանության համար հրավիրել Բեղլինի նշանավոր փաստաբաններին:

Երբ բանտասենյակ վերադարձա, դուռը բաց էր. Լինը լվանում էր հատակը: Կարծես հեռախոսային ցանցով նա կապված էր բանտի բոլոր ծակ ու ծուկերի հետ, վայրկյան շանցած տեղյակ էր բանտում տեղի ունեցած բոլոր իրադարձություններին: Մանտուֆեյլը այն մարդն է, որ դժբախտացրել է Լինին՝ հաշվապահական ակնհայտ սխալը ներկայացնելով իրու զեզծարարություն և այն էլ ի՞նչ զեղծարարություն. ընդամենը հիսուն հազար մարկի մի խնդրի, երբ դրամի արժեքն ընկած էր, և ինքն էլ բնավ հանցանք չուներ այդ գործում: Ահա, թե որքան բախտորոշ նշանակություն ունի «Նախնական հարցաքննությունը»: Գալով ինձ, նա գտնում էր, որ ես շատ լավ եմ արել՝ ասելով, թե «ոճրագործը ես շիմ, այլ Թալեաթը»:

— Հրաշալի է, բայց նախնական հարցաքննության մեջ պետք չէ, որ ասեիք, այլ դատարանում, վերջին խոսքի մեջ: Այժմ զրանով գուք արտահայտում եք ըմբռուս տրամադրության: «Ոճրագործը ես շիմ, այլ Թալեաթը»: Հասկանո՞ւմ եք, թե ի՞նչ եք ասել դուք. այսօր մերկ փաստն այն է, որ դուք սպանել եք, իսկ նա մեռել է. ո՞վ պետք է հաստատի, որ նա անցյալում ոճրագործ էր, երբ քիչ առաջ այստեղ պատիվների էր արժանանում ...

Ենքում երևաց մելամաղձոտ հսկիչը. Լինը ծլկվեց ու, կրակ կրտսեծ, ավարտելով աշխատանքը՝ դուրս գնաց:

* * *

Հինգ օր հետո ինձ փոխադրեցին կենտրոնական բանտ: Անախործ էր այդ, որովհետեւ արդեն հարմարվել էի կյանքիս պայմաններին և ունեի Լինի պես բարեկամ: Այդ առթիվ ինձանից ավելի աղղված էր ֆեքը՝ Լինը:

Կենտրոնական բանտը շատ լայն տարածություն էր բռնում, բազմաթիվ շենքերով, մեջքնդմեջ բացվող բակերով և բաժիններով: Քրիականների բաժնում բանտասենյակները դասավորված էին երկշարք՝ մի խոշոր սրահանման տարածության մեջ: Սրահի կենտրոնում, գրասեղանի մոտ տեղ բռնած պաշտոնյան մանրամասն արձանագրեց Հագուստներս, վրաս եղած ամեն բան, անդամ ձեռքի թաշկինակս ու մի տոմսով հզեց առաջին հարկը: Օրինակելի մաքրությամբ բաղնիք էր, կարդ ու սարքով: Բաղնիքից դուրս գալով՝ տեսա, որ հագուստներս փոխարինված են բանտայինով: Հագնվեցի և մի նոր տոմսով ներկացացա նախկին պաշտոնյային, որն ինձ հանձնեց Հսկիչներից մեկին:

Այստեղ բանտասենյակն ընդարձակ ու լուսառատ էր. նույն ձեմի բացվող մահճակալ, սեղան, նստարան, դարակ և ալին, ինչ որ նախկին բանտում: Բայց մաքրությունն այստեղ գերազանց էր: Հսկիչն ինձ պարզաբանեց տիրող կարգերը և պարտականություններու: Առավոտյան, առաջին զանդակը հնչելուն պես, պետք է անկողնուց վեր կենալ, լվացվել և ջրամանը պատրաստ ունենալ: Քառորդ ժամ հետո երկրորդ զանդակը նշանակում է, որ պետք է շուրջ ստանալ, որից անմիջապես հետո պետք է սենյակը մաքրել և աղբը, ավագուքն ու աղբյուսը դուն մոտկուտակել: Թիշ վերջը հնչվելիք զանդի վրա այդ բոլորը պետք է նետվի աղբը տանող սալլակի մեջ: Ապա, քառորդ ժամ հետո հնչող զանդակը նշանակում է, որ բաշխվում է օրվա հացը: Թիշ հետո հնչվելիք զանդակը ազդարարում է սուրճի բաշխումը: Այսուհետև հնչում է զրուսանքի զանդակը, հետո՝ ճաշի, ապա՝ նորից սուրճի, հետո՝ ընթրիքի, վերջապես, պառկել քնելու զանդակը: Այս կյանքի հեռանկարը սարսափելի էր ...

— Հիմա աճավասիկ հնչեցնում են իրինագեմի սուրճի զանդակը, — հարեց Հսկիչը ...

Նույն սնունդն էր, ինչ նախկին բանտում: Մի տարբերություն այստեղ հատկապես նկատելի էր. ուժիմը խիստ էր, կարգապահությունը՝ երկաթյա: Գիշերը մի ամբողջ թաղամաս բռնող այս բանտային աշխարհում կյանքը իսպառ քարացավ:

Հաջորդ օրը կիրակի էր: Առավոտյան սուրճից հետո ինձ այցելեց բանտի քահանան:

Ըստ երևոյթին, մարդասպանների համար բանտում հաստատված սովորություն էր այդ: Գիրուկ, քիշ կոր, թմբլիկ ձեռքերով, հեղուղույն դեմքով քահանան գիտեր ֆրանսերեն, որ ավելի մատչելի

էր ինձ: Իր ներշնչումներն սկսեց նրանով, որ դոկտոր Լիփսիուսի գործերից ծանոթ էր հայ ժողովրդին վիճակված տառապանքներին և հասկանաւմ էր արարքիս պատճառները:

— Բայց Տերն մեր Հիսուս Քրիստոս պատվիրում է խմել դառնության բաժակը մինչև վերջին մրուրը՝ երկնային փառքին արժանանալու համար, — ասաց նա ...

Ամեն մարդ կյանքում պետք է կատարի իր պարտականությունը: Ու ես համբերությամբ լսում էի նրա քարոզը՝ համեմված Տեր մեր Հիսուսի—Քրիստոսի երկրային կյանքի օրինակներով, նրա անսահման ներողամտությամբ ու տիեզերական բարությամբ: Քահանան արարքիս համար դատապարտության խոսք չուներ: Նրան շատ լավ ծանոթ էին մարդկային թուլությունները: Բայց որ վրեժը, անդամ նրա զգացումը, ոհմ է Ավետարանի ողոն, իրեւ քրիստոնյա պարտավոր էի իմանալ: Այստեղից շատ պարզ էր այն գայթակղությունը, որ մղել էր ինձ հանցագործության:

— Բայց Տերը ողորմած է ու բարի, և բավական է, որ դուք բռնիք զղման ու ապաշխարանքի ուղին, որպեսզի թեթև ապրեք բանտի կյանքը ...

Տեսնելով, որ զերմաններին գմկար հմ հասկանում, ու ֆրանսերինս էլ թերի է, նա խոստացավ ինձ հայերեն Սուրբ Գիրք ուղարկել ու մեկնեց իր այցելությունից դո՞ւ:

Եվ իրոք, նստած էի ու շդիտեի, թե ինչպես կարելի է սպանել ժամանակը, երբ դուռը բացվեց, ու Հսկիչը ինձ մեկնեց հայերեն Հին ու Նոր Կտակարանները մեկ կազմով: Աշխատ ընկավ Հովնանի Հայտնություններից մեկի վրա, ուր ասվում է.

«— Ու տեսայ, որ ծովին զազան մը կելլեր, և ուներ եօթը գլուխ ու տասը եղջիւր. և անոր եղջիւրներուն վրայ տասը թագ, ու անոր զլուխներուն վրայ հայոյութեան անուններ կային: Եւ այդ գազանը, զոր տեսայ, ընծու նման էր, ու իր ոտքերը արջու ստքերու պես, և իր բերանը ատիւծի բերնին պէս. ու վիշապը անոր տուաւ իր զորությունը, իր աթոռը ու մեծ իշխանութիւն: Եւ անոր զլուխներէն մեկը մահու շափ վիրաւորվածի պէս էր. ու անոր մահուան վերքը առողջացավ. և ըոլոր երկիր գազանին ետեւէն զարմացաւ: Եւ երկրպագութիւն ըրին վիշապին, որ գազանին իշխանութիւն տուաւ, ըսելով, ո՞վ է այդ գազանին նման եւ ո՞վ կրնայ անոր հետ պատերազմ ընել Եվ անոր մեծ բաներ եւ հայոյութիւններ խոսող բերան տրուեցաւ, եւ քառասուներ-

կու ամիս անոր իշխանութիւն տրվեցաւ իր կամքը ընելու։ Ու իր բերանը հայհոյութեամբ Աստուծոյ գէմ բացաւ, անոր անունը, անոր խորանը ու երկինքը բնակողներուն հայհոյելու։ Եւ անոր իշխանութիւն տրուեցաւ սուրբերուն հետ պատերազմ ընելու եւ անոնց յաղթելու, եւ անոր իշխանութիւն տրուեցաւ բոլոր ցեղերու եւ ժողովուրդներու ու լեզուներու եւ ազգերու վրայ։ Եւ անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակիչները, որոնց անունները աշխարհի սկիզբէն ի վեր մորթուած Գառնուկի կենաց գրքի մէջ գրուած շեն։ Ով որ ականջ ունի՝ թող լսէ։ Ով որ գերութեան քշէ, ինքը գերի պիտի տարուի. ով որի սրով սպաննէ, պետք է, որ ինքն սրով սպաննուի. հոս է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը»....

Նախապես գիտեի, որ հայկական ջարդերը տևել են քառասուներկու լրիվ ամիսներ, 1915-ի մայիսից մինչև 1918-ի հոկտեմբերը, այսինքն՝ Մուլրոսի զինադադարը։ Ու տարվել էի այն մտքով, որ Հովնանի ակնարկած գաղանը նույն ինքը Թալեաթն էր, երբ հանկարծ դուռը բացվեց։ Ինձ կանչում էին տեսակցության։ Նախասենյակում երեք բանտարկյալներ սպասում էին իրենց հերթին։ Կես ժամից ավելի անցավ, մինչև հերթն ինձ հասավ։ Սպասման սրահում բազկաթուին նստած էր մի վարդապետ, տեսնելով ինձ՝ ոտքի ելավ, հանդիսավոր դանդաղությամբ խաշակնքեց՝ հայացքն ինձ ուղղած և ոնցային բամբ առողջանությամբ գոշեց։

Տերն մեր Հիսուս Քրիստոսի անվամբ օրհնում եմ քեզ, որ գաղանը սպանեցիր և բոլորիս վրեժը լուծեցիր։ Քիչ ատենեն պիտի մեկնիմ Հռոմ, բայց շուտով պիտի գամ քեզ խոստովանանքի ենթարկելու և այդ հիման վրա Հռոմի Պապին դիմելու, որ իր օրհնությունը ընծայեքաղի՝ աղղանվեր գործիդ համար ...

Պաշտոնյան միջամտեց, որ անհասկանալի լեզվով շխոսվի։ Հայողի վարդապետն ինձ նվիրեց երաւաղեմի մի խաչ ու գնաց։ Այն պիսի մի անակնկալ էր այդ այցը, որ կարծես նույն ինքը՝ Հովնան մարգարեն էր։ Որտեղից ուր, մտածում էի՝ օրվա հոգեկան անհանգրստությունից և շփոթություններից շշմած, դառնալով նկուզս, երուսաղեմի խաչը ձեռքիս ...

Բանտի մատուի զանգակները ղողանջում էին հեծելտապին։ Որքա՞ն ձայնը նման էր երզնկայի ս. նշանի զանգակների ղողանջին։ Մինչ այստեղ մեկը հեղ ղողանջեց, մյուսը կարծես տևում էր հավիտյան, այստեղ զանգի հարվածները հարսանիքի պես խառնափնթոր էին և

անհասկանալի։ Ներս մտնելով՝ վերցրի Կտակարանները. «Եւ ուրիշ գաղան մը տեսայ՝ որ երկրէն կելէր ու գառնուկի նման երկու եղջիւր ունէք ու կը խոսէր վիշապի պէսա, — գրված էր այստեղ, — «Եւ առաջին գաղանին բոլոր իշխանութիւնը կը վարէր անոր առջեւ, որ երկիրը եւ անոր բնակիչները կը ստիպէր, որ երկրպագութիւն ընեն առաջին գաղանին, որուն մահուան վէրքը առողջացաւ։ Եւ մեծ նշաններ կընէր, ու մինչեւ անգամ երկնքէն կրակ կիշեցնէր երկրի վրա մարդոց առջեւ։ Ու երկրի վրա բնակողները կը մոլորեցնէր այն նշաններով, որ իր ձեռքը տրուած էր գաղանին առջեւ ընելու։ ու բնակիչներուն կըսէր, որ պատկեր շինեն այն գաղանին, որ սրով վիրաւորուած էր և առողջացաւ։ Եւ իշխանութիւն տրվեցաւ անոր, որ գաղանին պատկերին հոգիտայ, որպէսպի գաղանին պատկերը խօսի, եւ ով որ գաղանին պատկերին կըրին երկրպագութիւն շընէ, զանիկա սպաննել տայ։ Եւ կը ստիպէր ամէնը, այսինքն պստիկները եւ մեծերը, ու հարուստները ու աղքատները, եւ աղատները ու ծառաները, որ իրենց աջ ձեռքին վրայ զրոշմ ընդունին։ Եւ որ մէկը չկրնայ զնել կամ ծախել, բայց միայն ան, որ ունի գրոշմը կամ գաղանի անունը կամ անուան թիւը։ Հոս է իմաստութիւնը. ով միտք ունի, թող հաշուէ գաղանին թիւը, քանզի մարդ ու մը թիւ է ու անոր թիւը վեց հարյուր վաթսունըլեց է»...

Հիշում եմ, որ ուսւ մեծ զրոյ Տոլստոյը իր «Պատերազմ և խաղաղություն» գործի մեջ այս առթիվ կատարել է մի փորձ. Փրանսերինի զություն» գործի մեջ այս առթիվ կատարել է մի փորձ. Փրանսերինի այրենարանի առաջին ինը տառերը, այսինքն՝ մինչև Կ, յուրաքանչյարկյալները, զուրս գալով նկուղների՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, ապա Կ տասուրը թվարկելով միավորների՝ 10, 20, 30 և այլն, նա փորձելով գտել մինչև Հ-ը՝ տասնյակների՝ 10, 20, 30 և այլն, նա փորձելով գտել և ո՛չ էլ խոսել շարքի մեջ արգեն կանգնածների կամ թիկունում շարվածների հետ։ Մատուի մոտ սանդուղքի մի քանի աստիճաններ բարձրանալով՝ մտանք ամֆիթատրոնաձև մի սրահ, որ գեմի վարագույրակալ բեմով ավելի շատ թատրոն, քան եկեղեցի էր հիշեցնում։ Զարմանալի էր նստարանների կառուցվածքը. թեև նրանք կաղմում էին իրար թիկունքներին թառած շարքեր, բայց ամեն մի նստա-

223

րան առանձնացած մի վանդակ էր, որից ոչինչ շէիք կարող տեսնել ո՛չ վարը և ո՛չ վերը, ո՛չ ձախ և ո՛չ աջ: Այդ փայտե փոսից կարող էիր միայն նայել զեմք՝ բեմին: Վերսից իջնող տախտակի մի շերտ ծածկում էր գլուխդ, աչից և ձախից նույն ձեմի կառուցվածքներն անշրջապետում էին կողքերից, ոտքերիդ տակ եղած տախտակը երկարում էր այնքան, որ ծածկում էր վարը նստածի գլուխը:

Նստարանների երկու կողմերին, դարակաձև փոքրիկ մակարդակների վրա, գրված էին մի-մի գիրք: Ես վերցրի աչ կողմիս գիրքը. կաթողիկոնների համար Ավետարան էր, տեղը դրի և վերցրի ձախ կողմի գիրքը, այն էլ Ավետարան էր բողոքականների համար. այն էլ տեղը դրի՝ սպասելով գալիքին:

Հանկարծ բացվեց վարագույքը, և այնտեղ երեաց դժուլն դեմքով քահանան: Նա դեպի մեզ խաչակնքեց և սկսեց աղոթել, ապա աղոթքի վերջում, ձայնին հետզհետե երգի երանդ տալով, փաստորեն սկսեց երգել, ու հանկարծ սրահը թնդաց անթիվ ձայներից, անհայտության խորքից երգում էին բանտարկյալները և՛ մեղմ, և՛ խրոխտ, թե՛ իբրև բողոք և թե՛ իբրև աղերսանք: Հոյակապ էր. կարծես ոչ թե մարդիկ, այլ սրահն էր երգում:

Երբ երգը վերջացավ, քահանան քարոզ խոսեց: Ոչինչ շէի հասկանում, գիտեի միայն, որ խոսում է «Սիրեցեք միմյանցի» մասին: Բայց ինչպես պիտի սիրեինք միմյանց, երբ իրար երես շէինք տեսնում...

Գ Լ Ո Ւ Խ Թ

ԴԱՏԱՎԱՐԻՈՒԹՅՈՒՆ

Եղեանագատ ատյանի մի նոր հարցաքննությունից հետո ինձ թույլ տվին տեսնվել փաստաբաններիս հետ: Ամսի վերջերին մի օր անակընկալի մատնվեցի՝ տեսնելով առաջին փաստաբան Ֆորդոնի հետ Հազորին, որն իբրև թարգման էր եկել: Վերջին հարցաքննության ժամանակ խնդիր եղավ, թե ո՞վ է ինձ համար վարձել Հարտենբերգի թիվ 37 տունը. Գալուստյանը գիտեր այդ, իսկ Հազորին կարծում էի թեռլինից մեկնած:

— Կարևորություն շունի, շատ էի ուզում քեզ տեսնել, — ասաց նատ թարձրահասակ և թիկնեղ ֆոն Գորդոնը եկել էր պաշտպանության հրավիրագիրը ինձ ստորագրել տալու և գործիս ծանոթանալու: Բանտի գրասենյակային բաժնում նա ուներ ծանոթներ և բարեկամներ և մինչև որ գործը ձեռնարկեր, բավական ժամանակ անցավ:

— Նոր էի հասել Ուհլանտ, — պատմում էր Հազորը, — երբ հայտնըվեց Բեհանդին Շաքիրը: Հազիվ անցել էր քառորդ ժամ, երբ հանկարծ տեսա, որ «մոայլադեմը» դլխապատառ վաղում է դեպի ժամադրավայրը: Հասկացա, որ մի բան պատահել է: Վայրկյան շանցած այնտեղից դուրս թռան Շաքիրը և «մոայլադեմը», որոնք գրեթե վաղելով գնացին Հարտենբերգի ուղղությամբ: Կրնկակոխ հետապնդեցի նըրանց ու, դեռ Հարտենբերգ համար 17 տանը շհասած, որտեղ ընկած էր դիակը, ամեն բան հասկացա: Ահապին բազմություն կար: Ի՞նչ եղավ «մոայլադեմը», չգիտեմ: Ես կանգնած էի Շաքիրի մոտ, երբ նա մի պահ նայեց սրտարեկ, ապա դողդոցուն քայլերով մոտեցավ դիակին: Պահակ կանգնած ոստիկանն արգելեց: Շաքիրը, կարծես քնից սթափվելով, նայեց շորս կողմ՝ ձեռքը մեքենայաբար տանելով գրպանը: Այդ պահին տարիքոտ մի պաշտոնյա ձեռքով նշան արավ նրան, որ մոտենա ու նայի: Շաքիրը դողդոցուն ձեռքով մի կողմ տարավ դիակի գլխին քաշած շորը ու հաստատեց, որ սպանվածը Թալեաթն է: Ական-

չի տակից մտած գնդակը, կտրելով ուղեղը, դուրս էր եկել գլխի առաջամասից: Շաքիրը ծածկեց թալեաթի մարմինը ու, պաղարյունությունը վերագտնելով, ինքնամփոփու ու դանդաղորեն հա քաշվեց: Արտոնող տարեց պաշտոնյան մոտեցավ նրան և ձեռքը սեղմելով՝ ասաց.

— Եատ ցավալի դեպք. այնքան շփոթված ու ցնցված եմ այս անակնկալից, որ անելիքս շփտեմ: Ընդունեցիք ցավակցություններս, դոկտոր:

Ըստ երեսութին, խոսողը ընդհանուր պատերազմի ժամանակ եղել էր Թուրքիայում և լավ ծանոթ էր Թեոլինի թուրք քաղաքական շրջաններին:

— Ցավ հայտնելը բավական չէ, — ասաց Շաքիրը, — Թալեաթ փաշան մեղ համար ամեն բան էր. նրա հետ միասին թաղված են նաև մեր բոլոր հույսերը: Փաշան իրեն բաժին ընկած պարտքի հաշիվը միշտ վճարելու պատրաստ էր, կարելի է ասել, որ պարտքի մուրհակը կրում էր գրպանում: Իհարկե, ոճրադործը հայ է, չէ՞:

— Այո՛, մի հայ երիտասարդ. շատ վատ միհճակի մեջ ձերբակալվեց, ժողովուրդն ուղում էր «լինչի» հնթարկել նրան:

— Բայց դուք ի՞նչ եք անում այստեղ, դոկտոր Ժեք, — հանկարծ հարցրեց Շաքիրը:

— Պատահականություն չէ, արտաքին զործոց նախարարությունից հրահանգ ստացա ստուգելու մահացածի ինքնությունը ու մի ինքնաշարժով վրա հասա:

— Եատ լավ, բայց ինչո՞ւ է դիակն այսպես գետնին փոված մնացել այս ամբոխի առջև, ո՞վ պետք է վերցնի դիակը, արդյոք ընդհանուր դատախազությունից արտօնության պետք կա, — Հարցրեց Շաքիրը: Ժեք կոչեցյալը, ըստ երեսութին, անկարող էր պատախանի այդ հարցին. նա մի պահ մտածեց, ապա ծոծրակը քորելով՝ մոտեցավ դիակը հսկող ստիլիանին ու նրա հետ երկար խոսքի բռնվեց: Վերջապես ետ դարձավ ու ասաց. — Ընդհանուր դատախազությունից հրաման ստանալու կարիք չկա: Արդեն լուր է տրված քաղաքապետարանին, որ գան դիակը վերցնեն, բայց դեռ ինքնաշարժը շի եկել. Հակառակի պես բոլոր մեռելաբարձ կառքերը այսօր զբաղված են: Բայց մեկն ու մեկը շուտով երկի կազմառվի և կզա՞ դիակը փոխադրելու: Քեհաեղորին Շաքիրը ապշահար մնաց ու բավական մտածելուց հետո միայն կարողացավ ասել.

— Ուրեմն ընդհանուր պատերազմի մինչև վերջին վայրկյանը Գերմանիային հավատարիմ մնացող մի պետության վարչապետի դիակին

այդպիսին՝ հարգանք եք մատուցում, որ ժամերով փողոցների մեջ մնատ ժեք կոշեցյալը, հայտնապես զգացված, հարեց.

— Քաղաքապետարանում ազատ դիակառ Ամինելու պատճառով այսպիս ուշացավ, եթե ցանկանաք ծախսը դուք հոգալ, իսկույն կարող եք մի հասարակ ինքնաշարժ ճարիկ:

Շաքիրի զլիխն կարծես կայծակ իշավ և, իրոք, ի՞նչ ասել էր այս, որտե՞ղ էր տեսնված, որ մեռելը ժամերով փողոցում մնար, ձրի ինքնաշարժ Ամինելու պատճառով: Շաքիրը բերանբաց նայեց Ժեքին, ապա հանկարծ զնաց դեպի վեր: Քիչ վերը, մայթի վրա, այդ պահին մեկը, օծ պար ածողի պես կրակ կտրած, ձեռնափայտով գծում էր դիտինը ու ամբոխի հարցումներին պատասխանելով՝ ցույց տալիս զանազան ուղղություններ:

— Թուրքը հասել էր այստեղ, հայը եկավ այսպիս ու հանկարծ՝ կրակեց՝ բա՛հ. Թուրքը երեսի վրա ընկալվ. հայը բավական ժամանակ այստեղ մնաց, գուշեցի՝ մա՛րդ սպանեց, բռնեցե՛ք. գոռացի՝ մա՛րդ սպանեց: Բայց ոչ ոք տեղից շշարժվեց: Այն ժամանակ հայը այսպիս գնաց, հետո փախավ. Ֆաղանեն փողոցում բռնեցինք, քիչ մնաց սպանեինք՝ կարծելով, թե զորավար կապսն է. անպիտանը շատ նման էր նրան, արի տես, որ թուրք է եղել ...

Հազորը այնքան էր տարված իր պատմություններով, որ ֆոն Գորդոնի ներս մտնելը շնկատեց:

— Խնդրեմ, նստեցեք, — ասաց վերջինը:

Պատմեցի անցյալիս, ներկայիս և գործին վերաբերող այն ամենը, ինչ հետաքրքրում էր նրան: Նա ընդհանակ նոթագրություններ էր կատարում՝ մեջբնդեղ լրացուցիլ հարցումներ անելով. այդ ընդմիջումներին Հազորը պատմում էր:

Նրանից խնդրեցի այլևս բանտում շերեալ և ես վերադարձ բանտասենյակ:

* * *

Չորս օր հետո ինձ կանչեցին երկրորդ փաստաբանի՝ Վերթառուերի մաս: Հաճելի մի նոր անակնկալ էր նրա հետ տեսնել Վազային, որ եկել էր Հազորի փոխարեն որպես թարգման:

Բարեձե, միշինից բարձր, համակրելի և տիսուր դեմքով դոկտոր Վերթառուերին զբաղեցնում էին այլ կարգի հարցեր. ամենից առաջ շարդերն այնպիս, ինչպես դիտեմ ես, ապա՝ մանկությունս, ծննդա-

վայրս, ծնողներս, ապրումներս, մտասկեռումներս, անգամ երազներս, դեպքի նախօրյակին ապրած օրերս և այլն: Խնդիրներ, որոնք ավելի շատ կապ ունեին անձին, քան դործի հետ: Նա նոթագրություններ չեր անում, թղթապանակի մեջ ուներ միայն մի թերթիկ իմ մասին, որին երբեմն նայում էր ու շարունակում իր մեղմ ու համբերատար գրույցը: Կանչել էր և մի ուրիշ պաշտպանյալ: Հաճույքով զիջեց վաղայի խնդրանքին, որ մի քիչ իր հետ մնամ:

— Ալո՞ւ, այլո՞ւ, սպասեցիք, դեռ շավաբաժիքի, — ասաց փաստաբանը: Բնականաբար մեր զրույցը դառնում էր դեպքի շուրջը: Վազան ներկա էր եղել Թալեաթի թաղմանը:

— Հինգ օր դիակը անթաղ մնաց, — պատմում էր նա, — ուզում էին Պոլիս տեղափոխել, բայց Պոլսի կառավարությունը մերժեց: Այլ կերպ չեր էլ կարող վարվել, որովհետև Եվրոպայի մամուլը զեռ զրազվում էր այդ հարցով, մերկացումներ, դատապարտություններ ջարգարարների հասցեին ամեն կողմից:

Հայ դադութներն ամեն տեղ արտակարգ ցնծության մեջ են. բոլոր թերթերը ընդարձակ էջեր են նվիրում դեպքին: Բայց թուրքերն էլ անգործ չեն, ամեն կերպ աշխատում են դատը շահել. Նրանց հաջողվել է մի քանի որշակներ կաշառել, որոնք թերթերում հանդիս են դալիս թրքանպաստ հոդվածներով: Թաղման նախօրյակին նրանք թերթինը հեղեղեցին մահազգերով, որոնց մեջ հայերը որակվում էին վարկարեկիչ խոսքերով: Ստիպված եղանք դադութիւններից մի աղղաղիր տպելու, որի մեջ դեպքը դիտում էինք որպես հայ ժողովրդի վրեժի արդար հատուցում:

Թաղման օրը նրանք բազմաթիվ պսակներ էին թերել: Առավոտյան ժամը 10-ին, Հարտենքերդ համար 4 տան առջև արդեն բազմություն էր հավաքվել. նկատելի էին օտարութիւն գլխարկներ՝ ֆեռ, փաթթոց, մորթիից գլխարկներ: Կանաչ հագուստով թուրքեր հսկում էին կարգապահությունը: Այնտեղ էին շտապում լուսանկարիչներ և շարժապատկերի նկարիչներ: Թալեաթի ընակարանում կրոնական արարողություն կատարվեց: Թուրքական զեսպանատան աղոթասացը՝ Շյուքրի էֆենդին, երգեց մահմեդական աղոթքի կոչը՝ «Ալլահ էքաբեր», ապա կարգաց մահվան աղոթքը, որից հետո կատարվեց մեռելի դատաստանի արարողությունը.

«Աստ հանգի Մեհմեդ Թալեաթ փաշան, բարձր առաքինություններով օժտված մեկը, Ալլահի ծառան: Կա՞ ձեր մեջ մեկը, որ հակառակ պնդե», — ձայնեց Շյուքրի էֆենդին.

— Ո՞ւ, — միաբերան գոշեցին ներկաները:

Աղոթասացը սկսեց թաղման արարողությունը. լսվում էին ներկա կանանց հեծեծանքները: Ժամը 11-ն անց կեսին դադար դուրս հանեցին: Արևելքի մի երփներանդ թափոր էր, որ հանդիսավորությամբ ցիկլուս Բեռլինի բազմամարդ փողոցներով: Ռատիկանական պաշտոնաբարձր ճանապարհ էին բացում: Նրանց հետևում էր պսակներով բեռլինավորված կառը, ապա համբաքայլ գնում էին դանազան քաղաքներից նկած 100—150 իսլամ ուսանողներ՝ արաբ, եգիպտացի, հնդիկ, բայց նկած պատմություններով պարզաբանվում: Շատ պսակներ կային, և մինչև վերջին շաբանը նկատվում էր կրում էին «Օթթիհատ վեց թերագործ»-ի խորհրդապարսիկ: Բոլորն էլ կրում էին «Օթթիհատ վեց թերագործ»-ի մանուշակագույն զգեստանը: Դիակառքին հետևում էր աղոթասացը՝ մանուշակագույն զգեստով, ճերմակ փաթթոցով, ճակատին ոսկյա երիշներ և կուրծքը շքեղ շաբանշաններով զարդարում: Շատ պսակներ կային, և մինչև վերջին շաբանշաններից առաջ նորերն էին համարական գանձարին: Նրանց մեջ աշքի էին ընկնում Գերմանիայի արտաքին գանձարին և գերմանա-թուրքական միության ծաղկեալպակները: Ներկա էին թուրք դեսպանատան պաշտոնյանները, զանազան թուրք հյուպատոսներ, աֆղան և այլ միությունների ներկայացուցիչներ: Ներկա էին նախկին ծովալին նախարար Մահմուդ Մուխտար փաշան, Գերրերտը, գոն Յիմմերմանը, Էյուլմանը, զորագույն Զեեկարը, զորավար Ֆրես Կրեսիշտայնը, զանազան նախարարությար Զեեկարը, զորավար Ֆրես Կրեսիշտայնը, զանազան դրամատան վարիչ Կվերները, աղոթյունների վարիչներ, զերմանական դրամատան վարիչ Կվերները, աղոթյունների օֆենճայմը և ուրիշներ: Կառավարությունը հայտնուց իր ցավական օֆենճայմը և ուրիշներ: Կառավարությունը միջոցով: Կիորին հուշարկավորության թափորը հասակ գերեզմանատուն: Բեհանդին Շաքիրը հազիվ հայտնության թափորը հասակ ասել իր հրաժեշտի խոսքը մեռելին. բառերը խեղդվում էին կոլիրոդում: Նրան շրջապատել էին արևելյան բոլոր ազգերի մահմեդականները, կարծես բովանդակ արևելքը նրանց ուղարկել էր իբրև ներկայացուցիչ գոշելու. «Մենք պատրաստ ենք նրան փոխարինելու. նրա գործը մեր գործն է»:

Դամբանականների այս շարքը քաղաքական ցույցի բնույթ ստացավ: Բեյրութի արաբների կողմից խոսեց էմիր Շեքիր-Ասլանը. Ռուսաստանի թաթարների կողմից՝ կազանցի Խարիս բեյը: Խոսեց բանաստեղծ Աբայուկատերը: Ապա խոսք առավ մոայլ դիմքով մի թուրք, որ վեր հանելով բոռնցքը՝ երդումի հանեց ներկաներին՝ զոհի վրեժը լուծելու: Ներկայից շատերը արձագանքեցին երդումին: Սպիտակ գլխարկով մի հնդիկ, ինչ-որ դոկտոր Ֆիլայ, խոսեց բոլոր ճնշված ժողովուրդների համար հայությունը.

անունից: Բեռլինի արևելագիտական ճեմարանի դասախոս Միրզա Հասանը իր դամբանականում հիշատակեց պարսիկ փիլիսոփա Սաադիի խոսքերը, թե «Մարդկությունը մի մարմին է, երբ անդամներից մեկը ցավի, ամբողջ մարմինը ցավ կղուա»: Գերմանացիների կողմից Անատոլիայի երկաթուղարինների նախկին տնօրեն Գյուլնթերն ասաց. «Այժմ մեծ մարդուն անկարող են գնահատել ժամանակակիցները. նրան պատմությունը պիտի փառավորի իր գրչով: Մենք՝ գերմանացիներս, մեր սրտերում կրում ենք նրա վսեմ նկարագրի գրոշմը»: Գերմանա-թուղթական միության նախագահը՝ Եքոզը, դադաղի վրա մի ծաղկեպսակ դրեց, որի ժապավենին գրված էր՝ «Մեծ քաղաքագետին և հավատարիմ բանկամին»:

Դոկտոր Եքոզը մաղթեց, որ Թալեաթի հոգին հավիտենապես ապրի գերման և թուրք հարաբերությունների մեջ...

* * *

Մայիսին վերջացան բոլոր լրացուցիչ հարցաքննությունները: Ամսվա վերջին ինձ քննության ենթարկեցին շղային հիվանդությունների մի քանի մասնագետ բժիշկներ: 1921 թ. հունիսի 2-ին սկսվեց դատավարությունը:

Միայն այդ օրը դադախար կազմեցի, թե ինչ հսկայական տարածություն էր բոնում բանտը հարակից շինություններով, պահեստներով և արհեստանոցներով: Ինձ անվերջ առաջնորդում էին բակից բակ, ծանր ու մոռալ շենքերի միջով, որոնց դռներով ներս ու դուրս էին անում բանվոր, արհեստավոր բանտարկյալները:

Բեռլինի նահանգային երրորդ դատարանը բանտին կից էր: Առանց փողոցի երես տեսնելով՝ հասանք այդ շենքին, որի ձախ կողմի երկարածիկ միջանցքի մի դռնից ներս մտանք: Ընդարձակ շենքի բաժիններում եռուղեռ էր տիրում: Համազգեստավոր սպասավորները դեռ ու դեն էին գնում թեմիկ վազքի ձևով, պաշտոնյաները ներս ու դուրս էին անում՝ թղթապանակները թեմերի տակ, դռների մոտ տեղ-տեղ կանգնած էին քաղաքացիներ, որոնք դատարանում գործ ունեին: Շենքի այս մասում կենտրոնի մուտքը հսկողության տակ էր: Պահակների տղեկցությամբ ներս մտա և ինձ գտա մի հոյակապ դահլիճում: Բարձր առաստաղը հանգչում էր թեթեապես վեր սլացող կամարակալ սյուների վրա: Վարը նրանք հեռապատկերներով դահլիճը բաժանում են սրահների, որոնց կենտրոնում փոված է կիսակլոր դատարանը՝ երեք

կողմից շրջապատված փայտի ընտիր զարդարանքների ցածրադիր կառուցվածքներով: Ներս մտնելով խորքի դռնից՝ տեղավորվեցի ամբաւանյալի հատուկ բաժնում, պահակներից մեկի հետ միասին:

Առավոտ էր, ժամը 9-ը: Կամարաձև այլուների միացման կենտրոնում, խորքի մոտ, մի հսկա ջահ էր կախված: Ջահի երիզածն զարդարանքները շիթ-շիթ փայլում էին ներս ընկած արևի ճառագալթների տակ: Խորքի մասում ինձ դահլիճի բաժանում էր երեք-չորս աստիճաններով մի բարձրություն: Դեպի ձախ, առանձին սեղանի մոտ, նստած էր դատարանի քարտուղարը: Կենտրոնում, նույն բարձրության վրա, երկարում էր երեք-չորս մետրանոց սեղանանման մի կառուցվածք, որի դիմաց նստած էր դատարանի վարիլ դոկտոր Լեմբերգը: Կառուցվածքի մյուս ծայրին տեղական դատավորներով: Կառուցվածքի մյուս ծայրին տեղական դատավագալ դոկտոր Գոլնիկը: Ինձանից վար, ձախ մասում, մի երկարավուն սեղանի մոտ, նստած էին երեք պաշտպան փաստարանները, թարգմանիչ վազան, Գալուստյանի, ինչպես նաև բժշկական փորձագետների հետ: Նրանց դիմաց, դահլիճի հատուկ բաժնում, սեղանների մոտ, երկշարք նստած էին տասներկու երդվյալ ատենակալները: Քիչ դեպի վար, ևս ու առաջ, աթոռներին տեղ էին բռնել վկանները: Առաջին շարքում աշքը ընկալ սեղեր հապած տիկին Թալեաթին, որ անքթիթ նայում էր ինձ: Նրա ձախ կողմում նստած էր օրիորդ էուած Բայլնզոնը, աջ կողմից՝ տիկին Շիթլբաումը, տիկին Դիտմանը, ապա՝ Թերզիբաշյանները, էֆթյանը, Աբելյանը և մի քանի անծանոթներ: Ավելի առաջ, դեպի դահլիճի կենտրոնը, կային թղթակիցներ: Պահլիճի կենտրոնից դեպի առաջամասը, ընդարձակ տարածության վրա, ամֆիթատրոնաձև կառուցված էին նստարաններ հանրության համար, որոնք ամբողջությամբ գրաղված էին: Զուգահեռ մասերում ներկաների մի մասը մնացել էր ոտքի վրա՝ առաջանալով դեպի կենտրոնը, փաստարաններին և երդվյալներին հատկացված բաժինների ուղղությամբ: Գերմանացիներից բացի, կային բավականին թվով թուրքեր և հայեր:

Դահլիճում տիրող՝ խոր լուսթյունը խախտեց դոկտոր Լեմբերգը բանալով ատյանը: Պաշտպան ֆոն Գորդոնը խնդրեց, որ իրազեկների խմբի մեջ լսվեն նաև դոկտոր Լիման ֆոն Զանդերսը, իրեն հայ իրականությանը ծանոթ վկաններ: Դատախազը թեև դիտել տվեց, որ դեպքը տեղի է ունեցել ոչ թե Հայաստանում, այլ Բեռլինում, բայց առաջարկի դեմ շառարկեց: Դիմացի դռնից ներս մտան հիշյալ-

ները: Նախագահը մի քանի խոսքով վկաներին հիշեցրեց իրենց պարտականությունները, ապա երկու խմբի բաժանեց նրանց ու բարձրածայն կարդալով առաջին առիթով՝ լսվելիք 19 վկաների անունները՝ խնդրեց բոլորին գուրս ենել սրահից և սպասել հրավերի:

Սկսվեցին ինքնությանս վերաբերվող սովորական հարցումները՝ մանկությունս, ծնողներս, կրթությունս, երզնկան, զարդերը: Նախագահը երկար-բարակ կանգ առավ դեպքերի վրա: Վերջապես ավարտելով այդ նախնական հարցումները՝ անցավ գործի հետ առնչություն ունեցող շրջանին:

— Զարդերից հետո ե՞րբ եղաք երզնկայում:
— 1916-ի վերջերին, ոռուների գրավումից քիչ հետո:
— Հարազատներից ո՞ւմ գտաք այնտեղ:
— Ոչ ոքի: Թուրքն էլ սպանված էին. քրդերի մոտ գտնվեց միայն եղբորս տասը տարեկան աղջիկը:

— 17 հոգուց միայն նա՞ էր մնացել:
— Այո՛:
— Երզնկայում ձեր տան մեջ եղա՞ք:
— Այո՛:
— Ի՞նչ տիսաք այնտեղ:
— Տան մի մասը խորտակված էր, դռներն ու պատուհանները քանդված և կողոպտված, իսկ մյուս մասում ուրս զինվորներ էին: Շատ վատ եղա՞ մեր տունը ավերակ տեսնելով: Անցա մեր ընդարձակ պարտեղը՝ ավերված ու հիմնահատակ եղած, ծառերը կտրտված ու տապալված. ամեն ինչ ամայացած էր. պարտեզի խորքում գետին ընկա:

— Ուշաթա՞փ եղաք:
— Այո՛:
— Որքա՞ն տեսց այդ:
— Չգիտեմ:
— Երբ ուշքի եկաք, ի՞նչ արիք:
— Գնացի իսլամացած հարևան մեկ ընտանիքի մոտ, քաղաքի միակ աղատված հայերը:

— Ուրեմն գուք միայն մեկ ընտանիք գտաք քաղաքի նախկին բնակչությունից և այն էլ իսլամացաց՞ծ:

— Այո՛:
— Իսկ երբ ոռուները երզնկան գրավեցին, դարձյալ քրիստոնյա՞նարձան:

— Ի՞նչարկե՞:
— Ուրեմն երզնկայի բնակչությունից միայն նրա՞նք էին մնացել:
— Այո՛, և մի քանի անհատներ, ընդամենը քսան հոգի:
— Որքա՞ն մնացիք երզնկայում:
— Մի քանի ամիս:
— Հետո ո՞ւր գնացիք:
— Թիֆլիս:
— Ե՞րբ գուրս եկաք թիֆլիսից:
— 1918 թ. աշնանը:
— Ո՞ւր գնացիք:
— Հյուսիսային Կովկաս:
— Ի՞նչ էիք անում այնտեղ:
— Հիվանդ էի:
— Ի՞նչ հիվանդություն ունեիք:
— Զղային տագնապ. վերջը հիվանդացա տիֆով:
— Քանի՞ անգամ կրկնվեցին այդ զղային տագնապները՝ ձեր հայրենի տունը վերստին տեսնելուց հետո:
— Մի քանի անգամ: Ստույգ շեմ հիշում:
— Ե՞րբ մեկնեցիք Կովկասից:
— 1919-ի սկզբին:
— Ո՞ւր գնացիք:
— Պոլիս:
— Ի՞նչ նպատակով:
— Հարազատներին հետքը փնտրելու:
— Այն ժամանակ Պոլսում հեղաշրջում էր տեղի ունեցել, որքա՞ն մնացիք այնտեղ:
— Մոտ մի տարի:
— Հետո ո՞ւր գնացիք:
— Փարիզ:
— Պոլսում կամ Փարիզում տարագիրների հետ դեպքերի շուրջը խոսո՞ւմ էիք:
— Քիչ, մոտ բարեկամներին հետ:
— Ո՞վ էր համարվում այդ խժդժությունների հեղինակը:
— Նրանց իմացա Պոլսի լրագրերից:
— Ավելի առաջ գիտեի՞ք, թե ով է շարդերի հեղինակը,

— Ռ՛չ:

— Ե՞րբ այն համոզմանը եկաք, որ Թալեաթ փաշան է դրանց հեղինակը:

— Պոլսում եղած ժամանակ, լրագրերից:

— Այն ժամանակ զիտեհի՞ք, թե որտե՛ղ է Թալեաթ փաշան:

— Ռ՛չ:

Միշամտեց պաշտպան ֆոն Գորդոնը:

Ամբաստանյալին կուզեի հարցնել, թե արդյոք կարդացե՞լ է լուսագրերի մեջ, որ Թալեաթ փաշան այդ խժգությունների համար Պոլսի զինվորական ատյանի կողմից դատապարտված է մահվան:

— Կարդացել եմ, երբ դեռ Պոլսում էի, և երբ ականավոր ջարդաբարներից Քեմալը կախաղան հանվեց: Լրագրերից զիտեհի, որ Թալեաթ և էնվեր փաշաններն էլ են մահվան դատապարտված:

— Երզնկայի մեջ ինչքա՞ն հայ բնակչություն կար:

— Մոտ քսան հազար:

— Բոլոր բնակիչները տեղահանվեցի՞ն ու ձեր Երզնկա վերադարձին միայն մեկ ընտանիք տեսաք և մի քանի անհատնե՞ր:

— Այո՛:

— Կուզեի իմանալ, թե ամբաստանյալը զիտե՞օ, որ 1908-ին հայերը, Երիտասարդ թուրքերի, մասնավորապես Թալեաթ և էնվեր փաշանների հետ միասին, առաջ բերին հեղափոխություն և իրենց ազգային հույսերը նրանց վրա էին դրել, բայց հետո զարհուրելի կերպով հուսախար եղան, երբ տեսան, որ Երիտասարդ թուրքերը սուլթան Աբդուլ Համիդից էլ վատ են վարվում հայերի հետ, — դարձավ նախագահին երրորդ պաշտպան նիմայերը:

— Զիտեհի, որ հայերը գործակցել են Երիտասարդ թուրքերի հետ: Բայց հետո խիստ հուսախար եղան, երբ տեղի ունեցան Աղանայի ջարդերը, որոնց զոհ դնացին քառասուն հազար հայեր:

* * *

Նախագահի առաջարկով քարտուղարը կարդում է բացման վճիռը.

«Մեքենագիտության ուսանող համարված Սոլոմոն Թեհլիրյանը, ծնված 2 ապրիլի 1897 թ. Բագարիճ, թուրքահպատակ և հայ բողոքական, որ բնակվում էր Շառութենբուրգ, Հարտենբերգ փողոցի 37 համարում, Դիտմանի մոտ և 1921-ի մարտի 16-ից ի վեր գտնվում է բանտում, մեղաղը վում է 1921 թ. մարտի 15-ին Շառութենբուրգի մեջ բանտում, մեղաղը վում է 1921 թ. մարտի 15-ին Շառութենբուրգի մեջ

234

թուրքական նախկին մեծ եպարքոս Թալեաթ փաշային դիտմամբ սպանելու և սպանությունը կանխամտածվածությամբ կատարած՝ լինելու համար: Ոճագործությունը նկատի կառնվի, ըստ պատժական օրինադրքի 211-րդ հոդվածի: Այդ հիմքերով բանտարկությունը շարունակվում է: Իեռլին, 16 ապրիլի 1921, նահանգային երրորդ դատարան, պատժի 6-րդ սենյակ»:

— Եթե այս մեղաղը այս կամ ոչ ասելու ստիպվիք, ի՞նչ պիտի պատասխանեք, — զարձավ ինձ նախագահը:

— Ռ՛չ:

— Խնդրեմ, հարցրեք, թե ինչո՞ւ իրեն հանցավոր չի համարում, — դիմեց նախագահին պաշտպան ֆոն Գորդոնը:

— Ինձ հանցավոր չեմ համարում, որովհետև խիղճա հանգիստ է:

— Ինչո՞ւ է խիղճա հանգիստ, — հարցրեց նախագահը:

— Մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ:

— Ասում եք, որ ձեր խիղճը մաքուր է, բայց հարց տվեք ձեզ, արդյո՞ք Թալեաթ փաշային ուզում էիք սպանել:

— Այդ հարցումը չեմ հասկանում, չէ՞ որ նրան արդեն սպանել եմ:

— Ուզում եմ ասել, թե նրան սպանելու ծրագիր ունեի՞ք:

— Ռ՛չ:

— Փարիզից ե՞րբ եկաք ժնկ:

— 1920 թ. վելոչերին:

— Խսկ Բեռլին:

— Դեկտեմբերի սկզբին:

— Հունվարին ապրում էիք Առաջարկություն փողոցի 51 տանը:

— Դեկտեմբերի ին:

— Հետո բնակարանը փոխեցի՞ք:

— Այո՛:

— Ե՞րբ:

— Դիպքից մոտ երկու շաբաթ առաջ:

— Ի՞նչն էր այդ տեղափոխության պատճառը:

— Որոշել էի Թալեաթին սպանել:

— Այդպիս վարվելով՝ գործը նախապարաստո՞ւմ էիք:

— Այդ ժամանակ ինձ համար հզոր ներքին պահանջ էր Թալեաթին սպանելը:

— Ուրիշն զուք մտադրված էիք նրա մոտե՞րը բնակվել:

— Այո՛:

235

— Ասացեք, խնդրեմ, ճիշտ է, որ դրանից առաջ ստուգել էիք, որ թալեաթը գտնվում է թեոլինում:

— Այո՛, մոտավորապես հինգ շաբաթ առաջ ես նրան տեսա:

— Որտե՞ղ:

— Կենդանաբանական այգու մոտ լսեցի թուրքերեն խոսակցություն, ուր մեկին «փաշա» անվանեցին։ Յու նայելով՝ տեսա, որ թալեաթ փաշան է. հետեւ նրան: Հարտենքերդ փողոցի սկզբի մասում լեռեկիցները հրաժեշտ տալով նրա ձեռքը համբուրեցին, իսկ թալեաթ փաշան մի ուրիշի հետ տուն մտավ:

— Ուրեմն ստույգ չէ՞՝, որ դուք ավելի առաջ գիտեիք, որ թալեաթ փաշան գտնվում է թեոլինում:

— Աշ...

— Ի՞նչ պատճառով եք ժամանակին դիմել գոկտոր կասիրերին:

— Հիվանդ էի, զղային տագնապներ և ղլխապտույտներ էի ունենում:

— Ե՞րբ էր այն զղային տագնապը, որի միջոցին դրամատան մի զղայտոնյա ջեղ վեր հանեց ու երուսալեմեր փողոցից տուն տարավ:

— Չեմ հիշում...

— Այն ժամանակ դեռ ապրում էիք Առւգսբուրգեր փողոցում:

— Այո՛:

— Ովքե՞ր էին ձեր ծանոթները:

— Թերզիբաշյանը, էֆթյանը, Գալուստյանը, Աբելյանը:

— Հովովարից այս կողմ օրիորդ Բայլնզոնից դաս առնելուց բացի ի՞նչ էիք անում:

— Այցելում էի ծանոթներին:

— Կարծեմ պարի դա՞ս էլ էիք առնում:

— Այո՛, մեկ անգամ:

— Ճիշտ է, որ դասերի ժամանակ զղային տագնապ եք ունեցել:

— Այո՛:

— Ինչպե՞ս ջեղ նախորդ տանտիրոջ՝ տիկին Շթելբաումի հետ:

— Շատ լավ:

— Տիկին Դիտմանի մոտ էլ գո՞հ էիք:

— Այո՛:

— Ինչպե՞ս եղավ, որ սպանություն գործեցիք:

— Սենյակիս մեջ քայլում էի, երբ թալեաթ փաշային տեսա իր բնակարանի պատշամբում: Ողջ էությամբ ցնցվեցի. նա էր, որ սպա-

նել էր մորս, եղբորս, հարազատներիս և հազարավոր ազգակիցներիս Տեսա, որ դուրս է գալիս, ատրճանակս վեցրի, վազեցի և գնդակահարցի:

— Դուրս եկած ժամանակ թալեաթին դիմացի՞ մայթի վրա տեսաք:

— Այո՛:

— Իրեն մոտեցաք և Հարտենքերդ փողոցը անցա՞ք:

— Փողոցի այս կողմով վազեցի, մինչև իրեն հասա և անցա, հետո փողոցն անցա ու հասա:

— Երեսին նայեցի՞ք, հետը խոսեցի՞ք:

— Հետը շխոսեցի, մայթի վրա նրան հավասարվեցի ու կրակեցի:

— Գլխի՞ն նշան բռնեցիք:

— Բոլորովին իրեն մոտեցա:

Հետո ի՞նչ եղավ:

— Այնքանը միայն դիտեմ, որ թալեաթ փաշան գետին ընկավ, պիսից արյուն էր հոսում, ու շորս դին բազմություն էր խմբված:

— Զտեսա՞ք, որ թալեաթին մի կին էր ընկերակցում:

— Ո՞ւ:

— Տիկին թալեաթին շտեսա՞ք:

— Ո՞ւ:

— Սպանությունից հետո ի՞նչ արիք:

— Չեմ հիշում:

— Զե՞ք հիշում, որ փախել եք:

— Փախչելու ոչ մի կամք չկար մեջս, բազմությունը հարկադրեց՝ հարձակվելով վրաս:

— Ի՞նչ մտածեցիք ձեր արածի մասին:

— Մրտի գոհունակություն էի զգում:

— Իսկ այսօ՞ր:

— Դեռ այսօր էլ եղածից շատ գոհ եմ:

— Ծեծի ժամանակ չե՞ք հիշում, թե ինչ ասացիք ամբոխին՝ ջեղ արդարացնելու համար, — հարց տվեց պաշտպան նիմայերը:

— Ասացի, որ ես հայ եմ, իսկ նա՝ թուրք. ձեղ հետ առնչություն շունի:

— Կուզեի իմանալ, թե ամբաստանյալը ինչպե՞ս ճանաշեց, որ այդ անձը թալեաթն է. առաջ տեսե՞լ էր նրան, թե՞ պատկերների վրայով ճանաշեց, — ասաց դատախազը:

— Նրան չէի տեսել, լրագրերի մեջ տպված պատկերներից ճանաշեցի:

— Երդնկայում հայերից բացի ուրիշ ի՞նչ աղքար կային:
— Քսանից երեսուն հազար թուրքեր ...

* * *

Նախագահ Լեմբերգն անցավ վկաների հարցաքննության:
Շառլուտենբուրգի վաճառական եսենը պատմեց, թե ինչպես հա-
վասարվեցի Թալեաթին ու կրակեցի.

— Մի քիչ առջևից անցնում էր մի կին, որ ուշաթափ եղավ. նախ
վեր հանեցի այդ կնոջը՝ կարծելով, թե վիրավորված է: Հետո ամբաս-
տանյալի հտեւից վազեցի ու Ֆազանն փողոցում՝ Ճերքակալեցի նրան:
Բնական է, բազմություն հավաքվեց. մարդիկ անխնա ժեծում էին ամ-
բաստանյալին, մեկը բանալիով շարունակ հարվածում էր գլխին, ուրիշ-
ները գոռում, կանչում էին ...

Վկային եղած հարցումներից պարզվում է, որ ուշաթափ եղած
կինը անցորդ է և ոչ թե Թալեաթի կինը, ինչպես զրել էին թերթերը: Նա-
խագահը խնդրում է հայտնել տիկին Թալեաթին, որ նրա վկայությանը
այլևս պետք չունի, և կարող է մեկնել:

Հաջորդ հինգ վկաները տարբեր երանգներով կրկնեցին նույնը:
Շառլուտենբուրգի ոստիկանության պետ Գնասը, որ ինձ հարցաքննող-
ներից առաջինն էր, աշխատում էր հաստատել, որ սպանությունը կա-
տարվել է կանխամտածումով: Ապա կանչվեց առաջին տանտիրուհին՝
տիկին Շթելբաումը: Կարծես անցել էր շատ ժամանակ, ու կարոտի
մի զգացում հայտնվեց այդ պահին իմ մեջ դեպի նա. կարճ ժամանա-
կում դարձել էր հարազատ այդ օտար կինը: Նա ծեր աշքերով նայեց
դեպի ինձ ու ասաց.

— Այո՛, ամբաստանյալը բնակվել է ինձ մոտ. իր մասին միայն
լավը կարող եմ վկայել: Շատ պարկեցած ու համեստ էր: Սպասուհի շու-
նեմ և ինքս եմ կատարում տան գործերը, սակայն ինչ որ կարող էր,
ինքն էր անում: Ինձ շժանըարենելու համար կոշիկներն ինքն էր
մաքրում: Ամեն տեսակետով շատ համեստ ու պատվալոր էր:

— Հիվանդացա՞վ ձեզ մոտ, — հարցրեց նախագահը:
— Չափազանց զղային էր, չէր կարողանում քնել:
— Դիտեի՞ք, որ այցելում էր բժշկի:
— Այո՛, պրոֆեսոր Կասիրերին:
— Չզարմացա՞ք, որ հանկարծ տեղափոխվեց:

— Ինչպես չէ. այդ առթիվ հարցումիս պատասխանեց, թե բժիշկն
ասել է, որ գաղի լույսը վնասում է իրեն և պետք ունի արևի լույսի:
Հավատացի, որովհետեւ շատ ջղային էր:

Փորձագետ բժիշկ Լիպմանը երկար-բարակ հարցաքննության են-
թարկեց նրան հոգեկան վիճակիս մասին:

Նույն ձեռվ վկայեց նաև մյուս տանտիրուհիս՝ տիկին Դիտմանը:
Դեպքի մասին ասաց.

— Մարտի 15-ի առավոտը, դեպքի օրը, սպասուհիս ինձ լուր տվավ,
որ պարոնը սենյակում լաց է լինում, ասացի՝ հանգիստ թող, գուցե
մերձավորներից մեկը մեռել է. քիչ հետո գուրս ելավ:

— Որևէ կասկած չունեցա՞ք, — հարցրեց նախագահը:

— Ամենակին, մինչև որ սպասուհիս տուն վերադարձավ և ասաց,
թե պարոնը սպանված է: Խենթ ես, ի՞նչ ես, — ասացի, — հետո իմա-
ցա, որ ինքը մեկին սպանել է.

— Ամբաստանյալը սովորական հանդարտության մեջ էր այդ օրը:

— Մի օր նրա ծանօթներից մեկը եկավ և ասաց, թե պարոնը հի-
վանդ է և արևոտ սենյակի պետք ունի, — ասաց տիկին Դիտմանը՝ եր-
կար պատմություն անելու մտադիր ...

— Ձեզ մոտ եղած ժամանակ ոշինչ շնկատեցի՞ք:

— Ո՞չ:

— Ռւանո՞ւմ էր:

— Այո՛, շատ քիչ անգամ էր գուրս գալիս:

— Այցելուներ ունե՞ր:

— Բնավ:

— Նկատե՞լ եք վրան զղայնություն:

— Ամաշկոտ էր, չեր կարող երեսիս նայել, շփոթվում էր:

— Ահաբեկվա՞ծ էր:

— Զարհուրածի երևույթ ուներ:

— Սանը խորհուրդներից հալածվա՞ծի պես:

— Այո՛:

— Հիվանդագին երևույթներ նկատե՞լ եք:

— Ո՞չ: Բայց ինքն ասում էր, որ հիվանդ է, զղային:

— Ամբաստանյալ, — դարձավ ինձ նախագահը, — ո՞վ գնաց տի-
կին Դիտմանի մոտ՝ Ձեզ համար բնակարան վարձելու:

— Հայ ուսանողական միության նախագահը:

— Այստե՞ղ է:

— Ո՞ւ...

— Ամբաստանյալը նեղվածի՞, թի՞ ընկճվածի տպավորություն էր թողնում, — հարցրեց Դիտմանին փորձագետ կիպմանը:

— Վարանոտ էր, գոնք իմ կարծիքով շատ վարանոտ էր, — ասաց ժպտալով, հայացքը կիպմանից դարձնելով ինձ:

— Ամբաստանյալի՝ Զեր մոտ եղած ժամանակ ատրճանակը տես՞լ եք, տիկի՞ն Շթելբառում, — դարձավ նախագահը նախկին տանտիբուհու:

— Ո՞ւ:

— Ամբաստանյալի գույքերը շա՞տ էին:

— Ո՞ւ, միայն մի սնդուկ ուներ, որ միշտ բաց էր:

— Ամբաստանյալ, — դարձավ ինձ նախագահը, — ո՞ւր էիք պատրճանակը:

— Սնդուկիս մեջ:

— Տիկին Շթելբառումի մոտ նույնպե՞ս:

— Այո՛, սնդուկիս մեջ էր:

— Ես շեմ տեսել, — մրմնջաց տիկին Շթելբառումը:

— Զարժանալի է, որ հաճախ նայել եք սնդուկը, բայց ատրճանակը շեք տեսել:

— Չեմ կարող ասել, որ սնդուկը հաճախ եմ նայել, — զուսպ բարեկությամբ ասաց տիկին Շթելբառումը...

— Հերթը հասավ մանկահասակ վարժուհոս՝ Լոլա Բալլնզոնին:

— Դոք ամբաստանյալին լեզվի դա՞ս էիք տալիս:

— Այո՛:

— Ի՞նչ կարող եք ասել իր բարք ու վարքի մասին:

— Հունվարի 18-ից սկսած դաս էր առնում, սկզբում շատ լավ էր սովորում, բայց վերջը ցրված էր:

— Ասե՞լ է ձեզ, որ հիվանդ է և դիմել է բժշկի:

— Վերջը պատմեց, որ եղել է պրոֆեսոր Կասիրերի մոտ, դեղ է ընդունում: Աշխատելն իր համար դժվար էր: Մի դասի ժամանակ նկատեցի, որ նույնիսկ շէր կարողանում պրածը կարդալ. հայտնի էր, որ հիվանդ է: Իրեն ասացի, որ այսուհետեւ դասերը շարունակելն անպատճակ է: Դրանից հետո դասերն ընդհատվեցին:

— Ե՞րբ էր այդ:

— Մոտավորապես փետրվարի երկրորդ կեսին:

— Հետո դարձյալ եկա՞վ:

— Մի անգամ էլ եկավ և ասաց, որ իրեն վատ է զդում. արդեն երկում էր, որ հոգեկան վիշտ ուներ. շատ տիսուր էր:

— Այդ տիսուրի վրա խոսո՞ւմ էր:

— Մի անգամ միայն, երբ դասի բերումով իր հայրենիքի մասին հարցրի, ասաց, որ ինքն այլևս հայրենիք չունի, իր բոլոր հարազատներն սպանված են: Այնքա՞ն բացահայտ էր արտացոլում այս պատասխանի մեջ տառապանքը, որ այլևս չուզեցի հարցնել:

— Զի՞ կարող պատահել, որ դասերն ընդհատված լինեն մարտի սկզբին:

— Կարող է:

— Գուցե մարտի 5-ից քիչ առաջ, բնակարանը փոխելուց հետո՝

— Նոր բնակարանից այլևս չեկավ:

— Գուցե իրական պատճառ կա՞ր, որ ստիպված էր բնակարանը փոխել և գասերն ընդհատել:

— Զգիտեմ: Մարտին, դեպքից մոտ մեկ շաբաթ առաջ, հեռաձայնով ինձ լուր տվեց, որ բնակարանը փոխել է և դասերը պետք է վերսկսի, եթե իրեն լավ զգա:

— Ամբաստանյալ, ինչո՞ւ ընդհատեցիք դասերը:

— Առողջական վիճակի լավ չէր:

— Տիկին Դիտմանի մոտ եղած ժամանակ շէի՞ք ձանձրանում:

— Ինչո՞ւ պիտի ձանձրանայի:

— Քանի որ այլևս դաս չունեիք:

— Դասերն ինձ մասնավոր հաճույք շէին պատճառում ...

Որքան կարող էի հասկանալ, խնդիրը դառնում էր «կանխամտածվածի» շուրջը, որ դեռ մնում էր մութ ու հոգեկան հիվանդ վիճակներով պարուրված: Կանչվեց Երվանդ Աբելյանը. իրեն ուղղված հարցումների բերումով պատմեց պարի դասի ժամանակ պատահած գլխապըտույտս, բժշկին այցելելս, կենցաղս, վիճակս: Վերջինի առթիվ նախագահը հարցրեց.

— Խոսհո՞ւ է Ձեզ հետ, թե հարազատների կորստյան պատճառը ո՞վ էր:

— Ո՞ւ:

— Թալեհաթի՝ Բեռլինում դտնվելու մասին խոսք շարա՞վ:

— Ո՞ւ:

— Տիկին Դիտմանի մոտ փոխադրվելու մտադրության մասին Ձեզ կանխավ հայտնե՞լ էր:

— Ո՞ւ: Բայց մի օր ինձ խնդրեց տիկին Շթելքառմին հայտնել, որ բնակարանը ուզում է թողնել, որովհետև բժիշկն առել է, թե գաղփ ճրագը վնաս է իրեն:

— Ուրեմն իրեւ փոխադրվելու պատճառ Զեղ էլ իր առողջական վիճակը ցույց տվավ:

— Այո՛:

— Զեղ ասե՞լ էր, որ Հարտենքերդ փողոցում բնակարան է գտել:

— Ո՞ւ, չգիտեի, թե որտե՞ղ է գտնվում այն:

— Տեղափոխվելուց քիշ առաջ իր բարք ու վարքի մեջ փոփոխություն նկատեցի՞ք:

— Ո՞ւ:

— Երբեք Զեղ հետ Թալեաթին սպանելու մասին շի՞ խոսել:

— Ո՞ւ:

— Բայց չի՞ որ հաճախ միասին եք եղել:

— Հետո ես էլ զրա վրա զարմացա:

— Գիտեի՞ք, որ Թալեաթ փաշան բնակվում է Հարտենքերդ փողոցում:

— Ո՞ւ:

— Զեղ հետ Թալեաթի մասին շի՞ խոսել:

— Ո՞ւ:

Նախագահը ետ նստեց:

— Հայերդ ջարդերի մասին խոսելիս ինչի՞ վրա եք առավելապես ժանրանում, — Հարցրեց պաշտպան ֆոն Գորդոնը:

— Մեր գլխով անցածների վրա:

— Ամբաստանյալը շի՞ պատմել Զեղ, որ ջարդերին կորցրել է իր հարազատներին:

— Այո՛, մի անգամ, բայց առհասարակ այդ մասին շէինք խոսում:

— Շատ զարմանալի է այդ, — ընդմիջեց փորձագետ Լիպմանը:

— Մի օր Լեփսիուսի «Հայերն ու Դերմանիան» գիրքը ձեռքս էր, թարգմանեցի նրան մի քանի տող, հանկարծ գիրքը ձեռքիցս խլեց և ասաց. «Թո՛ղ, հին վերքերը շրանանք»:

— Ուրեմն խուսափո՞ւմ էր այդ գեպքերը հիշելուց:

— Այդպես էր երեսում ...

Ոչինչ չպարզեց նաև էֆթյանի և Թերզիքաշյանի հարցաքննությունը: Բայց ահա Շառլուտենքուրդի դատարանի դադտնի խորհրդական

Շուլցեն, որ հարցաքննել էր ինձ մարտի 16-ին, սկսեց փաստել սպանության կանխամտածվածությունը:

— Ամբաստանյալի պատասխանները դեռ բավականին հստակ հիշում եմ, — ասաց նա, — առանց դժվարության խոստովանեց, որ Թալեաթին սպանել է դիտակցությամբ և դիտումով: Իսկ երբ հարցրի պատճողը, ասաց, թե Թալեաթը այն մարդն է, որի հրամանով սպանվել են իր մերձավորները Հայաստանում, դրա համար էլ որոշել է լուծել Հարազատների վրեժը և այդ նպատակով էլ եկել է Բեռլին: Ատրճանակը ձեռք է բերել հայրենիքում, աշխատել է գտնել Թալեաթի հետքը, որը գտնելուց հետո, նրա բնակարանի դիմաց անյակ է վարձել՝ դիտելու և հսկելու նպատակով: Մեկ օր էլ նշմարելով, որ Թալեաթը դուրս է գալիս, ատրճանակն առել ու վրա է հասել: Որևէ սխալմունքից խուսափելու համար անցել է դիմացը և համոզում գոյացնելով, որ անցորդը նույն ինքը Թալեաթն է, նրան սպանել է:

Մինչև այդ թմրած գատախազն այժմ նոթագրություններ էր կատարում՝ լրացուցիչ հարցումներ անհելով: Ունկնդիր հասարակության մեջ սրվել էր հետաքրքրությունը: Պաշտպաններս աշխատում էին արժեկուրկ դարձնել Շուլցեի վկայությունը: Սկսվում էր պայքարը: Նախ վկայությանը զդալի հարված հասցրեց թարգման Գալուստյանը. նա ասաց, թե այդ օրը ես ի վիճակի շէի ցուցմունքներ տալու, որովհետեւ ծեծված, տրորված և ուժաթափ էի: Շուլցեն հաստատեց, որ իրոք խոշտանգված էի, սակայն բոլորովին հանդարտ մեկի տպավորություն էի թողնում: Նախագահը ցանկացավ պարզել, թե մի՞թե Հարցումների բնույթով շէին թելադրված պատասխանները: Պաշտպան նիմայերը խնդիր հարցուցեց, թե ի՞նչ ձևով է կատարված ցուցմունքներին թարգմանությունը, և արդյոք Գալուստյանը այդ դեպքում շի՞ արտահայտել իր անձնական տրամադրությունները: Բարեմիտ Շուլցեն հիշեց, որ թարգմանը ինձ համար իր հետ բերել էր քաղցրավենիքներ և իր այն առարկությանը, թե ինչպե՞ս կարելի է մարդասպանին քաղցրավենիք տալ, բացականչել է. «Ի՞նչ մարդասպան, նա մեղ համար մեծ մարդ է»: Ֆոն Գորդոնը բռնեց Գալուստյանի այդ խոսքերի պոշից՝ փաստարկելու համար անձնական տրամադրությունների հավանականությունը թարգմանության մեջ: Իր հերթին Գալուստյանը հայտնեց, թե այնքա՞ն կասկածել է պատասխաններին ճշտությանը, որ հրաժարվել է հարցաքննությունը ստորագրել: Նախագահը ճշտեց այդ պարագան, որով նախնական ցուցմունքներս արժեկուրկ եղան

* * *

Միջօրեի կես ժամվա դադարից հետո գատավարությունը սկսվեց տիկին Քրիստինե Թերզիբաշյանի հարցաքննությամբ: Պաշտպան Ֆոն Գորդոնը նախագահից խնդրեց վկային հարցաքննել ջարդերի մասին:

— Պատերազմի ժամանակ որտե՞ղ էիք բնակվում, — հարցրեց նախագահը վկային:

— Կարինում:

— Այդ ձեր հայրենի՞քն է:

— Այո՛:

— Այնտեղ տեղահանություններ եղա՞ն:

— 1915-ի հուլիսին բնակիչներին ժողովեցին ու հայտնեցին, որ պետք է թողնեն քաղաքը:

— Քաղաքի մեջ հայտարարություններ եղա՞ն, թե հայերը պետք է գաղթեն:

— Նախ ոստիկանների միջոցով լուր տվին քաղաքի հարուստներին, ապա բոլորին հայտնեցին, որ քաղաքը պետք է դատարկվի, որովհետև ուղագմագետորեն գտնվում է վտանգված շրջանում: Քաղաքի հարուստները ութ օր առաջ տեղեկացան այդ մասին, իսկ մնացածները՝ միայն մեկ օր առաջ: Հետո պարզվեց, որ եղածը խաբեություն է, և միայն հայերը պետք է աքսորվին:

— Բնակչությանը միանգամի՞ց դուրս հանեցին քաղաքից:

— Չորս անգամից:

— Չորս խմբո՞վ:

— Չորս խումբ ութ օրվա մեջ:

— Ետ մնացողներին հայտնի՞ էր, թե ի՞նչ են լինում նախորդ խմբերը:

— Ո՞ւ:

— Որոշ ուղեկետ ճշտվա՞ծ էր:

— Նախ երգնկա պիտի դնայինք:

— Դուք ո՞ր խմբի մեջ էիք:

— Երկրորդ:

— Նկարագրեցիք որքա՞ն մարդ տեղահան եղավ, դուք որչա՞փ առաջացաք և ի՞նչ պատահեց:

— Մեր ընտանիքը բաղկացած էր 21 անձից: Նրանցից միայն երեք մնացին:

— Որքա՞ն մեծ էր խումբը:

— 500 ընտանիք:

— Զեր հարազատներն ինչպի՞ս մեռան:

— Մեր ընտանիքը բաղկացած էր 21 հոգուց: Կարձել էինք եղան երեք սալ ու նրանց մեջ զետեղել, ինչ կարելի էր մեզ հետ վերցրինք ուտելիք և դրամ: Կարծում էինք, թե երդնկա պիտի գնայինք, հայրս, մայրս, երկու եղբայրներս, երիցազունը 30 տարեկան, երեք մանշ, մայրս, ամենամեծը 22 տարեկան: Իմ աշքով տեսա բոլորի կորուստը. միայն երեք հոգի ողջ մնացին ...

Տիկնոց ձայնը դողաց, դողողը ձեռքը տարավ կրծքին ու հարեց.

— Երդվառմ եմ, որ Պոլսի հրամանով տեղահանվեցին:

— Ի՞նչ կերպով:

— Երբ քաղաքից գուրս ելանք, Կարնո բերդի դռների առջև ոստիկանները հավաքվեցին ու սկսեցին զենք փնտրել: Դանակ, անձրևանոց և այլն հավաքեցին: Հասանք Բաբերդ: Երբ այս քաղաքից անցնում էինք, տեղ-տեղ դիակներ տեսանք:

— Դիակները Կարինից եկող նախընթաց խմբերից էին:

— Ո՞ւ, Բաբերդից: Ապա հասանք երգնկա: Խոստացել էին մեզ բնակարան տալ, բայց ջուր խմելու հրաման անդամ չտվին:

— Ինչպի՞ս տեղի ունեցավ ջարդը, որի ընթացքում Զեր հարազատները սպանվեցին:

— Երբ բավական ճանապարհ գնացինք, խմբից 500 ընտրովի երիտասարդներ անջատվեցին, դրանց մեջ էր մեկ եղբայրս, որ հազորել էր փախչել ու մեզ մոտ գալ: Աղջկա հագուստներ հազցրինք նրան: Մյուս երիտասարդները ջարդվեցին ...

Նախագահի հոնքերը վեր թռան զարմանքից, աշքերը խոշորացան:

— Ի՞նչ եղան ընտրվածները, — ասաց նա:

— Ջարդվեցին և ջուրը թափվեցին:

— Որտեղից գիտեք:

— Աշքերովս տեսա:

— Տեսաք, որ գե՞տը թափվեցին:

— Այո՛, զետը թափվեցին, և հոսանքը քշեց, տարավ բոլորին:

— Նախագահը թուքը կու տվեց:

— Ետ մնացողներն ի՞նչ եղան:

— Պաղատեցինք, լացինք, բայց մեզ սվիններով առաջ քշեցին:

— Ո՞վ:

— Յուտիկան և մեկ ջոկատ զինվոր:
 — Ապա ձեր հարապատներն ի՞նչ եղան:
 — Սայլերը թափել էին ամեն բան, գնացել: Ինչ կարողացանք շալակեցինք ու հասանք Մալաթիա: Բայց թույլ շտվին քաղաք մտնել ու մեզ քշեցին լեռները: Այդտեղ այրերին կանանցից բաժաննեցին: Ընդամենը տասը մետր մեղանից հեռու բոլորին կացնահար արին ...
 Եատ անսովոր նյութ էր նախագահի համար ու դժվարությամբ էր վարում հարցաքննությունը:
 — Այրերն ու կիները, — հարցրեց նա:
 — Ո՛չ: Միայն այրերին ջարդեցին: Երբ մթնեց, ոստիկաններն եկան և գեղեցիկ կանանց ու աղջիկներին առևանգեցին: Դիմադրողներին սվիններով խոցոտում էին, սրունքները պատում, նույնիսկ հղի կանց կողերը փշրում էին ...
 Մեծ իրարանցում առաջացավ սրահի մեջ: Տիկին Քրիստինին ետ նայեց ու գողոց ձայնով գոչեց.
 — Երդմամբ հաստատում եմ այս ...
 Եշմած նախագահը իրեն գտավ:
 — Դուք ինչպես ազատվեցիք:
 — Եղբորս սպանեցին: Մայրս, երբ դա տեսավ, վայր ընկավ ու մեռավ: Հետո մի թուրք ուզեց կնության առնել ինձ, դիմադրեցի, տղամ սպանվեց ...
 — Ինչպես ազատվեցիք, — գոչեց նախագահը՝ մղձավանշից ազատվելու ակներև ցանկությամբ:
 — Հեռվից ծուխ նշմարեցի, տեսա եղբորս կնոջը, որի երկունքը սկսվել էր: Քշեցին Սամսեք. կինը մնաց այնտեղ ...
 — Քանի՞ հոգի մնացիք:
 — Մոտավորապես 600 հոգի:
 — Իսկ ձեր ընտանիքի՞ց:
 — Հայրս, երկու եղբայրներս և ես:
 — Ուրիմն Սամսեք եկաք, — մեքենայաբար հարցրեց նա:
 — Այո՞ւ, այնտեղ հայրս հիվանդացավ, նրան էլ տարան, թեև եղբորս հաջողվեց նրան բերել, բայց երեկոյան մահացավ ...
 — Իսկ երկու եղբայրներդ:
 — Ողջ են ...
 Նախագահը, ետ նայելով, խորունկ շունչ առավ:
 — Այդ բոլորը իրականություն է, թե՞ երևակայություն:

— Պատմածս իրականությունից շատ պակաս է:
 — Դուք Սամսեք մնացիք:
 — Ո՛չ: Քշեցին Սառուլ ...
 — Էա՞վ, ընդհատեց նրան իր հարցումից զղացած նախագահը, — ո՞վ էր համարվում այդ արհավիրքների պատասխանատուն:
 — Ամեն բան կատարվում էր էնվեր փաշայի հրամանով. զինվորները ստիպում էին մեզ ծնրադրել և աղոթել նրա արեշատության համար, որ մեզ կյանք է շնորհել
 Այդ խոսքերը նոր շարժման և հուզման տեղիք տվին հասարակության մեջ՝ ընդհատելով տիկնոցը: Խոսք վերցրեց պաշտպան նիմայերը:
 — Հասկանալի իրարանցումից պարզ է, որ վկայի ասածները անհավատալի են թվում: Բայց մենք մեր տրամադրության տակ ունենք հազար ու մեկ նման զեկույցներ: Սակայն, որպեսզի վկայի արժանապատվության վրա ամենաթեթև տարակույս իսկ շծագի, պիտի խնդրեի, որ այժմ երկու լավատեղյակ իրազեկները՝ պարոն պրոֆեսոր, դոկտոր Լեփսիուսը և վեհմաշուր Լիման Փոն Զանդերսը հարցաքննվեն այն ժամանակվա թուրքական զինվորականության և ոստիկանության մասին:
 Վաթունն անց, բաց, գեղեցիկ ճակատ, կարճատես, կապույտ աշբեր, մանկունակ բերան, ալեխառն կարճ մորուք, պիրկ ու խիստ այտեր, այդպիսին էր դոկտոր Լեփսիուսը: Նրա կատարած շանքերի և գիմումների հիշատակը դեռ շատ թարմ էր, ու հայերի երախտագիտությունը դեպի զերմանացի հայրենասերը՝ շատ մեծ: Զարդերի շըրջանում նա լույս ընծայեց իր “Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei” աշխատությունը, որ եղավ առաջին մեծ գործը սարսափների մասին: Գերմանական գրաքննությունը շանք շնչացեց այդ գրքի տարածումը սահմանափակելու և ամեն կերպ աշխատեց, որ գերմանական մամուլի մեջ թուրքերի մասին հանրային կարծիքը «աղղտորվի»: Պատերազմի բովանդակ տևողության, դեպքերի մասին զերմանական մամուլը իրավունք չուներ ոչ մի բառ հիշատակելու: Այս պայմաններում հալածական հայասերը իր օրերը արտասահմանում էր անցկացնում՝ նպաստի և օգնության գործերով: Հետագայում էր անցկացնում՝ նպաստի և օգնության գործերով: Հետագայում էր անցկացնում՝ աշխատությունը հրատարակեց լրացված “Der Todesgang des armenischen Volkes” խորագրով: Ապա նա շատ մեծ ծառայություն մատուցեց Եշմարտությունը պարզելու գործին՝ զինադադարից անմիջապես հետո հրատարակության տալով շարդերի

ու տարագրության շուրջը Գերմանիայի արտաքին գործոց նախարարության մեջ եղած փաստաթղթերը՝ “Deutschland und Armenien” մեծահատոր գրքով։ Այժմ նա սկսեց իր խոսքը՝ սուր ակնոցների միջից կապույտ աշքերը կենտրոնացնելով նախագահի վրա։

— Ընդհանուր տեղահանությունը որոշեց Երիտասարդ թուրքերի կոմիտեն՝ Թալիեաթ և էնվեր փաշաների պլիսավորությամբ, որոնք գործադրեցին որոշումը Երիտասարդ թուրքերի օգնությամբ։

1915 թ. ապրիլին ձեռնարկված տեղահանությունը վերաբերում էր Թուրքիայում եղած բոլոր հայերին՝ շատ քիչ բացառությամբ, որոնց մասին պիտի հիշեմ։ Պատերազմից առաջ Թուրքիայում կար ընդամենը մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար հայ։ Թուրքիայում ստույգ մարդահամար չկա, այս թիվը ճշտվում է եղած վիճակագրական տեղեկություններից, որոնք ներդաշնակում են Հայոց Պատրիարքարանի ազգահամարին։ Հայ բնակչությունը պատերազմից առաջ տարածված էր Եվլոպական Թուրքիայում (Թոլիս, Աղրիանապոլիս, Ռոդոսթո) և Ասիական Թուրքիայում (Անատոլիա, Կիլիկիա, Հյուսիսային Ասորիք, Միջագետք)։ Հայերի մեծ մասն ապրում էր Արևելյան Անատոլիայում, Հայկական լեռնաշղթայի վրա, հայ աղքի հին հայրենիքում, վեց վիլայեթների մեջ՝ Կարին, Վան, Բաղեշ, Դիարբեքիր, Սերաստիա և Խարբերդ)։ Արևմտյան Անատոլիայում, Պոլսո գիմաց, Մարմարայի Հարավային եղերքներում բնակվում էր աղքի մի խոշոր բնեկորը։ Հարավային Անատոլիայի մեջ՝ Կիլիկիա, Տավրոսի տափաստանով և Ալիքսանդրիայի ծովախորշին սահմանակից Հյուսիսային ասորական երկրներով, կազմում է Հայկական հին հայրենիքի մի մասը։

Լեփսիուսը հանեց ակնոցները, սրբեց՝ թարթելով հոգնած աշքերը։

— Անատոլիայի ամբողջ հայ բնակչությունը տեղահանվեց բարձրագույն հրամանով, դեպի Հյուսիսային և արևելյան եղոր Միջագետքի անապատի՝ Տեր-Զոր, Զոր, Խակիա, Մեսկենե, Ռասուլ-Այն, մինչև Մոսուլ։ Տեղահան եղան մոտավորապես 1,400,000 հայ, — ասաց նա՝ ակնոցները գնելով ու ձայնին ուժ տալով՝ հարեց։

— Ի՞նչ է նշանակում այս Թալիեաթի ստորագրած հրամանի մեջ ասված է։ «Տեղահանության նպատակն է՝ ոչնչացում»։ Եվ համաձայն այս հրամանագրի՝ գործն առաջ տարվեց։ Արևելյան Անատոլիայի նահանգներից դեպի հարավ տեղահան եղած ամբողջ բնակչության միայն տասը տոկոսը աքսորավայր հասավ։ Մնացած իննուն տոկոսին ձանապարհին սպանեցին։ կանայք ու աղջկներն առևանգվեցին ոստի-

կանների ու քրդերի կողմից, մնացածն էլ մեռավ անոթությունից և ուժասպառությունից։ Այն հայերից, որոնք քշվեցին Արևմտյան Անատոլիայից, Կիլիկիայից և Հյուսիսային Ասորիքից, անապատի եղրի հավաքատեղիներում հետզհետե կուտակվեց հազարավոր մարդկանց բազմություն։ Սրանք հետո մեծ մասամբ ոչնչացան սովոր ու ջարդերից։ Երբ հավաքատեղիները լցվում էին նոր խմբերով այնպիս, որ այլևս տեղ չէր մնում, նրանք գունդ-գունդ առաջնորդվում էին անապատ և այնտեղ մորթվում։ Թուրքերն ասում են, որ իրենք որդեպեցին հավաքատեղիների գաղափարը անզիացիներից, որոնք կենարոնացրին Հարավային Աֆրիկայում բոհրներին։ Պաշտոնական հայտարարվում էր, թե աքսորները նախազգուշական կարգադրություններ են, սակայն անհատական հեղինակավոր անձինք բոլորովին հայտնի կերպով ժանուցում էին, որ աքսորի նպատակն է հայ ժողովրդի բնաշնչումը։ Ասածու հետեւում է այն փաստաթղթերից, որ ես հրապարակեցի՝ հավաքելով կայսերական գենպանության և արտաքին գործոց նախարարության արձանադրություններից, մանավանդ գերմանական հյուպատոսների և Պոլսի գերմանական դեսպանների գեկուցներից։

Լեփսիուսը հանեց թաշկինակը, ճակատը սրբց և մտացիր ասաց։

— Դուք այստեղ լսեցիք մեկ զեկուցում տիկին Թերզիբաշյանի քաշածների ու անսածների մասին տեղահանության ժամանակ։ Այդպիսի զեկուցյներ՝ թանձր մանրամասնություններով, որոնք բոլորն էլ անձնական փորձառությունների դրոշմ ունեին, հարյուրներով տպագրված են մեծ մասամբ գերմանական, մասամբ էլ անզիական ու ամերիկյան հրատարակությունների մեջ։ Իրողություններն անտարակուսիլի են։ Դործադրման եղանակներն ամեն տեղ նման են տիկին Թերզիբաշյանի պատմածներին։ Հակառակ պարագայում պետք է հարց լիներ, թե ինչպես կարելի է այդքան կարճ ժամանակի մեջ միլիոնավոր մարդկանց սպանել։ Այդ հնարավոր է եղել ամենավայրագ միջոցների շնորհիվ, ինչպես ապացուցվեց նաև Պոլսի դատավարության ընթացքում, որ տեղի ունեցավ Թալիեաթի փաշայի և ընկերների դեմ այնտեղ, պատերազմական ատյանի առջև։ Ատյանը կազմված էր մի զորաբաժնի հրամանատարից, երեք զորավարներից և մեկ հարյուրապետից։ Ամբատանության հինգ կետերից առաջինը վերաբերվում էր Հայկական զարգերին։ Պատերազմական ատյանը 1919 թ. հունիսի 6-ին մահվան դատապարտեց շարդերի բոլոր գլխավոր հեղինակներին՝ Թալիեաթին, էն-

վերին, ջեմալին և դոկտոր Նաղըմին։ Հայերին ոչնչացնելու հրամանի կատարումը Պոլսից հանձնվեց վալիներին, մյութեսարիֆներին և գայլագամներին, այսինքն՝ նահանգային, գավառական վարիչներին։ Այն պաշտոնյաները, որոնք չէին ուղում կատարել տրված հրամանները, պաշտոնանկ էին լինում։ Օրինակի համար՝ Հալեպի վալին՝ Ջեմարիաշան, մերժեց իր վիւայեթության մեջ տեղահանության հրամանները կատարել։ Թալիաթը նրան պաշտոնանկ արավ և տեղափոխեց Գոնիա։ Ջելալ փաշան այստեղ իր հովանավորության տակ առավ դեռ ոզք մնացած հայերին։ Հետևանքը եղավ այն, որ այստեղից էլ վտարեցին, և մնաց առանց պաշտոնի։ Սակայն նա մեկն էր այն արժանավոր և արդարակարով վալիներից, որ ուներ Թուրքիան։ Մի ուրիշ վալի՝ Ռաշիդ բեյը, Դիարբեքիրի մեջ մարդախողսողների ձեռքով սպանել տվեց երկու գայլագամ, որոնք հանձն շառան կիրառել տեղահանությունները։ Հրամանները շկատարող թուրքական բնակչության, պաշտոնյաների ու զինվորականների դեմ գործադրում էին բռնություններ։ Երբորդ զորաբաժնի մի հրամանատար ազդարարեց, թե ով հայերին օգնության համարի, իր տան մեջ պետք է սպանվի և տունն էլ պետք է հրկիզվի։ Եթե պաշտոնյաներից մեկն օգներ հայերին, պետք է անհապաղ պաշտոնանկ արվեր և ուղմական ատյանի առջև կանգներ։

Դատարանն ու հասարակությունը կարծեն քարացել էին այդ անլուր հայտնությունների առաջ։ Լեփսիուսը շարունակեց։

— Հայերի մեկ միլիոն սութ հարյուր հիսուն հազար սկզբնական թվից տեղահանվեցին մեկ միլիոն չորս հարյուր հազար։ Մնում էր ուրիմն չորս հարյուր հիսուն հազար մարդ։ Սրանցից երկու հարյուր հազար մարդ ազատ մնացին աքսորից։ Դիսավորապես Պոլսի, Իզմիրի և Հալեպի բնակչությունը։ Հալեպի հայության ազատվելու մեջ մեծ դեր կատարեց գերմանական հյուպատոս Ռենուկերը, նա, ով համաձայնական մամուլում զրպարտվեց իրեւ շարդերի կազմակերպող։ Իզմիրի մեջ զորավար լիման ֆոն Զանդերսը արգելք եղավ հայերի տեղահանությանը։ Նույն արավ ընդհանուր զորապես ֆոն դեր Գոլցը։ Երբ նա եկավ Բաղդադ, իմացավ, որ Բաղդադի հայերն աքսորված են Մոսուլ և Մոսուլի հայերի հետ միասին պիտի տեղահանվեն դեպի Եփրատ, այսինքն՝ դեպի մահ, Մոսուլի վալին ազդարարեց, որ արգելում է տեղահանությունը, իսկ երբ վալին նոր հրաման ստացավ տեղահանություն ձեռնարկելու, ֆոն դեր Գոլցը ներկայացրեց իր հրաժարականը։ Էնվեր փաշան ստիպված եղավ տեղի տալ ֆոն դեր Գոլցին՝ իր

գրած թղթի մեջ ավելացնելով, թե «իր վերին հրամանատարի իշխանությունը իրեն իրավունք չի տալիս թուրքական սկստական ներքին գործերին խառնվելու»։ Պոլսու հայերի տեղահանությանը արգելք եղան գեսպանությունները։ Թույլ տվեք այստեղ մի անցողիկ դիտողություն անել։ Հաճախ կարդում ենք, թե հայկական շարդերը հետևանք են այն բանի, որ հայ վաճառական գասակարգը կեղեքել է թուրքերին, և թուրք բնակչությունը զայրացած, ինքնարերաբար ոտքի է ելել հայերի գեմ։ Նախ, ապացուցված է, որ ո՛չ 1895—96 թթ. շարդերը և ո՛չ էլ վերջին շարդերը ժողովրդական ինքնարուխ խլրտումների հետևանք չեն, այլ պետության վարչական հրամանների գործադրություն։ Ապա փաստորեն Պոլսի, Իզմիրի, Հալեպի նման վաճառատեղիներն ու հայ վաճառական դասակարգն էր, որ փրկվեց մահից թե՛ այն ժամանակ և թե՛ հիմա, մասսամբ էլ նրա համար, որ ի վիճակի էր իրեն փրկելու։ Սրա դիմաց Անատոլիայի ամբողջ գյուղացիությունը, որ կազմում է ամբողջ հայ բնակչության ութսուն տոկոսը, արհեստավորների հետ միասին, որոնք մեծ մասսամբ հայեր են, անապատ ուղարկվեց և ոչնչացավ։ Հայ բնակչության մնացորդը, մոտ երկու հարյուր հիսուն հազար հոգի, տեղահանությունից զերծ մնաց, սահմանամերձ վիւայեթների ուղևական գրավումներով և ապաստանեց Կովկասում։ Այն ժամանակ ուղևներն առաջացան Վանա լճի արևմտյան եղերքները։ Երբ նահանջեցին, հայերին իրենց հետ տարան, բայց ոչ նրա համար, որ հայերը սիրելի էին նրանց համար, Յանուշկելչը՝ Նիկոլայ Նիկոլաևիչի սպայակույտի պետք, որ այն ժամանակ Կովկասի հրամանատարն էր, հայտարարեց, որ Ռուսաստանը դատարկված երկրների մեջ հայերի փոխարեն պետք է քուրդ և կազակական գաղութները բնակեցնի, որպեսզի թուրքերի դեմ մի լայն զինվորական գոտի կազմվի։ Ռուսների նպատակն էր ձեռք բերել «Հայաստանը առանց հայերի»։ Համենայնդեպս, ուղևների առաջինադաշտումը փրկեց երեք հարյուր հիսուն հազար հայի կյանք, թեև ուղևական նահանջը նրանց զրկեց իրենց երկրից։ Այդ տարագիրները մինչև օրս ապրում են Կովկասում, շատ անձուկ երկրամասի վրա, տարիներով սովոր և մեծ նեղությունների ենթարկվելով։ Մարդ ակամալից ինքն իրեն հարց է տալիս, թե ինչպես պատճականորեն հնարավոր եղան նման գեպերը։ Պետք է փորձեմ համառոտակի պատասխանել այս հարցին։

Հայկական հարցը ինքնարում մի տունկ չէ, այլ եվրոպական զիշմաղիտության ծնունդը։ Հայ աղջը զնաց Ռուսաստանի և Անդ-

լիայի քաղաքական շահերի հակամարտության: Լոնգոնի և Պետեր-
բուրգի ճատրակի մեջ հայը զինվոր էր, որ երեմն առաջ էր քաշվում,
երեմն զոհվում: Մարդասիրական հորջորջումները, «քրիստոնեական
հովանավորությունը» պատրվակներ էին:

Եեփսիուսը հիշատակեց մի շարք հայտնի պատմական փաստեր,
թե ինչպես Արդու Համիդի օրոք պետությունների կողմից առաջադրված
հայեական բարենորոգումներին նախորդել ու հաջորդել են հայերի կո-
տորածներ՝ վերջապես հասնելով Երիտասարդ թուրքերի օրոք հայ ժո-
ղովրդի բնաջնջմանը:

Ապա վերադառնալով տեղահանությանը, խիստ հուզված նկարա-
գրեց հայ մտավորականների տարագրությունն ու շարդերը:

— Թալեաթի անձնական բարեկամ, Խորհրդարանի հայ անդամ
վարդեալը դեռ ձերրակալված չէր, — պատմում էր նա, — գնաց Թա-
լեաթի մոտ հալածանքների պատճառը հասկանալու «Մեր ծանր օրե-
րին մեր կոկորդին կպաք և հայկական բարենորոգումների հարցը
բարձրացրիք, հիմա մենք պետք է օգտվենք մեր նպաստավոր զրու-
թյունից և ձեր ազդը այնպես ցիրուցան անենք, որ հիսուն տարով ձեր
մտքից հանենք բարենորոգումների գաղափարը: Վարդեան ավելաց-
րեց. «Ուրեմն ուզում եք շարունակել Արդու Համիդի գո՞րծը»: Թալեա-
թը պատասխանեց՝ այս: Այս սպառնալիքի համաձայն էլ գործը կա-
տարվեց: Պոլսի ուղարկան ատյանի դատավարությունը, «Խօսուա
օֆիցիէնթի զեկուցման համաձայն, պարզում է, որ աքսորը որոշել է
Երիտասարդ թուրքերի կոմիտեն և Թալեաթ փաշան՝ կոմիտեի հոգին
ու գրա ամենաազդեցիկ մարդը, Հրամայիլ է բնաջնջումը: Գերմանական
և Թուրքական փաստաթղթերով այս մասին կարելի է գրավոր զեկուցում
ներկայացնել: Իմ այս խոսքերի նպատակն է պարզել, որ պետություն-
ների քաղաքական խաղերը այնտեղ հասցըին, որ նախապես Արդու
Համիդը, ապա Երիտասարդ թուրքերը այնքան կասկածու գարծան
հայերի նկատմամբ, որ եկան այն եղբակացության, թե ուրիշ բան չի
մնում անել, քան ոչնչացնել հայերին ...

Գ 1. Ա Խ Խ Փ

ԴԱՏԱԽԱՐԱԿԱՆ ՄԱՍԱԿԱՐԱՅԻ Է ՊԱՀԱՆՁՈՒՄ

Լեփսիուսի զեկուցումը շնորհացիւ տպավորություն թողեց ու միայն-
անտեղյակ հասարակության վրա, այլև փաստաբանների, զատավորնե-
րի: Ֆոն Գորդոնը խոստովանեց, որ այդպիսի լրիվ գաղափար չուներ
այդ զարհութելի դեպքերի մասին: Հասարակությունն իր հուզումը
շնորհացրելի դեպքերի մասին: Դատախանակ՝ Գոլնիկը շիում էր թղթերի
շնորհացումը և արտահայտում: Դատախանակ՝ Գոլնիկը շիում էր թղթերի
վրա հակված դրույթը: Երդվալները դեռ խորասուզված էին կիսատ
մնացած նոթագրությունների մեջ: Նախագահը մի պահ շիմացավ
մասելիքն ու անհիքը: Առիթից օգտվեց պաշտպան Վերթառուերը և մի
քանի հարցումներ ուզեց դոկտոր Լեփսիուսին.

— Ինչո՞ւ Անդլիայի ու Խոսաստանի քաղաքական խաղերը նը-
պաստեցին հայերի բնաջնջմանը:

— Որովհետեւ թուրքերին ներշնչեցին այն վախը, թե ուզում են Հա-
յաստանից անկախ պետություն կազմել, իսկ այդ պետք է վանդեր
Ասիական Թուրքիայի դոյլությունը, — պատասխանեց Լեփսիուսը:

— Առաջ այնպես դիտեինք, թե հայերի ու թուրքերի փոխադարձ
ատելությունը հարյուրավոր տարիների հնություն ունի, որովհետեւ
առաջինները քրիստոնյա, երկրորդները մահմեդական են:

— Համաթուրքական, Համախուլամական պետություն ստեղծելու երե-
մակայական գաղափարը, որի մեջ քրիստոնյաները անդ պիտի շրնե-
նային, կոմիտեի և էնվեր փաշայի մտահղացումն է:

— Ուրեմն, որպեսզի հայերն էլ բալկանյան ժողովուրդների պես
շաղատագրվեն, որոշեցին նրանց ոչնչացնե՞լ:

— Այո՛, կոմս Մետեռնիխը, որ 1918 թ. Պոլսի գերմանական դիսպանն
էր, հուլիսի 30-ի իր զեկուցման մեջ գրում էր. «Հայերի գործը վեր-
ջացած է: Երիտասարդ թուրքերի ոհմակն անհամբեր սպասում է այն
բոպերին, երբ Հունաստանը պիտի թուրքիայի դիմ դառնա: Հուները

Թուրքիայի քաղաքակիրթ տարրն են կազմում: Բայց նրանք էլ պետք է ոչնչացվին, ինչպես հայերը:

Նախագահն անցավ Թուրքիայի իրադարձություններին իրազեկ մյուս վկայի՝ Օտտոն Լիման ֆոն Զանդերսի շուցմունքներին: Բարձրահասակ, կը որ դեմքով, բարեձև Զանդերսը, չնայած ծեծում էր 70-ի դուները, պահպանի էր թարմությունը: 1913 թ. Վիլհելմի կողմից Պուլիս ուղարկված զինվորական պատվիրակության պետն էր. նա վերակազմեց թուրքական բանակը և ինքն էլ վարեց զորակուլը 1914 թ. օգոստոսին՝ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց երեք ամիս առաջ:

— Կուզեի պ. Լեփսիուսի ասածներին մի քանի բան ավելացնել զինվորական տեսակետից, — ասաց նա: — Իմ կարծիքով պետք է երկու մասի բաժանել այն ամենը, ինչ տեղի ունեցավ Հայաստանում և որակվում է «Հայկական ջարդ» անունով: Նախ Երիտասարդ թուրքերի տեղահանության հրամանը: Կարող ենք Թուրքիայի կառավարությանը ամրողապես պատասխանատու ճանաչել այս կարդադրության համար, իսկ հետևանքների համար՝ միայն մասամբ: Ապա այն կոիվները, որոնք տեղի ունեցան Հայաստանում, հայերը ինքնապաշտպանության էին դիմել. Թուրքական կառավարության հրահանգած զինաթափությանը չեին ուղում ենթարկվել և ուսւների հետ միացած պայքարում էին թուրքերի դեմ: Բնականաբար այդ կոիվները ջարդի համար դուռ բացեցին: Դարձում եմ, որ սրանք զանազանելի բաներ են: Զինվորական և քաղաքական վերջին պաշտոնյաների գեկուցների հիման վրա, որոնք զինվորական տեսակետից անհրաժեշտ էին գտնում Արևելյան Անատոլիան հայերից դատարկել, թուրք կառավարությունը տեղահանություններ հրամանագրեց:

Այս այն էր, ինչ ասել էր Լեփսիուսին Էնվերը, մեծ մարդասերի դիմումի առիթով՝ գոնե ծովեղերի հայության կյանքը խնայելու:

— Քանի որ գերմանացիների դեմ սխալ ու անճիշտ բաներ են ասված, — շարունակեց զորավարը, — կուզեի այստեղ շեշտել, որ կովկասյան ճակատում գնդապետները և հրամանատար զորավարները թուրքերից էին բաղկացած: Արդեն ասացի, որ այս զինվորական և քաղաքական պաշտոնյաները Պոլիս էին գեկուցել կացության մասին, այդ հիման վրա սկսվեց տեղահանությունը, որի գործադրությունը գտնվում էր ամենավատ ձեռքերի մեջ: Պետք է ավելացնել, որ թուրքական ոստիկանությունը պատերազմից առաջ ուներ 85 հազար հոգի և մի ընտրյալ գունդ: Բայց նրանք մտան բանակի մեջ, և փոխարե-

նը ստեղծվեց օգնական ոստիկանություն, որ լավ տարրերից չէր բաղկացած. մասամբ ավագակներ, մասամբ էլ թափառաշրջիկներ էին: Այս մարդկանց մեջ կարգապահությունը բնականաբար չնշն էր: Անապահությունը կամ պարագաները պետք է հաշվի առնել, երբ խոսք է լինում հայերի գաղթի ժամանակ տեղի ունեցած խժությունների մասին: Թուրք գաղթի ժամանակ տեղի ունեցած խժությունները, այլ ոստիկառին վորոները չեին այդ խժությունները, այլ ոստիկառնական մի պատահական կազմ, որին կարիքը հարկադրեց ստեղծել: Ապա պետք է նկատի առնել, որ թուրքական էտապը այնքան խեղճ էր, որ ոչ միայն հայերը, այլև շատ թուրք զինվորներ մեռան սննդի պակասությունից, հիվանդություններից, կազմակերպության բացակայությունից: Հազարավոր թերսնված զինվորներ մեռան իմ բանակում Գելիպոլուի արշավանքի ժամանակ: Ես կարծում եմ այս բոլորը անհրաժեշտ է հաշվի առնել, — Հարեց զորավարը ու քիչ մտածելով՝ շարունակեց, — Արշավանքի անտեսել, որ ուղեկից խումբը մասամբ աղջկած էր «սուրբ պատերազմի» գաղափարից և կարծում էր, թիրիխոսունյա հայերի հետ խստությամբ վարվելը բարի գործ է: Ստորադաս պաշտոններությունը այս կիրքը կարող էր ավելի արձարձած լինել: Արդեն քրդերն էլ, որոնք թշնամի էին հայերին, միշտ հարձակվում էին նրանց վրա ու շարդում ...

Զորավարը գրապանից հանեց մետաքսի թաշկինակը, լայն ճակատը սրբից ու սեղմոզ օձիքը մատներով լայնացնել փորձելով՝ շարունակեց.

— Ինչքան գիտեմ, գիրմանական կառավարությունն այն ժամանակ արագ հնարավոր՝ հայերի թշվառությունը մեղմացնելու համար, որքան թույլ կտային պարագաները: Բայց նրա համար այդ դժվար էր: Հատկապես գիտեմ, որ գիտական Մհեմունիխը վճռական բողոքներ ուղղեց կառավարությանը հայերի դեմ եղած կարգադրությունների համար: Մեզ համար, որ այնքան կասկածների ենթարկվեցինք, կարող եմ ասել, թե ոչ մի գերմանացի սպա հայերի դեմ ուղղված կարդադրությունների մեջ մասնակցություն չի ունեցել: Ընդհակառակությունը, որ ես երբեք հայերի մասին թափեղ կարողացանք: Պետք է շեշտեմ, որ ես երբեք հայերի մասին թափեղի կողմից ստորագրված ոչ մի հրաման չեմ ստացել: Իմ ստացած հրամանները ստորագրված էին Էնվերի կողմից և թեթև էին, երբեմն էլ բոլորովին անիմաստ: Օրինակ, մի անգամ հրաման ստացա բոլոր հրեաներին ու հայերին սպայակույտից հեռացնելու մասին: Բնականարար հրամանը չգործադրվեց, որովհետև նրանց պետքն ունեինք որպես

թարգմանների: Այսպիսի անիմաստ հրամաններ հաճախ էի ստանում:

Թվաց, թե զորավարն ավարտեց իր խոսքը, նախադաշն անդամ համապատասխան շարժում արավ, բայց հանկարծ Զանդերսը կարևոր բան հիշողի պես ասաց.

— Երբ 1916-ի փետրվարին լուր ստացա տեղակալ Վիլմարից, թե վալին ուզում է Ազրիանապոլիսի հայերին ու հրեաներին աքսորել, անցա Պոլիս և իմ ջանքերով, դեսպան կոմս Մետեռնիխի ու դեսպան իշխան Պալավիչինիի ընդդիմությամբ աքսորը դադարեցվեց: Մի ուրիշ անդամ իզմիրում, երբ վալին գիշերը անկողիններից դուրս էր հանել 600 հայ, վագոնների մեջ լցրել և ուզում էր տեղահանել, սպառնացի զինվորներին միջոցով գնդակահարել իր ոստիկաններին, եթե մեկ հայի վնասի, վալին ստիպված եղավ հրամանը ետ վերցնել: Այս իրողությունը իր գրքի մեջ պատմում է պ. դոկտոր Լեփսիուսը: Այս է մոտավորապես այն ամենը, ինչ գիտեմ: Կուլեխի շեշտել, որ ես ո՛չ Հայաստանում եմ եղել, ո՛չ էլ նրան մերձեցել և ո՛չ էլ թուրքերը ինձանից խորհուրդ են ուզել հայերի դեմ ձեռք առնվազիք միջոցների մասին: Ընդհակառակը, ամեն բան մեզանից ծածկում էին, որպեսզի դադարի շունենայինք քաղաքական ներքին իրադարձությունների մասին: Արտասահմանի մամուլի զրապարտություններից ամենամեծն այն է, որ իբր թե մենք մասնակից ենք եղել այդ կարգադրություններին: Ընդհակառակը, մեր պարտականության համաձայն, միջամտեցինք, որտեղ կարողացանք: Ինձ ենթակա շրջանում ապրում էին ցիրուցան հայեր, և քիչ առաջ հիշատակած դեպքերը միակն են, որ ինձ պատահեցին: Թե որքա՞ն թալեաթը մասնակից էր հայերի դեմ եղած կարգադրություններին, չգիտեմ: Որքան ինձ հայտնի է, հայերի տեղահանության գլխավոր հրամանը եղավ 1915 թ. մայիսի 20-ին: Համենայնդեպս կոմիտեի մտայնության արդյունքն էր այն, որ հետո նախարարության ընդհանուր համությանը արժանացավ: Գործադրությունն, ինչպես ասացի, վալինների ու նրանց ենթակա պաշտոնյանների և ամենից ավելի շատ՝ ոստիկանության ձեռքում էր: Ամեն պարագայում պարտքս եմ համարում ասելու, որ հինգ տարիների ընթացքում, երբ ես թուրքիայում էի, թալեաթի ստորագրությամբ հրամանագիր հայերի դեմ շեմ տեսել և ոչ էլ կարող եմ վկայել, թե այդպիսի հրամանագիր տրված է ...

* * *

Զանդերսի խոսքից հետո մի կացություն ստեղծվեց, որ կարծես դատվողը ես չեմ, այլ թալեաթը և ինքը: Անկապ, զուրկ ներքին հա-

մողումից, ձեական, անսիրտ և, որ գլխավորն է, անձիշտ զեկուցումը ու մի ազդեցություն չունեցավ: Ոչ միայն դատարանը, այլև բանիմաց հասարակությունը հասկանում էր, որ չի կարելի «զինվորական անհրաժեշտությամբ» մի ամբողջ ժողովուրդ ոչնչացնել, որ շիտակ չէ «վերին» պաշտոնյանների հանցանքը փաթաթել «ներքինների» վզին, երբ նրանք գործադրում են վերինների հրամանը, որ կարելի էր վերջ տալ սպանդին, եթե իրոք տեղահանության որոշումը սխալ էր գործադրվում, որ անիմաստ է վերապահ լինել այդ որոշման հանդեպ ու մատնանշել «վատ» գործադրությունը, որ, վերջապես, հերցուրված քաղաքական անցուղարձի մեջ, այնուամենայնիվ, հազարավոր երեխաններն ու կանայք հանցանք շունեին:

Պաշտպաններս ակնհայտորեն հիասթափված էին իրենց կողմից հրավիրված իրազեկի զեկուցումից: Շատ փափկանկատորեն այդ հիասթափությունն արտահայտեց ֆոն Գորդոնը:

— Վսեմաշուրջ տեր, ասացիք, թեև ու դրական կերպով, բայց համենայնդեպս արտահայտվեցիք այն իմաստով, որ խժոժությունների պատասխանատունները ստորադաս պաշտոնյաներն են:

— Անգիտությունների և ու թե տեղահանության, — պատասխանեց դուրավարը:

— Վսեմաշուրջ կիման ֆոն Զանդերսը մեզ խղճի անհանգստության մեջ զցեց, — դարձավ ֆոն Գորդոնը նախագահին, — նա ասաց, որ թալեաթ փաշան շէ խժոժությունների պատասխանատուն, այլ այն անկարգ մարմինները, որոնց հանձնված էր տեղահանությունների հրամանի գործադրությունը: Հայերի մեջ տիրող ընդհանուր ըմբռնման և մասնավորապես պ. դոկտոր Լեփսիուսի համոզման հակառակ է այդ: Ես պարտք եմ համարում այստեղ ներկայացնել Հալեպի փոխվարությունից ստացված հինգ հեռագրերը ...

Ֆոն Գորդոնը ջղայնու շարժում արեց դեպի նախագահովր, բայց կանգնեց և հարեց.

— Այս հեռագրերից երկուսը կուլեխի այստեղ կարդալ. պրոֆ. Լեփսիուսը քննել է ...

— Փաստը կանխած պիտի լիներ, եթե այդ հեռագրերը այժմ այստեղ կարդաթ, — ընդհանուր նրան նախագահովը:

— Բայց պետք է ասեմ, թե ի՞նչ կա դրանց մեջ, — վրա բերեց ֆոն Գորդոնը հուզված և առանց թուլտվության սպասելու շարունակեց, —

Հեռագրերը հաստատում են, որ Թալեաթը անձամբ հրաման է տվել բոլոր հայերին, մանուկներին էլ հայք, ոչնչացնել: Նախապես հրաման է տվել պահել միայն այն երեխաներին, որոնք ի վիճակի շնորհած հիշելու, թե ովքե՞ր են եղել իրենց ծնողները: Հետո, 1916 թ. մարտին, այդ հրամանը ջնջվել է, և մանուկներն էլ են թուրքերի համար լինասակար տարր համարվել: Այս հեռագրերի ջշտության մասին կարող է վկայել գրագետ Սրամ Անտոնյանը, որ ստացել է Հալեպի փոխվարչությունից՝ անգլիացիների գրավումից հետո և տրամադրել հայկական պատվիրակությանը:

Բայց ֆոն Գորդոնի հուզումը ոչ թե դառն իրողությունների մերկացում էր, այլ ճշգիմ անձն պաշտպանելու մտահոգությունը:

— Անձնապես հնարավոր, նույնիսկ հավանական եմ համարում, և հույս ունեմ, որ երդվալները հավատում են ամբաստանլավին, որ նա հաստատում է՛ոլ առանց պատճառի, մինչև սրտի խորքը համոզված էր, որ Թալեաթն է հայերի դեմ դործված ահութի խժդությունների հեղինակն ու պատասխանատուն: Եթե այսպիսի համոզում կա, այդ գեղքում կարող եմ հեռագրերը կարգալուց հրաժարվել:

Հարցն այս ձևով շոշափում էր պաշտպանության բարոյական հիմքերը:

— Խնդրում եմ այդ առաջարկը մերժել, — խստորեն միջամտեց դատախաղ Գոլնիկը, — պարոն նախագահը բավականին ընդարձակ վիճարանություններ թույլ տվեց Թալեաթի անձնավորության մասին: Ոչ ոք տարակուս չունի, որ ամբաստանլավը համոզված է, որ խժդությունների հանցավորը Թալեաթն է: Պրանով նրա շարժառիթը լիուլի պարզվում է: Բացարձակապիս անհնարին է այս ատյանի առաջ վճռել Թալեաթի հանցավորության խնդիրը, այդ դեղքում պիտի կայտցվեր մի պատմական վճիռ, որի համար անհրաժեշտ է տարբեր ատաղձ ունենալ:

Հիմնականում թեև ֆոն Գորդոնը գոհացում ստացավ, բայց ստեղծված լարումը միանգամից շմարեց: Պաշտպան նիմայերը ուշադրություն դարձրեց, որ Թալեաթը կառավարության վերին պաշտոնյան էր, մեծ վեղիրը, պետության ներկայացուցիչը, որ ամեն բանի պատասխանատուն նա էր, և այլ կերպ կարծել անհնարին է...

Նախագահն անցավ բժշկական փորձագետների ղեկուցմանը, որոնք պատղատ ինձ բանտում քննության էին ենթարկել: Պրանցից բժշկական գաղտնի խորհրդական բժիշկ Բոխիրտ Շտորմերը, վաթսունամյա

շոր ու ցամաք մի մարդ, ինձ վերագրում էր հոգեկան պատճառներով ծնունդ առած վերնոտություն, որի հիմքն էին ջղային քայլացումների հետևանքով ինձ հետ պատահած ուշաթափության դեպքերը: Բայց այդ հիվանդությունը փոխանակ մեղմելու, ծանրացնում էր որությունս:

— Հոգեկան պատճառներից ծագած վերնոտության առանձնահատկությունների թվին են պատկանում կամքի այնպիսի տոկունություն ու համառություն, որպիսին սովորաբար շատ հազվագյուտ է, — ասում էր նա, — ըմբռնումների մեջ հետևողական, ծրագրի նրբադույն մշակում, մինչև դրա գործադրությունը, այդ հիվանդության հատկանիշներն են: Ամեն պարագայում, նման հիվանդները, շնայելով ոչ մի խոշնդուի, գործադրում են այն, ինչ որ մտքներին դրել են: Սրանով է բացարձում այն հանդամանքը, որ ամբաստանլավը լիուրշեց միջոցներից և գժվարություններից՝ գտնելու իր ատելի թշնամուն և խորհրդածելու, թե ինչպես կարող էր գործադրել իր ծրագիրն ամենահարմար ձևով: Եթե իր սենյակից կատարած հսկողությունը վերջանում է, նա վերցնում է զեթք, ուրիշ վազում, ջշտությամբ դիտում հապուտը և հարվածը հասցնում ովիարկի և վերարկուի միջև եղած մասին: Սրա մեջ ես տեսնում եմ իրագործումը վազուց նախապատրաստաված որոշումի:

Շտորմերը չէր ժիտում, որ Հայաստանում տեղի ունեցած օքսումբնելի իրադարձությունները խորապես աղղել էին հոգեկան աշխարհիս վրա, բայց այդ բոլորը չէին ազգել կամքիս վրա, ազատորհն որոշ շելու և գործելու կարողությանը, որով պատասխանատու էի օրենքի բովանդակ տրամադրությամբ:

Այլ տեսակետ էր պաշտպանում պրոֆ. Լիպմանը:

— Սկզբից իսկ պետք է ասեմ, որ ամբաստանլավը հազվագյուտ անկեղծության տեր մարդ է, և ինքն իրեն այլ և այլ շինձու ձևեր շիտակիս, — ասաց նա: — Նա մինչև իսկ շափական վերապահ է, մի տեսակ համակերպում կա իր մեջ, նա ինձ հասկացեց, որ ինչ ուզում է թող լինի, ինքն ապլիս կյանքի նկատմամբ հետաքրքրություն չունի: Այս ամենը իրենից չէր բխում, ովհազ էր շարունակ փորփորել՝ դուրս քաշելու համար: Բոլորովին պարզ է, որ մենք այսուղ գործ շունենք խելագարի հետ, և նրա արարքը տեղի չի ունեցել մոռային մթագնած գրության մեջ: Խնդիրն այսուղ հոգեկան ծանր ցնցումների և օգերաբժիշկ դաշտավարից մեջ է:

Լիպմանը պարզեց այդ գաղափարի զարդացման ուղին զգայուն խառնվածքի համար՝ ծանր հոգեկան ապրումների հետևանքով:

Գերարժեք գաղափարը միվում է այդ տեսակ բնավորության մեջ և հետզհետե նվաճում մարդուն, տիրող դեր է խաղում, միշտ ներկա է, միշտ հանդես է գալիս և բռնանում է՝ իր իշխանությանը ենթարկելով մարդուն:

Ապա պարզեց, թե ինչպես եմ ենթարկվել այդ գաղափարի իշխանությանը:

— Գերարժեք գաղափարի հիմքը մոր, հարազատների, ազգական-ների սպանության հետևանքով ծնունդ առած վրեժ լուծելու ներքին պահանջն է: Մի անգամ ընկնելով այդ գաղափարի իշխանության տակ, հակառակ կամքին ու ցանկությանը, նա չի կարողացել ազատվել դրա ճնշիլ ազդեցությունից:

Այդ հիմքերով կիպմանը դունում էր, որ ես իմ կամքի լիակատար տերը չէի սպանությունը ձեռնարկելու պահին: Նա իր գեկուումն ամփոփեց՝ անվանելով այդ «Հույզի վերնոտություն»:

Պրոֆ. Կասիրերը, որի մոտ եղել էի դեպքից առաջ, նոր տվյալներով եկավ հաստատելու կիպմանի կարծիքը: Նույն տեսակնետը պաշտպանեցին մյուս երկու փորձադիտ բժիշկները՝ Բրունո Հակին և պրոֆ. Էդմունդ Ֆորստերը: Վերջին երկուսը մինչև իսկ տրամադիր էին կարծելու, որ սպանությունը կատարել եմ ազատ կամքի լրիվ բացահայտված:

Օրը լրացավ, դատավարության շարունակությունը հետաձգվեց վաղվան: Դրսի հետ ունեցած շփումներից հետո աղատության ձգումը այնպիս էր սրվել, որ կարծի առաջին գիշերն եմ բանտում: Աշխատում էի վերջիշել, համադրել օրվա թեր ու դեմ տվյալները, հետեւ թյուններ անել դատավարության հավանական ելքի մասին, և ապրելու հույսը տակաւին ավելի համակում էր ինձ: Բարոյական մի մեծ գոհացման առիթ էր հատկապիս կեփուցումը: Նա պարզաբանեց այն բոլորը, որ ես մտածում էի ասել առաջին հարցաքննությանս, մոտ երեք ամիս առաջ ...

Գիշերը երազումս մորս տեսա: Իբր թե անցնում եմ անձայր անապատի միջով և շորս կողմս՝ անհուն տարածության վրա, շերտ-շերտ փոված են ավազակույտեր, ծովի քարացած ալիքների պես: Եվ դնում եմ՝ մարդկային բորբիկ ոտնահետքերին հետամուտ, որ մերթ հայտնվում են մերթ՝ շքանում: Հանկարծ տեսնում եմ ավազուտների մեջ ցնցոտիներում մորս՝ գետնին պառկած, որ անթարթ նայում է ինձ: Ես առաջ եմ նետվում՝ նրան բարձրացնելու համար:

— Ո՞չ, զավակս, մեռել եմ, օգուտ չունի, տուն գնա, — ասում է նա հոգնատանց, — բայց տեսնո՞ւմ ես՝ ինչ են արել ինձ. մեկ թիվ հողի լկա վրաս, գիշերը սաստիկ ցուրտ է, մրսում եմ, մանավանդ՝ կողերս:

— Սպասիր, մայր, ես քեզ մի լավ ծածկեմ:

— Հա՛, ծածկիր, զավակս, ծածկիր ...

Ու ես խնամքով ծածկում եմ ավազներով նրա բորիկ ոտքերը, գրեթե մերկ կողերը, լանջը, երբ ուզում եմ անցնել զլսին, նա ասում է.

— Ո՞չ, զավակս, զլուխս թող բաց մնա, որ օդ առնեմ ... հիմա լավ է, շա՛տ ապրես, դե, տուն գնա ...

* * *

Առավոտյան դատավարությունը վերսկսվեց ավելի մեծ բազմության ներկայությամբ: Այսօր ոտքի վրա ավելի շատ մարդ էր մնացել: Վերնահարկը զրավել էին դատական և այլ պաշտոնյաներ ու ընտրյալներ:

Դոկտոր Լեմբերգը նիստը բանալով հայտարարեց դատավարության փաստական մասը սպառված ու ձևակերպեց երդվալներին ուղղված հետևյալ երեք հարցումները:

1. Հանցավո՞ր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլիրյանը՝ 1921 թ. մարտի 15-ին Շառլոտենբուրգում մի մարդու՝ Թալեաթ փաշային դիտավորյալ կերպով սպանած լինելու համար:

Պարզաբանեց, որ այդ հարցումը վերաբերվում է անկանխամտածված սպանությանը: Հաջորդ հարցումը ձևակերպեց այսպիս:

2. Արդյոք ամբաստանյալը սպանությունը կանխամտածված է կատարել:

Այս հարցմանը պետք էր պատասխանել այն դեպքում, եթե առաջինին հաստատական պատասխան տրվեր:

Վերջապիս, եթե առաջին հարցմանը հաստատական, իսկ երկրորդին ժխտական պատասխան տրվեր, անհրաժեշտ էր ճշտել, թե՝

3. Կա՞ն մեղմացուցիլ պարագաներ:

Խոսքն այժմ պատկանում էր դատախազ Գոլնիկին:

— Պարոնայք երդվալներ, — սկսեց նա, — ներկա քրեական դեպքի իրավաբանական կողմը չէ, որ բացառիկ նշանակություն է տալիս

և բացատրում այն բուռն հետաքրքրությունը, որ նկատելի է ոչ միայն դաստիարակում, այլև մեր երկրում, անգամ արտասահմանում։ Պատճառն այլ է։ Դեպքն իր հոգիբանական հիմքերով ընդորկում է համամշխարհային պատերազմի ժամանակները։ Այն շոշափում է հեռավոր Փոքր Ասիայի մեջ կատարված վայրագ, արյունոտ իրադարձությունները, ու մենք կարծես նորից լսում ենք անցած ընդհանուր պատերազմի որոտը։ Դեպքի նշանակության մյուս պատճառը զոհի անձնավորությունն է։ Անանունների զանգվածի միջից մի ձեռք բարձրացավ ու դետին տապալից մի մարդու, որ ժողովուրդների մեծ գոտեմարտի ծանր օրերին վարում էր իր հայրենիքի ճակատապիրը և որը, իրեկ դերման ժողովրդի դաշնակից, բախտի ու փառքի բարձունքներին հասավ։

Նա թեթև հազարով կոկորդը մաքրեց և քիչ առաջ թեքվելով՝ շարունակեց։

— Ամենից տուազ պետք է ճշտել հետեւալ հարցը. դեպքը կատարվել է կանխամտածված, թե՞ոչ երբ ինքս ինձ հարցում իմ այդ մասին, բնականաբար ծնունդ է առնում մի այլ հարց. ի՞նչ ուստածառներ են մզել ամբաստանյալին դեպի այդ քայլը։ Տարակույս շիա, որ մենք նոր ունենք քաղաքական սպանության հետ։ Ամբաստանյալի դրդապատճառը եղել է քաղաքական ատելությունը, քաղաքական քինապատճառը եղել է քաղաքական սպանությունը. Այստեղ դուք լսեցիք հեռավոր վայրերում կատարված խնդրությունը։ Այստեղ դուք լսեցիք հայտ են ունեցել սոսկալի բաներ, հայշատ բաներ։ Կասկած շիա, ո՞ր տեղի են ունեցել սոսկալի բաներ, հայշատ դողովորի նկատմամբ կատարվել են սարսափելի բաներ և, անկատկած է, որ ամբաստանյալի ընտանիքին էլ զարհուրելի բաներ են պատճեն։ Ճակատագիրը հարվածել է նրան մինչև ուղն ու ծուծը, քանի որ իր բուրք հարազատները մատնվել են մահվան։ Եվ ահա իր մեջ ծնունդ է առել վրեժի գաղափարը։ Ապա ոչ մի տարակույս շիա, որ ամբաստանյալը հանձին թալիաթի տեսել է հեղինակին այն ճակատագրի, որ հարվածեց իրեն, իր ընտանիքին և ցեղակիցներից շատերին։ Հանձին թալիաթ փաշայի տեսել է ոչ միայն ներքին գուշոց նախառու հանձին թալիաթ փաշայի տեսել է ոչ միայն ներքին գուշոց նախառու, որ կրում էր ծեւական պատասխանաւությունը այն ամենի, ինչ տեղի է ունեցել իր պաշտոնավարության շոշանում, այլ հիշյալ ոճիրների ունձնական ու բառուական հեղինակին։

— Պարոններ, — գոշեց Գոլնիկը՝ ձայնին ուժ տալով, — այս դրդապատճառների ճշտումը լիուլի բավական է Թեհլիրյանի արաքը պատ-

ժակարավական տեսակետից դատելու համար։ Բայց վկաների հարցաքըննությունը տարածվեց նաև այն խնդրի վրա, թե թալիաթ փաշան իսկապես անձնական ու բարոյական հեղինակն է եղել այդ ոճիրների։ Եմ կարծիքով, թեև արաքը պատժակարավական տեսակետից դատելու համար բոլորովին միենույնն է, թե նա եղել է կամ չեղել հեղինակը, այնուամենայնիվ, ես պետք է անդրադառնամ այդ խնդրներին, որքանով գրանք նյութ դարձան վկաների հարցաքննության ժամանակի։ Տարակույս շիա և վկաների ցուցմունքով հաստատված է, որ հայերն ու իրենց բարեկամները այն համոզմանն են, որ թալիաթ փաշան է կազմակերպել հայկական սարսափները։ Սակայն, պարոններ, դա կողմնակալ տեսակետ է, և այստեղ դյուքին կլիներ բերել վկաների մի ամբողջ շաբք, որոնք տեղի ունեցած գեպքերի մասին բոլորովին այլ տեսակետ կներկայացնեն։ Ես խոսել եմ բազմաթիվ գերմանացիների հետ, որոնք Թուրքիայում էին և ականատես գեպքերին, նրանք բոլորովին ուրիշ բարձրություն են, որ Պոլսի կառավարությունն է որոշել հայերի բնաջնջումը. Յերես սխալ հասկացված, պետական և զինվորական ինքնապաշտպանության նկատմաներն են զրգել՝ տալու տեղահանության հրամանը, որ ամեն պարագայում իր արդյունքով ժայրահեղորհն ճակատագրական եղավ...

Նախագահը ընդմիջեց այս մանվածապատ հավաստիացումը՝ իրնդրելով կանգ շառնել այն խնդրների վրա, որոնք շին եղել վկաների հարցաքննության նյութ։

— Ես կարող եմ օգտվել այդ իրավունքից, որքան այդ տարբերությունը հանդես եկավ իրազեկների տեսակետների մեջ։ Պարուն կեփսիուսի տված տեղեկությունները, որքան ել հետաքրքրական են, բայց ինձ համար ունեն այն պակասությունը, որ դեպքերին տալիս են շափականց հետեւղական և ծրագրված բնույթ։ Դժվար չէ տեսնել, որ դոկտոր կեփսիուսը եկել է այդ եղակացության ոչ թե տեղում, անձնական փորձով, գեպքերի ժամանակ, այլ ավելի ուշ ստացված տեղեկություններից։ Այդ պատճառով կարծում եմ, թե իրավունք ունեմ ավելի ժանրակշեր արժեք տալու պարուն զրուավար կիման ֆոն Զանդերսի հիմնավորումներին։ Ես այն ժամանակ վարում էր բարձր պաշտոն, շատ մոտից ժանրի էր գեպքերին և այստեղ որոշապես ընդգծեց տարբերությունը հայերի տեղահանության հրամանն արձակող Պոլսի կառավարության ըմբռնման և տեղահանությունն իրագործելու եղա-

Նակի միջև: Պոլսի կառավարությունը տեղեկություններ ուներ, որ հայերը ծրագրում էին դավաճանել, որ համաձայնական պետությունների հետ դավադրություն էին նյութում թուրքերի դեմ և վճռել էին, ուազմական կացությունն արտոնելու դեպքում, թիկունքից հարձակվել թուրքերի վրա և հաստատել իրենց անկախությունը: Պոլսի կառավարությունը, պետական և զինվորական ինքնապաշտպանական մտահոգությամբ, անհրաժեշտ է գտել հայերի տեղահանությունը: Գալով տեղահանման եղանակին՝ պետք է նկատի ունենալ, պարոններ, որ Փոքր Ասիան այն երկիրը չէ, ուր տիրում են քաղաքակիրթ ժողովուրդներին հատուկ պայմաններ...

Այստեղ Գոլնիկը մի պահ մտածեց, որ անհաճ որակումով պաշտպանյալի հիշատակը կարող է վիրավորել ու հարց:

— Ես ուզում եմ զգույշ լինել արտահայտություններիս մեջ. նկատի ունեմ այն պայմանները, որոնց մենք վարժ էինք պատերազմից առաջ: Ավանդությունը Փոքր Ասիայում վայրագ է և արյունաբրու. պարոն իրազեկը մատնանշեց, որ այն ժամանակ սրբազն պատերազմ էր հայտարարված, և ահա երբ այլացեղ, այլակրոն ազգաբնակչությունը տեսավ, թե ինչպես թուրքերը ամեն կողմից հայերին քշելով ժողովում են, այդ բնականաբր ազդանշան եղավ հայերի վրա հարձակվելու: Ու հանգես եկան մարդկային բնակորության ամենատգեղ բնագիտներ՝ կողոպուտ, սպանություն և այլն: Պարոն իրազեկը մատնանշեց նաև, որ տեղահանության համար գործի կոշված ժանդարմաներն այլևս նախկին ընտրանի զինվորները չեին, այլ առանց քընության ժողովված սինլքորներ, որոնք հետո սեփական նախաձեռնությամբ գործեցին հայտնի սպանությունները:

Գոլնիկը այդ պահին նման էր այն միամիտ եվրոպացիներին, որոնք դըուրությամբ համոզվում են հեռու, անծանոթ երկրների մեջ տեղի ունեցած դեպքերի քմահաճ և միտումնավոր մեկնության, երբ նրանց այդ մասին հավատացնում են «ինչելքի մոտ» բացատրությամբ: Համենայնդեպս, նա թափով վրա բերեց:

— Այս հիմքով ես պետք է ասեմ, որ վկաների հարցաքննությունը հիմք չի տալիս ասելու, թե «ապացուցված է, որ Թալեաթ փաշան այն անձնականությունն է, որ անձնապես և բարոյապես պատասխանատու է կատարված սարսափների համար»: Այս տեսակետից ինձ շեն կարող շեղել նաև այն փաստաթղթերը, որոնց ընթերցման առաջարկը եղավ շեղել նաև այստեղ: Ես իբրև դատախազ գիտեմ, թե ինչպես, օրինակի համար,

մեզ մոտ հեղափոխության տակնուվրայությունների ժամանակ լույս ընկան նման փաստաթղթեր, որոնք կրում էին կարեռ անձնավորությունների ստորագրությունները և սակայն, ինչպես հետո պարզվեց, կեղծված էին: Ինձ չի կարող վերջապես, թյուրիմացության մատնել նաև այն դատավճիռը, որ հանված է Պոլսում Թալեաթ փաշայի դեմ և որի մասին այստեղ հիշվեց: Ես չգիտեմ, թե այնտեղ որքանով է ճշտված առարկայական ճշմարտությունը: Կարող է այդպես լինել, բայց հայտնի է, որ նախկին քաղաքական որևէ վարչածերի տապաւությունը հետո, նորի համար նախկինի կողմնակիցները ոճրագործներ են համարվում: Իսկ թուրքիացում այդ օրերին կատարված փոփոխությունները ավելի քան բիրտ էին: Կենտրոնական Եվրոպայի բարեկամ Երիտասարդ թուրքերի կառավարությունը հեռացվեց և նրա տեղ բերվեց մի ուրիշը, որ ստիպված էր զնալու այդ պետությունների թշնամի համաձայնական երկրների հետ: Այս է պատճառը, որ մենք շենք կարող հասկանալ, թե պարզվեց արդյոք առարկայական ճշմարտությունը այդ դատավարության ժամանակ:

— Վերադառնամ սպանությանը, — շարունակեց Գոլնիկը՝ աշքի անցկացնելով իր նոթագրությունները, — ես արդեն պարզեցի, որ ամբաստանյալը մղվել է այդ գործին այն համոզումով, որ ջարդերի բուն հեղինակը Թալեաթն է: Պարոններ, անտարակուլս անազնիվ պատճառ չէ այդ, երբ նկատի առնենք ոճրագործությունների ահազնությունը: Դա մի դրդապատճառ է, որ կարելի է մարդկայնորեն հասկանալ և պիտի հասկացվի, որքան ժամանակ կան ատելու և սիրելու ընդունակ մարդիկ: Ու ե՛ր հարց է լինում, թե ամբաստանյալը գործել է խորհրդածումով, ինքնին պարզվում է այդ: Եթե դուք ուշադրություն դարձնեք, թե ինչպես ամբաստանյալը, երգնկայի մեջ իր հայրական տան ավերակները տեսնելոց հետո, անցնում է բովանդակ եվրոպայի միջով, հասնում Բելզին, ձեզ կպարզվի, որ նա տուգորված է վրեժի մուլգնոտ գաղափարով: Նա կարծես մագնիսական ուժով քաշվում, բերվում է մինչեւ այն տան դուռը, ուր ապրում էր իր զոհը: Այսպիսով, բոլորովին հիշտ է այն հայտարարությունը, որ արել է նա իր առաջին հարցաքննության ժամանակ: Նա ասել է՝ «Ծնողներիս տան ավերակները տեսնելով՝ որդեղրեցի վրեժի գաղափարը, որ որոշել էի իրագործել, այն ժամանակ էլ գնեցի ատրճանակը»: Այնուհետև մենք տեսնում ենք, թե ինչպես ամբաստանյալը որոշ ծրագրով և, ամեն ինչ կշռադատելով, դիմում է իր ծրագրի իրագործմանը, մենք տեսնում ենք,

թե ինչպես նա թողնում է իր նախկին բնակարանը, ինչպես է պատճառաբանում դա առողջական նկատառումներով, ինչպես է հաջողվում նոր բնակարան դանել Թալեաթ փաշայի տան դիմաց, ինչպես է հետևում և ստուգում, թե ե՞րբ է դուրս գալիս տնից Թալեաթ փաշան, ինչպես մարտի 15-ին ատքնանակն առնելով վազում է նրա ետևից, ապա ինչպես անցնում է առջև՝ համոզվելու համար, թե նա՞ է արդյոք և նորից ետև անցնելով՝ մահացու հարված է տալիս նշանն այնքան լավ էր առնված, որ մահը վայրկինապես եղավ ...

Մարդարեի պես միշտ և իրավացի էր այս դեպքում Գոլնիկը:

— Պարոններ, — ասաց նա՝ Հայացքը սեեռելով երդվաների վրա, — մենք տեսնում ենք, որ ամբաստանյալը գործում է սառնարյուն և ամեն ինչ ծրագրելով: Սպանությունից հետո նա նետում է տարձանակը ու փորձում է փախչել: Եվ երբ նրան բռնում են և սկսում ծծել, գոշում է, «ո՛չ սպանվածը, ո՛չ էլ ես գերմանացիներ չենք. դուք գերմանացիներդ պատճառ չունեք հոգվելու»: Պարոններ, բոլոր այս պարագաները նկատի առնելով՝ ամեն մարդ պիտի գա այն եղանակացության, որ սպանությունը կատարվել է կանխամտածված, պաղարյունությամբ և կշռադատությամբ: Այդպես է նաև ամբաստանյալի խառնվածքը: Նա տաքարյուն ու դյուրաբորքը մեկը չէ. ընդհակառակը, ինքնամփոփ, հանդարտ և թախծոտ մի մարդ է. այնպիսի մեկը չէ, որ անձնատուր լինի հրճվանքի և ուրախության, որ պոռթիա ցածումով, այլ մեկը, որ որոճում է իր մտքերն ու գաղափարները: Ես կարծում եմ, կանխամտածված սպանության հիմնական տվյալները կարելի է առարկայորեն ստուգված նկատել: Բայց այդ բավական չէ ամբաստանյալին սղատժելու համար: Պետք է քննիլ, թե չկա՞ն արդյոք այնպիսի պարագաներ, որոնք անպատճելի են դարձնում արարքը: Եվ այստեղ է, որ հանդես է գալիս Գիշմանիայի պատժադրի 51-րդ հոդվածը, որի համաձայն պատժելի դործողություն չկա, եթե նրա հեղինակը գործը կատարել է անգիտակցարար կամ դործողությունը կատարելու պահին գոնվել է մտային հիվանդագին խանգարման մեջ, որ անհնարին է դարձնում կամքի ազատ արտահայտումը: Այժմ հարց է ծագում, թե ամբաստանյալի նկատմամբ սոյություն ունե՞ն այդպիսի պարագաներ: Ինքնին հասկանալի է, որ եթե փորձագետները միենույն բանն ասեն, դատարանը ընականաբար կհետևի նրանց տեսակետին: Դժբախտաբար մենք այստեղ փորձագետների այդպիսի միահամուռ տեսակետ չունենք, ուստի դատարանը հարկադրված է ինքը որոշելու, թե իր տեսակետով 51-րդ հոդվածի տրամադրությունները

ներկա գեպքում կիրառելի՞ են, թե՞ ոչ: Այս գեպքում անհրաժեշտ է քննության առնել ամբաստանյալի անձնավորությունը, ինչպես նա ցուց տվեց ինքն իրեն դատավարության ընթացքում: Ես կարծում եմ, որ նա այնպիսի տպավորություն թողեց, որ կարելի է ասել, թե գտնը վում է մտային կատարյալ բնական բարձրության վրա: Իր պատասխանները հատու են, մեկին և միշտ տեղին:

— Իր անձնավորությունը պետք է մեզ երևան գա նաև իր կյանքի ընթացքից. որքան այդ հայտնի է մեզ, նա ապրել է այնպիս իրականները այցելում է իր բարեկամներին և հայրենակիցներին, լեզվի և պարի դասեր է առնում, իր տանտիկինները նկարագրում են նրան իրեն հանդարտ ու պարկեցտ մարդ: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ վերնոտության տափապեսների պահերից գուրս՝ նա մտավորապես բավարար վիճակի մեջ է: Այդ պատճառով ես կարծում եմ, որ պետք է միանալ այն փորձագետների տեսակետին, որոնք մերժում են 51-րդ հոդվածի գործադրությունը:

Գոկտոր Գոլնիկը, նախքան իր ասածներից վերջնական հետեւթյուններ հանելը, մի պահ մտածեց. ըստ երևոյթին նրա համար այնքան էլ դյուրին չեր մարդկայինը հաշտեցնել օրենքի տրամադրություններին: Նա ասաց.

— Պարոններ, մեր հիմնական օրենքը կանխամտածված սպանության գեպքում շի ձանաշում մեղմացուցիչ պարագաներ, ու ես կարող եմ հասկանալ, որ ոմանց համար խիստ պիտի թվա, եթե ստիպված լինեմ պահանջել, որ ամբաստանյալը նկատվի հանցավոր կանխամտածված սպանության համար: Բայց, պարոններ, պետք չէ միայն նկատի առնել ամբաստանյալին, այլ նաև զոհին, պետք է խորհել, որ այստեղ կյանքից զրկված է մի մարդ, որ դունվում էր լավագույն առնական տարիքի մեջ, որի մահը ողբում են իր այրին և մտերիմները, և որ գոնե իր ազգակիցների և դավանակիցների մոտ մեծ հայրենասերի և պատվավոր մարդու համբավ էր վայելում: Ու, վերջապես, պարոններ, այն պարագաները, որոնք այստեղ լայն չափով առաջ բերվեցին ի նպաստ ամբաստանյալի, համաձայն մեր հիմնական օրենքի, լիովին, անշուշտ, հաշվի կառնվեն ներում շնորհող գերազույն հաստատության կողմից: Ուստի, պարոնացիք երդվանելու, առաջարկում եմ ձեզ ներկայացված հարցումներին տալ դրական պատասխան և ամբաստանյալին, կանխամտածված սպանություն կատարելու համար, հանցավոր ճանաչելու:

Ավելի լավ պաշտպանել Թալեաթի դատը՝ հնարավոր չեր ...

Ո՞Չ, ՀԱՆՅԱՎԱՐԻ ԶԵ

Նախքան այդ երբեք չէի պատկերացրել այդպիսի հստակությամբ ինձ համակած մղումը դեպի Թալեաթի սպանությունը: Ինձ մաղաշափի անգամ չէր վրադեցնում անձիս պաշտպանությունը, այլ այն, ինչ տեղի էր ունենում դատարանում:

Պաշտպաններից առաջինը խոսք ասաց ֆոն Գորդոնը.

— Պարանա՛ք երդյալներ, պարոն դատախազը հիշեց, որ եթե այստեղ ամբաստանյալ Թեհլիրյանին մինչև իսկ հանցավոր նկատեք և այդպիսով հիմք տաք, որ նա մահվան դատապարտվի, այդ իսկ պարագային շարիքը մեծ չի լինի, որովհետև հանրապետության նախագահը անտարակոյս պատիժը կամ կմեղմե, կամ ներում կշնորհե: Ձեզ վրա ազգեցություն դործելու թույլատրելի ձև չէ այդ: Եթե զուր ամբաստանյալին հանցավոր նկատեք, նա մահվան կը պատապարտվի, և՛ու որ մեզանից չի կարող իմանալ, թե Գերմանական պետության նախագահը ինչ որոշում պիտի տա ներման նկատմամբ: Այստեղ պետք է միայն իրավունքը որոշել և ոչ թե ներման ճանապարհը ցույց տալ: Հանձին պարոն ավադ դատախազի, ես ուրախ պիտի լինի ողջունելու մի պաշտպանի: Բայց նա հանդես եկավ ոչ իբրև պաշտպանը Թեհլիրյանի, այլ Թալեաթ փաշալի և այն էլ, ոժբախտաբար, միայն այնպիսի իրողությունների հիման վրա, որով դեկուցել ու պատմել են իրեն այլևառ անձեր: Պարոններ, ես դիտակացար խուսափում եմ պաշտպանության այդ ձևից: Հեռացրերի մի ամբողջ զինարան ունեմ և այստեղ նստած մի վկա, որ պատրաստ է զրանց վավերականությունը հաստատելու: Այդ հեռագրերն այստեղ հայտարարելու աղաջարկ արի, և ինք էլ ետ վերցրի, որովհետև մեզ համար բավական է, որ ինչպես իր բոլոր ցեղակիցները, Թեհլիրյանը համոզված էր, թե բոլոր սարսափների հեղինակը Թալեաթն է, և դուք էլ հավատում եք դրան: Բավական է

այն պարզ ու անվիճելի իրողությունը, որ մեկ միլիոն ութ հարյուր հազար հաւերից մեկ միլիոն չորս հարյուր հազարը տեղահանվել են, և դրանցից մեկ միլիոնը սպանվել է: Պիտի խնդրեի, որ ամեն մարդ մտածի, թե հնարավո՞ր է այդպիսի մի սպանդ՝ առանց հետևողական զեկավարության և ծրագրի, իսկապե՞ս թուրք կառավարությունն անզոր էր այդ տևական աղետի դեմ միջոցներ ձեռք առնելու, հավատո՞ւմ եք դուք դրան ...

Ֆոն Գորդոնը, ձեռքերն իրար բերելով, մի պահ նայեց երդյալներին՝ կարծես սպասելով իր հարցումների պատասխանին, ու ձայնի մեջ ցավի շեշտով ասաց.

— Մի քանի օր առաջ հակառակորդների կողմից այստեղ լույս տեսավ փողոցային ճաշակի վայել մի գրքով՝ «Թալեաթ փաշալի սպանության գաղտնիքը» խորագրով: Ենթադրվում է, որ գործի հտեւք թաքնված է մի մեծ պետություն: «Երիտասարդ հայը, — ասված է այնակազմ՝ որ հանձն առավ սպանել Թալեաթ փաշալին, բարբարոսական մոլեգնության գործիք է, ինչ որ հատկանշում է իր ցեղը: Իր հուզիչ պատմությունը, թե ինչպես թուրքերը քաշ տվին տարան իր ծնողներին, բնականաբար նպատակ ունի միայն արթնացնել դատավորների համակրանքը»: Ավելորդ է ասել, թե այդ սպանության մեջ որևէ զաղտնիք չկա, և եթե այդ գրքույիքի հեղինակը երեկ այստեղ էր ու լսեց տիկին Թեհլիրյանի վեկուցը, հավանաբար հեռացավ՝ իր խոսքերը և առնելու ներքին պահանջով: Մենք ցանկություն ունեինք այդ ուղղությամբ ավելի ընդարձակ ապացուցյներ բերելու: այստեղ են երկու գերմանացի գլուխության քույրեր, որ տեղահանության օրերին եղել են թրդյաներ և տեղի ունցած զեպքերի մասին զեկուցել են մեր արտաքին գործոց նախարարությանը: Բայց ես հրաժարվեցի նաև այդ վկաների հարցաքննությունից, որովհետև բավական է այն, ինչ այստեղ պատմեց աիկին Թեհլիրյանը: Ես միտք շունեմ այդ զարձուրելի տեսաբաններն այստեղ վերհիշել: Անմ միայն, որ այդ սարսափների թղած զարգանդների տակ էր, երբ ուսւների առաջինական գույն ունենալով, որ մեկն ու մեկն իր բազմանդամ գերգաստանից ողջ է մնացել: Նա եկավ ու տեսավ իր հայրենի տունը կիսավեր: Բայց զարձյալ շատ բան կար մնացած, որ հիշեցնում էր սիրելիներին, որոնց հետ նա այստեղ աղբել էր և իր մանկությունն էր անցկացրել: Այո՛, այնքան բան կար դեռ, որ նա կարող էր վերստին ճանաչել իր երրեմնի այնքան այնքան քաղցր ու

անգորր օշախը: Ու երբ տեսավ իր որբացած ու ամայացած տունը, և իրեն պատկերացան ջարդերի ահավոր տեսարանները, առողջ մարդու զավակ, առողջ ամբաստանյալը ուշաթափ եղած գետին ընկալ: Այսուհետո ի՞նչ տեսավ նա Երզնկայում: Քսան հազար հայերից միայն մեկ խլամացած ընտանիք ու մի քանի անհատներ: Ընդամենը քսան մարդ՝ քսան հազար հայերից ...

Ֆոն Գորդոնն ասում էր այդ հատիկ-հատիկ, շեշտուն և համընթաց խոսքերով. հանկարծ նա պոոթիաց.

— Պարոններ, սրանք այնպիսի տպավորություններ են, որոնք մարդ չի կարող մոռանալ մինչև մահ... Սակայն հետաքրքրական է, որ մեր պաշտպանյալը, համաձայն վկայությունների, խիստ վերապահ ու սակավախոս էր: Եվ իսկապես, ով որ անսահմանորեն խոր ապրում է ունենում, նա հաճուքով չի խոսում: Ու Թեհլիրյանը դեպքերի մասին զրեթե չի խոսում: «Ես հայրենիք չունիմ, իմ հարազատներն սպանված են», — պատասխանում է նա ուսուցչունուն՝ դասի ընդումով իրեն ուղղված հարցումին: «Զգե՛, Աստվածդ սիրես, հին վերքերը լբաննանք», — ասում է իր բարեկամ Արելյանին՝ դոկտոր Լիփսիուսի դիրքը կարդալու առթիվ: Պարոններ, դուք այստեղ շեք տեսնում այն մարդուն, որ միշտ կառշած էր այդ արյունոտ դեպքերին, այլ մեկին, որ խոսափում է, աշխատում է խույս տալ դրանից: Բայց հանկարծ տեղի է ունենում շրջադարձ. նա պատահաբար հանդիպում է թուրքերեն խոսութիւն մարդկանց, որոնցից «փաշա» կոչվածը թալիեթն է: Դժվար չէ երևակայել իր ապրած ցնցումը: Մնացածը հայանի է: Այս է ահա մարդը, և ես իմ հերթին ուզում եմ իրավաբանորեն պատասխանել այն հարցմանը, թե ինչպես պիտի դատել նրա արարքը: Ամենից առաջ՝ արդյո՞ք կանխամտածված է կատարված այդ դեպքը: Պիտության բարձրագույն ատյանը իր որոշումների ութերորդ հատորում մատնանշում է մեր արդի պատժական օրենսդրի և նախկին իրավունքի, 14 օր առաջ արված որոշման գործադրությունը նշանակում է կանխամտածում: Այսօր այդ օրենքը փոխված է. բարձրագույն ատյանը վճռական հաստատում է, որ ոճիրի գործադրման պահն է որոշիչը, Ուրիմըն կարենորը այն շէ, թե երբ է տրված որոշումը, այլ այն, թե տեղի՞ն է ունեցել արդյոք կանխամտածում սպանությունը կատարելու պահին, և ազատ էր արդյոք Թեհլիրյանը այդ պահին կրքի, հույզերի և մտապատկերների փոթորկից: Ես շեմ ուզում այդ հարցման պատասխանը

տալ, որ իմ կարծիքով գտնվում է գործի բնության մեջ: Անպատասխանատու վիճակի, հոգեկան գործունեության հիվանդագին խանգարման մասին այստեղ մենք լսեցինք մի քանի փորձագետների կարծիքը: Պարոն Շտորմերը՝ մեր փորձառու դատարանային բժիշկը, բայց այնուամենայնիվ ոչ հոգերույժ, եկել է այն համոզման, որ մենք այս դեպքում գործ ունենք օրգանական վերնոտության հետ, որ թեև աղցում է ազատ կամքի արտահայտության վրա, բայց չի շրացնում կամքի աղատությունը: Պարոն պրոֆեսոր Լիպմանը շատ նրբամիտ կերպով պարզեց, թե վերնոտությունն այստեղ օրգանական չէ, այլ հիվանդությունը հանգես է գալիս իրենք արդյունք հոգեկան հզոր տպավորության՝ անցած դեպքերի, հայրական տան կործանման, որոնք ամբաստանյալին դարձրել են հիվանդ: Այսպես, ըստ Լիպմանի, Թեհլիրյանը հիվանդ է հոգեապես, պատասխանատվության նվազագույն զորությամբ: Պրոֆեսոր Կասիրերը հիմնականում միացավ նրա այդ կարծիքին և ըստ էության համաձայն է նրա հետ:

— Ականավոր մասնագետ հոգեբույժ պարոն պրոֆ. Ֆորստերը իր խոսքի սկզբում միացավ պրոֆ. Լիպմանի և պրոֆ. Կասիրերի կարծիքին: Բայց հետո, հիմնվելով հոգեբանական նոր փորձերի վրա, եկավ այն եզրակացության, որ ներկա դեպքում խնդրի մեջ բաժին ունի մի ծանր հիվանդություն. «Ամեն պարագայի, այդ առթիվ ունեմ հիմնավորված տարակուսանք»,— ասաց նա: Վերադառնալով խնդրին և ուղղակի մեկնելով պրոֆ. Ֆորստերի այդ տարակուսանքից՝ պարտք ունեմ ասելու, որ օրենքը այդ առթիվ չի ընդունում և ոչ մի տարակուսանք: Ըստ օրենքի պետք է լիովին հաստատված լինի, որ տվյալ անձը պատասխանատու է. ամենադույզն տարակուսանքն անդամ այս դեպքում միանգամայն անպատճախանատու է դարձնում հնթական: Դատավճռի պատճառաբանության համար բավական չէ բացասական ճշտումը, թե երևան շեն եկել այնպիսի պարագաներ, որոնք կարող էին տարակուսելի դարձնել ազատ կամքը, այլ անհրաժեշտ է հաստատել հակառակ ձևով, այսինքն՝ որ «այս մարդը պատասխանատու է»: Բարձրագույն ատյանի մի որոշման մեջ տառացի ասված է. «Ազատ կամքը դոյլություն չունի այն դեպքում, երբ հոգեկան խանգարման հետևանքով որոշ մտապատկերներ կամ զդացողություններ և կամ օտար աղդեցություններ կամքի վրա իշխում են այնքան ուժգնորեն, որ հիվանդի որոշումը բնական կշռագատումների միջոցով դառնում է անհնարին»: Ուրեմն, երբ հոգեկան ուժերի ամբողջությունը, ամբողջ Ես-ն է որևէ

գործի որոշման ազդակը, այս դեպքում միայն կարելի է գործի պատասխանատվությունը վերագրել Ես-ին, որպես այդ ամբողջության և թե մեկի վրա իշխողը հզորագույն գաղափարն է, որ առաջ է բերում արարքը, իսկ բոլոր մյուս ազդակները մնում են շուրջի մեջ, այդ պարագայում այլևս ամբողջ Ես-ը չէ, այլ նրա մի հիվանդութ մասը, որ կատարում է արարքը», — ասում է օրենքը: Մեկնելով այս տեսակետից՝ հիմա պետք է հարց դնել. կարո՞ղ եք վստահորեն պնդել, թե ամբաստանյալը այն պահին, երբ տեսակ Թալեհաթ փաշային, առավ գենքն ու դուրս նետվեց Հարձակվելու համար, կատարելապես տերն էր իր բոլոր հոգեկան ուժերի, ազատ կամքով որոշում տալու համար: Մասնակետ-փորձագետներից երկուար որոշապես ասում են, թե «ո՛չ չի կարելի հայտարարել, որ նա պատասխանատու էր», մյուսները տարակուսանքներ ունեն:

Ֆոն Գորդոնը դարձավ երդվյալներին.

— Պարոնա՛յք, կարծում եմ այս բացատրությունները բավական են, որ դուք կարողանաք որոշել ձեր բռնելիք դիրքը: Գիտեմ, որ կարող են ասել, թե այնուամենայնիվ ցավալի է, որ գերմանական հողի վրա հյուրընկալված մեկն սպանվել է: Մեր ժամանակներում, երբ ամենուրեք տեղի ունեն պայքարներ, երբ հայերի և թուրքերի միջև դեռ այսօր էլ շարունակվում են կոփվներ, կատարված դեպքերի հետ անհրաժեշտ է հաշտվել: Ամեն մարդ ունի այն զգացումը, թե համենայն դեպք Թալեհաթի կառավարության օրով էր, որ ծով արյուն թափվեց, և առնվազն մեկ միլիոն մարդիկ՝ կին, երեխա, ծեր, երիտասարդ, ոչնչացան: Եվ եթե Հարտենբերգ փողոցում զրա վրա ավելացավ մեկ կաթիւ արյուն ևս, մենք պետք է մխիթարվենք, որ ապրում ենք ահավոր ժամանակներում: Ես միտք շունեմ այստեղ վերջնական վճիռ տալու ժարդարակաթիւ մասին, բայց մի բան պետք է, որ ասեմ. անշուշտ նա էլ, իր մի շարք ընկերների պես, ձգտում էր ոչնչացնել հայ ժողովուրդը՝ ստեղծելու համար զուտ թուրքական մի մեծ պետություն. անշուշտ զրա համար էր, որ նա դորձագրեց միջոցներ, որոնք մեզ՝ եվրոպացիներին համար անհանդուժելի են: Բայց երբ ասում են, թե Ասիայի մեջ կյանքը գնահատվում է շատ էժան, և նման սարսափները կարելի է հասկանալ, պետք չէ մոռանալ, որ նույն Ասիայում են բուդդայականները, որոնք մասնավոր զուրկուրանքով են վերաբերվում գեղի մարդը և նույնիսկ դեպի կենդանիները: Այնուամենայնիվ ես շեմ ուզում պատասխանատու դարձնել այն մարդուն, որը պառկած է հողի տակ: Նը-

րան է պատշաճում այն, ինչ ասել են երկու հանճարեղ ֆրանսիացիներ՝ Գուտավ Լը Բոնը և Անրի Բարբյուսը համաշխարհային պատերազմի սարսափների մասին. «Սուանձին գործիչների ետևում կանգնած են ողիներ, գեեր, որ վարում են նրանց. նրանք միայն պարզ գործիքներ են զանգվածային, ճիշտ կամ սխալ գաղափարների, ներշնչումների, որոնք դես ու դեն են նետում մարդկանց, իբրև ճատրակի խաղալիքներ. այդ գործիչները կարծում են, թե կամեցողություն ունեն, այնինչ իրականում նրանք գործում են ճնշման տակ»: Որքան էլ ահավոր լինի, ինչ որ տեղի ունեցավ, մենք այնուամենայնիվ պետք չէ այնքան փոքրություննենք, որ այդ ամենը փաթաթենք դժբախտ անհատների վղին: Բայց ավելի սոսկալի պիտի լինի, եթե գերմանական դատարանը այդ ճակատագրին միացնի անարդարները հանդպարուրեն իշուարատող արդարության՝ ընդգեմ անօրինակ փորձությունների ենթարկված այս մարդու ...

* * *

Ֆոն Գորդոնը կարծես սակարկում էր: Նրան շահագրգոռողը իմ անձիս փրկությունն էր բոլոր հնարավոր միջոցներով: Օրենքի ձևական մեկնությունը այնուամենայնիվ այն իրավունքը չէր, որի մասին ասաց նա իր խոսքի սկզբում:

Այլ հիմքերից էր մեկնում դոկտոր Վերթառւերի պաշտպանողականը, նրա ձայնը սկզբում հնչում էր մեղմ ու սահուն, ողոքիչ ներքին ուժով կարծես օրորում էր լսողներին: Բայց այդ ձայնի մեջ փիշ-թիշ զարգանում էր տիրական մի շունչ, որի խթանը խսկական իրավունքն էր:

— Պարոնա՛յք երդվյալներ,— ասաց նա, — ձեղ ուղղված հարցաթերթերի մեջ նախ պիտի դտնիք սպանության վերաբերյալ հարցումը: Այդ հարցմանը «այլ» կամ «ո՛չ» պիտի պատասխանիք: Եվ ահա այդ է մեր քննության խնդիրը: Սպանությունը կանխամտածումով կատարված լինելու մասին դուք ժխտական պատասխան պիտի տաք, զրա մասին ավելորդ եմ համարում խոսել: Ես պիտի խոսեմ այն մասին միայն, թե սպանության վերաբերմաք տրված հարցումին «այլ»՝ թե «ո՛չ» պիտի պատասխանիք: Արդեն հարցաթերթը ձեղ հնակետ է տալիս «ո՛չ»-ի համար, որովհետև այնտեղ չի ասված, թե «ամբաստանյալը սպանել» է արդյոք Թալեհաթ փաշային», այլ՝ «Հանցավո՞ր է ամբաստանյալը Թալեհաթ փաշային սպանելու համար»: Ամեն

մարդ զգում է, որ ամբաստանյալը անպարտ պիտի արձակվի: Դժբախտությունն այն է, որ զուցի խորհեք, թե քանի որ ամբաստանյալը մարդ է սպանել, արդյոք օրենքը չի՞ պահանջում, որ նրան դատապարտենք: Պիտի ասեմ, որ նույն այդ օրենքի տևակետից այդ հետեւթյունը սխալ է: Համաձայն մեր գերմանական օրենքի, պետք է անպարտ արձակեք ամբաստանյալին: Այն, ինչ զգում է այստեղ ամեն մարդ ներկա դեպքում, պատահաբար նույնն է, ինչ որ պահանջում է օրենքը: Պաշտպանությունը բնավ դիտավորություն շունի անարդար մի որոշումով արատավորել գերմանական իրավունքի համբավը, որի ներկայացուցիչն եք դուք, ինչպես և մենք: Ամբողջ աշխարհը նայում է մեզ, ու ձեր որոշումը այնպիսի մի որոշում պիտի լինի, որ թերևս հաղարավոր տարիներ հետո էլ արժեք ունենա, որպես իրավունքի որոշում: Մեր պատժական օրինագիրքն ունի ընդհանուր և հատուկ մաս. այս վերջինի մեջ մի հոդվածում ասված է. «Այն անձը, որ մարդ է սպանում դիտավորյալ կերպով և այն, նկատվում է հանցավոր սպանության համար»: Բայց ընդհանուր մասը վերաբերվում է ամեն մի մասնավոր դեպքի առանձին: Այդ մասում 51-րդ հոդվածը հարհանգում է, թե որոշ դեպքերում պատճելի գործողություն չկա, եթե նույնիսկ կատարված է հատուկ մասում հիշված հանցանքներից մեկը կամ մյուսը, այն է՝ գողություն, սպանություն և այլն: Սա այն հոդվածն է, որ վերաբերվում է հանցանքի հեղինակի մտավոր և հոգեկան վիճակին: Երկու հոդված ներքեւ կա մի ուրիշը, որի նյութն է ստիւլովական ինքնապաշտպանությունը, որի տակ համելացվում է հարձակման գիմադրելը: Բայց նույն հոդվածի երրորդ մասում ասված է, որ եթե անգամ ստիւլովական ինքնապաշտպանության անհրաժեշտությունը գոյություն չի ունեցել, սակայն տվյալ անձնավորությունը, երկյուղի ու խուճապի մատնվելով, անցել է ստիւլովական ինքնապաշտպանության սահմանից, դարձյալ նա ազատ է մնում պատճից: Առաջին խնդրի մասին բարձրադրույն ատյանի որոշումը այսպես է. եթե անպատասխանատու վիճակը որոշապես ընդունված է իրեւ պատճի հնարավորությունը ժխտող հիմք: այդ պարագայում այլևս բավական չէ դիտավորության ընդհանուր ճշտումը, այլ անհրաժեշտ է պատճառարանել, որ արարքի հեղինակը նույն միջոցում գտնված չի եղել 51-րդ հոդվածի կանխատեսված կացություններից և ոչ մեկում: Բավական չէ ասել, որ դատավարությունը ոչ մի հիմք չուներ ընդունելու անպատասխանատվությունը, պետք է, ընդհակառակը, դրականապես ճշտված

լինի, թե արարքի հեղինակը գործը կատարելու պահին գտնված չի եղել 51-րդ հոդվածի և ոչ մի կացության մեջ: Պիտք է ուրիմն դրականապես ճշտվի, որ խանգարիչ ազդեցություններ գոյություն չեն ունեցել: Եթե որևէ տարակույս կա այդ մասին, ապա այդ դեպքում ամբաստանյալը պետք է անպարտ արձակվի: Այդ այն է, ինչ քիչ առաջ ձեզ արդեն պարզեց դր. Գոն Գորդոնը՝ տպատ կամքի խաթարման և ամբողջական ծո-ի մասին խսնելով: Ես կուղեի մի բան ավելացնել: Հաղարավոր տարիներից ի վեր ժողովրդի մեջ առածի ձևով հեղեղվում է, ումարդու զլուխը պտտվում է» ասացվածքը: Այդ նշանակում է, որ ամեն դեպքում ապատ դիտակցությունը խանգարված է: Այդ վիճակում մարդ անում է այն, ինչ ուրիշ որևէ դեպքում չեր անի: Թուլ տվեք Հիշեմ բարձրագույն ատյանի մի վճիռը: Հայանառելու տրամադրություն ունեցող մի անհատ գնում է եկեղեցի: Քահանան քարոզում է մի նյութի մասին, որ բոլորովին հակոռնյա է այդ անհատի կարծիքին: Նա լսում է հետզետե ավելի մեծ ուշադրությամբ: Ցորերով վում է և ապա այն աստիճանի է ինքն իրեն մոռանում, որ բարձրաձայն գոշում է. «Լոի՛ր, սո՞ւտ ես խոսում»: Այդ անհատին դատարան են տանում՝ պատարագը խանգարած լինելու համար: Բայց նրան ազատ են արձակում, որովհետեւ քահանայի ասածների ազդեցության տակ նրա գիտակցությունը խանգարվել էր, և արյունը այնպես ուժգնորեն խփել դիմին, որ այդ բոպեին նա այլևս իր կամքի տերը չեր:

Դոկտոր Վերթառւերը կարծես բացի երդվաներից ոչ ոքի չեր տեսնում, ու իր խոսքերը կարծես ուղղված էին նրանցից միայն մեկին:

— Արդ, այն ամենը, ինչ այստեղ հայտնվեց ամբաստանյալի մասին սպանությունը կատարելու պահին, կարելի է վերածել մի քանի կետերի: Եթե ուզում եք դատել առարկայորեն ամբաստանյալի կամքի, տրամադրության և հոգեկան վիճակի մասին իր արարքի վայրիցինին, նկատի պետք է առնեք, որ նա պատկանում է հարավյան պղպի, որ ավելի դյուրագրպիո է, քան պաղարյուն հյուսիսացին: Բայց այդ, նկատի առեք, որ ինչպես ասաց պարոն դատախազը, այդ երկիրը արյունոտ ավանդություն ունի: Հայտնի է, որ թուրքերը ուր ոտք են կրիսում, ու չունու զրոշակը տանում են առջևից: 1683-ին նրանց մենք տեսնում ։ Վիեննայի գոների առջև. եթե այն ժամանակ այստեղ էլ դային, Գերմանիայի մեջ շատ բան չեր մնա: Որոշ արյունոտ ավանդություն կա այդ հարավյախին աղգերի մեջ և ոչ միայն թուրքերի, այլև Հայերի: Գրան առարկայորեն միանում է այն, որ հայերն ու թուրքերը

պաշտոնապես պատերազմի մեջ են: Ուր հանդիպում են այդ երկու ազգերը, հանդես են գալիս իբրև թշնամիներ և իրենց իրավունքն են համարում դեմ առ դեմ գալ իբրև պատերազմողներ: Երբ ամբաստան-յալը դեպքից անմիջապես հետո իրեն ծեծողներին ասաց. «Ես հայ եմ, նա՝ թուրք, ձեզ չի վերաբերվում», պետք է ավելացներ. «Բայց այդ, մենք պատերազմական և վրեմինդրության մտայնությամբ ենք ապրում իրար դեմ»: Ապա դուք այստեղ լսեցիք նաև այն, որ Թալեաթը դատապարտված է մահվան: Դատավճիռները կամ ընդունում են, կամ ժխտում են: Եթե մենք չուզենք ճանաշել ուրիշ դատարանի վճիռը, չենք կարող պահանջել, որ ուրիշները ճանաշեն մեր վճիռները: Թալեաթի մահավճիռը տրված է դինվորական ատյանի կողմից: Ես առհասարակ բարեկամ չեմ պատերազմական և զինվորական դատարաններին, բայց ուր որ դրանք կան, այնտեղ անտարակույս կան նաև պարկեցած դատավորներ, որոնք ճիշտ վճիռներ են կայացնում: Ոչ մի կասկած չունեմ, որ այն բարձրաստիճան և կրթված դատավորները, որոնք մեծ խնամքով քննեցին և դատեցին Պոլսո ուժագործներին, տվին նաև ճիշտ և արդար դատավճիռ...»

Դատախազը տհաճությամբ թոթվեց ուսերը ու նոթադրեց:

— Անթույլատրելի է ասել, թե վճիռը տեղի է ունեցել անզիվական նախային թնդանոթների ճնշման տակ: Ես երբեք չեմ լսել, որ անզիվական դատավորներն այդ ձևով ազդեն արդարադատության վրա: Անզիվայի մասին կարելի է ասել ինչ կուզեք, բայց անզիվական արդարադատությունը օրինակ է ծառայել բոլոր ժամանակների և բոլոր երկրների համար: Ճիշտ պիտի լիներ քննել այդ դատավճառի հիմքերը, և այն ժամանակ պիտի տեսնեք, որ հայկական կոտորածները, շորս ուրիշ մեղադրանքների հետ միասին, ճշտված են, և դրա համաձայն էլ մահվան են դատապարտված ամբաստանյալները: Դատապարտվածներից մեկի նկատմամբ, որ զտնվում էր Պոլսում, մահավճիռը գործադրված է: Ես անձնապես դեմ եմ մահվան պատժին, ինչպես նաև սպանության: Սակայն Թալեաթը այդ մահավճիռից հետո ստիպված եղավ փախչել և թաքնվել կեղծ անունով, որպեսզի վճիռն իր նկատմամբ շնորժադրվի: Այդ վճիռի արդարության մասին ես ոչ մի տարակույս չունեմ: Նկատում եմ միանգամայն ապացուցված, որ Թալեաթը հանցավոր էր վերաբրված շարագործությունների համար: Բայց այդ վճիռը աղդեցություն է ունեցել ամեն հայի վրա: ամեն արդար

ու խորհող մարդ պետք է մտածեր. «Այդ մարդը դատապարտված է մահվան, ուրեմն նա՛ դործել է այդ ոճիրները, հետեապես արժանի է մահապատժի»: Վերջապես նկատի պետք է առնել այն ամենը, որ կապ ունի ստիպողական ինքնապաշտպանության հետ: Այդ մարդիկ՝ էնվերն ու Թալեաթը, ապրում էին Գերմանիայում կեղծ անունով: Այստեղ խոսք եղավ, թե նրանք Գերմանիայի «Հյուրերն» էին: Այդ ես վճռապես պիտի մերժեմ, ես չեմ հավատում, որ գերմանական կառավարությունը թույլ տար, որ իրենց հայրենիքը լքած, փախած նման ոճագործներ, իբրև «Հյուր», կեղծ անվան տակ թաքնվեին այստեղ՝ Թալեաթն էլ անշուշտ քիչ հետո պիտի զնար այստեղից էնվերի ետևից՝ հայ ժողովրդի դեմ նորից դավկելու: Եվ եթե մեկը, իբրև իր ժողովրդի աղատարար, նրան սպանում է, անշուշտ առաջնորդվում է այն սարսափից, որ այդ մարդը հայ ժողովրդի թշնամին է ու եթե դուրս գա Գերմանիայից, նորից պետք է հայ կանաց ու երեխաներին կոտորի: Կայն իմաստով, ամբաստանյալի արարքի մեջ կա բռնադատված ու ստիպողական ինքնապաշտպանություն ...»

Թվում էր, թե շրջապատից միայն ես էի հասկանում ու ցավ էի զգում այդ առթիվ:

— Պարունա՞յթ երդիվալներ, չեմ ցանկանում դատարանում խոսք ասել քաղաքականության մասին, եթե պարոն դատախազը այդ ուղղությամբ արտասանած վիճեր մի շարք բաներ ի նպաստ Թալեաթի նա ասաց, որ սպանվել է «Գերմանիայի դաշնակիցքը»: Դա ճիշտ չէ: Թալեաթը և կոմիտեն դաշնակից էին պրուսական և գերմանական զինվորական կառավարությանը: Գերմանական ժողովրդի դաշնակիցները այդ մարդիկ երբեք չեն եղել: Ճիշտ է, որ Գերմանիայի նախկին կառավարությունը դաշնակից էր նրանց: Ճիշտ է, որ նրանք տապալեցին ճին թուքական կառավարությունը և ծով արյան զնով մոտ տասը տարի իշխանության գլուխ մնացին: Բայց թե Թալեաթն ու ընկերները դաշնակիցն էին զիրոման ժողովրդի, այդ ես երբեք և ոչ մի պարագայում չեմ կարող ընդունել: Թալեաթը անհատապես կարող էր շիտակ մարդ լինել, բայց նա ուղմատենալ դաշնին մեկ անդամն էր, մեկը նրանցից, որ թե զինվորական համագույստ չի կրում, բայց կազմարդի առջև նստած հրամաններ է հղում և գաղանորեն պաշտպանում բռնության դրոշակը: Մի ամբողջ ժողովուրդ տեղահանելու հրամանը ամենահրեշտակային բանն է, որ կարող է ծնունդ առնել միայն ուղղմատենահրեշտակային բանն է, որ կարող է ծնունդ առնել միայն ուղղմա-

կոմիտեն համոզված էր, որ լավ ժանդարմները հեռացված էին, ու մնացել էին միայն սինլքորները, այդ դպրում իրավունք շուներ տեղահանության հրաման արձակելու, եվ եթե տեղահանության գործը այնուամենայնիվ հանձնարարեց նրանց, ուրեմն ինքն է պատասխանատուն հետևանքների համար: Եթե հայերը մինչև իսկ դաշնակցած լինեին ուրիշ ժողովուրդների հետ և դաշնանած, երիտասարդ թուրքերն այնուամենայնիվ գիտեին, որ կային հազարավոր կանայք, երեխաներ, որոնք այդ գործից ոչ մի լուր շունեին, և հետևաբար տեղահանության հրամանի առաջին պայմանը պետք է լիներ խիստ կարգադրություն՝ հոգալու կանանց, երեխաների և այն այրերի մասին, որոնք կապ շունեին «պատճանների» հետ: Եթե ես դեմ վիների մահապատճին, բոլոր պարագաներում արդարացի կհամարեի այդ այն պնդի համար, որ ռուպմական անհրաժեշտության» նկատառումով մի հրաման է տալիս՝ առանց իր վրա վերցնելու նրա հետևանքների պատասխանատվությունն անմեղների նկատմամբ: Ես պարզապես բարբաջանք եմ համարում այն ամենը, ինչ ասկում է այդ «ռուպմական անհրաժեշտության» մասին: Եթե այնտեղ, առանձին լեռնային գյուղերում մնար ժողովրդի այս կամ այն հատվածը, այդ բնավ կապ չէր ունենալու «ռուպմական անհրաժեշտության» հետ:

Նա դարձավ դեպի նախագահը, շունչը պահեց, ապա ասաց ծանրորեն.

— Հայաստանը միշտ գրգռել է նվաճողական ձգտումներ ունեցող ազգերի ախորժակը: Հայկական բարձրավանդակի ժողովուրդը միշտ այդ ազգերի ավարն է եղել: Ավելի քան 500 տարուց ի վեր Հայաստանը բաժանվել է երեք մասի: Հնուց ի վեր օտար ցեղերը մեկը մյուսի ետևից մրրիկի պես անցել են Հայաստանի վրայով: Այն ցնդերը, որոնք ամայի դարձրին Առաջավոր Ասիան, Հունդարիան և հասան մինչև Հունոս, Աթիլայի պես մարդիկ, որոնք դեռ մնում են մեր հիշողության մեջ, ամենաքստմելի կերպով ավերել են Հայաստանը ոչնչացնելով ժողովրդին: Այդ բազմաշարժար արհեստավոր ու երկրագործ ժողովրդի դեմ էր, որ հարձակվեց երիտասարդ թուրքերի կառավարությունը: Երիտասարդ թուրքեր ասելով իրապես պետք է հաւականալ հին թուրքը, իսկ հին թուրքը նույնն է, ինչ բռնի ուժի մարդը, ռազմապաշտը: Երբ պատերազմը ծագեց, երիտասարդ թուրքերի կոմիտեն մտածեց, որ այժմ կարող են հայերի հաշիվը մաքրել, որովհետեւ աշխարհի մեծ պետություններից և ոչ մեկը շպիտի կարողա-

նա այդ բանը նրանց արգելել: Բայց այս միակ հիմքը չէր, կար նաև կրոնական ատելությունը և մոլեուանդությունը. ուզում էին կոտորել քրիստոնյաներին և հույս ունեին, որ Ղուրանի սահմաններում կարելի պիտի լինի ավելի զյուրությամբ իրագործել բռնի ուժի հին թուրքական գաղափարը: Այ երիտասարդ թուրքերը առիթից օդովկեցին՝ իրենց հեռավոր սահմանների վրա ապրող այդ միակ քրիստոնյա ժողովրդին ոչնչացնելու: Նրանք շամարձակվեցին այդպես վարվել Պուտիմ ապրող հայերի հետ: Բայց հեռավոր վայրերում, վայրիներին ուղղված հեռագրերում, որոնց պատճենները մեջ ձեռքին են, հրահանգեցին մինչև վերջին մարդը բնաշնչել: Եվ ահա մենք ունենք մեր առջև սպանությունը մի ժողովրդի, որի ոչնչացման պատասխանատվությունն ընկնում է երիտասարդ թուրքերի կոմիտեի, մասնավորապես նրանց ամենաազգեցիկ նախարար Թալեաթի վրա:

Վերթառուերն այժմ խոսում էր այնպես, որ կարծիս դատարանը դատապարտում է իրեն, և ինքն ասում է վերջին խոսքը:

— Պարոնայք երդվալներ, 1921 թ. մարտի 15-ի առավոտյան ամբաստանյալի հոգու մեջ տեղի է ունեցել իր ժողովրդի հազարամյատանշանքների հաշվեկշիռը, որին միանում են 1915 թ. համատարած կոտորածները: Ակամայից հիշում եմ Վիլհելմ Թիլի դեպքը: Գեսլերը ժաղադում է և անարգում ժողովրդին, դատապարտում է նրան ստրկության, ստիպում է Թիլին իր հարազատ որդու գլխին դրած խնձորը նետահարել: Աշխարհի երդվալ դատավորներից ո՞րը կդատապարտեր Թիլին, եթե նա իր նետով գետին տապալեր կուսակալին: Կա՞ արդյոք ավելի մարդկային բան, քան այն, ինչ այստեղ մեր աշքի առջև պարզվեց ...

Նա մի պահ կանգ առավ՝ կարծես լսելու, թե մեկը պիտի հակածառի՞ իրեն:

— Մեկ միլիոն սպանվածների, մի ամբողջ ժողովրդի վրիժառուն է, որ կանգնած է այդ ժողովրդի սպանության համար պատասխանատու անձի դիմաց: Նա հանդես եկավ ներկայացնելու արդարության ոփին ընդդեմ բռնի ուժի սկզբունքի: Նա եկավ իրոք ներկայացուցիչը մարդկության ընդդեմ հակամարդկայնության, ներկայացուցիչը պայծառ իրավունքի՝ ընդդեմ իրավար անիրավության: Նա հանդես եկավ իրոք ճնշվածների բողոք՝ ընդդեմ ճնշողների հավաքականության: Նա եկավ հանուն մեկ միլիոն սպանվածների՝ ընդդեմ մեկի, որ, ուրիշների հետ միասին, այդ ոճիրի մեղքն ունի: Նա հանդես եկավ իրոք ներկայացուցիչը իր ծնողների, քույրերի, եղբայրների, վերջապես իր

եղբոր հրկուս ու կես տարեկան զավակի: Հայ ազգը հազար տարիներ ի վեր, մինչև ամենափոքր երեխան, կանգնած է նրա հտևում: Նա արդարության դրոշակն է կրում, մարդկության, վրեժինդրության դրոշակը: Այս խորհեղով էր, որ նա դուրս նետվեց մեկի ղեմ, որ պղծել տվեց իր ընտանիքի պատիվը, հրամայեց ոչնչացնել ամենի բարորությունը և մի ամբողջ ժողովորդ բնաշնչել տվեց: Հիմա դուք, պարոնա՛յք երդվալներ, որոշեցեք, թե ինչ է տեղի ունեցել նրա հոգու և մաքի մեջ սպանությունը կատարելու պահին, նկատի առեք միայն, որ մարդկության աշքը ուղղված է ձեր այդ որոշմանը ... Դա Արդարության աշքն է:

Վերթառւերը սպառեց այն բոլոր ինքնարդարացումների իրական արժեքը, որոնք շրջան էին անում նաև դատասրահից դուրս իթթիհատականների կողմից ջարդերը բացարելու, արդարացնելու նպատակով: Այդ պայմաններում դատը դառնում էր ապօրինի մի գործ, զուրկ ամեն բարոյական հիմքից:

* * *

Քիլի համարանի իրավագիտական բաժնի պրոֆեսոր, դոկտոր Նիմայերը փորձեց պարզել խնդրի այդ կողմը: Նա կանգ առավ օրենքի տառի ներքին իմաստի վրա. օրենքը միայն իր ձեւական բնույթով անկարող է ի հայտ բերել արդարությունը: Զկա գրեթե և ոչ մի ըմբռոնում, իրավագիտական կանոն, օրենք կամ հողված, որ մարդ չկարողանա պաշտպանել ինչ-ինչ տրամաբանական հիմքերով: Բայց առանց օրենքի ոգու ըմբռոնման տրամաբանությունը անդոր է երևան հանել արդարությունը: Իրավաբանական գաղափարների և հողվածների մեջ տրամաբանությունն անհրաժեշտ է, որպես ազգակ տեխնիկայի, լուսաբանության, նախապատրաստման, հրահանգման համար: Սակայն արդարադատության իրագործման համար չի կարող վերջնական ու վճռական ազգակը լինել: Եվ դրա մեջ է երդվալների դատարանի իմաստը, որ կոչված է մի կողմից գնահատել դեպքի էությունը սեփական ազատ հայեցողությամբ, անկախ ձեւական ապացուցման կանոններից. մյուս կողմից՝ գնահատել օրենքի տրամադրությունները:

— Իրավագիտության կոչումն է հասկանալ կապակցությունները և մեյքալ հողվածներին կենդանի իմաստ տալ, — ասում էր նա: Այդ համապատասխանում է կյանքի իմաստին, պետության, հասարակության,

մարդկային համակեցության իմաստին: Օրենքի այն հոգվածը, որի հիման վրա դուք, պարոնա՛յք երդվալներ, պիտի տաք ձեր վճիռը, ասում է. «Ով որ դիտավորյալ մարդ է սպանել, նա, եթե սպանությունը կատարել է կանխամտածված, պատժվում է մահվամբ»: Այսպիսով, եթե դուք ձեզ ուղղված հարցմանը պատասխանեք «այո», Սողոմոն Թեհլիրյանի գլուխը կընկնի դահճի կացնի տակ: Բայց ենթադրեցեք, որ փոխված պայմաններում մեկը դատ է բացում պաշտոնական դահճի դեմ՝ ամբաստանելով նրան կանխամտածված սպանության մեջ: Չէ՞ որ «ով որ դիտավորյալ մարդ է սպանել, նա, եթե սպանությունը կատարել է կանխամտածված, մահվամբ է պատժվում»: Այս գեպքում, պարոնա՛յք երդվալներ, զուք նույնպես պետք է ասեք՝ այո: Այստեղ, Թեպինում, 40 տարի առաջ իրավագիտության մի ուսուցիչ այդպես էլ պնդում էր: Բայց խնդիրն այն է, որ ներկա դեպքում օրենքի մեջ աշքաթող է արված մի փոքրիկ բան. պատժական օրենսգրքի բազմաթիվ հողվածներում վճռապես ասված չէ, թե պատժելիությունը կախում ունի ապօրինությունից և ապօրինության գիտակցությունից պարփակ պարփակ մեջ մի բառ այս ձեմով. «Ով որ ապօրինի կերպով մարդ է սպանել ...», այս գեպքում ճիշտ ու ներդաշնակ կլինի այն գիտակցության հետ, թե պատճենիության համար միշտ պահանջվում է ապօրինություն: Սրա հետ մեկտեղ պետք է լինի նաև ապօրինության գիտակցություն: Թեհլիրյանի մեջ այդ գիտակցությունը հարաբերաբար է, ազգայնորեն զունավորված: Նրա ապօրինության գիտակցությունը քննարկելու ժամանակ պետք է մեկնենք այն իրողությունից, որ արևելցիների համար, որոնց թվին են պատկանում նաև հայերը, թեև քրիստոնեություն են ընդունել զեռ 300 թվին, իրավունք, կրոն, բարք միևնույն բաներն են: Մենք լսեցինք, թե ինչպես պարոն նախագահի «արդյո՞ք ամբաստանյալն իրեն հանցավոր նկատում է» հարցմանը մեղադրյալը պատասխանեց՝ «Հապալա եմ սպանել, բայց մարդասպան չեմ»,— ասաց նա. նա

Ինչո՞ւ դուք ձեզ հանցավոր չեք համարում:

Ամբաստանյալը պատասխանեց.

— Խիղճս հանդիսաւ է.

Եատ հասկանալի է այդ. Նրա համար բարոյական և իրավական հասկացությունները նույնիմաստ են: Նա մտածե՞լ անգամ չի կարող, թե ինչը որ բարոյական ճիշտ է, իրավաբանորեն կարող է անճիշտ լինել: «Մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ»,— ասաց նա. նա

շի կարող ենթադրել, թե ինչ որ բարոյական տհասակետից լավ է, կարող է իրեն մահապարտ դարձնել: Ես կատարելապես համոզված եմ, որ ամբաստանյալի մաքուր խիզճը ժայռի նման ամուր այն գիտակցությունն է, թե ինքը գործել է իրավունքի համաձայն, իսկական իրավունքի, որպիսին միայն արժեք ունի իր համար: Սրան գալիս է միանալու ամբաստանյալի վերաբերմունքը դեպի իր ժողովուրդը: Հայերը մի մեծ ընտանիք են: Նրանք մեծ պետություն են: Թուրքական պետության մեջ նրանք ապրեցին երկար ժամանակ որպես համբերատար մի ժողովուրդ: 1830-ին, երբ պատառքով կայսերը, 40-ական թվականներին՝ եղիպտացիները, ավելի ուշ՝ դանուբյան իշխանությունները, բուղարները, սերերը, սև լեռնցիները, ալբանացիները, ուսմինացիները, հայերը համբերով ու հանդարտ էին, որովհետև հույս ունեին, որ իրենց համար էլ բարենորոգումներ պիտի լինեն, իրենց կյանքն ու գույքը պիտի ապահօվվեն, և հնարավորություն պիտի ստանան որոշ շափով մասնակցելու իրենց նկրքին գործերի կառավարությանը: Այդպիսին էին զոհի 1878-ին Բելինում կնքված 61-րդ հոդվածի տրամադրությունները: Բայց փոփոխություն շեղավ, և զնալով կացությունն ավելի վատթարացավ: 1896-ին ևս երկու անգամ եղա Պոլսում և ինչ որ լսեցի ականատեսներից 1895—96 թթ. հայկական կոտորածների մասին, սոսկալի տպավորություն գործեց վրաստ. Ապա տեղի ունեցավ Սասունի ջարդը, Ագանայի կոտորածը, վերջապես 1915-ի տեղահանությունն ու ընդհանուր ջարդերը: Եվ 1921 թ. մարտի 15-ին կատարվեց այն, որ բոլորս ուրիշներ: Ռւզնք-շուղենք, պիտի է ընդունենք, որ այս դատավարությունը այնպիսին չէ, ինչպես ամեն մի ուրիշը. նա պայթեցնում է այս որահի նեղ շրջանակները և ստիպնամ է մեզ մեր հայացքը դարձնել հեռավոր կապակցության վրա և փորձել հասկանալ ուրիշ ժողովուրդներին, ուրիշ մարդկանց, ուրիշ պայմաններ և արդար լինել նրանց հանգիպ: Մենք ստիպված ենք լինելու տալու երկրորդ շրջանային դատարանի վեճուր այնպիսի իմաստով, որ լայնորեն լուսաբանված լինեն իրավունքի էությունը, մարդկության ձգտումները, գործի կապակցությունը: Եթե ուզեք այդպիս վարդել, ես շեմ կարծում, որ դուք մահապարտ նկատեք Սողոմոն Թեհլիրյանին: Դատավարության այս կապակցությամբ, ի վերջո, կուզեի, որ դուք ձեզ հարց տայիք, թե ի՞նչ արդյունք պիտի ունենա դատավճիռը, արդյունք՝ ոչ թե քաղաքական կամ ուրիշ առումով, այլ ի՞նչ արդյունք պիտի ունենա դատավճիռը բարձրագույն արդարության կամ այն բա-

րիքների տեսակետից, որոնց համար ապրում ենք՝ կյանքը տանելի և արժանավայել դարձնելու ձգտումով ...

Նիմայերի խոսքից հետո մի կատարյալ մենամարտ սկսվեց դատախաղի և պաշտպանների միջև: Դատախաղին այլևս զբաղեցնում էին ոչ այնքան օրենքի թելադրությունները, որքան դարի բարոյական հիմքերը, որոնց այնպիսի հարված հասցրին բոլոր երեք պաշտպանները: Իր խոսքը այս մասով ամբողջությամբ ուղղված էր Վերթառուերի դեմ:

— Երկրորդ պարոն պաշտպանը,— ասաց նա,— կարծես ուզում է մարդկությունը բաժանել երկու մասի՝ ուղղմապաշտների, որոնց սըրտից դեռ խլել է արդարության, մարդկայնության ու կարեկցության պացումը, և մնացածների, որոնք պահում են իրենց հոգում այդ բարձր հատկությունները: Դուք զիտեք, անշուշտ, մեծ բանաստեղծ Հայութիխ Հայնեին, նա ամեն ափիթով ըմբռստանում էր քրիստոնեության ազգեցության տակ առաջացած կենցաղային սկզբունքների դեմ և փառքանության դարձնությունը: Բանաստեղծի հոչակավոր քննադատներից մեկը նրա մասին ասում էր. «Երբ նա ավելի շուշակավոր քննադատներից մեջ նրա մասին ասում էր. «Երբ նա ավելի տարիքությունը դարձավ, աշխարհի մեջ այնս ուրիշ բան չէր տեսնում» բացի վտիտ նազումբեցներից և պարարտ հույներից»: Նույն բանն է հիշեցնում երկրորդ պարոն պաշտպանի բաժանումը ուղղմապաշտների և ոչ ուղղմապաշտների: Բայց այդ տեսությունը ես թողնում եմ իրեն, իսկ մի ուրիշ տեսակետին վճռականապես պեսք է հակածառեմ. նրան հաճելի շեղավ, որ ես սպանվածին որակեցի որպես շերտանական ծողովրդի հավատարիմ դաշնակիցը: Ես պետք է կրկնիմ, որ թուրք ժողովուրդը ուս ուսի կովեց գերման ժողովրդի հետ և անպայման կարող է որակել, որպես այս վերջինի դաշնակիցը: Ես պատվարեր շեմ նկատում մինչև որոշ աստիճան ուրանալ անցյալը, ի՞նչ էլ լինի անհամար ժամանակակիցը: Ես պետք է ամենախիստ կիրառվ բողոքիմ, որ պարոն պաշտպանը այս քաղաքականության երկու պաշտպանայիններին՝ ինվերտ և թալեաթ փաշաներին, որակեց այստեղ վիրավորական ձեռվ, որպես իրենց հայրենիքը լքած, փախած ոճագործների:

— Համաձայն պատժական օրենսդրքի 190-րդ հոդվածի,— ասաց այդ վասին Վերթառուերը,— պատժելի զործողության մասին լուրը կամ տարածայնությունը ապացուցված է նկատվում, երբ օրինավորապես դատապարտված է այդ զործողության հեղինակը: Քալեաթ, ինվերտ գեղագագարտված է այդ զործողության հեղինակը:

մալ փաշաները և դոկտոր Նազըմը թուրքական տոմարով 1335 թ. հունիսի 10-ին Հանրային պատերազմական ատյանի կողմից, որ կազմը ված էր ականավոր դատավորներից, դատապարտված են որպես Հեղինակ անարդ ոճիրի, այն է՝ Հայերին կոտորելու և անմեղների սպանելու համար։ Այս դատավճիռը օրինական է։ Սխալ է և Գերմանիայի օրենսդրությանը հակառակ՝ ասել, թե ես մարդկանց վիրավորելու աստիճանի հանցանք եմ գործում, ար ամենաանարդ ոճիրի համար օրինավորապես դատապարտված անձերին անվանում եմ ոճրադուներ։ Թե իրենց Հայրենիքը լքած, փախած այդ ոճրադուները, որոնք այստեղ ապրել են կեղծ անուններով, վայելել են արդյոք որևէ ռազմապաշտի պաշտպանությունը, այդ ինձ հայտնի չէ։ Ապա պարոն դատախաղն ասաց, որ թուրք ժողովուրդը, իբրև հավատարիմ զինակից, կողք կողքի կանգնած է գերման ժողովրդի հետ։ Այդ անշուշտ ճիշտ է, և ոչ ոք դրա հակառակը չի պնդել։ Բայց թուրք ժողովուրդը պատասխանատու չէ պատերազմի համար, ինչպես պատասխանատու չէ և գերմանական ժողովուրդը։ Ու Թալեաթ և էնվեր փաշաներն էլ պատերազմ հայտարարելու համար չէ, որ խնդրո առարկա են դարձել այստեղ, այլ նրա համար, որ տեղահանություն ձեռնարկեցին, որի հետեանքով հայ ժողովրդի նկատմամբ գործադրվեցին այնպիսի սոսկալի ոճիրներ, որոնց նմանը մարդկային պատմության մեջ չկա։ Ես անձամբ ի վիճակի չեմ հասկանալու, թե ինչպե՞ս կարելի է այս խնդրի մեջ քաղաքականությունն խառնել։ Ստորության այս թագավորության մեջ փոշիանում է ամեն քաղաքականություն, ու ես չեմ կարող հասկանալ, թե ինչպե՞ս կարելի է բառ անգամ արտասանել ի նպաստ տեղահանության հրամանների։ Զէ՞ որ գերմանական ժողովուրդն էլ անիրավությամբ ամբաստանվում է այդ գործին նպաստած լինելու մտքով։ Միայն անվերապահ մերժումը այդ տեսակ սկզբունքների, դատապարտումը նման ոճրային հրամանների կարող է ապահովել մեղ այն հարդարքը, որի իրավունքը մենք ունենք։ Երբ ես հետո ասացի, որ ռազմապաշտները բռնի ուժի պաշտպաններն են, նոր բան շասացի և ես ապշում եմ, որ պարոն դատախաղն ընդունեց այդ իբրև նորություն։ Ով որ, ինչպես գերմանական ժողովուրդը, տուժել է ռազմապաշտների ստոր արարքներից, պետք է ատի և աշխատի արմատախիլ անել նըրանց։ Ռազմապաշտները ժողովրդից դուրս են, նրանք Հայրենիք լունեն, ազգ չունեն, մարդկային զգացում չունեն։ ունեն միայն բռնի ուժի զգացումը, որի նպատակն է ճնշել իրավունքը։ Դատարանը պետք է

արդարորեն դատի, ամբաստանյալին արդարությամբ հատուցի։ Մենք պաշտպաններս, այստեղ գթություն չենք մուրում, մենք ուզում ենք միայն, որ պատժական իրավունքը կիրառվի։ Իսկ պատժական իրավունքը ներկա դեպքում հանցավորության հարցում տրվելիք ժխտական պատասխանն է։

Այդպես է, որովհետեւ այն պահին, երբ ամբաստանյալը փողոց իջավ և ատրճանակն ուղղեց իր զոհին, ազատ չէր նրա կամքը։ Նա ինքը չէր, որ փողոց էր իջնում, իր մեջ իջնում էին տարերքը, միլիոնավոր սպանվածները։ Նա, կարելի է ասել, տանում էր իր առջեցից իր ամբողջ ժողովրդի պատկի զրոշակը, բոլոր խոշտանգվածների, պըզդագծների, լկված ընտանիքների զրոշակը …

Նա հայացքով շանթահարեց դատախաղի աթոռն ու դարձավ երդվաներին։

— Որքա՞ն հաճախ դուք ստիպված եք եղել դատելու որևէ ամուսնու, որ դառնալով տուն, տեսնում է իր կնոջ անհավատարմությունը և սպանում նրան։ Որի՞ մտքից կանցնի դատապարտել այդպիսին։ Իսկ այստեղ, չէ՞ որ սպանված են մի ամբողջ ժողովրդի բոլոր կույսերը։ Հայնրին Հայնի օրինակը, որ մեջ բերեց դատախաղը, ինձ բոլորովին շապավորեց, որովհետեւ ես ավելի քիչ բանաստեղծ եմ, քան պարոն դատախաղը …

Այս խոսքերի վրա սրահում առաջացած խլրոցը մի պահ ընդհատեց նրան։

— Մեր կառավարության նկատումները, այն կառավարության, որ դաշն է կոել Թալեաթ և էնվեր փաշանների հետ, ինձ վրա նույնպես շաղգեցին, որովհետեւ այդ դաշինքը կնքելուց առաջ նրա մասին ու ոք չի հարցրել իմ կարծիքը, ինչպես նաև գերմանական ժողովրդի կարծիքը։ Միակ բանը, որ վրաս ազդում է, այն է, որ դուք սխալ բան շանհիք՝ կարծելով, որ եթե ամբաստանյալը մարդ է սպանել, ուրեմն հանցավոր է։ Վերջ ի վերջո այն, ինչ ուզում է պարոն դատախաղը, հանգում է հետեւյալ հարցումին։ «Սպանե՞լ է արդյոք ամբաստանյալը»։ Այնինչ, մենք ուզում ենք, որ դուք ձեզ հարց տաք։ «Հանցավո՞ր է ամբաստանյալը սպանության համար»։ Մենք խնդրում ենք ձեզ, որ այս առթիվ բարեհաճեք հետեւելու մեջ։

Բանակեճը վերջացավ։

Նախագահը երդվաներին արակ անհրաժեշտ թելադրությունները պարզելով նրանց, թե որ հարցմանը ինչպես պետք է մոտենալ և ձայ-

ների ինչ մեծամասնությամբ որոշում պիտի կայացնեն: Վերջինները մեկուսացան խորհրդակցելու:

Եյնքան շատ էին օրվա տպավորությունները և սրտապնդիլ գործի շուրջը պարզված բարոյական միջնորդությունը, որ ամեն մի պատիժ թեթև էր թվում ինձ: Մոտ մի ժամ տեսա երդվալների խորհրդակցությունը, որի ընթացքում ես մտքով գեղերում էի այն բոլոր վայրերը, ուր ժանոթ, բարեկամ, մոտիկներ ունեի: Բուռ կյանքը երկի բազկացած է նման ժամերից ...

Սրդվալները հայտնվեցին. մեկը նրանցից դողովուն ձայնավ կարդաց աշքերին շատ մոտ բռնած թուղթը.

— Պատվով ու խնդով վկայում եմ, ուշաւ երդվալների որոշումը՝ նանցավո՞ր է ամրաստանյալ Սովորութեանի 1921 թ. մարտի 15-ին Շառլուենքուրությունը մի մարդու՝ Թալեար փաշային սպանած լինելու համար:

— Ո՞չ: Օտառ նայեիկե, երդվալների գլխավոր:

Հանկարծ սրահը դղրդաց բռւռն, որստընդուստ ծափերից: Նախադահը ստորագրեց որոշումը՝ խնդրելով նույնը անել քարտուղարին և կարդալ:

— Ամրաստանյալը անպարտ է արծակվում պետական միջոցների հաշվին, — հայտարարեց նախագահը, երբ վերջինն ավարտեց ընթերցումը ...

— Որ, ավելի երկար ժափեր ընդհատեցին նրան:

Բանտարկության հրամանը ամբաստանյալի նկատմամբ ջնջված է ...

Գիրմանական հասարակությունը կարծեն ուզում էու մարտի 15-ին իմ դեմ դործած սխալը գարմանել: Դատավորները մեկնել էին, բայց դեռ շարունակվում էին ծափերը և ցնծությունը: Վայրկենապես իմ առջև հայտնվում են հայրենակիցներս, պաշտպաններս, նրանք ձեռք են մեկնում ինձ, շնորհավորում: Զեմ հասկանում, թե ինչ պիտի անեմ, մինչև որ պահակու հիշեցնում է, որ պիտք է բանտ դնալ: Կարճ տեսա ճանապարհը և քիչ ավելի երկար՝ արծակման ձեւականությունները: Երբ հայտնվեցի փողոցում, այնտեղ դեռ խմբված էր բազմությունը: Հասարակության խանդավառությունը դույցի բնույթ ստացավ: Նրանց մեջ երթուղարծ էին անում ոստիկանները: Երարանցման մեջ մեկն ինձ տուավ իր հզոր բազուկների մեջ ու հեկեկալով սկսեց համբուրել: Մշեցի Գարեգինն էր: Էֆիյանը, Աբելյանը, Գալուստյանը, Զաքարյանը ինձ հրում են դեպի մի ինքնաշարժ, որի մոտ ոստիկաններ են կանգ-

նած: Ներս ընկնելով՝ մյուս կողմից տեսնում եմ տիկին Շթելբաումին: Դիտմանին, օրիորդ Բալլնդոնին, որոնք շարժում են թաշկինակները:

Մի լայն պողոտայով աջից ու ձախից մեզ ուղեկցում են տասից ավելի ինքնաշարժեր: Հայրենակիցներս առաջնորդում են ինձ մի տեղ, ուր խմբված են գաղութի բոլոր հայերը ...

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԱԲԻԹԵԱՆ ՆԱԽԱԴԱՀ
ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿ
ՏԱՔԹ. Ե. ԼԵՓՍԻՈՒՍԻՆ

6 Յունիսի 1921

Սիրելի տոքթ. Լեփսիոս:

Թերթերու մէջ կարդացի թեհլիրեանի դատավարութեան ընթացքին Ձեր վկայութեան մանրամասն զեկուցումը: Անաշառութեան, արդարամտութեան աղնիւ զգացումով լիշտակիցիք ու զատապարտեցիք էնվեր ու Թալէաթ փաշաներու հրամանով գործադրուած վայրագությունները, բացատրելու համար արարքը անոր, որ Պերլինի դատարանը հանուած էր:

Զեր մեծ սիրտեն ուրիշ կերպ չեի սպասեր, յիշելով Զեր քաջութիւնը ու անձնուրացութիւնը, որով Դուք երբեք շվարանեցաք ստանձնելու հայութեան պաշտպանութիւնը այնպիսի շոշանի մը, երբ այդպէս ձեռնարկ մը աղետաբեր էր, մանաւանդ Զեր համար:

Մեր հայրենակիցին անպարտ արծակումը անդամ մը եւս ապացուցեց, որ դատաւրներ կան Պերլինի մէջ, և շեմ տարակուաիր, որ Զեր միջամտութիւնը մեծապես ծառայեց լուսաբանելու եւ շարժելու խիզճը անոնց, որոնք անմեղ հոշակիցին թեհլիրեանը:

Իմ, Ազգային Պատուիրակութեան եւ համայն Հայութեան կողմէ, բոլոր սրտով Զեղի կը յայտնեմ մեր խոր երախտազիտութիւնը շահագրգութեան այս նոր փաստին համար, որ կը բերէք մեր դատին ի նպաստ:

Ընդունեցէք, սիրելի՝ Լեփսիոս, իմ լաւագույն զգացումները

ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Հիշողության արտորյալները	3
Հրատարակության կողմից	6
Դատարանը և դատավճիռը	7
Առզմոն թէհլիրյան (կենսագրական նշումներ)	10
Առաջարան	13
Մայրիկիս	25
Գլուխ Ա. Սերբիայից վասպորական	27
Գլուխ Բ. Մոծ եղիսնը	47
Գլուխ Գ. Սուրադի հետ	65
Գլուխ Դ. Մեր հայրենիքը կորցրինք	86
Գլուխ Ե. Պոլսում	115
Գլուխ Զ. Դեպի Ամերիկա	139
Գլուխ Է. Որսի հետքերով	159
Գլուխ Ը. Մայթի վրա ընկավ հրեշը	202
Գլուխ Ֆ. Դատավճարումնը	225
Գլուխ Ժ. Դատախազը մահապատիժ է պահանջում	253
Գլուխ ԺՄ. Ռ. հանցավոր լէ	268
Ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուապար փաշայի նամակը առքթ. Ե. Լեփորուսին	287

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՇԱԽԻԹՅԱՆ

Վերջի՛ՇնիՄներ
(ԹԱԼԵԱԹԻ ԱՀԱԹԵԿՈՒՄԸ)

Հրատ. խմբադիր Ա. Լ. Սահակյան
Նկարիչ Ա. Մ. Մկրտչյան
Տեխ. խմբադիր Զ. Հ. Սարգսյան
Մրգագրիչ Զ. Գ. Նարենյան

Հանձնված է շարլածքի 22. 04. 1992 թ.: Ստորագրված է տպագրության 14. 10. 1993 թ.
Համար 60×841/₁₈, թուղթ № 1: Տառատեսակ սգոքի սովորական բարձր տպագրություն: Պայմ. 16. 97 մամ., տպագր. 18, մամուլ: Հրատ.-հաշվարկ 15,5 մամուլ:
Տպագրանակ 5000: Պատվեր № 42: Գինը պայմանագրային:

ՀԳԱԱ հրատարակություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:

ՀԳԱԱ հրատարակության տպագրան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. *

Արտյի բարուս

Անուն Եղիսաբետ:

Դաշ Գոյշ Ռ Տարօնաքանչ Հայության կողմէ առաջնահարաբերություն ունեցած է այս բարության մասին պահանջանքի շատրւութեան երկարացնելու համար: Եթե այս գոյշը առաջնահարաբերություն ունեցած է այս բարության մասին պահանջանքի շատրւութեան երկարացնելու համար:

Դաշ Կայություն է այս բարության մասին պահանջանքի շատրւութեան երկարացնելու համար: Եթե այս գոյշը առաջնահարաբերություն ունեցած է այս բարության մասին պահանջանքի շատրւութեան երկարացնելու համար: Եթե այս գոյշը առաջնահարաբերություն ունեցած է այս բարության մասին պահանջանքի շատրւութեան երկարացնելու համար:

Դաշ Կայություն է այս բարության մասին պահանջանքի շատրւութեան երկարացնելու համար: Եթե այս գոյշը առաջնահարաբերություն ունեցած է այս բարության մասին պահանջանքի շատրւութեան երկարացնելու համար:

1954